[illegible]
[illegible]

281(2)
Ս 178

# ԼԻԱԿԱՏԱՐ ՎԱՐՔ

## ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Ս Ր Բ Ո Ց

Որք կան 'ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց ։

Յօրինեալ հաւաքական բանիւք ճառընտրաց մերոց և այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբք ։

'Ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբայհօր ։

Հրամանաւ Տն Տն Ստեփաննոսի Ագոնց՝ Աբբայի և Արքեպիսկոպոսի ։

Արդեամբք ծախիւք Մանուկ Աղայի կարնեցւոյ մահտեսի Ածատուրեան ։

## ՀԱՏՈՐ. Զ.

Միջոց Խաչին մինչև ցկէսն.

'Ի Մամասայ և 'ի փոլիկտիմոնէ մինչև 'ի Ղուկիանոս քահանայ ։

1813. 'Ի ՎԵՆԵՏԻԿ. ՌՄԿԲ.

'Ի Վանս Սրբոյն Ղազարու ։

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

A/1022



Արժան լիցին արքայութ եան .
որք աստ յաւէտ ջնա խո կան :

# ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Մամասայ Ճգնաւորի ։

Տ. Յ. սեպտ. 2 ։ Լ. օգոստ. 17 ։ Ճառընտիր Ա. էջ. շշէ = ՞ ։ և Գ. նյզ = նյէ ։ Բուլլանդեանն ըներնոս. 'ի Գ. հատորն օգոստ. երես. 423 = 446 ։ Մետափր առ սուր ։ Փլամին. Հոստանէլ ։ Սբն Եփրեմ. Ճառ ԻԳ. 'ի Ներբող Մամասայ ։ Գիր. Թծաբ. 'ի Ճառն Նոր Կիրակէի ։ (1)

ՄԵԾԱՆՈՒՆ ՆԱՀԱտակն քրի՝ սբն Մամաս, (զոր ոմանք Մամմէս, կմ Մամանտիոս կոչեն,) ճգնաւոր և հովիւ կարգացեալ յանապատաբնակութե, և խոստովանող և վկայ 'ի մարտիրոսական ճգնութե, էր դեռափթիթ հասակաւ և կատարեալ առաքինութբ, 'ի ժամանակս որեղիանոսի կմ աւրեղիանոսի կռապաշտ կայսերն հռովմայեցւոց յերրորդ դարուն (2), հայրենեօք 'ի գանգրայ քաղաքէ, որ և չանղըռը՝ 'ի գաւառէն պափղագոնիոյ, որ 'ի սահմանակցութե անկիւրիոյ գաղատացւոց. և ծննդեամբ

և սննդեամբ 'ի կեսարիոյ կապադովկացւոց ,
այն է ղայսերի ։

Իսկ ծնունդ սրբոյն մամասայ ասի լինել ըստ օրինակիս ը՟ այսմիկ ։ Թէոդոտոս կի՟ Թէոդոտոն անուն ումն էր հաւատացեալ և ա՟ծասէր 'ի քաղաքին գանգրայ՝ համդերձ ռուփինաւ բարեպաշտ կնաւ իւրով ․ զորս կալան հեթանոսք , և ստիպէին զոհել կռոց , և ուրանալ զք՟ս ա՟ծ ։ Իբրև չառին նք՟ յանձն , առաքեաց զն՟ս իշխան քաղաքին՝ որ յոմանց աղեքսանդր կոչի , կապանօք 'ի կեսարիա կապադովկացւոց առ աղեքսանդրոս փոստոս դատաւոր , որ ունէր իշխանութիւն դատելոյ զքրիստոնեայս մինչև 'ի մահ ։ Արդ իբրև հարցափորձիւ քննեաց զն՟ս դատաւորն , նք՟ համարձակութ՟բ խոստովան եղեն զանուն ք՟ի ․ վ՟յ հրամայեաց արգելուլ զն՟ս 'ի բանտ բազում նեղութ՟բ ․ և էր ռուփինա յղի ։

Եւ եղև հիւանդանալ երանելւոյն Թէոդոտոսի , և վախճանիլ 'ի բանտի անդ բարի խոստովանութ՟բ 'ի ք՟ս ․ իսկ բարեպաշտին ռուփինայ լցան աւուրք յղութ՟ն , և ծնաւ 'ի բանտին արու մանուկ ․ և 'ի ծնանելն մեռաւ և նա , խոստովանողական պսակի եղեալ արժանի ը՟ Թէոդոտոսի ․ զոր հանեալ Թաղեցին առ առն իւրում ․ և մնաց նորածին
մանուկն անհայր անմայր ։

Բայց կին մի քրիստոնեայ 'ի քաղաքէ անտի կեսարացւոց՝ մեծատուն հաւատով , ամմիա կի՟ ամիա մատրոնա անուանեալ , այն՝ որ ը՟ ոմանց 'ի պարտիզի իւրում Թաղեաց զմար-

մինս

մինս ծնողաց մանկանն , հրամանաւ հրեշտակի ած բարձել զմանուկն 'ի բանտէ՝ տարաւ 'ի տուն իւր , և սնուցանէր ամ խնամով և քնական հաւատով : Եւ յորժամ տարեկան եղև տղայն , և 'ի գիրկս առեալ զնա մատրոնայ՝ ողջագուրէր և համբուրէր , սկսաւ տղայն ձայնել զնա մամմա , այս է մայրիկ . Նմին իրի մայրագիր նր ետ կոչել զանուն նր 'ի մկրտուե Մամաս : Եւ մինչ զարգացաւ մանուկն , ետ զնա 'ի դպրոց , և ուսաւ գիր : Կայրին է ամս և տղայք հեթանոսաց 'ի յուսումն . իսկ ածուսոյց մանուկն մամաս ուսուցանէր զդպրոցակից մանկունսն 'ի բաց կալ 'ի սնոտի պաշտամանց կռոց , և հաւատալ յած կենդանի՝ որ յերկինսն է : Զայն իբրև գիտաց իշխանն դիմիկրատոս կմ դեմոկրիտոս , որ կարծի լինել ուսուցչապետ , կմ դատաւոր նստեալ փոխանակ փոստոսի , կոչեաց զմամաս , և հարցանէր՝ թէ իցէ՞ քրիստոնեայ : Եւ նա խոստովան եղև յայտնապէս զքս . և էր յայնժամ մամաս ամաց մետասանից : Ապա առաքեաց զնա առ արիանոս դատաւորն եգէացւոց քաղաքին . և անդ ևս դաւանեաց երանելին զբարւոք դաւանութիւն . վյ հրամանաւ դատաւորին գան հարին դահիճքն զմամաս , և յաւելին խանձողել զմարմին նր հրով . և տեսեալ զհաստատութի մտաց նր՝ արկին ծանր կապար 'ի պարանոց նրյն , տանել ընկենուլ զնա 'ի խորս ծովու . և հրեշտակ ած կորզեաց զմամաս 'ի ձեռաց դահճաց , և եհան զնա 'ի

Լեւոն կեսարու :

Եւ արարեալ անդ աւուրս քառասուն աղօ-
թելով՝ խնդրէր 'ի տեառնէ յայտնել նմա զկամս
իւր զբարիս, զհաճոյն եւ զկատարեալն. եւ
լուաւ ձայն՝ որ ասէր. ընկա՛լ զգաւազանս,
եւ զոր ինչ եւ խնդրեցես յայ՝ տացի քեզ. եւ
առեալ նր զգաւազանն՝ հարկանէր զերկիր.
եւ քանզի 'ի քրիստոնէից փախուցելոց յերե-
սաց հալածանաց 'ի լերինս՝ մնացեալ էր անդ
աւետարան մի 'ի թաքստի, գտեալ զայն
մամռասայ՝ ուրախ եղեւ, էառ եւ համբու-
րեաց. եւ գիտաց՝ զի կամք այ են կալ մնալ
նմա առ ժամանակ մի 'ի լեռնակեաց եւ յա-
ռանձնակեաց վարս ճգնութե՝ իբրեւ հովիւ
եղանց եւ անասնոց անապատի, միանգամայն
եւ հովիւ հոգւոց եկելոց առ նա՝ քարոզութբ
աւետարանին :

Եւ այնուհետեւ 'ի լերինս ունէր զբնակու-
թիւն իւր՝ հրաժարեալ 'ի բազմամբոխ քա-
ղաքաց ; եւ հաճեալ ընդ անապատաստուն կեանս.
կանխէր հանապազ յաղօթս եւ յօրհնութիւնս
այ՝ հանդերձ պահօք եւ ճգնութբք. եւ մրգօք
միայն շատանայր. եւ զամ փոյթ բարեպաշ-
տութե 'ի մէջ առնոյր, մինչեւ զգաստութի
առաքինութբ ուղղել, եւ կատարեալ վարս
ստանալ ածահաճոյս. լի իմաստութբ եւ բարի
խորհրդով. եւ յընթերցմունս սբ գրոց ան-
ձանձրոյթ. ունէր եւ զսաղմոս 'ի բերան :
Ունէր եւ ձայն զարմանալի իբրեւ զբազմա-
բարբառ քնար. եւ 'ի սաղմոսելն հալածէր
զամ ոգւոյն չարութե. եւ զցաւս մարմնոյն խա-

ղա-

զաղացուցանէր • և էր իբրև զանմարմին ոք յերկրի , երկնաւոր կրօնիւք վարեալ ։ Տեսանէր տեսիլս ա̃ծեղէնս • և յետ ժամանակաց անցելոց լսէր ձայն , որ ասէր ցնա • ժամանակ պատերազմի , և ժամանակ խաղաղութե̃ • ժամանակ արհամարհելոյ զառժամանակեայ զկեանս , և բուռն հարկանելոյ զյաւիտենական կենացն ։ Եւ նր̃ լուեալ զայն՝ պնդէր զխորհուրդս իւր , և պատրաստէր տալ զանձն 'ի հանդէս վկայութե̃ վս̃ անուանն ա̃յ • քանզի գիտաց , եթէ կամք ա̃յ են յայտնել այնուհետև զանձն իւր • վս̃յ և զերկիւղ մահու 'ի բաց ընկեցեալ՝ աւանց զանգիտելոյ այնուհետև ցուցանէր զինքն ամենեցուն • և բազումք եկանէին առ նա ։ Եւ տեսեալ զնա հեթանոսաց հովուացն՝ որ 'ի լերինն էին , և զվայրենի անասունսն՝ զոր ձեռնասուն արարեալ էր սր̃յն , իջեալ 'ի քաղաքն՝ պատմեցին ամենեցուն • և յաճախեաց բազմութի̃ գնալ առ նա ։ Եւ տեսանէին զսքանչելիսն , մանաւանդ զեղջերուսն հանդերձ եղամբք , որք իբրև իջաւանս ինչ առնէին առ նմա , նախ՝ վս̃ աղբերացն , որ էին անդ • դարձեալ և 'ի գազանաց փախուցեալ՝ իբրև յամուրս ինչ անդ ապաւինէին • զորս ընդելացուցեալ նորա՝ կթէր բազումանգամ • Ջ̃գի և շուրջ զյարկաւ նորա ծնանէին ։

Եւ հաս համբաւ նորա մինչև 'ի հեթանոսս , և յոյժ խռովեաց զնո̃ • քանզի բազումք վարդապետութե̃ նր̃ դառնային յա̃ծ կենդանի •

որում

որում ոչ կարացեալք համբերել պաշտօնեայք կռոցն՝ երթեալ առաջի իշխանին՝ ասեն ․ Կախարդ ոմն է ՚ի լերինն , որ կախարդէ զերգչերուս ․ և զբազումս յիմարեցուցանէ գիտուն ․ և ասէ , թէ չեն ուժքն ստեղծօղք ծի և յօրինիչք ամի , այլ՝ ոմն յն քն ած Ճշմարիտ , որ զամ ինչ արար և յօրինեաց ․ այն՝ զորմէ հրեայքն ասեն , թէ մոլորեցուցիչ էր ։

Զայն լուեալ իշխանին՝ հրամայեաց վաղվաղակի երթալ ըմբռնել զմամաս ․ և դահճացն երթեալ գտին զնա , զի յաղօթս կայր , և երգէր զերգս հոգևորս ․ և զարմացեալ էն սքանչելի տեսիլն որ՝ ոչ իշխէին բուռն ինչ գործել նմա ․ այլ ողոք բանիւք ողջագուրեալ՝ աղաչէին գալ էն իւրեանս առ իշխանն ։ Իսկ նա ուրախութ մեծաւ հաւանեցաւ գնալ․ այլ միայն կամեցաւ յառաջագոյն կատարել զաւուրքն մարդասիրութե զգործ ․ ապա փութացեալ նոյնժամայն եդ առաջի նց մորգ և պանիր եղանց , զոր ինքն էր գործեալ ․ և աղաչէր՝ զի կերիցեն ․ և նք կերան և արբին ․ և յարուցեալ անկան ՚ի ճանապարհ նովաւ հանդերձ ։

Որդ եկեալ ՚ի կեսարիա առ իշխանն՝ կացուցին առաջի զերանելին ․ յայնժամ ասէ ցնա իշխանն ․ որո՞յ բախտի ես , և զի՞նչ է արուեստ կախարդութե քո ․ ա՛ղէ յառաջ քան զտանջանսն խոստովանեա՛ զխաբէութե քո ։ Մամաս ասաց ․ ես զքն ունիմ ․ ո՛չ կախարդ եմ , և ո՛չ խաբեբայ ․ քանզի այնպիսիքն

սիքն կուոց պաշտօնեայք են . այլ զմեզ քո
դնեաց յայնմ ամէ . և հաւատովքն՝ որ 'ի
նա , զամ ինչ հնազանդեաց մեզ , զցամա-
քայինս և զջրայինս , զընտանի և զվայրե-
նի . այլ զկախարդ լսել անգամ գարշիմք ։
Պատաւորն ասէ . մի բաղում բանիւք խա-
բեր զամբոխս . այլ յառաջ քան զտանջանսն
ասա՛ , զի՞նչ գործեիր ։ Սամաս ասաց . կար-
ծես սպառնալեօք զարհուրեցուցանել զիս .
այլ իմ ամ փոյթ զճշմարիտն է ասել . քան-
զի սուտն հրաժարեալ է 'ի ծառայէ այ .
այլ դու զհաւատն մեր եթէ կամիցիս հա-
ւատալ , շահիս զայս կեանս և զհանդեր-
ձեալն ։ Մեք քրիստոնեայ եմք , և զմի ած
խոստովանիմք՝ որ զամ ինչ արար . վս զի ա-
մենակալ և բարերար է , և զամ ինչ կատա-
րեաց . երևեցաւ մարմնով՝ զածութին հօր
պատմելով մեզ , զոր թողեալ էին մարդիկ ,
և զփայտ և զքարինս պաշտէին . յայնցանէ
փրկեաց զմեզ , և 'ի բարեպաշտութի եած .
և եցոյց՝ եթէ ում պարտ է երկիր պագա-
նել , և թէ որպիսի կենօք կեցեալ հաճոյ
լինիցուք այ ։

Ասէ իշխանն անօրէն . և զիա՞րդ սպանաւ
խաչեալն իբրև զկախարդ ։ Սամաս ասէ .
չէ՛ այդ նշանակ կախարդութե , այլ՝ կատա-
րեալ մարդասիրութե փրկչին մերոյ և այ ,
որ յանձն էառ չարչարակից լինել մեզ , և
յարութեամբ իւրով յարուցանել զմեզ , և
ցուցանել զճանապարհն՝ որ յերկինսն է . որ
և միւսանգամ եկեսցէ դատել զկենդանիս

և

և զմեռեալս ։ Պղատաւորն ասէ ․ զի՞ երկայ-
նաքանես՝ զանձնդ խաբելով ․ եթէ ա̃ծ էր
նա, առանց ինչ իւրոյ անարգութե̃ն յարու-
ցեալ էր զմեռեալս, բանիւք միայն՝ և ոչ
մարմնով վարելով ․ այլ դու զա̃մ 'ի բաց
թող, և զոհեա՛ ա̃ծոյն ․ զի և կախարդութե̃
վնասն թողցի քեզ ․ զարմացել̃ է̃ արեգակն՝
երկի՛ր պագ նմա ․ զի առաց նր̃ անհնար է
կեալ երկրի ։ Իսկ երանելին մամաս բաղում
բանիւք յամօթ արար զանմիտ բանդագու-
շանս դատաւորին ․ և 'ի վր̃ եած ․ ոչ է բա-
րիոք ասէ արեգական երկիր պագանել և
պաշտել, որ և ինքն պաշտօնեայ է ․ զի վ̃
մեր անդադար զերկրաւ շրջի ։ Պղատաւորն
ասէ ․ գո՛նեա երկնի զոհեա՛, որ զա̃մ ինչ է̃
ինքեամբ ունի ։ Մամաս ասէ ․ և նա արա-
րած է ա̃յ, որում և եթ զոհ կենդանի պարտ
է զանձինս մեր մատուցանել ։

Պղատաւորն ասէ ․ մի՛ հարկեցուցաներ զիս
այլազգ ինչ մատչիլ 'ի քեզ, այլ վաղվաղա-
կի զոհեա՛ ա̃ծոյն՝ որոց և թագաւորքն զո-
հեցին ․ ապա թէ ոչ՝ ա՛կն կալ ջիր անհնա-
րին չարչարանաց ․ և 'ի զուր ունիս ապաշա-
ւել յետ տանջանաց ։ Մամաս ասաց ․ եթէ
իմաստութե̃ք խօսէիր է̃ իս, տայի արդեօք
պ̃խնի բան առ բան ․ ապա եթէ անմտութե̃ք
զբռնութե̃ 'ի վար արկանես՝ յաղթեալ յու-
ղիղ բանէն, արա՛ զոր ինչ կամիս ․ զի ես ոչ
ամպարիշտ թագաւորաց հնազանդիմ, և ոչ
անօրէն հրամանաց ձերոց հաւանիմ ․ և ոչ
ի՛հիք յանձն առնում զոհել պիղծ և դար-
հե-

շելի կռոց ։

Փորձել կամեցաւ զնա դատաւորն և ողոք
քանիւք․ ասէ․ Ե՛կ հաւանեա՛ց պարգևաց
թագաւորաց, որ շնորհեն քեզ զպատիւ և
զփափկութի և զմեծութի․ լե՛ր կենաց խոր-
հրդակից անձին քում։ Գիտնի ես մկայնքնի․
այդ ամէ՝ որ մոլորեցուցանէ զքեզ ապստամ-
բեցուցանել յայ, անցաւորացս ասեմ վայ-
ելչութի․ զոր մեք կամօք արհամարհեցաք
և ընկեցաք՝ի բաց իբրև զխափանիչ առաքի-
նութե․ և եթէ դուք այդու համարիք զան-
ձինս երանելիս յասուի կեանս, յետ մահ-
հուան ձերոյ չի՛ք ոք ողորմելի քան զձեզ ։
Բարկացաւ դատաւորն և ասէ․ զոհեա՛ թշ-
ուառական, զի մի՛ և 'ի հոգւոյդ զրկիցիս ։
Զայս ասացեալ՝ հրաման ետ մատուցանել
զնա 'ի տանջանս ։ Մամաս ասաց․ հաւա-
տա՛ ինձ ո՛վ իշխան, զի դու թերևս շարժիս
'ի բարկութ․ այլ յիս ամենևին ցաւ ո՛չ մեր-
ձենայ, այ իմոյ մարդասիրի զցաւեղն 'ի բաց
առեալ յինէն․ զոր օրհնեմ հոգւով և փա-
ռաւորեմ յամ զօրութ․ զի արժանի արար
զիս զտառապեալս մն իւր չարչարիլ։ Դա-
տաւորն ասէ․ ահա յայտնի երևեցար ամե-
նեցուն կախարդ գոլ․ զի և ցաւոց անզգամ
չզգալ ասես․ մն որոյ և ես համից զքեզ 'ի
քաղցր կենաց ։ Իսկ ցդահիճսն ասէ․ մինչև
ցներքին ոսկերս մերձեցուցէ՛ք զքերանսն,
և երկաթօք զձեռս դորա գելեալ՝ անպի-
տան կացուսջի՛ք ։ Իսկ նք բուռն ձկտանօք
զբազում երանելւոյն յօդախաղաց առնէին

'ի

'ի պրկոց կախաղանին . և անխնայ քերանօք տանջել՝ զկողս նորա մազեղէն խորգով շփելին համդերձ աղիւ , զի առաւել մորմոքեսցին վէրքն ։ Իսկ երանելոյն ձայն արձակեալ՝ ասէր 'ի լուր ամենայն ռամկին . օրհնեալ ես Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս , որ ոչ մի ինչ զգայութիւն տանջանաց արարեր յիս ։

Զայն լուեալ իշխանին , և յաւաւել բարկութիւն շարժեալ՝ հրամայեաց պատրաստել զգազանս , զի առաջի արկցէ նոցա զնա 'ի վաղիւն ։ Առ այս ասէ Մամաս . ո՛չ երևեսցին ինձ գազանքդ վայրենագոյնք քան զարիւնարբու միտս քո . զի քո կարող է միւսանգամ պահել զիս ։ Իսկ դատաւորն ասէ . վստա՞հ ես դու ա՛յ թշուառական յանօրէն մեքենայսն քո մոլորութեան . և ո՛չ գիտես՝ եթէ որպիսի սովեալ գազանք մնան քեզ ։ Ապա 'ի միւսումն աւուրն ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ իշխանին ամենայն բազմութեամբն հանդերձ՝ երթայր 'ի տեսարանն . և բազմամբոխ խուժան հրէից և հեթանոսաց ժողովեալ էր անդ ։

Եւ իբրև ածին զերանելին կապեալ , արձակեցին նմա արջ մի դժնդակ . որոյ զբազում ըմբիշս գազանամարտս սպանեալ էր ։ Եւ նա երթեալ մերձ 'ի սուրբն , և ոչ թէ պատկառեալ 'ի նմանէ , անդրէն յետս 'ի դառադեղն իւր դառնայր ։ Դարձեալ արձակեցին ինձ մի . և սորա երթեալ հեզիկ առ սուրբն՝ լեզւոյր զվիրաւոր մարմին նորա , և սրբէր ոտս արիւնդաւ ։ Իսկ դատաւորն զչարէր ընդ իրան ,

և

և ամբոխն անօրինաց աղաղակէր, զի առիւծ արձակեսցեն: Եւ իբրև արձակեցին, եւ առիւծն գոչելով. և թողեալ զսուրբն՝ յամբոխն դառնայր. և այնպէս ահ արկեալ նոցա՝ 'ի տեղի իւր չոգաւ: (3)

Մինչդեռ զայրացեալ կայր դատաւորն, և զմտաւ ածէր՝ թէ որո՞վ մահուամբ սպանցէ զնա, ձայն ետ առ նա սուրբն Մամաս արիաբար, և ասէ. Աստուածատեա՛ց և մարդատեաց, և թշնամի արդարութեան, զի՞ յապաղես առնել զկամս հօրն քո սատանայի, և յուղարկել զիս 'ի պսակն պատրաստեալ յերկնաւոր հանդիսադրէն: Յայնժամ հրաման ետ դատաւորն, զի ամենայն ամբոխն քարկոծեսցեն զնա. և բազմութեան կրճտեալ զատամունս՝ կուտեցան 'ի վերայ նորա, և քարկոծ արարին իբրև ժամ մի, մինչև համարեցան՝ թէ մեռաւ. այլ նա տակաւին յաղօթս կայր 'ի վերայ սպանողաց իւրոց: Յայնմ վայրի մի ակնարկելով դատաւորին յարձակեցաւ 'ի վերայ սրբոյն ըմբիշ մի, և եհար զնա երեքժանի նիզակաւ, կամ տապարաւոր գեղարդեամբ. և սուրբն յարուցեալ եկաց 'ի վերայ վիմի արտաքոյ քաղաքին կեսարու իբրև ասպարէզս երկուս, և օրհնեաց զԱստուած. և հեղոյր 'ի մարմնոյ նորա արիւն որպէս յաղբերէ: Եւ նոյնժամայն ձայն եղև 'ի Տեառնէ, և կոչեաց զնա յարքայութիւն երկնից. և այնպէս հայեցեալ Մամասայ յերկինս՝ աւանդեաց զհոգին 'ի ձեռս Աստուծոյ 'ի սկզբան տարեգլխոյն յունաց, որ օր առաջին կամ երկրորդ էր սեպտեմբեր ամսոյ՝ յամի Տեառն իբր 274:

274։ Սոյն և մեծն Բարսեղ Կեսարացի ասէ ՚ի կատարած ներբողենի սբյն Մամասայ, զոր խօսեցաւ ՚ի վկայարանի նր ․ * Իսկ այն՝
,, որ գլխաւորեաց զմեր զայս տօնաժողով
,, հանդէս, և սահման եդ ուխտից անցե֊
,, լոյ ամի, և գլուխ ետ առաջիկայ տարւոյս ․
,, քանզի սոյն այս օր աւարտէ մեզ զանցել
,, շրջանն, և գլուխ լինի դարձել եկաւորե֊
,, լոյն ․ արդ՝ որ ժողովեաց զմեզ միաբան,
,, և շնորհեաց զհանդերձելոյն զներգործու֊
,, թի, պահեսցէ և պահպանեսցէ զմեզ ՚ի
,, նմին անարատս, անփորձս և անյափշտա֊
,, կելիս ՚ի գայլոյ ․ և անշարժ պահեսցէ զե֊
,, կեղեցիս զայս զպարսպեալն մեծամեծ աշ֊
,, տարակօք վկայից ‖ ։ Իսկ գրիգոր ածաբանն ՚ի ճառն Նոր կիւրակէի նշանակեաց և զյիշատակ սբյն Մամասայ, կոչելով զնա * հովիւ և վկայ, և իմ պսակաւոր, որ յաւաջ եղինս կթէր ‖ ․ զի թերևս յայն օր կատարէր նաւակատիք եկեղեցւոյ նր, և կմ փոխադրութի նշխարացն ։

Նիկետաս մեկնիչ ճառի ածաբանին ասէ իբրև յաւանդութէ, թէ ամմիա դայեակն սբյն Մամասայ ամփոփեաց զմարմին նր, և շինեաց զվկայարան ՚ի վր գերեզմանին՝ իբր ասպարիզաւ հեռի ՚ի Կեսարիոյ ․ իսկ այլք համարին զամմիա յառաջագոյն վախճանել ․ և զեկեղեցին յետ ժամանակաց շինեալ, կմ ՚ի հիմանց հոյակապ կառուցել յաւուրս մեծին Բարսղի ․ զորմէ այսպէս գրէ Սոզոմենոս ( գիրք ․ Ե ․ գլ ․ Ը ) ։ Ի ժամանակին՝ յո֊

 րում

բումն չև էր յուլիանոս ապստամբեալ 'ի քնէ ,
և չև ևս էր Թագաւորեալ , այլ յիշխանա-
կան կարգի հանդերձ եղբարբ իւրով գաղ-
սիւ՛ վարէր զքրիստոնէութիւն , երկոքին ս՛ք
եղբարք կային 'ի հրահանգս սննդեան յեր-
կրին կապադովկացւոց 'ի շէնն մակեղոն կո-
չեցեալ առ ատգէոս լերամբ՝ ոչինչ հեռի 'ի
կեսարիոյ . մեծարէին զքահանայս և զեկե-
ղեցիս : Արդ 'ի նոյն աւուրս ձեռն արկին
սոքա , որպէս ասի , պատել զգերեզմանն մամա-
սայ վկայի մեծակառոյց վկայարանաւ , բա-
ժանելով զգործն 'ի մէջ իւրեանց : Այլ յոր-
ժամ միմեանց յաղթել ջանային մեծագոր-
ծութբ , գործ դիպաւ զարմանալի՝ և ամե-
նևին իսկ անհաւատալի , եթէ չլինէին բա-
զումք 'ի նոյանէ առ մեզ կենդանի՝ որք յա-
կանատեսից անտի լուեան զիրսդ : Մասն զի
այն կողմն գործոյն՝ որ անկաւ գաղոսի , եր-
Թալով երԹայր և բարձրանայր , և բն փա-
փաքման նորա յառաջ խաղայր . իսկ գործն
յուլիանոսի՝ էր զի կործան անկանէր , և էր
զի հիմն 'ի վեր տապալէր . մինչ զի և ուրեք
ուրեք չհանդարտէր գործոյն տեղակալել 'ի
գետնի՝ իբրև յերեսաց դիմամարտ բռնութեց
'ի բաց վանեալ քակտէր : Զսոյն զայս յիշա-
տակէ և Ծմակլեցն [illegible] մծաբեան ( որ
յայնժամ յաԹենս էր ) . 'Ի Ճառն գ . Ընդդէմ
յուլիանոսի . [illegible] յետ նշանակելոյ զայս
սքանչելիս՝ 'ի վր բերէ . * Ապա եթէ ոք
,, ոչ արժանահաւատ դատեսցի զիմ բանս ,
,, զնոսին իսկ վկայս 'ի մէջ առեալ՝ որք ակա-

Բ. B ,, նա-

БИБЛИОТЕКА ... ССРА
1650 Քւ 3640
A 1082

„ նատեսեղէն իրացն, քանզի զբաղումն ու-
„ նիմ, որք որպէս առ մեզ հասուցին զայս
„ սքանչելիս, նոյնպէս և յետնոց աւանդես-
ցեն ‖:

Յետ ժամանակաց շինեցաւ և 'ի կոստանդինուպօլիս եկեղեցի յանուն սրբոյն մամասայ 'ի լևոնէ կայսերէ առաջնոյ. և առ նմին վանք սրբոյն մամասայ՝ քսիլոկերկոս կոչեցեալ. զոր ըստ ոմանց շինեաց փարսման ներքինապետ յուստինիանոսի. և ըստ այլոց քոյրն մօրիկ կայսեր, որ ետ թաղել անդ զմարմին եղբօր իւրոյ սպանելոյ 'ի փոկասայ՝ հանդերձ կոստանդինաւ դշխոյիւ, և երեք որդւովք նոցա: 'Ի վանս անդ սրբոյն մամասայ՝ զոր զկնի դարուց նորոգեաց կայսրն իսահակ անգեղոս, գտին լատինացիք զգլուխ սրբոյն յառնուլ իւրեանց զկոստանդինուպօլիս յամի տն 1204. պատեալ արծաթի շրջանակաւ՝ յորում գրեալ էր հին նշանագրօք յունաց, αγιος μαμας. և տարան 'ի գաղղիա, 'ի լինգոն կամ լանկրէ քաղաք շամբանիոյ. ուր և բազուկ մի նորին սրբոյ, և ոսկր պարանոցին, և այլ նշխարք յայլում ժամանակի տարեալ եղեն անդր: Թող զի և այլ գլուխ համանուն սրբոյ գտանի 'ի լուկա քաղաք իտալիոյ. և յայլ տեղիս զանազան մասունք յանուն սրբոյն մամասայ. ուր և եկեղեցիք և վկայարանք կային երբեմն յանուն նր 'ի հռաւեննա իտալիոյ, 'ի վերոնա, և 'ի թրեվիզ, և 'ի վիճակին միդուլեայ կմմեդիոլանու:

Այլ հռչակաւոր է քան զամ նշխարս սրբոյն մա-

մամասայ՝ առ փլամինիոս կուռնելիոս սե-
պուհ վենետիկեան այր գիտնաւոր, * ասե
,, փառաւոր վկային մամասայ, որ պահի 'ի
,, վենետիկ առ երիցունս աղօթավանից, 'ի
,, կիպրոսէ բերեալ. որ և մսով և մորթով և
,, երակօք սքանչելապէս պատեալ տեսանի||.
զոր առեալ է յընծայ փրանկիսկոսի մաւրո-
կենայ սպարապետի և դքսի վենետիկեցւոց՝
տր խաչատուր կաթուղիկոս սսոյ 'ի կրետէ
կղզւոջ, 'ի գալ առ նա յամի տն 1668. 'ի
կիպրոսէ ը գրիգորի քահանայի կիրակոսենց
զմիւռնացւոյ. զորոց և զհայերէնագիր կնքոց
և զստորագրութեց ստուգութի՝ առ նախ-
նեօք մերովք ետուն յեղուլ 'ի լատին բար-
բառ աւանդապահք նշխարաց սբյն ։ (4)

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Համառօտ, բայց զօրաւոր և պանծալի բանիւ յիշատակէ սբն գրիգոր ածաբան զմեր վկայն, ը խո-րագրովս. * Խօսք 'ի նոր կիրակէն, և 'ի յիշատակ ,, սբյ վկային մամասայ. քանզի 'ի նոր կիրակէն կա-,, տարի||։ Որ յետ խորհրդոյ տրունական տօնին՝ իբր նաւակատիք, վս նորոգութն հոգւոց մերոց, նկարա-գրեալ և զօրինակ եղանակի աւուրցն գարնայնոյ՝ յորս նորափետուր զարդարին և երևելի արարածք, այսպս վերջաբանէ։

* Եւ զի՞նչ այլ քն. այժմ վկայք յարագին և առաքին,
,, և կոչեն պայծառ գնացիւք 'ի միասին զժողովուրդս
,, քնասէրս, և զնահատակութիւն հրապարականս
,, առնեն։ Յայնցանէ մի է և իմ պսակաւորս. վս զի
,, իմ է, և մի ինչ անկցին մախանք գիտողացս. ասեմ
,, զՄամաս հուչակեալս, հովիւ և վկայ, որ յառաջ
,, եղինս կթէր՝ զձեպեալսն այլ քան զայլ, զի օտար

,, կաթամբն կերակրեսցի արդարն, բայց այժմ հոլովէ
,, զժողովուրդս մայրաքաղաքացի. և գարնայնոյս աւնէ
,, նաւակատիս այսօր բազմաց շրթամբք տմ ուսուք
,, փութացելոցն ազգի ազգի առաքինութբ, և գեղեց-
,, կութբ, և արժանաւոր հոլովակցօքն՝ հեղ բանիւք:
,, Եւ ես համառօտագոյն ասել. այժմ գարուն Տեառն,
,, գարուն հոգևոր. գարուն հոգւոց, գարուն մարմնոց.
,, գարուն երևելի, գարուն աներևոյթ. ոչ անուր փո-
,, փոխեալք, և աստ գեղեցկապէս փոփոխեսցուք, և
,, նորք առ հասարակաց կեանսն ուղարկեալք լիցուք
,, 'ի քս յս 'ի տր մեր. որում փառք և պատիւ և
,, զօրութիւն՝ հանդերձ հոգւոյն սբով 'ի փառս հյ հօր.
,, ամէն||:

Յորոյ վր այսչափ ինչ տեղեկութիւն տայ նիկետաս յոյն
մեկնիչ, (որ էր 'ի Թ, կմ 'ի ԺԱ դարու). * 'Ի տա-
,, ճարի աստ՝ որ իբր միով ասպարիզաւ հեռի է 'ի քա-
,, ղաքէն կեսարացւոց, առն նաւակատեաց կատարիւր
,, խուռն բազմութբ քաղաքին... Նոր կոչի կիրակէս՝
,, (Ը մեծաբանին) կամ վն յայնմ աւուր կատարելոյ
,, նաւակատեաց յարութն մերոյ, կմ զի նաև զութե-
,, րորդ աւուրն այնորիկ ունի զպատկեր, յորում տմ
,, ինչ նոր լինիցի: Զայս ճառ թէպէտև 'ի նազիանզաց-
,, ւոց քաղաքի գրեաց գրիգորիոս, բայց ասաց 'ի տաճա-
,, րի նորին սբյն մամասայ՝ որ մօտ է 'ի քաղաք անդր:
,, Որ և ուղ յայնժամ, նոյնպէս և մինչև ցօրս ցայս՝ 'ի
,, կիրակէն, որ հուպ է զատկի անընմէջ, բազմամբոխ
,, յաճախութբ բնակչաց տօնախմբի||:

Փոքր մի ճոխագոյն նշանակէ սբն բարսեղ զգովութիւն
սբյն մամասայ՝ յասելն. * Յիշեցէք ինձ զվկայդ, ոք
,, միանգամ 'ի ձեռն տեսլեան 'ի շնորհս նր վայելեցիք.
,, յիշեսցեն ովք պատսպարեալք 'ի տեղւոջս յայսմիկ՝
,, գտին զնա գործակից աղօթից. որոց է կարգալ զա-
,, նունն՝ երագահաս ժամանեալ գտաւ 'ի վր գործոց.
,, զորս 'ի վտարանդութէ անդրէն դարձոյց. զորս 'ի
,, հիւանդութէն կանգնեաց. զորոց զմանկունս արդէն
,, վախճանեալս՝ միւսանգամ շնորհեաց. զորոց զաւհ-
,, մանեալ աւուրս կենաց յերկարագոյնս ձգեաց: Զայս
,, տմ ինձ համահաւաքեալ՝ ներբող յօրինեցէք 'ի հա-
,, սարակաց հանդամանէ: Միմեանց մատակարարեսջիք՝
,, զոր ոք գիտէ՝ ոչ գիտողին. զորս ոչ գիտէ ոք՝ ասցէ
,, 'ի գիտողէ... Քանզի այս են ներբողանի վկայիս,
,, մեծութիւնք հոգևորական շնորհաց: Ոչ ունիմք մե-
,, ծա-

,, ծածկել զնա ը̅ օրինայ արտաքնոյն զօվչայ • ո՛չ ու֊
,, նիմք տալ զհարս և զնախահաւս ականաւորս • քան֊
,, զի ամօթ է օտարին զարդուք զարդարել այնմ՝ որ
,, իւրով առաքինութը̅ն է երևելի • զի սովորութե̅ն
,, օրինօք վարեալ՝ զայնպիսիս առնուն 'ի նիւթ ներբո֊
,, ղից • ուր ճշմարտութե̅ն օրէնք զիւրաքանչիւր գովու֊
,, թի̅ իւրուրոյն պահանջէ • • • զի՞նչ առ որդին՝ հօրն
,, պայծառութի̅ ։ Ըստ այսմ օրինակի՝ ո՛չ այլուստ էառ
,, վկայն զերևելին լինել, այլ՝ ինքն իսկ իւրովք յետ
,, այնորիկ վարուք վառեալ զՋահ բարեհամբաւութե̅ ։
,, 'Ի Մամասայ այլք, ո՛չ առ 'ի յայլոց Մամաս ։ Որդիք՝
,, որ 'ի նմանէ ուսան զբարեպաշտութի̅, նովաւ պար֊
,, ծեսցին • քանզի ինքն յինքենէ բղխէ զառաքինութի̅ •
,, ո՛չ է ո̅մ ուղխ՝ օտարին հոսանօք սնապարծ, այլ՝ աղ֊
,, բիւր է՝ յիւրմէ ծորոյ 'ի դուրս զեղեալ զվայելչու֊
,, թի̅ • • • • Ամենեքին 'ի տեղի բարեպաշտութե̅ ընթա֊
,, նան • և զայս հայր՝ առաջնորդ ճշմարտութե̅ կար֊
,, դան • • • • Հովիւ (էր) • մի՛ պատկառեսցուք 'ի ճըշ֊
,, մարտութէ̃ • • • Մերկ է ճշմարտութին, անպաճուճան,
,, անձամբ զանձն յանդիման կացուցանելով • • • Հո֊
,, վիւ և աղքատ, այս են պանծաբանութիք քրիստո֊
,, նէի ։ Եթէ զվերակացուս խնդրես վարժարանին բա֊
,, րեպաշտութե̅, ձկնորսք և մաքսաւորք • և եթէ զա֊
,, շակերտս, խաշնարածք չքաւորք ։ Ոչ ոք մեծատուն •
,, ո՛չ ուրեք շուք երևելի, այս ա̅մ էանց ը̅ ծի ։ Տես
,, արդ, եթէ զո՞յր տօնեմք զօր, յո՞յր վ̅ր խրախ եմք ա֊
,, մենեքին, ո՞յր վ̅ս այլափոխեալ քաղաքս ։ Քանզի հո֊
,, վիւ յիշեցաք, մի՛ անգոսնիցես զկոչումն, (յիշեմ
,, աստ զաբէլ, զմովսէս, զյակոբ, զդաւիթ) • • • Հա֊
,, րազատք են իրերաց հովուական պաշտօն և թ̃գրա֊
,, րական պատիւ • • • վ̅սյ զերկուսին բովանդակելով ո̅րն՝
,, հովիւ է և թագաւոր, զանբանագոյնս հովուելով, և
,, զբանականագոյնս ը̅ անտեսութե̅ թ̃գրութե̅ առաջ֊
,, նորդելով || ։ Ապա զհովիւն քաջ յիշելով՝ կշտամբէ
զվարձկանս, որք անարժան հովիւք եղեն և հերձուա֊
ծովք պառակտիչք եկեղեցւոյ • ևն ։

Արդ՝ ո̅մ յայտ է, ը̅հանուր ստացուածք ա̅ծաբանին
և քարոզի՝ զնմրդ և աւցին, հաստատուն են բովան֊
դակ վարուց և վկայաբանութեան ս̅րյն Մամասայ • որ
ընդհանրապէս յերկիս տեսակս վերածի • մին է ճառըն֊
տրիս մերոյ Ա • ուր չի՛ք նախընթաց վարք ն̅ր ը̅ ծըն֊
դեանն և սննդեանն • այլ սկիզբն պատմութե̅ դնի 'ի պա֊

տանեկութենէ սրբոյն եւ 'ի բնակութենէ անապատի: Ըստ այսմ է եւ օրինակն մոմբրիտեան յառաջ բերեալ 'ի բոլլանդեաննն պինիոսէ: Երկրորդն է յայսմաւուրաց Հ. եւ Յ. ընդ Ճառընտրի'Դ, եւ ընդ մետափրաստեսի եւ այլոց բազմաց. որք եւ զնախընթաց վարս աւանդեն ըստ գրելոյս, եւ զվկայաբանութիւն ոչինչ ընդհատ 'ի գրելոյս: Երրորդն է մանաւոր վկայագրաց, որ են սլաւոնուսեան օրինակն, եւ փլորիսկեան մատենադարանն՝ զոր 'ի լոյս եած յովհաննէս բոսկեան, եւ այլ անանուն հեղինակք յետին դարուց, որք անընտրողաբար կուտեցին զպէսպէս պարագայս 'ի վերոյ հարազատ վարուց եւ վկայաբանութեան սրբոյն մամասայ. յորոց ըստուցեալ պինիոսի եւ այլոց քննչաց՝ 'ի կամիլն մերժել զանստոյգ աւանդս՝ դիմախօս եղեն եւ ստոյգ կամ հաւանելի բանից: Եւ այսպիսի չափազանց կրիտիկոսաց քաջ պինատու եղեւ փլամինիոս կոռնելիոս կամ ֆլամինիօ գոռնէր իմաստուն սեպուհն վենետիկեան յառանձին դիրս, զորս գրեաց յաղագս վարուց եւ նշխարաց սրբոյն մամասայ՝ անաչառ խուզարկուք ըստ հին եւ ըստ նոր քննութեանց. յորմէ բազում ինչ քաղեալ էր մեր. այլ ոչ կամեցաք ծանրաբեռնել զգործ մեր վկայաբանութեամբք այլոց ընդ միմեանս. որ ոք կամի, տեսցէ առ նմա. մեք շատացաք այնպիսի բանիւք, որք ոչ տանին զհակառակութիւն:

(2) Աւրեղիանոս, որ գրի 'ի Հ. եւ 'ի Ճ. Դ. կամ Օրեղիանոս, որ դնի 'ի Ճ. Ա. թագաւորեաց յամի տեառն իբր 270. եւ ոչ եկաց աւելի քան զամս հինգ կամ վեց. վասնզի եթէ առ նովաւ պատանեակ էր սուրբն մամաս, որ ցուցանէ Ճ. Ա. կամ թէ առ նովաւ կատարեցաւ, որպէս կարծի յայլոց, ապա ծնօղք նորա 'ի հալածման նախընթաց կայսերաց, զի դաղեանոսի կայսեր ըմբռնեցան. ապա եթէ յաւուրս աւրելիանոսի բանտարկեցան ծնօղք մամասայ, որ ցուցանէ Հ. եւ Ճ. Դ. ապա պատանեկութիւն եւ նահատակութիւն սրբոյն մամասայ անկանի յաւուրս յաջորդաց նորա մինչեւ 'ի դիոկղետիանոս: Վէճ է առ քննիչս եւ այն, թէ արդեօք 'ի պատանեկութեան նահատակեցաւ մամաս, եթէ յերիտասարդութեան. որոց երկաքանչիւրն իսկ է հաւանելի, եւ համաձայն վկայաբանութեանս. իսկ 'ի ծերութեան ասել ըստ ոմանց՝ օտար թուի յընթացից պատմութեանս:

(3) Ըստ դոյացութեան միաձայնին ամենայն վկայաբանք 'ի չորչարանս եւ յատենախօսութիւնս՝ ընդ մերում Ճ. Ա. որում մեք առաւել զհետ երթամք: Միայն մետափրաստէս,

եւ

և գոդեփրիտոս հետևօղ հին օրինակի նր՟, ոպ՟ և Հ․ և Ճ․ Դ․ հետևօղք նոյնպիսի օրինակաց՝ յաւելուն, թէ յետ քերանաց և նախ քան զգազանամարտութի՟՝ 'ի հնոց հրոյ արկեալ իցեն զսբ՟ն մամաս․ և յետ երից աւուրց գտեալ զնա ողջանդամ։ Այս չէր ինչ․ այլ անտանելի է յաւելուածն Հ․ (ընդ որում նոյն է և Ճ․ Դ․), թէ մին 'ի գազանաց խօսեցեալ իցէ մարդկեղէն բարբառով․ զոր ոչ ոք այլ 'ի մէջ բերէ․ գուցէ յասորի գրոց է 'ի փոխ առեալ։

(4) Բազումեն բանք յաղագս վկայարանաց և եկեղեցեաց շինելոց յանուն սբ՟յն մամասայ յարևելս և յարևմուտս, եւս առաւել մն՟ նշխարաց գտելոց յանուն նր՟ 'ի զանազան տեղիս։ Յերկարագոյն հաւաքեալ էր և մեր․ այլ 'ի կարճոյ նշանակեսցուք զայսոսիկ եւեթ։ Բարոնիոս դնէ՝ թէ 'ի հռովմ կայր տաճար սբ՟յն մամասայ 'ի Է դարու․ ուր մեծն գրիգոր խօսեցեալ իցէ զկուր ճառ լէ երորդ․ բայց այլք ստոյգ համարին, թէ այն էր տաճար սբ՟յն մինասայ, և ոչ մամասայ։ Յայսպիսի հոմաձայնութ՟ն թերևս հայի և այն, զի ուր 'ի վկայաբանութե՟ մամասայ ասի լինել քաղցրաբարբառ, 'ի շարականի՝ սբ՟յն մինասայ ընծայի։ Զարմանալի է և առ իտալացիս անգիտելի անուանս ծանոյս․ յորոյ անուն կայ աւագ եկեղեցի 'ի բոնոնիա ֆ 'ի պօլօնիա․ այլ չէ յայտ՝ թէ առ ո՞ 'ի սբ՟ց հայի․ հաւասարակօրէն կարծի լինել սբ՟ն մամաս, որ և մամէս․ բայց նք՟ և զանուանս հերոնիմոս՝ զոր կոչեն ճիրօլամօ, ռամկօրէն ձայնեն նաև մոմոլօ։

Ուր թողից զայն, զի 'ի կողմանս հռաւեննայ իբր հինգ մղոնաչափ հեռի կայ եկեղեցի սբ՟յն մամասայ՝ օրիօլօ կոչեցեալ․ ուր չինականք տեղւոյն զսբ՟ վկայն կոչեն սան ման, ոպ՟ թէ սբ՟ մամաս․ բայց քանզի այդ ձայն իտալական՝ նշանակէ սբ՟ յէռն, սովորութ՟ն եղև պարզամտաց՝ յոմն ցաւս ձեռաց և ոտից դիմել առ սբ՟ն մամաս, և թ՟ հաւատոց իւրեանց գտանել զառողջութ՟ն, և կախել զնշանակս բժշկութե՟ առ խորանի սբ՟յն զփայտեղէն ձեռս կամ զոտս։ Իսկ մեդիոլանեցիք, որք համարին՝ թէ առ իւրեանս 'ի տաճարի սբ՟յն ստեփաննոսի իցէ մարմին սբ՟յն մամմէսի կամ մամասայ՝ ոպ՟ թէ բերեալ 'ի կեսարիոյ կապադովկացւոց յանյիշատակ ժամանակաց հետէ, բարեխօս ունին զսբ՟ն մամաս վասն անդեայ մանկանց և դայեկաց, եւս և մն՟ անձրևոյ յերաշտի։ Որպէս և յանուն նր՟ նուիրեալ է եկեղեցին՝


որ

որ մօտ ՚ի լերն Լուկանայ. Թող և զմասունսն և զերա-
բանս բաղումս ՚ի վիճակին Մեդիոլանու։

Փլորենտինիոս՝ որ ՚ի հերոնիմեայն վկայագիրս դնէ զյիշատակ սրբոյն Մամասայ ՚ի յուլիսի 17, գրէ ՚ի ծանօթութեն. * Զգլուխ սրբոյ Մամասայ եդեալ յարծաթի
„ տուփ՝ տեսի ՚ի Լուկա քաղաքի ՚ի վանս կուսանաց
„ սրբոյն Յուստինեայ կուսի, հանդերձ հին յիշատակա-
„ գրութբ ՚ի վր մագաղաթի, ուր առ հնութեն չէր
„ մարթ զայլ ինչ ընթեռնուլ՝ բաց յանուանէ սրբոյն Մա-
„ մասայ ||։

Ընդարձակ բանիւ գրի առ պիննիոսի և պատմութիւն նշխարաց սրբոյն Մամասայ՝ որ ասի բերեալ ՚ի Կոստանդինուպօլսոյ ՚ի Լինգոն գաղղիոյ ՚ի սկիզբն ԺԳ դարու, հանդերձ պէսպէս սքանչելեօք։ Նոյնպս ճոխաբար գրէ Ստեփաննոս Լուսինեան ՚ի գաղղիական պատմութն իւրում, որ յաղգս Թգրութն Եէմի, Կիպրոսի, և Հայոց Կիլիկեցւոց, թէ ոմ՟ մարմին սրբոյն Մամասայ՝ զոր Մամուլոս կոչեն իտալացիք ՚ի Բոնոնիա, եդեալ ՚ի մարմարիոն տապանի՝ արկաւ ՚ի ծով, և սքանչելապէս եկն ՚ի Կիպրոս կղզի. և տեսլեամբ սրբոյն ստուգեցաւ, և հանաւ ՚ի Մորփոն գիւղ կղզւոյն, ուր մնաց անշարժ, և անդ է ասէ մինչև ցայժմ. և միշտ ցօղէ ՚ի տապանէ անտի աւիշկ քաղցր և պատուական՝ առողջարար ամ՟ ցաւոց, և ցածուցիչ խռովութեան ծովու։ Զայսոսիկ գրէր նա յամի տն 1570։ Զնոյն կանխաւ՝ ք՟ մի և կէս դարու յառաջ՝ գրեալ էր և Յովհաննէս աւրխապա սիկելեացի, այր երևելի յոյն և լատին գրով, և խորհրդական Նիկողայոսի հինգերորդի հռովմայ հայրապետի։ Զայսոսիկ յառաջ բերէ Փլամինիոսի՝ ամ՟ հաստատութ՟ ստուգէ զնշխարս սրբոյն Մամասայ, զոր ետն վենետկեցւոց խաչատուր կեղկան սոյ՝ բերեալ ՚ի Կիպրոսէ ՚ի Կրետէ յամի տն 1668. և իրաւամբք զայս մասն ըստուգագոյն համարի քան զայլ ամենայն նշխարս՝ որ գտանին յանուն սրբոյն Մամասայ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Ս՟բյն Փիլիկտիմոնի, որ ըստ այլոց՝ Փիլումենոս ։

Հ. դեկտ. 2 ։ Յ. Լ. նոյեմբ. 29 ։

ՆՐԱՆԵԱԼ ԻՍ ԱՅՍ ՎԿԱՅ Ք՟ի, որ ՚ի տօնացոյցս մեր Փի-լիկտիմոն կամ Փիլիքտիմոն ան-ուանի, և ՚ի յայսմաւուրս Փի-լիմոն կամ Փիլիմանոս. ՚ի յունականին Փիլու-մենոս (որ թարգմանի սիրեցեալ, կամ սի-րելի), խորհրդով տօնախմբի ՚ի մեզ ը՟դ ս՟բյն մամասայ, զի ՚ի նոյն հալածանս աւրեղիա-նոսի կայսեր կատարեցաւ. և ծաւ իսկ չէր կարի հեռաւոր. քանզի բնիկ էր յերկրէն լիկայոնիոյ, և վաճառական ցորենոյ. զոր առեալ բերէր և վաճառէր յանկիւրիա քա-ղաք գաղատացւոց ։ Նա քանզի քրիստոնեայ էր, և ոչ ծածկէր զհաւատս իւր նաև յա-ւուրս հալածանաց, մատնեցաւ յատեան իշ-խանին անկիւրիոյ. և հարցափորձեալ հա-մարձակ խոստովան եղև զՔ՟ս Ա՟ծ, և անար-գեաց զկուռս ։

Յայնժամ հրաման ետ իշխանն, և հեղու-սին յոտս և ՚ի ձեռս քաջ նահատակին բևեռս եր-

երկաթիս , և տանջեցին չարաչար . ապա համեալ 'ի կախաղան՝ քերեցին . և յետ քերանաց արկին զնա 'ի հնոց բորբոքեալ : Եւ իբրև անվնասելի պահեցաւ զօրութբն այ , միւսանգամ բևեռս անցուցին յոտս և 'ի ձեռս նր և 'ի գլուխն . և խաղացուցին ընդ ասպարեզս երեսուն . կամ ոտ այլք գրեն . զերկուս ձեռս բևեռեցին 'ի գլուխն , և զերկուսին ոտսն ը միմեանս , և այնպէս քարշեցին ը երկիր : Եւ յայնպիսի տանջանս աւանդեաց երանելին զհոգին իւր առ ած :

# ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

## Սիմէոնի Սիւնակեցւոյ առաջնոյ :

Հ. Յ. Սեպտ. 1 : Լ. յունվար. 5 : Բոլլանդ. յունվ. 'ի ա հատ. յնվր. էջ. 261=286 : Վարք հարանց : Անտոն աշակերտ սրբյն : Թէոդորետոս 'ի Փիլոթէոսն : Եւագրիոս . Նիկեփոր . և այլք բազումք : (1)

ԱՇԽԱՐՀԱԶԱՐԴՈՂ այրն այ , և կատարեալ ճգնաւորն քսի՝ մեծն Սիմէոն Սիւնակեաց , էր յաւուրս կայսերութե Թէոդոսի փոքու և յաջորդաց նր , 'ի Սիսան գեղջէ՝ որ 'ի սահմանս Անտիոքայ Ասորւոց .

անուն հօր նո՛ր խոխւքլոս , և մօրն մարթա ·
աննշան , այլ բարեպաշտ ծնողաց զաւակ ·
որ 'ի տղայութենէ արածէր զխաշինս հօր իւ-
րոյ · իսկ յաւուրս կիրակէից կանխէր յեկե-
ղեցին , և լսէր զա՟ծային գիրս : Եւ յորժամ
եղև նա ամաց իբրև երեքտասանից , լուեալ
յեկեղեցւոջ զընթերցուած առաքելոյն պօ-
ղոսի և զաւետարանական երանութիս , վա-
ռեցաւ սիրտ նո՛ր առաւել քան զստորականն
'ի սէր և յերկիւղն ա՟յ : Եւ գտեալ ծերունի
զոմն ա՟ծասէր՝ հարցանէր 'ի նմանէ · զի՞նչ
էր հա՛յր բանն կարդացեալ : Եւ ծերն ասէ ·
վ՟ն ժուժկալութէ անձին որդեակ : Սիմէոն
ասէ · և զի՞նչ ժուժկալութին իցէ , աղաչեմ
զքեզ հա՛յրիկ , ուսո՛ զիս , զի մանուկ տգէտ
եմ , և ցանկամ ճանապարհին ա՟յ :

Յայնժամ ասէ ծերն · ժուժկալութին փըր-
կութի է անձին , առաջնորդ լուսոյ՝ որ տա-
նի յարքայութին երկնից · և եթէ ուսանել
կամիս որդեակ , ժուժկալութի է՝ եթէ ոք
պահս պահէ ս՟ք սրտիւ , և յաղօթս կայ ա՟մ
երկիւղիւ և պատկառանօք , կատարելով
զպաշտօն առաջին ժամուն և զվեցերորդին
և զիններորդին և զգիշերայինն , և հպատա-
կելով ա՟մ գործոց բարեաց զցայգ և զցերեկ·
զորս և յՏի մարթ է լնուլ , այլ այս ա՟մ օրի-
նօք կատարին 'ի վանս : Ահա իմացար որ-
դեակ · քննեա՛ զայս ա՟մ 'ի սրտի քում , և ընտ-
րեա՛ զքո բարին · զի եթէ ցանկանաս զկա-
տարեալ ճանապարհէն բուռն հարկանել ,
պա՛րտ է քեզ և քաղցնուլ և ծարաւիլ , մերկ

և

լինել, զօկել, ապտակել, նախատել, հե-
ծել, արտասուել և տքնիլ. երբեմն առողջ,
և երբեմն հիւանդ լինել. յիրս իրս բերիլ,
և յայլոց հրաժարել. խոնարհութեն յանձին
ունել, հալածանաց համբերել, և բազում
ինչ կրել 'ի մարդկանէ. սակայն և ոչ այնչափ
անայցելու մնայցես 'ի հրեշտակաց այ: Հա
լուար որդեակ զնմ. որն փառաց տացէ
քեզ միտս բարիս ըստ յօժարութե սրտի քո:
Յայնժամ գնացեալ սիմէոնի 'ի վկայարան
ուրեք սրբց՝ տարածեաց զանձն 'ի գետին, և
խնդրեաց 'ի այնէ ցուցանել նմա ճանապարհ՝
յոր գնասցէ: Եւ ինչ ոչ զգացուցեալ ննու-
զայն՝ դէմեդեալ չոքաւ 'ի տեղի անապատ.
ուր անկեալ 'ի վր երեսաց իւրոց յերկիր՝
լայր և աղաչէր զնծ, անսուաղ ամենևին
զաւուրս եօթն: Եւ յետ աւուրց եօթանց եւ
գնաց առաջնորդութբ այն 'ի կողմանս տե-
ղեդայ աւանի՝ 'ի վանս հեղիոդորոսի աբբա-
յի, որ էր այր հոգևոր և մեծ առաջի այ. և
ընկեցեալ զանձն յոտս նորա արտասուօք՝
ասէր. ողորմեա ինձ մեղաւորիս և հիգոյս.
ապրեցո զանձն իմ կորստական, որ ցանկայ
ծառայել այ:

Ասէ արշիմանդրիտն. ո՞ես դու, և ո՞յր որդի.
զի՞նչ անուն է քո, և ուստի՞ եկիր առ մեզ:
Պատասխանի ասէ. ազգաւ ազատ եմ 'ի մար-
մնաւոր ծնողաց. և անուն իմ սիմէոն է. բայց
զծնօղս իմ և զտեղի մի խնդրեր աղաչեմ
տր, այլ ապրեցո և եթ զանձն իմ: Յայնժամ
յարոյց զնա հայրն զուարթութբ, և ասէ.
եթէ

եթէ յո՟յ առաքեցար որդեակ , ա՟ծ ապրեցուսցէ և պահեսցէ զքեզ՝ անփորձ յա՟մ չարէ և 'ի խարդախութենէ չարին • և դու հպատակ լինիջիր ա՟մ եղբարց , և ծառայեսցես նո՟ց սիրով • զի և ամենեցուն սիրելի լինիցիս ։ Արդ ընկալեալ սիմէոնի զձև կրօնի՝ եկաց 'ի վանս անդ ա՟մ բարեկարգութ՟ , և հանճարական վարուք առաջի ա՟յ և մարդկան • և անձանձրոյթ ծառայէր եղբարց • և այնչափ 'ի ճգնութ՟ի կայր և 'ի պահեցողութ՟ի , մինչև ամենեքեան զարմանային ։ Իսկ ծնօղք նո՟ր զամս երկու ոչ դադարէին 'ի խնդրելոյ զնա լալագին • և ոչ կարացին գտանել կմ՟ իմանալ զտեղի նո՟ր ։

Իսկ եղև յետ կալոյ սիմէոնի 'ի վանս անդ զամս իբրև երիս՝ ըղձանայր յես խստակրօն վարս յառաջադէմ լինել ։ Իսկ յաւուր միում երթեալ 'ի ջրհոր վանացն՝ էառ զպարան դուլին , որ էր մաղեայ կամ հիւսեալ յարմաւոյ • և քակեալ զայն՝ լայնեաց փոքր մի , և պատեաց 'ի մերկուց զմիջով իւրով • և այնչափ պնդեաց , մինչև յոսկերսն թաղեցաւ • և զգեցեալ 'ի վ՟ր զխորգեղէն քուրձն իւր՝ եկն առ եղբարսն , և ասէ • գնացի առ ջրհորն , և ահա պարան ոչ գոյ անդ , զի լինիցի հանել ջուր ։ Իսկ նո՟ց կարծեցեալ՝ եթէ կորեաւ , ասեն ցնա • լուռ լեր , զի մի հասցէ բանն յականջս աբբասուն , և բարկասցի մեզ • և ոչ գիտաց ոք՝ զոր արարն սիմէոն ։ Իսկ 'ի մնալ այսպէս ժամանակս ոչ սակաւ (2)՝ նեխեցաւ մարմին նո՟ր , և ժահահոտութիւն

յոյժ

յոյժ եղանէր 'ի նմանէ , մինչև չհանդուրժ-
ժել այլոց մերձենալ առ նա ․ իսկ սենեակն
և խշտի նր լի էր որդամբք ․ և է այսպիսի
անբերելի նեղութե առաւելոյր 'ի պահս ․
և զկերակուրն ՝ զոր տայրն նմա , 'ի ծածուկ
տայր աղքատաց ․ քանզի եղբարքն յաւուրն
միանգամ է երեկս առնուին կերակուր ․ իսկ
սիմէոն կիրակէէ 'ի կիրակէ ճաշակէր ։ Զոր
իմացեալ միոյ յեղբարցն՝ զեկոյց հօր վանաց ,
և ասէ ․ սիմէոնդ այդ խախտել կամի զկարգ-
վանացս , և զկանոնս՝ զոր դուդ մեզ ետուր ․
զիւր հացն և զընդելէնս՝ տեսի , զի տայ
աղքատաց ․ և ինքն միանգամ յեօթնեկի
ճաշակէ ․ թո՛ղ զի որդունք եռան 'ի սենեակ
նր ․ արդ եթէ այլ ևս պահել կամիցիս զնա ,
մեք 'ի բաց գնամք աստի ։

Զարմացաւ հայրն ․ և եկեալ զանխուլ 'ի
սենեակն՝ ետես զխշտիս նր որդնալից ․ և
ասէ ․ ահա նոր յոբ ։ Կոչեաց զսիմէոն , և
ասէ ցնա յանդիման եղբարց ․ զի՞ գործեցեր
զայդ ․ ուստի՞ իցէ այդ նեխութի 'ի քեզ ․ և
ընէ՞ր տրտմեցուցանես դու զեղբարս՝ լու-
ծանելով զկանոն վանացս ․ միթէ անշունչ
պատկե՞ր իցես՝ ժուժկալել այդչափ խստու-
թե և պահոց ․ ասա՛ մեզ , եթէ արդարև
մա՞րդ իցես դու , որ ոչ պատմեցեր և զտուն
հօր քո ։ Իսկ երանելին սիմէոն 'ի խոնարհ
ունելով զդէմս՝ լուռ և եթ կայր , և միայն
արտօսր ցօղէր յաչացն ։ Ապա հայրն իբրև
զայրացեալ ․ մերկացուցէք զդա , զի տես-
ցուք՝ ուստի՞ իցէ ժահահոտութիս ։ Բայց
չե-

չեղև հնար. քանզի զգեստքն իւր մածեալ էին ընդ նեխեալ մարմնոյն. մինչև պէտք եղեն զերիս աւուրս կակղել եղկ ջրով և ձիթով. և այնպէս հազիւ զերծին 'ի նմանէ զպարեգօտն. և գտին 'ի ներքոյ զպարանն թաղեալ ընդ մսով. զոր անհնար էր 'ի բաց կորզել, զի հազիւ երևէր. և որդունք եռացեալք 'ի նմա անբաւ։

Յայն ողորմ տեսիլ՝ յարտասուս հարաւ հայրն վանաց հանդերձ եղբարբքն. և խորհէին՝ թէ զի՞նչ արասցեն. իսկ երանելին ասէր. թողէք ինձ եղբարք, թո՛յլ տուք ինձ այսպէս մեռանիլ շանս զազրոտւոյ, և զայսօրինակ պատիժ կրել. զի անդունդ մեղաց եմ ես։ Սաստեաց հայրն, և ասէ. չև են քո ամք ութուտասան, և զո՞ր ունիցիս մեղս։ Պատասխանի ետ սիմէոն. մարգարէն դաւիթ ասէ, անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ. ահա և ես նոյնպէս։ Սքանչացաւ աբբայն ընդ իմաստութիւն նորա, եթէ զիա՛րդ մանուկ գեղջուկ այդպէս զեղջ յանձին կրէ ահիւն այ։

Ապա կոչեաց զբժիշկս ընդդէմ կամաց սրբոյն՝ ետուն դարմանել զաւուրս յիսուն, և հանել զպարանն՝ հազիւ կարացին բժշկել. իսկ եղբարքն յաւելին օր. քան զօր տրտնջել զնմանէ՝ նախանձեալ ընդ ձգնութիւն արդարոյն։ Յայնժամ ասէ հայրն ցսիմէոն. որդեակ ահա տաղջացար ընդ կարի. գնա՛ այսուհետև ուր և կամիս։ Նա նորա խոնարհութեամբ հրաժարեալ 'ի նոցանէ՝ երթայր և լայր. մինչև եկն ե-

գիտ

գիտ ջրհոր մի ցամաք՝ լի թունաւոր զեռ-
նօք․ որ և համարեալ էր բնակութի դիւաց,
մինչև բազմաց զանգիտել անցանել ընդ այն․
անդր ընկէց զանձն երանելին՝ անտես 'ի
մարդկանէ, և եկաց անսասան զաւուրս
եօթն ։

Յետ այսորիկ տեսիլ ետես վանաց հայրն,
զի զօրք երկնից պատեալ պաշարեալ զմե-
նաստանն՝ ջահ 'ի ձեռս ցուցանէին, և սպառ-
նացեալ ասէին․ այրեմք զքեզ և զվանս քո,
եթէ ոչ տացես 'ի ձեռս մեր զծառայն այ
զսիմէոն․ և առ'ի մէ՞ արտաքսեցեր զնա․
զի՞նչ մեղս մեղաւ․ ո՞չ գիտես՝ եթէ մեծ է
նա քան զքեզ առաջի այ, և մեծ ևս երևես-
ցի յաւուրն ահեղի ։ Զարթուցեալ վանա-
կանին ահիւ մեծաւ՝ կոչեաց զեղբարսն, և
պատմեալ նոցա զտեսիլն՝ ասէ․ փութացա-
րո՛ւք աղաչեմ, գտէ՛ք և ածէ՛ք զճշմարիտ
ծառայն այ ։ Եւ նոքա յուզեալ ընդ ամ տեղիս՝
ուր և կարծէին, եկին և ասեն ցաբբայն․
ո՛չ գտաք ուրեք․ և ո՛չ մնաց տեղի այլ՝ բաց
'ի խաւարչտին և յօձաբնակ գբոյ անտի ։ Եւ
նա հրամայեաց լուցանել լապտերս՝ 'ի փա-
րատել զխաւար և 'ի փախուցանել զսո-
ղունս, և խաչակնքելով զանձինս՝ իջանել
'ի գուբ անդր պարանաւ․ և այնպէս գտին
զնա․ և 'ի վեր առեալ բերին 'ի վանս ։

Յայնժամ անկաւ աբբայն յոտս նր, և ասէ․
թո՛ղ ինձ ծառա՛յ այ, զոր 'ի քեզ յանցեայ
անխորհրդաբար․ դո՛ւ լեր այսուհետև ինձ
առաջնորդ և ուսուցիչ ուղղութե ։ Իսկ առ-

Բ դայն

դառին յարտասուս հարեալ լայր 'ի վ՟ր բանից հօրն . և արարեալ ն՟ր անդ աւուրս ինչ՝ գաղտ մեկնեցաւ անտի՝ յետ երից ամաց բնակութե՟ իւրոյ 'ի վանս . և գնաց յանապատն՝ յոր մերձ էր գիւղն Թալամբսին կի՟ տեղանիս կոչեցեալ՝ առ ստորոտով լերին . և շինեաց իւր արգելանոց նեղ 'ի քարանց կուտելոց . և բնակեաց 'ի նմին միակեցական ճգնութե՟ ամս երիս կամ չորս : Նա ոչինչ ճաշակէր , բայց միայն սակաւ ոսպն թրջեալ . և զայն միանգամ յեօթնեկի , ո՟պ կալաւ սովորութի՟ . իսկ զաւուրս քառասնորդացն իսպառ անսուաղ անցուցանէր , նախանձաւոր լինելով Մովսեսի և Եղիայի : Նա և անուն սրբութե՟ նորա . և սկսան դիմել առ նա բազումք , և օգտիլ 'ի նմանէ :

Նա էր բասոս անուն ոմն կամ վլասոս աբբայ՝ (3) առաջնորդ երկերիւր եղբարց խրստակրօնից յանապատի , միանգամայն և գլուխ ք՟հնյից բնակելոց 'ի շրջակայ գիւղօրէս , այր ա՟ծաշնորհ և արթուն 'ի վերայ հոգւոց ա՟մ եղբարց . որ շրջէր ստէպ 'ի սենեակս , և զմի մի 'ի միայնակեցաց զօրացուցանէր 'ի վարս սրբութե՟ , և հաղորդէր պատուական խորհրդոյ մարմնոյ և արեան տ՟ն :

Զսա ընտրեաց սիմէոն իւր 'ի հայր հոգեւոր , և յայտնեաց նմա զա՟մ խորհուրդս սրտի իւրոյ , և զանյագ տենչումն 'ի սէր ծառայութե՟ն ա՟յ :

Յայնժամ խրատեաց զնա հայրն բասոս՝ պահել զընտրողութի՟ 'ի ճգնութի՟ պահոց , և

մի՛ լինել անձնասպան. այլ ըստ յանձին զգալ
զնուաղութիւն և զսով կարևոր՝ ճաշակել փոքր
մի. զի զանցանելն առ չչափու՝ մարթի ոչ
մարմնոյ միայն, այլև հոգւոյ վնասել. և
առ նմ կարծեցուցանելով տանել՝ 'ի բաց
տանի 'ի նմանէ: Եւ երանելին սիմէոն կա-
տարեալ հնազանդութի յանձին բերեալ՝
առէ. դիցես հայր առ իս հացս տասն, և
անօթ ջրոյ. զի երբ կարօտ տեսանեմ զանձն
իմ ըս բանի քում, առից կերակուր, զի զօ-
րացայց: Եւ հայրն բասոս արար այնպէս.
և փակեալ զդուրսն՝ ծեփեաց կաւով, զի մի՛
ումեք լիցի գալ առ նա զաւուրս քառասուն:
Յետ աւուրցն այնոցիկ եկն եբաց զդուրսն.
և եգիտ զհացն ողջոյն ամբողջ, և զտիկ
ջրոյն լի. և զճգնաւորն քմի զսիմէոն գետ-
նատարած յաղօթս՝ յափշտակեալ արտաքոյ
իւր. և իբրև դրդեաց զկողս նր, եգիտ զնա
ոչ կիսամահ անբարբառ. զի նուաղեալ էին
օգիք նր յանչափ պահեցողութէ: Եւ իբրև
մատոյց սպունգ ջրոյ 'ի բերան նր, բացան
աչք նր. ապա խնդրեաց երանելին զփրկա-
կան խորհուրդ ՟ք հաղորդութե. զոր ա-
ռեալ՝ իսկ և իսկ զօրացաւ. և յարուցեալ 'ի
գետնոյ՝ ճաշակեաց փոքր ինչ բանջար վայ-
րի. և զայն շատ համարեցաւ: Ընդ որ հիա-
ցեալ հօրն բասոսի՝ ոչ ևս իշխէր յանդիմա-
նել զնա վասն պահոց պնդութե. այլ ե-
կեալ պատմէր աշակերտաց իւրոց զահագին
սքանչելիսն, զոր ետես յայրն այն 'ի սիմէոն:
Այլ որ մեծն է, յայնմ հետէ սովորութի
կա-

կալաւ սիմէոն , զի բազում անգամ զաւուրս երեսուն և ինն անսուաղ անցուցանէր , և 'ի քառասներորդ աւուր միանգամ ճաշակէր՝ զկնի հաղորդելոյ սբ խորհրդոյն ․ և այնպէս աւարտ միոյ քառասնորդի՝ լինէր նմա սկիզբն միւսոյն ։ Նաև զայն կէս մի ոտնակացուց կատարէր , և կէս մի առ հարկի նստելով , կամ 'ի գետին տարածելով ․ քանզի 'ի սկսանել զքառասնորդն՝ յոտին կայր կանգուն զաւուրս քսան անընդհատ , աղօթելով , սաղմոսելով , և յերկնային խորհուրդս ընկղմելով ․ և յընդմիջել քառասնորդին կրթոտեալ ծնգօք հարկէր նստիլ աւուրս քանի մի ։ Ապա 'ի տկարանալ ողջոյն իսկ անձին յանսուաղութենէ՝ գետնամած տարածանէր ․ և այնպէս կատարէր զմնացեալ աւուրս յանդադար աղօթս և յօրհնութիս այ ․ քանզի այնպիսի էին կեանք նր , ոչ թէ չլինէր 'ի վերայ երկրի , այլ՝ յերկինս , անմարմնաբար քաղաքավարեալ 'ի մարմնի , և մշտամռունչ ձայնակցեալ վերին զուարթնոց փառաբանչացն այ ։

Նա յետ կալոյ արդելական 'ի խղին՝ անդ եռամեայ ժամանակօք՝ ել 'ի մերձակայ լեառն , և շինեաց անդ այլ բնակարան ընդարձակ , այլ անյարկ բացօթեայ , միայն պարսպեալ որմով իբրև փարախ ոչխարաց , որ կոչիւր Մանդրա ․ ( որպս սովորութիւն էր անուանել և զվանս , ուստի և զվանահայրս՝ արքիմանդրիտ ) ․ և այնպէս մնացեր անդ զցայգ և զցերեկ ընդ ցրտոյ և ընդ տօթոյ , ընդ անձրևոյ և ընդ արևու ․

Եւ քանզի բազումք գային առ նա, ետ պատրաստել շղթայ երկաթի՝ քսան կանգուն յերկայնութի, զորոյ զմի ծայրն անցոյց ՚ի քար մի մեծ անշարժելի, և զմիւսն օղսմանեկաւ անցոյց յոտն իւր ձախոյ. ոչ զի թէև կամիցի՝ մի՛ կարասցէ արտաքոյ ելանել քան զսահմանն: Այսու օրինակաւ արգելեալ զանձն ՚ի փարախին՝ միշտ զվերինս խորհէր, և ստէպ յերկինս վերանէր կարօտանօք և տենչանօք երկնաքաղաքացի լինելոյ. և զորս գայինն առ նա՝ յերկինս անդր ուսուցանէր փութալ ձեպիլ:

Եկն յայցելութի սբյն ոմն ՚ի պատուականաց՝ մելիտիոս անուն, կարծեցեալ յոմանց եպս անտիոքայ. սա թէպէտև զարմացաւ ը̃ խստամբեր քաղաքավարութի սիմէոնի, այլ ո՛չ հաւանեցաւ ը̃ շղթայն. շատ է ասէ միտք բանաւորի ոտնակապել զմարմինն կամօք, ցո՛ր վայր և կամք իցեն երթալ կամ չերթալ: Եւ զոյգ ը̃ բանի նր հնազանդեցաւ սքանչելին սիմէոն, և կոչեալ զդարբին՝ ետ քակել զշղթայն. բայց զառաջին սահմանն անփոփոխ կալաւ. զի սէրն քի կապեալ էր զնա առաւել ք̃ զտմ անլոյծ կապանս: Բայց տեղի շղթային յոտս նր՝ թէպէտև կաշւով պատեալ, որոշէր և բոյն եղեալ ձձեաց և մլկանց. որոց կամաւ թողոյր երանելին կտտել հանապազ զմարմին իւր՝ առանց մերձենալոյ երբէք ՚ի նա. և յիշէր անդադար զառաքելականն, եթէ յորժամ մարմինս տկարանայ, հոգիս զօրանայ:

Եւ

Նու եւ նմա տր զշնորհ հոգելից վճարէ.
միանգամայն եւ զշնորհս բժշկութե. որով
զհոգիս շահէր գունդագունդ եկելոցն առ
նա, եւ զմարմ ցաւս նց փարատէր անոճամբն
քնի ։ Այս ճանապարհ անապատին ասորւոց
իբրեւ քաղաքամէջ պողոտայ երեւէր ՚ի բազ-
մութիւն երթեւեկելոցն առ նա. իսկ լեառն
բնակութե նր քաղաք թուէր մարդաշատ.
զի ոչ միայն մերձակայ բնակիչք երկրին ա-
սորւոց, կիլիկեցւոց եւ փիւնիկեցւոց խուռն
ընթանային առ նա, այլեւ արաբացիք, իս-
մայելացիք, պարսիկք, եւ հայք եւ վիրք ։
Թող զարեւելեայքս, այլեւ արեւմտեայք ոչ
սակաւ սկսան գալ առ նա ՚ի սպանիոյ, ՚ի
բրիտանիոյ, ՚ի գաղղիոյ եւ յիտալիոյ. քան-
զի մինչեւ ՚ի մեծն հռովմ հնչեաց անուն նր.
ուր ՚ի տունս տունս, եւ ՚ի սրահս եւ ՚ի սիւնս
դնէին զպատկեր նր, եւ պատուէին իբրեւ
նը կենդանւոյն ։

Իսկ որք գային առնուլ զօրհնութի նորա,
հազիւ կարող լինէին ՚ի բազմութէ մերձե-
նալ ՚ի մաշկեակն՝ զոր արկեալ էր զանձամբ.
այլ ՚ի համբոյր ձեռաց՝ սակաւուց էր մատ-
չիլ յընտանեգունից ։ Բայց ո՜ որք եւ էր յեկե-
լոցն, ոչ դառնայր յետս ունայնաձեռն յօրհ-
նութէ նըյն. էր որ հաշտութի շահէր ընդ
թշնամւոյն, եւ էր՝ որ փրկութի ՚ի փորձա-
նաց, կմ ազատութի ՚ի ցաւոց. եւ որ մեծն
է՝ դարձ լինէր յոքունց յանհաւատից, եւ
եռանդն ածպաշտութե հաւատացելոց ամի.
եւ այս ամ առաւել եւս ցուցաւ յետ բարձրա-

նալոյ ծըյն 'ի սիւն․ յորմէ և զՍենաչեայց ա-
նուն ընկալաւ ։

Քանզի տեսեալ առն այ սիմէոնի, զի Թիւ եկելոցն առ նա էանց էր չափ, և անկարացեալ խուսափել 'ի ձեռաց նց կամ Թաքուցանել զանձն, խորհեցաւ զէթ իւիք օրինակաւ անմատչելի լինել նց, և հեռանալ յնէ, մանաւանդ Թէ յերկինս մօտեւորիլ ոչ մտօք միայն, այլև մարմնով․ վ՛յ հնարեցաւ զգիւտ սիւնաբնակութե կմ սիւնակեցութե, առ փոքր փոքր վերելակեալ 'ի բարձրութի՝ էր օրինակիս էր այսմիկ ։ Առաջինն ետ կանգնել 'ի մանդրայն, ցր 'ի փարախի անդ իւրում՝ սիւն մի իբրև հինգ կանգուն բարձրութք․ և եկեալ եկաց 'ի վ՛ր նր ամս իբր հինգ․ (զոր ոմանք եօթն ասեն, և այլք չորս) ։ Ապա բարձրացոյց զայն, այս է՝ ել 'ի սիւն բարձրագոյն յերկրէ երկոտասան կանգուն․ և եկաց 'ի վ՛ր նր զամս երկոտասան ։ Դարձեալ այլ ևս ամս երկոտասան եկաց յայլ սիւն, որոյ բարձրութի էր քսան կանգնոյ․ ապ և յայլ սիւն երեսուն կանգնաչափ՝ արար ամս չորս․ և հուսկ յետոյ յայլ սիւն բարձրագոյն՝ երեսուն և վեց կմ քառասուն կանգնոյ՝ եկաց զայլ ևս ժամանակս իւր մինչև ցմահ՝ ամս վեշտասան․ և ըն ամ սիւնակեաց եղև զամս քառասուն և եօթն ։

Արդ՝ որ և է 'ի սեանց աստի էր 'ի մէջ պարսպաւոր փարախի սէյն․ ուր էր իշխանութի արանց՝ մտանել 'ի ներքս քան զպարիսպն․

բայց

բայց կանոնաց՝ ոպ՟ ոչ էր համարձակելի մտա-
նել 'ի վանս արանց , նոյնպէս և ոչ 'ի փա-
րախն յայն ։ Իսկ 'ի վ՟ր սեան ոչ զոք թողա-
ցուցանէր ելանել այրն այ՟, բայց միայն դուն
ուրեք ոմանց ոմանց 'ի մտերիմ միայնակե-
ցաց տայր հրաման , որպ՟ս և աշակերտի իւ-
րում անտոնի՝ որ պատմէ զայսոսիկ ․ և ոչ
դոյր այլ ճանապարհ ելից , բայց սանդուղս
կանգնելով ։

Եւ էր ինքն սիմէոն 'ի վ՟ր սեան հաստա-
կօրէն կանգուն 'ի վ՟ր ոտից իւրոց ուղիղ ․ ո-
րով միջով չափ 'ի վեր մնայր ք՟ զպատշգամբ
սեանն՝ ըս՟ օրինակի քարոզչաց երևելոց յամ-
պիոնի ․ ք՟զի դոյր տախտակամած սենեակ
անյարկ 'ի գագաթան սեան ․ ուր փակեալ կայր
սբն ․ և ըս՟ ծմկին կարկառեալ յենոյր 'ի վ՟ր
այնր պատշգամբի ․ իսկ նստիլ դրեթէ ոչ
երբէք , բայց միայն զի 'ի ժամ աղօթից ստէպ
ծնրադրուի առնէր երկրպագութ՟՝ զգլուխն
մինչև 'ի մատունս ոտից խոնարհելով ․ զոր
լինէր բազմաց 'ի թիւ արկանել և սքանչա-
նալ ․ զր՟ 'ի միում նուագի թուեաց ոմն ըղ-
ծնրադրութիս նր՟ հազար երկերիւր քառա-
սուն և չորս ․ և երթեալ պատմեաց թէո-
դորետոսի եպս՟ին կիւրիոյ , որ գրէն զայսո-
սիկ ․ որ և յաւելու ասել ․ * Քանզի որո-
վայն՝ որ միանգամ յեօթնեկի առնու սնունդ ,
և այն դուզնաքեայ , որչափ է հաղորդութ՟
ա՟ծային խորհրդոյն , տայ քամակին դիւրա-
կորանալ ‖ ։ Օ ի թէպէտև բազում այն էր ,
զի 'ի քառասուն աւուր միանգամ ճաշակէր

սիմէոն , բայց յիւրաքանչիւր եօթնեկի հա-
ղորդէր ս̃բ խորհրդոյն . և այն էր սովորա-
կան սնունդ նր̃ 'ի սիւնակեցութե̃ :

Արդ մեծաւ մասամբ սիւնակեցութե̃ն սբ̃յն
էր ոտնակացութի̃ յաղօթս . զի զձեռս 'ի
վեր համբարձեալ , և ը̃ երկինս պշուցեալ՝
կայր յաղօթս իբրև 'ի զարմացման . և առա-
ւել զաւուրս տօնից այսպէս անցուցանէր .
յերեկոյէ 'ի մտանել արևու սկսանէր լռու-
թբ̃ աղօթել ը̃ արևելս համբարձմամբ ձե-
ռաց , մինչև ծագէր արև 'ի դէմս նր̃ ը̃ օրի-
նակի մեծին անտոնի . այլ նա նստեալ 'ի
ծունգս , իսկ սա յոտին կանգուն : Ո այս
ոտնակացութի̃ անհաւատալի՝ սովորութի
արար ինքեան երանելին այսպէս . ուր կան-
խաւ սովորեն̃ էր զաւուրս քսան և ևս աւելի
յոտին կալ անընդհատ , յելանելն 'ի սիւն՝
ետ կապել զանձն ը̃ ուղղորդ գերանի միում
պնդա̃յս , զի թէև կամիցի՝ մի՛ լիցի կարօղ
կորանալ կմ̃ նստիլ . և այնպէս կատարեաց
զաւուրս քառասնորդաց յոտին վր̃ հանդերձ
անսուաղութբ̃ : Ապա զօրացեն̃ յերկնային
շնորհաց՝ առանց գերանի իսկ սկսաւ յոտին
կալ զաւուրս քառասուն , արձակ և կան-
գուն , նոյնպէս անսուաղ . ոչ̃ թէ 'ի վր̃ քա-
րեղէն և անշունչ սեան կանգնեն̃ իցէ սիւն
մարմնեղէն և կենդանի իբրև արձան : Եւ
եթէ հրաշալի թուի բանս , չեն ինչ զար-
մանք . զի ա̃մ գործք սիմէոնի 'ի վեր էին
քան զհրաշս . զարմանալիք՝ քան հետևելիք :
Եւ արդարև նոքին իսկ սքանչելի հարք ա-

նա-

նապատի հրաշացան ը նորատեսիլ ձգնութիս
նր . և յաչս բազմաց ծանր թուեցաւ բանն .
մինչև ժողով մեծ լինել հարց եգիպտացւոց
և հոգետես արանց . որոց խորհուրդ 'ի մէջ
առեալ ը գրելոյ եւագրիոսի և այլոց , պատ-
ուիրակս առաքեցին՝ ասել ցսիմէոն . զի՞նչ
է բանդ այդ , զոր դուդ գործես . զիա՞րդ
թողեր զճանապարհն՝ զոր կալան և ուսու-
ցին այնչափ դասք սբ հարց միանձանց և
ճգնաւորաց , և ը օտար շաւիղ համարձա-
կեցար ընթանալ . էջ այտի 'ի վայր , և գնա՛
զճանապարհ հասարակաց : Այլ զգուշա-
ցեալ հոգելից հարանց , զի գուցէ յանձնային
ազդմանէ իցեն ընթացք սիմէոնի , և ին-
քեանք խափանիչ լինիցին գործոյն այ , պատ-
ուէր ետուն արանցն , զի թէ ը լսել սիմէո-
նի զպատգամ իւրեանց՝ սիրով հպատակես-
ցի և կամիցի իջանել , հրամայեսցեն նմա
ունել զիւր կարգ . քանզի այդ իսկ բաւա-
կան նշան է ասեն , եթէ յայ է այն . զի որոյ
սկիզբն բարի , և կատարածն է բարի . ապա
եթէ դժկամակ լինիցի ը խրատ մեր , յայտ
արար՝ եթէ զիւրոց կամաց. զհետ երթայ ,
և հեռի է 'ի խոնարհութէ . յայնժամ բռնի
իջուցէք զնա , և ածէք այսր :

Արդ իբրև չոքան՝ որք առաքեցանն , տեսեալ
նոցա և լուեալ զսքանչելիս սբյն , և զդարձ
անհաւատից և մեղաւորաց , պատկառէին 'ի
սրբութէ նր , և չիշխէին բանալ զբերան .
մինչև բռնադատեալ զանձինս՝ ծանուցին սի-
մէոնի զպատգամն : Եւ նր իմ զուարթութբ

ըն

ընկալեալ զյանդիմանութի հարցն մըց, իսկ-
և իսկ խոնարհութբ հնազանդ եղև նմա. ոչ
խօսեցաւ շատ կամ սակաւ, այլ գոհացեալ
զմյ վասն խրատելոյ զնա 'ի ձեռն հարանց՝
հրամայեաց փութամբ կանգնել զսանդուղս,
զի 'ի վայր իջանիցէ: Յայնժամ 'ի վերայ ըն-
րին պատուհրակըն զերկդ հրաման հարցն.
և խնդակից լինելով սըյն՝ քաջալերեցին
համատատուն կալ յմծահաձոյ քաղաքավա-
րուե իւրում. և ինքեանք դարձան և պատ-
մեցին ժողովոյն զամ զոր լուան և տեսին.
և եղև ուրախութի յոյժ ամենեցուն:
Յայնմհետէ ևս քան զևս մեծացաւ անուն
սըյն սիմէոնի. և ոչ գոյր թիւ եկելոցն առ
նա վս ամ պիտոյից հոգւոյ և մարմնոյ. զի
զկոյրս լուսաւորէր աղօթիւք, զկաղս գնա-
ցուցանէր, զբորոտս սրբէր, զանդամալոյծս
առողջացուցանէր, և զամ ցաւս փարատէր.
զտրտմեալս զուարթացուցանէր, զանյոյսս
կանգնէր և ամրացուցանէր 'ի տր. և մար-
գարէական ակամբ զխորհուրդս սրտից գու-
շակէր, և զհեռաւոր տեղեաց անցս պատ-
մէր: Նու միոյ միոյ 'ի բժշկելոցն զայս տայր
պատուէր. եթէ ոք հարցանիցէ, թէ ո՞ բը-
ժշկեաց զքեզ, դու ասա՛, այծ. ոմ և է իսկ
ճշմարիտ. զգո՛յշ լեր, մի՛ ասիցես, սիմէոն.
որ է սուտ. ապա թէ ոչ՝ 'ի նոյն ցաւս ըմբռ-
նիցիս: Մի՛ երդնուցուս բնաւ, և մի՛ առնու-
ցուս զահաւոր անունն այ 'ի վր բանից քոց
մնոտեաց. և եթէ հարկէ զքեզ սովորութի քո
անբարի յերդնուլ՝ կամ ճշմարտութբ կամ
սուտ

ստութեամբ , երդուեա՛լ յանուն Սիմէոնի մեղաւորիս . զի փոքր է այն վնաս . այլ վտանգ մեծ յանուն նորա երդնուլ : Բազում և այլ հոգեշահ խրատուք ուսուցանէր զամենեսին առնել զկամս նորա , և կեցուցանել զոգիս :
Իսկ մայրն երանելոյն յետ քսան և եօթն ամաց կորուսանելոյ զցանկալի զաւակ իւր՝ լուեա՛լ զոր առնէր Սիմէոն սիւնականն , և 'ի վերայ հասեալ՝ թէ որդին իւր է , ել գնաց առ նա անպատմելի կարօտով և խնդութեամբ , զի տեսանիցէ . և մերձեալ յորժամ փարախին՝ նորա որ ոչ էր օրէն մտանել կանանց , առաքեաց և ծանոյց Սիմէոնի , թէ ահա մայր քո եկեալ է , և կամի զքեզ տեսանել : Բայց նորին ծածկեաց զերեսս իւր , և ոչ կամեցաւ տեսանել զմայր իւր : Ո՞վ կարէ պատմել զաղէտս մօրն . որդեա՛կ իմ ասէր , զի՞նչ է՝ եթէ տեսից զքեզ . հայր քո մեռաւ 'ի ցաւոց սրտի և յարտասուա՛ց , զոր եհեղ 'ի վերայ քո իբրև կորուսելոյ . և ես զի գտի՝ եթէ ոչ տեսից զքեզ , աստէն մեռանիմ : Յայնժամ առաքեաց Սիմէոն ասել ցնա 'ի ձեռն սպասաւորին իւրոյ . Թողութիւն արա ինձ մա՛յր իմ , և մի՛ հարկեցուցաներ տեսանել զիս յայսմ ժամի . այլ եթէ իցեմք արժանի՝ 'ի հանդերձեալ կեանս հանդիպեսցուք միմեանց : Իսկ մայրն 'ի լուր բանիս առաւել բորբոքեցաւ 'ի սէր տեսոյ նորա : Եւ նորին դարձեալ առաքեաց ասել ցնա . ո՛վ մայր իմ հանդէ՛ր սակաւ մի առ դուրս փարախիս , և ննջեա՛ . մինչև տեսցուք զմիմեանս : Եւ կինն յուսալից ուրախութեամբ

զուա՛ր

զուարթացեալ նստաւ հանդէպ սեանն․ և եդեալ զգլուխ իւր յորմն փարախին՝ քաղցր 'ի քուն եղև, և աւանդեաց զհոգին 'ի ձեռս այ․ զի խնդրեալ էր սիմէոնի յայ տալ նմա զերջանիկ փոխումն յդէ․ և ած ընկալաւ

զհոգի նր 'ի խաղաղութի ։

Յայնժամ հրամայեաց երանելին սիմէոն բերել զմարմին մօր իւրոյ 'ի ներքս 'ի փարախն, և դնել առաջի սեան․ և էջ ինքն 'ի պատիւ թաղմանն նր․ և յաղօթս կացեալ վն հոգւոյ նր՝ ասէ․ Տր ած զօրութեց, որ նստիս 'ի վր քերովբէից, և խնամես զարարածս քո, առաջնորդ մոլորելոց՝ որ առաջնորդեցեր ոպ խաշին յովսեփու, և 'ի բազում բարձր զօրացուցեր զդաւիթ և զամ ընտրեալս քո․ դու ես կեանք և յարութի մեռելոց, որ յարուցեր զղազարոս 'ի չորեքօրեայ թաղմանէ․ ընկա՛լ աղաչեմք և զհոգի աղախնոյ քո 'ի հանգիստ քո ։ Իսկ յասել սիմէոնի զաղօթս զայս՝ շարժեցաւ մարմին մօր նր, և ժպտեցան երեսք նր․ զոր տեսեալ ամենեցուն՝ փառաւորեցին զած․ և հրամանաւ սբյն թաղեցին զնա սաղմոսիւք և օրհնութբ առաջի սեանն՝ վն տեսանելոյ միշտ զգերեզման մօրն, և յիշելոյ

զհոգի նր ։

Ընդ աւուրսն է այնոսիկ տեսեալ որսորդաց եղն մի, իբրև չկարէին ըմբռնել զնա, երդուեալ եղին յանուն սբյն սիմէոնի՝ չառնել ինչ նմա վնաս (4)․ և նոյնժամայն դադարեաց անասունն 'ի տեղւոջն․ զոր կալեալ զենին որսորդքն և կերան, ոչինչ փոյթ արարեալ

վն

վն երդմանն . և դեռ ևս կերակուրն 'ի բե-
րանս նց էր , թափեցան ատամունք նց առ-
հասարակ , կմ ը այլոց՝ կապեցան բերանք
նոցա և համրացան ։ Յայնժամ 'ի զղջումն
եկեալ յոյժ՝ ընթացան առ երանելին սի-
մէոն , և լային պչարիս անձանց իւրեանց .
և նա գթացեալ՝ աղօթս արար 'ի վր նց , և
ազատեաց 'ի պատուհասէն . և այնպէս դար-
ձան յետս՝ փառաւոր առնելով զնծ ։

Դարձեալ յայլում նուագի ոմն յիսմայէ-
լացւոց , որ 'ի ձեռն սէյն սիմէոնի հաւատա-
ցեալ էր 'ի քս , ուխտ եդ անձին իւրում՝ վկայ
կոչելով զանուն նըյն , չուտել երբէք 'ի
կեանս իւր զմիս . և յանցանել ժամանակաց՝
եթէ առ մոռացութե , և եթէ առ որկո-
րամոլութե եւ զենուլ հաւ թռչուն , և
սկսաւ ուտել ։ Իսկ ահա միսն իջեալ 'ի ստա-
մոքս նր՝ իսկ և իսկ քարացաւ , և յանհնա-
րինս նեղէր զայրն ։ Յայնժամ 'ի միտս եկեալ
առն՝ դիմեաց առ հոգևոր բժիշկն իւր առ
սիմէոն , և խոստովան եղև զուխտազանցու-
թն իւր . և նըն խնդրեաց յնյ զթողութիւն
վն նր , և ազատեաց զնա 'ի ցաւոց անտի ։
Եւ 'ի հաստատութն սքանչելեաց մնաց 'ի
կուրծս առն քարեղէն գոյացուն դիզացեալ
'ի մէջ ոսկերաց կողից . զոր բազումք տեսին
առ կենդանութը կամ յետ մահու նորա ,
և սքանչացան , ասէ թէոդորետոս ժամա-
նակակից ։

Դէպ եղև կնոջ միում գիշերային ծարաւիլ ,
և ըմպել ջուր 'ի մթան . և ը ջրոյն գնաց
'ի

'ի փոր նր̃ ձագ օձի, և սնեալ աճեաց անդ. յորմէ յոյժ չարչարեին լինէր կինն, և շրջէր առ բժիշկս բազումս, այլ ոչ ոք կարաց օգնել նմա. ապա առեալ տարան զնա հաւատով առ ո̃րբն սիմէոն, և պատմեցին նմ̃ զկիրս նր̃: Եւ նա հրաման ետ արկանել ը̃ բերան նր̃ սակաւ մի ջուր և հող. և յաղօթս եկաց վ̃ն նր̃: Յայնժամ տագնապել օձին 'ի զօրութե̃ն տն̃՝ յերկիր ընկեց զկինն, և ել ընդ բերան նր̃. և էր երկայնութի̃ նր̃ ահագին յոյժ՝ իբր չորս կանգուն, ասէ անտոն աշակերտ ս̃րյն. և դիմեալ 'ի սիւնն կոյս՝ անդէն սատակեցաւ. իսկ կինն առողջացեալ գոհանայր զա̃յ և զս̃րբյն. և ամենեքին՝ որք տեսինն, օրհնէին զա̃ր մեծաձայն:

Յայս վայր ո̃րբն սիմէոն սիւնակեաց էր 'ի վ̃ր կարճ սեանց. և յայնմ հետէ բարձրացուցին հրամանաւ նր̃ զսիւնն նորա զվերջին՝ որ 'ի վերջնումն փարախի, իբրև 'ի քառասուն կանգուն. և որ քան զօր երթալով երթայր և հնչէր համբաւ նորա ը̃ ա̃մ կողմն. և զի անհաւատալի թուէին ամենեցուն կեանք նր̃ և գործքն ա̃մ, ընթանային տեսանել անձամբ և ստուգել. առաւելագոյն այլազգիքն՝ հագարացիք և արաբացիք. յորոց և բազումք դարձան առ ա̃ծ քարոզութ̃բ ս̃րյն: Իսկ մարդատեաց բանսարկուն սատանայ մախացեալ ը̃ երանելւյն, և ինչ ոչ կարացեալ դամագիւտ լինել 'ի նմա, կերպարանեաց զանձն ո́չ միայն 'ի հրեշտակ լուսոյ, այլև ա̃ծ տ̃ր փառաց նստել 'ի վ̃ր քրովբէատե-

տեսիլ կառաց · և եկեալ առ սիմեոն 'ի ժամ տգնութեան աղօթից գիշերոյ՝ ասէ, մատիր և յարեա՛ց 'ի կառս յայսոսիկ, ո՛վ ծառայ հաւատարիմ, և ընկա՛լ զպսակ քո ։ Իսկ երանելին սիմեոն զառաջինն պակուցեալ յահեղ տեսլենէ անտի՝ համարեցաւ, եթէ ո՞վ կոչէ զնա, և կամէր հնազանդիլ խոնարհութբ · այլ 'ի կնքել զանձն իւր նշանաւ խաչի, և 'ի վեր առնուլ զոտս, զի դիցէ 'ի վր կառացն, նոյնժամայն ծանեաւ զխարդախութի չարին · և իսկ և իսկ յինքն ամփոփեալ զոտս իւր՝ կարգաց առ տր ։

Տեսեալ չարին, եթէ յայտնեցան պատրանք իւր, առ կատաղութեան եհար զբարձս ոտից սբյն ուժգին · և անդէն եղև աներևոյթ յաչաց նորա ։ Արդ՝ ուր ողջացեալ էր ոտն սբյն յառաջին վիրաց շղթային, այս հարուած դիւին 'ի սրունս նորա թողացուցեալ կամօքն այ՝ եղև սբյն նոր առիթ ճգնութեն անբուժելի · քանզի խոց կարեվէր մնաց մի յոտից նորա, և հարեալ կեղով՝ որդնալից եղև · մինչ զի յայնմ հետէ հարկ եղև նմա միով ևեթ ոտամբ կալ յոտնակացութեան՝ ստէպ յենլով 'ի պատշգամբ սեանն · և այն տևեաց ամս ոչ սակաւ մինչև 'ի վախճան սբյն ։ Այլ որ զարմանալին է, զի երբ որդունք եռացեալք բազմութբ 'ի գետին անկանէին, տայր բառնալ և դնել 'ի տեղի իւր · մինչև ասել անտոնի բանիցս պատմողի, * Այնուհետև ես նուաստս ոչինչ այլ
,, գործէի գործ, բայց ժողովել զանկեալսն, և
,, տա-

,, տանել զնել՝ ուստի անկանին. իսկ մրն
,, ասէր ցնոսա. կերայք՝ ուստի ետ ձեզ տր
,, ուտել ||:

Օ այս հարուած յաներևութից 'ի հասարակաց թշնամւոյն լեալ՝ ոչ գիտելով ամբոխին, համարէին յերկար ոտնակացութե պատճառեալ. և ըս այնմ գրեցին ոմանք 'ի մատենագրաց: Այլ զայսպիսի վէրս խղխայթեալս հարկեցաւ երանելին ցուցանել երբեմն ումեմն սարկաւագի՝ առն իմաստնոյ և առաքինւոյ. որոյ եկեալ 'ի հեռաստանէ, և մտեալ 'ի փարախ մրյն՝ իշխեաց ձայնել առ նա, և ասել. ասա ինձ աղաչեմ, մա՞րդ իցես դու, եթէ այլ ինչ բնութի անմարմին՝ կերպարանեալ 'ի նմանութի մարդոյ: Ընդ այս ծանրացաստումն եղեն՝ որք անդն կային. իսկ երանելւոյն սիմէոնի հանդարտեցուցեալ զնս՝ ասէ հեզութբ ցսարկաւագն. առ ի՞նչ հարցանես ցիս զայդ: Եւ նա ասէ. քանզի լսեմ զքէն յամենեցուն բերանոյ՝ անսուաղ և անքուն անցուցանել զաւուրս. և զիա՞րդ հնար է մարդոյ կեալ առանց կերակրոյ և քնոյ: Յայնժամ հրամանն ետ մրն դնել սանդուղս, և կոչեաց զնա գալ առ ինքն 'ի վեր. և իբրև ել առ նա, եցոյց նմա նախ զձեռս իւր՝ շօշափել և տեսանել, եթէ մարդոյ է. նոյնպէս և 'ի լանջս ետ հասուցանել զձեռն 'ի ներքոյ մաշկեղէն հանդերձի. և զկնի ասէ. հայեա՛ց և յոտս իմ, և տեսցես՝ զի մարմին է ապականացու, և այն՝ շարաւալից և որդնալից: Իբրև ետես սարկաւագն

զքստմնելի զայն վէրս , զահի հարաւ ընդ համբերութեան նորին . և երկրպագեալ նմա՝ էջ խոնարհութբ . և երթեալ պատմեաց Թէոդորոսի եպսի՝ ըստ գրելոյ նր :

Եկն առ երանելին սիմէոն և ոմն յերևելի անապատաւորաց , և կացեալ առաջի սեան՝ խնդրեաց օրհնութն ՚ի նորին . իսկ նր յանուանէ մեծարեալ զնա՝ ողջունեաց զնա ասելով . ողջամբ եկիր այրդ այ Թէոդոս : Եւ ՚ի զարմանալ նորա ընդ ճանաչել զանուն իւր՝ հրաւիրեաց զնա սիմէոն ՚ի վեր առ ինքն . և ողջագուրեալ զնա սիրով՝ ասէ . ով Թէոդոս մտերիմ սիրելի , ցնծութբ ընթասջիր զճանապարհս քո , և ՚ի տնէ ուղղեսցին գնացք քո . քանզի ասեմ քեզ . զի ՚ի մեծ չափ ունիս հասանել , և լինել հայր բազմաց , դարձուցանելով զբազումս յունայնութեց ՚յի ՚ի միակեցական վարս . որ և եղև իսկ . այն է նր Թէոդոս աբբայն տօնելի ՚ի յունվարի . 10 .

ըստ յունաց :

Եկն և աբեղայ ոմն պատանի ընդ հօր իւրում հոգևորի ՚ի տես նորին՝ դանիէլ անուն . և խնդրեալ ընկալաւ հրաման ելանելոյ ՚ի սիւնն . և երանելին սիմէոն հայեցաւ ընդ նա , և ասէ . քաջալերեաց և զօրացիր որդեակ դանիէլ , զի բազում նեղութիւնք մնան քեզ վասն հասարակաց ան . այլ ուրախ լեր , զի շնորհօք նր զօրացեալ յաղթեսցես Թշնամւոյն , և մեծի մասին հասցես երանութե :

Զայս ասացեալ՝ եդ զձեռն ՚ի վր գլխոյ նր , և աղօթս արարեալ արձակեաց . և յայնմ

Հետէ այնպիսի ընտանութ̃ի եղև 'ի մէջ նց̃,
մինչև 'ի գնալ երբեմն դանիէլի յուխտ յեկեղ̃մ,
եհաս առ նա սքանչելեօք ս̃բն սիմէոն 'ի կեր-
պարանս ալևորի, և արգել զնա յուղւոյն.
քանզի վտանգ աւազակաց կայր 'ի վ̃ր ճա-
նապարհի. և խրատ ետ նմա գնալ 'ի բիւ-
զանդիա. և միւսանգամ երևեր նմա՝ զնոյն
պատուիրեր. և նա լուաւ նմա: Իսկ յետ
մահուան ս̃բյն դրձ̃ 'ի ձեռն տեսլեան յոր-
դորեալ 'ի նմանէ՝ եղև սիւնակեաց իբրև
զնա, և գտաւ ոմ̃ն եղիսէ նմանօղ եղիայի.
այն է որ դանիէլ սիւնակեացն տօնելի առ
յոյնս 'ի դեկտեմբերի 11:
Լուաւ զհամբաւ երանելւոյն սիմէոնի մեծ
ամիրայն տաճկաց, այն՝ որ իբրև թագաւոր
ոմն էր երևելի 'ի մէջ նախարարացն արա-
բացւոց նախ քան զելս ամիրապետաց. (վ̃յ
և 'ի գիրս յունաց կոչի վասիլիսկոս սարակի-
նոսաց, այս է արքայիկ կամ թագւոր փոք-
րիկ. և յոմանց վրիպակաւ բասիլիսկոս ար-
քայ կոչի.) և եկն հաւատով 'ի տեսանել
զայրն ա̃յ. մատեաւ առ սիւնն, և խնդրեր
օրհնութի 'ի ս̃բյն. և նա սկսաւ խօսել առ նա
բանս խրատու: Իսկ եղև 'ի ժամու խօսակ-
ցութե անկաւ 'ի վիրաւոր ոտից ս̃բյն որդն
մի. իսկ ամիրայլին ոչ գիտելով՝ թէ զի՞նչ
իցէ այն, փութանակի 'ի վեր էառ զայն 'ի
գետնոյ, և եդ 'ի վերայ լանջաց և աչաց իւ-
րոց՝ իբրև մասն անկեալ 'ի հանդերձից ս̃բյն.
և պահեաց յափն իւր ուրախութբ̃: Ապա
իբրև ողջոյն տուեալ ս̃բյն՝ սկսաւ ելանել

'ի

'ի դուրս 'ի փարախէն, ձայնեաց երանելին սիմէոն զկնի նր̅, և ասէ. իշխան պատուական մատիր այսր, և 'ի բաց ընկեա՛ զբեռն՝ զոր բարձեր, զի որդն է զազրոտի՝ անկեալ 'ի ժահահոտ մարմնոյ մեղաւորիս. և ընդէ՞ր է քեզ շաղախել զձեռսդ գարշ ճճեաւդ ։ Դարձաւ ամիրայն, և ասէ. Թէպէտև որդն իցէ, օրհնութի՛ւն է ինձ այդ, և ոչ դարձուցից յետս ։ Եւ իբրև եբաց այրն զձեռն իւր, գտաւ որդն 'ի ձեռին նր̅ փոխեալ 'ի մարգարիտ մեծ և պատուական. զոր տեսեալ ամիրային՝ փառաւոր արար զա̅ծ և զծառայ նր̅ զսիմէոն. և առեալ տարաւ 'ի տուն իւր ուրախութե̅ իբրև զգանձ մեծ ։

Եւ էր կին ամիրային այնորիկ, կամ այլոյ ուրումն յամիրայից այլազգեաց՝ ամուլ. եկն և նա առ սիմէոն, և խնդրէր 'ի նմանէ աղաչել զա̅ծ վս̅ իւր, զի տացէ նմա զաւակ. և իբրև յոյժ Թախանձեաց, ասէ ցնա այրն ա̅յ. գնա՛ 'ի տուն քո, և տր̅ կատարեսցէ զոր բարին է ։ Եւ ետ նմա տր̅ դուստր մի. բայց անխօս, և անկարօղ 'ի գնացս ոտից մինչև 'ի հնգամեայ ժամանակ. յորում ժամանակի իբրև բերին զաղջիկն յոտս ս̅բյն, և աղաչէին առնել ողորմութի̅ մանկան տղայոյ, ասէ սիմէոն. համբերեցէ՛ք տն̅, և տր̅ ինքնին այց արասցէ ձեզ ։ Եւ յետ եօթն աւուրց մինչդեռ յարուցեալ գնային տրտմութե̅, զի չեղև ինչ օգուտ մանկանն, յանկարծակի հայեցաւ աղջիկն 'ի սիւնն կոյս, գոչեաց և ասէ. փա՛ռք քեզ ա̅ծ ս̅բյն սիմէոնի.

և յայնմ հետէ բացաւ լեզու ՚նորա և գնացք ոտիցն ։ Սոյնպէս և այլք յայլազգեաց գտին պէսպէս նպաստս ՚ի նմին ․ և թողեալ ըզ-կուռս՝ դարձան առ Ք͞ս ։ Յորս երևելի էր Նաամանն զօրավար հագարացւոց ․ որ ը͞ս դրե-լոյ Եւագրիոսի՝ զօսկիաձոյլ արձան կռոցն աստղկան կամ ափրոդիտեայ հալեաց հրով, և բաշխեաց աղքատաց ։

՚Ի միում նուագի՝ յորժամ եկեալ էր յող-ջոյն ՚նրյն սիմէոնի թէոդորետոս եպ͞ս կիւ-րիոյ ( որ մին է ՚ի գրչաց վարուց նորա առ կենդանութե͞ն ) , կային անդ երեք խումբք հագարացւոց , որք բանիւ ՚նրյն ՚ի հաւատս եկեալ՝ կամէին մկրտիլ ․ վ͞ս և երանելին սիմէոն նմին իսկ թէոդորետոսի յանձն ա-րար՝ տալ ն͞ց զփրկական կնիքն քահանայա-կան օրհնութե͞ք ․ յայնժամ զեղան ն͞ք ՚ի վ͞ր թէոդորետոսի խուռն խուժանօք՝ զկրեարս կոխոտելով, զի այր քան զընկեր յառաջ ըն-կալցին զմկրտութի կ͞մ զօրհնութի ՚ի նմա-նէ ․ ոմանք զմօրուաց նորա բուռն հարկա-նէին , այլք զհանդերձից , և այսր անդր ձգձգէին ․ և թերևս յօշոտէին զեպ͞սն տա-րապայման եռացմամբ , թէ չէր սաստեալ ն͞ց ՚ի վերուստ ՚ըն սիմէոն մեծաձայն գոչ-մամբ ․ յորմէ պատկառեալ ն͞ց՝ հանդարտե-ցին , և ուսան կարգօք և օրինօք շարժիլ յա͞ծայինս ․ զի բանք սիմէոնի ոչ անկանէին առաջի ուրուք ՚ի գետին ։

Դարձեալ եկին երբեմն երկու ջոկք յիս-մայելացւոց անտի առնուլ զօրհնութի ՚ի նրյն սի-

սիմէոնէ , և տանել առ ամիրայս իւրեանց . և զի իւրաքանչիւր զիւր իշխանն մեծարէր , աղմուկ մեծ յարուցին առաջի սեան նորին՝ կամելով , զի նախ իւրումն իշխանի քան միւսումն տացի օրհնութիւն . և արդարև լինէր արիւնհեղութիւն 'ի տեղւոջն՝ եթէ չէր ցածուցեալ զնոսա ազդու խրատ և սաստ նորին , հանդերձ յորդորանօք թէոդորետոսի . որ և զանձնէն պատմէ , թէ հոգեշահ բանիւք սիմէոնի փարատեցաւ յինէն խորհուրդ իմն տատամնեցուցիչ և բազմայոյզ :

Լուաւ և արքայն պարսից ( վռամ կամ յազկերտ ) , և թագուհին՝ մեծ համբաւոյ նորին սիմէոնի . և տեղեկացեալք ստուգութեամբ 'ի ձեռն դեսպանաց յունաց՝ ետուն բերել զօրհնութիւն առ 'ի նմանէ , այսինքն զձէթ օրհնեալ 'ի նորին . որով օծանէին հիւանդք 'ի դուռն արքունի , և բժշկէին :

Եւ էր յայնժամին իսաւրացւոց աւազակապետ ոմն անտիոքոս ագոնատոս ( այսինքն անծունկ ) կոչեցեալ . որ 'ի պաշարիլ իւրում 'ի պանդոկի միում 'ի հարիւր յիսուն և վեց զօրականաց՝ աշտանակեալ 'ի նժոյգ երիվար ձեղքեաց զգունդն նոցա , և արծուօրէն խոյացեալ՝ անկաւ 'ի փարախ նորին սիմէոնի . և բուռն հարեալ զսեանէ նորա՝ աղաղակէր 'ի վեր , ապրեցո զանձն իմ զկորուսեալ՝ ծառայ Աստուծոյ : Ասէ սիմէոն . ո՞ ես դու , և զի՞նչ խնդրես : Եւ նա ասէ . ես եմ նշանաւորն այն գլուխ աւազակաց . արդ այսր եկէ ապաստան , զի կեցցէ անձն իմ վասն քո : Ասէ ցնա երանելին .

կարօղ ես 'ի զղջումն գալ ստուգապէս ցա-
ւով 'ի վերայ մեղացդ: Նա է աւազակապետն.
և ես նմին իրի աստ եկեալ եմ. զայս ասէր,
և հեղոյր արտօսր բազում: Հասին զկնի
զինուորք. և բողոք բարձեալ ասէին ցմիայ-
նակեացն. ոչ է արժան հայր մեր ընդունել
քեզ զապիրատս զայս. Թող զդա լուծա-
նել զպատիժ չարեաց իւրոց: Պատասխանի
ետ սիմէոն. ես որդեակք զդա ոչ կոչեցի
այսր. այլ այն՝ որ գիտակն է սրտի դորա
և գործոյն՝ արարցէ ողորմութիւն ընդ նմա.
զի ես ոչ կարող եմ հալածել զդա 'ի բաց.
գիտայէք և դուք, զի ապաշխարողացն է
արքայութիւն երկնից. գիտէք, զի և ընդ տն
մերոյ յի քի երկու աւազակք խաչեցան. յո-
րոց մին ապաշխարութբ ժառանգորդ եղև
երկնից թագաւորութե, և միւսն անապաշ-
խար ընկալաւ զիւր արժանն: Արդ եթէ իցէ
ոք, որ կարող իցէ հակառակ կալ այնմ՝
որ զսա այսր առաքեաց, եկեսցէ և 'ի բաց
կորզեսցէ. զայս ասացեալ՝ արձակեաց ըզ-
զինուորսն:

Իբրև նոքա գնացին, ասէ աւազակապետն
ցսբն. յիս տր իմ, գնալ պատրաստեալ եմ
ես: Սբն ասէ. և ուր. միթէ միւսանգամ 'ի
չար գործս կամիս դարձ առնել: Նա ասէ.
քաւ, մի եղիցի այդ հայր. այլ կոչէ զիս տր
քն. և տարածել զձեռս իւր յերկինս՝ զայս
ևեթ աղօթէր. տր յն քն որդի այ ընկալ
զհոգի իմ (ոմն զահեակողմեան աւազակին).
և լայր հեծեծանօք ժամս իբրև երկուս.
մին-

մինչեւ յարտասուս շարժել զերանելին զսի-
մէոն եւ զամենեսին որ անդն կային . եւ ապա
խոնարհեցեալ զգլուխ իւր 'ի սիւնն՝ աւանդեաց
զհոգին 'ի ձեռս հրեշտակաց ա՟յ . զոր բար-
ձեալ թաղեցին առ դուրս փարախին :

Եկին անդրէն զինուորքն՝ որպէս թէ բռնի
յափշտակել զայրն, եւ տանել 'ի միւս . եւ իբ-
րեւ ոչ գտին, կարծէին՝ եթէ սիմէոն ետ
թաքուցանել զնա . եւ ասեն . չէ՛ արժան
պաշտպանել առն այնպիսւոյ, որ անարժան
է կենաց . զի եւ զքաղաքս եւ զգաւառս յա-
րոյց ընդդէմ իւր : Իսկ տ՟րն սիմէոն ասէ ց՟նս .
եղբարք, այն՝ որ այսր եկած զաւազակա-
պետն, նոյն եւ զերկուս յիւրոց զօրականաց
զօրագոյնս քան զձեզ առաքեաց, եւ ետ տա-
նել զնա առ իւր . զի ա՟ն իւրում պիտոյ էր
իբրեւ անօթ պիտանի . եւ ես ոչ կարէի զդէմ
ունել այնպիսի ահագին սպասաւորաց թա-
գաւորին երկնաւորի : Յայնժամ 'ի միտ ա-
ռին զփոխումն ն՟ր յա՟է, եւ երթեալ պատ-
մեցին զօրավարին իւրեանց եւ քաղաքապե-
տին . եւ որք լուանն, փառս ետուն ա՟յ, որ
զայս աւազակ մասնակից արար երանեալ ա-
ւազակին :

Յաւուրսն յայնոսիկ պակասեաց ջուր յերկ-
րին յայնմիկ . եւ բնակիչք կողմանցն պա-
քե՟լ 'ի ծարաւոյ՝ դիմեցին առ ս՟ւրբն սիմէոն .
իսկ նա լռութ՟ յաղօթս եկաց զաւուրս եօթն .
եւ ահա յաւուրն եօթներորդի յիններորդ
ժամու բղխեաց ջուր յորդառատ յարեւելից
կողմանէ փարախի ս՟րյն . եւ բրեալ մարդ-

կան զտեղին՝ գտին փապար մեծ իբրև ադ-բերական․ զոր բաժանեցին յեօթն վտակս․ ուստի ընուին պէտք ամենեցուն ։

Եկեալ երբեմն բազմութե օրհնել 'ի սբյն՝ գտին զնա յափշտակել արտաքոյ իւր․ յայնժամ ել առ նա սպասաւորն հանդերձ բուրմամբ խնկոց․ և տեսեալ զնա 'ի զարմացման՝ ասէ մեծաձայն յունկն նր․ ծառայդ այ, ամբոխ բազում սպասեալ մնայ օրհնութե քում․ արդ հրամայեա և արձակեա զնս ։ Իբրև եւս թէ չտայ պխնի, յետ բազում աշխատելոյ սկսաւ կոծել 'ի վր նր իբրև 'ի վր մեռելոյ․ նոյնպս և ժողովուրդն կական բարձեալ լային, զի զրկեցաք ասեն 'ի սբյն այ վն մեղաց մերոց ։ Իսկ սբյն յետ սակաւ ժամու յինքն եկեալ՝ ձայնեաց առ բազմութիւն, և ասէ․ թողութի արարէք եղբարք, զի նաւ մեծ 'ի ծովու վտանգել կայր 'ի ժամուս յայսմիկ․ յորում էին ոգիք իբրև երեքհարիւր․ և առ հասարակ զանուն իմ կարդային յօգնութի․ և իմ տեսեալ զողորմ վիճակ նց՝ դիմեցի աղօթիւք առ տր, և երթել հոգւով 'ի ծովանդր՝ ձեռն ետու նց, և ազատեցի տր․ ուր դուք յանդորրու կայիք աստանօր․ այլ տր տացէ և ձեզ զհոգւոյ անդորրութի՝ հասանել խաղաղութբ 'ի նաւահանգիստն երկնից ։ Եւ ապա օրհնեաց զնս, և արձակեաց ։

Տեսեալ երանելւոյն երբեմն գաւազան անկեալ յերկնից՝ պատմեաց ժողովրդեան զցասումն հանդերձեալ․ որ և եղև իսկ․ քանզի

այն-

այնչափ թրթուր յաճախեաց 'ի կողմանս երկրին սսորւոց , մինչև ծախել զամ դալարի • այլ սիմէոն աղօթիւք և քարոզութեամբ ապաշխարութեան՝ փութով անցոյց 'ի նոցանէ զպատուհասն ։ Դարձեալ ետես գաւազանս երկու • յորոց մին անկաւ ընդ արևելս , և միւսն ընդ հիւսիս կէս ընդ արևմուտս • և գուշակեաց զյառնել պատերազմաց պարսից և սկիւթացւոց ընդդէմ քրիստոնէից՝ յորդորեաց զամենեսին յապաշխարութիւն ։

Բազմօք յօգնութիւն եհաս երանելին սիմէոն և եկեղեցեաց նորա • քանզի և յառաջ քան զելանելն 'ի սիւն՝ անձամբ խօսելով ընդ եպիսկոպոսաց , և յետոյ միջնորդութեամբ այլոց , զբազում հակառակութիւնս ցածոյց • և զյովհան անտիոքացին զգժտեալն ընդ սրբոյն կիւրղի՝ 'ի հաշտութիւն ած՝ ընդ աղաչանաց թէոդոսի կայսեր փոքու • և զնոյն ինքն զինքնակալն հաւանեցոյց յետս դարձուցանել ըզհրաման իւր՝ որով թոյլ տուեալ էր հրէից ունել յանտիոք ժողովարան հանդիսապէս ։ Նոյնպէս և յաւուրս խռովութեանց՝ որ զկնի չորրորդ ժողովոյն , գրեաց երանելին սիմէոն պննի թղթոյ լևոնի կայսեր , [illegible] և առ բասիլիոս պատրիարգ անտիոքայ , հաստատելով զսահման ժողովոյն լինել միաձայն ընդ երիցն առաջնոց • և առ եւդոկիա թագուհի՝ որ զեւտիքեան ունէր կողմն , գրեաց պատասխանի խրատական • զգոյշ լեր ասէ անձին քում , զի սատանայ նախանձեալ ընդ առաքինութիւնս քո՝ կամի խարբալել զքեզ իբրև

զցո-

դցորեան, թեւլադրելով ձեռն տալ մարդոյ
անհրաւաց և պառակտողաց զեկեղեցին այ։
Յերկրորդ ամի կայսերութեն Լևոնի առաջ-
նոյ եղև սասանումն երկրի ահագին. և յեր-
կարել առ ժամանակ մի՝ գունդագունդ դի-
մէին մարդիկն առ սիւնակեացն սիմէոն,
ցածուցանել 'ի նոցանէ զբարկութին այ.
քանզի բազում շէնք կործանեցան, ուր և
բազում ոգիք մեռան. և այնպէս սաստիկ
էր շարժումն, զի և սիւն սիմէոնի հանդերձ
սեամբքն տատանէր իբրև տերև ծառոց բա-
խելոյ 'ի հողմոյ։ Որ և արտասուակցորդ
լեալ ընդ բազմութե՝ յապաշխարութի կրթէր
զնս, յանդիմանելով զանզգջութի մարդկան.
տեսէք ասէ, զի լցիք զդաւթեան կշտամ-
բութի յանձինս ձեր. ամենեքեան խոտորե-
ցան, 'ի միասին անպիտանացան. ոչ ոք է՝
որ առնէ զբարի, և չէ ոք մինչև 'ի մի։ Դեռ
կացոյց զիս ած 'ի դիտանոցիս՝ քարոզել ձեզ
զապաշխարութի կենաց. և ոչ լսէք բանից
իմոց, այլ հարեալ կայք զագահութե և զա-
պիրատութե. անօրէնութիք ձեր և պարշու-
թիւնք յաճախեցին. լաւ է ինձ այսուհետև
խօսել ընդ ած միայն՝ քան առ ազգ անհաւան։
Ո երեսս խնդրէք զայ, յորժամ վտանգ ինչ
ձեզ հասանէ. ապա թէ ոչ՝ իսպառ մոռա-
նայք զած. վյ և աղօթք ձեր ոչ լինին ընդ-
ունելի. և ոչ եթէ այլ ոք յաղօթս կայցէ
վն ձեր, լսելի լինիցի։
Ո այս ասացեալ՝ լռութե աղօթել սկսա-
նիմէոն. և ահա անդէն ուժգին ևս սասա-
նու-

նութիւն լինէր , մինչև դոչել ամենեցուն , օգնեա մեզ Տ՟ր ա՟յ : Իսկ նա հրամայեաց վերադոչել նմ՟ միաբան յերկինս . տէր ողորմեա : Եւ զկնի սակաւուց դադարեաց երկիրն . և Տ՟րն յետ միւսանգամ լուիկ աղօթելոյն՝ դարձաւ և ասէ ցամբոխն . գիտասջի՛ք եղբարք , զի յա՟մ բազմութե՟դ՝ միոյ ուրուք ևեթ աղօթք եկին առաջի ա՟յ . և ձայնեալ յանուանէ կոչեաց զոմն 'ի ժողովրդենէն՝ մերձենալ առ սիւնն . և ասէ ցնա . հաւատա՛ ինձ եղբայր , զի եցոյց ինձ Տ՟ր՝ զի քո միայն աղօթք եղեն լսելի . այլ ասա՛ ինձ , զի՞նչ բարի գործեալ է քո : Իսկ այրն պարզ սրտի՛ և պատկառ դիմօք ասէ . թո՛ղ հա՛յր , զի ես մարդ մեղաւոր եմ : Եւ իբրև ստիպեցաւ , ասէ . ես այր շինական եմ , և սովորութիւն կալայ յերիս բաժանել զաւուրն վարձս՝ որ 'ի հողագործութ՟է . զմին տամ աղքատաց , զերկրորդն 'ի հարկս արքունի , և զերրորդն ծախեմ 'ի պէտս տան իմոյ . զայս կարգ պահեցի անխափան մինչև ցայժմ . այլ ինչ ո՛չ գիտեմ . և ո՛չ ումեք չարիս խորհիմ , այլ զանձն իմ դատեմ առաջի ա՟յ : Զայս լուեալ ամբոխին՝ այր զարամբ եղանէին ողջագուրել զընտրեալն ա՟յ , զոր ա՟ծ ինքնին յայտնեաց . և շինեցան յոյժ 'ի նմանէ . և գոհանային զա՟յ և զծառայէն նր՟ զսիմէոնէ վասն ա՟մ իրացն եղելոց :

Յուլիանոս ոմն չար ծառայ արդաւուրայ իշխանին՝ զօրագլխի անտիոքացւոց , զչարեալ է բարեհամբաւութ՟ի Տ՟ռն , և մոլեգնեալ

'ի

'ի դիմէն՝ ասէ ցՏր իւր․ Թո՛յլ տուր ինձ, և երթայց 'ի վայր քարշեցից զայրն զայն 'ի սեանէ անտի, և գան հարից չարաչար՝ ոտ̃ և կամիմ․ զի խաբեբայ և մոլորեցուցիչ է նա, որ կուտէ զամբոխն 'ի գլուխ իւր։ Ակն եդ սանդուղս, և փութացաւ 'ի սիւնն 'ի վեր ելանել․ այլ իբրև բարձրացաւ ընդ քանի մի աստիճանս՝ սահեալ անկանէր սանդուղքն․ իսկ ինքն մնաց յօդս 'ի կախ՝ իբր չորս կանգնաւ բարձր յերկրէ․ և որք տեսինն՝ զահի հարան․ զի և գիտէին իսկ ոչ զպատճառս իրացն։ Յետ պահու միոյ անկաւ յուլխանոս 'ի գետին, և ես քան զես զայրագնեցաւ ընդդէմ նորա․ յայնժամ լարեաց զաղեղն, և կամէր նետաձիգ լինել 'ի նորին սիմէոն․ այլ անդէն վաղվաղակի կարկամեցան ձեռք նորա և ոտք․ և անկաւ ահ 'ի վերայ ամենեցուն․ և մնաց այրն զամ աւուրս իւր պոտագրոս, և քիրագրոս, ևս ոտնացաւ և ձեռնացաւ։

Մեծ ևս պատուհաս ընկալաւ վակատոս իշխանն, որ կամէր յափշտակել զգիւղորէս հօրն գելասիոսի․ և եկեալ խնդրէր 'ի նորին սիմէոնէ օրհնութիւն վասն յաջողութեան ճանապարհի իւրոյ՝ առանց յայտնելոյ, թէ յի՞նչ պէտս կամի գնալ յարքունի դուռն։ Իսկ նորին սիմէոն յանդիմանեաց զծածուկս սրտի նորա, և ասաց երթալ դարձուցանել զանիրաւ յափշտակութիւնն․ միայն թէ հասցես ասէ 'ի տեղի քո․ որ ոչն կարաց հասանել, այլ մեռաւ 'ի ճանապարհի։

Յետ բազում և այլ հրաշալի գործոց մերձե-

ցան

ցան աւուրք փոխմա՟ն սքանչելւոյն սիմէոնի ·
զոր այսպէս նկարագրէ աշակերտ նորա ան-
տոն · * Ես նուաստս (ասէ) տեսի զնա եղ-
„ բարք հինգ աւուրբք յառաջ քան զփոխումն
„ նր՟՝ իբրև 'ի քուն, 'ի զգեստս պայծառս,
„ և դէմք նր՟ ահեղահրաշ · մինչև անկարա-
„ նամ պատմել զկերպարանս նր՟ ։ Վերա-
„ ցաւ յինէն միտք իմ, և ո՛չ կարացի բարբա-
„ ռել ինչ բան առ երկիւղի · մինչև զար-
„ թեաւ սբ՟ հայրն մեր · և ապա հայեցայ և
„ տեսի, զի ճաշակէր ինչ՝ զոր ոչ գիտէի ·
„ նուաղեաց և զսաղմոս, որ անկաւ 'ի մտաց
„ իմոց, բաց 'ի վերջաձայնէն, ամէն ։ Ուր
„ եսս զարհուրեալ կայի 'ի տեսիլ դիմաց
„ նորա · զի փայլէին երեսք նորա ո՟պ զարե-
„ գակն ||։

Եւ եղև 'ի գալ ժողովիլ բազմութե՟ ը՟ն ուղ-
ղորութե՟, և 'ի սպասել ծունր դնելով՝ զի
օրհնեսցին 'ի ն՟բյն, ո՛չ երևէր նմ՟ ո՟պ յերէկն
և յեռանդն · և ասէին, եթէ 'ի զարմացման
է երանելին · * Եւ իմ տեսեալ զայն՝ ելի
առ նա 'ի վեր յաւուրն երկրորդի, և հայե-
ցեալ տեսի զերեսս նորա արփիափայլ, ո՟պ և
յայլում պահու՝ յորժամ խօսէր ը՟ իս ։ Բայց
իբրև չետ ինձ պխնի, զաւաջինն 'ի կարծիս
անկայ՝ եթէ փոխեալ իցէ · և կամէի ստու-
գել զիրսն · այլ պատկառանքն և երկիւղն
յերեսաց առն ա՟յ յետս զիս նահանջէր ։
Ապա համարձակեալ ասեմ ցնա · հա՛յր, զի՞
է՝ զի ը՟ իս ոչ խօսիս · բազումք են՝ որ մնան
օրհնութե՟ քում · քանզի այս երրորդ օր է՝

զի

զի զուրկ թողեր զնա յողջունէ քումմէ ․ ո՞չ խօսիս ը̃ իս հա՛յր ։ Յայնժամ ձգեալ զձեռն՝ շօշափեցի զմօրուս նր̃ ․ և զննեալ զմարմինն՝ գտի թուլացեալ ․ և անդէն 'ի միտ առի զաւ-ա̃ծ փոխումն նր̃ ։ Ապա ամփոփեալ զհանդերձսն՝ համբուրեցի զոտս նր̃ ․ և ահա բովանդակ մարմինն բուրէր զհոտ խնկոց անուշից , մինչև զմայլիլ ինձ ընդ այն ։ Եւ իբրև կացի առ նմա պահ մի , շարժեցաւ մարմին նորա ողջոյն՝ սեամբն հանդերձ ․ և լուայ զձայն՝ որ ասէր ցիս ․ ամէն , ամէն ։ Եւ ես առ ահին զայս ևեթ ասացի ․ օրհնեա՛ զիս հա՛յր , յիշեա՛ զիս , և ը̃բ՝ արա զիս ը̃բ ննջմամբդ քո ։

Եւ յորժամ իջի , ոչ ումեք 'ի վեր հանի ըզբանն , զի մի՛ աղմուկ լինիցի ․ այլ 'ի ձեռն հաւատարիմ մարդոյ ազդ արարի եպ̃սին անտիոքացւոց , ( որում անուն էր մարտիրոս , ) և արդավուրայ իշխանի ( որդւոյ ասպարայ որդւոյ արդավուրայ ) ։ Եւ եկն հայրապետն անտիոքայ հանդերձ այլովք վեց եպ̃սօք , և իշխանն արդավուր վեց հազար արամբք , զի մի՛ յափշտակեսցեն զնա բնակիչք երկրիս ․ ո̃պ և եղեալ էր ն̃ց 'ի մտի ։ Արդ՝ կախեցան փեղկք արծաթիք մինչև 'ի վանդակս սեանն ․ և ելանեն երեք եպ̃սունք 'ի վեր , և հանեն զզգեստս նր̃ ․ և ասացեալ սաղմոս երիս՝ 'ի վայր իջուցանեն զնա ։ Յայնժամ ապա ծանեաւ ժողովուրդն ա̃մ , եթէ վախճանեալ է նա ․ և եղև խուռն խուժել ա̃մ բազմութե̃ , մինչև չերևել լերինն յամբոխէ անտի , հանդերձ

դերձ բուրմամբ խնկոց և ջահիւք ։ Եւ հնչեաց ձայն ողբոց արանց և կանանց, զի և լեառն ողջոյն ողբակից թուէր լինել նց՟ ․ և ոչ գոյր թիւ թռչնոց անապատի ժողովելոց 'ի փարախ անդր ։

Իսկ երբև իջուցին զնա 'ի վայր, և պատրաստէին զյուղարկաւորութիւն թաղմանն, թէպէտ և այն չորրորդ օր էր 'ի փոխմանէ նր՟, այլ այնպէս վայելուչ և յարդարեալ կայր մարմին նր՟, ոպ՟ էրն յորժամ ննջեաց ։ Եւ էր տեսանել զերեսս նր՟ ոպ՟ վարդ գեղեցիկ ծաղկեալ․ իսկ հերքն և մօրուսն սպիտակացեալ ձիւնափայլ մաքրութբ՟ ։ Զեռն էարկ հայրապետն անտիոքայ առնուլ մասն քանի մի 'ի մօրուացն ․ և նոյնժամայն գօսացաւ ձեռն նր՟ ։ Եւ ասէ ցնա ․ օրհնեա՛լ տր՟ ողջ ես, և ոչինչ վնաս գտաւ 'ի քեզ, և ոչ 'ի հանդերձս քո՝ զօրութբ՟ն տյ՟ ։ Եւ անդէն հաստատեցաւ ձեռն նր՟ յառողջութիւն ․ և իսկ և իսկ եդ զնա 'ի դագաղն ‖ ։

Ապա ասէ բարձեալ տանէին զնա դագաղաւ 'ի վերայ կառաց՝ սաղմոսիւք և օրհնութբ՟, հանդերձ կականմամբ ամ՟ բազմութե՟ ․ և եղև 'ի հասանել նց՟ 'ի տեղի մի մեռով կոչեցեալ՝ երբև հինգ մղոնաւ հեռի յանտիոքայ, զտեղի առին ջորիք կառաց՝ որք բարձեալ ունէին զնբն ․ և ը՟ զարմանալ ամենեցուն՝ թէ զի՞ է, զի ոչ խաղան ջորիքն յառաջ, վաղեաց այր մի 'ի գերեզմանաց՝ որ վն՟ գործոց ինչ անարժանութե՟ ըմբռնեալ էր յայսոյն պղծոյ, և գոչէր մեծաձայն, ո-

ղոր-

ղորմեա՛ ինձ ո՛վ տէր Սիմէոն . և իբրև մերձենալ
նորա ՚ի կառս սրբ՟յն՝ առ ժամայն բժշկեցաւ
և զգաստացաւ . և ջորիքն սկսան յառաջել
յընթացս . զոր տեսեալ բազմութ՟ենն՝ որք
քաջ ճանաչէին զդիւահարն և զգործս ն՟ր ,
օրհնեցին զա՟ծ մեծաձայն , մինչև հնչել վայ-
րացն ՚ի ձայնէ ն՟ց . այլ առաւել ձայնիւ՛ ցըն-
ծութ՟ե գոչէր այրն՝ զհետ ընթանալով կա-
ռացն , այսօր քև ազատեցայ ծառա՛յդ ա՟յ ,
զի դու ապրեցուցեր զանձն իմ :

Իսկ ել ա՟մ քաղաքն անտիոքացւոց ը՟ն առաջ
սրբ՟յն մեծաւ հանդիսիւ . քանզի առ հասա-
րակ զգեցեալ էին հանդերձս սպիտակս , և
լապտերք լուցեալք և մոմեղէնք ՚ի ձեռս
ն՟ց . և երգս ՚ի բերան առեալ նուագէին ,
և ասէին . ահա գայ հովիւն մեր բերելով
ը՟ն իւր զգանձն երկնային . և բերեալ հան-
գուցին զնա փառօք յեկեղեցւոջ՝ որ կոչիւր
կասիանու : Իսկ զկնի աւուրց երեսնից իշ-
խանն և զօրավարն արևելից արդաւուր ետ
փոխել զնա յաւագ եկեղեցին անտիոքացւոց :
Իսկ ապա ը՟ն յայտնութ՟են ա՟յ շինեցաւ առան-
ձին տաճար յանուն սրբ՟յն յանտիոք՝ արժանի
տեղի և փառաւոր նշխարաց նորա , և անդ ամ-
փոփեցին զնա շքով մեծաւ : Բազում բա-
զումք ինչս մատուցանէին հայրապետի քա-
ղաքին , մասնաւորել նոցա ՚ի նշխարաց սրբ՟յն
յօրհնութի . այլ ոչ իշխեաց նա տալ և ոչինչ՝
վ՟ս երդմանն , զոր արարեալ էր : Իսկ այրն՝
յորմէ ել դևն , մենակեաց վարս ընտրեալ՝
պաշտէր զտ՟րն զա՟մ աւուրս կենաց իւրոց . և

եղեւ նա անօթ ընտրեալ ։ Սա արար սքն սի-
մէոն բազում նշանս սքանչելեաց զկնի մա-
հուն առաւել քան 'ի կենդանութեն , ըստ
հաւատոց նց՝ որք դիմէին առ նա յամենայց ։
Սորոյն ուխտատեղի եղեւ և փարախ նորին
հանդերձ սեամբն . յորում վայրի շինեցաւ
այլ մատուռն . և ոչ յառաջն՝ նոյնպէս և
զկնի չկայր իշխանութի կանանց 'ի ներքս
մտանել . մինչև պատուհասիլ և կնոջ միում,
որ առնացի ձևով փորձեաց միջամուխ լի-
նել . զի յետս յետս վարեալ 'ի սեմոց 'ի դուրս՝
եհան զոգի . Թող զի 'ի կենդանութեն նորին
այլ կին մի եկն և նստաւ արտաքոյ 'ի ձև
առնացի . և նորին իմացեալ զխորհուրդս նր՝
ետ նմա օրհնութի 'ի հեռաստանէ , և 'ի բաց
արձակեաց ։

Արդ եղեւ վախճան նորին 'ի տարեմտի յու-
նաց՝ 'ի սկզբան սեպտեմբեր ամսոյ , որ ըստ
ասորւոց իլուլ , յաւուր ուրբաթու , 'ի չոր-
րորդ ամի կայսերութե լևոնի յաջորդին մար-
կիանոսի , յամի տն իբր 460 , 'ի հասակի՝ ոչ
կարծի եօթանասուն ամաց . ը ոմանց՝ և
ևս աւելի . զի ստոյգն ոչ նշանակի 'ի գրչաց
վարուց նորա . միայն սիւնակեցութի նր յեր-
կուս փարախս ասի լինել քառասուն և եօթն
ամ . և տմ ամք ճգնութեն յիսուն և վեց .
զի իբրու զամս տասն 'ի վանս և 'ի սենեակս
հաշուէեն , և զայլսն 'ի վր այլևայլ սեանց ։ (5)

Լուեալ լևոնի կայսեր , եթէ բազում սքան-
չելիք լինին 'ի տապանէ սրբոյն , գրեաց հրո-
վարտակ առ անտիոքացիս՝ պատուէր տր-

հեալ բերել զն̃ր մարմինն 'ի Թագաւորեալ քաղաքն 'ի Կոստանդնուպօլիս ։ Բայց նք̃ ոչ իմ̃իք յանձն առին . այլ աղերսանօք հաւանեցուցին զկայսրն, զի մի՛ զրկեսցէ զքաղաք իւրեանց յայնպիսի պատուական գանձէ, որ է ասեն պահապան մեր յա̃մ արկածից, և պարիսպ և ամրութի̃ յերեսաց Թշնամեաց ։ Յետ ժամանակաց Թէպէտև մասունք ինչ մանունք սփռեցան 'ի զանազան տեղիս, այլ ամբողջ մարմինն կայր տակաւին յԱնտիոք մինչև ցաւուրս մօրին կայսեր . յորում ժամանակի երկիրեպաշտ նշխարաց սր̃յն Սիմէոնի Եւագրիոս պատմիչ արժանահաւատ, որ գրէ զարմացմամբ, Թէ տակաւին հերք նր̃յն միացեալ է̃ գլխոյ կային այնպէս Թարմ ո̃պ կենդանւոյ . և մորթ ճակատուն Թէպէտև կնճռեալ, այլ անապական էր մնացեալ . ո̃պ և բազումք յատամանց 'ի տեղիս իւրեանց . անդ պահիւր առէ և երկաթի շղթայ սր̃յն ։ Յաւելու գրել, Թէ յաւուր յիշատակի նր̃յն գնացի փափաքանօք յուխտ և 'ի փարախ նր̃՝ որ 'ի դագաթան լերին, երեք հարիւր ասպարիզաւ հեռի յԱնտիոք քաղաքէ . իսկ զաւ. 'ի վայրութի̃ լերին տարածեալ 'ի քսան ասպարէզս ։ Մատուռն կամ տաճարն էր շինեալ խաչաձև չորեքկուսի, սրահիւք պատեալ 'ի չորից կողմանց՝ սիւնազարդ և հոյակապ շինուածով . իսկ 'ի միջավայրի 'ի բացօԹեայ գաւԹի կանգնեալ կայր սիւնն քառասուն կանգնեան, ուր զերկնաքաղաքացի կեանս վարեաց հրեշտակն 'ի մարմնի նր̃ն

սի-

սիմէոնի . և սրահքն ունէին վանդակապատ պատուհանս 'ի վերուստ՝ որք հայէին 'ի գաւիթն ։

Եւ ահա է ահեկէ սեան սբյն 'ի մուտն 'ի պատուհանաց անտի տեսի և ես ինքնին ( ասէ եւագրիոս ) է այլ բազմութիւն ժողովելոցն առ սեամբ , աստղ մի նշուլագեղ անսովոր մեծութբ ցոլայեալ ընդ վանդակս , և ճառագայթեալ յորժմ հանդիպակաց . և այն ոչ միանգամ կամ երկիցս և երիցս , այլ բազում անգամ . ստէպ ստէպ անհետացեալ , և անդրէն 'ի վեր երևեալ . և այս ասէ է աւանդելոյ բնակչաց տեղւոյն՝ տեսանի միայն յաւուր տօնի առն այյ (6) ։ Այլ այս չէ ինչ . մեծ ևս է այն , զի ասէ՝ թէ լըծայ 'ի հաւատարիմ մարդոց , թէ անդանօր տեսեալ է նմ երբեմն զտրն երևեալ իւրով կատարեալ կերպարանօք , և այսր անդր թռուցեալ , մօրուարձակ և կնգուղ 'ի գըլուխ , ոպ էր նր սովորութի ։ Զայս և առաւել քան զսոյն պատմեն և այլ մատենագիրք դարուց 'ի դարս յաղագս սքանչելեաց սբյն սիմէոնի մեծի ։ Կայ և այլ սիմէոն սիւնակեաց երկրորդ . զորմէ լիցի բան 'ի կարգի սբց յիշատակելեաց ի յայսմաւուրաց ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Նախկին և վաւերական գրիչք վարուց սբյն սիմէոնի մեծի՝ եղեն երկուքին ականատես վկայք , մի թէոդորետոս եպս կիւրիոյ 'ի կողմանս անտիոքայ՝ 'ի փի-

ըլթէոն գիրս իւր առ կենդանութեամբ սրբոյն · և անտոն աշակերտ սրբոյն յետ մահուան նորա · յորոց առաք և մեք , հայելով և յայլ մատենագիրս՝ որք ինչ ինչ 'ի սոցանէ , և ինչ ինչ այլուստ հաւաքեցին , զի եւագրիոս , մետափրաստէս , և այլք ոչ սակաւք : Քաղուած բանից անտոնի է և այն՝ որ գրի 'ի հարանց վարս համառօտագոյն , և 'ի յայսմաւուրս փոքր մի ընդարձակագոյն · ուր և նա ինքն հաւաքօղն յիշատակէ 'ի վերջոյ զբուն աղբիւրն , ասելով · * անտոն աշակերտն երանելւոյն սիմէոնի և նորին սպասաւորն գրեաց զաստուածահաճոյ վարս նորա || :

Բոլլանդ յովհաննէս՝ որ ուրոյն ուրոյն 'ի մէջ բերէ զամենայն պատմագրաց զբանս զսրբոյն սիմէոնէ , զերկու օրինակս յառաջ ածէ պատմութեան անտոնի · մին յունարէն և լատիներէն՝ չափաւոր մեծութեամբ · որում մեք զհետ գնացաք յամենայնի · և միւսն սոսկ լատիներէն՝ հին թարգմանութեամբ ընդարձակագոյն , երկայնեալ յաւելուածովք և 'ի բանից այլոց պատմագրաց · որ ոչն է ասելի պարզապէս գործ անտոնի , այլ՝ գործ թարգմանչի հաւաքողի 'ի զանազանից · զի է և ընդարձակ հաւաքումն մետափրաստեսի · թէպէտև յամենեսին մի և նոյն վարք է ըստ ամենայն հանգամանաց , բայց 'ի քանի մի դիպուածոց՝ զորս այս ոք կամ այն ոք եւեթ գրէ · այլ գրեալքն 'ի մէնջ են առաւել ըստ առաջնոց աղբերաց · վասն այսորիկ և ոչ կարօտին քննութեան :

Զգիտեմ որպիսի սովորութեամբ մտեալ է 'ի տօնացոյցս և 'ի ճաշոցս և յայլ գիրս մեր , զի անուանս սիմէոն սիւնակեաց՝ որ 'ի սեռականն ունէր լինել , սիմէոնի սիւնակեցի , կրկին եւս հոլովմամբ հասարակօրէն գրի՝ սիմէոնի սիւնակեցւոյն կամ սիւնակեցւոյն : Գեղեցիկ որոշեալ է 'ի մեզ 'ի վերայ սրբոյն սիմէոնի՝ սիւնակեացդ անուն փոխանակ յունականին ստիլիտէս · որ թարգմանի սիւնական , ծագեալ 'ի բառէս ստիլոս կամ ստիլի , որ ստուգաբանի [illegible] , և անխտիր թարգմանի 'ի մեզ Արձան , և Սիւն , և Կոթող ( կանգնեալ 'ի վերայ շիրմաց ) · ուր բուն սիւն կոչեցեալն ըստ հայումն՝ նաև 'ի յոյնն նմանաձայն հնչմամբ կիոն ասի : Զայս յայն սակս նշանակեցի , զի իմասցիս՝ թէ 'ի մեզ սիւնակեացդ անուն սեպհականեալ է սրբոյն սիմէոնի և հետևողաց նորա · իսկ սիւնականն կամ ըստ յունաց ընդհանրապէս՝ ասի և զայլոց առաջնոց բնակելոց 'ի բարձր քարայրս կամ յանձաւս սեպացեալս և անմատոյցս · որպէս կային և 'ի հայս ոմանք յայսպիսի ճգնա_

ւոր

ւորաց յաւուրս սրբ Լուսաւորչին և սրբյն Մեսրոպայ · զորս Ագաթանգեղոս Քարանձաւամուտս կոչէ, և Կորիւն՝ Անձաւամուտս · իսկ յունական օրինակն Ագաթանգեղոսի հմ՟ Մետափրաստէս անուանէ զնոսին Բուդիկեդէս, այսինքն Սիւնականս · զորոյ զզանազանութիւն անգիտացեալ սոլլոնիգայ բոլլանդեան՝ սկսանի վայրապար ստգտանել զԱգաթանգեղոս, որպէս թէ Սիւնակեացս յօդեալ իցէ յառաջ քան զՍիմէոն ։

(2) Ոչ սակաւ ժամանակս՝ խորհրդով եդաք վն՟ պարանին ը՟ մէջ կապելոյ · զի Անտոն գնէ ամ՟ մի · ուր վնի՟ պակաս գրչաց առ Թէոդորետոսի՝ յորմէ և առ Մետափրաստեսի գրի, աւուրս տասն · գուցէ փմն՟ գրելոյ ամիսս տասն ։ Որպէս և 'ի յիշել Անտոնի՝ թէ Սիմէոն բաշխէր աղքատաց զօրըստօրէ կերակուրն, թէպէտև ուղիղ թարգմանեալ է 'ի լատինն, [illegible], այսինքն օրական, բայց հռոմէս՝ 'ի հարանց վարս ընթերցեալ [illegible]՝ որ է ամսային, հանեալ է նոր իմաստ՝ գնելով 'ի լուսանցս այսպ՟ · * օրըստօրէ հալորդի || · որ է օտար 'ի պատմութէն՝ ասէ և Բոլլանդ ։

(3) Բասոս կամ պասոս՝ որ յօրինակս ինչ գրի պլասոս հմ՟ վլասոս, ըս՟ անուանն և ըս՟ գործոյն՝ թէպէտև ոչ ըս՟ ճմկին, նոյնանուն է այնմ, որ յիշի 'ի հայերէն վարս հարանց · Գլ · Ճ · Էրէս · 206 · կոչեցեալ հայր Պելուսիոյ վանից և քահանայ · որոյ կամեցեալ տարապայման նախանձաւորութբ խրատել զեղբարս՝ խրատեցաւ 'ի հօրէն Պիմենէ ։

(4) Այսպէս բարւոք բացատրութբ ընթեռնումք 'ի Հ · զերդումն որսորդաց յանուն սրբյն · զորով զանցել՝ պատժեցան իրաւամբք · ուր յայժմու յն · և լտ · օրինակս Անտոնի պակասին բառք ինչ, և մնայ պատիժն անպատճառ · քանզի սոսկապէս ասի, թէ 'ի տալ զանուն սրբյն՝ եկաց եղն, և որսորդքն զենին և կերան · և առ ժամայն պատժեցան ։ Նյ՟ և Մետափրաստէս հարկաւորի հայթհայթել զայս պատճառ · քանզի՝ ասէ, * ծծընկալն Սիմէոն գթութբ իւրով մարդասիրապէս պարգևեաց նմ՟ զեղն զայն · իսկ նքա՟ անգթութեան մեծ ցուցել՝ չարաչար վարեցան պարգևօքն · և ինքեանց ձեռօք խլխեցին անողորմաբար զենուլ զնա || ։ Զոր անբաւական տեսեալ Բոլլանդեայ՝ յաւելու և ինքն կրկնել զայլևայլ պատճառս, յասելն · * Զերևի՝ թէ յոբում իցէ ծանրութիւն յանցանացս, եթէ ոչ գուցէ կամ այլոյ ուրուք էր եղն այն՝ պահեալ 'ի մէջ դա-

• բռնատանի կմ՛ ցանգոյ․ կմ՛ Թերևս հայհոյանօք և խեղ-
• կատակութե՛ք զենլին զայն, և կմ՛ հուսկ յետոյ յայն-
• պլոլի աւուր արարին, որ ոչն էր օր մաակերութե ||:
Բայց մերս ընթերցուած տայ լուծումն բանիցս․ և խրատէ զքննիչս՝ մի վայրապար բանախնդիր լինել յամի։ Ընդ հակառակն՝ սխալ երևի Հ․ ընթերցուածն վասն օձին, * և էր չափով կանգուն մի ||․ որ չէ՛ ինչ․ ուր 'ի յունարէնն անուանի դնի չորս կանգուն։ Թող զհամաձայնութիւն 'ի սկզբան պատմութե վն խորութե ջրհորոյն, որ 'ի հայերէն վարս հարանց գրի՝ խոր յոյժ, կմ՛ խորագոյն․ իսկ այլք առ մեզ տափր՛՛ ընթեռնուն, ոչ այնչափ խոր։

(5) Քանզի անտոն՝ առաջին աղբիւր վարուց սրբոյն սիմէոնի ոչ դնէ զորոշ գումար ամաց կենաց կմ՛ ծննդենր, այլ միայն յընթացս նշանակէ, թէ 'ի վանս հեղիոդորոսի եկաց ամս Ժ․ և 'ի խուցն՝ որ 'ի Թալամբսին ամս Գ․ և 'ի չորեքկանգնեան սեան ամս Է․ և 'ի քառասնականգնեանն ամս ԺԵ․ որք առնեն զամս քսան և հինգ, մինչ մակաբերութք դնել զառաջին հասակ պատանեկութեն 'ի վր սն՝ իբր ԺԳ, կմ՛ ԺԵ․ և ըստ այսմ՝ բովանդակ կեանք նր լինէր իբր ԽԶ կմ՛ ԽԷ ամաց․ և սակայն այլք առ հասարակ զբուն իսկ սիւնակեցութե նր 'ի վր զանազան սեանց ասեն լինել ԽԷ, կամ ԽԸ ամ․ և զայլ ևս ամս վանականութե իբր Ժ․ ըստ նմ՝ ամք ծննդեն ԾԶ, կմ՛ ԾԷ, յոր յաւելուն և զամս մանկութեն իբր ԺԳ․ և այսպէս հաշուեն զամս կենաց եօթանասուն լինել։ Եւ այս է հաւանական․ իսկ զոր դնեն ոմանք՝ հայելով 'ի հոմաձայն ընթերցուածս եւագրիոսի և նիկեփորոսի, թէ սրբն կեցեալ իցէ իբր զամս ՃԳ, և ըստ այնմ զսկիզբն ծննդեն նր յառաջ անցուցանեն և քան զաւուրս մեծին Թէոդոսի, արտաքոյ տեսանի կարգի պատմութեն։ Այնչափ ինչ ասել շատ լիցի, զի մի յանստոյգ խնդիրս յածեսցուք։

(6) Հարևանցի նշանակեցի զտեսիլ սատանայից լուսոյն՝ ըստ ակնատես վկայութե եւագրիոսի․ և յաւելի, թէ այս չէ՛ ինչ առ համեմատութք այլոց սքանչելեաց սրբոյն․ քանզի դիւրին է զերևոյթ այդպիսի անորոշ նշուլից յայլևայլ միտս մեկնել, զորմէ չէ՛ տեղւոյս ասել․ այլ յետ սոյգ համարելոյ զիրսն՝ դիւրին ևս է ոյ զանբաւ ազգս հրաշից ցուցանել։

ՎԿԱՅ.

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբուհւոյն Փեբրոնեայ կուսի :

Հ. Յ. Լ. յունիս. 25 : Ճառընտիր Ա. էջ. ջէ = ջէա : Բոլլանդեանն Պապեբրոք. 'ի Է հատ. յունիսի. երես. 14 = 35 : [1]

ՓԵԲՐՈՆԻԱ ԿՈՅՍ և վկայուհի, չքնաղ հոգւով և մարմնով, հարսն մաքուր անախտ փեսային, եր ժամանակակից և վիճակակից նոյն հռիփսիմեայ կուսի, և բազմօք համանմանն ընթացից կենաց և նահատակութեան նորին, ըս̃ գեղեցիկ և պարզ վկայաբանութեն՝ զոր շարագրեաց Թումայիս կուսանն՝ հոգևոր սնուցիչ նորուն փեբրոնեայ, օրինակ զայս :

'Ի ժամանակս Թգ̃րութե դիոկղետիանոսի կայսեր, (որ է զի 'ի հռովմ նստէր յարևմուտս, և է զի 'ի նիկոմիդիա բիւթանացւոց [2] յարևելս,) անթիմոս ոմն եպարքոս նր̃ անկեալ գնէր 'ի հիւանդութե. սա կոչեաց առ ինքն զեղբայր իւր՝ որում անուն էր սեղինոս կմ̃ սիղուիանոս, և ասէ ցնա. ես աւասիկ 'ի մարդկային իրաց աստի վճարեալ եմ. զլիւսիմաքոս զորդի իմ 'ի ձեռս

քո Թողում. և ո՞չ խօսեցաք դմա զդուստր պռօսփօրայ ( կամ պորփիրայ ) ՚ի սինկղիտոսայցն դասէ, փութացիր յետ իմոյ վախճանիս զհարսանիս դոցա կատարել, և լինել որդւոյ իմում ՚ի տեղի հօր. զայսոսիկ հրաման տուեալ՝ յետ երից աւուրց անթիմոսն մեռանէր ։ (3)

Իսկ դիոկղետիանոս կոչեալ առ ինքն զլիւսիմաքոս՝ յառաջիկայութեան հօրեղբօր նորա, ասէ ցնա. Ո՛վ, երիտասա՛րդ դու, յիշելով զսէր հօր քո, խորհեցայ յետ վախճանի նորա յաթոռ նորա հանել զքեզ. այլ համբաւ ինձ եհաս ՚ի լսելիս իմ, ո՞չ թէ ուրախ լինիս դու ընդ կրօնս քրիստոնէից, և վասն այնորիկ յապաղել կամեցայ զիրսդ ։ Արդ այժմիկ խորհիմ առաքել զքեզ յարևելս, ո՞չ զի լուծցես զկրօնս քրիստոնէից. և յորժամ դարձցիս առ մեզ, ՚ի հայրենի աթոռն հանից զքեզ. ո՞չ զի փարեսցես զեպարքութիւդ ։ Զայս լուեալ պատանւոյն՝ որ էր ամաց իբրև քսանից, ոչ իշխեաց տալ պատասխանի ։ Իսկ սեղինոս հօրեղբայր նորա անկեալ յոտս թագաւորին՝ ասէ. աղաչեմ զքեզ, ներեա՛ սակաւ ինչ աւուրս, զի կատարեցից զհարսանիս դորա ըստ հօրն կտակի ։ Ասէ թագաւորն. երթիջիք նախ յարևելս, և զքրիստոնէից լուծջիք զկարգն. և յորժամ դարձջիք, արժա՛ն է և ինձ փոյթ յանձին ունել վասն հարսանեաց լիւսիմաքոսի ։ Զայս լուեալ նոցա ՚ի թագաւորէն՝ ոչ իշխեցին դիմախօսել. այնուհետև զճանապարհորդունի յարևելս առնէին զօրօք բազմօք.

և

և էր առեալ Լիւսիմաքոսի Է. իւր զքեռորդին իւր պռխմոս ( կամ պռխմոն ) կոմս , և եդեալ զնա 'ի մէջ զօրաց : Եւ 'ի ժամանել իւրեանց յարևելս 'ի գաւառն պաղամուրացւոց , ուր էր քաղաքն պաղմիւրա մօտ 'ի սահմանս եփրատայ՝ առ երի ասորւոց և միջագետաց , զորս միանգամ ըմբռնէին՝ որք զանձինս քրիստոնեայս խոստովանէին , զոմանս հրոյ տային , և զոմանս սրոյ կոտորէին . քանզի անօրէնն սեղինոս 'ի սրտէ կամակատար էր քնամարտ արքայէն դիոկղետիանոսի , և զմարմինս սպանելոցն շանց կերակուր տայր ընկենուլ . մինչ բազում երկիւղ և դողումն ունէր զկողմանս արևելից յերեսաց առն խստի և չարի : Իսկ Լիւսիմաքոս բարեսէր պատանի կոչեաց 'ի գիշերի միում առանձինն զկոմսն պռխմոս , և ասէ ցնա . դու գիտես , զի հայրն իմ հեթանոս վախճանեցաւ . սակայն մայրն իմ քրիստոնեայ էր , և փոյթ յանձին ունէր՝ զի արասցէ զիս քրիստոնեայ . այլ մինչ ահի թագաւորին և իմոյ հօրն զայս առնել ոչ իշխեաց : Եւ արդ ունիմ զիմ մօրն պատուէր՝ մի զոք 'ի քրիստոնէից ծախել , այլ՝ բարեկամ և ա քնի հարկաւորէր զիս լինել անդուլ խրատուք : Եւ ահա տեսանեմ ես , զի որ 'ի բուռն անկանին քրիստոնեայք , անողորմ ծախին 'ի ժանտէն սեղինոսէ . և արդ կամիմ , զի որ ըմբռնեալ լինին քրիստոնեայք , լռելեայն արձակեսցին անպատուհաս :

Ունկնդիր եղև նմա պռխմոս , և ոչ ևս տայր զոք ըմբռնել . նա և 'ի վանորեայսն զեկուցա-

ցանէր, զի փախիցեն, և մի անկցին 'ի ձեռս սեղինոսի: Արդ 'ի շրջիլ նց զկողմամբք միջագետաց՝ ուր ոչ սակաւ քրիստոնեայք կային, խորհէին հաստանել 'ի քաղաք մի, որ մերձ յատրեստան է ը իշխանութբ հռովմայեցւոց. զոր վկայագիրն ը այլևայլ օրինակաց կոչէ՝ սաբայ կամ սիբայ, և կամ նիսեբի՝ ընդ մէջ հոռոմոց և պարսից. այն է՝ ը ստուգագոյն ընթերցուածոյ՝ մծբին քաղաք երևելի 'ի միջագետս հայոց (4). որոյ առաջնորդ իսկ էր 'ի ժամանակին սբ. հայրապետն յակոբ՝ զգօնն կոչեցեալ:

Իսկ 'ի քաղաքին յայնմիկ վանք մի կուսանաց, յորում բնակեալ էին բազմութիւնք ձգնաւորաց իբրև յիսուն: Սոցա առաջնորդ կարգեալ էր ոմն մայր վանից՝ սարկաւագուհին բրոնա կամ բրիւյենէ, աշակերտեալ պղատոնիս անուն կուսի՝ որ յառաջ քան զնա եղեալ էր սարկաւագուհի, և նորին կարգաւն վարէին 'ի վանսն անդ. քանզի այս կանոն էր պղատոնիդայ, զի յաւուր ուրբաթու ոչ տայր թոյլ գործել ինչ, այլ ամենեցուն ժողովիլ յեկեղեցին յաղօթս. և յորժամ զկանոնն կատարէին սաղմոսերգութե, զածային գիրսն առեալ սարկաւագուհւոյն՝ ընթեռնոյր յականջս քերցն մինչև յերրորդ ժամն. իսկ յերրորդ ժամէ և անդր տայր 'ի ձեռս բրոնեայ զգիրսն, և նա ընթեռնոյր մինչև յերեկոյն. և յորժամ բրոնա եղև սարկաւագուհի, ունէր և ինքն զնոյն կարգ. և երկրորդ նր էր թումայիս՝ պատմող բանիցս:

Եւ

Եւ էին 'ի ժամանակին յայնմիկ 'ի մէջ կուսից երկու աղջկունք՝ մնեալ 'ի տղայ տիոց ի ձեռամբ բրիոնեայ · անուն միոյն պրոկղա՝ ամաց քսան և հնգից · և երկրորդին փեբրոնիա՝ քսան ամաց [5] · և էր փեբրոնիա դուստրր եղբօր բրիոնեայ մայրապետի · և ինքն գեղեցիկ յոյժ երեսօք և բարձր հասակաւ · որ՛ զի չէր հնար գտանել յայլում զայնպիսի նկարագրութի և զչափ հասակի ։ Արդ բազում աշխատութի յանձին ունէր բրիոնա 'ի վ՛ր փեբրոնեայ սանոյ իւրոյ , որ՛ երանելին գայիանէ 'ի վ՛ր հռիփսիմեայ , թէ որպէս կարասցէ ապրեցուցանել զնա · զի մ՛ 'ի պատճառս գեղոյ ն՛ր վտանգ ինչ հասցէ նմա և այլոց · սմին իրի ո՛մ քերցն յերեկոյէ յերեկոյ տայր ճաշակել · իսկ փեբրոնեայ հրամայէր զերկուս աւուրս պահել , և ապա ճաշակել · նաև իւր իսկ տեսեալ զայնպիսի կազմութի մարմնոյ իւրոյ՝ ո՛չ հաց և ո՛չ ջուր յագ ընդունէր ։ Բայց բազդոնակ մի եա կազմել՝ այն է մահճակալ իբրև նստարան [6] , երեք կանգուն յերկայնութի , և թզաւ և կիսով 'ի լայնութի · յորոյ վերայ 'ի ժամ քնոյն զմարմինն իւր հանգուցանէր · էր զի և 'ի վ՛ր մերկ գետնոյ տարածանէր ։

Եւ 'ի յարուցանել դիւ՛ին 'ի վ՛ր նորա ցնորս գիշերայինս , յառնէր փութանակի յաղօթս, և բազում արտասուօք խնդրէր 'ի տ՛նէ վանել 'ի բաց զփորձանս չարին · և վաղվաղակի բացեալ զգիրս՝ յա՛ծաշունչ տառից ընթերցուածս կրթէր · վ՛ն զի յոյժ ուսումնասէր

եղեալ

եղեալ էր 'ի մանկութէ, վ՟ոյ և բազմիմաստ. մինչև զարմանալ բրիոնայ և ամենեցուն ը՟ այնպիսի ուսումնասիրութ՟ն նորա ։ Ս՟ոյ յոր- ժամ յաւուր ուրբաթու 'ի միասին ժողովելին յաղօթանոցն, հրամայէր բրիոնա փեբրո- նեայ ընթեռնուլ զմծեղէն գիրս յականջս քերցն (7). և քանզի կանայք մեծազգիք ժո- ղովելին յեկեղեցին յաւուր ուրբաթու 'ի լուր հոգևոր վ՟դպութե, հրամայէր բրիոնա վա- րադոյր ձգել՝ յորժամ ընթեռնոյր փեբրո- նիա, զի մի տեսցի յումեքէ կամ տեսցէ զոք. իսկ զառն մարդոյ զձև բնաւ ոչ գիտաց փե- բրոնիա՝ թէ որպէս իցէ. զի 'ի կարի տղայու- թենէ փակեցաւ 'ի վանս ։

Տարածեալ լինէր այնուհետև վ՟դպութի ն՟ր 'ի քաղաքին, ո՟պ և չքնաղութի ն՟ր և հեզ և խոնարհ քաղաքավարութի ։ Նա էր 'ի քա- ղաքի անդ տիկին ոմն պատուականն՝ երիա անուն, կին լեալ ուրումն 'ի սինկղիտիկոսաց կմեպարքոսի, և յետ վեց ամսոց՝ 'ի մեռա- նիլ առն այրի մնացեալ, և եկե՟ղ առանձնա- ցեալ 'ի տան ծնողաց իւրոց. ծանօթ էր և քրիստոնէութե. թէպէտև ինքն էր հեթա- նոս, չև եկեալ 'ի մկրտութի ։ Արդ լուեալ սորա զբարեհամբաւութի սբյ կուսին փեբրո- նեայ՝ մծայրին ցանկութբ տոչորէր, թէ որ- պէս կարասցէ տեսանել զնա, և խօսել ընդ նմա 'ի շահ հոգւոյ իւրոյ ։

Յարուցեալ այնուհետև գայր 'ի վանս անդր, և ասէ ցդռնապանն. ա՟զդ արա վ՟ս իմ բրիո- նեայ սարկաւագուհւոյ. և ն՟ր լուեալ՝ եկն ընդ-

Ընդառաջ նորա ։ Եւ տեսեալ երիցայ զբրիոնա՝
անկեալ երկիրպագանէր նմա , և ասէր .
երդմնեցուցանեմ զքեզ յա̃ծ՝ որ արար զեր-
կինս և զերկիր , մի՛ արհամարհեր զիս իբրև
զհեթանոս պիղծ և անսբ̃ , որ մինչև ցայժմ
խաղալիկ դիւաց և 'ի կռապաշտութե̃ էի .
մի՛ զրկեր զիս 'ի վ̃դպութէ̃ն և 'ի տեսլենէն
սբ̃յն փեբրոնեայ . փրկեցէ՛ք զիս յաստի ընդ-
ունայնութե̃ս , և 'ի պղծութե̃ կռապաշտու-
թե̃ս . քանզի հարկաւորեն զիս ծնօղքն իմ
երկրորդ անգամ ամուսնանալ ը̃ հեթանո-
սի . բաւական է ինձ առաջին ժամանակն
անգիտութե̃ ։ Զայս ասէր , և արտասուօք
թանայր զոտս բրիոնեայ , և 'ի բզ̃մ գութ
և 'ի վշտակցութի̃ ածէր զնա ։

Ասէ բրիոնա . դիտէ ա̃ծ , տիկի՛ն իմ , զի եր-
կեմեան էր՝ յորժամ ընկալայ 'ի ձեռս իմ
զփեբրոնիա . և ունի իննևտասն ամ՝ ո՛չ զառն
մարդոյ պատկեր տեսեալ , և ո՛չ զկնոջ աշ-
խարհականի ձև գիտացեալ . և ո՛չ դայեակ
նորա անգամ կարօղ եղև տեսանել զերեսս
նորա մինչև ցայսօր , թէպէտև բազում ան-
գամ արտասուօք խնդրեաց յինէն . զի ո՛չ
կամեցայ զիջանել նմա ։ Իսկ արդ վ̃ս փա-
փաքմանդ քո՝ զոր ունիս առ ա̃ծ և առ նա ,
մուծից զքեզ առ նա՝ զգեցե̃ զգեստ ճգնո-
ղական ո̃պ զիս ։ Արդ առեալ բրիոնայ զե-
րիա՝ եմոյծ ձևով կուսի առ փեբրոնիա . և
տեսեալ փեբրոնիայ զկրօնաւորական ձևն՝
անկաւ յոտս նորա համբուրելով . կարծէր՝
թէ 'ի նոյն ձևոյ իցէ օտար ոք կուսան . և
ող-

ողջոյն տուեալ միմեանց՝ հրամայեաց բրի-
նա երկոցունց նստել , և զգիրսն ընթեռ-
նուլ սրբոյն փեբրոնեայ :

Եւ այնչափ 'ի զղջումն եկեալ լինէր երիա 'ի վարդապետութենէ փեբրոնեայ , որ ոչ ձանձրանայր 'ի լսելոյ , և ոչ աշխատէր ինչ 'ի տքնութենէ գիշերոյն . մինչ զի զցայգն ողջոյն անքուն հսկեցին երկոքեանն . և ամենայն յատակն սրսկեալ լինէր յարտասուացն երիայի : Իսկ յորժամ առաւօտ լինէր , հազիւ հաւանեցուցանէ բրինա զերիա մեկնել յաղօթարանէ անտի , և գնալ 'ի տուն իւր : Եւ նորա ողջոյն տուեալ՝ իջանէր լալով յեկեղեցւոյ անտի . և երթեալ առ ծնօղսն իւր՝ հաւանեցուցանէր զնոսա հրաժարել 'ի հայրենի աւանդութեանցն , և դառնալ յԱստուած ճշմարիտ : Իսկ սրբուհին փեբրոնիա հարցանէր ցթովմայիս ցերկրորդն սարկաւագուհւոյն , և ասէր . ասա ինձ տիկին իմ մայր , ո՞վ էր օտարքոյրն այն՝ որ այնպէս զեղոյր արտասուօք . որպէս թէ ոչ երբէք լուեալ իցէ նորա զԱստուածային գիրս : Ասէ թովմայիս . ո՞չ գիտացեր , թէ ո՞վ էր : Փեբրոնիա ասէ . ուստի՞ գիտէի , զի որպէս օտար քոյր տեսի զնա : Իսկ թովմայիս ասէ ցնա . այդ երիայ կին սինկղիտիկէ էր , կին եպարքոսի : Ասէ փեբրոնիա . ընդէ՞ր խաբելով մոլորեցուցէք զիս ձեւովդ՝ զոր արկեալ էր զիւրև . ես տգիտութեամբ իբրև ընդ քեռ խօսեցայ ընդ նմա : Ասէ թովմայիս . մեծ տիկինն մեր հրամայեաց այսպէս լինել , և այսպիսի պատմուճանաւ մտանել նմա առ քեզ :

Յա-

Յաւուրսն յայնոսիկ եղև հիւանդանալ Փեբրոնեայ մերձ 'ի մահ, և անկեալ դնէր 'ի վ՟ր բազրոնակի իւրոյ. իսկ երիայ եկեալ 'ի տեսան՟ր՝ ոչ մեկնէր 'ի նմանէ, մինչև փարատեցաւ 'ի նմանէ հիւանդութ՟ին. այլ չև էր ստացեալ զկատարեալ առողջութ՟ի։

Յետ այսորիկ եղև համբաւ 'ի քաղաքին, եթէ սեղինոս և լիւսիմաքոս համդերձեալ են գալ այսր, զի տանջեսցեն զքրիստոնեայսն. այնուհետև որ 'ի քղ՟քին էին քրիստոնեայք՝ փախեան, Ճականք և եկեղեցականք և վանականք. և թողին զիւրաքանչիւր տեղիս. ուստի և եպ՟ս քաղաքին փախուցեալ թաքչէր։ Յայնժամ իմացեալ զիրսն՝ քերց, որ 'ի վանքն էին, մատեան առ բրիոնա սարկաւագուհին, և ասեն ցնա. զի՞նչ գործեսցուք, քանզի վայրենի գազանքն այն ժամանեցին 'ի քաղաքս մեր, և ամենեքեան փախեան յաղագս սպառնալեաց բռնաւորին։ Ասէ բրիոնա. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա. հրամայեա՛, զի փախիցուք սակաւ ժամանակս. զի ապրեցուսցուք զանձինս մեր։ Ասէ բրիոնա. չև զպատերազմ տեսեալ՝ փախչի՞լ խորհիք. չև 'ի մարտ մտեալ՝ պարտեցայք. մի՛ որդեա՛կք իմ. հաստատուն կացցուք վ՟ն՟ր՝ որ վ՟ մեր մեռաւ. ո՟պ զի և ընդ նմին կեցցուք։ Եւ զայս իբրև լուան քորքն, լռեալ դադարեցին։

Իսկ 'ի վաղիւն մի ոմն 'ի քերցն՝ որում անուն էր եթերիա, ասէ. գիտեմ ես, զի վ՟ Փեբրոնեայ՝ որ հիւանդ եւս է, ոչ թողու մեզ ելա-

ելանել աստի ՚ի մեծ տիկինն մեր. քանզի կամի զամենեսեան վասն նորա կորուսանել. բայց ես մտից և խօսեցայց վասն ձեր՝ որ ինչ պարտ է ։ Ապա լուեալ ոմանց զայս՝ հաւատացին բանիցն եթերեայ. իսկ ոմանք ընդդէմ կային՝ ստգտանելով զմտածութիւն նորա ։ Եւ ՚ի լինել հակառակութեան ոչ սակաւ ժամու՝ ապա միաբանեալ ամենեցուն՝ մատեան առ սարկաւագուհին, տեսանել՝ թէ զի՞նչ խորհեասցի ։ Եւ ՚ի մտանելն նոցա առ նա՝ ծանուցեալ նորա զխորհուրդս եթերեայ, ասէ. զի՞նչ կամիս քոյր եթերիա ։ Եւ նա ասէ. եկաք առ քեզ, զի հրամայեսցես մեզ փախչել և թաքչել. քանզի ո՛չ եթէ լաւագոյն եմք մեք քան զժառանգաւորս եկեղեցւոյ և զնոյն ինքն զեպիսկոպոսն. պարտ է քեզ և զայս ածել զմտաւ, եթէ են ՚ի մեզ նորահասակ աղջկունք. դուցէ յափշտակեալ ՚ի զօրացն՝ անկցին ՚ի փորձութիւն ապականութեան, և զվարձս ճգնութեան կորուսանեն. կամ տանջանաց ոչ կարելով համբերել՝ լինիցին պաշտօնեայք դիւաց. արդ եթէ կամեսցիս ապրեցուցանել զմեզ, առցուք ընդ մեզ և զտիկինն փեբրոնիա, և գնասցուք աստի ։

Զայս լուեալ փեբրոնեայ՝ ասէ. կենդանի է Քրիստոսն՝ որում ես հարսնացայ, և զոգին իմ աւանդեցի. ո՛չ ելից ՚ի վանաց աստի, այլ աստէն մեռայց, և թաղեցայց ՚ի սմին տեղւոջս ։ Եւ սարկաւագուհին բրիոնա ասէ ցեթերիա. դու գիտես՝ զոր արարերդ կամ առնիցես, անպարտ եմ ես. նոյնպէս և ա-

ամ̃քորսն ասէ. իւրաքանչիւր զիւր օգուտն տեսցէ, և ընտրեսցէ զոր հաճոյ թուիցի յաչս իւր ։ Յայնժամ ամ̃քորքն հրաժարեալք 'ի Բրիոնեայ և 'ի Փեբրոնեայ՝ բազում ողբովք բաղխէին զկուրծս իւրեանց. և այնպէս ելեալ անտի գնացին ։

Իսկ պրոկղա՝ որ էր սննդակից Փեբրոնեայ, երթեալ առ մահիճս նո̃ր, և անկեալ զպարանոցաւ նո̃ր՝ գոչելով ասէր. աղօ́թս արա վ̃ս իմ տիկի́ն իմ և քոյր ։ Իսկ նա կալեալ զձեռանէ նո̃ր՝ ոչ տայր նմա թոյլ ելանել. և ասէր ցնա. երկի́ր յա̃յ տիկի́ն իմ պրոկղիա, և դու մնա́ առ մեզ. զի դեռևս հիւանդ եմ. գուցէ պատահեսցէ ինձ մահ. և ոչ ոք է՝ որ 'ի գերեզմանս մուծանէ զիս. զի և չէ́ իսկ բաւական առ այն՝ տիկինն մեծ. ա́ղէ կա́ց մնա, զի դու յուղարկեսցես զիս ։ Ասէ ցնա պրոկղա. հրամայեսցէ քո́յր իմ, ոչ թողից զքեզ ։ Այլ իբրև երեկոյ եղև, ելեալ պրոկղայ արտաքս՝ աներևոյթ եղև. քանզի ահ բռնաւորին պատեալ էր զամենեքումբք ։ Յայնժամ տեսեալ սարկաւագուհւոյն բրիոնեայ զմերկութի̃ վանիցն՝ եմուտ յաղօթարանոցն, և ընկեցեալ զինքն 'ի գետին՝ դառնապէս կական բարձեալ ողբայր ։ Իսկ թումայիս՝ որ երկրորդն էր բրիոնեայ, մերձ 'ի նա նստէր և աղաչէր, հանդարտեա́ տիկին մա́յր իմ, զի կարօղ է ա̃ծ ը̃ փորձութե̃ և զելան արագ հասուցանել, զի համբերել կարասցուք. ո՞վ հաւատաց 'ի տ̃ր, և յամօթ եղև ։ Իսկ բրիոնա ասէ. այո́ տիկին իմ թումայիս,

մայիս, գիտեմ զի այդ այդպէս է. բայց ո՞ւր Թաքուցիք զփեբրոնիա (որ մնաց միայնակ), կմ որո՞վ աչօք տեսից զդա՝ յորժամ՚ի բարբարոսացն ըմբռնեսցի: Թումայիս ասէ. մոռացար զառ յինէն ասացեալն. այն՝ որ կարօղն է 'ի մեռելոց յարուցանել, նոյն ինքն զփեբրոնիա զօրացուսցէ և ապրեցուսցէ. և արդ ա՛ղէ երթիցո՛ւք առ նա, և սրտապնդեսցուք 'ի մահիճս հիւանդութե նր:

Եւ իբրև եկին երկոքեանն մերձ 'ի բադրոնն՝ յորոյ վր անկեալ դնէր փեբրոնիա, սկսաւ բրոնիա լալ դառնապէս. և եդեալ զերեսս իւր 'ի վր ծնգաց նր՝ զեղոյր արտասուօք: Իսկ փեբրոնիայ հայեցեալ 'ի Թումայիս՝ ասէ. աղաչեմ զքեզ մա՛յր իմ, վասն է՞ր է այդպէս լալումն մեծի տիկնոջդ իմոյ, զորոյ և զողբումն յաղօթարանէ անտի լսէի: Ապա և ինքն Թումայիս յարտասուս հարեալ՝ ասէր. որդեա՛կ իմ փեբրոնիա, վն քո հեծէ և ողբայ տիկինս մեր. վն զի հանդերձեալ են գալ չարիք 'ի բռնաւորաց անտի. զի Թերևս մատաղադոյն ես դու և զուարթատեսիլ. յաղագս այդորիկ տառապի և ողբայ:

Ասէ նբն փեբրոնիա. աղաչեմ զձեզ, աղօթս արարէք 'ի վր աղախնոյ ձերոյ. քանզի կարօղ է ած հայել 'ի խոնարհութի իմ, և զօրացուցանել զիս, և շնորհել ինձ համբերութի, որպս և ամ ծառայից իւրոց՝ որք սիրեցին զնա ճշմարտութբ: Ասէ Թումայիս. դուստր իմ փեբրոնիա, ահաւասիկ ժամանակ

նակ մրցմանաց և նահատակութեան հասեալ է ․ և ըմբռնեսցուք մեք 'ի զօրաց անտի ․ գիտեմ, զի զմեզ իբրև զանցեալս ժամանակօք արագ ծախեն թունաւորքն ․ իսկ քեզ խնամ տանին, զի նորահասակ ես և գեղեցիկ տեսլեամբ ։ Արդ՝ եթէ դէպ լիցի մեզ ըմբռնիլ, և յանկարծ փաղաքշելի բանիւք աղաչեն ըզքեզ, մի՛ հաւանեսցիս նոցա ․ քանզի չի՛ք պատուականագոյն քան զկուսութիւն ․ որոյ բազում են վարձք, և մեծամեծ հատուցմունք ․ վասն զի անմահ է փեսայն կուսութեան, և անմահութիւն պարգևէ՝ որք նմայն հաւանին ․ արդ փութա՛ զնա տեսանել ։ Զայս լուեալ Փեբրոնեայ՝ ևս քան զևս հաստատեր ընդդէմ սատանայի ․ վասն որոյ պատասխանի տուեալ ասէ ցԹումայիս ․ բարւոք առնես, զի զօրացուցանես զիս զաղախին քո ․ բայց ես եթէ յօժար էի փախչիլ 'ի մրցմանաց նահատակութեան, ընդքերցն էի փախուցեալ, և յանքոյթ տեղի թաքուցեալ ․ այլ զի նմա փափաքեմ, որում զօգիս յանձն արարի, զնա փութամ գտանել, և առ նա իսկ անձկացեալ եմ ․ միայն թէ արժանի զիս իւր ցուցցէ՝ վասն անուան նորա ճգնել և մեռանել ։

Զայս լուեալ բրիոնայ՝ սկսաւ լալ և նա ․ տես որդեակ իմ, թէ որպէս եկիր զհետ վարդապետութեան իմոյ ․ յիշեա՛, զի և այլոց վարդապետ եղեր դու ․ յիշեա՛, թէ որպէս ընկալայ ըզքեզ 'ի դայեկէն 'ի ձեռս իմ ․ զի երկու ամք էին քո ․ և ցայժմ այր ոչ ետես զպատկեր քո ․ և մինչև ցայժմ պահեցի զքեզ սուրբ, ողջ

և դու քեզէն քաջ գիտես ։ Իսկ այժմ զի՞նչ արարից քեզ որդեա՛կ իմ. արդ մի՛ ընդ վայր հարկաներ զծերութիւն բրիոնայ մօր քոյ, և մի՛ 'ի դերև հաներ զվաստակս հոգևոր ծնողի քո ։ Յո՛ւշ լիցին քեզ առաջին նահատակքն, որք մեծապէս փառօք վկայեցին, և զպսակն յաղթութե ընկալան յերկնաւոր հանդիսադրէն, ոչ եթէ արք միայն, այլև կանայք և աղջկունք ։ Յո՛ւշ լիցին քեզ քորքն երկոքին Լիբէ և Լևոնիս, որք մարտիրոսացան արիաբար, Լիբէ սրով գլխատեալ, և Լևոնիս հրով ծախեալ ։ Յո՛ւշ լիցի քեզ և Եւտրոպիա, երկոտասանամեայ օրիորդ ընդ մօր իւրում նահատակեալ. այն՝ է որոյ քաջութի և համբերութի դու ինքնին միշտ զարմանայիր. զի 'ի հրամայել դատաւորին նետահարել զնա առանց կապանաց, որպէս զի զանգիտեալ փախիցէ, իբրև լուա՛ւ 'ի մօրէն՝ ասել, որդեա՛կ իմ Եւտրոպիա մի՛ լիցի քեզ փախչել, կապեաց ինքնին զձեռն իւր յետս ( է ծառ մի ), և ոչ փախեաւ. այլ հարեալ 'ի նետէ՝ անկաւ 'ի գետին, և անդէն աւանդեաց զոգին. և ոչ էանց զպատուիրանաւ մօր իւրոյ ։ Արդ՝ սա, զորոյ զառաքինութին դու ինքնին գովէիր զարմանալեօք, տղայ էր անուսումն և տխմար. իսկ դու և այլոց եղեր վրդպ (8) ։ Զայս իմ խօսելով նոցա և աւելի քան զայսոսիկ՝ անցուցանէին և զայն ևս գիշեր յաղօթմն ամ ։

Իսկ 'ի վաղիւն իբրև առաւօտն լինէր, խռովութի և շշուկ և աղաղակ 'ի քաղաքն ընդր՝

'ի

'ի մտանելն սեղինոսի և լիւսիմաքոսի ․ և զբազում քրիստոնեայս ըմբռնեալ զօրացն՝ 'ի բանտ արկանէին , և 'ի կապանս մատնէին ․ և ոմանք 'ի հեթանոսացն մատուցեալք առ սեղինոս՝ զեկուցին վ̄ս վանացն այնորիկ ։ Իսկ ն̄ր լուեալ՝ առաքէ զօրականս մեծաւ փութով ․ յայնժամ զօրաց պատեա̄լ զվանքն՝ առին 'ի ձեռս տապարս և սատուրս , և հերձուին զդուրս վանացն ․ և 'ի ներքս մտեալ՝ բուռն հարին և կալան զբրիոնա ․ իսկ ոմանք անդէն սպանանել կամէին զնա սրով ։ Եւ տեսեալ մ̄յն փեբրոնեայ զեկեալ հասեալ բարկութ̄ին , ընկէց զինքն 'ի գետինն 'ի բաղրոնակէ անտի յոտս զօրացն , և ասէ ․ երդմնեցուցանեմ զձեզ յա̄ծն երկնի և երկրի ․ զիս յառաջ սպանէք , զի մի՛ տեսից զմահ տիկնոջ իմոյ ։

Յայնժամ հասեալ 'ի տեղին կոմսն պռիմոս առաքեա̄լ 'ի լիւսիմաքոսէ յօգնութ̄ի կուսանաց , և տեսեալ զիրսն՝ զայրացաւ 'ի վ̄ր զօրացն ․ հրամայեաց ն̄ց արտաքս ելանել 'ի վանացն , և ասէ ցբրիոնա ․ ո՞ւր են՝ որ բնակեալ են ը̄ քեզ ։ Բրիոնա ասէ ․ վ̄ս ահիդ ձեր ամենեքեան թողին և փախեան ։ Ասէ պռիմոս ․ երանի՛ թէ և դուք էիք փախուցեալ ․ ասեմ ձեզ , ահա ունիք ներումն յինէն ․ ելէ՛ք և փախի՛ք ։ Զայս իբրև ասաց , առեալ զզօրս իւր՝ ել 'ի վանացն ․ ո՛չ պահապանս կացոյց , և ո՛չ խռովեցոյց զն̄ս ․ այլ դարձաւ յապարանս լիւսիմաքոսի ։ Հարցանէր զնա լիւսիմաքոս , եթէ Ճշմարի՞տ իցեն՝

զոր լուեալ էր մեր վն̃ վանացն հաւատաւո-
րաց ։ Նա ասէ․ այո ամ̃ իրօք․ այս էառ
զնա առանձինն, և պատմեաց նմա, թէ ճշ-
մարտութ̃բ չոգայ 'ի վանսն․ և ոչ զոք գտի,
քանզի փախուցեալ էին․ բայց երկու պառա-
ւունք մնացեալ էին․ և մի նորահասակ աղ-
ջիկ․ այլ չքնաղ իրս ունիմ պատմել քեզ
տր̃ իմ․ քանզի տեսի աղջիկ մի, զի յորմէ
հետէ ծնեալ եմ, մինչև ցայժմ ոչ է իմ տե-
սեալ այնպիսի գեղ պատկերի․ գիտեն ա̃ծքն,
զի լոկ միայն տեսի զնա, զի անկեալ դնէր
'ի վր̃ բաղրոնի միոյ, և զարհուրեցաւ սիրտ
իմ․ ես զայս միայն ասեմ, զի բաց յաղքա-
տութ̃էն՝ արժանի է նա տն̃դ իմում կնութ̃․
և թէ չառնու յանձն, յայնժամ մեռցի․
իսկ զպառաւունսն՝ զի՛նչ և կամիս, արաս-
ցես ։

Ասէ լիւսիմաքոս․ ես պատուէր ունիմ 'ի
մօրէ իմմէ՝ չհեղուլ զարիւն քրիստոնէից,
այլ առաւել սէր առն̃ ցուցանել․ և զիա̃րդ-
մարթացայց նենգութ̃ն գործել ը̃ քրիստո-
նեայսն․ ոչ այդպէս տէր իմ, այլ աղաչեմ,
հանցես զնս̃ 'ի վանացն, և ապրեցուսցես․
ո̃պ զի մի անկցին 'ի ձեռս անողորմ հօրեղբօր
իմոյ սեղբինոսի ։ Իսկ մի ոմն 'ի չար զօրացն
ընթացեալ առ սեղբինոս՝ ասէ․ գտաք 'ի վանս
զոմն նորահասակ աղջիկ՝ յոյժ ահագին գե-
ղեցկութ̃բ․ զոր ապրեցոյց 'ի ձեռաց մերոց
կոմսն պռիմոս, և վն̃ նր̃ խօսի ը̃ լիւսիմա-
քոսի ։ Զայս լուեալ սեղբինու՝ լի եղև բար-
կութ̃բ, և առաքեաց 'ի վանսն պահապանս,
զի

զի մի՛ փախիցեն . և հրամայեաց քարոզել ’ի քաղաքին՝ եթէ վաղի՛ հրապարակաւ դատաստան է մ՟ն կուսին՝ որ ’ի վանս ։ Ու եղև ա՟մ բազմութե՟ , և ժողովեցին արք և կանայք ’ի տեսանել զփեբրոնիա , և զնահատակութիւն նո՟ ։

Իբրև առաւօտն ծագէր , եկեալ հասին զօրականք ’ի վանսն , և մտեալ ’ի ներքս՝ ձեռն արկին և ձգեցին զփեբրոնիա ’ի բադրոնէ անտի , և կապեցին զնա շղթայիւք . և արկեալ անուր երկաթի ’ի պարանոց նո՟ փութային հանել զնա ’ի վանիցն ։ Իսկ բրիոնա և Թումայիս պնդագոյնս կալեալ զձեռացն փեբրոնեայ՝ գոչէին դառնապէս , և աղաչէին զզօրականսն՝ ներել փոքր մի , զի խօսեսցին ը՟ փեբրոնեայ . և դարձեալ աղաչելով ասէին , զի և ինքեանք երթիցեն ը՟ նմա ’ի նահատակութի՟ . զի մի՛ յորժամ միայն երթիցէ , զարհուրեալ երկիցէ ։ Ասեն զօրականքն . չհրամայեաց մեզ իշխանն զայլ ոք տանել բաց յաղջկանէս . արդ ’ի կարճոյ ներեմք ձեզ խօսել ը՟ դմա . զի առե՟ տարցուք փութանակի ։

Սկսան այնուհետև բրիոնա և Թումայիս հաստատել զփեբրոնիա . և ասէր բրիոնա . որդեա՛կ փեբրոնէ , ահաւասիկ ելանես ’ի նահատակութի՟ . տե՛ս , զի երկնաւոր փեսայն հանդիսատես է մրցանացդ , և հրեշտակային զօրքն պատրաստեալ ունին զ՟քո յաղթութե՟ պսակն . տե՛ս , զի մի՛ սարսափեսցիս ’ի տանջանացն , զի մի՛ լինիցիս այպն սատանայի .

մի՛ ողորմեսցիս այս մարմնոյս՝ որ լուծանելոց է. և արդ աւասիկ կամ ես 'ի վանս ողբալով, մինչև լուայց համբաւ ինչ զքէն, այլ լիցի թէ բարի, և ոչ խոտան. իսկ ո՞ տայր ինձ աւետիք, եթէ փեբրոնիա մատնեաց զինքն 'ի տանջանս, և կամ թէ փեբրոնիա

կատարեցաւ 'ի քս :

Իսկ սբն փեբրոնիա լցեալ հոգւով սբով՝ ասէ. հաւատամ յած, մայր իմ, զի ո՛չ ոչ երբէք անցի զպատուիրանաւ քով, և ոչ այժմ ինչ անցանեմ. այլ տեսցեն ժողովուրդք և զարմասցին ը գործս այ, և երանեսցեն ծերութեն բրիոնայ, և ասասցեն, եթէ արդարև սա է ձեռասունկ բրիոնայ մեծի. քանզի ցուցից տր 'ի տկար մարմնի զոգի զօրութե. արդ թող, զի երթայց : Յայնժամ ասէ ցնա և թումայիս. կենդանի է տր որդեակ իմ, զի և ես զգեցեալ զգեստ Ծականի՝ ելից և տեսից զնահատակութի քո : Փեբրոնիա ասէ. աղաչեմ զքեզ մայր իմ, տուր օրհնութիւն ելից իմոց. և արարէք ինձ աղօթս, և թողէք զիս երթալ : Իսկ բրիոնայ ձգեալ զձեռս իւր յերկինս՝ գոչելով ասէր. տր իմ յս քս, որ երևեցար աղախնոյ քում թեկղի 'ի կերպարանս առաքելոյն պօղոսի, յայտնեսջիր և տառապելոյս այսմիկ : Զայս ասացեալ՝

արձակեաց զնա :(9)

Յայնժամ զինուորքն առեալ զփեբրոնիա՝ ելին 'ի վանիցն. իսկ թումայիս զգեցեալ զգեստ Ծական, այս է 'ի ձև Ծիկ կանանց՝ երթայր զկնի 'ի տեսարանն (10) : Լուեալ և

երիայ

երիայ սինկղիտիկէ տիկնոջ՝ թէ փեբրոնիա հաւատաւոր յատեան ածաւ , յարուցեալ գոչէր 'ի ձայն մեծ . մինչև հիանալ ծնողաց իւրոց , և հարցանել՝ թէ զի՞նչ դիպեցաւ քեզ ։ Ասէ ցնա . զքոյրն իմ զփեբրոնիա յատեան մատուցին՝ դատափետ առնել զվարժապետն իմ իբրև զքրիստոնեայ ։ Եւ բազում սփոփանս ընկալեալ 'ի ծնողացն , զի դադարեսցէ յողբալոյն , նա ևս առաւել աղաչէր ասելով . թողէք զիս , զի լացից 'ի վերայ քեռն իմոյ . զայս ասելով նորա՝ և զծնօղսն յորդորէր յարտասուս . և հաւանեցուցանէր զնա՝ թոյլ տալ նմա , զի երթիցէ 'ի տեսարանն . և երթեալ երիայ՝ անդ գտանէր և զթումայիս . և ծանուցեալ զիրեարս՝ արտասուօք թանային ։

Եւ լինէր ժողով բազում յոյժ . և յառաջէն նստան իբրև իշխանք և դատաւորք՝ սեղինոս և լիւսիմաքոս . և հրամայեցին ածել զփեբրոնիա . և նա մտանէր յատեանն իբրև որոջ անարատ՝ ձեռօք կապելովք , և անուր ծանր 'ի պարանոցի . զոր տեսեալ ամբոխին՝ յարտասուս ցնդէին . և լինէր կականումն մեծ ։ Արդ իբրև ածաւ նա կոյսն 'ի մէջ , հրամայեաց իշխանն սեղինոս լռել ամբոխին , և ասէ ցլիւսիմաքոս . տո՛ւր հարցումն դմա , և ընկա՛լ պ՟խնի 'ի նմանէ ։ Յայնժամ ասէ լիւսիմաքոս ցփեբրոնիա . ասա՛ ինձ ա՛ղջիկ , որո՞յ բախտի ես . ծառա՞յ ես , եթէ ազատ ։ Եւ նա ասէ . աղախին եմ ։ Ասէ լիւսիմաքոս . ո՞յր աղախին կոչիս ։ Փեբրոնիա ասէ . ք՟նի ։

քնի ։ Լուսիմաքոս ասէ ․ զի՞նչ անուն է քո ։ Փերբոնիա ասէ ․ խոնարհ քրիստոնեայ ։ Ասէ Լուսիմաքոս ․ զանուն քո կամիմ ուսանել ։ Ասէ նբն ․ ասացի , թէ քրիստոնեայ խոնարհ ․ իսկ եթէ զմարմնաւոր անուն իմ կամիս ուսանել , փերբոնիա կոչեաց զիս տեկինն իմ ։

Յայնժամ իշխանն լռեցոյց զԼուսիմաքոս , և ինքն սկսաւ հարցափորձել , և ասէ ․ գիտեն ամ̃քն՝ Փերբոնիա , զի ոչ կամէի հարցանել զքեզ , այլ իսկ և իսկ մահու մատնել ․ բայց տեսեալ զհեզութի քո հանդերձ գեղեցկութբդ և երևելի յօրինուածովդ , որով պարտեցաւ մեծ զայրացումն՝ զոր ունէի ՚ի վերայ քո , այսուհետև հայրաբար խօսիմ քեզ զօգուտն ։ Եւ արդ լուր ինձ դուստր իմ ․ գիտեն ամ̃քն , զի բազում ընչից և ստացուածոց տ̃ր կացուցից զքեզ ․ խօսեալ էր իմ կին ա̃ն իմոյ Լուսիմաքոսի , բայց սակայն լուծից զվճռի հաստատութեն՝ զոր եդ Է̃ դստերն պրոսփորայ , և Է̃ քեզ հաստատեցից զդաշինսն ․ և եղիցիս դու կին Լուսիմաքոսի , զոր այժմ տեսանես զաս նստեալ ընդ աջմէ ․ և սա ինքն զեղեալ է գեղեցկութ̃ իբրև զքեզդ ․ և արդ լուր ինձ , և արարից զքեզ փառաւոր ՚ի վ̃ր երկրի ։ Եւ մի ինչ զքեզ զարհուրեցուսցէ , թէ աղքատ ես ․ քանզի կին իմ ոչ ունի դուստր և ոչ որդի (11) ․ վ̃յ այս ինչ յայտնի լիցի քեզ , զի զա̃մ ինչս իմ քեզ շնորհեցից , և զայն առեալ՝ փոխանակ վարձանաց տացես Լուսիմաքոսի ․ և ես եղէց ձեզ հայր ․

հայր. և երանեսցեն ձեզ ա՟մ կանայք ։ Յայն-
ժամ բերկրեսցի և գիոկղետիանոս մեծա-
յաղթ թագաւորն մեր, և պարգևեսցէ ձեզ
բաղում բարութիս. քանզի և խոստացաւ
իսկ հանել 'ի մեծագոյն պատիւ իշխանութե՟
զկիւսիմաքոս փեսայ քո, և եպարքոս կացու-
ցանել ։ Ահա զա՟մ ինչ լուեալ. տուր ինձ
պ՟խնի՝ որ ա՟ծոցն հաճոյ է, և զիմ սիրտս ու-
րախ առնէ. իսկ եթէ անհաւան գտցիս խրա-
տուց իմոց, գիտեն ա՟ծքն, զի ոչ կարես կեալ
մինչև ցերիս ժամս ։

Ետ պ՟խնի ս՟բ կոյսն Փեբրոնիա, և ասէ. ով
դատաւոր, առագաստ ունիմ ես յերկինս
անձեռագործ, որոյ հարսանիքն ոչ անցանէ.
իսկ վարձանք թագաւորականք՝ զողջոյն իսկ
զերկնից թագաւորութի՟ն. և փեսայ ունիմ
անմահ, վ՟յ և ը՟ մահկանացուի զուգիլ ոչ
կամիմ. արդ ով դատաւոր մի ինչ աշխատ
լինիր, զի ոչ փաղաքշելովդ օգտիս ինչ, և
ոչ սպառնալեօքդ երկեցուցանես զիս ։

Զայս լուեալ դատաւորն՝ բարկացաւ, և
հրամայեաց պատառել զզգեստ նորա, և
ցնցոտուն արկանել, և լի խայտառակութե՟
առաջի ամենեցուն կացուցանել. ո՞վ զի ամե-
նեցուն տեսեալ ասէ զանարգանս դորա՝ եղ-
կելի քան զա՟մ ոք զդա համարեսցին, և ան-
ձամբ յանձնէ ամաչեսցէ. փոխանակ զի ինքն
կամեցաւ անկանել յերևելի փառացն՝ զոր
ես խոստացայ նմա ։ Եւ զինուորացն 'ի վե՟ր
դիմեալ՝ 'ի նմին ժամու ծուէնս ծուէնս պա-
տառէին զզգեստիկ նորա. և ցնցոտուն ինչ
գտեալ

դտեալ՝ զայն՝ առիգած հարին զմիջօրէն , և
մերկ առաջի ամենեցուն կացուցանէին ։
Յայնժամ ասէ իշխանն ․ զի՞նչ ասես փեբ-
րոնիա , տեսանե՞ս , յո՞րպիսի բարութեանց
զրկեցար , և որպիսի անարգութեց հասեր ։
Նա պնի փեբրոնիա , և ասէ ․ թէպէտև
զմ՜մ զգեստ իմ մերկացուցես , ոչինչ նշա-
նակութի համարիմ ինձ ․ վ՜ն զի մի է արա-
րիչ արուաց և իգաց ․ և ես ոչ 'ի հանդերձից
ունիմ մերկանալ միայն , այլ և հրոյ և սրոյ
և տանջանաց ակն ունիմ․ և իցէ՞ թէ արժա-
նի եղէց չարչարիլ վ՜ն նորա , որ վ՜ն իմ չար-
չարեցաւ ։

Սեղինոս ասէ ․ անամօթ և ա՜մ անպատուու-
թե արժանի , գիտեմ զի զուարձացեալ ես
'ի գեղեցկութի մարմնոյ քո , և ոչ ամօթ ինչ
համարիս զմերկութի մարմնոյդ առաջի ամ-
բոխին ։ Պսէ երանելին ․ գիտէ ք՜ս , զի ոչ
հայեցայ և տեսի զգեղ և զպատկեր առն
մինչև ցայսօր ․ իսկ այժմ մինչ 'ի ձեռս քո
մատնեցայ , անամօթ դտայ ։ Բայց ասա՛
ինձ ո՛վ յիմար և անզգամ դատաւոր , յողոմ-
պիական մրցարանին միթէ հանդերձ զգե-
ցեալ իջանեն 'ի մարտն , զի դիւրաւ ըմբշ-
նեսցին ․ ո՞չ ապաքէն մերկ կատարեն զպա-
տերազմն , մինչև յաղթեն ․ իսկ ես՝ որ հրոյ
և տանջանաց ակն ունիմ , զիա՞րդ հանդեր-
ձիւ՛ իջանեմ յայսպիսի մարտ ․ ո՞չ ապաքէն
մերկ ընդունիմ զհարուածս մարմնոյս ․ մին-
չև յաղթեցից հօրն քում սատանայի , արհա-
մարհելով զտանջանս քո ։

Պա

Ապա հրաման տայր սեղինոս պրկել զնա 'ի չորից կողմանց 'ի չորս ցիցս կիմ քարինս , և 'ի ներքոյ նո՛ր ջահ հրոյ մատուցանել , և դալար բրօք զկողս նո՛ր հարկանել չորից դահճաց ։ Իսկ այնչափ տանջեցին զնա , զի անձրևք արեան յերկոցունց կողմանցն յերկիր հոսէին . և ներքին կողմն խորովել լինէր 'ի սաստկութե հրոյն . քանզի ձիթով արծարծէին զհուրն ։ Իբրև այնպէս յերկար տանջէին զսբ կոյսն դառնացն, միաբան գոչել ամբոխին՝ աղաչէին զդատաւորն ասելով . ո՛վ մարդասէր դատաւոր խնայեա՛ 'ի մանկահաս աղջիկդ , խնայեա՛ . և ցածկալ հրամայեա՛ տանջել , թէպէտ և ոչ հաւանի հրամանի քում ։

Իսկ բռնաւորն ևս խստագոյն հրամայէր տանջել . այլ իբրև ետես զմարմին կուսին պատառ պատառ արիւնաթաթախ յերկիր անկեալ , յայնժամ հրաման ետ դահճացն դադարել 'ի տանջելոյ զսբն . քանզի կարծէր վախճանել 'ի կենացն . և դահիճքն գլխովին համարելով զնա մեռեալ՝ ընկեցին զնա 'ի հրոյ 'ի դուրս ։ Իսկ Թումայիս տեսեալ զայնպիսի աղէտս ճգնութեն Փեբրոնեայ՝ ներգևելով վհատէր , և անկանէր առ ոտս երիայ տիկնոջն ։ Զայն իբրև ետես երիա , ձայն արկել գոչէր ասելով . վա՛յ ինձ տիկին իմ փեբրոնիա , վա՛յ ինձ հոգևոր ուսուցիչ իմ . քանզի յայսմ հետէ զրկեալ գտանիմ 'ի հոգևոր վարդապետութենէդ . և ո՛չ 'ի քոյոյդ միայն , այլ և 'ի Թումայիսայն (12) . քանզի և նա վհատեալ 'ի քոյոց տանջանացդ՝ անկեալ դնի

մերձ

մերձ 'ի վախճան ։ Իբրև լուաւ Փեբրոնիա զձայն երիայ տիկնոջն, աղաչէր զզինուորսն բերել սակաւ մի ջուր, և հարկանել ընդ երեսս իւր՝ 'ի տեղւոջն, ուր անկեալ կայր իբրև անշնչացեալ 'ի հարուածոցն ․ իսկ ն̃ք կատարէին զխնդիրն ․ և այնպէս զօրացեալ ոգի առնոյր ․ և աղաչէր զզինուորսն՝ ցուցանել նմա զերիա ։

Իսկ դատաւորն ոչ ներեաց բանից Փեբրոնեայ, այլ հրամայեաց յարուցանել զնա յոտն, և բերել զառաջեաւ, զի պխ̃նի տացէ նմ̃ ։ Ասէ դատաւորն ․ զի՞նչ ասես Փեբրոնիա, ո՞րպէս թուեցաւ քեզ առաջին մըրցումն պատերազմիդ ։ Ասէ ն̃քն ․ ուսար և 'ի միտ առեր յառաջին իսկ պատերազմիս, եթէ անպարտելի եմ, և զտանջանս քո արհամարհեցի ։ Զայս լուեալ բռնաւորին՝ հրամայեաց զՓեբրոնիա զփայտէ կախել, և երկաթի քերչաւ զկողս ն̃ր քերել ․ և հուր սաստիկ 'ի ներքոյ ն̃ր մատուցանել ․ մինչև ոսկերք ն̃ր լուցեալ այրեսցին ։ Իսկ դահճացն առեալ զքերիչսն, որ և սանտերք կոչին, այնպէս ուժգին քերեցին, մինչև առաւել քան զառաջինն պատառ պատառ հատեալ յերկիր ընկենուին զմարմինս ն̃ր ․ և իսկոյն զհուրն բերեալ մատուցանէին 'ի կողսն ։

Իսկ ն̃քն Փեբրոնիա ամբարձ զաչս իւր յերկինս, և ասէ ․ Եկ տ̃ր ինձ յօգնութիւն 'ի ժամուս յայսմիկ ։ Զայս ասացեալ՝ լռեաց ․ քանզի յանհնարինն տոչորեալ լինէր 'ի սաստկութենէ հրոյն ։ Յայն ողորմ տեսիլ բազումք

զար-

զարհուրեցան , և 'ի բաց փախեան 'ի տեսարանէն , ստգտանելով զանհամբոյր և զանողորմ բարս անօրէն իշխանին . և այլք աղաղակէին 'ի բաց առնուլ զհուրն . մինչև լուաւ իշխանն բանից նց ։

Եւ մինչդեռ կայր կախեալ զփայտէ սբ կոյսն, դարձեալ հարցանէր զնա բռնաւորն . իբրև ոչինչ կարէր տալ պխնի , ապա հրամայեաց իջուցանել , և կապել զցցոյ միոյ . և հրամայէ կոչել բժիշկ , և ասէ ցնա . անիծեալ և թշուառական պիղծս այս ոչ կամեցաւ յատենի տալ ինձ պխնի . վն այդորիկ հատցի լեզու դորա , և անկցի 'ի հուր ։ Եւ սբ կոյսն իւրովի իսկ հանեալ մատուցանէր զլեզուն , և աղաչէր զբժիշկն՝ զի արագ հատցէ ։ Իսկ հիպասպիստէս բժիշկն (13) , իբրև մերձեցաւ առ նա 'ի հատանել զլեզուն , ըստ բազմութին երդմնեցուցանէին զնա 'ի փրկութի ածոցն՝ մի առնել զայն ։ Յայնժամ երեքս նզովեալն և ամենապիղծն սեղինոս հրամայեաց ատամնախիլ առնել . և բժիշկն զգործիսն 'ի ձեռն առեալ՝ սկսաւ խլել զատամունս նր , և թափել 'ի գետին ։ Իբրև խլեաց եօթնևտասան ատամն , և սաստիկ հոսումն արեանն յերկիր իջանէր 'ի բերանոյն , ապա հրամայէր բռնաւորն , զի դադարեսցի բժիշկն 'ի խլելոյն ։ Եւ քանզի նքողեալ նուաղէր սբն յարեան հոսմանէն , զայն տեսեալ բժշկին՝ դեղ մատուցանէր 'ի դադարեցուցանել զարիւնն ։ Սկսաւ հարցանել սեղինոս ցսբ կոյսն . դո՛նեա այժմ հաւանեա՛ ինձ , և խոստովանեա՛ զածսն ։

զմտածման : Ասէ ս͞բն փեբրոնիա · նզովեալ լի-ջիր երեքթշուառեան և անիծեալ ծեր դու և դիք քո ընդ քեզ · զի խափանեն զոտս իմ 'ի ճանապարհաց իմոց՝ ոչ տաս ինձ երթալ առ փեսայն իմ · փութա՛ հա՛ն զիս յաղցաւոր մարմնոյ աստի · քանզի մնայ ինձ այն՝ որ հա-ճեալն է ը͞ իս : Ասէ սեղինոս · փոքր միւս ևս և սրով և հրով ծախեմ զմարմինդ քո · քանզի գիտեմ, զի դեռ զոյժ մանկութե͞ և զհամարձակութե͞ն անամօթութե͞ ունիս : Իսկ ս͞բն փեբրոնիա ոչ կարացեալ տալ պ͞նի 'ի սաստիկ տանջանացն՝ ևս քան զևս 'ի մեծ ցասումն ածէր զդատաւորն :

Յայնժամ հրաման ետ անօրէնն բժշկին, և ասէ · զանամօթիդ զստինսն հատեն 'ի գե-տին ընկեսջիր : Եւ այն ինչ բժիշկն առեալ զսուրն՝ կամէր մերձենալ 'ի ս͞բ աղջիկն, ան-դէն վաղվաղակի ա͞մ բազմութիւն սկսաւ ա-ղաչել զբռնաւորն, և ասել · ո՛վ դատաւոր ներեա՛ տղայ աղջկանդ, և մի՛ ածեր 'ի վ͞ր դորա այնպիսի հարուածս : Իսկ դատաւորն ցասուցեալ 'ի վ͞ր բժշկին՝ ասէ · կտրեա՛ ա-րագ ո՛վ թշուառական, և 'ի սիրոյ ա͞ծոցն օտար : Իբրև սկսաւ կտրել զմի 'ի ստեանցն, գոչեաց ս͞բ աղջիկն յերկինս 'ի վեր, և ա-սէ · տէ՛ր իմ ա͞յ, տե՛ս զհակառակութի բռնու-թե͞ս այսորիկ, որ͞պս զի եկեսցէ ոգի իմ առ քեզ · և այլ ոչ ևս բարբառեցաւ : Եւ իբրև հատան երկոքին ստինքն և արկան 'ի գե-տին, հրամայեաց անօրէնն հուր մատուցա-նել 'ի լանջս ն͞ր · և 'ի բազում ժամս բորբո-

քելոյ զհուրն՝ խորովեալ լինէր որովայն նր՟ առ հասարակ ։ Զայն տեսեալ որոց անդն կային, յոլովք 'ի բաց գնացին 'ի տեսարանէն, ասելով. նզովեա՛լ լիցի դիոկղետիանոս և ա՟ծք նր՟ ։

Իսկ Թումայիս և երիա առաքեցին 'ի վանսն առ բրիոնիա՝ պատմել որ ինչ անցք անցին ը՟ փեբրոնիա. և հասեալ համբաւաբերն աղջկան 'ի վանսն՝ գոչեաց արտասուօք, և ասէ ցսարկաւագուհին. յաղագս այսորիկ առաքեաց զիս տիկինն իմ երիա և Թումայիս, աղաչել զսրբութիւդ քո, ո՛չ զի մի՛ լքցին ձեռք քո 'ի տարածելոյ ը՟ երկինս առ ա՟ծ. զի մեծ չարչարանք եկին 'ի վ՟ր դստերն քո փեբրոնիայի ։ Իսկ նր՟ ընկալեալ զայնպիսի աւետիս՝ կարդաց առ ա՟ծ, և ասէ. տ՟ր ա՟ծ ժամանեա՛ յօգնականութիւն աղախնոյ քում փեբրոնեայ ։ Նա և անկեալ 'ի գետին՝ ողբալով ասէր. բրա՛ բրա՛ փեբրոնիա, ո՞ւր ես. (իսկ բրա՛ կ՟մ պրա՛ յասորի լեզու նշանակէ որդեա՛կ իմ, կ՟մ դըստրի՛կ իմ. յորմէ և կոչականդ պրէ՛ ռամկօրէն) ։ Նա և անդրէն տարածեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ. տ՟ր ա՟ծ իմ յի՟ս ք՟ս, նայեա՛ և տե՛ս զտառապանս և զնեղութի՟ս աղախնոյ քո փեբրոնեայ, և արա՛գ ժամանեա յօգնականութի՟. և ա՛յց արա 'ի նեղութե՟ անձին նր՟. ո՛չ զի տեսից զկատարումն նր՟, և զհամադասիլն 'ի դասս սրբ՟ց քոց վկայիցն տ՟ր ։

Իսկ դատաւորն հրամայեաց լուծանել զփեբրոնիա 'ի դժնդակ կախաղանէն ցցոյն. և նա ը՟ լուծանիլն՝ 'ի բազում տկարութե՟ ու-

ժոյն անկաւ 'ի վերայ երեսաց երկրի , զի ոչ ևս կարէր յոտին կալ ։ Եւ սկսան շշըն-ջել ը̄ միմեանս իշխանաւորք մ̄ անգթութե̄ իշխանին ։ Յայնժամ ասէ կոմսն Պռիմոս ցԼիւսիմաքոս ․ ընդէ՞ր է կորուստ աղջկանս այս ։ Ասէ Լիւսիմաքոս ․ Թողացո՛ ինձ տէր իմ Պռիմոս , զի մ̄ բազմաց փրկութե̄ աշ-խարհի դա ․ Թերևս և մ̄ իմ իսկ գլխովին ․ ո՜վ և ես լսէի բազում անգամ 'ի մօրէն իմ-մէ բանս այսպիսիս մ̄ անպարտելի նահա-տակութե̄ քրիստոնէից ։ Ո՞չ ապաքէն և իմ կամք էր կեցուցանել զդա ․ այլ միթէ յիմ ձեռս էր ապրեցուցանել կմ̄ արձակել ․ այլ թո՛ղ զդա մրցել , զի 'ի բազմաց փրկութիւն ջանայ ։

Յայնմ վայրի յառաջ կացեալ տիկին երխա՝ ասէ ցդատաւորն ․ ո՛վ օտարացեալդ 'ի մարդ-կային բնութե̄ ․ ո՞չ շատացար առաջին չար-չարանօքդ՝ որով տանջեցեր զտղայ աղջիկս զայս ․ կամ ո՞չ յիշեցեր զմայր քո , և զչար ծնունդ քո ․ ո՞չ ապաքէն կաթնաբուղխ ան-դամօքս այսոքիւք ծնար , և այնպէս 'ի չափ հասեր , և մինչև յայսպիսի չարագործութե̄ս եկիր ։ Իսկ ես զարմացեալ եմ , զի ոչինչ կա-րաց ածել զքեզ 'ի զղջումն՝ ո՛ անողորմ և անգութ ․ և արդ մի՛ խնայեսցէ 'ի քեզ երկ-նաւոր Թագաւորն , ո՜վ դու ոչ խնայեցեր տառապելոյս այսմիկ ։

Յայնժամ բռնաւորն լի ցասմամբ յարձա-կէր 'ի վերայ երխայ տիկնոջ , և հրամայէր իջուցանել զնա յատեանն ․ իսկ նա մեծաւ

խրն-

խնդութ՟ փութացաւ իջանել 'ի տեսարանն՝ ասելով այսպէս ․ ած՟ փեբրոնիայի ընկալ և զիս զհեթանոսս և զտառապեալս ը՟ փեբրոնիայի ։ Յայնժամ բարեկամք սեղինոսի ասեն ցնա ․ մի՟ իջցէ երխա յատեանս ․ զուցէ բազումք մարտիւրոսասցին ․ և առ հասարակ 'ի կորուստ մատնի քաղաքս և գաւառս ․ և բռնաւորն արգել զիջումն նորա ․ այլ 'ի ձայն մեծ աղաղակէր ը՟դէմ նորա , և ասէր ․ լո՛ւր ինձ Երիա , կենդանի՛ են ած՟քն , զի բազում չարչարանաց լինիս առիթ փեբրոնեայ ։

Օ այս ասացեալ՝ հրամայէր անօրէնն հատանել տապարաւ զմ՟էջ կուսին զերկուս ձեռսն , և զաջոյ ոտն ․ և դահճքն արարին ը՟ հրամանի նր՟ ։ Այլ 'ի դնել զոտն աջոյ 'ի վ՟ր կոճեղ , և 'ի հարկանել տապարաւ , ոչ կարաց դահիճն միով կմ՟ երկու հարմամբ հատանել ․ և եղև գոչիւն աղաղակի 'ի բազմութ՟ ը՟ ողորմ տեսիլն ․ մինչև յերրորդումն 'ի բաց կտրեաց ։ Իսկ ապա ս՟րն բովանդակ մարմնոյն 'ի դողումն եղեալ , այնինչ մերձ էր 'ի պակասիլ , ջանայր դնել և զմնացեալ ոտն 'ի վերայ կոճեղ , և աղաչէր զդահիճն ակնարկութ՟ , ո՟պ զի 'ի բաց հատցէ և զայն ։ Իսկ բռնաւորն տեսեալ զյօժարութիւն նորա՝ գազանացեալ շարժէր զգլուխն , և ասէր ․ տեսէ՛ք զյամառութիւն դորա ․ ապա լի ցասմամբ ասէ ցդահիճն ․ կտրեա՛ 'ի բաց և զահեակ ոտն նր՟ ․ և այնպէս մնաց երանելի կոյսն ոստաքանց 'ի ձեռաց և յոտից ։

Յայնժամ յարուցեալ լիւսիմաքոս՝ ասէ ցսե-
ղինոս. զի՞նչ ևս կամիս անցուցանել ը̄ տա-
ռապեալդ ը̄ այդ. ահա ժամ է ճաշոյ: Սե-
ղինոս ասէ. կենդանի՞ են մծքն, ոչ թողից
զնա կենդանի. այլ աստէն մնացից, մինչև
վճարեսցէ զոգին: Եւ զկնի պահոց հարցա-
նէր անօրէնն ցսպասաւորսն. եթէ տակա-
ւին կենդանի՞ իցէ ասէ՝ երիցս թշուառա-
կանն այն: Եւ նք ասեն. այո՛ տր, շունչ նր
'ի նմա է: Յայնժամ հրամայեաց բառնալ
զգլուխ սբյն. և զինուորացն կալեալ զգի-
սոյ գլխոյ նր, և եդեալ զսուրն 'ի վերայ փո-
ղիցն՝ իբրև զոչխար այնպէս փողոտեցին. և
այսու օրինակաւ կատարեցաւ 'ի քս որոջն
անարատ և կոյսն մաքուր սբն փեբրոնիա՝
բազմաչարչար և բազմայաղթ նահատակ:
Իսկ իշխանքն գնացին 'ի ճաշս իւրեանց.
բայց լիւսիմաքոս երթայր արտասուելով:
Եւ բազմութիւն յարձակեալ 'ի վր՝ կամէին
յափշտակել զմարմին սբյ վկային. այլ ոչ ե-
ղեն ձեռնհաս 'ի ժամուն. քզի լիւսիմաքոս
հրաման տուեալ էր զօրացն պահել զգու-
շութբ զմարմինն: Արդ գնացեալ լիւսիմա-
քոսի յապարանսն՝ ոչ եկեր և ոչ էարբ 'ի տրտ-
մութենէն. այլ փակեալ զանձն 'ի սենեակ մի՝
ողբայր զբարձումն փեբրոնեայ: Իմացեալ
զայն սեղինոսի՝ և ոչ նա էառ կերակուր յա-
ռաւել դառնութէ ոգւոյ իւրոյ. այլ յարու-
ցեալ ձեմ առնոյր 'ի գաւթի ապարանիցն.
և 'ի նմին ժամու՝ մինչդեռ ձեմելով զգնայր,
հայեցեալ յերկինս՝ մեծ իմն և սքանչելի

ինչ

ինչ նշան տեսանէր, և բազում ժամս պշու-
ցեալ 'ի հիացման՝ յայլոյ խելս լինէր. և ոմն
զցուլ ցնորեալ 'ի խայտալ իւրում բախեաց
ուժգին զգլուխ իւր 'ի սիւն մի, և հերձաւ
գագաթն նր՟. և այնպէս անկեալ յերկիր՝
ձայն արկեալ գոչէր, մինչև եհան զդառնա-
ցեալ ոգին ։

Բազում խռովութի՟ և աղաղակ եղև 'ի ժա-
մուն յայնմիկ ։ Լուեալ Լիւսիմաքոսի ըզ-
ձայն ամբոխին՝ 'ի դուրս վազեաց, և հար-
ցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն. և նք՟ պատմեցին
զոր ինչ եղեն ։ Լիւսիմաքոս իբրև լուաւ,
'ի բազում ժամս շարժեալ զգլուխն՝ կայր
հիացեալ. և ասէ ցայնոսիկ՝ որ շուրջն կային.
Մե՛ծ է Ա՟ծն քրիստոնէից, և օրհնեալ է Ա՟ծն
փեբրոնեայ. խնդրեաց Ա՟ծ զվրէժ անպարտ
արեանն հեղլոյ. և հրամայեաց բառնալ
թաղել զանօրէն զսեղինոս ։

Յետ այսորիկ կոչեաց զկոմսն պռիմոս, և
ասէ ցնա Լիւսիմաքոս. երդմնեցուցանեմ
զքեզ 'ի ճշմարիտ Ա՟ծն քրիստոնէից. հրա-
մայեա՛ առնել տապանակ յանփուտ փայ-
տից վ՟ն մարմնոյն փեբրոնեայ, և առաքեա՛
յիմ կողմանս քարոզս, զի որ կամիցին գալ
քրիստոնեայք 'ի թաղումն կուսին, աներ-
կիւղ իցեն՝ մանաւանդ յետ մեռանելոյ հօր-
եղբօրն իմոյ ։ Եւ դու վերակացու լինի-
ջիր, և տո՛ւր բառնալ զմարմինն փեբրոնեայ,
և տանել 'ի վանս իւր. զի մի 'ի բազմութենէդ
ոք յափշտակեսցէ ինչ 'ի նր՟ մարմնոյն, կամ
ատամն յատամանցն. նաև անդր անասուն

մի՛ լքզեսցէ զն՟ը արիւն ն՟ր , որ հեղեալն է վ՟ն ք՟ո . այլ եթէ հնար է , և զհողերկրին քերեալ տարցես 'ի վանսն ը՟ն ն՟ը նշխարսն ։ Եւ արար պռխիմոս կոմսն զա՟մ ը՟ս հրամանին լիւսիմաքոսի . և հրամայեաց զօրացն բառնալ զմարմին ն՟ը . իսկ ինքն կոմսն առեալ զգլուխ ն՟ը և զձեռսն և զոտսն , և զոր միանգամ հատեալ էր 'ի ն՟ը մարմնոյն , յիւր պատուական քղամիդն ժողովէր՝ տանել անձամբ 'ի վանսն ։ Յայնմ վայրի ընթանայր բազմութի՟ն 'ի տեղի վկայութեն . և պատեալ զկոմսին՝ այր զարամբ եղանէին , զի կորզել ինչ կարասցեն 'ի հատեալ անդամոց ն՟ը . մինչև 'ի մեծ նեղութե՟ն եղեալ կոմսն՝ սաստիւք սուսերամերկ զինուորաց ահ արկանէր ամենեցուն , և այնպէս հազիւ զերծանէր 'ի բռնութե՟ն ամբոխին ։ Եւ 'ի մուծանել զն՟ը մարմինն և զնշխարսն 'ի վանսն՝ ոչ զոք թողին 'ի ներքս մտանել , բայց ըզթումայիս և զերիս . և էր ժողովեալ բազմութի՟ն յոյժ առ դրանն . յորոց վ՟ն պահապանս կարգեալ պռխիմոսի՝ դարձաւ ինքն առ լիւսիմաքոս ։

Իսկ իբրև տեսանէր սարկաւագուհին՝ այն է մեծ տիկինն բրիոնա , պատառ պատառ հատեալ զմարմին ն՟ը , 'ի վհատութի՟ն թմբրութե՟ն անկեալ դնէր անշունչ 'ի բազում ժամս . ապա յինքն եկեալ՝ անկանէր 'ի վ՟ն նշխարաց ն՟ը , և ասէր լալագին . վա՛յ ինձ որդեա՛կ իմ փեբրոնիա , զի այսօր վճարեցար 'ի տեսլենէ մօր քո բրիոնեայ . արդ ո՞վ ըն-

թերց-

Թելցցի զամենաշունչ գիրս յականջս քերց քոց . որ ձեռք շօշափեսցեն զգիրս՝ զորս դու շօշափէիր . և զայս ասելով ողբայր 'ի վերայ փեբրոնիայի ։

'Ի նմին ժամու հասին քորքն՝ որ ելեալ էին 'ի վանացն հանդերձ եթերիայիւ . և անկեալ 'ի վերայ մարմնոյն փեբրոնեայ՝ ողբային անմխիթար , և համբուրէին երկրպագութեամբ անյագաբար . երանի տային նմա , և զանձինս աւաղէին ։ Ընդ որս ձայնակցեալ և երիայ՝ ասէր . Թո՛ղ համբուրեցից զոտս քո՝ որ կոխեցին զգլուխ օձին . համբուրեցից զվէրս մարմնոյ քո՝ որով բժշկեցան վէրք հոգւոյս . պսակեցից ծաղկեղէն պսակօք զքո գլուխդ , որով պսակեցեր զկանանց ազգս բարւոք նահատակութեամբդ ։

Արդ իբրև գայր մերձենայր իններորդ ժամ աւուրն , ասէ բրիոնա մայրապետն . փեբրոնիա , ահա ժամ աղօթից է , եկ կացցուք յաղօթս որդեակ իմ ։ Եւ սկսաւ ասորի խօսիւք այսպէս հրաման տալ փեբրոնիայի . բրա՛ բրա՛ բրա՛ , եա՛թի տէլիօթա՛ կո՛ւմի տա՛լիթա . ո՞ւր է , ո՞ ո՛ որդեակ իմ , ո՞ւր ես . արի՛ աղջի՛կ դու , արի՛ եկ ։ Յայնժամ ասէ և Թումայիս . որդեա՛կ իմ փեբրոնիա , ո՞չ երբէք անցեր զպատուէրանաւ մեծի տիկնոջդ իմոյ . այժմ է՞ր ոչ տաս պատասխանի ։

Զայսոսիկ ասէին , և բազում արտասուս հեղուին մինչև 'ի տարաժամիլ աւուրն ։ Յետ այսորիկ լուացեալ յարենէ զսուրբ մարմինն՝ եդին 'ի վերայ բազրոնի միոյ . և պատեալ յօ-

ընկէին զհատեալ անդամսն յիւրաքանչիւր տեղիս առընթեր մարմնոյն ։ Ապա հրամայեաց սարկաւագուհին բանալ զդուրս վանացն , զի մտցէ բազմութիւն . և տեսեալ ամենեցուն զերջանիկ նահատակն սքանչելի՝ փառաւոր առնէին զԱծ . և կանայք մեծամեծք ողբային զմերժումն ՚ի վճպուէ նորին ։ Հասին անդր և ոմանք ՚ի նոցա հարանց , և բազումք ՚ի միայնակեցաց . և տքնութբ անցուցանէին զԱմ գիշերն՝ հանդերձ եպսաւն , որ այն ինքն է նորին յակոբ մծբնայ հայրապետ ։

Իսկ լիւսիմաքոս կոչեաց զկոմսն պոլիմոս , և ասէ ցնա . ես տէր իմ պոլիմէ՝ զհայրենի մոլորութիւն թողում , և հրաժարիմ յԱմ ընչից և ՚ի պատուոյս . և անկանիմ առաջի քոյ , և հաւատամ ՚ի նա ։ Ասէ պոլիմոս . և ես տէր իմ նոյնպէս կամիմ . նզովեալ դիոկղետիանոս և թգրութի նր . մերձենամ առ քս , և հաւատամ ՚ի նա ։ Զայս ասացեալ՝ ելին յապարանից , և եկին ՚ի վանսն , և խառնեցան ընդ ժողովեալսն ։

Երբև առաւօտ լինէր , բերին զպատրաստեալ տապան նորին , և յերևելի տեղւոջ եդեալ՝ հանգուցին անդ զպատուական մարմինն հանդերձ հատեալ անդամօքն յարմարելովք . իսկ զատամունսն՝ զոր թափեցին , դնէին ՚ի վերայ լանջացն . և ժողովուրդն իւղս և խունկս բերէին և ընուին ՚ի տապանն , մինչև ծածկիլ մարմնոյ նորին ։ Եւ յետ պատուելոյ զերանելին երկրպագութբ

և

և պաշտամամբք աղօթից և օրհնութեանց , յայնժամ միաբանեցեալ եպ՟սն՝ աղաչէր զբազմութ՟ին , զի թոյլ տացեն նմա փակել զտապան ս՟բյն , և հանգուցանել 'ի վայելուչ դիրս յաղօթարանի անդ վանացն ։ Յայնմ վայրի եղև աղմուկ մեծ և հակառակութ՟ի 'ի ժողովրդեան , որք ստիպէին՝ զի բա՛ց մնասցէ տապանն, և մի՛ փակեսցի ։ Բազմօք խրատեւ ն՟ց եպ՟սն , նոյնպէս և կրօնաւորք և ժառանգաւորք՝ հանգուցանել զս՟բ նշխարսն . բայց ո՛չ հաւանէր ամբոխն ։ Ապա յարուցեալ բրիոնայ , և կացեալ 'ի բարձր տեղւոջ՝ ասէ ցամբոխն . աղաչեմ զձեզ տեա՛րք իմ և եղբարք , թողէք ցանկալի պաւակին իմում փեբրոնեայ երթալ հանգչել 'ի ս՟բ տեղւոջ իւրում . և թոյլ ետուն . և այնպէս յետ բազում արտասուաց և աղօթից հանգուցին զս՟բ նշխարսն 'ի պատշաճաւոր տեղւոջ . և ամենեքին փառաւոր առնէին զա՟ծ ։

Բազումք 'ի հեթանոսաց հաւատացին և մկրտեցան 'ի ք՟ս . մկրտեցաւ և լիւսիմաքոս և կոմսն պռիմոս . և հրաժարեցեալ յ՟շէ՝ գնացին զհետ մարկիւղոսի , որ էր գլուխ ա՟մ վանականացն . որ և մարգելլոս արշիմանտրիտ ասի , այն իսկ է նա ինքն ս՟բն մարուգէ բարեկամ ս՟բյն յակոբայ հայրապետի . և ընտրեցին զձգնողական վարս միակեցութ՟ե մինչև 'ի մահ . մկրտեցան և բազումք 'ի զօրականաց՝ հաւատացեալ 'ի ք՟ս . սոյնպէս և տիկին երիս հանդերձ ընտանեօքն հաւատացեալ մկրտեցաւ 'ի ն՟ր ։

Յայն-

Յայնժամ աղաչէր զբռնաւորն, և ասէր․ ընկալ զիս զաղախին քո 'ի տեղի Փեբրոնեայ տիկնոջն իմոյ․ և ես քեզ սպասաւորեմ, որպէս և նմայն․ առնոյր այնուհետև զզարդ իւր՝ առնէր 'ի զարդ տապանին Փեբրոնեայ, և պատէր զայն ոսկւով և մարգարտով։ Եւ յաւուր յիշատակի նորա ամ կանայք վանականք յայլ ևս մենարանաց անդր ժողովէին, առաւելապէս վն մեծի սքանչելեացն՝ որ եղև։ Վասնզի յաւուր յիշատակի նր՝ մինչդեռ յաղօթս կային հասարակ գիշերի, տեսանէին զնըն Փեբրոնիա, զի կայր յեկեղեցւոջն 'ի սովորական տեղւոջ իւրում (ձայնակից լինելով դասուն), մինչև զերրորդ աղօթսն կատարէին (14)․ և մեծ ահ լինէր 'ի ժամուն յայնմիկ․ և ոչ ոք իշխէր մերձենալ 'ի նա կմ հարցանել ինչ․ զի մի լիցի 'ի նոցանէ աներևոյթ։ Ի յառաջնում նուագի երևման նր, յորժամ տեսին զնա քորքն ամ, և ահ և դողումն կալաւ զամենեսեան, մայրպետն Բրիոնա ը տեսանելն զնա գոչեաց 'ի ձայն բարձր, ահա որդեակ իմ Փեբրոնիա․ և ընթացեալ կամէր բուռն հարկանել, և արկանել գիրկս՝ համբուրել զնըն․ իսկ նա անդէն եղև աներևոյթ։ Ապա այնուհետև յորժամ երևէր, ոչ ոք իշխէր մերձենալ 'ի նա․ այլ միայն արտասուօք լնուին 'ի խնդութէն․ քանզի ուրախութի մեծ լինէր, յորժամ տեսանէին զայնպիսի տեսիլն։

Իսկ եպս քաղաքին (որն յակոբ) շինեաց տաճար զարմանալի յանուն սբյն Փեբրոնեայ,

նեայ , և կատարեաց զայն յամս վեց . և կոչեալ զեպիսկոպոսունս՝ որ շուրջ զխուրբեան էին , արար ընդունելութիւն մեծ . և կատարեաց նոքօք զհսկումն գիշերոյն 'ի յիշատակի սրբոյն , որ օր էր յունիս ամսոյ : Իբրև այգ եղև , յարուցեալ գնացին եպիսկոպոսքն 'ի վանսն , զի զյիշատակ սրբոյն կատարեսցեն ըստ սովորութեան . զհետ գային նոցա և բազմութիւն յոյժ ջահիւք և խնկօք : Իսկ եպիսկոպոսացն մտեալ կացին յաղօթս . և ապա նստան յեկեղեցւոջ . և կոչեալ զսարկաւագուհին զԲրիոնա՝ սկսան ասել ցնա այսպէս . Ո՜ 'ի յերկրի քաղաքավարութիւն քո երկնային , և զկարգաւորութիւն վարուց , և զառաքինի վաստակոցդ զպտուղ ո՞ բաւական իցէ գովել . այսպիսիս լինել արժանի է՝ որոց կարգեալ իցեն մայր վանաց , և այսպէս պտղաբերել Աստուծոյ : Եւ արդ քանզի արժանաւորապէս Ազնաւոր մարտիրոսիդ Ձերում գովութիւն ասել չիք ոք բաւական , բայց միայն լսել , վասն անկարացեալ մեր բանիւ կամ գործով իւիք պատուասիրել զմեծ վկայուհին զՓեբրոնիա , եկաք առ քեզ աղաչել զքեզ իբրև զհօգևոր քոյր մեր , զի և դու ընդ մեզ պատմեսցես զնորա վկայդ . իբրև զի տարեալ զաս բնակեցուցուք 'ի վկայարանին՝ որ յանուն դորա :

Իբրև զայս լսէին քորքն նմա , ուժգին գոչմամբ անկանէին յոտս եպիսկոպոսացն՝ ասելով 'ի մի բերան . ողորմեցարուք մեզ տառապելոցս , և մի՛ զրկէք զմեզ 'ի պատուական մարմնոյդ , և յընտիր մարգարտէդ՝ զոր շնորհեաց մեզ Քրիստոս :

քո ։ Խօսել սկսաւ եպսն ընդ Բրիոնայ , և
ասէ ․ լուր ինձ քոյր իմ ․ ’ի փառս և ’ի գո-
վեստ ս͞ն վկայիս շինեցի զյարկն ա͞յ ․ այս վեց
ամ է , յորմէ հետէ աշխատեցայ շինել ․ մի
առներ զիս անպտուղ ։ Պ͞խնի ետ Բրիոնա ,
և ասէ ․ եթէ կամք ս͞ն մարտիրոսին այդ-
եղև , ես ո՞վ եմ` որ կարեմ արգելուլ ․ արդ
մտեալ առէք և երթայք խաղաղութ͞բ ։ Յայն-
ժամ մտին եպսքն ’ի տեղին` ուր կային նշ-
խարքն , և սկսան զսովորական աղօթսն մա-
տուցանել ։

Իսկ Երիայ ’ի վ͞ր հասեալ` թէ կամին բառ-
նալ զտապան ս͞բյն , աշխարէր ձայնիւ ասե-
լով ․ վայ մեզ , զի մեծ օրհնութիւն բառնի
այսօր ’ի վանացս ․ վայ մեզ , զի սուգ և որ-
բութի տիրէ մեզ այսօր ․ վայ մեզ , զի մեք
մեզէն կորուսանեմք զմարգարիտն մեր ։ Եւ
բողոք բարձեալ առ Բրիոնայ` ասէր ․ զի՞ գոր-
ծես մայր , զի զրկես զիս ’ի քեռանէ իմմէ ․
վ͞ս ն͞ր թողի զա͞մ , և ը͞ քո ձեռամբ պատա-
պարեցայ ։ Տեսեալ Բրիոնեայ զԵրիա այն-
պէս` դարձաւ և ասէ ցնա ․ զի՞ վշտագնիս
որդեակ Երիա ․ եթէ հաճոյ թուի առաջի
նորա երթալ , երթայ ․ ապաթէ ոչ` չելանէ
աստի ։ Եւ արդարև եղև ը͞ս բանի սարկաւա-
գուհւոյն ։

Քանզի իբրև կատարեցին եպ͞սունք զա-
ղօթս , և յետ ասելոյ ամենեցուն զամէնն`
մերձեցան առ տապան ս͞բյն , և կամէին շար-
ժել զայն , վաղվաղակի ձայն սաստիկ որոտ-
ման յանդնդոց լինէր ․ և բազմութ͞ն յերկիր
ան-

անկեալ յահէ անտի՝ կարդային առ ած ։ Դարձէին եպսքն մերձեցան 'ի տապան սբյն ․ և միւսանգամ շարժումն մեծ լինէր ․ մինչև կարծել՝ թէ պատառեսցի երկիրն , կմ կործանեսցի քաղաքն ամ ․ և յայնժամ գիտացին եպսքն , եթէ ոչ կամի սբ վկայն մեկնիլ 'ի վանիցն ։ Ասեն ժողովք ցբրիոնա ․ որովհետև ոչ կամի վկայն մեկնիլ 'ի վանիցս , զմի 'ի հատեալ անդամոց դորա տացես մեզ ․ և զայն առեալ տարցուք ։ Եւ բրիոնայ բացեալ զանալեօք զտապանն՝ տեսանէր , զի իբրև ճառագայթք արևու փայլէին 'ի սբ նշխարացն ․ յայնժամ մեծաւ երկիւղիւ ձգեալ զձեռնն՝ բուռն հարկանէր զհատեալ ձեռանէ սբյն , կամելով զայն տալ եպսին ․ և նոյն ժամայն կալեալ եղև ձեռն նր 'ի տապանակին ։ Սկսաւ խօսել բրիոնա հանդերձ արտասուօք ․ աղաչեմ զքեզ որդեակ իմ Փեբրոնիա , մի բարկանար 'ի վր մօր քո ․ յիշեա զաշխատութիս իմ , և մի անարգեր զծերութի մօր քո ։ Ապա թողեալ զձեռն սբյն 'ի տապանակի՝ 'ի վեր եառ զձեռնն իւր յինքն ամբողջ ․ և միւսանգամ համարձակեալ արտասուօք ասէր ․ տուր մեզ զօրհնութի , և մի տրտմեցուցաներ զիս տիկին Փեբրոնէ ։ Եւ մխեալ զձեռն՝ եառ անաշխատ ատամն մի ․ և զայն ետ եպսին , և վաղվաղակի կափոյց զտապանն ։

Իսկ եպսայն առեալ զսբ զայն նշխար , և եդեալ յոսկի շարի ( այս է յոսկեղէն տփի ) , հանդերձ ուրախութբ դարձան 'ի քաղաքն ․

և

և բազմութիւն առաջի երեթայլին սաղմոսիւք և օրհնութեամբ՝ մոմեղինօք և խնկօք. և յորժամ հասին ՚ի վկայարանն, ելեալ եպսացն ՚ի բարձր տեղի աշտիճանաց բեմբին՝ նշանակեցին ժողովրդեան զխորհուրդն ։ ՚Ի նմին ժամու որք միանգամ գտան կոյրք, կմ կաղք, կմ ցաւագարք կմ այսահարք՝ բժշկեցան ։ Եւ իբրև յայտնի եղև ամենեցուն այս, ընթանային երիտասարդք ընդ ամ կողմն, և բարձեալ բերէին ՚ի վր ուսոց զախտաժէտս, և զայլսն՝ զորս պատգարակօք, և զորս գրաստուք. և առհասարակ բժշկէին յամ ցաւոց ։ Եւ ցորչափ ոչ դադարեցին ՚ի բերելոյ զհիւանդս զօրն զայն ողջոյն, ոչ թողացուցանէր ժողովուրդն ՚ի բաց տանել և ամփոփել զնշխար սբյն փեբրոնեայ. մինչև յետ բժշկելոյ բոլորից՝ միաբան օրհնեցին և փառաւորեցին զած (16). և ամփոփեցին անդ յեկեղեցւոջ զպատուականն նշխար սբյն ՚ի նմին իսկ աւուր, որ օր իէ էր ամսեանն յունիսի. և այնպէս առհասարակ լցեալք ՚ի բարութէ՝ զոր արար ած ՚ի ձեռն սբյն, դարձան ուրախութեամբ ՚ի տունս իւրեանց ։

Իսկ բրիոնա սարկաւագուհին կեցեալ այլ ես ամս երկու զկնի նաւակատեաց տաճարի սբյն փեբրոնեայ, և զամ գեղեցիկ կարգաւորեալ՝ ննջեաց ՚ի խաղաղութ ։ Եւ ես Թումայիս (աւէ գրիչս վկայաբանութես) զկնի ննջման բրիոնեայ ընկալայ զնորին սարկաւագութի՝ կարգեալ ՚ի մայրութի ուխտին. և զամն հասու լինելով ՚ի սկզբանէ անտի՝

որ

որ ինչ անցք անցին ը Փեբրոնիա , ում և ինչ ինչ ուսեն ՚ի տր լիւսիմաքոսէ , զբովանդակ վարս նորա և զարժանի յիշատակաց գործս արկի ընդ գրով , ՚ի գովութիւն և ՚ի փառս քաջ նահատակին և վկային Փեբրոնեայ , և ՚ի յորդոր լսողացն , յօժարամիտս առնել զնս յերկրպագութի և ՚ի փառաբանութի հօր և որդւոյ և հոգւոյն սբյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Կատարումն սբյն Փեբրոնեայ եղև չորս հինգ ամօք զկնի կատարման սբց հռիփսիմեանց , Թերևս յամի տն իբր 305 ․ վսյ և նաւակատիք տաճարի նր համարի լինել ՚ի սբյն յակոբայ մծբնայ հայրապետէ յամի 311 ․ բայց են որ փոքր մի զկնի դնեն , ք յամի 317 ։ Յետ ժամանակաց նշխարք Փեբրոնեայ ցրուեցան ՚ի կոստանդինուպօլիս և յարևմուտս ․ ուր և ցարդ դաստակ մի ձեռին նր մորթապատ՝ խանձողեալ հրով՝ պահի ՚ի տուանա քաղաք կալաբրիոյ յիտալիա ։ (17)

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Մինչափ միաբանութի է երկուց օրինակաց ը միմեանս , ք հայերէն վկայաբանութեա՝ որ ՚ի ճառընտիրն մեր մեծ , և յունականին՝ զոր ՚ի վատիկանեան մատենից յառաջ բերէ բաբեպրոք բոլլանդեան ․ մինչ զի կամ հայկականն մեր ՚ի յունէ անտի է Թարգմանեալ բառ առ բառ , և կմ երկոքեանն ՚ի միոյ ասորի բնագրէ միօրինակ թարգմանեալ ․ քանզի երևի թումայիս ասորերէն յօրինեալ զբուն պատմութի ․ ը որում առաւել լեզու ասորւոց էր ՚ի կիր արկեալ ՚ի միջագետս և ՚ի մծբին ․

մծբին. Թո՛ղ զի և քանի մի բառս կամաւ յառաջ բերէ սաորերէն բարբառեալ 'ի կուսանաց անտի վանացն փեբրոնեայ. (Թէպէտ և յունարէն ևս գիտէին. և Թումայիս անխտիր կարող էր գրել 'ի յոյն և յասորի լեզու): Գոյ և հին Թարգմանութիւն լատինական 'ի նմին օրինակէ յունաց՝ տպարեալ 'ի յովհաննէս սարկաւագէ նէապօլսեցւոյ. բայց առաւել ը̃ իմաստից քան ը̃ բառից. * զի լատին սովորուն անբաւական գտա-
· նի պինել յունական բարբառոյ ||, ասէ յովհաննէսն այն: Սմին իրի բարուք առնէ բաբեպրոք, զի ինքն նորոգ Թարգմանէ ճշգիւ 'ի յունէ 'ի լատին. Բայց սակայն եթէ չէր նր̃ տպագրել և զյունականն, ինչ ինչ այլազգ լինէր մեզ իմանալ 'ի սոսկ լատինականէն. ուր ը̃ յոյն և ը̃ հայ ընթերցուած տեսանի միաձայնուն յամի. Թո՛ղ զտարբերուն գրչաց. ը̃ որոյ ինչ ինչ բառք և բանք պակասեալք կամ այլայլեալք 'ի միումն՝ սատարութբ̃ միւսոյն են ուղղագրելի: Եւ ահա այս եղև յայսմ մասին մերս աշխատասիրութի, զի բաղդատութբ̃ հայերէնին ընդ յունականի ը̃օրինակեցաք զողջոյն իսկ զվկայաբանութիս, ը̃ կարի զմթութի միոյն միւսովն պարզելով, կամ զթերութի միոյն 'ի միւսմէն լրացուցանելով. ոչ̃ և ինչ ինչ նշանակեսցուք 'ի կարգիս:

Առ այժմ մեծապէս ուրախ եմք ը̃ այն, զի քաջն բաբեպրոք չէ կարացեալ գտանել ինչ սոգտանելի կամ անհաւանելի 'ի բովանդակ վկայաբանութեա. այլ ամի՛ անտարակուսելի առնէ զամ բանն իբրև յականատես գրչէ աւանդեալ. և ջանայ պայծառացուցանել՝ ոչ̃ և գիտէ, ի՛նչ ի՛նչ ծանօթաբանութբ̃ք. որ և մեզ են ը̃ունելի, և կամ ը̃ ինքեան անհակառակելի:

Զոր օրինակ՝ յասել նր̃ ը̃հանրապէս վս̃ սր̃յն փեբրոնեայ. * Փառաւոր հանդէպք նահատակուն սորին՝ վս̃
· քն̃ի, այնչափ առաւել հռչակաւոր եղեն ը̃ ամ եկե-
· ղեցիս արևելեայց, որչափ պայծառափայլ վկայութբ̃
· գրեալ կային, զի̃ է արժանահաւատ գրչութբ̃ ակա-
· նատես վկային Թովմայիսայ հաւատաւորի, որ զերկ-
· րորդ տեղին ունէր 'ի մենաստանի անդ՝ ուր մնաւ
· փեբրոնիա 'ի մանկութէ ը̃ դաստիարակութբ̃ հօ-
· րաքեռ իւրոյ բրիէնեայ: Զի սա ինքն (Թովմայիս)
· ոչ միայն 'ի նահատակիլ կուսին առաջիկայ գտա-
· ծական տարաշու, այլև 'ի նմին իսկ 'ի լուսմաքո-
· սէ դատաւորէ նր̃, որ մարդասիրագոյն գտաւ քան
· զիւր հօրաքեռն և զընկերն սեղենոս, և սպա

Է · միայ.

միայնակեաց խուց եղև, անվրէպ տեղեկացաւ զամ· և որ ինչ միանգամ պատուէ պաշտաման ընծայեցաւ նմ, և որ ինչ անցք անցին ընդ նշխարս նր, ամ ստու-գութբ կարէր և պարտ իսկ էր գիտել, կեցեալ յետ վախճանի վկայուհւոյն ամս տասն, կամ և ևս ա-ւելի||:

Նոյն վկայաբանութի է, զոր յանուն մետափրաստեսի յառաջ բերեն սուրիոս և լիպոմանոս ընդ լատինական հին թարգմանութե: Քաղուած նոյն վկայաբանութե են և գրեալքն 'ի յայսմաւուրս մր ազգաց· վն չիք ինչ խնդիր 'ի վր իրացս, բաց 'ի թեթև տարբերութեց օրինակագրաց· յորոց զկարևոր կարծեցեալսն յիշատա-կեսցուք:

(3) Բանզի չորոշէ վկայագիրն, թէ ո՞ւր էր յայնժամ դիոկղետիանոս, 'ի հռովմ, եթէ 'ի նիկոմիդիա, հա-ւանական համարի բաբեպրոք լինել 'ի նիկոմիդիա՝ ե-թէ զկայսրն, և եթէ զեպարքոսն անթիմոս· պատ-ճառք կմ պատճառաբանութիք յառաջ բերեալք 'ի նմա-նէ չեն այնչափ զօրաւոր· բայց և ո՛չ իսկ մեզ հակա-ռակ: Թո՛ղ զի ոչ մեք համարիմք զժամանակ կատար-ման փեբրոնեայ լինել յամի տն իբր 305, նոյնպէս և նա կամի դնել 'ի 304, կմ 305: միայն զշինութի տա-ճարին փեբրոնեայ՝ որ մեզ երևի լինել յամի 311, նա ձգէ յամն 317· որ չէ ինչ:

(3) Ծառընտիրն մեր միշտ դրէ սիղոնիանոս, կմ սե-ղուիանոս, ուր յունարէնն է Σελίνου· որպէս և 'ի Հ· գրի սելինոս կամ սեղինոս· և մեք զայս ընտրե-ցաք, զի որոշեսցի 'ի սովորական անուանէս սիղոնիա-նոս: Եւ որպէս ինձ թուի, գս սովորութի է 'ի մեզ զյուստինոսն յուստիանոս ասել, զլիկինիոսն լիկիա-նոս, զգաբինիոսն գաբիանոս ևն, ընդ այսմ զսեղինոսն եդեալ է թարգմանն սեղիանոս· յորմէ և գրիչք այլա-փոխեալ են 'ի սիղոնիանոս: Ոչ և փոխանակ յունա-կանիս Προσφόρα, պռոսփորայ, գրել էր 'ի Ծ· մերթ պորփրայ, մերթ տրոփոնիա· որ է սխալ, Դարձեալ ընտրեցաք դնել ընդ Հ· պռիմոս կմ պրիմոս, որ է ա-նուն հռովմայեցի՝ հնչեցեալ Πρῖμος, որ թարգմանի առաջին· որպս և սեկունդոսն՝ երկրորդ, տերտիոսն՝ երրորդ· ևն· այլ քզի հայցական հոլովս լինի 'ի յոյնն՝ բռիմոն, որպէս և 'ի լտ· բռիմում, Ծ· ընդ նմին կոչէ միշտ և յուղղականն՝ պռիմոն· գս և անուն կղզւոյ պատ-մոս՝ գտանի 'ի մեզ նոյնօրինակ գրեալ երբեմն պատ-մոն·

մին. և այլ այսպիսիք:

Ըստ այսմ ձևի և զայլ անուանց տարբերութիւն 'ի կար-գի պատմութեան. զի ուր շփոթի 'ի Ճ. անուանս արա-կան պղատոն՝ ընդ իգականին պղատոնիս, պղատոնի-դայ, մեք որոշեցաք ըստ յունականին: և որ պէսպէս գրի 'ի Ճ. բրիտնէ, բրիտոնայ, բրիտոնիա, բրիտոննեայ, և բրոնիա, որպէս և 'ի Հ. բրենի, բրեննեայ, մեք ըն-տրեցաք գնել միշտ բրիտնա. որ 'ի յն. գրի վրիտնէ կամ պրիւյէնա: Իսկ երիա՝ անխտիր մարթի գրել ըստ Հ. հերիա. ով և Թումայիս՝ գրի նաև Թովմայիս. որ է նոյն:

(4) Անուն քաղաքին մծբնայ պէսպէս գրի, զի 'ի Ճ. գնի՝ 'ի քաղաքն սարայ ( զի 'ի քաղաքն նասրայ ). յն. 'ի սիբայ քաղաք, կամ 'ի սիբապօլիս. լտ. հին Թարգ. 'ի քաղաքն կոչեցեալ ուսիբայ. բաբեպրոք, սիբապօլիս կամ նեսիբի. զոր և իրաւամբք վարկանի լինել մծբին. զի բանն է զերևելի քաղաքէ միջագետաց. զնոյն հաստատէ և Հ. յասելն 'ի քաղաքէն նեսեբի, որ է 'ի մէջ հռոմոց և պարսից. և յայտնի ևս գրի 'ի վկայագիրս լինչ յունաց * 'ի քաղաքն կոչեցեալ նեսիբի, որ ասի անտիոք միւգդոնիոյ||. արդ յայտ է թէ այսպիսի անուամբք կոչէին այլք զերևելի քաղաք միջագետաց, զոր մեք մծբին անուանեմք:

(5) Ըստ Ճ. ուր գնին փեբրոնեայ ամք [illegible], ուղղագրելի են յոյն և լատին օրինակք. զի 'ի լատին ընթերցուածոյ յովհաննու Թարգմանչի 'ի բաց անկեալ է ամբողջ թիւն. և 'ի յոյնն բաբեպրոք ընթերցեալ ր՛. որ է Ճ. մակաբերութիւ փոխեալ է 'ի ռ՛. զի ծՃ. նոյնպէս և 'ի լատին Թարգմանութեան իսր անցուցեալ: Բայց չէ պարտ յաւելուած առնել, այլ զձև տառին զհամանման ուղղագրել. զի պարտ է ընթեռնուլ x՛. որ է Ի: Զայս հաստատէ և յաջորդ բան պատմութեն, ուր ասի փեբրոնիա 'ի հասակի Ի ամաց մտեալ 'ի վանս. և կացեալ անդ Ը ձեռամբ բրիտնայ ամս ԺԸ. ( Ը յն. կամ Թ Ճ. ԺԹ ). որոց գումարն է Լ. որում ոչ ուշ եդեալ բաբեպրոքայ՝ կամեցաւ ընթեռնուլ ասա ԺԸ ևեթ:

(6) Որ 'ի Ճ. է զի Բոդրոն, և է զի Բոդրոնոս գրի, 'ի յոյնն երբեմն գնի Օդոմիքօն, կամ Օդոմիքօն ձիգրոն. երբեմն Հմիրոս կամ պոմդոսս, և երբեմն Հմիրոս կամ պոմդոսս. որ են անուանք նստարանաց և հանգստարանաց, մանաւանդ տակիձանաւոր կամ դարաձև յօրինելոց. իսկ աստանօր բանն է զմահճակալէ անկողնոյ:

(7) Բարւոք երևի ասել բարեպաշտք վասն ընթերցուածոյ
գրոց 'ի Փեբրոնեայ և յայլոց . * Երևի 'ի յաջորդ բա֊
,, նից, թէ ոչ պարզ ընթերցանութիւն էր այս, որ գրե֊
,, թէ զօրն ողջոյն ունէր ընդ յառաջագոյն գրելոյն, այլ
,, կից ընդ մեկնաբանութեան . զի և մինչև ցայսօր 'ի դպրոցս
,, գիրք ընթեռնուլ ասեն, և ընթերցօղք կամ վերծա֊
,, նօղք կոչին, որք կարդան և մեկնեն 'ի լսելիս աշա֊
,, կերտաց զբանս վարդապետին վճռոց կամ սրբոյն Թովմայի և կամ
,, Սկոտեայ ||: Այս ըստ լատին ոճոյ . առ որս դասա֊
տուութիւն կամ դասատուութիւն' ընթերցուած կոչի . բայց
քանզի և վերծանութիւն Փեբրոնեայ կոչի միանգամայն
և վկայութիւն, առաջին և պարզ իմացուածն երևի
այս, թէ զգրոց լեզուն յասորիկ լեզուս պարզաբանէր .
որպէս և ցայժմ է սովորութիւն' մանաւանդ առ կուսանս
և աղջկունս արևելեայց . և որչափ ոք յայսմ իցէ յառա֊
ջադէմ, այնչափ է քաջ վկայուհի 'ի մէջ օրիորդաց .
ապա թէ ոչ' մեկնիչ լինել մնաց գրոց ոչ է տուեալ
կանանց ազգի, եթէ ոչ' գուցէ նմանեացն Փեբրոնեայ :
(8) 'Ի յունականէն լցուցաք զայս հատուած բանի վասն
երից վկայուհեաց յիշատակելոց 'ի Բրիոնեայ, որ 'ի
բաց անկեալ է յօրինակէ Ճառընտրին : Կայ 'ի Հ . բայց
վրիպակ թարգմանութեամբ յարականն այսպէս . * Յիշե֊
,, ցուցանէին նմա զերիս վկայսն, որ յաւուրսն յայնոսիկ
,, մարտիրոսացան . զերիոս' զորոյ զգլուխն հատին,
,, և զեղբայրն իւր զերնինդոս, որ հրով այրեցաւ . և
,, զտրոպիէ փոքր պատանեակն, որ լծաւ 'ի մօրէն'
,, թէ որդեակ մի փախչել . և զայն ինքնին կապեաց
,, զձեռն իւր յետս . և այնպէս խոցեցին . և ապա հա֊
,, տին զգլուխ զայսին ||: Զնոյն վրիպակ թարգմանութեան
տեսանեմք և 'ի վկայագիրս ինչ յունաց, թերևս 'ի հո֊
մաձայնութէ առօրեայն յառաջ եկեալ : Այլ զարմանա֊
լին այն է, զի ոմանք 'ի լատին վկայագրաց զերիս զայն
կուսանս յօրինակ բերեալս 'ի խրատ Փեբրոնեայ' ան֊
ցուցեալ են 'ի կարգս յիշատակաց ընդ Փեբրոնեայ . զնոյն
առնէ և բարեպաշտք, թէպէտև խոստովան լինելով' թէ
ոչ էին ընկերք նորա, այլ թերևս բազմօք յառաջ նախա֊
տակեալք . զի որոյ և ոմանք ուրոյն կատարեն զյիշա֊
տակ նոցա : Բայց յայտ է թէ կան և անբաւ վկայք և այլ
ևս սուրբք արտաքոյ յիշատակելոցն չափով :
(9) Գեղեցիկ օրինակ հաստատութեան հին վկայաբանու֊
թեանց են այսպիսի յիշատակութիւնք սրբոց առաջնոց 'ի վարս
յետնոց . վասն նպաստ մեծ է մեզ խոստովան լինելն և

բաբեալորդքոյ յայսմ վայրի այսպէս. * Միոյն Թեկղի տօ-
,, նախմբութեն լինի (ասէ) 'ի իզ. սեպտեմբերի. յորոյ
,, 'ի վարս 'ի գրեալն 'ի բասիլիոսէ սելեւկիացւոյ, ո՛րպ
,, և 'ի յօրինեալն 'ի մետափրաստեսէ, վերծանի այս
,, բան. և յառաջինկայ վկայաբանութե՛ սատի այսչափ
,, հնագունէ գեղեցիկ հաստատի||:

(10) Որպէս 'ի ժամագիրսն. նոյնպէս և 'ի Հ. սխալ մեկնութի է եդեալ, ո՛րպ թէ Թումայիս և երիս զգե-ցեալ իցեն առն զգեստ. ուր վկայաբանն զգեստ Ծա-կան ասելով զկանանց՝ զկանացի զգեստ իմանայ. և այն իսկ առաւել 'ի դէպ գայր առ դիւրագոյն մատ-չել 'ի տեսարանն. Թո՛ղ զի և երիս իբրև տիկին երևե-լի համարձակեցաւ յանդիմանել զանողորմ բռնաւորն:

(11) Ուղղագոյն ևս երևի այս ընթերցուած Ծ. քան զեդեալն 'ի յունականն. * զի ո՛չ գոյ իմ կին, և ո՛չ որդիք||:

(12) 'Ի Ծ. ո՛չ ուղիղ թուի գրեալ. * և ո՛չ ես միայն, այլև Թովմայիս սնուցիչ քո||. ուր մեք ը յունականին եդաք 'ի բացառական հոլով: Բայց ուր երևին Ծ. և յոյնն միօրինակ խօսել զՋրոյ ցանելոյ յերեսս փեբրո-նեայ, Հ. կամի իմանալ զբանն 'ի վր երիայ, այսպէս.
* Իսկ տեսեալ հերիայ՝ որ ը նմայն էր, նուաղեցաւ,
,, և անկաւ յերկիր. և կոյսն փեբրոնիա աղաչեաց ըզ-
,, դահիճսն. զի ցանեսցեն ջուր յերեսս հերիայ||: Գո-վելի իմաստ. բայց կարօտ քննութե՛:

(13) Յունական ձայնս ὑπασπιστὴς ստուգաբանի գոր-ծակից, պաշտօնեայ. ևն: Վն որոյ և յընթացս դասնի թարգմանեալ 'ի մեզ նաև դահիճ. այսպէս իմանայ և աստ բաբեալորդք. վն թարգմանէ 'ի լտ. minister. այլ քանզի Ծ. պահեալ էր յայսմ վայրի զբնիկ հնչումն հիպասպիստէս իբրև յատուկ անուն բժշկին, մեք ևս նոյնպէս թողաք. և միայն ծանուցանել շատ համարե-ցաք: Միաբանին յն. և Ծ. 'ի թիւ ժէ ատամանց. իսկ 'ի Հ. գրի. * կորզեցին 'ի բերանոյն է ատամն||, կմ է. փոխանակ գրելոյ ժէ:

(14) Զոր մեք զօրութե՛ իմանամք, ներգործութե՛ պար-զաբանէ ժամագիրքն, թէ սաղմոսէր 'ի դասի անդ ը քորսն: Մեկն ևս. Հ. * և յայնմ օրէ՝ որ նահատա-
,, կեցաւ սրբուհին, յա՛մ տարի 'ի յաւուր տօնին իւ-
,, րում 'ի գիշերաժամուն երևի փեբրոնիա կանգնեալ
,, ը նն ը այլ կուսան կրօնաւորսն, և սաղմոսէր ը նն.
,, և յետ երրորդ կարգի պաշտամանն և գ կանոնին
,, ան.

,, անյայտ լինէր ||: Ընդմանօրինակ տեսիլ հրաշալի գտա֊
նես և 'ի վարս ոմանց ոմանց 'ի սրբ միանձանց և 'ի
միանձնուհեաց յշլնի դարս :

(15) Միաբանի ընդ մեզ և բաբեպրոք, թէ սա ինքն
եպս քաղաքին էր սրբն յակոբ մծբնայ հայրապետ. և
'ի վր բերէ. Սա ինքն է՝ ասէ * Սրբն յակոբ արձանա֊
,, գրեալ 'ի վկայաբրն հռովմէական 'ի յուլիսի. 15.
,, խոստովանող 'ի հալածանս գալերիոսի մաքսիմիանո֊
,, սի մինչև ցամն 311. յորում ժամանակի խօթացեալ
,, բռնաւորին, և խրատեալ՝ թէ այն հիւանդութի եհաս
,, նմա վս չարեացն, զոր անցոյց ք քրիստոնեայս, հրա֊
,, մայեաց դադարեցուցանել զհալածանսն՝ առեալ
,, պատուէր հրովարտակաւ. զորմէ տես առ լակտան֊
,, տիոսի 'ի գիրս յաղագս մահու հալածչաց : Եւ լի֊
,, րև բացան բանդք վաղվաղակի յամ տեղիս, արձա֊
,, կեցաւ ք այլս և յակոբ. ուստի և կարօղ եղև հիմն
,, արկանել եկեղեցւոյս այսմիկ, և առնել զնաւակա֊
,, տիս նր զկնի վեց ամաց՝ յամի 317. և եկաց այլ ևս
,, ոչ միայն մինչև ցժողովն նիկիոյ, այլև ցժողովն ան֊
,, տիոքայ. որում, որպ և միւսումն, եղև առաջնիկայ,
,, յամի 341 ||: Եւ վս մերձակայ եպսաց ասէ. * Խմն
,, զեպսն ամդայ, հռեսինայ, կարթարայ. և թէ այլ
,, ևս էին յայնժամ 'ի միջագետս եպսունք՝ այժմ մեզ
անծանօթք ||:

Բայց վս շինելոյ սրբյն յակոբայ զեկեղեցի՝ խորհրդակ֊
ցութբ և սրբյն մարութեի ծգնաւորի, ընթեռնումք և
'ի վարս սրբյն մելետայ եպսի. զոր այսպէս յառաջ բե֊
րէ տպագրօղն գործոց սրբյն յակոբայ. հյ. և լտ. 'ի
յառաջբ. երես. 24. * Իսկ երանելին մելէս ողջոյն հրա֊
,, ժարական տուեալ միայնակեցին՝ գայ 'ի մծբին քա֊
,, ղաք և գտանէ զսրբն յակոբ զբաղեալ 'ի շինել զեկե֊
,, ղեցի. ք որոյ գովելի մեծանձնութի, և ք ձեռնար֊
,, կեալ շինուածոյն քարձակութի և մեծութի սքան֊
,, չացեալ, զտեղի կալաւ անդ զժմկ մի: Եւ յորժամ
,, էջ 'ի հագիաբ, յղեաց 'ի պարգև առ սրբն յակոբ ոչ
,, սակաւ մետաքս՝ 'ի նպաստ ծախուց տանն ||: Տես
և 'ի վարս սրբյն յակոբայ :

(16) Ծառընտիրն մեր յայսմ վայրի աւարտէ զպատմու֊
թին բանիւքս այսոքիւք. * 'Ի նմին ժամու կոյրք բա֊
,, նային, կաղք գնային, և բազում ախտաժէտք բժշ֊
,, կէին, փառաւորելով զամենաւբ զերրորդութին այժմ
,, և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ||: Զմնա֊

ցեալ կարեւոր յիշատակարանն յաւելումք 'ի յունականէ․
զոր հաստատէ և հին Թարգմանն լատին։

(17) 'Ի ժամագիրս յունաց բիւզանդացւոց ասի, թէ
յիշատակ սրբուհւոյն փեբրոնեայ կատարի 'ի վկայարա-
նի յովհաննու մկրտչի՝ 'ի տեղին օքսէա կոչեցեալ․ և
ցուցանի՝ թէ կային անդ և նշխարք ինչ կուսին․ բայց
քանզի չորեքտասան մատուռնք կամ վկայարանք կային
սրբոյ մկրտչին 'ի կոստանդնուպօլիս և յարուարձանս նր̅,
ոչ է մարթ գիտել՝ թէ որ 'ի նոցանէ իցէ տեղիս այս։
Մծբին քաղաք՝ որ յետ մեկնելոյ անտի Թգ̅րաց հայոց․
անկեալ էր 'ի ձեռս հռովմայեցւոց, զկնի անկանելոյ
յուլիանոսի 'ի պարսս՝ 'ի պատճառս հաշտուե̅ եղելոյ ը̅
նն̅ առ յովիանոսիւ̃, մնաց 'ի ձեռս պարսից 'ի չրր̅դ դա-
րէ և անդր․ և յայնմ հետէ՝ երբեք, թէ քրիստոնեայք
բերին անտի 'ի մասն բաժնի յունաց և յԾն̅ հռովմայեց-
ւոց ը̅ այլ նշխարս սր̅ց և զնշխարս սր̅յն փեբրոնեայ։
Եւ ը̅ այսմ ասի, թէ 'ի վաղ ժամանակաց բերեալ ե-
ղև մարմին սր̅յն փեբրոնեայ, կմ̃ բազուկն, կամ ձեռն
նր̅ դաստակաւ, եթէ 'ի միջագետաց, և եթէ 'ի կոս-
տանդինուպօլսոյ՝ 'ի տուան քաղաք կաղաբրիոյ յապու-
լիա իտալիոյ, ուր մինչև ցայժմ տուանացիք պաշտպան
քաղաքի իւրեանց ճանաչեն զսրբուհին փեբրոնիա զմեծ
վկայուհին։

Զայսմանէ զայս ինչ տեղեկութիւն առեալ է բոլլան-
դեանց բանագէտ ոմն սեղբեստրոս աւոսսա․ * 'Ի մէջ
,, այլոց պաշտպանաց քաղաքին տուանացւոց է սր̅ն փե-
,, բրոնիա կոյս և վկայուհի․ զորոյ զտօնախմբուե̅ կա-
,, տարէ քաղաքն այն ողջոյն հանդերձ վիճակաւ իւրով
,, 'ի ժե̅ յունիսի՝ կրկին կոչեցեալ ծիսիւ̃ և ութօրէ-
,, իւք․ ոչ̃ թէ յայնմ իսկ աւուր բերեալ իցէ անդր
,, մարմինն (որ է օր կատարման սր̅յն, կամ նաւակա-
,, տեաց եկեղեցւոյն մծբնայ)։ Այլ քանզի 'ի կարի
,, վաղ ժմկաց լեալ է այդ, չեղև հնար յարքեպ̃սական
,, եկեղեցւոջ այդր քաղաքի գտանել զտեղին, ուր սր̅
,, գանձն այն ծածկեալ կայցէ։ Համբաւն այս է, թէ
,, 'ի պատճառս պատերազմաց թաքուցաւ․ և արտա-
,, քոյ տապանին պահեցաւ միայն մի բազուկն սրբուհ-
,, ւոյն՝ յարծաթի տուփ, որ և պահի յաւանդատան։
,, Արժանի գիտութե̅ այն է, զի պատուական նշխարս
,, այս մինչև ցարդ տեսանի իւրով մորթով պատեալ՝
,, հանդերձ եղնգամբք 'ի ծայրս մատանց, թէպէտև
,, առ փոքր մի խանձողեալ 'ի հրոյ․ ըստ որում և 'ի

,, վարս

,, վարս նր̅ գրեալ է՝ թէ խանձողեցին զմարմին նր̅ ։
,, Կայ մատուռն յանուն նր̅ հանդերձ սարկաւագանո_
,, ցիւ 'ի հայրենի ժառանգութե̅ փիլիգերեան տան,
,, որ է տուն ազնուական առ նէապօլսեցիս և տռանա_
,, ցիս ։ Իսկ թէ որպէս եկեալ լցէ այսր գանձն այն
,, սր̅, 'ի հին աւանդութե̅ այսպէս ասի, թէ 'ի խոր_
,, տակել նաւուս իմիք մօտ 'ի պուդուլս (որ է լճ̅ ընդ
,, մէջ տռանայ և բարլետայ) երկու մղոնաւ հեռի 'ի
,, քաղաքէ, գտաւ 'ի ծովեզրն տապանակ մի 'ի մայր
,, փայտէ, և առ նմին պատկեր փրկչին. և 'ի տապա_
,, նակի անդ գտաւ սր̅ մարմինն (կուսին), ճառա_
,, գայթս արձակելով բացուստ 'ի բաց ։ Եւ իբրև յայտ_
,, նեցաւ բանն 'ի քաղաքին, շարժեցաւ արքեպ̅ն իւրն_
,, գրել ստուգութե̅ զպատճառս իրացն. և 'ի վր̅ հա_
,, սեալ անձամբ անձին՝ հանդերձ ուխտիւն և ժողո_
,, վրդեամբ, ետես զձի̅ այնպէս՝ ոչ̅ պատմեցաւ նմ̅.
,, եգիտ և տախտակ կապարեայ, յորում գրեալ էր,
,, Փեբրոնեայ կուսի || ։

Արդ թէպէտև կայ ասէ բաբեպրոք և այլ կոյս փե_
բրոնիա անուն, դուստր հերակլի կայսեր, գուցէ և
այլք ոմանք, բայց * զերկբայութիւն ունին բառնալ
յայտնի նշանակք խանձողման || . Թող զի յորժամ պար_
զաբ̅ս փեբրոնիա կոյս ասի, առաջինն և երևելին նշա_
նակի ։ Յաւելու բաբեպրոք . * բայց ոչ̅ կարծեմ, 'ի
,, ափի անդ, կմ̅ ոչ̅ գրի նուճազական անուամբ ափիկ
,, կմ̅ արկղիկ, ոչ այլ ինչ գոյր, բայց միայն բազուկն ։
,, Եկեղեցին տռանացւոց՝ յետ վանեալ լինելոյ սարա_
,, կինոսաց՝ սկսաւ ունել զարքեպ̅ս 'ի ժա̅ դար ք̅ի,
,, և վարիլ լատին ծիսիւք (զկնի յունացն նախկին բնակ_
,, չաց) . և ը̅ այնմ յօրինեցաւ անդ առանձին պաշտօն
,, ժամերգութե̅՝ առեալ 'ի վարուց անտի, զոր թարգ_
,, մանեացն յովհաննէս սարկաւագ . . . . Յաբուլիոյ եր_
,, կի անցել պաշտօն սր̅յն փեբրոնեայ և յայլ բազում
,, կուսաստանս թդ̅րութեն նէապօլսոյ . . . և 'ի սիկի_
,, լիա առաւելապէս պաշտի ասեն || ։ Յիշին և նշխարք
ինչ յանուն սր̅յն փեբրոնեայ 'ի յիշատակարանս բոնո_
նիոյ . երևելի էր և 'ի գաղղիա յիշատակ կուսիս 'ի
վանս երբալդեան աղբեր . և առակ իմն էր ասելն . ե_
թէ կայցէ ոք գովելի առաւել ը̅ մաքրութե̅ և զգու_
շութե̅ և փութոյ, փեբրոնիա մի միայն ճանաչի ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սր̃յն Մարիանեայ կուսի, որ և Մարինէ, կմ՛ մարգարիտա։ (1)

Հ. յուլիս. 18: Յ. յուլ. 17: Լ. յուլ. 20: Ճառընտ. Ա. 23Է = 22. և Դ. յԼԷ = յԽԷ: Ոսկեփորիկ պէտպէտ: Բուլլանդեանն պինեոս. 'ի ե. հատ. յուլ. էջ. 24 = 45: Մետափր. առ սուր. եւ:

ՄԵԾ ՎԿԱՅՈՒՀԻՆ մարիանէ՝ կոյս էր 'ի քաղաքէն անտիոքայ պիսիդեայ, դուստր միամօր հեթանոս ծնողաց մեծատանց. և էր հայր նր̃ քուրմ կռոց՝ եդեսիոս անուն, 'ի ժամանակս դեկոսի կայսեր, կմ՛ ը̃ այլոց դիոկղետիանոսի: Եւ մինչդեռ մանուկ էր մարիանէ, մ̃նաց որբ 'ի մօրէ. և ետ զնա հայր իւր 'ի սնունդ և յուսումն 'ի քաղաքի անդ անտիոքայ. և ը̃ սնտեսուե̃նն ո̃յ դաստիարակ եղև մանկանն կին մի 'ի քրիստոնէից անտի: Եւ իբրև աճեաց փոքր մի, շինեաց նմա եդեսիոս տեղի զբօսալի հեռի 'ի քաղաքէն ժդ̃, կամ ժե̃ մղոնաւ. և արգել անդ զկոյսն կալ 'ի պաշտօն կռոց: Իսկ մարիանէ ը̃ սննդեանն՝ զոր եառ 'ի հաւատացեալ կնոջէ, յորժամ իմաստնացաւ, ծա-

ծանեաւ զսուտութ͞ի դիցն հեթանոսաց. և
յաւուր միում տեսեալ զլոյս արեգական ը͞ն
պատուհան ծագեալ, լուսաւորեցաւ և 'ի
ներքուստ, և ասէ ցաղջկունս ցհասակակիցս
իւր և ցաղախինս. նա՛ է արարիչ երկնի և
երկրի՝ որ գոյացուցեալ է զարեգակն գեղե-
ցիկ. և ես զարարիչն իմ խոստովանիմ և եր-
կիր պագանեմ նմա, և զխունկս իմ նմա մա-
տուցանեմ, և ո՛չ պաշտեմ զարեգակն և ըզ-
հայրենի ա͞ծս ձեռագործս մարդկան :

Զայն իբրև գիտաց հայր ն͞ր, ուրացաւ զնա
լինել դուստր իւր, և եթող ելիք 'ի խնամոց
իւրոց. և կոյսն յարեցաւ իսպառ 'ի քրիստո-
նեայ դայեակ իւր. և արածէր զոչխարակս
նորա արտաքոյ քաղաքին. մինչև մոռանալ
զա͞մ փառաւորութ͞ի տան իւրոյ, և որ քան
զոր կրթեալ զանձն յա͞ծպաշտութ͞ի՝ պատ-
րաստել զանձն հարսն երկնաւոր փեսային.
բայց չև էր ընկալեալ զմկրտութ͞ի, զի թե-
րևս զանգիտէր դայեակն 'ի հօրէ ն͞ր. զի մի՛
չարիս ինչ անցուսցէ ը͞ն նա :

Իբրև եղև Մարիանէ ամաց չորեքտասանից,
լուեալ զչարչարանս վկայիցն ք͞րի՝ իղձ լի-
նէր չարչարակից լինել ն͞ց. և արտասուէր
յոգւոց ելանելով, և ասելով. ո՜հ եթէ տան-
ջէին և զիս վ͞ս ք͞րի, ո͞պ զի հոգի իմ փրկեա-
ցի 'ի յաւիտենից տանջանացն : Եւ զայս
ստէպ խնդրէր յա͞յ աղօթիւք. և հայեցեալ
'ի տկարութ͞ի բնութե իւրոյ՝ ասէր առ փըր-
կիչն. Տ͞ր տ͞ր դու գիտես զմարդկային բը-
նութ͞իս. տո՛ւր ինձ զօրութ͞ի առաջի թշնա-
մեաց

մեաց խաչին քո, զի յաղթեցից քոյով յաղ-
թութեամբ. և քեզ մատուցից փառս ընդ հօր
և սրբ հոգւոյն:

Յաւուրսն յայնոսիկ առաքեցաւ 'ի կայսերէ
բազում զօրականօք եպարքոս ոմն ոլիմբրիոս
կամ լիբիանոս անուն՝ յանտիոք պիսիդեայ,
հրամանաւ առեալ տանջել զքրիստոնեայս՝ զորս
միանգամ գտանիցէ, և արեամբ նց ներկել
զպարիսպ քաղաքին: Արդ հասեալ եպար-
քոսին անդր՝ եհար զվրան իւր յեզր քաղա-
քին. և տեսեալ զմարիանէ ընդ այլ աղջկունս
հովիւս, զի դառնայր 'ի տուն դայեկին իւ-
րոյ, հարաւ 'ի վայելուչ գեղ պատկերի նր,
և ասէ ցծառայսն. երթայք ածէք զաղջիկն
զայն. եթէ ազատ է, կին առնեմ զնա. ա-
պա եթէ ծառայ, գնոց գնեցից յաղախնութի:
Իբրև կալան զկոյսն, սկսաւ նա կարդալ
յերկինս 'ի վեր, և ասել. տր ած իմ ողոր-
մեա ինձ, և մի կորուսաներ զաղախին քո.
մի մատներ զիս 'ի կամս անօրինաց, այլ պա-
հեա զմարմին իմ անշաղախ. զօրացո զիս
հոգւովդ սրբվ, և հաստատուն պահեա զյոյս
իմ առ քեզ. զի մի թիւրեսցի միտք իմ 'ի
բնութի չարի, և մի խոտորեսցի սիրտ իմ 'ի
խոստովանութե քումմե 'ի կամս թշնամեացն
ճշմարտութե: Տէր իմ յս քս առաքեա 'ի
բարձանց զօգնականութի քո, և զօրացո զիս.
և տուր ինձ զօրութի և իմաստութի՝ տալ պա-
տասխանի բռնաւորին աներկիւղ համարձա-
կութբ ընդդէմ հնարից սատանայի. զի մատ-
նեցայ 'ի ձեռս անօրինաց որպս զոչխար 'ի մէջ
գայ-

դայլոց, և որպէս թռչուն 'ի մէջ որսողաց. այլ դու Տէր իմ մի՛ թողուր զիս յօգնականութենէ քումմէ. զի դու ես յոյս և ապաւէն իմ ։ Իբրև տեսին սպասաւորքն՝ որք տանէին զնա, եթէ զՔրիստոս կարդայ իւր յօգնութիւն, պատմեցին զայս՝ որոց զեպարքոսին կային. և նոքա ասեն ցիշխանն. ո՛չ է արժան պահել զաղջիկս զայս, զի ո՛չ է յազգէ մերմէ, այլ յուսացեալ է իբրև 'ի կենդանի 'ի Յիսուս Քրիստոս, զոր հրէայքն խաչեցին ։ Իբրև լուաւ եպարքոսն, յոյժ տրտմեցաւ. հրամայեաց ածել առաջի իւր, և ասէ. յորմէ՞ ազգէ ես դու, և զի՞նչ անուն է քո ։ Կոյսն ասէ անվեհեր, առաջին անուն իմ քրիստոնեայ. իսկ 'ի մարդկանէ Մարինէ անուանիմ ։ Ասէ ցնա բռնաւորն. զո՞ր Աստուած պաշտես ։ Սուրբն ասէ. զարարիչն երկնի և երկրի զՀայր, զկենարարն բոլորից զորդին միածին, և զՀոգին Սուրբ՝ որ յիս բնակեալ է ։ Բռնաւորն ասէ. դու յուսա՞ս յանուն նազովրեցւոյն ։ Սուրբն ասէ. այո՛ ես յուսացեալ եմ 'ի նա, թէ արժանի արասցէ զիս փրկել յապականութենէ Տի և 'ի ձեռաց քոց ։

Յայնժամ հրաման ետ բռնաւորն պահել զնա. և ինքն եմուտ 'ի քաղաքն՝ զպաշտօն կռոցն կատարել. և զքրիստոնեայսն՝ զոր միանգամ զբռամբ ածէր, հրաման տայր զենուլ իբրու ոչխարս, և արեամբ նոցա օծանել զպարիսպ քաղաքին ։ Եւ յետ աւուրց նստեալ յատենի՝ ետ բերել զՄարինէ զառաջեաւ. և հայեցեալ ընդ գեղեցկութիւն կուսին՝

սին՝ ասէ ցնա . ողորմեա՛ մանկութեան քում, և խնայեա՛ 'ի գեղ պատկերի քո . զի լաւ է քեզ կեալ, և ցանկալի լինել ամենեցուն ։ Պատասխանի ետ կոյսն արիացեալ . գիտէ տ՟ր ա՟ծ իմ, զի ոչ կարես փոխել զբնութիւս իմ, և ոչ զյոյս իմ հատանել՝ որ առ տ՟ր ա՟ծ իմ . զի առաքեցաւ առ իս հոգին ս՟բ, և զօրացոյց զիս . և ես մատուցից զանձն իմ պատարագ թագաւորին յաւիտենից ։

Սպարքումն ասէ . բազում չարչարանօք տանջեմ զքեզ, և տամ ապականել զվայելչութիւն գեղոյ քո, թէ ոչ հնազանդիս ինձ . իսկ եթէ լսես ինձ, և դառնաս յա՟ծսն իմ, ոչ միայն ազատ լինիս յա՟մ տանջանաց՝ զոր ածելոց եմ 'ի վ՟ր քո, այլև թագուհի առնեմ զքեզ, և երանիս դու յամենեցունց ։ Ս՟բն ասէ . ես ոչ երկնչիմ 'ի տանջանաց քոց, զի յոյս իմ հաստատուն է 'ի ք՟ս . և ես յօժար կամաւ մատնեցից զանձն իմ 'ի չարչարանս . զի թէ մարմինս ոչ տանջի, հոգի իմ ոչ մտանէ 'ի հարսնարանն վերին առ թ՟գւորն երկնաւոր . որ ետ զանձն իւր 'ի մահ վ՟ն իմ, և ես պատրաստ եմ զկամս ն՟ր կատարել մինչև 'ի մահ, աներկիւղ յա՟մ փորձանաց . զի նա պարսպէ զա՟մ մարմինս իմ նշանաւ ս՟բ խաչին իւրով ։ Յայնժամ ցասուցեալ բռնաւորին՝ հրամայեաց մերկացուցանել զնա, և յորսայս արկանել, կամ կախել զհերացն, և անխնայ հարկանել երկաթի գաւազանաւ, մինչև ոսկերքն երևեցին ։ Իսկ նա առ ոչինչ համարէր զտանջանս, այլ համբարձեալ զաչս իւր

յեր-

յերկինս՝ ասէր ․ ՚ի քեզ Տէր յուսացայ , մի՛ ամաչեցից , և մի՛ կարօտ առնէր զիս ՚ի յուսոյ իմմէ ․ զի վ՛ն քո յանձն առնում զցաւս և զՀարուածս , զի քաղցրացիս և ողորմեսցիս ինձ ։ Եւ այնչափ տանջեցին զնըն , մինչև արիւնն իջեալ ընդ պատառուածս մարմնոյն Թանայր զվայրսն ։

Իսկ ոմն ՚ի խորՀրդակցաց բռնաւորին ասէ ․ ով Մարիանէ Հաւատա՛ յիմն , և գտցես պարգևս քան զա՛մ Հասակակիցսն քո ․ ողորմիմ ՚ի վերայ ծաղկաՀասակ մանկութեդ ․ աւա՛ղ խայտառակութեդ , զի մերկ տանջիս , և գեղ քո ապականեալ է ․ ո՞Հ որ կամիս զանձինդ կորուստ ։ Նոյնպէս և այլք յամբոխէն արք և կանայք աւաղէին զնա , և խրատէին Հաւանել կամաց եպարքոսին ։ Իսկ երանելին Մարիանէ սաստեաց նոցա , և ասէ ․ ով չար խորՀրդակիցք սատանայի՝ զի՞ բարբառիք զայդպիսի բանս ․ անմիտք ոչ իմանայք , զի մծ օգնական է իմ ․ զի Թէպէտև մարմին իմ մաՀկանացու տանջի , այլ Հոգի իմ ընդ իմաստուն կուսանսն դասակցի ․ Հաւատացի յա՛ծ կենդանի՝ որ կարօղ է փրկել զայնոսիկ՝ որ կարդան առ նա , և բանայ ն՞յ դուռն կենաց ․ վ՛յ ոչ Հաւանիմ ձեզ , և ոչ երկրպագանեմ ա͞ծոց ձերոց խլից և անզգայից ։ Եւ դու անօրէն դատաւոր գիտեա՛ , զի ոչ Հաւանիմ Հօրն քում սատանայի ․ զի Թէպէտև մարմին իմ տանջի , այլ զՀոգի իմ փրկէ ք՞ս ՚ի ձեռաց քոց ․ և դու օտարացեալդ յա՞յ մատնիս ՚ի խորս դժոխոց ։

Ապա

Ապա հրաման տայր բռնաւորն մատուցա-
նել զնա 'ի կախաղան քերանաց. և հանեալ
զնա 'ի փայտ՝ քերէին երկաթի քերչօք կամ
ժանևոր և ճանկաւոր երկաթեօք, կապեալ
առաստանօք զլանջացն՝ որպէս կախեալ 'ի
ստեանցն: Բայց առաքինի նահատակն յեր-
կինս նայեցեալ՝ կարդայր առ փրկիչն, և
ասէր. Քրիստոս յոյս իմ տո՛ւր ինձ կենդանութիւն,
և հաստատեա՛ զիս 'ի սրբութեան քում. զի
եկեսցեն աղօթք իմ առաջի քո յերկինս. և
առաքեա՛ զհոգիդ քո սուրբ յօգնականութիւն ինձ,
զի սուրբ պահեսցէ զկուսութիւն իմ. և մի՛ ասասցէ
թշնամին, թէ յաղթեցի նմա. և տո՛ւր հան-
գիստ ամենեցուն՝ որ յուսան 'ի քեզ: Իսկ
անողորմ դահիճքն այնպէս տանջէին զնա,
մինչև չժուժել տեսողաց. և ինքն իսկ դա-
տաւորն ծածկէր զերեսս իւր առ չկարելոյ
հայել 'ի նա. ապա ասէ ցնա. փոխանակ զի
անլուր եղեր ինձ, և ոչ ողորմեցար քեզ,
յայդ հասեր ողորմ տեսիլ. և արդ լո՛ւր ինձ
աղջի՛կ դու, և երկի՛րպագ աստուածոց իմոց. ապա
թէ ոչ՝ սրով մաշեմ զմարմին քո առաջի ամե-
նեցուն, որ տեսանեն զաղէտս քո: Ասէ
վկայուհին. ո՛վ վատ արանց, դու թէ մար-
մնոյ իմոյ խնամ տանիս, հոգի իմ ոչ ապրի.
զի թէ ոչ տանջեցայց, ոչ պսակեցայց:

Այնուհետև հրամայեաց բռնաւորն բառ-
նալ զտանջանսն, և տանել 'ի բանտ. և իբ-
րև տարան արգելլին զնա 'ի խաւարչտին տեղ-
ւոջ յեօթներորդ ժամու աւուրն, կնքեալ
կուսին զանձն իւր նշանաւ սուրբ խաչին՝ համ-

բարձ

թարձ զաչս իւր յերկինս , և ասէ ․ Ո՜ Տ՟՝ որ կամեցար առնել մեզ զիրաւունս առանց մեղանաց , և յերեսաց քոց սարսեն ա՟մ եղականքս ․ ո՜վ տ՟ր՝ անյուսից յոյս , և յուսացելոց օգնական , նայեաց առ իս և ողորմեա՛ ինձ , զի միամօր և աղքատ եմ ես ․ մի՛ թողուր զիս տ՟ր ա՟ծ իմ , այլ ցո՛յց ինձ զթշնամին իմ դէմ յանդիման , զի խօսեցայց ը՟ նմա ․ և դու տ՟ր դատաւոր կենդանեաց և մեռելոց դա՛տ արա ը՟ իս և ընդ սատանայ ․ զի վիրօք իմովք յոյժ վշտացեալ եմ ես ․ մի՛ բարկանար ինձ , զի զանձն իմ քեզ ընծայեցի ։

Իսկ մինչդեռ զայսոսիկ և առաւել քան զսոսին խօսէր նա ը՟ ա՟յ , յանկարծակի շարժեցաւ երկիր , և լե՟լ սատանայ 'ի կերպարանս վիշապի՝ ել յանկեանէ բանտին ․ և էին պատատեալ 'ի պարանոց վիշապին բազմութե՟ք օձից՝ 'ի նշանակ դիւաց արբանեկաց սատանայի ․ և յաչացն և 'ի բերանոյն կայծակունք հրոյ թափէին՝ 'ի ցոյց վնասակարութե՟ց չարին ․ և այնպէս ահագին տեսլեամբ և դառնահոտ շնչմամբ դիմեաց 'ի վ՟ր սրբուհւոյ կուսին մարիանեայ ։ Ընդ այն տեսիլ քստմնելի զահի հարաւ կոյսն ․ և առեալ փոքր փայտեայ խաչ՝ դիմեաց աղօթիւք առ ա՟ծ ։ Ապա 'ի բանալ վիշապին զբերանն՝ ո՛չ թէ կլանել զնա , խաչափայտն որ 'ի ձեռին իւրում էր՝ պատառեաց զորովայն վիշապին ․ և կոյսն մնաց անվնասելի 'ի թշնամւոյն ։ Յայնմ վայրի ծագեաց լոյս մեծ 'ի բանտին , և երեւեցաւ ս՟բ հոգին 'ի նմանութ՟ի աղաւնոյ ․ և

նրա

նստեալ 'ի պատուհան բանտին՝ ասէ․ քա֊
ջալերեա՛ց մա՛րխանէ, և դի՛ր զոտն քո 'ի վ՟ր
պարանոցի վիշապիդ․ զի խոստովան լինիցի
քեզ զա՟մ չարիս իւր ։

Յայնժամ զօրացեալ սրբուհւոյն 'ի ս՟բ հոգ֊
ւոյն՝ եդ զոտն իւր 'ի վ՟ր պարանոցի թշնամ֊
ւոյն, և ասէ․ ո՜չար և թշուառական՝ երդ֊
մնեցուցանեմ զքեզ 'ի զօրութի՟ ս՟բ հոգւոյն,
զի ասասցես, ո՞վ ես դու, և զի՞նչ գործք
քո ։ Եւ նա ասէ․ ես եմ դիւա՛ց գլխաւորն
բելիար․ և զի արար Ա՟ծ զմեզ 'ի հրեշտակ
լուսոյ, և բարձրագոյն փառօք մեծարեաց
զմեզ՝ անմահութ՟բ և անկարիք, և անձնիշ֊
խան ճոխութ՟բ 'ի կամս ապաստան արար
զմեզ ։ Իսկ իմ հպարտացեալ ը՟դէմ արար֊
չին՝ խորհեցայ արգելուլ զփառս ն՟ր, և ինձ
սեպհականել զայն․ և նա սաստեալ ընկեց
զիս 'ի բարձանց երկնից 'ի խորս անդնդոց․
և ամենեքեան՝ որք կամաց իմոց հաւանե՟լ
էին յերկնից զօրացն, ընդ իս անկան 'ի բար֊
ձանց, և դեւք անուանեցան 'ի մարդկանէ ։
Բայց յետ անկման մեր ստեղծ արարիչն ըզ֊
մարդն հող յերկրէ, և եդ զնա 'ի դրախտին
փափկութե․ և խոստացաւ ծննդօքն ադա֊
մայ և կնոջն եւայի լնուլ զտեղի անկելոցս
հրեշտակաց 'ի յերկնից․ և այն մեզ ծանր
թուեցաւ քան զանկանելն մեր 'ի փառաց
մերոց ։ Ա՟յ մոքաւեալ ը՟ ադամայ կնաւն
իւրով՝ հա՟նաք զնա յԱ՟յ աչացն, և զրկեցաք
յանմահական վայրացն․ խաբէութ՟բ մերով
մատնեցաք զնա մահու, և զհրաւիրե՟լն յան֊

Ր մա֊

մահականն լոյս՝ գրաւեցաք հոգւոյ ։ Նատու և զառաջին ծնունդ նր սպանանել, զեղբայրն՝ եղբօրն իւրոյ. և յայնմ օրէ ես քան զևս յորդորեցաք զմարդիկ 'ի չարիս գործել և զարիւն ը արիւն խառնել. մինչև բարկացաւ ած, և ջուրցն հեղեղաւ կորոյս զամ ։ Նաև յետ այնորիկ մոլորեցուցաք զմարդիկ 'ի կռոցն երկրպագութի. և յամ ժամանակի յամ չարիս ես եմ առաջնորդ, որ տամ սպանանել, պոռնկել, գողանալ, անիրաւել, չարախօսել, և զամ անօրէնութիս գործել. և ոչ գոյ չար՝ որ առանց իմ կամացս արդինանայ ։

Նաև իբրև պատմեաց սատանայ յակամայ կամս զամ չարիս իւր մի ը միոջէ, ապա ասէ ցկոյսն. ուր և յիշեսցի անունն քո Մարիանէ, անդ ոչ մերձեցայց. միայն թուլացո զոտն քո 'ի պարանոցէս, և արձակեա զիս, զի յոյժ տագնապեցայ ։ Նաև 'ի կնքել Մարիանեայ զերստին զնշան խաչին, պատառեցաւ երկիր, և անդնդասույզ կորեաւ չարն ։ Յայսմ ամի ականատես և ականջալուր ասի լինել ը պատուհան բանտին թեոտիմոս կմ դեմոս ոմն, որ եղև առաջին գրիչ վարուց Մարիանեայ կուսին. յորմէ առեալ ոմանց՝ կատակեցին 'ի վր պեսպես բանս տխմարականս և օտարս 'ի Ճշմարտութէ. ը որում ունիմք նշանակել 'ի ծանօթութիս. յայժմուս 'ի կարգ անդր պատմութե դարձցուք ։

Ի վաղիւ անդր եկեալ հանին զնա կոյսն 'ի բանտէն, և ածին առաջի բռնաւորին. որոյ

տեսեալ զնա ողջանդամ՝ զարմանայր, և միւսանգամ հրապուրէր զնա գալ 'ի պաշտօն կռոց, և լինել տիկնաց տիկին. բայց գտեալ զնա անփոփոխելի, հրամայեաց դարձեալ քերել, և ջահիւք այրել և խորովել զմարմին նր. այլ յաղօթել կուսին՝ կապեցան ձեռք դահճացն, որք տանջէին զնա։ Իսկ դատաւորն. լո՛ւր ինձ մա՛րիանէ, և երկի՛րպագ ածոց իմոց՝ որք խնայեն 'ի քեզ։ Սրբն ասէ. ո՛չ երկիրպագեից խլից և անխօսից, այլ միայն ա̃յ իմոյ ճշմարտի, որ պահեացն զիս և պահեսցէ. վ̃ս զի կնքեաց ա̃ծ զհոգի և զմարմին իմ որպէս զմարգարիտ 'ի պահեստի սքանչելի փառօք իւրովք։

Յայնժամ հրամայեաց բռնաւորն սան մի լնուլ ջրով, և ջեռուցանել հրով յոյժ. և կապել զոտս և զձեռս նր, և հեղձուցանել յեռանդն ջրոյն. և սպասաւորքն արարին՝ ո̃պ հրամայեաց ն̃ց։ Բայց 'ի դիմել կուսին աղօթիւք առ տ̃ր, զի ջուրն այն լցի ինքեան 'ի մկրտու̃թ, եղև շարժումն մեծ, և երևեցաւ յերկնից աղաւնի՝ ունելով պտուղ ձիթենւոյ 'ի բերանի իւրում. յայնժամ լուծան կապանք նր, և ել 'ի ջրոյն փառաւորելով զա̃ծ. և եկն ձայն՝ որ ասէր. Էկ մարիանէ, և հանգի՛ր յարքայութի̃ն ք̃սի. զի անապական և անթառամ պսակին արժանի եղեր. երանի՛ է քեզ՝ որ զկուսութի̃դ քո ամբողջ պահեցեր։ 'Ի տեսիլ ահագին նշանացս հաւատացին յա̃ծ բազմութի̃ք յոյժ յարանց և 'ի կանանց, ոգիք իբրև հազարք։

Ընդ

Ընդ որ սրտմտեալ եպարքոսին՝ հրաման ետ զօրաց իւրոց զամենեսին սրոյ ճարակ տալ . ը՟ նոսին և զք՟ն մարիանէ ետ տանել արտաքոյ քաղաքին և գլխատել ։ Իսկ 'ի ժամ կատարմանն խնդրեաց վկայուհին քս՟ի, զի ա՟մ որ միանգամ յիշէ զանուն ն՟ր յա՟մ նեղութիւնս հոգւոյ և մարմնոյ, և դիմէ առ տ՟ր հաւատով, հասցէ նմա օգնութի՟ 'ի բարձանց . և ա՟ծ երկնային բարբառով խոստացաւ լնուլ զփափաք ն՟ր առաւել քան զոր խնդրեացն ։ Իսկ այնպէս կատարեցաւ մեծայաղթ վկայն ք՟ի կոյսն մարիանէ բարի խոստովանութ՟բ 'ի ք՟ս, մկրտեալ արեամբ իւրով՝ հանդերձ բազմութ՟բ պսակելոցն ը՟ նմա ։ Իսկ մեծացաւ յոյժ անուն կուսին, և տարածեցաւ ընդ ա՟մ տիեզերս . և նշխարք ն՟ր սփռեցան մինչև յարևմուտս . և շինեցան բազում վկայարանք և տաճարք և վանորայք յանուն ն՟ր . և է երագահաս օգնական ամենեցուն՝ որք ապաւինին 'ի բարեխօսութի՟ ն՟ր ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք ։

(1) Անուն կուսիս՝ որ է՟ մեզ Մարիանէ, և է՟ յունաց Մարինէ, փոքր մի տարբերութ՟բ կոչի առ լատինս Մագարիտա . որում պէսպէս հաւանական պատճառս տայ պլինիոս բոլլանդեան, յօրինակ բերելով զզանազան անձինս՝ որք այլևայլ անուամբ կոչին 'ի զանազան տեղիս . ա՟յ ասէ՝ պորփիւր (փիլիսոփայն), որ թարգմանի ծիրանի, ընիկ անուամբ յասորւոց կոչիւր մաղքոս՝ որ է թագաւոր . արիստոտէլ զաշակերտ իւր զտիւրտամոս կոչեաց Թէոփրաստոս վ՟ն յատակախօսութեն . զմեղա-

գիրս՝ որ Թարգմանի համառօտ ծով, բրիտանացիք
կոչեն մօռկան, որ է ծովածին. զսոյն աւեքսիոս ասո-
րիք կոչեն ուիշիա կամ մարրիշիա. այսինքն իշխան, կամ տէր իշխան.
և զսոյն արտեմիս մարշալիթա. * Զի՞նչ զարմանք են
,, ապա (ասէ պլինիոս), եթէ նմանօրինակ կերպարանա-
,, փոխութեամբ անուան՝ մարինա յեղափոխեալ իցէ առ լա-
,, տինս 'ի մարգարիտս: Ո՛ արար զառաջինն, կամ երբ,
,, չգիտեմք... Կարծեօք իմն ունիմք ասել, թէ մարկա-
,, ռիտա անուանդ լատինացեալ՝ որ է առեալ 'ի յունական
,, ձայնէս մարգարիտս, եթէ մարգարիտ նշանակես-
,, ցէ, և եթէ այն պատճառական, միով կամ երկոքումբք
,, իսկ նշանակութեամբք մարթացաւ առիթ ընծայել լա-
,, տինացւոց՝ անցանելոյ 'ի յունական կոչմանէս մարինա
,, 'ի կոչել մարգարիտս. իբր զի կամ կամք եղեն նոցա
,, սովիմբ նշանակել զփոփոխումն և զպայծառութիւն կու-
,, սութեան. և կամ զի այսու օրինակաւ կամեցան պատ-
,, ուասիրել զսրբուհին իբրև մարգարիտ կուսից և
,, վկայից առասպէր, և որպէս կուսութեան՝ նոյնպէս և
,, մարտիրոսութեան փառաւորագոյն քան զայլս ||: Կա-
րէր համառօտ ևս ասել, թէ որպէս Մարինա լատիներէն
Թարգմանի ծովային, նոյնպէս և Մարգարիտա չէ հեռի
'ի նոյն նշանակութենէ՝ իբրև ծովածին մարգարիտ, կամ
գաղտակրայ, կամ կաթն ծովու: Մեծ ուրախութիւն լի-
նէր պլինիոսի, եթէ գիտէր՝ թէ 'ի Ճառընտիրս մեր նա-
խնիքն մեր կոյսն մարիամ է ասէ զանձնէ. * Կնքեաց Աստուած
,, զհոգի և զմարմին իմ որպէս զՄարգարիտ 'ի պահեստի
,, սքանչելի փառօք իւրովք ||:

Այլ թողեալ զթեթևս, եկեսցուք 'ի ծանունս. զի
վարք այսր մեծանուն և տիեզերածանօթ կուսի և վկայի
'ի սկզբանէ և այսր ոչ փոքր հակառակութիւն կրէ, ոչ
այնչափ վասն այլ բանից վկայութեան՝ յորս չիք երևելի տար-
բերութիւն յամենայն վկայագիրս, և ոչ օտար ինչ յայլոց հա-
րազատ վկայաբանութեանց, որչափ վասն միոյ անստոյգ բա-
նի. այսինքն երևմանն սատանայի 'ի կերպարանս վիշապի, և
խօսելոյ ընդ կուսին. զի թէ վասն այնմ պատմէին՝ զոր մեք
գրեցաք յանստգիւտ բանից յայսմաւուրաց մերոց, չէր
ինչ. բայց զի՛ արասցուք, զի զանազան վկայագիրք և
Ճառընտիրք մեր ազգաց՝ պէսպէս անհեթեթ հանգա-
մանօք չեղջակուտեալ զնոյն տեսիլ, ոչ միայն տղայական
խաղալիկս ձևացուցին, այլև օտարաձայն վէպութեամբ՝ որ
սատար լինի սկզբանց կախարդանաց, խառնախաղտեալ
զանգեցին. նմին իրի և առ ամենայն իմաստուն քննիչս՝ կամ
բո.

բոլորովին մերժելի դատեցաւ, և կամ ուղղագրելի ։ Զայսմանէ երկար խօսի աստանօր պլինիոս. և զմ̄ օրինակս լատին վկայագրաց ը̄ վայր հարկանէ. ո̄չ և ըղյունականս իբրև աղբիւրս նոցին. զնոյն և մեզ մնայ ասել զերկուց օրինակաց Ճառընտրաց մերոց, և զոսկեփորիկ անուանեալ գրեանց. բայց ոչ եթէ 'ի պատճառս քանի մի բառից մուծելոց 'ի տգիտաց՝ զբովանդակ պատմութիւն սուտ ասել, այլ ը̄ հակառակն՝ ը̄ միաբանութիւն լաւագոյն օրինակաց կալ մնալ յանստգիւտ մասին պատմութե. զոր ը̄ վկայելոյ նորին պլինիոսի, * Հաստատէ
, Տիլլեմոնտ. յիշատ. եկեղ. հատ. Ե. եր. 797. 'ի ծան",
, Թէ իւր տեսեալ լիցէ զայն վարս, որոյ սկիզբն է, " Յետ
, չարչարանացն և յարութեան Տն մերոյ Յսի Քսի", ը̄ անուամբ Թէո-
,, տիմոսի իբրև ականատես վկայի. և յաւելու թէ ամ̄ին
,, գեղեցիկ բանք պարունակին 'ի նմա, ոճն վսեմ, մե-
,, ծավայելուչ, և ը̄ բաւականին գերապանծ. ուր պա-
,, կասի մեծ մասն ծաղրական սքանչելեաց գտելոց առ
,, սուրբիոսի. բայց տակաւին կայ մնայ անդ երևումն
,, սատանայի ||: Որպէս և նա ինքն պլինիոս տպագրէ
զտանելի օրինակ մի նոյն վարուց՝ ը̄ խուրումն կարծեաց, առեալ յանանուն վկայագրէ ումեմնէ. * Համոյ Թուե-
,, ցաւ մեզ (ասէ) 'ի տիպ ընծայել զայս օրինակ վարուց
,, քան զայլսն, ոչ ո̄չ թէ ամ̄ին լաւ և ընտիր իցէ, զի
,, ո՞ ոք երբեք ակնունիցի այգմ յի՞նչ և իցէ օրինակաց
,, վկայաբանութե սորա, այլ զի նուազ է յոռութեն և
,, անհաւանականութեն... Որպէս և իցէ, տանելի
,, են՝ զորս պատմէ զերևմանէ վիշապին, քան զոր կանն
,, առ պետրոսի նատալեան, առ մոմբրիտիոսի, լիպո-
,, մանոսի, սուրիոսի, և առ նախանշանակեալ օրինա-
,, կագիրս ||: Միայն թէ ասէ՝ և սա ճառօրէն և ներբողաբար խօսի, քան ճիշդ պատմաբանօրէն. * այլ տա-
,, ցուք նմա յայսմ մասին զներումն ||: Այլ խաբի իմաստունն պլինիոս, ներելով՝ ուր չէր պարտ ներել, և ներելով վն խօսելոյն ը̄ քմաց իւրոց. վն զի անանուն հեղինակն իւր թողեալ զընթացս պատմութե և զձև խօսից, որ միօրինակ պահին ըստ գոյացութե առ ամ̄ վկայագիրս, ինքն ստեղծանէ նոր կարգ և նորանոր խօսակցութիս. որ է գործ անհաւատարմութե՝ եղծիչ ստուգութե պատմութեց. զի ոչ եթէ հաճոյականն ունկան՝ է բան ճշմարիտ 'ի պատմականս, այլ միաձայնութի պատմագրաց. և ահա զոր մեքս գրեցաք ը̄ մասին 'ի ճառընտրաց և ը̄ մասին 'ի յայսմաւուրաց՝ վկայեալ է

յամենեցունց , եթէ՛ հաճոյ թուեցի պլինիոսի , և եթէ ոչ . բայց ես անտարակոյս եմ , զի հաճոյ թուէր և նմա մերս հաւաքումն քան զայլոցն . միայն թէ չկամիցի խաղաղ ժխտել զերևումն վիշապին , որ է երևելի մասն վարուց ս̄րյն մարիանեայ ը̄ ա̄մ մատենագրաց :

Ասէ պլինիոս . գիտեմ , զի նշանակ կուսիս է վիշապ առտոն կոխեալ 'ի նմանէ . զոր եթէ խորհրդաբար նկարեալ համարիցիս՝ իբրև զի բազմահնար մեքենայից դիւին յաղթեաց զօրութ̄բ խաչին , բարւոք է ասէ . ապա եթէ ֆիզիգապէս առնուցուս , լինի ասէ կեղծիք՝ հանգոյն վիշապի ս̄րյն գէորգեայ :

Այլ որ ասելի է . ուրանամ զհանգիտութիդ . Նախ՝ զի վիշապն ս̄րյն գէորգեայ ոչ գտանի յա̄մ վկայագիրս , այլ յոմանս միայն . ո̄ր տեսցես 'ի ծանօթութիս վարուց նր̄ . արդ՝ ուր տարաձայնին պատմիչք , յայնժամ դիւրին է ը̄ունել զմի կողմն՝ յորում ընտիր օրինակագիրք միաբանին , և զմիւս կողմն հերքել : Երկրորդ՝ զի վիշապն գէորգեան իրական օձ առդնի 'ի պատմողաց . որ յորժամ անհեթեթ օրինակաւ նկարագրի՝ արտաքոյ բնութե̄ օձից , կի̄ որ և է դժուարալուր ոճով , մարթի դիւրաւ ը̄ սուտս դրել . իսկ վիշապն մարիանեան էր օձ նմանութ̄բ , և ոչ իրական . ը̄ սատանայ կերպարանել 'ի նմանութի̄ օձի . որում ոչ միայն հնար է , այլև անկ իսկ է արտաքոյ բնութե̄ օձից խօսել և գործել . որպս̄ արար 'ի դրախտին : Մինչ զի եթէ գնէաք ևս ը̄ ոմանց (թէպէտև մեզ չէ՛ ը̄ունելի , զի չէ՛ք 'ի յայսմաւուրս մեր այն պարագայ ) , ո̄ր թէ կլեալ իցէ վիշապն զկոյսն , և ապա պատառեալ զօրութ̄ խաչին . ոչ էր արտաքոյ կարգի յոյժ . զի թէ իրական վիշապ կէտն եկուլ զյովնան , և անվնաս եհան 'ի դուրս յետ երից աւուրց , զի՞նչ մեծ է՝ եթէ մարիանէ հարևանցի իբրև 'ի տեսլեան մտցէ 'ի փոր երևութացեալ վիշապ օձի , և ելցէ անվնաս՝ պատառելով զայն նշանաւ ս̄րյ խաչին : Երրորդ՝ խորհրդաբար կոխել զգլուխ աներևոյթ վիշապին ոչ է սեպհական այսմ կի̄ այնմ 'ի ս̄րց , այլ՝ ամենեցուն առհասարակ . ապա զի՞ է , զի միայն մարիանեայ սեպհականէ զայն պլինիոս . յայտ է թէ գոյ և արմատ և հիմն պատմական :

Զայսոսիկ ասացաք , զի մի՛ 'ի մերժել զստութիւն՝ լինիցիմք մերժօղ և ստուգութե̄ պատմութե̄ց . ո̄ր և յը̄ունելն զստոյգս՝ չպարտիմք հաւանել և ստութեց . զի զի՞նչ միաբանութի̄ է ստոյ ը̄ ճշմարտի , կի̄ մոլորութե̄

ղէ ուղղութն ։ Արդ գլխաւոր ստութն կմ մոլորութն ,
որ գտանի յօրինակս ինչ պատմութե Մարիանեայ , այն
է՝ զի 'ի բերան սատանայի դնին ոչ սակաւ բանք օտարք
և անլուրք ։ Որ եդեալ է 'ի ճառընտիրս երկուս այսպի-
սի ինչ ։ * Արդ լուր ինձ և ողորմեա Մարիանէ , զի մի
„ եղէց 'ի քեն կապեալ ։ զի յառաջ կապեալ էաք 'ի սո-
„ ղոմոնէ արքայէ մատանեաւն՝ որ ունէաւ նմա յերկ-
„ նից ։ զմատանին առին , և զկապանս մեր լուծին ։ և
„ մեք փախեաք ‖ ։ Նոյն բան մեկն ևս դրի 'ի մոմբրի-
տեան լատին օրինակն այսպէս ։ * Սողոմոն 'ի կենդա-
„ նութե իւրում փակեաց զմեզ յաման մի ։ այլ յետ մա-
„ հու նր հուր արձակեաք յանօթոյ ։ և եկեալ արանց
„ բաբելոնի՝ համարեցան ոսկի գտանել , և խորտակե-
„ ցին զայն ։ և յայնժամ արձակեալ մեր՝ լցաք զտիե-
„ զերս ‖ ։

Ուր իրաւամբք ասէ յովհաննէս հէսսէլ լովանիացի ,
թէ այսպիսի ասացուած * է սուտ , և նշանակ արհես-
„ տի մոգութե , որով դեւն կեղծէ զանձն փակիլ ուրեք ‖ ։
Բայց թէև խօսէր դեւն զայսպիսիս , ոչ նոր ինչ գոր-
ծէր , այլ զսովորական խաբեբայութն իւր յայտ առ-
նէր , որ 'ի ճշմարտութե ոչ եկաց ։ և յորժամ խօսիցի
սուտ , յիւրոց անտի խօսի ։ զի սուտ ( որ ստութին ) է
հայր նր ։ Եւ յայս միտ բարւոք դրի 'ի ճառընտիրս մեր ։
* Յայնժամ ասէ երանելին մարիանէ ։ լուեա պիղծ ,
„ զի այլ ոչ կամիմ լսել բան 'ի բերանոյ քումմէ ։ և խա-
„ կոյն կապեաց զդեւն նշանաւ սբ խաչին ... և ասէ ։
„ երթ 'ի խորս դժոխոց ‖ ։ ևն ։

Բայց սակայն ընդունայնասէր և աւելորդապաշտ ան-
ձինք ոչ կան միան 'ի վր բանիցս , այլ յաւելուն կցկը-
ցել զայլ ևս ձևս բանից առ ուսանել կմ ուսուցանել
զնշանակս՝ եթէ ոչ կախարդութե , գոնէ կարծեցեալ
լուծման կախարդութեց ։ և ըստ այսմ յանպիտան օրի-
նակն մոմբրիտեան յաւելեալ կայ , ոմ թէ՝ ուր ուրեք
ընթերցեալ լիցի վարք այսր կուսի , ոչ ծնցի մանուկ
խեղ կմ կաղ կամ կոյր , ևն ։ և թէ՝ որ ոք գնէ զգիրս
վարուց նր , լցցի հոգւով ևն ։ Նովին մոլորութբ առ-
վորեցան և ոմանք յազգի մերում ընթեռնուլ 'ի վր հի-
ւանդաց զհատուած 'ի վարուց մարիանեայ , որպս և 'ի
վարուց կիպրիանոսի՝ երբեմն կախարդի ։ Եւս առա-
ւել մոլորութն էր երբեմն յարևմուտս կարդալ 'ի վր
մանկաբերաց ոչ միայն զվարս մարիանեայ , այլև զբանս
այլոց կուսանաց ջերմեռանդ եղելոց առ մարիանէ կոյս ։

և ոչ միայն սովորութիւն էր նմ ծննդականաց յօգնութիւն կոչել զորբն մարկիանէ, որ է գովելի ըստ ինքեան, այլև 'ի վարս նորա յաւելեալ էր՝ թէ նա 'ի ժամու կատարմանն իւրոյ աղօթեալ իցէ նաև այսպէս. հաս յօգնութիւն վտանգելոց յերկունս ։

Արդ. քանզի ոգէոք բազմօք սխալեն յայսպիսիս, և իմաստունք ոչ միշտ զմէջն ունին բանից, այլ երբեմն և ծայրայեղ խոտորին, մեք որ պարտական եմք իմաստնոց և անմտաց, յուշ ածեմք ընթերցանելեաց բանիցս առ հասարակ՝ մի խոտորիլ յաջ և մի յահեակ, այլ զարքունականն գնալ պողոտայ ճծային. զամ ինչ փորձել. և զբարին ըմբռնել. զօտարոտի պատմութիւնս 'ի բաց հերքել, զխառնուրդս 'ի բաց յապաւել, և զաւանդս հաստատունս պահել։ Զվարս սրբոց ընթեռնուլ՝ առ 'ի նմանող լինել առաքինութեանց նց, յորս կարեմք ամ. և յորս չեմք ձեռնհաս՝ փառաւոր առնել զած, որ սքանչելին է 'ի սուրբս իւր։ 'Ի վր հիւանդաց ընթեռնուլ զածեղէն բանս ևեթ, և զածեղէն հոգւով գրեալ աղօթս սրբց, և ոչ զկեղակարծ և զսնոտի բանս, և առաւել զառասպելայօդ գրուածս. զի այս զած բարկացուցանէ։ Եւ յընթեռնուլ անգամ զբարի բարի բանս, ոչ կապիլ 'ի թիւ, և 'ի տեղի, և 'ի ժամանակ. զի այսոքիկ են նշանակք սնոտի պաշտամանց. այլ ջերմեռանդն հաւատով Երբ և իցէ, ուր և իցէ, քանիցս և կամք իցեն՝ կարդալ զնոյն կմ զայլանազան բանս որբ գրոց և հարց սրբց։ Այսոցիկ ընտրութե անկ է իմաստուն առաջնորդաց. յորոց պահանջէ ած խելամուտ լինել ճշմհաց ճշմարտութե և ուղղութե, և ըստ այն առաջնորդել հօտին. ապա թէ ոչ սաստկապահանջ համար խնդրի 'ի հովուաց, որք թողուն մոլորիլ ոչխարաց ըստ տխմարութե իւրեանց. ևս առաւել ոյք ձեռնադրեն հովիւս ագէտս 'ի վր ժողովրդեանն ած։

Այսչափ առ այս. զայլ թեթև տարբերութիւնս վկայագրաց 'ի վարս մարկիանեայ կուսի ոչինչ կարևոր համարիմք նշանակել. ուր և զանստոյգ աւանդս ոմանց ոմանց մեզ անծանօթս իսպառ լռեցաք։ Բազում նշխարք են յարևմուտս յանուն մարգարիտայ կուսի. բայց դուցէ և համանուն կուսանք բազումք ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սբ՟յն Անթիմոսի եպ՟սին Նիկոմիդեայ ։

Հ. Յ. սեպտ. 3 ։ Լ. ապր. 27 ։ Ճառընտ. Ա. ծբ=էբ ։ Բոլլանդեանն գեհնաջենեաւ 'ի Գ հատ. ապր. էջ. 482=486 ։ և և. 60=63 ։ Եւսեբ. պատմ. եկեղ. Ը. 6. և 13 ։ Մետափր. առ Սուր ։ (1)

ԾԱՂԿԵԱԼՆ ԸՍՏ ԿՈՉման անուանն արդեամբք կատարեալ առաքինութեամբ Անթիմոս հայրապետ երանելին՝ էր 'ի Նիկոմիդեայ քաղաքացւոց , անդստին 'ի մանկութենէ կրթեալ 'ի հրահանգս ած՟պաշտութե՟ , փոյթ յա՟մ բարեգործութի՟ս , ճգնասէր , աղօթասէր , հեզ և խոնարհ , և ամենայնիւ օրինակ բարւոյ ամենեցուն ։ Որ և արժանապէս ընտրեցաւ 'ի կարգ քահանայութե՟ , ոչ անձամբ զհետ ընթացեալ պատուոյ , այլ 'ի նմանէ ըմբռնեալ յակամայ կամս ։ Նոյն եղև յետ վախճանելոյ կիւրղոսի եպ՟սին Նիկոմիդացւոց , ( այն՝ որ հայր հոգևոր եղև սբ՟յն դոմնայի , ) ժողովուրդն ա՟մ միաբան հաւանութ՟բ խնդրէր ինքեան եպ՟ս զանթիմոս ․ և ած՟ իսկ հաստատեաց զընտրութի՟ ն՟ր երևելի սքանչելեօք ․ զի 'ի կալ բազմու-

թե՟

թէ յաղօթս յեկեղեցւոջ՝ ծագեաց յանկարծակի լոյս մեծ, և եղև բարբառ յերկնից, զի ընտրեալն անթիմոս լիցի եպիսկոպոս. և այնպէս ցնծութեամբ և օրհնութեամբ բազմեցուցին զնա յաթոռ հայրապետութեան յամի տն իբր 293:

Սա և այնուհետև ’ի գործ արկեալ երանելւոյն զհովուական պաշտօնն մծ փութով ջանադրութեան՝ մծաքան վճպութեամբ իւրով զբազումս լուսաւորէր յանհաւատից, և ածէր ’ի հաւատս քրի. և զբովանդակ հօտ իւր գեղեցիկ յանձանձէր՝ հանդերձ օրինակաւ վարուց սրբութեան. յորմէ եւանդն բարեպաշտութեան ևս քան զևս ծաւալէր յամ սահմանս բիթանացւոց. մինչև բազմաց արժանի լինել պսակի նահատակութեան:

Քանզի յամի փրկութեան մերոյ 302. յարեաւ հալածումն սաստիկ հրամանաւ դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի ընդ ամ ծ, սկիզբն լեալ ’ի քաղաքէն նիկոմիդացւոց. ուր և կոտորեցան երկու բիւրք միանգամայն, և այլ ևս քաջ քաջ նահատակք բազում յոյժ, որք էին ընդ վճպուք սոյն անթիմոսի: Յայնժամ որպէս հանդիսացաւ առաքելական ոգի հայրապետիս. էր զոր բանիւ, և էր զոր գրով հաստատէր ’ի հաւատս. մինչև անկանիլ թղթոյ նր ’ի ձեռս հալածչաց. որք տարեալ մատուցին զայն առաջի կայսերն մաքսիմիանոսի՝ որ նստէր ’ի նիկոմիդիա:

Սա թէպէտև յառաջագոյն լսելով լուեալ էր զփութոյ բարեպաշտութեան անթիմոսի,

այլ

այլ 'ի տեսանել զյորդորական գիրս նր՝ իբ-
րեւ զհուր բորբոքեցաւ ընդէմ՛ նըջյն. եւ տեղե-
կացեալ՝ եթէ 'ի գիւղն սեմանէ քարոզէ ըզ-
բանն, առաքեաց 'ի վ՛յ նր հեծեալս քսան
մի՝ ունել զնա եւ ածել առ ինքն: Իսկ եր-
թեալ արանցն՝ հանդիպլին եպիսին, եւ նմին
իսկ հարցանեն՝ թէ ո՞ւր իցէ անթիմոս գլուխ
քահանայիցն քրիստոնէից: Իսկ երանելին
հիւրընկալեալ զնս մարդասիրութբ 'ի բնա-
կուն իւր՝ եդ առաջի նց հաց եւ բակլայ յըմ-
թրիս. եւ զոր ինչ 'ի ձեռին ունէր՝ նոքիմբք
մեծարեալ զարսն, ապա ծանոյց նց, թէ ես
ինքն եմ անթիմոսն՝ զոր խնդրէք: Ո՛ այս
լուեալ նց՝ մեծապէս պատկառեցան յառա-
քինութէ երանելւոյն. եւ ոչ համարձակեալ
ձեռս արկանել 'ի նա՝ խորհուրդ ետուն նմ
պահել զանձն, եւ ազատել 'ի ձեռաց մաքսի-
միանոսի. մեք ասեն տանիմք համբաւ, թէ
բազմօք խնդրեցաք զնա, եւ ոչ գտաք:
Իսկ երանելին չէառ յանձն խօսել նց սուտ
'ի պատճառս իւր, քանզի եւ ինքն իսկ ծա-
րաւի էր նահատակութե. վ՛յ յարուցեալ
գնայր ը նս զուարթագին, զինեալ հաւա-
տով եւ աղօթիւք իբրեւ գեղեցիկ զինուոր քսի
մտանել 'ի ճակատամարտն, որ առաջի կայր:
Իսկ զճանապարհայն խօսելով առ նս բանս
հոգեյորդորս՝ լուսաւոր եւ ածիմաստ վրդպու-
թբ իւրով ձգեաց զնս յուռկան աւետարա-
նին. վ՛յ իբրեւ հասին 'ի գետ մի, խնդրեցին
'ի նմանէ արքն ընդունել զլուսաւորութի 'ի
լուացումն մեղաց, եւ յորդիութն շնորհաց հօրն
երկ-

երկնաւորին։ Եւ նր եղեալ ձեռն՝ ի վր նր ձնա-
դրեաց զնա, նոյնպ եւ զջուրն. եւ իջեալ նորօք
համդերձ՝ մկրտեաց զնա յանուն հօր եւ որդւոյ
եւ հոգւոյն սբյ։ Եւ յետ կատարման խոր-
հրդոյն՝ օրհնեաց զնա, եւ համդերձ նորօք
փառաբանութն վերառաքեալ ՚ի բարձունս՝
յուղի անկաւ երթալ ՚ի քաղաքն, խօսելով
բանս կենաց առ նորոգ հաւատացեալսն. եւ
հաստատէր զնոսա ՚ի հաւատս զգուշութբ,
յանձն առնելով զնա տն, եւ բանի շնորհացն՝
յոր հաւատացին։

Եւ ՚ի մտանելն նոցա ընդ դուռն քաղաքին՝
լուեալ չարախօսքն զգալուստ սրբյն անթիմո
սի. եւ գնացեալ ը այգն ը առաւօտանալ
աւուրն՝ մինչդեռ նստէր յատենական բեմ-
բին բռնաւորն մաքսիմիանոս, ծանուցին
նմա՝ թէ եկն այրն այն, որում ՚ի խնդիր է
ինքնակալութդ քո։ Յայնժամ հրամայեաց
թագաւորն բերել զսրբն առաջի բեմին իւրոյ
յատեան դատաստանի. եւ սրբն ոչ արարեալ
զկնիքն քսի ՚ի դէմս իւր՝ այնպէս եկն հա-
մարձակապէս մերձ ՚ի բեմբն արքայական,
առ ինքեան ունելով զձեռս իւր իբրեւ զկա-
պեալ, եւ խոնարհ զերեսսն. այլ զմիտսն առ
ած ուղերձեալ յերկինս, ուստի ակն ունէր
օգնականութե։

Իսկ թագաւորն կամելով ահ արկանել ան-
թիմոսի՝ պատրաստեալ էր յատենի անդ ա-
նօթս տանջանաց. եւ ը կոչել զնա զառա-
ջինն ՚ի ներքս՝ լի ցասմամբ սպառնալեաց
ասէ ցնա. դու ես անթիմոսն այն՝ մոլորու-
թե

թէ կուսակից , խոստորեալ զկնի նազովրաց֊
ւոյն , և վ՟ղպ խաբէութ՟՝ որսալ պատրանօք
զպարզամիտս յամբոխէն , և թշնամանադիր
ա՟ծոց մերոց ։ Յայնժամ երանելին զուգա֊
ղէս ծիծաղելով է՟ գործարանս տանջանաց
և է՟ բանս բռնաւորին՝ ասէ . Ո՛չմարտիկ
գիտեա՛ ով թագաւոր , զի չէին ինձ կամք
տալ քեզ առ այդ պ՟խնի . այլ ք՟զի ա՟ծային
առաքեալ ուսուցանէ մեզ պատրաստ գոլ 'ի
պ՟խնատուութ՟ի ա՟մի՝ որ հարցանէ , վ՟ն այ֊
նորիկ և ես վստա՛հ եմ 'ի տ՟ր ՝ պ՟խնի ունել
'ի պատրաստի , ը՟ստ խոստմանն արարչին՝ որ ա֊
սէ , մի՛ հոգայցէք , և մի՛ զմտաւ ածիցէք՝
թէ զի՞նչ խօսիցիք . զի ես տաց ձեզ բերան
և իմաստութի՟ , որում ոչ կարիցեն կալ հա֊
կառակ կամ տալ պ՟խնի ա՟մ հակառակորդք
ձեր . զի ո՛չ եթէ դուք էք՝ որ խօսիցիքն , այլ
հոգին հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ ։ Ա՟յ
լո՛ւր ինձ ով թագաւոր , զի սակս տանջա֊
նացդ՝ որով սպառնաս ինձ , ո՛չ երկեայց 'ի
քէն . քանզի ունիմ ա՟ծ յերկինս , որ արար
զա՟մ . որ և ասաց մարգարէի՟ն , թէ ա՟ծք՝
որ զերկինս և զերկիր ոչ արարին , կորիցեն
յերեսաց իմոց . զորս խուլս և կոյրս կոչեմ ,
և պղծութի՟ աւերածոյ անուանեմ . և ո՛չ
երբէք զն՟ս ա՟ծս խոստովանեցայց ։

Մաքսիմիանոս ասէ . գիտեմ , զի այժմ ոչ
կամիս անուանել և զոհել ա՟ծոցն , այլ յոր֊
ժամ տեսանիցես զմարմինդ քո մաշեալ և
յօշ յօշ կտրատեալ , յայնժամ զգաստասցիս
և ունկնդիր լինիցիս բանից իմոց ։ Պ՟խնի ետ

ան֊

անթիմոս ․ եւ՝ կանխաւ կարեկից լինել ձե-
րումդ անգիտութե՟՝ վ՟ս ա՟ծ անուանելոյ զոչ-
ինչսն ․ այլ այժմ մեծ եւս տխմարութի գտա-
նեմ, զի կարծէք և զիս յետս ձգել յա՟յ իմ-
մէ ճշմարտէ ահի՛ տանջանաց ․ զայդ այնո-
ցիկ է առնել, որոց թուլացեալ իցեն ոգիք
'ի սիրոյն ա՟յ, և քաղցր թուի՛ն ն՟ց վայելք
կենցաղոյս ․ իսկ ինձ՝ որ զաղցաւոր կեանս
բանտ գիտեմ, և զելս 'ի սմանէ առ ա՟ծն
իմ՝ անպատում երանութի, ա՟մ տանջանք
քո և պատուհաս ախորժելի են քան զա՟մ
հեշտալիս ։

Զայս իբրև լուաւ թագաւորն 'ի բերանոյ
առաքինի նահատակին, լի եղև բարկութբ ․
և հրաման ետ սպասաւորաց ջաղխել զպա-
րանոց ն՟ր քարամբք ։ Իսկ ս՟րբն առ ոչինչ հա-
մարեցաւ զցաւս ․ և կամելով իմն առաւելա-
գոյն տանջանաց լինել արժանի՝ բացեալ ըզ-
բերան իւր սկսաւ աներկիւղ յանդիմանել
զանօրէնն զմաքսիմիանոս, և ասէ ․ հարկա-
նելոյ է զքեզ ա՟ծ ով գազան չարագոյն՝ ար-
բանեակ սատանայի, և նմանեալ եղբօրն
քում հերովդէի, որ զնորին գործն ընձեռե-
ցեր ։ Եթէ ո՟չ գիտես, զի 'ի ձեռն քարա-
կոշկոծ լինելոյս ետուր ինձ համարձակութի,
նմանօղ լինելով նախավկային ստեփաննո-
սի, որ զբազմութի քարանցն ո՟չ զծաղիկս
վարդից ժողովէր ․ զի և ես 'ի ձեռն զարկ-
ուածոցս այս քարանց ճոխացեալ՝ լցայց ա-
նուշահոտութբ, 'ի բաց լքանելով զժահա-
հոտութի դիւաց ։

Դար

Դարձեալ ասէ ցնա Մաքսիմիանոս ։ Հաւանեա՛ ինձ այսուհետև, և զոհեա՛ ածոցն ։ ապա թէ ոչ՝ կա առաւել յասմամբ շարժեսցես զիս 'ի մ՟ր քո, և զայրացմամբ վարեցայց ը՟ քեզ սաստկագոյն քան զառաջինն ։ Անթիմոս ասէ ։ արա՛ զոր առնելոցդ ես վաղվաղակի, և մի՛ յապաղեր, ո՟վ զիարդ գրգռէ զքեզ սկզբնաչարին սատանայ, որ 'ի քէն ո՛չ է սուղապէս հեռի ։ Յայնժամ բարկացաւ թագաւորն, և հրամայեաց 'ի յօդս ոտից նո՟ր հրացեալ երկաթս ագուցանել, կի՟ր շամփուրս անցուցանել ը՟ պճղունս նո՟ր ։

Իսկ երանելին Անթիմոս զձեռս և զաչս յերկինս ամբարձեալ՝ սկսաւ աղօթել այսպէս ։ Ա՟ծ կենդանի յա՟մի յո՟ քո՟ն, լոյսդ նախայաւիտեան՝ ծագեալ յՏ՟ ։ ապաւինութի՟ փրկաբար ամենեցուն՝ որոց զյոյս իւրեանց եդեալ է 'ի քեզ ։ խաղաղական նաւահանգիստ նաւակոծելոց՝ որք ծփեալն են 'ի ծովու մեղաց պատրանօք յաւիտենիս այսորիկ ։ որ ո՟րց քոց առաքելոց 'ի ձեռն համբերութե՟ պարգևեցեր զշնորհս հոգւոյն ս՟րբոյ ։ Առ քեզ կարդամք, որ յա՟մի հասեալ ես 'ի թիկունս քոյով անհասանելի և անպարտելի զօրութե՟դ ։ և այժմ կաս աստանօր կասդ անմխիջելի մերձաւոր, և զ՟ամ իսկ լինես ամենաբաւական ողորմութե՟ քո ։ Տո՛ւր ինձ համբերութիւն, զի յաղթեցից բանսարկու բռնաւորին ։ զի դու ես Տ՟ր Ա՟Ծ միայն, որ ծանուցեր զա՟ծութի քո Տ՟մ տիեզերաց, և դու զա՟մն յանգոյութէ 'ի գոյութի՟ ածեալ յօրինեցեր ։ և տաս յաղ-

թու-

թութի երկիւղածաց յանուանէ քումմէ, ըստ խոստման քո՝ ասելով, աՀա եսու ձեզ իշխանութի կոխել զօձս և զկարիճս և զամ զօրութիս թշնամւոյն ։ Եւ զայս ասելով՝ զուարթերես զինքն ամ տեսողացն ցուցանէր, ամենևին առ ոչինչ Համարեալ զտանջանս բռնաւորին ։

Յայնժամ դառնացեալ մաքսիմիանոսի՝ Հրամայէր դաՀճաց սուր խեցիս կամ խորտակել անօթս բրտի տարածանել 'ի գետին 'ի ներքոյ կողից նրյն, և 'ի վերուստ մաՀակօք վայրենեօք կամ փշոտ գաւազանօք Հարկանել ։ Եւ յայնպիսի տանջանս չարչարանաց տակաւին ուրախութբ բարբառէր երանելին, և ասէր. Ո՛վ գոՀանամ զքէն՝ թագաւոր յաւիտենից. զի զգեցուցեր ինձ զօրութի 'ի պատերազմի, զյարուցեալսն 'ի վր իմ ներքոյ իմ արարեր. զի մանրեցից զնս որպս փոշի առաջի Հողմոյ, և որպս կաւ գռեՀաց կոխեցից զնոսա ։

Ասէ բռնաւորն. ո՛վ երիցս թշուառական, ո՞չ զգաս տանջանացդ. և զիա՞րդ զայդպիսիս բարբառիս ։ Սրբն ասէ. ամենաթշուառ դու ես՝ թշնամի թագաւորին երկնաւորի, որ ոչ դադարես 'ի թիւրելոյ զճանապարՀս տն զուղիղս. և ոչ գիտես թէ որչափ և մարտնչիս, լուծեալ պարտեսցիս առ յինէն մարտակցաւն իմով տեառն յիսուսիւ քրիստոսիւ զի ես եւս քան եւս զօրացեալ լինիմ շնորՀիւ նրա որ յիս. վասն և ո՛չ զգամ զտանջանս ։

Հրաման ետ ամպարիշտն մաքսիմիանոս Հրա-

ցուցանել և կօշիկս պղնձիս, և արկանել յոտս նր̄ : Իսկ ծառայն ա̄յ Անթիմոս համբարձեալ զաչս իւր յերկինս՝ ետես զա̄ծահրաշ նշոյլ լ̄ս անքննելի, զի հովանի լինէր նմա. և գայր ձայն յերկնից, զի ասէր. զօրացիր և քաջ լեր, զի ես ը̄ քեզ եմ. և մեծացին վարձք քո յոյժ անթառամ պսակօք : Երևեցաւ և ձեռն կարկառեալ 'ի դնել ըզպսակ 'ի գլուխ նր̄. մինչև յառաւել ուրախութե̄ նոյն առաւել ևս զուարթանալ դիմաց նորա :

Ընդ որ յիմարեալ բռնաւորին՝ սկսաւ անարգել զն̄ա իբրև զմոգ և ապշեցուցիչ. և հարցանէր զպատճառս այնպիսի զուարթութե̄ 'ի տանջանս : Եւ նահատակն ք̄սի ասէ ցնա. ով անհանճար և տմարդի, զիարդ չառնուս 'ի միտ զմեծամեծսն ա̄յ, որ ակն յանդիման ցուցանէ զզօրութիւն ձեռին իւրոյ. և նա ինքն է՝ որ ունի դատել զքեզ և զա̄մ գործակիցս քո յաւուր միում. այլ ես ցնծացայց յա̄ծ փրկիչ իմ, որ այժմէն տայ ինձ զառհաւատչեայ յաւիտենից ուրախութե̄ն. և ծիծաղեցայց 'ի վե̄ անմտութե̄ ձերոյ :

Յայնժամ լցեալ մաքսիմիանոսի մոլեգին ցասմամբ՝ պատառեաց զթ̄ւորական պատմուճանն. և կրճտելով զատամունս՝ հրամայեաց կապել զն̄ն յանիւ մի, և 'ի հոլովելն՝ բոցով ջահից խորովել զմարմինն ողջոյն : Իսկ ս̄բն Անթիմոս ասէր. ով թագաւոր՝ սրտմտիս, և զատամունսդ կրճտես, զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ, թէ զատա-

մունս իւր կրճանեսցէ և հալեսցի, և ցանկու-
թ՟ի մեղաւորաց կորիցէ . և պատառելով
զարքունի պատմուճանդ՝ զթագաւորութ՟ի քո
պատառուածս ցուցեր . զի և ոչ յայժմուս
ընդերկար վայելեսցես . և 'ի հանդերձեալն
դառն պատուհաս կրեսցես յերկնից արքա-
յէն . զի ոչ խնայեցեր 'ի ծառայս նր՟ :
Եւ եղև յորժամ կապեցին դահիճքն զն՟րն
յանիւն, և ջահ 'ի ձեռս մատեան բոցակի-
զել զնա ըստ խիզախելոյ և բռնաւորին առ-
նուա , սկսաւ աղօթել երանելին և ասել .
Փրկի՛չ բարեգութ և ամենազօր , որ իջեալ
առ երիս մանկունսն 'ի հնոցի հրոյն՝ փրկե-
ցեր զն՟ս , և զանօրէն քաղդէացիսն հրոյ ա-
ւանդեցեր վն՟ անհաւատութ՟ե իւրեանց . այս-
պէս ցո՛յց և այժմ զնշան սքանչելեաց քոց 'ի
մէջ անօրէն կռապաշտիցս , և դարձո՛ զտապ
հրոյս 'ի պաշտօնեայս նորա . զի ծանիցեն և
հաւատասցեն , զի դու ես պաշտպան իմ տր՟՝
որ փրկես զյուսացեալսն 'ի քեզ : Եւ յասել
նր՟ զայս՝ դարձան բոցք ջահիցն առ պաշտօ-
նեայս անօրինին այրելով զն՟ս չարաչար կիզ-
մամբ . և դադարեաց յանկարծակի անիւն .
և զինուորքն զգետնի զարկան :
Զայն տեսեալ թագաւորին՝ համբարձ ըզ-
գեղարդն իւր 'ի վր՟ զինուորացն , զի սպան-
ցէ զն՟ս . ո՛վ չարք ասէ և վատշուէրք 'ի պաշ-
տօնեայսն իմ, և արհամարհք 'ի զինուորա-
կան կարգին, ըն՟դէր ստունգանեցիք պատուէ-
րանաց իմոց : Եւ ոչ իմանայր ապշեալն ըզ-
վերին զօրութիւնն՝ յորմէ հարան . ոմ՟ և նոքա
յետ

յետ պահոց միոյ յարուցեալ՝ ’ի բաց ընկե-
ցին զջահսն ’ի ձեռաց իւրեանց , և ասէին
ցԹագաւորն . Ո՛վ արքայ քաջ , զճշմարիտն
ասեմք քեզ . զի տեսաք մեք արս երիս ահա-
ւոր տեսլեամբ ’ի հանդերձս լուսաւորս , որք
ասէին սաստիկ բարկութբ . զի՞ կայ ձեր և
վկայիդ քսի . Թո՛յլ տուք ծառայիդ քսի այ
անԹիմոսի , զի դա ինքնին յաղԹող լիցի ’ի
վր բռնաւորիդ . քանզի ’ի բաց լքեալ Թո-
ղու դա զառաժմկեայ կեանս՝ փափաքող լեալ
կենացն յաւիտենից . և որչափ պաշտօնեայքդ
չարութե պատրաստէք դմա տանջանս , ան-
ձանց վնաս գործէք , և ոչ կարէք ստնանել
արդարոյն . զի անդուստ ’ի վերուստ պսակք
առաքինութե վկայիդ այ պատրաստեալ են ։
Այ ո՛վ Թագաւոր ո՛չ համարձակիմք առնել
զհրամայեալսն ’ի քումմէ ինքնակալութեդ .
քանզի բոց հրոյս տոչորեալ հարկանէ զե-
րեսս մեր . և շարք մարմնոց մերոց հատեալ
լինին , և ուղեղք գլխոց մերոց խոցոտեալք ,
և հոգիք մեր արտաքս ելանեն ’ի մարմնոյս .
և ոչ համբերեմք տանջանացս՝ զոր կրեմք
յաներևակէ ։ Իսկ այրս այս կրէ և ոչինչ .
զի դու տեսանես զնա ’ի վր անուոցն ձգեալ .
այլ մեք տեսանեմք՝ հանդերձ երեք արամբք
լուսազգեստիւք յաղԹազգեաց եղեալ՝ ոչ ևս
մի ինչ զգալով ’ի խոշտանգանս տանջանաց .
այլ սակայն և վր քո հրամանն ալինւոյ ընկա-
լաւ ’ի վերուստ , զի պատուհասեսցիս դու ։
Իսկ ծանուցեալ արքայի , եԹէ Ճշմարիտ են
ասացեալքն ’ի զինուորացն՝ հրամայեաց զսբն

իջուցանել 'ի գեղարանաց անուշոյն ։ Յայն֊
ժամ արձակեալ երանելոյն Անթիմոսի , և
ամբարձել զաչս իւր յերկինս՝ ետես զփառս
փրկարարին իւրոյ ․ վ̄ոյ տարածեալ զս̄բ
ձեռս՝ գոհանայր յանդիման ամենեցուն ,
ասելով ․ Տ̄ր երկնի և երկրի , որ 'ի ձեռն
անբաւ գթութե̄ քո առաքեցեր զմիածին
որդիդ լուսատու լինել աշ̄ի ․ զի նովաւ ծա֊
նեաք զքո անձառ ա̄ծութիդ ․ և զատեալք
յանգիտութե̄՝ ընկալաք զգիտութի̄ 'ի ձեռն
ներգործութե̄ հոգւոյն ս̄բյ , օտարացեալք
ք̄ի՛ 'ի խաբէութե̄ պաշտամանց կռամոլ
հեթանոսութե̄ ․ և այժմ գոհանամ զքէն
Տ̄ր , զի վ̄ս մեծի ողորմութե̄ քո խոնարհեցար
առ իս 'ի թեթևացուցանել զխստութի̄ տան֊
ջանաց իմոց ․ զի յա̄մի փառաւոր լիցի անուն
քո 'ի մէջ հեթանոսաց ։

Այլ բռնաւորն Մաքսիմիանոս անդրէն զա֊
ւածանէր 'ի խորհուրդս չարութե̄ իւրոյ՝
ասելով առ ծառայն ք̄ի ․ մինչև յե՞րբ ոչ
դադարես 'ի խօսելոյ առասպելաբանութիս ,
կարծելով շատախօսութե̄դ ապրել 'ի ձեռաց
իմոց ․ հաւանեալ արդ զոհեա՛ ա̄ծոցն ․ ապա
եթէ ոչ՝ սրոյ մատնեցից զքեզ ։ Իսկ ս̄բն ա̄յ
յաղագս սրոյ լուեալ՝ խնդալից եղև , և ասէ․
Թո՛ղ քեզ 'ի ձեռն սրոյ սպառնալեաց զար֊
հուրեցուցանել զիս ․ այլ ես և՛ս առաւել
ցանկամ վաղվաղակի ելանել 'ի մահկանա֊
ցու մարմնոյ աստի , և մտանել առ ա̄ծ՝ առ
որ անձկացեալն եմ , և մասն ժառանգութե̄
գտանել յարքայութե̄ արդարոց ։ Ա̄ն զի կե֊
տեմ ,

տեմ, զի նա է՝ որ զօրացուցանէ զիս հասա-
նել զկնի առաջնոցն . և երկոքումբք բիւ-
րօքն երթալ յանդիման լինել հանդիսադ-
րին ամենեցուն . զի և ես նովաւ պարծեցայց
համարձակութ՟բ ասելով . ահաւասիկ ես և
մանկունք իմ, զոր ետ ինձ ա՟ծ . զի էին ն՟ք
'ի հօտէ իմմէ . և զորս կարծէիր դու 'ի կե-
նաց կարձել, ն՟ք ճշմարիտ կենացն եղեն
ժառանգորդ յերկնային փառսն ։

Յայնժամ ասէ Թագաւորն . չեմ ինչ անտե-
ղեակ, զի քրիստոնէիցդ ազգ փառաց և պատ-
ուոյ էք ցանկացե՟լք . և ծարաւի էք մահու ,
զի խնդրոյդ ձերում վաղվաղակի հասանի-
ցէք . այլ դու մի՛ ակնունիցիս այդմ, փութա-
նակի կարծելով զերծանիլ 'ի ձեռաց իմոց ,
և վաղվաղակի վճիռ ը՟ունել մահու 'ի ծե-
րութե՟ քում . զի նախ այլ ես խիստ և անո-
ղորմ հարուածովք խոշտանգեցից զքեզ , և
ապա 'ի լուսոյ կենաց զրկեցից , որում ան-
ձամբ զանձն քո անարժան կացուցեր ։

Պ՟խանի ետ ս՟րբն անթիմոս , և ասէ . իբրու
զանգիտելով քո 'ի մահուանէ՝ յորմէ ես ինչ
ոչ երկեայ , խոստանաս , և ոչ եթէ սպառ-
նաս ինձ զայդպիսիդ . հապա արա վաղվա-
ղակի զոր ինչ և կամիս՝ օտարացեալդ յա՟յ .
քանզի որչափ ես համբերութի ստանամ 'ի
տանջանս , այնչափ յաճախապէս ա՟ծ փառա-
ւորեալ լինի . որ և ինձ տացէ համբերութ՟ի
վ՟ն յուսոյն իմոյ՝ որ առ նայն է . այլ դու ոչ
ես ձողոպրելոց 'ի դատաստանացն ա՟յ այր-
մամբ գեհեննոյն ։

Ասէ ցնա մաքսիմիանոս. արդ՝ արդեօք ոչ կարիցեմք ձգել այսուհետև զքեզ առ պատշաճն, իշխանութի՟ ունելով ՚ի վ՟ր քո՝ դատել կենօք և մահու: Նա ս՟րբն ասաց. ոչ ունէիր դու իշխանութի՟ ՚ի վ՟ր իմ և ոչ մի, եթէ ոչ ա՟ծ ներեալ էր. զի ցուցցէ քեզ, թէ որպիսի նահատակութ՟ք հաւատարիմ ծառայք նորա յաղթեսցեն քեզ; և բանսարկուին՝ որ զգեցեալ է զքեզ՝ ունել գործակից ՚ի կամս չարութե՟ իւրոյ: Յայնժամ զամօթի հարեալ թագաւորին՝ հրաման ետ հանել զս՟րբն ա՟յ յերեսաց իւրոց, և տանել դնել ՚ի բանտ մահապարտաց, և զոտս ն՟ր պնդել ստուար երկաթիւք, և արկանել անուր ՚ի պարանոց ն՟ր, և զգուշութ՟ք պահել:

Նա յարուցեալ երթայր առաքինի զինուորն ք՟ի ՚ի բանտն մեծաւ ուրախութ՟ք՝ աղօթելով այսպէս. Յ՟ն Ք՟ն նախայաւիտեան ծնունդ հօր, որ զ՟մ յոչէից ՚ի գոյութի՟ ածեր. և հայրենի կամօք յերկնից իջեալ՝ առեր մարմին ՚ի ս՟րբ կուսէն մարիամայ. և ՚ի ձեռն նորին մարմնոյն զգեցման ա՟ծային ներգործութ՟բն ցուցեր արուեստս և նշանս սքանչելեաց քոց. և զգրեալսն ա՟մ ՚ի տառս մարգարէիցն լցեալ կատարեցեր, խաչեալ կամաւորաբար, և խաչակցեն՟ զիմ զմեղս. յարուցեալ երեքօրեայ ա՟ծային իշխանութ՟ք՝ և մեզ յոյս յարութե՟ պարգևեցեր վ՟ն բազում բարեգթութե՟ քո, ոչ անտես առնելով կենդանացուցանել յանմահութիւն զմեղօք մահացեալս: Նա այժմ տ՟ր բարերար ցոյց զմար-

զմարդասիրութի՛ն քո 'ի ժամուս յառաջ քան զմտանելն իմ 'ի բանտ՝ լուսով սքանչելեաց քոց. և տուր ինձ ծաւալել զլուսաւոր բանս վճռութե՛ 'ի խաւարային բանտի, լուսաւորել զանդանօր ըմբռնեալսն 'ի խաւարէ անգիտութե. զի խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի, և գիշերն ո՛պ տիւ լուսաւոր եղիցի՝ հնազանդելով քոյոց հրամանաց:

Եւ յորժամ ըմբռնեալ տանէին զերանելին սպասաւորք բռնաւորին կապեն երկաթեղէն կապանօք, յանկարծակի լուծան շղթայք նցյն, և լոյս ահաւոր ճառագայթեն տեսաւ զնովաւ. զորոյ և զհրեշտակակերպ դէմս տեսանելով զինուորացն՝ յերկիր անկանէին, և ոչ կարէին հայել 'ի նա: Այլ նըն ո՛յ անթիմոս յարուցանէր զնա՝ ասելով. արիք կատարեցէք զհրամայեալսն ձեզ 'ի բռնաւորէն. և նք յարուցեալ զհետ նր երթային ահի՛ մեծաւ 'ի հեռաստանէ՝ դիտելով զնա մինչև 'ի դուռն բանտին:

Եւ իբրև եմուտ նըն անթիմոս 'ի բանտն, ասէ. ո՛վ ա՛ծ արարիչ և հաստատիչ ա՛մ եղանութեց՝ հայր ա՛ն մերոյ յի քի, գոհանամ զքէն, զի արժանի արարեր զանարժանութիւն իմ 'ի բանտ արկանիլ մահապարտաց՝ ը՛նմանութե ամբողջոյն երանեալ կարապետին յովհաննու մկրտչին քնի քո. զի և ես հանդերձ նովաւ 'ի ձեռն շնորհաց քոց համարձակութե և աչալրջութե թերևս կացեալ ը՛ նըս և ընդ սիրելիս անուան քո՝ յաւիտեան փառս քեզ մատուցից և միածնի քո և ամե-

նասբ հոգւոյդ ։

Եւ սկսաւ սբ հայրապետն քարոզել զբանն կենաց՝ ամենեցուն, որ էին նմա արգելեալք ՚ի նմին բանտի. վճարէր և ուսուցանէր զամ կարգ բարեպաշտութե, և հաստատէր զմիտս նց ՚ի քնական հաւատս և ՚ի համբերութի սբց, ասելով՝ թէ ՚ի ձեռն բազում նեղութեց պարտ է մեզ մտանել յարքայութիւն այ ։ Եւ նք առ ոտս նր անկանէին, և արտասուագոչ բարբառով աղաչէին ասելով. Ծառայ այ բարձրելոյ, դու ՚ի դիտողութե քում հանդիպիս բարւոյ մասին՝ որում ցանկացեալն էիր ՚ի վաղուց հետէ. զի զընթացս քո բարիս կատարեցեր՝ զհաւատսն պահել. իսկ մեք դեռևս յաղցաւոր կեանս կամք՝ անգիտացեալք զկատարածն. վսյ աղաչեմ վն մեր զտր, զի արժանի արասցէ և զմեզ քումդ մասին երանութե, տալով մեզ կանխաւ զկնիք հոգւոյն սբյ, որով կարասցուք հետևել զկնի քո ։ Յայնժամ տեսեալ սբյն զյօժարութի կապելոցն՝ մկրտեաց զնս ՚ի ջուր սրբութե, և զօրացոյց զամենեսին ՚ի հաւատս և ՚ի սէրն քսի ։

Իբրև լու եղև այս թմ յականջս մաքսիմիանոսի, երկեաւ, զի թէ այլ ևս յերկարեսցէ զդատաստան նր, գուցէ և այլք բազումք երթիցեն զկնի վճպութե նորին. վսյ ետ անդրէն կոչել զնա զառաջեաւ, և յորդոր մատուցանէր զոհել դիցն, և ես կայուցից զքեզ առէ գերագոյն քհնայ ածոց իմոց. զի փառաւորեսցիս առաջի ամենեցուն ։ Պինի

ետ

ետ տր հայրապետն, և ասէ. ես ինքն նախ
քան զքո զանարժան խոստմունս՝ ճշմարիտ
քահանայ Տն եմ, և պաշտօնեայ առաջին և
մեծ հովուապետին և քհնյապետին Քի. որ
ոչ միայն կցորդ եղև մարմնոյ իմում, մինչև
առ իս յաղագս իմ խոնարհեալ, այն՝ որ ան-
նիւթական էր Տծեղէն բնութբն անհասա-
կանաւ, այլև զանձն իւր գլխովին պատա-
րագեաց վն հօտի իւրոյ, և 'ի խաչ բարձրա-
ցեալ՝ յանձն եառ զմահ, և երեքօրեայ յա-
րեաւ. և դարձեալ յերկինս վերացաւ, զիս
ևս միանգամայն առ ինքն ձգելով՝ որ 'ի
ստորինս էի վայրանկեալ յաղագս անհնա-
զանդութե: Նորա եմ ես քահանայ, և
նմա հաստատեալ է իմ 'ի միտ պատարագել
զանձն իմ. մինչև ձենձերեսցի զոհն իմ 'ի
հաճոյս բարեսէր կամացն Նր. այլ դիւ՛այն
լինել պաշտօնատար կամ զոհել չառնում
երբէք յանձն. որ է գործ արժանի ողբոց,
և կորուստ հոգւոց. յոր մատնեալ է քո ան-
ձամբ զանձն, և որք 'ի նոյն մոլորութեան
կայցեն:

Յայնժամ հրաման տայր բռնաւորն դրել
վճիռ մահու Էդեմոնեյն, և պատրաստ լի-
նել դահճաց տանել 'ի գլխատել զնա: Իսկ
երանելւոյն լցեալ ուրախութբ՝ գոհանայր
զԱյ յատենի, և զմնացեալսն 'ի հաւատացե-
լոց յանձն առնէր 'ի խնամս մարդասիրին,
ասելով: Տէր Տր և Նյ կատարել զընթացս
իւրեանց 'ի բարին Տն բարեսէր կամաց քոց,
հաստատելով 'ի հաւատս ճշմարտութե յոր
կո-

կոչեցեր. և զա՟մ մեքենաւոր հնարս չարին և զպատրանս նո՟ր խորտակեա, և նկուն արա առաջի սոցա քոյին ամենակարօղ զօրութե՟դ. զի մի՛ գողացեալ օձտեսցէ վարատելով 'ի ո՟ղ հօտէ քումմէ: Տակաւին զծառայքս քո զնոր ընծայեալքս՝ քեզ յանձն առնեմ, որ կարօղդ ես պարգևել զշնորհս քո, ո՟չ և երկուցբիւրուցն պարգևեցեր զառ 'ի քեզ խոստովանութի՟ն. զի այնպէս անմոռաց զանուն քո տ՟ր և զմիածնի քո յանձինս իւրեանց պահեսցեն հաւատովդ քո ո՟ւրց: Տ՟ր յո՟ քո՟ ա՟ծ մեր գոհանամք զքո մարդասիրութե՟դ, որ եկիր 'ի խնդիր մեզ կորուսելոցս, և փրկեցեր զմեզ 'ի դիւ՟ապաշտ մոլորութե՟, և ետուր յաղթութի՟ ը՟դէմ աներևոյթ թշնամւոյն. և արդ մեք զի՞նչ կարասցուք հատուցանել քում ա՟ծութե՟դ, բայց զանձինս մեր ընծայեմք 'ի հոտ անուշից պատարագ ը՟ունելի:

Նաև յասել ո՟րյն զբանս աղօթիցս, թագաւորն գրգռեալ յառաւել կատաղութի՝ մեծաւ ցասմամբ շտապ արկանէր 'ի վ՟ր դահճապետին և դահճացն, տանել զնա 'ի տեղի կառափելոյն, և սուսերաւ հատանել զպարանոց նո՟ր, վճիռ տուեալ վ՟ն նո՟ր գրով օրինակ զայս. Զանթիմոս վ՟դպ քրիստոննէից, և մոլորեցուցիչ բիւթանացւոց նահանգիս, մանաւանդ նիկոմիդացւոց մայրաքաղաքիս, վ՟ն ընտրելոյ նո՟ր զնոտի պաշտօն դալիլէացւոցն, և հաճոյանալոյ թողուլ զկեանս, և ցանկանալոյ մահու, սրով հրամայէ ինքնակալութիւս մեր բառնալ 'ի կենացս:

նացս ։ Իսկ զինուորացն և դահճապետին
ընկալեալ զայսպիսի դատակնիք՝ փութա-
ցուցանէին զս̃րբն տանել 'ի տեղի սպանմանն ։
Եւ իբրև եհաս 'ի տեղին , աղաչէր երանե-
լին զդահճապետն զինուորօքն հանդերձ ,
զի թողայուսցեն նմա սակաւիկ մի յաղօթս
կալ . և թոյլ ետուն նմա ։ Յայնժամ տարա-
ծեաց զս̃րբ ձեռս իւր յերկինս , և սկսաւ այս-
պէս աղօթել . տ̃ր ա̃ծ հայր տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի ,
չէմ բաւական գոհանալոյ զառատ մարդա-
սիրութ̃էդ քումմէ , որ կոչեցեր զանարժա-
նութիւս իմ 'ի կարգ և 'ի պատիւ եպ̃սութե̃ ,
և սրբեցեր զիս տաճար հոգւոյդ ս̃բյ , անա-
րատ և անբիծ պահելով զկուսութ̃ի սրբութ̃
իմոյ . և ետուր ինձ վիճակ առաքելական
զքաղաքս զայս , և շուրջ զորքօք զընակեալսն
'ի սմա . և ես իմովս տկարութ̃բ ըս̃տ զօրութ̃
շնորհաց քոց ուղիղ համառօտեցի ն̃ց զվար-
դապետութ̃ի կենսաբեր ն̃ր աւետարանին ։
Արդ որք հաւատացեալս են յանուն քո ն̃ր ,
ն̃ր պահեա՛ զնոսա 'ի պատրանաց չարին , և
խառնեա՛ 'ի հրեշտակաց երամս՝ 'ի դասս երկ-
նաւոր բանակացն , առնուլ զպսակն լուսոյ
ը̃ ս̃մ ս̃րբս քո . և զհոգի իմ ընկա՛լ 'ի հոտ
անուշից պատարագ ը̃ունելի առաջի փառաց
ա̃ծութեանդ քո յարկսն արդարոց յերկինս
գրելոց ։

Եւ կատարեալ զաղօթս իւր , և ասացեալ
զամէնն , յայնժամ ասէ ցդահճիճն . արարէք
և կատարեցէք զհրամայեալն ձեզ 'ի թա-
գաւորէն . և այնպէս կատարեցաւ սրով ն̃ր
հայ-

հայրապետն Անթիմոս 'ի Նիկոմիդիա՝ յամսեանն սեպտեմբերի, որ օր երրորդ էր ամսոյն, յառաջին կ՟մ յերկրորդ տարւոջ մեծի հալածանացն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի. որոյ սկիզբն եղև 'ի Նիկոմիդիա յամի տ՟ն 302. կամ 303. յաւուրս զատկի, յամսեանն ապրիլի:

Յետ կատարման սրբոյն Անթիմոսի՝ ը՟ երեկս եկե՟լ ոմանց 'ի հաւատացելոց՝ առին զպատուական մարմինն, և թաղեցին 'ի տեղւոջ կատարման նր՟. և փայլեաց գերեզման նր՟ սքանչելեօք. այլ 'ի մասնաւորի յիշեն յայսմաւուրք և ժամագիրք յունաց, թէ բուսուցանէ սքանչելապէս զհերս կամ զվարս 'ի կարօտեալսն: Մեծն Յուստինիանոս կայսր շինեաց վայելուչ եկեղեցի յանուն սրբոյն Անթիմոսի:

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Իսկութն վկայաբանութեան մեծին Անթիմոսի միրինակ տեսանի 'ի յայսմաւուրս ոմ՟ ազգաց՝ զոյգ ը՟ վաւերական բանից Եւսեբի Կեսարացւոյ 'ի խօսելն զերկուց բիւրուց և զԱնթիմոսէ: Զնոյն ենթադրէ և Պրոկոպիոս 'ի խօսելն զեկեղեցւոյն՝ զոր շինեաց Յուստինիանոս կայսր յանուն սրբոյն Անթիմոսի. ոյր վասն ասէ Հենաքենիոս Բոլլանդեան աստանօր. * Վկայաբանութիք
,, ինչ կային արդեօք առ Նովելին Յուստինիանոսիւ, ոչ՟
,, զի Նովելիմբք ստուգեալ զփառաւոր նահատակութիւն նր՟
,, կամեցեալ իցէ 'ի պատիւ նորա կանգնել զայնպիսի
,, հոյակապ տաճար ||: Յոր արժան էր մեզ յաւելուլ. թէ գուցէ նոյն այն վկայաբանութիւն զոր գտանեմք 'ի մեծ Ճառընտրի մերում, էր հանդիսացեալն և յայնմ

ժա-

ժամանակի ․ այլ զի օրինակ մեր պատահական՝ է պա-
կասաւոր յոյժ , առ հնութեն մատենին պատառոտեալ
և կիսատուր մնացեալ , հարկ եղև մեզ յայլմէ յունական
օրինակէ փարեզոյ՝ զոր յառաջ բերէ Հենսքենիոս , բո-
վանդակել զկարգ պատմութեն , և 'ի տեղիս տեղիս պատ-
ճառատել զբանս ճառընտրին՝ որպ զորբաղան մասունս
հաւաքելով զմնացուածս թերթից վերծանելեաց ամ-
բողջ իմաստիւք , հայելով միանգամայն և յօրինակն մե-
տափրաստեսի լիպոմանեան կմ սուրիոսեան 'ի Թարգմա-
նեալն 'ի յոյն մատենից վատիկանեան գրատանն հռով-
մայ ։ Զայս եդեալ՝ ոչ ինչ կարևոր համարիմք ծանու-
ցանել զտարբերութիս ոճոյ կմ ընթերցուածոյ այլևայլ
օրինակաց , որք միաձայնին յիմաստս բանից և յէութեն
պատմութենս ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սբյն Երանոսի եպսին սրմիոյ ։

Հ · Յ · օգոստ · 23 ։ Լ · մարտ · 25 ։ Դառընդ·
Ա · յէ = յէ ։ Բոլլանդեանք · 'ի Գ · հատ · մարտի ·
էջ · 555 = 557 · թիւ 23 ։ (1)

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՍ ԵՐԱ-
նոս կմ երենիոս՝ եպս սրմիայ
քաղաքի պաննոնիացւոց , ան-
ուանակիր և հետևօղ սբյն ե-
րանոսի կմ իրինէոսի հետևողի առաքելոցն ,
էր 'ի ժամանակս սբյն անթիմոսի , և 'ի նոյն
ամս նահատակեալ , զի որոյ և զուգապէս
կատարի 'ի մէնջ տօնի սբյ յայսմ վայրի ։ Արդ

քան

քանզի պանծալի վկայաբանութիւն սբյ՝ որ-
չափ համառօտ, նոյնչափ և գեղեցիկ յօրին-
ուածով գրեալ՝ ի ժամակից գրչէ՝ վսեմական-
խաբանութք, և դիւանական արձանագրու-
թք, միօրինակ գտանի՝ ի հին մատեանս յու-
նաց և հռովմայեցւոց և՝ ի ճառընտիրս մեր,
զնոյն զայն անյեղլի առաջի դնեմք, ունե-
լով բանին այսպէս ։

Յորժամ բարք բարիք՝ ածպաշտութք կըր-
թեալ, և լաւագունիցն ցանկացեալ, ընդ-
այնմ և զերկիւղն այ առնուցու, յայնժամ
միանգամայն զամ ինչ՝ որ յշխս է, արհա-
մարհեալ, ՝ի խոստացելոց բարեաց վայել-
չութիւն փութայ. զի զայն ինչ՝ զոր լուաւ,
հաւատովք հաստատեալ իբրև առընթերա-
կից ցանկացաւ, նմին վաղվաղակի ականա-
տես եղեալ և ընկալեալ՝ փառաւորեսցէ զտր ։
Որ եղև առ երանելեաւն երենիոսիւ եպսիւ
սերմեայ քաղաքի. որ վս անզուգական հե-
զութե իւրոյ, և ածեղէն երկիւղածութեն,
մինչ դեռ ևս մանկագոյն էր, արժանի եղև
աթոռոյ եպսութե ։

Իսկ՝ ի հասանել հալածանացն՝ որ առ դէոկ-
ղետիանոսիւ թագաւորաւ, ոչ որպէս այլք
ոմանք իբրև պատիւ ինչ զիրսն համարեալ,
և հաշեալ մաշեալ երկրաւոր իրօք (առ եր-
կիւղի կորուսանելոյ զպատիւն և զկեանս
միանգամայն), տրտմութք աղաւաղեցոյց
ինչ զառաքինակայ ուրախութին, այլ՝ անյաղթ
և անվեհեր յօժարութք վարելով, յառա-
ջիկայն նկրտելով, և զառ՝ ի յետոյսն մոռա-
նա-

նալով, փութայր 'ի նպատակս վերին կոչ-
մանն ։

Բանզի ոչ լուծին զհաստատութիւն խորհրդոց նորա խիստ իշխանին մեքենայք ․ ոչ թշնամանք ազգի ազգի, որ զչարչարանս նշանակէին ․ ոչ յորձանք գետոյ, ոչ վաղք քարանձաւաց ․ ոչ սպառնալիք զանազան տանջանաց ․ այլև որքան ինչ ցաւեցուցանելն սովոր է, արանց նեղասրտութիւն, մանկանց արտասուք զոտիւքն փարելով, կնոջ կականալի բարբառք և երեսք տխուրք ․ ծանօթից սուգ 'ի վերայ որդւոց մատաղ հասակի, ընտանեաց հեծութիւն, և բարեկամաց աղեխարշումն՝ 'ի վերայ այնպիսի հասակի, որ յորդորէ 'ի լալումն և յողբումն, այլ՝ որ և ասացաքն, ոչ յաղթեցաւ նա յայսմ ամենայնէ, այլ՝ լաւագունացն ցանկութեն ըմբռնեալ, և զերկիւղ դատաստանացն առաջի աչացն եդեալ, զարհուրեալ յոյժ 'ի ձայնէ նորա՝ զոր ասէր, եթէ ոք ուրանայ զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է, զամենայն ինչ արհամարհէր, և ուրախութեամբ փութայր յառաջիկայ յոյսն ։

Ածեալ այնուհետև առաջի պրոքոսի դատաւորին, որ յայնժամ զիշխանութիւն ունէր պանոնեայ ( այն է պաննոնիա, ռամկօրէն մաճառաստան ), և հարցեալ՝ եթէ կամիցիս զոհել ․ պատասխանի ետ երանելին երենիոս և ասէ ․ այլ և ոչ կեալ կամիմ ընդ ձեզ ։ Յայնժամ արկին զնա 'ի բանտ ․ և արարէն անդ աւուրս բազումս 'ի տանջանս և 'ի կապանս,

և

և 'ի մէջ գիշերի նստեալ դատաւորն յատենի (թերևս զի մի խռովութիւն լինիցի 'ի ժողովրդեանն) , դարձեալ ածաւ առաջի երանելի վկայն երենիոս ։ Եւ բազում տանջանաց համբերեալ . և հարցեալ՝ եթէ ընդէ՞ր ոչ զոհես . Պատասխանի ետ սուրբն . վասն զի Աստուած ունիմ , զոր 'ի մատաղ հասակէն ուսայ պաշտել . և ոչ կարեմ երկրպագել անուանեալ աստուծոցն ձերոց ։

Պրոբոս դատաւոր ասէ . շահեա՛ զմահ (գընելով զկեանս քո ,) շատացեալ և թշնամանօք նեղութեանց՝ որոց համբերեցերդ ։ Երենիոս ասէ . շահիմ յետ սակաւ միոյ զմահ , յորժամ 'ի ձեռն մահուդ՝ որ 'ի քէն , առից զյաւիտենական կեանսն՝ որ յԱստուծոյ ։ Պրոբոս ասէ . ունի՞ս կին , կամ որդիս . սուրբն ասէ . ոչ ։ Պրոբոս ասէ . ունի՞ս ծնօղս . և նա ասէ . ոչ ։ Բայց զայս ասէր երանելին երենիոս , զմտաւ ածեալ զպատուիրանս Տեառն՝ որ ասէ . որ սիրէ զհայր կամ զմայր կամ զեղբարս կամ զկին կամ զորդիս առաւել քան զիս , չէ ինձ արժանի . ընդ որ հայեցեալ երանելւոյն , յերկինս այնուհետև էր զխոհին խորհրդով կրօնաւորեալ և քաղաքավարեալ . և զամենայն մարդկեղէն իրս թողեալ , ոչ զոք աւելի քան զՏէր՝ գտեալ և ունել խոստովանէր ։

Դարձեալ ասէ ցնա դատաւորն . գիտեմ ես , եթէ որդիք կան քո . գոնեա վասն նոցա զոհեա՛ ։ Պատասխանի ետ սուրբն և ասէ . որդիք իմ զԱստուած ունին իւրեանց օգնական , որպէս և ես . որ կարօղ է կեցուցանել զնոսա . այլ դու զհրամայ-

եալսն

եալըն քեզ արա՛ ։ Պրոբոս ասէ . խրատ տամ քեզ պատանի՛ դու , զոհեա՛ . զի մի՛ ազգի ազգի տանջանօք սպանից զքեզ ։ Երենիոս ասաց . ես ո՛չ զոհեմ . զոր ինչ կամիս՝ արա՛ . և գիտասցես՝ եթէ զօրութի՛ն քո՛ւ քաջութե՛ համբերեմ ա՛մի ։
Պրոբոս դատաւոր զվճիռ մահու եդ 'ի վե՛ր , և ասէ . վ՛ն զի ո՛չ կամիս հաւանել թգ՛րական հրամանաց , այնր աղագաւ ե՛ւ հրամանի ինքնակալացն 'ի գետ ընկեսջիր ։ Երենիոս ասէ . ես ազգի ազգի տանջանաց՝ զոր սպառնայիր , ակն ունէի . և այլ ևս ինչ մեծ լինել ինձ . և եթէ կամիցիս զիս սրով սպանանել , վ՛յ աղաչեմ զքեզ՝ և զա՛յն հրամայեա . զի գիտասցես , եթէ քրիստոնեայք զմահ արհամարհեն վ՛ն հաւատոյն , որ յա՛ծ սովորեցաք ։ Եւ բարկացեալ դատաւորն վ՛ն համարձակութե մե՛ծն Երենիոսի՝ հրամայեաց սրով սպանանել զնա , և ապա գետընկեց առնել ։ Իսկ ո՛բն իբրև երկրորդ յաղթութե նահատակ եղեալ , կ՛մ ո՛ղ երկրորդ բրաբիոնի ընկալուչ , ասէ . շնորհ ունիմ ա՛յ , որ բազում համբերութե՛ մահու զպայծառագոյն պսակն շնորհեաց ինձ ։
Եւ իբրև եկն 'ի կամուրջն՝ որ կոչի արտեմիս , մերկացեալ զհանդերձն , և ձգեալ զձեռն յերկինս՝ յաղօթս եկաց այսպէս . Տէ՛ր , բացցի՛ն երկինք , և ընկալցի՛ն զոգի ծառայի քո , որ վ՛ն ժողովրդեան քո , և կաթողիկէ եկեղեցւոյ , և ա՛մ լրութե՝ որ 'ի քեզ հաւատացելոց , ո՛ր իմ յ՛ւ քո՝ զայս չար-

չարիմ ։ Եւ հատեալ զգլուխ նր սուսերաւ՝ ընկեցաւ 'ի սաւոն գետ ։ Այս գործեցաւ՝ որ օր վեց էր ահեկանի ամսոյ , ըստ Ճառընտիրն · կմ̃ ը̃ յունական օրինակի՝ քսաներորդ առաջնորդ որ օգոստոսի · և կմ̃ ը̃ լատինականին 'ի իե̃ մարտի , և կմ̃ 'ի վեցն ապրիլի · 'ի կայսերութե̃ դիոկղետիանոսի , և 'ի դատաւորութե̃ պրոբոսի · իսկ 'ի մեզ թւելոյ ամ̃ն մերոյ յ̃ի ք̃ի , յամի ամ̃ն իբր 303 ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Բ ։

(1) Բոլլանդեանն հենսքենիոս կմ̃ բաբեպրոք , ( զի երկոցունց սոցա աշխատասիրութի է հատորն մարտի գ̃ . ) ասէն վս̃ առաջինկայ վկայաբանութես սբ̃յն երասնոսի , որ է̃ նշ̃ հիրենէոս կամ հերենիոս · * Զկարի „ հնագոյն վկայաբանութի սորա , որ մրջափ և մարթ „ է իմաստասիրել , 'ի բուն իսկ անթիհիւպատական „ յիշատակագրութեց գրեթէ բառ առ բառ է քա- „ ղեալ , մատակարարեաց մեզ յովհաննէս գամանսիոս՝ „ ընդօրինակեալ 'ի նշանաւոր վկայագրոց բոդեկեան „ վանաց , զոր 'ի պագերբորնեան թեմի ժառանգեն կա- „ նոնաւոր աբեղայք · զոր է̃ այլ երկուց լատին ձե- „ ռագրաց · · · բաղդատեցաք , եւ և է̃ կրկին յունա- „ կան ձեռագրաց · որոց երկաքանչիւրն էր այնպիսի · „ զի հեղինակքն 'ի յառաջ բերելն զխոստակցութիս դա- „ տաւորին և վկային՝ 'ի նոյն աղբերաց երևին առեալ , „ ուստի և լատինքն ։ Եւ այն իսկ , զոր 'ի ձհգ̃ մատե- „ նէ փարիզեան արքունի գրատան առաք , այսպէս ըն- „ կալաք ։ Յորժամ արդարն նբ̃ վարուք կրթի , և լա- • ւագոյնիցն զհետ երթեալ , և զերկնիւղէն ա̃յ բուռն • հարկանէ · ( կմ̃ է̃ այլ օրինակի · Յորժամ բարի բա- • րուք ա̃ծապաշտ կրթեսցի , լաւագոյնիցն ցանկա- • ցեալ , ) ևն̃ · որ յիրաւի ըստ իմիք առաւել չքեղ և „ ողորկագոյն է քան զլատինն , բայց իմաստիւք նոյն || ։

Եւ

Եւ աՀա սոյն այս գովելի վկայաբանութիւն է, զոր 'ի յունական ընտիր օրինակէ պանծալի թարգմանութեամբ 'ի մերս բարբառ յեղեալ գտանեմք 'ի Հին ճառընտրի մերում. զոր և մեք բառ առ բառ առաջի եդաք՝ բաղդատելով ընդ յունին. ուր և յայտնի տեսաք՝ զի յոյնն և Հայն են ամիճ մի և նոյն, բայց 'ի նիւթական տարբերութեան գրչի այսր և այնր օրինակի. իսկ լատին օրինակն ոչ է պարզ թարգմանութիւն 'ի յունէ, այլ նոր յօրինուած մեկնաբանական՝ պաՀմամբ մտաց քան բառից. ոչ և 'ի միում վայրի կամաւոր յաւելուածութեն երևելի Հատուածոյ. զի զոր յոյն և Հայ օրինակն 'ի յառաջաբանական կարգի մթին ոճով նկարագրէ զմորմոքումն ընտանեաց սրբոյն, լատինն անցուցեալ է 'ի վայր 'ի կարգ. պատմութեան այսպէս. * Ասէ ցնա դատաւորն.
,, զինչ ասես Երենիէ, զոՀես: Պինի ես Երենիոս. զո-
,, Հեմ բարի խոստովանութեամբ Այ իմում, որում միշտ զո-
,, Հեցի: Յայնմ վայրի եկեալ ծնողաց նր 'ի տեսանելն
,, զտանջումն նր, պատեալ զոտիւք նր՝ աղաչէին. զի
,, խնայեսցէ 'ի Հասակ իւր, և Հնազանդեսցի Հրամա-
,, նացն իշխանականաց: Այլ Հայրն, անտի կինն, անտի
,, մանկունքն արտասուօք յառաջ մատչէին. լալումն 'և
,, ողբումն էր ընտանեաց 'ի վր նր, կականումն մերձա-
,, ւորաց, և Հեծութիւն բարեկամաց. որք առ Հասարակ
,, միաբարբառ գոչէին ասելով. ողորմեա մատաղ ման-
,, կութեան քո: Իսկ նա լաւագոյն ցանկութեամբ ըմբռնեալ՝
,, զվճիռ տն առաջի աչաց ունէր, ասելով առ ամենե-
,, սին. այս բանք են տն իմոյ յսի քսի. եթէ ոք ուրաս-
,, ցի զիս առաջի մարդկան, ես . . . վն գիտասջիք ով
,, սիրելի բարեկամք, զի ոչ Հրապուրանօք ձերովք, և
,, ոչ սպառնալեօք իշխանաց Հնար է ինձ երբեք խոտո-
,, րիլ 'ի պատուիրանաց նր. այլ 'ի յոյս վերին կոչման
,, տն յօժարութեամբ փութամ կամիմ || :

Ուր տեսանես, զի այս օրինակագիր զնիւթս բանից բուն վկայաբանին մերոյ առեալ՝ նորաշէն ձևով է ճարտարապետեալ. այլ մեզ կարևոր թուեցաւ զնոյն շինուած Հնութեան անայլայլակ պաՀել, զի ընտրութիւն օրինակին մերոյ երևեսցի. զոր եթէ տեսանէին բոլլանդեանք՝ նախապատիւ առնէին և քան զյունական օրինակ իւրեանց իբրև Հնագոյն. միանգամայն և ոչ տարակուսէին՝ ուր ուրեք տարակուսին 'ի վր մթութեան բնագրին. զի և մերս է այնպիսի. որ 'ի Հարցանել դատաւորին, կամիցես զոՀել, և 'ի պնդել սրբոյն այսպէս. * այլև

ուչ կեալ կամիմ ը՛ ձեզ||, զարմացեալ բոլլանդեանց ը՛ հակիրճ այնմի սորին՝ ՚ի կարծիս լինելն, թէ անկեալ իցէ ինչ մի յօրինակէն. բայց զամբողջն լինել հաստատէ հին օրինակս մեր. ոչ և ըստ ինքեան է լիակատար այնմատուճուն յայդմ համառօտախօսութեն։ Մեք ուչինչ կարօտացաք ուղղագրել զօրինակ մեր ըստ յունականին, բաց ՚ի քանի մի տառից և ՚ի բառից՝ առ առաւել հարթ և դիւրիմաց գործել զմթութի և զխրթնութի։ Բովանդակուն վկայաբանութեն ուղիղ համառօտեալ է և ՚ի յայսմաւուրս ուրաքանչիւր ազգաց։

Անուանս երանոս ըստ տօնացուցից՝ ՚ի Հ. գրի երինոս. ՚ի Ծ. երէնիոս. ՚ի յն. իրինէոս. որ թարգմանի խաղաղական կամ անդորրաւէտ։ Իսկ քաղաքն սիրմիոյ՝ որ և սիրմիոն, ՚ի Հ. գրի սերմոյ կմ սերմիոյ. ՚ի Ծ. սերմեայ. ՚ի յն. սիրմու։ Պակասէր ՚ի Ծ. անուն դետոյն՝ սաւոն. ոչ և ՚ի տպ" Հ. բայց կայ ՚ի ձեռ". որ ՚ի յն. և ՚ի լտ. է՛ զի գրի սաու, կմ սաուս, և է՛ զի սաւոն կմ սաւի. այն է ռամկօրէն սաւա. որ առ նոր Ծագիրս կոչի պօզղօթա. ոչ և զանուն արտեմիս կամրջի՝ լատին մեկնաբանն եդեալ էր պասենդիս. այն է ՚ի ստորին պաննոնիա, որ և երկիր ռասկեաց կմ ռասից։

ՎԿՄ.

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Գէորգեայ զօրավարի ։

Տ. Յ. Լ. ապր. 23. Ճառընտ. Ա. ՉՂԷ = ՌԷ. և ՃՂ = ՃՂԷ ։ Ն. ՃՂԷ = ՃՃԴ ։ Բոլլանդեանն Յա‑ Յեպրիլ. Գ. հատ. ապր. էջ. 100 = 163. և 9 = 45 ։ Անդրէաս կրետացի ։ Գրեգոր կիպրացի ։ Մետափրաստէս ։ Սուրիոս ըստ Լիպոմանոսի . Ա ։ (1)

ԳԱՐԾԱՆԻ ՔՐԻՍՏՈ‑նէութեն՝ տիեզերահռչակ մեծ վկայն քնի և քաջ նահատակն Գէորգիոս , որ և ըստ գեղեցիկ անուանն Թարգմանութեն երկրագործ , այս է գործասէր մշակ առաքինութեն , էր հայրենեօք յազգէն գամրաց՝ ըստ կապադովկացւոց , 'ի սահմանաց մաժակայ՝ կեսարիա կոչեցելոյ , զաւակ բարեպաշտ ծնողաց յազատ տանէ ։ Հայր նր գերոնտիոն կոչեցեալ յոմանց , և զօրավար կարծեցեալ , ասի արեամբ նահատակեալ . իսկ մայրն սրբութբ վախճանեալ 'ի պաղեստին՝ ուր էին նր կալուածք բազում . վյ և ինքն գէորգ՝ ըստ գրելոյ անդրէի կրետացւոյ , ծննդեամբ էր կապադովկացի , և սննդեամբ պաղեստինացի ։

Նա զի ոմն 'ի կեսարիա կապադովկացւոց ,

նոյնպէս և 'ի կեսարիա պաղեստինոյ կայր երևելի լեգէոն զօրաց հռովմայեցւոց, նաև և գէորգ 'ի մանկութէ 'ի զինուորութե. և գրեալ 'ի դաս ականաւոր գնդի՝ որում անուն էր անիկիոն կամ անիկիտոն, ըստ անյաղթից, յառաջադէմ լինէր յոյժ և գովելի յաչս արքունի զօրավարաց. և յաւուր հասակի պատանեկութե տրիբունական պատուոյ ընդունէր, իբրև հազարապետ և ժողովրդապետ 'ի դասս զօրագլխաց և աւագանւոյ 'ի դուռն կայսեր: Նաև ապա վս̃ բազում քաջութե և հաւատարմութե իւրոյ զկոմսութի իսկ ը̃ռունէր յինքնակալաց հռովմայ 'ի դիոկղետիանոսէ և 'ի մաքսիմիանոսէ, մինչդեռ էր երիտասարդ քսան կամ երեսուն ամաց. որ էր պատուոյ բարձակցաց կայսեր և անմիջական պաշտօնէից և պատուական ասպետաց:

Բայց գեր 'ի վեր քան զարտաքինս զայս շուք մեծութե՝ սքանչելի գտաւ քաջն գէորգ 'ի հանդէս ա̃ծպաշտութե և յա̃ծային առաքինութե. որով արտափայլեաց յաւուրս հալածանաց եկեղեցւոյ, և եղև ախոյեան հաւատոյ ը̃դէմ անհաւատից՝ արեամբ չափ նահատակեալ: Մինչ զի առաւել սմա անկ, քան այլում, գրեալն յեւսեբեայ կեսարացւոյ յեկեղեցական պատմութե. (Դպր. Ը. Գլ. 5.) յասելն:

* Ընդ ելանել հրովարտակի 'ի նիկոմիդիա ընդդէմ եկեղեցեաց, ոմն ոչ յաննշանից, այլ՝ Ծական պատուոյ ձոխութե երևելի յոյժ,

ա̃ծայ-

ածային իմն նախանձու շարժեալ, և ջեր-մութեամբ հաւատոյ վառեալ, զհրովարտակն զայն 'ի հրապարականն և յերևելի տեղ-ւոջ քաղաքին կախեալ՝ 'ի բաց կորզեաց, և իբրև զանխրատ և զապիրատ պատառեաց ձեռօք իւրովք · և այն՝ մինչդեռ 'ի քաղաքի անդ դեգերէին երկոքին ինքնակալքն · յո-րոց առաջինն երիցագոյն սեբաստոս զառա-ջինն ունէր 'ի մէջ ամենեցուն զիշխանութեան աստիճան · իսկ միւսն զերկրորդն : Որդ իբրև սա յառաջ քան զամենեսին 'ի քաղաքի անդ այսպիսի մեծագործութիւն փայլեաց, վաղ-վաղակի զայն տանջանս կրեալ, զոր կար-ծելի էր 'ի վերայ ածել նորա յետ այնպիսի հա-մարձակութեան, զզուարթութիւն և զհանդարտութիւն ոգւոյն մինչև ցշունչն յետին պահեաց || :

Այլ մեք 'ի բուն անդր պատմութիւն նորին դեր-դեալ մատիցուք՝ ընդ սաստկագոյն և անընդ-դիմելի վկայաբանութեան հին ժամանակաց մե-րոց և յունաց և հռովմայեցւոց · որ ունի այսպէս :

Դիոկղետիանոս կայսր հռովմայեցւոց՝ ժանտ ոմն և գազանաբարոյ գտեալ ընդդէմ քրիս-տոնէական հաւատոյն, և յաղթեալ յոյժ 'ի մոլորութենէ սնոտի կռոցն խաբէութեան, ու-նէր իւր սիրելի զոմն միախորհուրդ յանձնու-թեան, որոյ անուն էր մագնենտիոս՝ երկրորդ թագաւորութեան նորա (2), և մոլեգնէր 'ի վերայ քրիստոնէից՝ զայրացեալ կռոցն ամպարշ-տութեամբ : Նա սոքա երկոքեան խորհուրդ ժպրհութեան առնէին ընդ միմեանս՝ բառնալ

ամենեւին զքրիստոնէից պաշտօնն, և բռնա-
դատել զամենեսեան պաշտել զկռոցն պատ-
կերս, և մանաւանդ զպղծոյն ապողոնի. և
ըստ անօրէն խորհրդոյն գրեցաւ զառաջինն
հրովարտակ յերեսաց Թագաւորին այսպ.
„ Դիոկղետիանոս միշտ պատուեալ սեբաս-
տոս, յաւիտենական ինքնակալ, ը՟ ա՟մ իշ-
խանութիս և ազ՟ս հռովմայեցւոց, զօրավա-
րաց, դատաւորաց, իշխանաց, և ա՟մ պետաց
իշխանութեց՝ որ ը՟ ձեռամբ մերով իցէք,
խնդալ: Ա՟ զի համբաւ եհաս յա՟ծեղէն
լսելիս մեր, և անչափ խռովեցոյց զմեզ, զի
հերձուած ամպարշտութե քրիստոնէից զօ-
րանայ. զոր ծնաւ մարիամ կին ոմն հրէայ
զանուանեալն յի՟ս, իբրև զա՟ծ երկրպագեն.
իսկ զապողոն զմեծ ա՟ծն և զերմես և զդիո-
նիսոս և զերակլէս և զդիոս, յորոց ձեռն
ածիս մերոյ խաղաղութի պարգևի, թշնա-
մանեն և հայհոյեն. իսկ զանուանեալն ք՟ս՝
ոչ զա՟ծ պատուեն, զոր հրեայքն ոչ զմա-
հապարտ և զմոգ խաչեցին: Ա՟կ հրաման
տամք, զա՟մ քրիստոնեայս՝ ուր և գտցին,
զարս և զկանայս, ը՟ ա՟մ քաղաքաց և գաւա-
ռաց, 'ի խոշտանգանս դառն արկանել. զի
զոհեսցեն ա՟ծոցն մերոց, և ուրասցին զմոլո-
րութիւն զայն: Իսկ որք հաւանին, արժանի
առնել Թողութե. ապա թէ ոչ՝ դժնդակ մա-
հու սրոյ և հրոյ մատնել զն՟ս. զի գիտաս-
ցեն, թէ անփոփոխելի են հրամանք մեր. և
եթէ ոք մերոց ա՟ծեղէն հրամանացս հեղ-
գասցի, զվճիռ նոցին ընկալցի „:

Եւ

Ու երբև այսպիսի գիր հրամանի լի հայհոյութե̄ եղաւ ընդ ա̄մ տեղիս, մեծ հալածումն յարուցին 'ի վ̄ր հօտին ք̄ի. մինչ զի և բազումք 'ինչանաւոր մարդկանէ 'ի սաստիկ տանջանացն թուլացեալք՝ անկանէին 'ի հաւատոց. բայց և անթիւ բազմութիւք առաքինեաց հաստատեալ ընդդեցին զանձինս՝ ընտրել զմահ և զօտարութի, քան լսել անօրէն հրամանայ ։ Յայնժամ առաւել ևս մոլեգնեալ դիոկղետիանոսի՝ խորհեցաւ զօրացուցանել զիւր հրաման հաւանութ̄ ա̄մ ատենակալաց իւրոց և մեծամեծաց. վ̄յ հրաման ետ կոչել առ ինքն զա̄մ արքունի հրապարակն, ո̄ր զծերակոյտն՝ հանդերձ զօրապետօք և այլ աւագանւով. և առաջի արար ն̄ց զխորհուրդ իւր, թէ որպէս զա̄մ ազգս քրիստոնէից սատակեսցէ. և ինքնին հրապարակախօս եղեալ անօրէնն՝ ասէր.

Ինձ այսպէս թուի սիրելիք իմ, թէ չիք այլ ինչ պատուհական՝ ո̄ք առ ո̄ծն բարեպաշտել. վ̄ զի 'ի ձեռն ն̄ց մեզ թագաւորուի, և ա̄մ մարդկան փրկութի պարգևի. վ̄յ իրաւունս համարիմ այսուհետև ո̄ծոց մերոց հանապազորդ զզոհն մատուցանել՝ ոչ միայն մեզ, այլև ա̄մ մահկանացուաց 'ի վ̄ր երեսաց երկրի. ապա եթէ գտցին քրիստոնեայք ապստամբք յա̄ծոց մերոց, ա̄մ հնարիւք 'ի տանջանս արկանել. մինչև նոցա դժնդակ կրօնքն լուծցին, և յիշատակ ն̄ց կորիցէ ազգի ազգի մահուամբ ։

Ու այս միաբան ա̄մնի տային թագաւորին՝

որ

որ զնովաւն կային․ և մեք կամակար մտօք գովելի դատիմք զմեծ թգրութե ձերոյ զանձանման հրամանօք և զխնամօք․ և կամիմք պատուել զանմահ դին, ոչ և զձեր զօրութիդ․ արդ այսուհետև եթէ գտցի ոք, որ լոկ ՚ի միտս իւր անուանեսցէ զքո, ամենևին ՚ի մահ մատնեսցի։ Արդ՝ զայս ամպարշտութն խորհուրդս երկնեալ թագաւորին առենիւն հանդերձ՝ միանգամ և երկիցս և երիցս, որ քան զոր պնդէր հաստատէր ՚ի նոյն միտս անօրէն առաջարկուն, և պէսպէս հնարս մեքենայէր ընդդէմ քրիստոնէից։

Յայնժամ ծագեաց ոչ ՚ի խաւարային գիշերի աստղ լուսաւոր և մեծապայծառ, որ քնի պատուական մարգարիտն էր, գէորգիոս քաջ զօրականն քնի՝ երևելին ՚ի մէջ ասպետաց, (որ եղև խմոր, և քնի զօրական, առ է առաջին վկայարանն ծառայոցն,) փարատել զմէգ և զմառախուղ բազմածութեան․ և երկնային և կատարեալ խորհրդովն պայծառ յօրինել զտիւ փրկական քարոզութե, որդիս լուսոյ և տունջեան ներգործելով զամ արժանաւորս ՚ի ձեռն Աստնութե իւրոյ։ Քանզի ՚ի լսել անդ զառաջինն զխորհուրդն անօրէնութե՝ արհամարհեաց զապառնալիսն դիոկղետիանոսի պղծոյ, և զմոլութի իշխանացն և զօրավարացն․ և ոչ զառաջի եդեալ տանջանացն ամենևին ինչ փոյթ արար, հայեցեալ յևս ահագինսն՝ որ ՚ի հանդերձելումն․ վոյ և ուշ եդեալ յառաջիկայ գործն ածասէր անձամբ խօսէր ընդ անձին՝ ասելով․

Գէորգի՛, ընդէ՞ր կաս դատարկս. ահա տէր
կարդայ 'ի հարսանիս նորա մտանել. առա-
գաստն բացեալ է, ընթրիքն պատրաստեալ
են. ե՛կ, ընդէ՞ր յամես. մուտ յառաջ քան զփակել
դրանն. քանզի մերձ առ մեզ է Քրիստոս, որ վասն
մեր խաչի համբերեաց. աղաղակէ և ասէ.
մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմար-
մինն, և զոգին ոչ կարեն սպանանել ։ Յի-
շեա՛ Գէորգիոս զաւետարանական վարդապետու-
թիւն, և զտէրունական զանսուտ աւետիսն,
զոր ասաց. եթէ ոք խոստովանեսցի յիս ա-
ռաջի մարդկան, խոստովանեցից և ես զնա
առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է ։ Ո՛ համա-
րիր ինչ լաւ Գէորգիոս զառժամանակեայ
զանցաւոր աշխարհս, որ է ստուեր երկնային կե-
նաց. և մի՛ մեծ ինչ գրեր զընդունային փառս
աշխարհիս առ երկնային յուսոյն. զի ամենայն փառք
մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ են. սակաւիկ
մի համբերեա՛, և ընդ հրեշտակսն յաւիտե-
նական 'ի կեանս դասիս ։

Զայս առ ինքեան խօսէր երանելին դաշն
ձայնիւ, մինչև փոքր 'ի շատէ առնուլ և մօ-
տակայից զձայն նորա. և այսպիսի խրատու-
ոն հաստատեալ զմիտսն, և զառաջիկայ
տանջանարանացն բազմութեան ծաղր արարեալ,
զանձն օրինակ առաջի դնէր հաւատացելոց,
զճշմարտութեան հանդէս գործով քան բանիւ
յանդիման քարոզելով ։ Քանզի վաղվաղա-
կի զինչս և զստացուածս իւր բաշխեալ յաղ-
քատս և 'ի տնանկս, և որպէս ըմբիշ արի մեր-
կացեալ, ապա 'ի վերջնում աւուր խորհր-
դոյն՝

դոյն՝ թերեւս յետ պատառելոյ զոր 'ի հրապարակի եդեալ զարքունի հրովարտակն, յօժարութե միջամուխ լինէր յարքունի խորհրդարանն. եւ լուեալ զերկրորդումն անօրէն խորհրդոյ ատենին, յոտն եկաց յանդիման թագաւորին եւ իւմ աւագանւոյն՝ որ նստէին, եւ այլ իշխանաց եւ զօրաւորաց՝ որ կային առաջի ինքնակալին. աղաղակեաց մեծաձայն, եւ ասէ.

Աւասիկ ես. ես քրիստոնեայ եմ ով թագաւոր, որ խրախուսեալ 'ի ճշմարիտ եւ յերկնաւորն ած եւ 'ի թագաւորն մեր յս քս, ոչինչ զանգիտեցի առաջիկայ լինել ատենիս. եւ կամ 'ի միջի ձերում զարմացեալ ընդ ձախողակի խորհուրդս ձեր վն ծառայիցն քի, եթէ զոր յանցանս գտիք 'ի նս՝ կորուսանել զազգ արդարոց. եթէ յանցանք ինչ իցեն պաշտել նց զած կենդանի, եւ 'ի նորին հրամանէ կալ նրանց մարտինաւորաց 'ի ծառայութե հաւատարիմ. ապա թէ ոչ՝ ապշութի զիս ունի է այդչափ մոլորութիդ ձեր՝ որ վն կռոցն ունիք, եւ ոչ ճանաչէք զմիայն կենդանին ած եւ զարարիչն ամ արարածոց, որ եւ զթագաւորութիդ իսկ ետ ձեզ։ Արդ ով թագաւոր եւ ամ աթոռակիցքդ, մի մոլորիք 'ի պատրանաց դիւաց. քանզի ածք՝ որ զերկինս եւ զերկիր ոչ արարին, կորիցեն։ Իսկ մեք քրիստոնեայք միոյն այ հօր երկիրպագանեմք, եւ միածնոյ տն յի քի որդւոյն այ, որով ամ ինչ եղեւ, եւ մի հոգւոյն սբ այ խոստովանիմք. երրորդութի կատարեալ 'ի միում ածութե եւ

թա-

թագաւորութե՛ն. որով աստ կեամք բարեպաշտութ՟բ, և յետ փոխանելոյն ակն ունիմք կենացն յաւիտենից ։ Բայց պաշտամունք հեթանոսաց ստուգութ՟բ արժանի են այպանելոյ, զի զմի ա՟ծութիւն 'ի բազմա՟ծուն դարձուցանեն առասպելեօք. քանզի և ա՟մ աւանդք ն՟ց զդից իւրեանց բարբանջմունք են, և չիք ինչ 'ի դոսա ճշմարտութի՟ն. զի գործք սատանայի են գտողի ա՟մ չարեաց, որք ընկղմեն զերկրպագուս իւրեանց 'ի սատակումն և 'ի կորուստ ։

Յայնժամ հայեցաւ 'ի նա մագնենտիոսն՝ որ էր երկրորդ թագաւորին և սիրելի, և ասէ ցն՟րն իբրև յանծանօթս. զի՞նչ անուն է քո, և կա՞մ ո՞ ես դու՝ որ այդչափ յանդգնութի՟ն ունիս ։ Պ՟խնի ետ քաջ նահատակն, և ասէ. նախ և առաջին անուն իմ քրիստոնեայ է. բայց 'ի մարդկանէ գէորգիոս կոչիմ, այսպէս հաճոյ թուեցեալ ա՟յ իմոյ. զի պա՛րտ է ինձ պտղաբերել իմոյ տ՟ն երկնաւորին բազմապատիկ պտուղ բարեպաշտութե՛ն յայգւոջ նո՟ր ։ Իսկ դիոկղետիանոս թագաւորն՝ որ քաջ ճանաչէր զառաքինի զօրավարն, հայեցեալ 'ի նա իբրև վիշապ անդնդային՝ ասէ. գէ՛որգիէ, ուսեալ է մեր վ՟ս քո, եթէ յիմաստութե՛ն և 'ի քաջութե՛ն ընտիր ես հանապազ, և պատուո՛յ արժանի լեալ ես յարքունական խնամոց մերոց. վ՟յ մատուցեալ զոհեա՛ ա՟ծոց մերոց, զի մի՛ չարաչար կորիցես. այլ մանաւանդ վայելեսցես 'ի սէր մեր պատուով և առաւել ևս մեծութ՟բ 'ի ձեռն մերոյ

խնամածութ՟ե, և առ մեզ համարձակութ՟ի ունելով. այլ այդ ընդունայն համարձակու-
թ՟իդ չէ՛ ինչ քեզ յօգուտ :

Գէորգիոս ասէ. երանի՛ թագաւոր՝ թէ դու ինձ լսէիր, և ճանաչէիր զմիայն ճշմա-
րիտն ա՟ծ, զի և երկնից թագաւորութ՟են արժա-
նի լինէիր. բայց արդ իշխանութ՟իդ քո առ-
ժամանակեայ է. և խոստմունքդ քո և ողո-
քանքդ անզօրք են շարժել զիս 'ի բարեպաշ-
տութ՟ենէ ա՟յ իմոյ. պատիւ քո քեզ լիցի, և
խոստմունքդ քո՝ որոց քեզն հաւանին. բայց
ես զՔ՟ն ունիմ զերկնաւոր թագաւորն, որ
տայ ինձ զփառս և զյաղթութ՟ի հակառա-
կորդին և պաշտօնէից ն՟ր :

Իսկ սրտմտեալ թագաւորն՝ հրամայեաց հա-
նել զնա 'ի հրապարակ ասպարիզին, և կա-
խել զփայտէ, և գեղարդեամբ հարկանել
զնա, և յերկիր թափել զաղիս ն՟ր (3) : Իսկ
իբրև զայն արարին, ցայտեաց արիւն զմար-
մնովն ս՟բյն. բայց գեղարդն իբրև զանագ կ՟մ
զկապար ծալեցաւ յետս : Յայնժամ ասէ
ս՟բն Գէորգիոս. գոհանամ զքէն Ք՟ս, զի
զսուր պաշտօնէից սատանայի յետս դարձու-
ցեր մինչև իսպառ, և զօրութ՟ի բռնա-
ւորիս՝ որ 'ի վ՟ր իմ՝ քակեցեր : Իսկ լցեալ
բարկութ՟բ դիոկղետիանոս՝ հրամայեաց իջու-
ցանել 'ի փայտէն, և տանել 'ի բանտ. և
զոտս ն՟ր չարաչար պնդել 'ի կոճեղ, և դնել
քար մեծ 'ի վ՟ր կրծոց նորա. մինչև չորից
արանց աշխատութ՟բ բառնալ զքարն : Իսկ
իբրև եդին զքարն, 'ի ձայն մեծ աղաղա-
կեաց

կեաց ս̃րբն գէորգիոս , եւ ասէ . գոհանամ
զքեն ա̃ծ բարձրեալ , զի արժանաւորեցայ
բեւրինս ծանուունս ընդունել 'ի վ̃ր սրտի իմոյ ,
որ հաստատէ 'ի քեզ զանփոփոխելի խոստո-
վանութ̃իս :

Իսկ 'ի վաղիւն անդր արկանէ սատանայ 'ի
սիրտ դիոկղետիանոսի , եւ որ ը̃ նմա աթո-
ռակիցքն էին , եւ հրամայեցին առնել անիւ
մի մեծ , բոլանդակ ա̃մ հնարիւք կազմեալ .
եւ արարին զանիւն որպէս զհիւսնական մա-
մուլս՝ յա̃մ կողմանց սրով պատեալ . եւ հրա-
մայեաց բռնաւորն ածել զս̃րբն յանիւն : Իսկ
իբրեւ ածին զնա քարշելով 'ի տեղին , հայե-
ցեալ նորա յայն դժնդակ մեքենայ այնպէս
կազմեա̃լ յարուեստից սատանայի , ասէ . Տ̃ր
յ̃ս ք̃ս գոհանամ զքեն , որ կոչեցեր զիս 'ի
վկայականս յայս . արդ՝ դու , որ 'ի մէջ երկուց
աւազակացն խաչեցար , եւ զմահ ճաշակե-
ցեր , զի փրկեսցես 'ի մահուանէ զմարդն ,
տուր ինձ անվեհեր զխոստովանութ̃ն 'ի ժա-
մուս յայսմիկ , եւ պահեա զոգիս իմ 'ի հնա-
րից բանսարկուին : Իսկ զայս իբրեւ ասաց ,
ընկեցաւ յանիւն . եւ չարաչար ըմբռնեալ կո-
տորեցաւ մարմին նր̃ :

Զայն տեսեա̃լ թագաւորին հանդերձ մագ-
նենտիոսիւն՝ համբարձ զձայն իւր , եւ ասէ .
գիտացէ՛ք ամենեքեան , զի ո՛չ գոյ այլ ա̃ծ ,
բայց ապողոն եւ պոսիդոն եւ երակլէս եւ դիոս
եւ մեծն արտեմիս . արդ ո՞ւր է ա̃ծն գէոր-
գեայ , ընդէ՞ր ոչ եկն եւ փրկեաց զնա 'ի ձե-
ռաց իմոց : Իսկ հրամայեաց այնպէս թողուլ
զնա

զնա 'ի տանջանարան անուրին. և ինքն չո-
քաւ, զի ճաշեսցէ:

Իսկ 'ի տասներորդ ժամու եղև հնչիւն մեծ իբրև ահագին որոտման, և ձայն յերկնից՝ որ ասէր. քաջալերեա՛ց գէորգիոս, և լե՛ր աներկիւղ. քանզի բազումք հաւատալոց են քև լիս: Իսկ որք պահէին զնա դահիճքն, երկիւղիւ զարհուրեալ 'ի ձայնէ հնչմանն փախեան. և ասէին. մե՛ծ է ա̃ծն քրիստոնէից: Եւ հրեշտակ տ̃ն իջեալ 'ի բաց ելոյծ զնա 'ի տանջանարանէ անտի. և ողջանդամ հաստատեալ զմարմին նր̃՝ ողջունեաց զնա, և ասէ. ուրա՛խ լեր գէորգիոս, և հաւատա՛ 'ի զօրացուցիչն քո, և զընթացս քո կատարեա՛. քանզի աւասիկ մեք սպասեալ մնամք, զի տացի քեզ պսակն կատարեալ խոստովանութե̃:

Եւ յարեաւ ս̃րբն գէորգիոս ուրախութ̃բ գոհանալով զա̃նէ. և շրջէր սաղմոսելով, բարձր առնեմ զքեզ ա̃ծ իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան. ուղի՛ղ արա զգնացս իմ տ̃ր, և մի՛ տիրեսցեն ինձ ա̃մ անօրէնութի̃ք: Եւ եկեալ 'ի տեղի ինչ՝ ուր կայր պատկերն ապողոնի, անդ եգիտ զթագաւորն և զմագնենտիոս և զամենայն բարեկամս թագաւորին, զի զոհս և երկրպագութի̃ս մատուցանէին կռոցն: Եւ մերձ եղե̃լ գէորգիոս՝ աղաղակեաց ասելով. ծանի՛ր զիս թա՛գաւոր, և ինև զառ յինէն աւետարանեալն ա̃ծ, որ փրկեաց զիս 'ի ձեռաց քոց և 'ի մահաբեր տանջանարանացն, զոր պատ-

բաստեցեր ինձ 'ի կորուստ՝ կարծելով կորուսանել նովաւ. և արդ 'ի միտ առ, զի մոլորեալ ես՝ կռոցդ զոհ մատուցանելով ։

Իսկ թագաւորն հայեցեալ 'ի նա՝ ասէ. ո՞վ ես դու ։ Ս̅րբն ասէ. ես եմ Գէորգիոս, որ հրամանաւ քով պրկեցայ յանիւն. զոր և թողեր զիս յանիւն՝ կարծելով մեռեալ. և այժմ եկի ցուցանել քեզ, թէ կարող է ա̅ծն իմ փրկել զիս 'ի մահուանէ. զոր դու կարծեցեր իբրև թշնամանել ։ Յայնժամ թագաւորն հրամայեաց ունել զնա. և մերձ կացուցեալ՝ հայէր ստէպ, եթէ արդարև նա՞ իցէ. և ասէր. թուի՛՝ եթէ ստուեր բանսարկուին է, (այս է՝ ուրուական ցնորք մեռելոյն չարագործի,) և խաբէ զմեզ ։ Իսկ մագնենտիոսն ասէ. նման նր̅ է ։ Ս̅րբն ասէ միւսանգամ. ես եմ Գէորգիոս ծառայն ք̅սի. մի՛ մոլորիք 'ի կուռսդ, այլ գիտասջի՛ք՝ եթէ կարող է ք̅ս և 'ի մեռելոց յարուցանել զորս յուսան 'ի նա, և 'ի ձեռաց ձերոց փրկել ։

Իբրև տեսին կենդանի զնահատակն, և լուա՛ն 'ի նմանէ զայս ա̅մ Անատոլիոս և Պրոտոլէոն ստրատելատք, հաւատացին յա̅ծ ա̅մ ընտանեօք իւրեանց. աղաղակէին և ասէին, մե՛ծ է ա̅ծն քրիստոնէից. և նա միայն է ա̅ծ. և չի՛ք այլ ոք՝ որ ա̅ծ իցէ, բայց նա միայն է ա̅ծ օրհնեալ յաւիտեան ։ Իսկ իբրև լուաւ զայս թագաւորն, հրամայեաց զամենեսեան զն̅ա արտաքոյ քաղաքին տանել յանապատ տեղիս, և կոտորել 'ի բերան սրոյ ։ Եւ նք̅ յերթալն իւրեանց 'ի տեղի կատարմանն՝ միաբան աղա-

ղակէին ասելով․ տ̃ր յ̃ս ք̃ս ընկալ զոգիս մեր խաղաղութ̃բ, և կարգեա՛ 'ի քո անփոփոխելի յանանց արքայութ̃իդ, համարելով մեզ զփոքր մի խոստովանութ̃ես մերոյ զառ 'ի քեզ հաւատս՝ յարդարութ̃ն և 'ի թողութ̃ն մեղաց մերոց․ և այնպէս կատարեցաւ վկայութ̃ն նց̃ 'ի ք̃ս յ̃ս ։ (4)

Յայնժամ լուեալ և Թագուհւոյն աղեքսանդրեայ վ̃ն ո̃րյն գէորգեայ՝ հաւատոց և ինքն 'ի տ̃ր․ և եկեալ առ Թագաւորն՝ համարձակութ̃բ խոստովան լինէր ասելով․ ես քրիստոնեայ եմ, ո̃յն գէորգեայ աղախին ։ Եւ 'ի լսել Թագաւորին յանհնարին սրտմտութ̃է՝ եհարց զնա մագնենտիոս, և ասէ․ ասա՛ մեզ Թագուհի աղեքսանդրէ, ընդէ՞ր զք̃ս գովեցեր, և զա̃ծսն արհամարհեցեր ։ Իսկ նա ասէ․ մեծագունին փափաքեալ՝ զպակասն արհամարհեցի․ և զայս ասացեալ՝ դարձաւ յապարանս՝ ունելով զա̃յ երկիւղն 'ի մտի, և զհաւատսն անշարժ ։

Իսկ Թագաւորն յանհնարս մտեալ՝ չարաչար տանջանօք խորհէր զքէն վրիժուց հատուցանել գէորգեայ․ վ̃յ հրամանն ետ արկանել զո̃րն 'ի գուբ կրոյ՝ անշէջ կոչեցելոյ․ զոր և 'ի նոյն ժամու շիջուցին, և Թաղեցին զնահատակն 'ի կրի անդ (5), Թողեալ անդէն զերիս տիւ և զերիս գիշերս ը̃ հրամանի Թագաւորին․ որ և կարգեաց 'ի վ̃ր պահապանս սաստիկ պատուէրանաւ, զի մի ոք խորհեսցի հանել զնա անտի․ մինչև խարշատեսցի խալա, և ոսկերք ն̃ր մնասցեն ։

Եւ

Եւ յետ երից աւուրց ասէ Թագաւորն . երթիցեն զօրականք , եւ հանցեն զոսկերս քունամահին , եւ զգուշութ̃ք անհետ արասցեն . ոպ̃ զի մի ոք գիտասցէ զնմանէ ։ Իբրեւ գնացին զօրականքն 'ի գուբ կրոյն , եկին եւ բազումք 'ի տեսանել . եւ իբրեւ 'ի բաց առին զկիրն , գտաւ ո̃ք վկայն ողջանդամ , ոչինչ ունելով ամենեւին արատ 'ի մարմնի իւրում . քանզի հրեշտակ տ̃ն էր ը̃ նմա՝ լինելով նմա օգնական 'ի հրամանէ ք̃ի ։

Իբրեւ տեսին զնա , ամենեքեան աղաղակէին ասելով . մե՛ծ է ա̃ծն քրիստոնէից ։ Եւ լուեալ զայս Թագուհւոյն աղեքսանդրեայ , եկեալ եւ նա 'ի տեղին՝ 'ի ձայն բարձր ասէր . մե՛ծ է ա̃ծ՝ որ 'ի քրիստոնեայս , եւ ո՛չ գոյ այլ բաց 'ի նմանէ . հաւատացին եւ զօրականքն՝ որք հանին զնա 'ի կրոյն կենդանի ։ Եւ իբրեւ լուաւ զայս Թագաւորն , հրամայեաց բազմութ̃ե զօրականաց երթալ ունել զ̃որն , եւ ածել առաջի իւր ։ Իբրեւ բերին զկենդանի նահատակն , նստեալ Թագաւորն յատենի հանդերձ մեծամեծօք իւրովք՝ ասէ ցնա . ասա՛ մեզ , ո՞ կենդանացոյց զքեզ ։ Պ̃նի ետ ո̃ք վկայն . եթէ լսէք , դարձեալ ոչ հաւատայք . բայց գիտեա՛ Թա՛գաւոր , զի յ̃ս ք̃ս որդին ա̃յ պահէ զիս յա̃մ տանջանաց քոց . եւ զամենեսեան՝ որ կարդան առ նա , փրկէ յորոգայթից սատանայի ։

Յայնժամ Թագաւորն հրամայեաց առնել կօշիկս երկաթիս , որ ունէր բեւեռս սուրս ուղղորդս , եւ շողացուցանել , եւ առնուլ ու-

նելեօք և աղուցանել սբ՟յն , և ընթացուցա-
նել զնա ։ Իսկ նր՟ վկայն ոչ կարելով գնալ
յընթացսն՝ ասէ յինքեան ․ ընթացի՛ր Գէո՛ր-
գիէ 'ի թողեալ քեզ վիճակն ․ և համդերձ
արտասուօք աղօթէր ․ Տ՟ր Ած՟ իմ , փրկիչ նե-
ղելոց , ապաւէն հալածելոց , համբերութի՟՝
որոց վս՟ անուանդ քո են չարչարեալ , մի՛ թո-
ղուր զիս , այլ շնորհեա՛ ինձ համբերութիւն
մինչև իսպառ ․ մի՛ ասասցէ թշնամին իմ , թէ
յաղթեցի նմա ։ Եւ 'ի կատարել նորա զա-
ղօթսն՝ եկն առ նա ձայն յերկնից , որ ասէր ․
քաջալերեա՛ Գէորգիոս , զի ես ըն՟ քեզ եմ
'ի փրկել զքեզ ․ և նոյն ժամայն բժշկեցաւ
մարմին նր՟ ։ Հրամանն ետ թագաւորն զայն
որ տանել զնա անդրէն 'ի բանտ ․ և 'ի վա-
ղիւն անդր կոչեաց զնա առաջի իւր ․ և ասէ ․
մինչև ցե՞րբ սրտապնդեալ յանդգնութբ՟դ՝
տանջանացդ համբերես , և մանաւանդ իսկ
մոգութբ՟ կախարդութե՟դ 'ի դիւաց օգնա-
կանութբ՟ , պատրել զմեզ կարծելով ․ հա-
ւանեա՛ց ինձ այսուհետև , և զոհեա՛ ած՟ոցն ։
Իսկ սբ՟ն ասէ ցթագաւորն և որք ըն՟ նմայն
էին ․ ես ըն՟ունելով զօգնականութի՟ն Ա՟յ իմոյ ,
զա՟մ տանջանս ձեր յանձին կրելով՝ կացի
առաջի ձեր ողջացեալ , վկայելով զզօրութե՟
Ա՟յ միայնոյ ․ և պատրաստ եմ դարձեալ առ
ա՟մ տանջանս ձեր վս՟ առ 'ի քս՟ հաւատոյն
աներկբայ յուսով ․ իսկ դուք Ո՛րպիսի յոյս
ունիք , որք անշնչոցն պիղծ կռոցն՝ որք ոչինչ
են , ըն՟ունայն պաշտօն մատուցանէք ․ և արդ
զի մի՛ կորստեան նց՟ հաղորդ լինիջիք , և ա-

ռա

ռաջի տիեզերաց ամօթ կրեսջիք , ամաչեցէք այսուհետև մծս անուանել զդուսա , որք գի-ջութէք և արբեցութէք և պատերազմօք և սպանութէ առ սակաւ մի կացեալ են յԾիս յայսմիկ , և յաւիտեան տանջին յանշէջ հուրն , որ կայ և մնայ ամենեցուն՝ որք պաշտեն զնա ։

Եւ լուեալ զայս Թագաւորն՝ հրաման ետ հարկանել զքերան սրբյն ․ զի ուսցի ասել չԹշնամանել զդիս և զինքնակալս ․ և ապա հրամայեաց արջառաջլօք յանխնայ զմարմին նր հարկանել ։ Եւ իբրև հարին զնա 'ի բազում ժամս , ասէ ցնա Թագաւորն իւրովքն հանդերձ ․ մինչև յերբ Թ'շուառական ոչ հաւանիս և զոհես մեծ ածոցն , զի պատուի մեծի արժանի եղիցիս և կեցցես ։ Իսկ սրբն ասէ ․ ես կենդանւոյն այ հանապազօր պատարագ օրհնութե մատուցանեմ , որ փրկէ զիս 'ի ձեռաց ձերոց , և արժանի արասցէ փառաց և պատուոյ երկնաւորի ․ երանի Թէ դուք ինձ հաւանէիք , և միայնոյ ճշմարտին այ երկիրպագանէիք ։

Յայսմ վայրի գրեն այլք արտաքոյ ճառընտրին մերոյ , Թէ ըզ խրատու մագնենտիոսի ետ կոչել դիոկղետիանոս զերևելի կախարդն աԹանասիոս ․ որ պատրաստեաց երկուս բաժակս դեղատուութե ․ մի Թէ՝ եԹէ զառաջինն արբցէ գէորգ , ունիցի փոխիլ 'ի մտաց և հնազանդիլ կամաց արքայի ․ և եԹէ զերկրորդն , իսկոյն մեռանիցի ։ Արբ սրբն զերկոսին իսկ բաժակս՝ կարդալով զանուն

ա՟մն և խաչակնքելով. և ինչ ոչ փոխեցաւ 'ի մտացն, և ոչինչ վնասեցաւ: Ընդ այս ըն-քանչացեալ կախարդին՝ հաւանեցաւ լինել քրիստոնեայ, եթէ յարուսցէ գէորգ և ըզ-մեռեալ ոք 'ի բազում ժամանակաց. զնոյն և մագնենտիոս պնդէր. Թող ասէ արասցէ այդպիսի հրաշս, և հաւատասցուք յա՟ծ նր՟: Յայնժամ ասեն յարոյց բանիւ ա՟ծ և աղօ-թիւք զմի 'ի մեռելոց առաջնոց 'ի շիրմէ ան-տի, որ կայր առաջի նց. որով հաւատացին 'ի ք՟ս բազումք 'ի տեսողաց. իսկ թագաւորն բարկացեալ՝ ետ սակրով սպանանել զաթա-նասիոս և զյարուցեալն 'ի կեանս, վ՟ս քա-րոզելոյ նց համարձակ զք՟ս ա՟ծ: 'Ի վ՟ր բե-րէ և Ճառընտիր մեր միաբան ը՟ այլոց, թէ յայնժամ հրաման ետ թագաւորն վերստին արկանել զգէորգ 'ի բանտ, և ինքն գնաց յարքունիսն: (6)

Եւ յորժամ էր ս՟բն 'ի բանտին, ա՟մն որ հա-ւատացեալքն գային առ նա 'ի գիշերի. տա-լով ինչս բանտապետին՝ մտանէին և ուսա-նէին 'ի ս՟բյն զառ 'ի ք՟ս հաւատսն. և որք հիւանդութի՟ս ունէին 'ի պէսպէս ցաւս ըմ-բռնեալք, առ նա ընթանային. և կոյրս բե-րէին առ նա. և նա աղօթիւք բժշկէր զն՟ս: Գղիւկերի ումեմն շինականի տեսանել զբժշ-կութի՟ս՝ զոր առնէր գէորգիոս, եկն անկաւ առաջի նր, և աղաչէր կենդանացուցանել զարջառ մի նր զանկեալն ը՟ արօրով. և յասել ս՟բյն, երթ, զի կենդանի գտցես զարջառն քո, գնաց այրն, և դարձաւ անդրէն աղա-

ղա-

զակելով. մեծ է ածն քրիստոնէից. հաւա-
տամ յածն գէորգեայ:

Եւ յասել Գղիւկերի զայս՝ նոյնժամայն կա-լեալ զնա դահճացն և զօրականացն, ածին առ Թգրն վսն իրացն՝ որ եղև: Իսկ Թգրն խռո-վեալ՝ և զանունն անգամ ոչ կամեցաւ հար-ցանել զառնն, այլ հրամայեաց զնա ան-դամ անդամ կոտորել: Իսկ նա կատարելով 'ի խոստովանութին քսի՝ աղաղակեաց ասե-լով. ած ճշմարիտ՝ որ արարեր զամ, մի զիս անտես առներ զանօթս անպիտան. վսն զի հաւատացի քեզ հօր և որդւոյ և հոգւոյդ սբյ. և երկնչիմ, զի առանց մկրտութե եմ. բայց կամեցայ մկրտիլ, այլ ոչ ժամանեցի. արդ կամելով քո տր փրկեցայց. վսյ աղա-չեմ զքեզ տր յս, զարիւն կատարման իմոյ համարեա ինձ 'ի մկրտութի. զի ած սրտա-գէտ ես, և քննիչ խորհրդոց և յօժարութե մտաց: Եւ եկն նմա ձայն յերկնից՝ ասելով. եկ Գղիւկերի ուրախութբ առ իս. քանզի կատարեալ ես յիս. (կմ ոմն այլք գրեն, զի կատարեալ լիցիս առ իս.) և այսպէս կատա-
րեցաւ սբն:

Յետ այսորիկ չոքան դարձեալ ասացին Դիոկ-ղետիանոսի, թէ բզմք երթալով 'ի բանտն՝ ուսանին 'ի գէորգեայ. որ զամենեսեան առ ինքն ձգէ՝ բժշկելով յոյժ զբազմութի հի-ւանդաց: Յայնժամ հրամայեաց ածել առ իւր զսբ վկայն՝ կամելով խստագոյն ինչ հրա-ման տալ վսն նորա: Իսկ Մագնենտիոս ասէ ցթագաւորն. ազգ քրիստոնէից դժուարա-

մահ են և վիձօղ. վասնորոյ մի՛ խստիր գնայցես, այլ մանաւանդ ողոքանօք աղաչեմ զայրդ պատուական, և բերկրեցուցես զնոսա պատուովք, զի թերևս ըստ խորհրդոյ քում զոհէ աստուածոցն։ Իսկ սուրբն Գէորգիոս 'ի գալն յարքունիս՝ սաղմոսէր և ասէր. Աստուած յօգնել ինձ նայեաց, և Տէր յընկերել ինձ փութա՛։

Եւ յորժամ յանդիման եղև ատենին, սկսաւ ողոքել զնա Թագաւորն, և ասէ. Երդուեալ 'ի Տէր արեգական և յամենայն աստուածսն, եթէ լսես ինձ Գէորգիոս, և մատուցեալ զոհես անմահ դիցն, շնորհեմ քեզ գանձս բազումս, և երկրորդ ինձ կոչեսջիր 'ի Թագաւորութեան իմում. քանզի խնայեմ 'ի քեզ և գթամ 'ի քեզ, կամելով զկեանս քո մանաւանդ՝ քան եթէ մեռանել չարաչար ոչ հաւանելովդ ինձ։ Իսկ սուրբ վկայն հեգնելով ասէ. բարիոք խօսիս այժմ. ընդէ՞ր ոչ ասացեր ինձ յառաջագոյն այդպիսի բանս. յետ այսչափ չարչարանաց արդ ո՞ւր խնդրեցից զհատուցումն թշնամանաց իմոց։ Ասէ Թագաւորն. շնորհեա՛ ինձ հօր քո զյանցանս զայս, և զոհեա՛ աստուածոցն. և ընդ ինև պատուեսցիս յարքունիս։

Իսկ սուրբն Գէորգիոս ասէ ընդ խաբս. որովհետև վասն իմ զղջացար Թագաւոր, արդ ես հաճեցից զմիտս քո. ո՞ւր են աստուածքն քո, երթիցուք առ նոսա (7)։ Ընդ այս ուրախ եղև Թագաւորն յոյժ, պատրեալ իբրև զմանուկ տխմար 'ի դաղտնի բանից սրբոյն. և հրամայեաց ամենայն պետացն և զօրացն հանդերձ ամենայն հրապարակաւն գալ 'ի տաճար կռոցն։ Եւ քարոզն

րողն կարդայր այսպէս . ահա խորհրդակից գալիլեացւոց գէորգիոս՝ մեծին ապողոնի հաւանեցաւ զոհել . և հեթանոսքն ամենեքեան ձայնր առեալ աղաղակէին, ապողոն յաղթեաց, թագաւոր դիոկղետիանոս յաւիտեանս թագաւորեա, մեծ են ա՟ծք թագաւորի ։

Իսկ իբրև մտին ամենեքին 'ի տաճար կռոցն, 'ի լռութիւն լինել ամենեցուն առհասարակ ը՟ս հրամանի թագաւորին, 'ի մէջ եկաւ ս՟բն գէորգ . և հայեցեալ 'ի պատկերն ապողոնի՝ ասէ . ասա ինձ, դու աստուած ես, և պա՞րտ է մարդկան զքեզ պաշտել ։ Իսկ որ կայր ոգին պիղծ 'ի պատկերն՝ գոչեաց ասելով . ոչ եմ ես ա՟ծ, և ոչ որ ը՟դ իս են . այլ՝ մի է ա՟ծ ճշմարիտ, որ արար զա՟մ, և որդի ն՟որ յի՟ս ք՟ս, և ս՟բ հոգին . իսկ մեք հրեշտակք ն՟որ ապստամբ եղեալ 'ի նմանէն՝ դևք անուանիմք ։ Ասէ ս՟բն գէորգիոս . և իբրև ոչ էք ա՟ծք, ը՟դէ՞ր մոլորեցուցանէք զմարդիկ 'ի պաշտօն ձեր . զիա՞րդ և այժմ համարձակիք կալ այսր, իմ ծառայի ա՟յ գոլով աստ, յորոյ վ՟ր անուանեալ է անուն ք՟ի ճշմարտի որդւոյ ա՟յ ։

Իսկ նոյնժամայն եղև խռովութիւն մեծ, և գոչիւն դիւացն ողբալոյ . և ա՟մ կուռք տաճարին անկեալ փշրեցան, զնշան ք՟ի առնելով ս՟բյն գէորգեայ ձեռամբ իւրով զոյգ ը՟ բանիցն ։ Իսկ տեսեալ քրմացն հեթանոսաց զեղեալսն՝ ընթացան 'ի վ՟ր ս՟բյն, և կալեալ զնա՝ աղաղակէին ասելով . բարձ

թա

Թագաւոր զկախարդս զայս , զի մոգութբ՟ զամենեսեան մոլորեցոյց , եւ զբզմն՟ կործանեաց ։ Նա սրտմտեալ Թագաւորն՝ դիմացն մոլեգնութբ՟ եւ քրմացն առաջնորդութբ՟ , ասէ ցսբ՟ն · չարագլուխ , եւ մմ՟ կախարդութբ՟ եւ մոլորութբ՟ լի , ոչ յանձն կալար ինձ՝ զոհել աստուծոյն · եւ զի՞ գործեցեր զայդ ։ Սէ վկայն ասէ · անմիտ եւ անամօթ , ես զիմ պատարագ կատարեցի առ քս՟ ճշմարիտ ածն՟ իմ · վս՟ այնորիկ մմ՟ ոծքն ձեր ապականեցան ։ Գոնեա այժմ գիտեա՛ Թագաւոր , զի դիք քո ոչ իւրեանց եւ ոչ այլ ումեք կարեն օգնել ինչ · քանզի կուռք են անմռունչք , եւ դեւք մոլորեցուցիչք զանմիտ մարդիկ · այլ այժմ՝ ի քն՟ի ծառայէ կործանեցան ։

Յայնմ վայրի՝ իբրեւ լուաւ Թագուհին Աղեքսանդրէ զեղեալսն , ընթացաւ առ Թագաւորն · եւ առաջի նր՟ աղաղակէր , եւ ասէր · Ա՛ծ գէորգեայ անյաղթ զօրակնի քո քաւեա՛ զիս զմեղաւորս , եւ մի՛ յիշեր զանգիտութե՟ եւ զանզգամութե՟ իմոյ զգործս որ՟ ած՟ · այլ յիշեա՛ զկատարեալ զիմ փոփոխումս եւ ըզդարձ առ քեզ · եւ տուր ինձ մասն եւ բաժին ը՟ քրիստոնեայս եւ ը՟ ծառայսն քում գէորգեայ ։ ՚Ի նմին ժամու հաւատացին եւ այլ բազմութիք ՚ի տր՟ ։

Յայնժամ դառնացեալ Թագաւորն՝ վաղվաղակի վճիռ եհատ ՚ի վերայ սբ՟յն գէորգեայ եւ աղեքսանդրէի , ասելով ցն՟ա վկայն · ահա ամենաչար գէորգիէ եւ զԹագուհին մոլորեցուցեր , եւ արկեր ը՟ մահուամբ · արդ երթ

եւ

և դու է նոյն զարժանի առ ՚ի յածման հայ-
հոյութեն դատաստան ընկալ ։ Այլ եւ մեր-
ծանել զդատակնիքն գրեալ օրինակ զայս .
Գէորգեայ խորհրդակցի գալիլեացւոց , մծ
արհամարհելոյ զհրաման ինքնակալուն մե-
րոյ , ոչ երկրպագելով ապողոնի , այլ և զթա-
գուհին եւս է ինքեան մոլորեցուցել՝ զածսն
հայհոյելով , տամ զվճիռս զայս . սրով ըզ-
գլուխ նր կտրել հրամայեմ՝ է աղեքսան-
դրեի առ ՚ի նմանէ մոլորելոյ ։

Այլ նոյնժամայն առեալ զնա զինուորացն՝
հանին արտաքոյ քաղաքին . և երթայր յաս-
պարէզ կատարմանն յօժարութբ աղեքսան-
դրէ սբ վկայիւն հանդերձ . և աղօթելով է
միտս իւր առ տր ՚ի շարժել շրթանցն միայն ,
և աչօքն է երկինս հայելով . նստաւ ՚ի տեղ-
ւոջ միում . և արձակեաց զոգին խաղաղութբ ։
Իսկ զսբն գէորգիոս տարան ՚ի տեղի կա-
տարմանն . յայնժամ ասէ սբն ցզօրականսն .
անսացէք ինձ սակաւիկ մի եղբարք , որպս զի
կացից յաղօթս . և իբրև թողացուցին նմա ,
հայեցեալ յերկինս՝ տարածեաց զձեռս իւր ,
հառաչեաց մեծապէս , և ասէ . Տէր ած իմ ,
որ յառաջդ ես քան զամ յաւիտեանս . յոր ես
ապաւինեցայ ՚ի մանկութենէ իմմէ՝ ՚ի գեղե-
ցիկ և ՚ի ճշմարիտ ակնկալուե քրիստոնէից ,
և յանսուտ խոստումն ծառայից քոց . ա-
նանց փանձ՝ որ յառաջ քան զխնդրելն մեր
շնորհես մեզ զպարգևս քո ձրիս , որք խըն-
դրեմն զքեզ . լուր ինձ տր . և որ ետուր ըզ-
վկայութենս խոստովանութի՝ մինչև իսպառ
համ

համբերել, նոյն այժմ ընկալ զոգի իմ, և փրկեա զիս յօդային և 'ի պիղծ հոգւոյն. և հանգո զիս ը՟ն սիրելիս և ընդ ս՟բս քո. և թողութի շնորհեա հեթանոսացս՝ զոր գործեցին ընդ իս և ը՟ն ծառայս քո. լուսաւորեա զն՟ս 'ի գիտութի ճշմարտութե, զի զամենեսեան կամիս՝ զի կեցցեն. առաքեա զօգնականութի քո այնոցիկ՝ որք կարդան զանուն քո. տուր նոցա զերկիւղ քո, և զառ 'ի ս՟բս քո զցանկութի սիրոյ. զի զյիշատակս ն՟ց կատարելով՝ նմանեսցեն հաւատոց ն՟ց. ո՟վ զի արժանի լիցին ը՟ն ն՟ս երկնաւոր կենացն, և արքայութեն յաւիտենից. զի քո է արքայութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ յաւիտեանս, ամէն:

Եւ յետ աղօթիցն խոնարհեցուցեալ ծունր՝ ձգեաց զպարանոցն. և ասէ, կատարեցէք զհրամանս թագաւորին. և հարեալ սրով՝ 'ի զօրականէն՝ կատարեցաւ 'ի տ՟ր ս՟բ վկայն ք՟սի գէորգիոս՝ յամի տ՟ն 303. յեօթներորդ ժամու՝ յաւուր ուրբաթու զկնի զատկին, յամսեանն ապրիլի ի՟գ (8). որ է ը՟ յայսմաւուրաց ահեկանի ժ՟ը. այլ 'ի Ճառընտիրն Մ. գրի մեհեկանի ի՟գ. և 'ի Ն՝ արեգի ի՟գ. ը՟ համեմատութե շարժական տումարի ազգիս յայլևայլ դարս:

Իսկ զվախճան պատմութեես այսպէս կնքէ առաջին հեղինակ հարազատ վկայաբանութե ս՟բյն. * Ես պասիկրատէս ծառայ ս՟բյն գէորգեայ՝ զհետ գնացեալ իմոյ տ՟նն, տ՟մ ստուգութբ կարգեցի զյիշատակարանս ||: Թող

զայլ

զայլ անհարազատ պատմութիւն, զոր յանուն նորին Պասիկրատեայ յօդեցին անհաւատարիմ և շաղփաղփ անձինք. ընդ որում ճոխագոյն ունիմք նշանակել ՚ի ծանօթութիս ։ Արտաքոյ է ամենայն պատմութեանց և աւանդութիւնն այն ՚ի պատկերահանից յառաջ եկեալ, որպէս թէ սրբոյն Գէորգ սպանեալ իցէ զվիշապ մի, ազատեալ զկոյս զոմն թագաւորազն՝ զեդեալն առաջի գազանին ՚ի կերակուր. զի այդ է չփոթել զպատմութիւն Գէորգեայ զօրավարի ընդ Թէոդորոսի զինաւորի, հանդերձ խառնութեամբ անցից Մարինեայ կուսի, և Աղեքսանդրեայ թագուհւոյ ։ Բայց եթէ ՚ի հոգևոր միտս իմասցի ոք զոտնակոխ լինելն սատանայի ՚ի սրբոյն Գէորգեայ, որպէս և յամենայն քաջայաղթ վկայից ։ Ոչ զի՝ ՚ի կարգի բուն պատմութեանն՝ Վիշապ անդնդային կոչի Դիոկղետիանոս, որպէս և զյազկերտ կոչէ շարականն՝ իրաւամբք ։

Իսկ զմարմինն սրբոյն Գէորգեայ, որպէս ասի յոմանց, առեալ տարաւ ընդ պատուիրելոյ նորա ծառայ նորին յերկիրն Պաղեստինու ՚ի քաղաքն Դիոսպօլիս, այն է Լիւդիա. կամ ընդ այլոց ՚ի փոքրն Հռամա, որ և Ռամուլա (ռամկօրէն՝ Ռէմլէ). ուրանօր ՚ի վանս Ասորւոց ցուցեալ լինէին նշխարք սրբոյն մինչև ՚ի ժգերորդ դար. կայ անդ մինչև ցայսօր և եկեղեցի Հայոց յանուն սրբոյն Գէորգեայ ։ Այլ զնշխարաց սրբոյն սփռելոց զկնի յարևմուտս՝ բազում են բանք առ Լատին մատենագիրս, հանդերձ բազմապատիկ յիշատակարանօք

սքան

սքանչելեաց նր յամ տեղիս 'ի վր հիւան-
դաց, կուրաց, կաղաց, և ամ ախտաժետաց
և վտանգելոց. Թող զերևելի երևելի յաղ-
թութիւս պատերազմաց բարեխօսութբ նր
զօրավարիս. որ է գլուխ ամ սքանչելագործ
և երագահաս նր զօրավարաց. յորոյ անուն
կարգեցան և եղբայրութիք և միաբանութիք
պէսպէս, և զանազան թփրութիք կալան զնա
յաւանձին պաշտպան իւրեանց. մինչև այլ-
ազգեաց անգամ պատուել զնա՝ խտրէլէզ
կոչմամբ, որպէս թէ հզօր և երագահաս
եղիաս. ( որ կամ ծագի 'ի բառիցս գատըր
կիմհազըր, և էլիաս. և կամ առեալ է յա-
ւուրց տօնի նր 'ի գալարութէ գարնայնոյ,
ըստ որում խըտըր զգալարին ևս յայտնէ: )
Արդ՝ ուր այլք տօնախմբեն զնրն գէորգ ըն
աւուր կատարմանն 'ի գարնայնի, մեք տօ-
նախմբեմք ըն աւուր փոխադրութե նշխա-
րաց նր 'ի լիդիա, որ եղև յաշնան 'ի նոյեմբ.
3. Իջցի և չիք առ մեզ տօն նրյ յաւուրս յի-
նանց. նմին իրի եդաւ 'ի նախընթաց օր վա-
րագայ խաչի. ուստի և պահք վարագայ՝ կո-
չի և պահք նրյն գէորգեայ:

## Սքանչելիք սրբոյն Գէորգեայ:

Թողեալ զանքաւութի հրաշից գէորգեայ
զօրավարի՝ որ 'ի յետին դարս, զքանի մի զատ
'ի նախնեաց աւանդեալս նշանակեցուք. և
նախ զայն՝ որ կայ 'ի հին ճառընտրի մերում,
թարգմանեալ 'ի մեծէն գրիգորէ վկայասէ-
րէ.

րէ · զոր և յոյնք և լատինք վիպեն հաւաս-
տեաւ · և գտանի համառօտեալ նաև յօրի-
նակս ինչ յայսմաւուրաց մերոց ։ (9)

Ս․րբ՝ էր յԾին պամփիղագոնիոյ յեզր սեաւ
ծովու կմ եւքսինեան պոնտոսի՝ մօտ 'ի քա-
ղաքն ամաստրիս կմ ամաւրիս , տաճար հոյա-
կապ յանուն սրբյն գէորգեայ զօրավարի · ուր
'ի սկզբան տասներորդ դարու՝ այր ոմն բա-
րեպաշտ լևոն անուն 'ի զինուորական կար-
գէ , համդերձ կնաւ իւրով թէոփանեիւ՛ ջերմ
սիրով կանխէր 'ի տաճար սրբյն , և յամ սրտէ
ծառայէր նմա · վսյ իբրև ծնաւ զաւակ ա-
րու , եւ մկրտել զնա 'ի տաճարի սրբյն , և կո-
չեաց յանուն նր̃ գէորգ · և կրթեաց զնա 'ի
հրահանգս ածպաշտութեան և ուսումնասի-
րութե ։

Նաև եղև յաւուրս կայսերութե կոստանդեայ
պերփիռուժենայ՝ 'ի յարձակիլ արևմտեան
ազգաց բարբարոսաց , բուլղարաց , հունգա-
րաց և գթաց՝ ասպատակուք մինչև 'ի սահ-
մանս թագաւորեալ քաղաքին կոստանդնու-
պօլսոյ , պատրաստեցաւ ընդդէմ նց 'ի պատե-
րազմ սպարապետն կայսեր ղևոնդիոս փո-
կաս տիւրանոս կոչեցեալ ( որ բռուռն կմ բռ-
նաւոր ) · և 'ի ժողովիլ ամ արանց գրելոց 'ի
զինուորութի , լևոն պափղագոնացի քանզի
էր այր ծերացեալ՝ փոխանակ իւր հարկե-
ցաւ առաքել զմիամօր որդին իւր զգէորգ
պատանին · վսյ մտեալ ծնողացն 'ի տաճար
սրբյն գէորգեայ՝ յանձն արարին նմա զոր-
դեակն իւրեանց · քե՛զ ասեն յաւանդ տամք

մկ

ծվսր̃դ ա̃յ զմանուկն մեր , զոր քեզ նուիրե-
ցաք , և յանուն քո անուանեցաք . զի խաղա-
ղութե̃ ողջանդամ դարձուսցես զդա 'ի պա-
տերազմէ , և փառաւորեսցի անուն քո :
Եւ 'ի լինել սաստիկ պատերազմի յամի տ̃ն .
917 . առ քաղաքաւն և գետովն աքեղոյայ՝
մերձ 'ի ծովափն ամբրակեան ծոցոյ , յետ լի-
նելոյ ահագին կոտորածի յերկոցունց կող-
մանց , 'ի պարտութե̃ մատնէր գունդն յունաց
կայսերական , և 'ի փախուստ դառնայր .
թող զանկեալսն և զգերեալս բազում յոյժ :
Յայնմ վայրի 'ի գերութի̃ վարեցաւ 'ի բուլ-
ղարաց և մանուկն գէորգ պափղագոնացի ,
և անկաւ 'ի ձեռս ուրումն երևելի իշխանի
և ազգապետի . որոյ տեսե̃լ զմանուկն կայ-
տառ և ժիր 'ի գործս սպասաւորութե̃ , կար-
գեաց զնա 'ի ծառայութի̃ իւր՝ լինել յան-
դիմանակաց . որ և հաւատարիմ և սիրելի
յոյժ լինէր յաչս տ̃ն իւրոյ : Իսկ ծնօղք նո̃ր
յետ լսելոյ զխորտակումն արքունի բանա-
կին՝ իբրև ոչ լուան ինչ զզաւակէ իւրեանց ,
ը̃ մեռեալս համարեցան զնա . վ̃ոյ անմխի-
թար սգով ողբս առեալ կոծէին , և գանգա-
տանօք յոգւոց ելանէին համապազ ը̃դէմ
ո̃բյն գէորգեայ . զի ո̃չ պահեաց զ'ի նա յանձ-
նեալ զաւակ իւրեանց . և ոչ ոք 'ի բարեկա-
մաց կարէր զն̃ա մխիթարել : Եւ ինքն իսկ
մանուկն գէորգ ստէպ յիշէր յերկրի գերու-
թե̃ իւրոյ զո̃րն գէորգ , և հառաչելով ասէր .
զիա̃րդ թողեր զիս 'ի ձեռաց ո̃րդ ա̃յ , և ոչ
դարձուցեր խաղաղութե̃ առ ծնօղս իմ , ը̃

որում ուխտիւք խնդրէինն 'ի քէն ։
Եւ եղև 'ի հասանել աւուր տօնի նորին Գէորգայ 'ի միւսում տարւոջ՝ յամի 918 . 'ի նախընթաց երեկոյի՝ յորժամ նախատօնակ առնէին լուցմամբ ճրագաց, արծարծեցաւ սիրտ ծնողաց Գէորգ պատանւոյն . և նստեալ ընդ մերձաւորս իւրեանց յընթրիս՝ արտասուօք խառնէին զկերակուրս և զըմպելիս յիշատակաւ զաւակի իւրեանց , զոր ոչն տեսանէին 'ի կոչունս անդ՝ որ 'ի պատիւ նորին ։ Օ այս իբրև լսէին բարեկամքն և ազգայինքն , ողբակից լինէին , և դարձեալ բանս մխիթարականս խօսէին ընդ նմա ։

Գիտակ լինէր և մանուկն 'ի գերութեան անդ յերեկոյին յայնմիկ, զի վաղիւն տօն էր նորին ։ Եւ էր ինքն յայնմ պահու 'ի խոհարարոցին խարոյկ արկեալ յաղագս սպասաւորութեան Թերմոնի . զի սովոր իսկ էր ազգապետն այն ջերմ ըմպել զգինին (10) . արդ կայր մանուկն թախծեալ արտասուելով , և տխրեալ խորհէր 'ի միտ իւրում , թէ 'ի տան մերում յաւուր յայսմիկ հանդերձեալ են կատարել զյիշատակ նորին ծնօղքն իմ . և որք մերձ են անդ բարեկամքն , այժմ 'ի սեղանի բազմեալ լինին . ես ողորմելի և գերի նշդեհս յանցեալ տօնին ընդ նմա էի . տօնելով և ուրախանալով ընդ այնոսիկ՝ որ յամենասեպհական տաճար նորին ժողովէին , պաշտօնակից և եղանակակից լինէի . և այժմ յերկրի այլազգեաց 'ի գերութեան և 'ի ծառայութեան պանդխտիմ ։ Ես միայն նորա ն̃յ գտայ անարժան՝ յայնցա-

նէ , որք մտանէին 'ի պատուական տաճար քո . արդ այսօր կատարեն ծնօղքն իմ զյիշատակ քո սբ , և զիս ոչ տեսանեն . յոյժ տխուր է և մայրն իմ , տեսանելով զազգականս և զբարեկամս մեր՝ զի ժողովին 'ի տօն քո , և զիս ոչ տեսանէ , և ոչ լսէ զձայն սաղմոսելոյն իմոյ ։

Զայս և առաւել քան զսոյն որոճէր 'ի միտս , և կարօտանօք ասէր . ո՛ղջ լերուք դուք հասակակիցք իմ և սաղմոսակիցք և եղանակակիցք , և այժմ 'ի տօնի սբ վկայիս մի՛ մոռանայք զօտարս յօտարութեան և զգերիս 'ի գերութեան ։ Նա զայսոսիկ ասելով՝ լռութեամբ արտասուս հեղոյր գետաբար յաչաց իւրոց . զի ոչ համարձակէր հառաչանօք ողբալ յահէ այլազգեացն ։ Մինչդեռ զայս խորհէր մանուկն գէորգ , ձեպէին զնա ծառայակիցքն , զի փութացուսցէ զանօթ ջերմին , և բարձցէ 'ի կայծականցն . և նորա սրբեալ զարտասուս յերեսաց իւրոց , եառ վաղվաղակի զանօթն 'ի խարուկէ անտի , յորժամ եռայր ուժգին յորձանօք , տանել առ տր իւր ։

Ով զարմանալւոյ սքանչելեացս . զի ահա մինչդեռ երթայր մանուկն , և անօթն 'ի ձեռին իւրում , յանկարծակի յափշտակեցաւ 'ի բարձունս . և յական թօթափել բերեալ զնա սբն կացոյց 'ի մէջ տան ծնողացն , յորում կոչեցեալքն բազմեալ էին , ունելով 'ի ձեռին իւրում զանօթն ջերմին . և այնպէս յորձանս առնոյր տակաւին , իբրև թէ արդ բարձեալ է 'ի կայծականց հրոյն ։ Զոր իբրև տե-

տեսլեն ծնօղքն նր՟ , և այնոքիկ՝ որ բազմեալ էին , հիացման յոյժ , և մեծաձայն բարբառ արձակեցին . և յառաւել ուրախութ՟են և յանկարծակի խնդութ՟են ծնօղք նր՟ անկան անմռունչ 'ի վր՟ երկրի . և այլքն գիրկս առեալ համբուրէին զնա . և սկսան հարցանել վս՟ գալստեան նր՟ ։

Իսկ մանուկն ծանուցեալ զտուն իւր և ըզծնօղսն և զբազմականս , տարակուսեալ՝ եղև 'ի հիացման մեծի . ապա եկեալ 'ի միտս իւր՝ պատմէր վս՟ անձին իւրոյ , այսպէս ասելով ։ Զայս միայն գիտեմ , զի 'ի ժամուս յայսմիկ 'ի գերութ՟ե և 'ի ծառայութ՟ե էի յերկրին բուլխարաց . և անօթս այս՝ զոր տեսանէք 'ի ձեռին իմում , 'ի խոհարարանոցի կայծականցն առի զսա , և կամեցայ ելանել առ տ՟րն իմ . և յելանելն իմ ը՟ սանդուղս ապարանիցն՝ տեսի անդ այր մի 'ի վր՟ երիվարի 'ի ձև զինուորի , որ առաւել քան զարեգակն պայծառացան շառաւիղք նորա . և յանկարծակի յափշտակեաց զիս ։ Իսկ ես եղէ իբրև 'ի հիացման մեծի , և ոչ գիտացի այլ ինչ , բայց միայն լուայ ձայն իբրև 'ի ծփանաց ջուրց՝ որ հարկանէ զգարշապարս երիվարի . և յական թօթափել աստ գտայ՝ ուր տեսանէք զիս . քանզի էի 'ի մէջ ճառագայթից լուսոյ , և ոչ գիտէի՝ թէ ո՞ւր եմ ես , մինչև հարցիք զիս ։ Զայս իբրև լուան , վաղվաղակի արտաքս ելեալ 'ի տանէն՝ խնդրէին գտանել զփրկիչ և զկեցուցիչ մանկանն . այլ 'ի զուր . զի երագահաս նահատակն ընդ

վճարել զգործն՝ լեալ էր աներևոյթ ։
Իսկ ծնօղք մանկանն իբրև սթափեցան յապ-
շութէ , գիրկս արկեալ համբուրէին զնա ,
և հանդերձ արտասուօք ասէին ․ արդարև
սա՞ իցէ որդեակն մեր ․ ճշմարի՞տ որդեօք
իցեմք , եթէ յանուրջս ․ զի եթէ ճշմարիտ ,
տեսաք զլոյս աչաց մերոց և զմխիթարիչն
սրտից մերոց ․ գոհանամք զպարգևողէն այ
և զմեծ վկայէ նր ․ և որք լայիք ը մեզ յա-
ղագս կորստեան որդւոյս մերոյ , այժմ ու-
րախացի՛ք ը յայտնիլ լուսոյ մերոյ ։

Յայնժամ յաւելաւ և միւս ևս սքանչելիք ․
զի կամեցան ժողովեալքն ըմպել յանօթոյն՝
որ կայր 'ի ձեռս մանկանն ․ և չէր մեծ , այլ
փոքր յոյժ՝ 'ի պէտս ըմպելեաց միոյ մարդոյ ․
իսկ որ ժողովեալ էին 'ի յիշատակ նրյն , բազ-
մութի յոյժ ․ և ամենեցուն բաւական եղև՝
որք հանդիպեցան անդ ․ և ոչ երբէք փոխե-
ցաւ 'ի ցրտութի յայնքան երկարութէն ժա-
մուն , այլ եռայր 'ի ձեռս մանկանն զօրութբ
նրյն ։

Ապա առեալ ծնողաց զմանուկն՝ ընթացան
'ի տաճար նրյն ․ և խնդուէ արտասուօք թա-
նային զյատակս եկեղեցւոյն , և գոհութիս
և փառս վերառաքէին այ ամ բազմութբն
հանդերձ ․ միանգամայն և թողութի խնդ-
րէին 'ի նրյն վր անպատշաճ գանգատա-
նացն , զոր արարեալ էր նր ըդէմ նրյն առ-
կարօտանաց զաւակի իւրեանց ։ Իսկ եղին
զանօթն զայն 'ի տաճար նրյն 'ի պահեստի ․
և որք տեսանէին , զգուշութն երկրորդէին ,

եթէ

եթէ սքանչելի է ա̃ծ 'ի ս̃րբս իւր . և զամբակումայն յիշելին զանցս , որ 'ի ձեռն հրեշտակի յափշտակեալ 'ի վայրկենի յեդեմ 'ի բաբելոն՝ մատուցանէր զճաշն դանիելի . զի յար և նման էին սքանչելիքն . զոր ինքնին քարոզէր այնու հետև երջանիկ մանուկն գէորգ մինչև 'ի յետին ծերութի̃ իւր . և 'ի բերանոյ նր̃ առեալ գրէր զայսոսիկ նախկին պատմող բանիցս :

Միով դարու յառաջ քան զնախագրեալ անցս եղև և այն սքանչելիք , զոր գրէ ս̃րբն գրիգոր դեկապօլսեցի ժմկակից՝ լուեալ 'ի հաւատարիմ անձանց : Յերկրին Թեբայիդոյ եգիպտացւոց յաւանն կոչեցեալ էլ գարմ , ( որ Թարգմանի այգի , ) կայր մեծակառոյց եկեղեցի յանուն ս̃րբյն գէորգեայ 'ի վաղ ժամանակաց շինեալ հանդերձ մենաստանաւ . և եղև զի գլխաւոր ամիրայն երկրին ասորւոց առաքեաց յաւանն յայն զեղբօրորդի իւր հանդերձ ծառայիւք 'ի վերակացութի̃ իրիք գործոյ . և եկեալ առն 'ի տեղին՝ հրամայեաց ծառայից իւրոց իջուցանել զկարասին 'ի տաճար անդր ս̃րբյն , և անդ մուծանել զերկոտասանեսին ուղտս , և տալ նց̃ ճարակ առաջի իւր :

Յայնժամ մատեան քահանայք տաճարին առ իշխանն , և աղաչելով խրատէին զնա չարհամարհել զտունն ա̃յ , և չթողուլ ուղտուց մտանել 'ի ս̃րբ սեղանն : Նա յանսաստեալ նր̃ և 'ի կատարել զբան հրամանի իւրոյ , իբրև մտին ուղտքն յեկեղեցին , նոյնժամայն

անկեալ սատակեցան առհասարակ. ընդ որ զահի հարեալ բարբարոսին՝ ետ հանել զգեշ նոցա արտաքս. և ինքն զտեղի կալաւ 'ի տաճարի անդ՝ տեսանել զպաշտամունս քրիստոնէից: Իսկ զի էր օր տօնի, 'ի հասանել ժամուն հարկեցան քահանայքն սկիզբն առնել սբյ պատարագի յառաջիկայութեան այլազգւոյն:

Իսկ ահա տեսանէր այրն, զի քահանայն՝ որ էր 'ի բեմի, առեալ 'ի ձեռս զմանուկ փոքրիկ՝ եզեն զնա իբրև զգառն, և զարիւնն հեղեալ 'ի սկիհն՝ զմարմինն եբեկ և եդ 'ի մաղզմայն. ետես և 'ի ժամ հաղորդութեան, զի քահանայն բաշխէր 'ի մսոյ և յարենէ մանկանն զենլոյ առ մի մի 'ի մերձեցելոցն: Իսկ յարձակման պատարագին իբրև բաժանէին մասն ժողովրդեան, մատուցին և իշխանին բաժին մի. և նա ասէ. զի՞նչ է այդ. քահանայն ասէ. մասն է 'ի հացէն, զոր մատուցանեմք 'ի սբ խորհրդեան: Յայնժամ բարկացաւ իշխանն, և ասէ. 'ի հացէ աստի՞ մատուցեր ա՛յ թշուառական՝ մարդախոշոշ և արիւնարբու. ո՞չ ես իսկ տեսի, զի տղայ մանուկ անմեղ և անարատ առեալ զենէր և յօշեցեր. և զմիս նորա և զարիւն ճաշակեցեր դու և ժողովուրդ քո. և տակաւին կան 'ի շրթունսդ մնացուածք արեան անմեղին: Յայնժամ ասէ քահանայն ահիւ և դողութբ. տէր, ես այր մեղաւոր եմ՝ անարժան պաշտօնեայ ահաւոր խորհրդոյս. զոր չեմ արժանի այդպէս բացերև տեսանել, որպէս

տե

տեսեալ է քո ը̄ յայտնութեն ն̄յ. վ̄յ հաւատամ յա̄ծ, զի մեծ ոմն ես դու ։ Եւ աստի եղև այլազգւոյն դառնալ 'ի հաւատս, և մկրտիլ յեպ̄սէ սինայ լերինն. ուր և կրօնաւորեալ պախոմէոս անուամբ զամս երիս՝ գնաց զկնի 'ի դուռն ամիրային հօրեղբօրն իւրոյ. և յայտնեալ զհաւատս իւր՝ նահատակեցաւ քարկոծմամբ ։

Շատ սքանչելիք եղեն երբեմն 'ի մեծ եկեղեցւոջ ս̄բյն գէորգեայ մօտ 'ի ռէմլէ և 'ի յոպպէ, ուր համարի թաղեալ զառաջինն մարմինն ս̄բյն ։ Եւ նախ 'ի հիմնարկութե այնր տաճարի առ մեծն կոստանդիանոսիւ, կին ոմն այրի 'ի յոպպէ գնեաց սիւն մի յղել 'ի պէտս տաճարի ս̄բյն. և յոչ առնուլ յանձն վերակացուի գործոյն բառնալ զայն սիւն 'ի նաւ և տանել, մինչդեռ թախծեալ կայր տառապեալ այրին, երևեցաւ նմա ս̄բն 'ի ձև զօրավարի. և յանդիմանն̄ր գրեաց մատամբ 'ի վ̄ր սեան, թէ կանգնեսցի սիւնս յաջակողմն տաճարին. և առխթեալ զսիւնն 'ի ծով անդր հանդերձ այրւով, 'ի վաղիւ անդր հասոյց 'ի նաւահանգիստն, ուր այլ սիւնքն բերեալ էին. զոր տեսեալ վերակացուի գործոյն, և սքանչացեալ ը̄ հրաշս ս̄բյն՝ զետեղեցոյց 'ի հրամայեալ տեղին ։

Սարակինոս ոմն եկեալ 'ի տաճար անդր, և տեսեալ զպատկեր ս̄բյն գէորգեայ նկարեալ 'ի տախտակի, ելից զաղեղն և ձգեաց զնետ 'ի պատկեր անդր. և ահա անդէն շրջեցաւ նետն 'ի նետաձիգ անդր, և խոցեաց չարա-

չար զձեռս նր̅ . յորմէ ոչ կարաց բուժիլ բազում դեղօք , մինչև անկաւ 'ի մահիճս , և մերձեցաւ 'ի դրունս մահու ։ Յայնժամ խորհուրդ հարցեալ 'ի քահանայէ տաճարին' ետ բերել զպատկեր նըյն 'ի տուն իւր , և կախեաց կանթեղ առաջի նր̅ . և 'ի ձիթոյ անտի եօծ զձեռս իւր , և վաղվաղակի բժշկեցաւ . որ և ընկալեալ զհաւատս ք̅ի' մկրտեցաւ , և կատարեցաւ վկայական մահուամբ ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Երկին ազգք են վկայաբանութե̅ց սրբյն գէորգեայ զօրավարի յամ̅ ազգս . մին հարազատ , և միւսն անհարազատ . յորոց ընտրութե̅ քաջ աշխատասիրեաց ը̅ կարի բաբեպրոք բոլլանդեան , որ երևի ունել առանձին ջերմեռանդութե̅ առ սբ̅ն գէորգ . բայց և մեզ թուացոյց տեղի աշխատասիրելոյ , և ոչ լինելոյ յետնեալ 'ի փոյթ պատուոյ մեծի վկային ։ Ընդհանրապէս խոստավան լինի բաբեպրոք , և ցուցանէ ուրոյն խորագրով , թէ 'ի կարգի հին վկայաբանութե̅ց սրբյն գէորգեայ * Լա-
,, տինականքն են անյայտք , յունականքն տուաւել ար-
,, ժանահաւատ || ։ Եւ առ այս բերէ վկան գելասիոսի պապին , որ 'ի ժողովն հռովմայ' յամի 494 . 'ի խօսելն զերկբայական կմ̅ զանյայտ վարուց ոմանց 'ի սր̅ց , ասէ .
* և գրողացն անուանք են ամենևին անգիտելի , և յան-
,, հաւատարիմ կմ̅ 'ի տխմար անձանց աւելորդ կմ̅ ա-
,, րադէպ կարգօք գրեալ համարին . ոպ̅ կիրակոսի ու-
,, րուռն և յուղիտայ , գէորգեայ , և այլոց այսպիսեաց
,, նահատակութե̅ն , որք 'ի հերետիկոսաց ասին գրեալ || ։
Զանհարազատ վարս կիրակոսի և յուղիտայ հերքելն գոլ ցուցաք 'ի ծանօթութե̅ս վարուցն̅' առ հարազատ վկայաբանութե̅ , զոր 'ի ձեռին ունիմք . մնայ այժմ զնոյն առնել և վս̅ սրբյն գէորգեայ անաչառ խուզարկութե̅ ։ Բարւոք յուշ առնէ բարոնիոս 'ի ծանօթութե̅ս հռովմէական վկայագրոց , թէ անյայտ վկայաբանութե̅ գէոր-

գեայ

գեայ յիշատակեալն 'ի Գելասիոսէ երևի լինել այն, զոր գտի ասէ 'ի հին մատենի միում վալլիկելեան գրատան. ուր * Հրէշք իմն պատմին՝ օտարք յոյժ բանաւորութե
,, հրաշից. մինչ զի Ը ամյ վեցերորդ ժողովոյն խօսե_
,, լով, ոչ 'ի բարեպաշտութե ձգեն զվերծանօղս, այլ
,, յանհաւատութի . . . կան և ինչ ինչ անվայելուք վկային,
,, զի կեղակարծելի սեղանակցութի այրւոյն, Նենգա_
,, ւոր հնարք ՆՐ 'ի կորուսանել զմոգս և 'ի սպանանել
,, զ՛ ոք և է 'ի հեթանոսաց. և ևս անբաւ ազգք տան_
,, ջանաց, որովք փորձեալ լիցէ գէորգ, այլ անհնար
,, լեալ մեռանիլ. զի բաց 'ի կախաղանէ, յերկաթի եղըն_
,, գանց, 'ի հրացեալ կասկարայից, 'ի սրալից անուոյն, և
,, 'ի բևեռակապ կօշկաց, որք կան և յայլ վկայաբանութիս,
,, Նաև արկղ երկաթեայ՝ սայրիւք բևեռաց 'ի ներքուստ
,, յարմարեալ 'ի խոցոտել, գահավիժումն, կրկին և
,, կրկին հարմունք երկաթի մրճօք, սիւն ահագին ծան_
,, րութե եդեալ 'ի վր ՆՐ, երկաթի մահիճ հրացեալ,
,, կապար հալեալ 'ի վր հեղեալ, ընկղմումն 'ի ջրհոր,
,, քառասուն բևեռք հրացեալք՝ մխեալք 'ի նա, պղըն_
,, ձացուլ շանթացեալ, ընկղմումն 'ի ջրհոր՝ կապեալ
,, 'ի պարանոցն քար ծանր յոյժ: Թող զի կեղծի ան_
,, դանօր դակլիանոս ոմն ինքնակալ, որ լիցէ տիրօղ պար_
,, սից, և իշխան եօթանասուն և հինգ թագաւորաց.
,, առ որով գէորգ նահատակեալ լիցէ. և այլ ինչ բա_
,, զում, ոյք յաւէտ զերազս ցնորելոց քան թէ զյատակ
,, պատմութի վկայի առնեն յանդիման ||:

Ջնոյն մատեան տեսաք և մեք՝ ասէ բաբեպրոք, ուր սկիզբն վկայաբանութեն է. * 'Ի թագաւորութե տամ_
,, պարշալին դակլիանոսի ինքնակալի՝ քաղաքացւոյ պեր_
,, սիդեայ (կամ պարսից), որ և ինքն էր իշխօղ 'ի վր
,, չորից ծագաց Տի, զի էր վերագոյն քան զամ թա_
,, գաւորս յունաց Տին ||. ԼՆ: Բայց գտաք ասէ և զայլ հնագոյն վկայաբանութի զաղբիւր այնր առասպելապատում գրութե 'ի գաղղիական մատենի. որոյ սկիզբն էր,
* Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ 'ի ձեռս էառ սատա_
,, նայ զթագաւորն պարսից, զարքայն 'ի վր չորից մայ_
,, րից տիեզերաց, որ վերագոյն էր քան զամ թգրս
,, երկրի. և յղեաց պատուէր գալ ժողովիլ թգրաց Տի.
,, և իբրև ժողովեցան թգրք թուով եօթանասուն և
,, երկու ||. ԼՆ:

Արդ ասէ, յայսմ օրինակի այնչափ յաճախեալ են անհեթեթ բանք, մինչ զի և գրիչն միւս օրինակի երևի

տալով

տաղտկացեալ, և ինչ ինչ յապաւեալ յանհաւատալի տան-
ջանաց և 'ի հրէշից: * Եւ այս ա͞մ կեղծի (ասէ) լինել
,, առ դակիանոսիւ ինքնակալաւ, խմ՛ պարսից. և յե͞տ
,, անդ պարսից, կմ՛ 'ի փոքրն հայս, որ սահմանակիցն
,, է տէրութե պարսից, և բազում անգամ անկեալ ը͞
,, նովաւ. որ և փակի ը͞ անուամբ կապադովկիոյ. և
,, այն՝ 'ի մելիտինէ 'ի հայրենիս ս͞էյն առ եփրատաւ՝ 'ի
,, սահմանակցութե միջագետաց ||:
Սուր այսպիսի մակաբերութն առնէ բաբեպրոք, թե-
րեւս հաւանելի. * Զանուն դակիանոսի (ասէ) կարաց
,, 'ի միտս արկանել գրչին անգութ դատաւորն այն անա-
,, գորոյն պատառօղ քրիստոնէից 'ի սպանիա և 'ի գաղ-
,, ղիա, գրեթէ 'ի նմին ժամանակի՝ յորում չարչարե-
,, ցաւ ս͞էն գէորգ 'ի նիկոմիդիա, որպս ունիմք ասել
,, զկնի, 'ի սկզբան վերջին հալածանաց յարուցելոց 'ի
,, դիոկղետիանոսէ և 'ի մաքսիմիանոսէ: Եւ ոչ մեծ ինչ
,, թուէցաւ զեօթանասուն և երկու թագաւորուներ-
,, քոյ արկանել այնպիսի մեծի տէրութե, ուր ադոնի-
,, բեզեկ արքայ լոկոյ երկրին քանանացւոց. դտւ. ա͞.
,, պարծի ունել զեօթանասուն թգրս ը͞ սեղանով իւ-
,, րով 'ի քաղել զփշրանս: Եւ եթէ առասպելաբա-
,, նումն այն կամեցեալ էր զՃշմարիտն անուն թգրի
,, ուրուք պարսից ուսանել 'ի պատմութէց, կարօղ էր
,, անուանել զներսեհ ժմկակից դիոկղետիանոսի, ծա-
,, նուցեալ յաղթութբն՝ զոր արար ը͞դէմ հռովմայեց-
,, ւոց, և կոտորածիւն՝ զոր 'ի նոցանէ ընկալաւ ||:
'Ի դնել այսոցիկ՝ ունէր գեղեցիկ ձեռնարկել բաբեպ-
րոք, թէ ահա այս է անյայտն այն վկայաբանութե՝ կար-
ծեցեալն 'ի հերետիկոսաց յօդեալ ի͞ նշանակելոյ գե-
լասիոսի, ընդ սուտ անուամբ պասիկրատեայ ծառայի
ս͞էյն գէորգեայ՝ որ է հեղինակ հարազատ վկայաբա-
նութե. և այսպէս դիւրաւ որոշէր զՃշմարիտն 'ի ստոյ:
Բայց տես յոր խորհուրդս դեգերի բաբեպրոք. յետ
դնելոյ զվերջաբանութե նախադրեալ երկբայական վկայա-
բանութեան 'ի դիմաց պասիկրատեայ, 'ի վերայ բերէ.
* Յայտնայր առասպելն. բայց տակաւին զայն և ոչ 'ի
,, մերում ձեռագրի սոտ ամբողջ լինել վարկանիմ. զի
,, 'ի մէջ այնչափ անհեթեթ բանից ոչինչ գտանեմ, ուս-
,, տի հեղինակն ն͞ց խիթալի լինիցի յաղագս հերետի-
,, կոսութե ||: Զի՞նչ ապա. համարի, թէ առ գելա-
սիոսիւ կային անդ և հերետիկոսական բանք. զորս յե-
տոյ 'ի բաց ընջեալ իցեն ուղղափառք, կմ՛ անհետ լեալ
իցէ

ւցէ գրուածն այն հերետիկոսաց. և 'ի մնացելոց անտի առ ուղղափառս համարեալ և յարմարեալ իցեն այլ-վկայաբանութիւնք տանելիք առ յոյնս, և անտանելիք առ լատինս :

Զայդ յայնժամ կարօղ էր կարծել իմաստուն քննիչն, եթէ պարզապէս ասէր գելասիոս, թէ 'ի վկայաբանու-թե՛ անդ կան հերետիկոսական բանք, կամ թէ պարզա-պէս է գրուած հերետիկոսաց. զի փոտ 'ի բերելն զուտ վարս թովմայի առաքելոյ զյօդեալն 'ի հերետիկոսաց՝ 'ի մէջ բերէ և զմոլորական վիպութիւնս որ անդ: Բայց յայտ է անաչառ տեսողաց, զի յասել գելասիոսի զմի՝ անհարազատ վկայաբանութե՛ գէորգեայ, թէ 'ի հերե-տիկոսաց ասին գրեալ, չէ՛ հարկ խնդրել անդ զհերե-տիկոսական բանս. այլ չափ է օտարանալն այնր գրու-թե՛ 'ի ստոյգ աւանդից եղելոյ առ ուղղափառս: Որ թողեալ զայն, զի թէ քաջ միտ դնէր բաբեպրոք, գտա-նէր 'ի յիշատակեալն յիւրմէ յօրինակս անհարազատ վկայաբանութե՛ զբաւական նշանակս օտարութե՛ յուղ-ղափառ վիպութեէ. զի է յառնելն բազմութե՛ կռապաշ-տից մեռելոց 'ի վաղուց հետէ, և մկրտիլ և մարտիրո-սանալ, և առ այժմ 'ի դրախտն երթալ երկրաւոր, ո՛չ և նմին գէորգեայ երկիցս և երիցս մեռանիլ և կեն-դանանալ. և զայլ ազգի ազգի հրէշս առնել, որք ասե-լի առնեն առաջի օտարաց առաւել զքրիստոնէից ա-ւանդս:

Ապա ո՛չ ուղիղ թուի մեզ կարծիքն բաբեպրոքայ, թէ յետին վկայաբանք համարելով զհերետիկոսական բանս և զառասպելս առաջնոց՝ հանեալ իցեն ուրուք ինչ վկայա-բանութե՛, այլ է հակառակն՝ 'ի հարազատ վկայաբա-նութեէ պասիկրատայ գողացեալ հերետիկոսաց, կամ անհաւատարիմ և առասպելասէր գրչաց զհիմն և ըզ-գոյացութիւն պատմութե՛՝ շինեալ են 'ի վ՟ր՟ շինուած ստայօդ և անհեթեթ. զոր ազգ ինչ հերետիկոսութե՛ կոչել ոչինչ դանդաղիմ: Եւ արդարև եթէ գտան 'ի սկզբանէ հետէ հերետիկոսք կամ անհաւատարիմ անձինք եղծիչք պատմութեց, մինչ ո՛չ գտան և ուղղափառք և հաւատարիմ գրիչք ստոյգ պատմութե՛: Եւ ահա փորձն զերկաքանչիւրն յայտ առնէ աստանօր. զի սրբոյն գէոր-գեայ կայ վկայաբանութի հարազատ այլ, և անհարա-զատ այլ. թող զխառնուրդն յերկոցունց. և այսմ որո-շելութե՛ փոյթ կալաւ ինքն իսկ բաբեպրոք, թէև ե-րևեսցի ուրեք ուրեք կամ զբանս ինչ անհարազատ օրի-նա.

նակայ ը̄ւնել, և կմ̄ ըբանս ինչ հարազատ օրինակաց չընդունել. և հայելով 'ի խառնուրդս՝ յերկուս հետատատանիլ. որում մեծ նպաստ լինէր, եթէ 'ի ձեռին ունէր և զճառընտիրս մեր, յորս ուրոյն գրի հարազատ վարք սբյն, և ուրոյն անհարազատն. իսկ յայսմաւուրքն տմ̄ ազգաց են բաղադրեալ կմ̄ խառն:

Արդ հարազատ օրինակք վկայաբանութե̄ սբյն գէորգեայ զօրավարի ը̄հանրապէս են այնք, որք զնահատակութն նր̄ պատմեն սկզբնաւորեալ և կատարեալ յատենին դիոկղետիանոսի. ուր և հրաշքն և տանջանքն են չափաւոր՝ ոչինչ ընդհատ յայլոց վկայից, թէպէտ և ի՛ւիք ի՛ւիք փառաւորագոյնք, և պանծագոյնք՝ արժանի մեծուե̄ Նաքարող և պանծալի վկայիս: Այսպիսի է երրեակ աղդ վկայաբանութե̄ց:

ա̄. Վկայաբանութին գտեալ 'ի Ճառընտիրս մեր Ա. և Ը. որոյ սկիզբն է՝ յառաջաբանական, * Տն̄ մերոյ
,, և փրկչին յս̄ի քս̄ի թգ̄րուե̄ն ոչ սկիզբն աւուրց, և
,, ոչ վախճան ժամանակաց. իսկ փառաւորել ծննդեանն՝
,, որ 'ի մարիամայ սբ̄յ կուսէն ||, ևն̄: և պատմական,
* 'ի ժամանակին յայնմիկ 'ի թգ̄րութե̄ն դիոկղետիանո-
,, սի հռովմայեցւոց Ցին ||, ևն̄: Սոյն այս է, զոր բերէ և լիպոմանոս թարգմանեալ 'ի լատին՝ 'ի յունական մատենէ երևելի գրատան գրիփդա ֆէռռատա կոչեցելոյ, և տպագրէ զկնի օրինակին առելոյ 'ի վենետիկեան գրատանէ սբ̄յն մարկոսի յանուն մետափրաստեսի. զնոյն առնէ և սուրիոս հետևօղ լիպոմանոսի. և ոռ̄ 'ի Ճառընտիրս մեր այս վկայաբանութի գրի յանուն պասիկրատեայ աշակերտի սբ̄յն գէորգեայ, նոյնպէս և առ լիպոմանոսի և սուրիոսի: Զայս օրինակ գովէ և բաբեպրոք, թէ * կայ մեայ 'ի նմա Ճշմարտութին պատմական ը̄ գոյացութե̄ ||. բայց չկամի ը̄ւնել՝ թէ իցէ շարագրութի պասիկրատեայ առաջին հեղինակի. զորմէ մեզ չէ փոյթ. շա՛տ է թէ 'ի նմին աղբերէ է վտակացեալ յատակութբ̄:

բ̄. Վկայաբանութին գտեալ 'ի յունական Ճառընտիրս գրատան սբ̄յն մարկոսի՝ որ 'ի վենետիկ. այն է՝ զորոյ զլատին թարգմանութին յառաջ քան զնախընթացն 'ի մէջ բերեն լիպոմանոս և սուրիոս՝ յանուն մետափրաստեսի. իսկ բաբեպրոք տպագրէ և զյունականն՝ ընծայելով այլում անանուն հեղինակի՝ քան մետափրաստեսի: Սորա սկիզբն է. * Դիոկղետիանոս հռովմայեց-
,, ւոցն ինքնակալ՝ անարժանաբա̄ս զգաւազանն առել ||. ևն̄:

են: Այս օրինակ՝ նոյն խօսք ե աւազնոյն՝ ճոխագոյն է քան զայն ի բանիցն և ի գործոց · ուր ասէ լիպոմանոս · * Թէպէտև սակաւուք աննման երևին , բայց ,, աննմանութենէ այդ ոչ երևի կաղ ջիրն , այլ առաւե- ,, լապէս 'ի կարգին · և միանգամայն՝ զոր ինչ մին լռէ , ,, միւսն լրացուցանէ · · · ( և մեք զերկոսին յառաջ բե- ,, րաք ասէ , ) վն զի առ լատինացիս մեր ոչ ինչ արժա- ,, նահաւատ գտանիւր յաղագս փառաւորեալ և մեծա- ,, հռչակ վկայիս ||, բայց միայն անհարազատ գրուածք ասէ կային՝ անկեալք ընդ վճռով գելասիոսի : Զերկրորդս զայս Թուէի նախապատուել բաբեպրոք քան զառաջին և քան զայլ օրինակս * վասն հնութե և յստա- ,, կութե ||· այլ մեք զառաջինն ընտրեցաք իբրև աղբիւր սորին համառօտագոյն և յստակագոյն · միայն թէ երկոքեանն իսկ միօրինակ արժանահաւատ երևին, և

իրերաց համաստութե :

Գ · Վկայաբանութին է բուն իսկ մետափրաստեսի կարծեցեալ ի գատման լեռնի ալլատիոսի · զոր և հաստատէ բաբեպրոք , և տպագրէ զնոյն յունարէն ևեթ · քանզի ասէ , * Յունասէր վերծանողի համձոյական վարկայ • լինել զայնպիսւոյ առն մեծի զպարզաբանութի , դժե • ևս 'ի լոյս ընծայել, գտնէ յունարէն աստէն ընծայել, • և ոչ իսկ հարկ համարեցայ յեղուլ 'ի լատին , զի լոկ • ողորկագոյն ոճոյ տարբերութեն՝ առանց իրիք այլա- • լուե պատմուե որոշէ զսա 'ի նախընթաց պատմուէ ||: Եւ սր սկիզբն է · * Մինչդեռ տակաւին կռամոլուեն • մառախուղ մածեալ ունէր զտիեզերս , և փոքու իմն • ամենեքին յարձակ յարձակ խաղային յամպարշտուն , • յորժամ դիոկղետիանոս և մաքսիմիանոս զթգրականն • վարէին զիշխանութի ||· են :

'Ի սոսին վերածին և ներբողեանք և ճառք հարց , որք զնոյն հարազատ պատմութի սբյն գէորգեայ ենթադրեն և երկրորդեն նկարագրութբ 'ի գովեստ սբյն · յորոց զերկուս կմ զերիս նշանակէ բաբեպրոք առանց ե բանս ինչ ածելոյ : Մի՝ սբյն անդրէի կրետացւոյ 'ի է և ը դարու · զոր սոսկ լատիներէն բերէն լիպոմանոս և սուրիոս իբրև 'ի մետափրաստեան ճառընտրաց · իսկ յունարէնն գտանի 'ի գործս նոյն սբ հօրն տպագրեալ 'ի կոմբեփիզայ : Երկրորդ՝ նորին անդրէի կրետացւոյ այլ ներբող առ նոյն սբ գէորգ · զոր սոսկ յունարէն տպագրէ բաբեպրոք : Երրորդ՝ ներբողեան գրիգորի կմ գէորգեայ կիպրացւոյ պատրիարգին կոստանդնուպօլ-

պօլսոյ 'ի Ժ՟Գ դարու 'ի վ՟ր նորին սբ՟յն գէորգեայ. զոր յն. և լտ. տպագրէ նա ի՛նքն բաբեպրոք.

Իսկ անհարազատ վկայաբանութիւնք սբ՟յն գէորգեայ ճանաչին այնք, որք զնահատակութի՟ն նր՟ առեն լինել ընդ ձեռամբ դատախանոսի կմ՟ դակիանոսի արքային պարսից՝ հ՟բ, կմ՟ հ՟ե թագրաց իշխեցողի. և երկարապատում բանիւք յաճախեն տանջանս և հրաշս կմ՟ հրէշս անլուրս և անյարմարս. և առ 'ի պատրել զանզգոյշս՝ դնեն լինել հեղինակ պատմութեանս զծառայ սբ՟յն զպասիկրատէս՝ գողացեալ զանուն նր՟ 'ի վերջաբանութենէ հարազատ վկայաբանութեան: Այսպիսի է առ մեզ վկայաբանութիւն, որ 'ի Գ. Ճառընտրի, թարգմանեալ՝ ոմ՟ կարծի, յասորի բնագրէ. զ՟ի նոյն ոճոյ է յօրինեալ և նոր չարականն անալի 'ի վ՟ր սբ՟յն գէորգեայ, թերևս առ կիլիկեցւովք. * Քաջամարտիկ ո՟բ զօրական ||, ևն:
Այնպիսի են և առ լատինս նախայիշեալ կրկին վկայաբանութիւնք. մին վաւերեկեան գրատան լոնգոբարտացի գրով, և միւսն գտեալ 'ի գաղղիական հին մատենի, զ՟ի վկայելոյ բաբեպրոքայ:

Իսկ որ ինչ մնան արտաքոյ սոցա, զ՟ա այլ ևս՝ օրինակք վարուց սբ՟յն գէորգեայ 'ի համառօտ վկայագիրս և 'ի յայսմաւուրս յունաց, հայոց և լատինացւոց, խառն կոչելի են. զի յոմն 'ի նոսա կան ինչ ինչ 'ի հարազատ վկայաբանութենէ առեալ, և ինչ ինչ յանհարազատաց. ոմ՟ յայտ է՝ որոց բաղդատեննն:

Միայն պատմութի վիշապին սպանելոյ 'ի սբ՟յն գէորգեայ՝ չիք բնաւին ոչ 'ի հարազատ և ոչ յանհարազատ վկայաբանութիւնս, որոց մեք հանդիպեցաք. այլ է լոկ աւանդութի ռամկաց և պատկերահանաց եւրոպիոյ: Վկայէ բաբեպրոք, թէ 'ի մի միայն նոր մատենի յարևմուտս գտաք զայս կեղծիս, որ թուէր 'ի լատինէ 'ի յոյն վերածեալ. և 'ի վ՟ր բերէ. * Անտարակոյս եմք,
« թէ անշուշտ լատինացւոց յերկրէն առուլոց յեւրո-
« պիա դարձելոց զկնի առման ո՟բ երկրին ('ի Ժ՟Բ դա-
« րու), և զասուլոցն խելայեղ պատմութիւն՝ որ յա-
« ղագս սբ՟յն գէորգեայ, քրիստափորի, և այլոց, յե-
« բեանց բարբառ տալաչափուէ՟ զորդարողաց՝ զ՟ի սո-
« վորութե այնր դարու, պարտ է ընծայել զայս, զի
« առասպելն՝ որ յաղագս վիշապին այդպէս ընդհա-
« նուրս ընդունելի եղաւ իցէ 'ի ռամկէն ը՟ ռմ եւրո-
« պիա ||: Իւր առ յետինս 'ի Ժ՟Գ դարէ և այսր ձևացաւ առէ գրով և բանիւ որոշ պատմութի ինչ, ոմ՟ թէ

սբ՟ն

սքն գէորգ ոլորուն՝ ազգաւ կապադովկացի՝ երթեալ երբեմն 'ի լիբիա գաւառ 'ի քաղաքն սիլենա, առ որով կայր լիճ կամ ճահիճ մեծ, կամ ա այլոց 'ի լիւսիա կամ 'ի լիկիա քաղաքի կապադովկացւոց, սպանեալ իցէ զվի-շապ մի ահագին, և ազատե զդուստր արքային սեւի-սի. և զանուն կուսին ռամիկն կոչեաց մարգարիտա, 'ի փոխառեալ 'ի պատմութէ սքյն մարխանեայ մարգարի-տա կոչեցելոյ. որ առ սան կոխեաց զանհերեւոյթ վի-շապն :

Ոմանք ևս ասացին, թէ 'ի կողմանս բերիւտայ մօտ 'ի ծովն սպանեալ իցէ վիշապն 'ի սքյն գէորգեայ. և այլք՝ թէ մերձ 'ի գէորգիա կամ ճէորճիա բերդն լիդիայ մերձ 'ի յոպպէ. ուր համարին ասորիք զծնունդ սքյն, և 'ի նորա անուն ասեն կոչեալ զայն տեղի. և 'ի միաբանել զայս ը վկայաբանութե՝ ոմանք նոր կապադովկիա հնա-րեցին 'ի փիւնիկէ : Յաւելին ասորիք և զայլ կեղծիս՝ ցուցանելով արտաքոյ դրան դամասկոսի զքար ինչ, յորմէ 'ի ձի աշտանակեալ իցէ սքն գէորգ 'ի կամելն գնալ ը̄դդէմ վիշապի : Զայսպիսեաց յերկար խօսի բա-բեպրոք և իրաւամբք կշտամբէ. նոյնպէս յանդիմանէ և զնորաղանդս՝ որք ժխտեցին զգոյացութի պատմուե սքյն գէորգեայ. այլ մեք չունիմք կարօտութի այնպի-սի խնդրոց. եթէ կայցէ այլ ինչ կարևոր, տեսցուք 'ի կարգիս :

(2) Զոր յոյն և լատին օրինակք հարազատ վկայաբա-նութեց կոչեն մակնենցիուս կամ մագնենտիոս, ձաւըն-տիրք մեր Ա. և Ե. գրեն մանկնենտիոս կամ մանգնեն-տիոս. որ է նոյն. ոմ 'ի մեզ կայ և մանկնոս փոխա-նակ մակնուսի, և անդրիանոս՝ փխկ ադրիանոսի, ևն : Իսկ թէ հիւպատոս էր արդեօք մագնենտիոս այս 'ի հռովմ կամ 'ի նիկոմիդիա, և կամ թէ իցէ նոյն ը̄ մաքսեն-տիոսի որդւոյ մաքսիմիանոսի հերակլեայ, յերկբայս թողու բաբեպրոք : Մեք զայս գիտեմք, զի առ հասա-րակ գահակիցք դիոկղետիանոսի զայնպիսի անուն կը-րէին, որ թարգմանի մեծ կամ մեծաւոր և կամ ամենա-մեծ. յորս գլխաւորն էր մաքսիմիանոս առաջին աթո-ռակից նր. դոյր և երկրորդ և երրորդ և չորրորդ. և ահա առ մի 'ի նոցանէ հայի բան եւսեբիոսի, և վկայա-բանիս մերոյ :

(3) Համաձայն ճառընտրաց մերոց գրէ և անդրէաս կրետացի, թէ 'ի փայտ հանեալ սքն գէորգ՝ այնպէս հարաւ գեղարդեամբ. ուր ոմանք առանց յիշելոյ զի փայտ

փայտ ելանելն՝ ցուցանէն, թէ յոտին կալով յառենի անդ կմ յասպարիզի հարաւ տիգաւն: Իսկ զայն կէսք իմանան մխեալ և խոցեալ, և կէսք անմիջապէս յետս դարձեալ: Երկրորդ վկայաբանն սուրիոսեան (Թէպէտև ը նր առաջին) այսպէս պարզաբանէ. * հրամայէ զինա-
• կրաց նիզակօք՝ 'ի բաց վարել զնա յառենէ, և 'ի բանս
• արկանել. և 'ի լինել այսր վաղվաղակի՝ թէպէտև 'ի
• մարմին նր հպեցաւ գեղարդն, այլ հանդոյն կապարի
• յետս դառնայ ||: Այլ քանզի միաբան մեզ խօսին և այլք 'ի վկայագրաց և 'ի Ճառաբանից, վն այս է բաբեարոք. * Զայս այսպէս առին ներբողաբանք, որպս թէ
• ստուգապէս խոցեալ իցէ սբն, այլ առ ժամայն բժշ-
• կեալ յածուսս: Բայց ես ընտրեմ հաւատալ, թէ
• հրաման տուեալ խոցել, այլ 'ի յետս ընկրկել երկա-
• թոյն՝ չեղև ինչ նմա վնաս. ապա թէ ոչ՝ չմնայր տե-
• ղի սքանչելեացս, զոր ամենեքին պատմեն ||: Առ որ ասելի է նախ. եթէ առանց ցայտելոյ ինչ արեան յետս ընկրկէր երկաթն, ունէին կարծել տեսօղք կմ կրկուտիք, թէ գուցէ 'ի ներքուստ զրահ ունէր երկաթի սբն գեորգ որպ զօրավար. և այնպէս ժխտէին զսքանչելիսն. բայց ուր արիւն ցայտեաց, և երկաթն ծալեցաւ, անժխտելի մնայ բանն: Երկրդ՝ ունիմք օրինակ և 'ի վարս պանդալեոնի, զի սուրն եհատ զգլուխ սբյն, բայց միանգամայն ասի սուրն եղեալ իբրև մոմ կակուղ. որով նշան տուեալ լինի հեթանոսաց, թէ կարօղ էր ած անգործ առնել զերկաթն գլխովին. բայց թողու ը իմիք ներգործել, և ը իմիք հրաշս ներգործել 'ի մարմնի ծառայից իւրոց:

(4) Յետ պատմութն կատարման երկոցունց զօրավարացս, որք 'ի Ճ. Ա. կոչին անատոլիս և պրոտոլիոն, և 'ի Ե. անատոլիոս և պրոկտոլիոն, քանի մի թուղթք պակասին 'ի Ճ. Ե. մինչև միւսանգամ կարկատի պատմութին մօտ 'ի կատարումն սբյն գէորգեայ. բայց Ճ. Ա. է անթերի. որպ և լատին թարգմանութի նր առ սուրիոսի:

(5) Գուբ կրոյ իմն զփոս, ուր պահէին զկիր: Վասն կրոյն՝ զոր յոյնք սովոր են անշէջ կոչել, լատին թարգմանք և մեկնիչք յերկարեն տալ զպարզաբանութի. այլ չէք կարօտութ մեկնութե: Քաղ ես մեկնէ յոյն վկայաբանն երրորդ՝ մետափրաստէս կարծեցեալ, այսպէս. * Հրամայէ արկանել 'ի մէջ կրոյ (յն. գիդանոս), զոր սովորութի է անշէջ (յն. ասվեստօն) կոչել, այն ինչ

չիջուցելոյ, կամ ճշմարտագոյնս ասել՝ արծարծելոյ ||. զի ջուր արկանելով՝ որ ասի շիջուցանել, վառի ևս արծարծի կիրն, և լինի տոչորիչ: Գեղեցիկ ասէ անդրէաս կրետացի. յանշէջ նիւթ արկին զվկայն, այլ ոչն յայնժամ ստուգապէս շիջաւ. այս է՝ ոչ վնասեաց սմին:

(6) Զունիմք ասել ստուգութբ, թէ զիարդ 'ի Ճ. Ա. ուր անթերի կայ վկայաբանութիս, պակասին այս երկու հրաշք՝ որ վն անվնաս մնալոյ սմին 'ի դեղըմպուէ, և վն յարութե մեռելոյն. որք կան 'ի լատին և 'ի յոյն օրինակս. արդեօք թարգմանիչն գրիգոր վկայասէր կամաւ զանց արար, կասկածելով՝ թէ յանհարազատ վարուց սմին իցեն այսր փոխանցեալ, եթէ գրիչն վրիպակաւ անցեր իցէ 'ի հատուածոյ 'ի հատուած. ևս 'ի Յայնժամ բառէս, մինչև 'ի միւս Յայնժամ: Երկրորդս այս է մեզ կարծելի. Նախ՝ զի զկնի նախընթաց բանից ոչ այնչափ յարմար տեսանի անմիջապս բանտարկուին սմին: Երկրորդ՝ զի և պատմութն գղեկերիոսի, որ զկնի, թէպէտև կայ 'ի ճառընտրի, այլ թերակատար բանիւք. ուստի երևի՝ թէ յայսմ միջոցի վրիպակ ինչ գրչաց լեալ իցէ 'ի մեզ: Երրդ՝ զի ոչ միայն վկայաբանք, այլև անդրէաս կրետացի և գրիգոր կիպրացի 'ի ճառս իւրեանց յիշատակեն զյարուցանել մեռելոյն բանիւ սմին գէորգեայ, և զգալիճ և զնահատակութն աթանասիոսի կախարդի ընդ նոր յարուցելոյն: Վսյ և բարեպրոք չասէ ինչ ընդէմ. այլ կամեաք, զի այսպիսի դժուարուեց տայր լուծումն, եթէ զիարդ լինիցի վաղուց մեռելոյ անհաւատի յառնել և արժանի լինել մկրտութե և փրկուե. այլ զայսցանէ թերևս այլոք: Հմա լիցի առ այժմ ասել, թէ տր կենաց և մահու սքանչելագործ ած՝ երբ հաստատեալ իցէ զոք յարուցանել առ ժմկ մի, ըստ նմին և կարգէ զնա յառաջագոյն 'ի վիճակ ինչ մեզ անգիտելի՝ արտաքոյ մշանջենաւոր վիճակի փրկելոց և անարգելոց:

(7) Զերկդիմի ասացուած սմին՝ առ ազատ կացուցանելոյ 'ի սատուէ, այսպէս մեղմէ երկրորդ վկայաբանն. * եթէ հրամայես այսուհետև թագաւոր, մտցուք 'ի ,, մեհեանն այց առնել դից պաշտելոց առ 'ի ձէնջ||: Իսկ գրիգոր կիպրացին այսպէս մեկնաբանէ. * Յափշ-,, տակէ վկայն զբանն (թագաւորին), և խորհելով ,, նորագոյն իմն ճանապարհ անտի ընդդէմ դիմացն հոր-,, դել, և կատարեալ յաղթանակ մեծահանդէս նովիմբ ,, կանգնել, կեղծաւորի ասացելոցն անսալ՝ զժմ յամա-,, ռութն 'ի բաց դնելով. և այնչափ՝ ոչ թէ և կամիլ

,, իսկ և իսկ գնալ է նմա 'ի տաճարն, և զառ ըծայն
,, ձօնել զերթն: Եւ այս թերևս ունի ինչ նենգ և
,, խաբէութի. այլ չէ անգոսնելի է ի թիւրելոյն խոստո-
,, րել, և դաւաճանութե ընթացողին՝ դաւանօք է ա-
,, ռաջ եղանել. և այսուքիկ առ այս. քանզի և ամ յեղա-
,, նակ՝ որով ոք 'ի չարէն խուսափէ, ուղղութե է յեղա-
,, նակն այն. և զամ՝ զոր խորհի ոք հնարս ըդէմ դի-
,, մաց, առաքինութե ճանապարհ է առ այն՝ անքոյթ
,, առ ամ առաջնորդելով ||: Բարեպաշտք, որ կամ մա-
նունս մանր կրկտէ, լուռ եւեթ կայ յայսպիսիս՝ որք
մեզ ծանր թուէին և դժուարապատում 'ի մեկնել. զըն-
թերցօղս 'ի բարոյական անդր առաքեմք. և միայն զայս
ասեմք. ամ երկդիմի բան՝ զոր պարտական է և կարէ
լսօղն 'ի միտ առնուլ, ոչ համարի ստութի և խաբէու-
թիւն. Վսյ և դիոկղետիանոս առաւել անձամբ զանձն
խաբեաց, ք 'ի սոյն խաբեցաւ, ուր դիւրաւ հաւատաց
անհաւատալի բանի: Թող զի այսպիսի ասացուածք ոչ
այնչափ դրով, որչափ կենդանի ձայնիւ բացատրեն զմիտս
իւրեանց. արդեօք հեգնակա՞ն իցեն, եթէ լուրջ մտօք
բարբառեալ. զի այլ է ժամանակն և տեղին և եղանակն
խօսից, և այլ նիւթական գրութի նոյն բանից, զոր
ոմն 'ի գրչաց այսպէս բացատրէ, և ոմն այնպէս:

(8) Զամ տն 303. հաւանական կարծեօք եդաք. զի
թէպէտ և 'ի զանազան նուագս եհան դիոկղետիանոս
հրովարտակս վն հալածելոյ զքրիստոնեայս, բայց ա-
ռաւել հռչակաւորն էր այն՝ զոր հրատարակեաց յա-
ւուրս զատկաց՝ յամի տն 303. յորմէ սկիզբն առնու
թուական մարտիրոսաց, կմ ըս ոմանց՝ միով ամաւ յա-
ռաջ: Վսյ և բարեպաշտք բազմօք ջանիւ հաստատել, թէ
սբն գէորգ ըմբռնեցաւ յաւուր աւագ ուրբաթու տար-
ւոյս, որ յամի 303. և յետ ութօրեայ չարչարանաց և
բանտից՝ կատարեցաւ յապրիլի 23, յաւուր ուրբաթու
զկնի զատկի: Այնպէս և զքաղաքն մարտիրոսութե իրա-
ւամբք պնդէ լինել 'ի նիկոմիդիա՝ քան այլուր. * Զէ
« ինչ (ասէ) դժուարին հաստատել... թէ սբն գէորգ
« նահատակեալ իցէ 'ի սկզբան հալածանացն դիոկղե-
« տիանոսի և մաքսիմիանոսի. և այն ոչ 'ի մելիտինէ
« հայոց, զոր յառեպէս դնէ լատին վկայաբանութին 'ի
« կապադովկիա, այլ 'ի տեղւոջ անդ՝ ուր նախ զառա-
« ջինն յօրինեցան և հրատարակեցան հրովարտակք.
« ուր էր և ծերակոյտն, և արքունիք և կինն դիոկղե-
« տիանոսի (ալէքսանդրէ թագուհին). իմա 'ի նիկոմի-
« դիա.

գիա. զի այս ամ յայտ է 'ի վկայաբանութենց... Եւ զնոյն հաստատեն դիրքն իսկ տեղեաց. քանզի կարի իսկ դիւրին էր զմարմին նր յետ վախճանելոյ տանել նաւու 'ի Նիկոմիդեայ՝ որ առ երի պրոպոնտոսի՝ ը միջերկրական ծով մինչև 'ի յոպպէ, և անտի 'ի սահմանեալ տեղին հասուցանել (ը յանձնելոյ սբյն ծառայի իւրում): Իսկ ըստ հակառակն 'ի մելիտինեայ անդր երթալ ը ոբ գանձուն 'ի ժամանակի անդ հալածանաց յարուցելոց ը ամ տեղիս, և այն ը ցամաք աւելի քան հինգ հարիւր մղոնաւ, կամ ամենևին անհնարին, և կմ կարի վտանգաւոր գործ էր ||: Ըստ այսմ գրեալ է 'ի յունական օրինակի միում վկայաբանութե. * Պատուական նշխարքն յետոյ 'ի Նիկոմիդեայ 'ի դիոսպօլիս քաղաք պաղեստինոյ (ո 'ի լիւդիա) բերեալ եղեն 'ի հայրենիս մօր իւրոյ, 'ի գ նոյեմբերի ||. քանզի և 'ի նմին աւուր տօնեն յոյնք զհանգիստ մարմնոյ սբյն գէորգեայ կմ զնաւակատիս 'ի լիւդիա. որ և փոխադրութի 'ի պաղեստին. զոր հաւանական համարի բաբեպրոք լինել յամի տն 312. առ կոստանդիանոսիւ յետ դադարելոյ հալածանաց: Արդ ոչ լիւդիացիք կմ դիոսպօլսեցիք պնդէին, թէ 'ի քաղաքի մերում ծնաւ և անդ թաղեցաւ ոբ գէորգ զօրավար, զնոյն ասէին և ասեն մինչև ցարդ հռամուլացիք, ո ռէմլեցիք. զի և քաղաքն սոցա կրէ զանունն գէորգէա. որպս և գաղղիացիք անուանէին սան ժորժ ռամլայու: Պատմեաց մեզ և գէորգ վրդպ հայոց՝ առաջնորդ ռէմլէու, թէ երևելի է յայժ յայն կողմանս անունն սբյն գէորգեայ, և գլխաւոր եկեղեցիք են շինեալ յանուն նր:

Առաջին և մեծ եկեղեցին շինեալ յանուն սբյն գէորգեայ 'ի վր նշխարաց նր ը մէջ ռէմլէու և դիոսպօլեայ, և փայլեալ սքանչելեօք, ը ցուցանելոյ հին պատմութեանց՝ կարծի շինեալ 'ի մեծէն կոստանդիանոսէ. որ յետ աւերելոյ յայլազգեաց՝ դարձեալ նորոգեցաւ, և անկաւ 'ի ձեռս փռանկաց, ապա ասորւոց, և այժմ է 'ի ձեռս այլազգեաց: Դարձեալ առ կոստանդիանոսիւ և հեղինէաւ շինեցաւ ասեն տաճար սբյն գէորգեայ 'ի հռովմ, և 'ի նոր հռովմ 'ի կոստանդինուպօլիս, ոչ և 'ի նիկէապօլիս: Շինեաց և յուստինիանոս կայսր զեկեղեցի սբյն գէորգեայ 'ի վիզան քաղաք փոքուն հայոց. Թող և զայլ անհամար եկեղեցիս և զվանորայս յարևելս և յարևմուտս հետզհետէ կառուցեալ յանուն մեծի զօրավարիս. ոչ յերկար նշանակէ բաբեպրոք:

Իսկ յաղագս նշխարաց սբյն ասէ, թէ թէպէտև զԹ մա-
սին կարծին թաղեալ 'ի տեղի սուրբին եկեղեցւոյն,
բայց մեծաւ մասամբ սփռեալ են ընդ ամ ☉: Գլուխ
սբյն աստ անկեալ 'ի ձեռս գշխոյին հեղինեայ. և յղեալ
'ի հռովմ. ուր հանդիսապէս ցուցանի անդ 'ի գանձա-
րանն լատերանու առ զաքարիա քահանայապետաւ՝ որ
նստաւ յամի տն 751. իսկ յամի 1600 կղեմէս ութերորդ
պարգևեաց զայն յովհաննու եպսի, և բերեալ եդաւ
'ի փերրարա: Բազուկ մի սբյն կանխաւ աստ բերեալ
յարևելից 'ի փերրարիոյ, որոյ առաջնորդք կոչէին
զանձինս՝ եպսունս սբյն գէորգեայ. և միւս բազուկն
աստ բերեալ 'ի կոստանդնուպօլսոյ 'ի գաղղիա 'ի Ղ դա-
րու. յիշին և յայլ տեղիս նշխարք սբյն՝ գլուխ և բա-
զուկ կոչմամբ, առեալ զմասն փոխանակ բոլորին. և
յամ տեղիս հրաշք սբյն պատմին անպակաս:

Հռչակաւոր է վենետիկեան հոյակապ տաճար և վանք
բենեդիկտեանց՝ յառանձին կղզեակ, սբ գէորգ մեծ
կոչեցեալ. որ և կրկին հռչակելի եղև առ մեօք. զի
անդ օծաւ յամի տն 1800. պիոս եօթներորդ հռովմայ
հայրապետ, (որում և մեք սարկաւագել արժանի եղ-
եաք 'ի հանդիսին 'ի դիմաց արևելեան եկեղեցւոյ).
Զայսմ տեղւոյ այսպէս գրէ բաբեպրոք: * Այս ինչ
,, առոյգ է, զի կղզին այն և եկեղեցի յամի 982. 'ի ձրից
,, դքսին և ծերակուտին վենետկոյ շնորհեցաւ յովհան-
,, նու մաւրօկենոսի և ընկերացն իւր՝ 'ի շինել անդ վանս.
,, որ յաւուր յայսմիկ մեծաշուք և մեծակառոյց տեսա-
,, նի՝ անուանեալ սբ գէորգ մեծ... իսկ յամի 1296
,, անդր բերեալ եղև 'ի փլորեան վանաց կաղաբրիոյ
,, բազկաբերանն (կմ արմունկն) նորին սբ վկայի. և
,, յամի 1462 մասն գլխոյն յեգինեան կղզւոյ ||: Գրէ
և զպատմութիւն հանդերձ հրաշիւք: Այլ է եկեղեցի
յունաց 'ի բուն քաղաքն վենետկոյ՝ յանուն սբյն գէոր-
գեայ:

Յայտնի են և 'ի կոստանդնուպօլիս զանազան եկեղե-
ցիք յունաց յանուն սբյն գէորգեայ, ոք է պատրիարքա-
րանն նոցա 'ի ֆանար. վանք եւս մի պատրիարքին. սբ
գէորգ 'ի եոտն խուլէն. այլ սբ գէորգ բօդիրաս. այլ
մերձ յետրենէ դուռն. և այլ անյիշատակ 'ի տիբլօ ֆա-
նարին. ոչ և սբ գէորգ հայոց 'ի սամաթիա: Այլ ք
զսոսա զամենեսին հռչակաւոր էր անդ 'ի կոստանդի-
նուպօլիս եկեղեցի և վանք սբյն գէորգեայ շինեալ 'ի
կոստանդին մոնոմախոս կայսերէ 'ի ժա դարու 'ի տե-
ղին

զԻն կոչեցեալ Մանկանա, որ էր զինարան (կմ̃ հնձանայարկ) շինեալ 'ի մեծէն կոստանդիանոսէ ․ ուստի և եկեղեցին կոչեցաւ առ մանկանա ․ և այնչափ հաշակելի եղև, մինչ զի յանուն նր̃ և նեղուցն բիւզանդեան կմ̃ վոսփորոնն անուանեցաւ բաղուկ սր̃յն գէորգեայ ․ ուր կային երբեմն բազմութիւք նշխարաց սր̃ց, է̃ որս և պատուական գլուխ սր̃յն գէորգեայ ։ Յետ անկանելոյ քաղաքին 'ի ձեռս այլազգեաց՝ խորհեցանն ք̃ միանգամ և երկիցս աւերել զայն եկեղեցի ․ բայց ոչ̃ ասի, սր̃ն գէորգ երևեալ Թագաւորին զայրագին՝ արգել զնա 'ի խորհրդոյ անտի ։

Ոչ̃ ազգ մեր յաւուրս իշխանութե̃ իւրոյ՝ 'ի պատերազմունս բարեխօս և պաշտպան ունէր զս̃բ զօրավարս, զս̃բ գէորգ, զս̃բ մինաս, զս̃բ սարգիս և զս̃բ Թէոդորոս է̃ սր̃ց վարդանանց և ատոմեանց, նոյնպէս և յոյնք զնոյն ս̃բ գէորգ, զս̃բն Թէոդորոս, զս̃բն մաւրիկիոս, և զս̃բն դեմետրիոս ։ Ըստ նմին և խաչակիր զօրք լատինացւոց զնոյն զօրավարս, և առաւել զս̃բն գէորգ ունէին պաշտպան, յառաջնն եկմ̃ ․ յորում Ժմկի միջնորդութբ̃ նորին ս̃բ զօրավարի բազում յաղթութիւ 'ի գլուխ տարան, մինչև սպիտակազգեաց հեծելոց երևիլ յօդս 'ի կողմանս անտիոքայ, և խորտակել զթշնամիս առաջի երեսաց նց̃ ․ և ը̃ վկայելոյ դոմալտերայ ժամանակակցի՝ այլազգիք անգամ զարհուրեալ յերեսաց սր̃յն գէորգեայ՝ զզօրաւոր ախոյեանն իւրեանց զհռոբերտոս կոմսն փլանդրիոյ անուանեցին որդի գէորգեայ ․ իսկ զս̃բն գէորգ կոչէին սպիտակաձի՝ ը̃ գրելոյ յովհաննու կոտտովիկոսի ․ որ բերէ և զայլազգական հնչումն անիմանալի՝ փոխակ դրութբ̃ լատին տառից այսպէս ․ տեշլեթաթօզաթիլ ․ (յորում պարզ է իմանալ զբառքս՝ ակյաղ կմ̃ աք աթլի, թօղ աթլը ․ ևն̃) ։

Նոյն այր գրէ, թէ տեսաք յարնիկա քաղաք կիպրոսի, զի զնմ̃ պատկերս՝ որ յորմս եկեղեցւոյ, պատառոտեր էր այլազգեաց, կմ̃ անպիտանացուցեալ զաչս կամ զերեսս ևն̃ ․ միայն զպատկեր սր̃յն գէորգեայ ձիաւորի անվնաս թողեալ էին ։ Եւ թէ՝ սովոր են նք̃ բարեգուշակ համարել զօր տօնի սր̃յն գէորգեայ, զոր խարելէզ կոչեն ․ է̃ լուսանալ աւուրն զոր հանեն և ճակատ յարդարեն, ոչ̃ թէ է̃ հովանեաւ նորին զինուորեալ իցեն ։ Եւ դարձեալ՝ 'ի դառնալն 'ի տեսոյ գերեզմանի ամիրապետին իւրեանց՝ մեծ անկարգութբ̃ կրօնի համարին չանցանել է̃ տաճարն, որ կայ է̃ մէջ բեթղեհե-

մի և էջմի առ ստորոտով պեսալայ լերին, ուր պահին շղթայք՝ որովք կարծի կապեալ սբն գէորգ. և որ մի-անգամ զինչ և է գողութիւն արասցէ ասեն անդ կամ ՚ի մերձակայ տեղիս, յանկարծահաս մահուամբ է սատակ-պատժեալ, և պատժի: Նոյնպիսի պատիւ ընծայի սբյն յայլազգեաց նաև ՚ի ռէմիէ և ՚ի պերսիլթ: Յինէ և յով-հաննէս կանոնակուզինոս՝ երբեմն կայսր կոստանդնու-պօլսոյ, ՚ի Դ՟ պխնաստոնուն առ այլազգիս՝ զսբն գէորգ, որ ասէ ոչ միայն ՚ի մէնջ ՚ի քրիստոնէից պաշտի, այլև ՚ի ձէնջ խուժրր ելիազ անուամբ:

Զայսոսիկ յառաջ բերեալ բաբեպրոքայ յարևելեան պատմութեանց՝ գրէ յաղագս արևմտեան տէրութեանց, թէ յետ Ժ՟Ը երորդ դարու յառաջանէ անտի էջմի ՚ի լատի-նացւոց՝ առաւելաւ ՚ի նո ջերմեռանդութիւն յոյժ առ նր զօրավարն գէորգ. մինչ զի ասէ՝ ՚ի բովանդակ բեղ-գիա, զնոյն իմն ասէ և զայլ տեղեաց եւրոպիոյ. * չիք
,, քաղաք մեծ կամ փոքր, յորում չկայցէ կամ տաճար կամ
,, մատուռն և կամ գոնէ խորան՝ հանդերձ եղբայրութբ,
,, նուիրեալ ՚ի պատիւ սբյն գէորգեայ: Յայնմ ժամա-
,, նակէ հետէ բազմաթիւ միաբանութիք կարգեալք առ
,, զինուորութիւն և ՚ի պաշտպանութիւն կրօնի կամ հայրե-
,, նեաց, պաշտպան ընտրեցին զնա ինքեանց. և ոչ նք
,, միայն, այլև ամբողջ ազինք և թգրութիք. ոմ յայտ
,, է ամենեցուն յաղագս լուսիտանիոյ, արրագօնայ,
,, անգղիոյ, և այլոց ||:

Յանուն սբյն գէորգեայ երևի եդեալ պըռաճար անուն կամ մականուն միոյ յեղբարց շնորհալւոյն. զոր և շահան կոչեմք ՚ի պատճառս դստեր նր՝ որ կոչի շահանդուխտ մայր լամբրոնացւոյն: Իսկ գէորգ անուն առ հայս և առ յոյնս և մանաւանդ առ վիրս ազգօվին է հանդիսա-ցեալ յոյժ. բայց չէ բաւական անուանակցութիւն սբյ առանց նմանակցութե վարուց սրբութե նց:

(9) Այս երևելի սքանչելիք սբյն գտանի ՚ի մեծ Ճա-ռընտրի մերում Ա. ուր ՚ի յիշատակարան վերջին ասի.
* Իրագործեցաւ գործ սքանչելեացս ՚ի ժամանակս փո-
,, կասու տիւրանոսի կայսերն (իմն սպարապետի, որ
,, և իմբէռադօր կոչիւր) յունաց. և թարգմանեաց
,, ՚ի հոռոմոց ՚ի հայս նր քահանայապետն հայոց մեծաց
,, գրիգորիոս վկայասէր. զոր և պսակակից արասցէ քս
,, սբյ վկային ||: Իսկ սկզբնաւորութն է. * Որք պար-
,, գեացն ոյ արժանի լինել փափագէք, զխրատակ և
,, զտօն սբյն անյերկուանալի հաւատով, և բազում
,, գթով

ս գլթով տօնել մի ձանձրասցուք ||։ Այլ քանզի յետ սկզբնաւորութեան՝ թուղթ անկեալ էր ՚ի ճառընտրէն, որոյ պակասէր պատմութիւն սպառերազմի բարբարոսաց և գերութեան գէորգ մանկանն, զսակաւն լցաք ՚ի յունական օրինակէն՝ զոր բերէ բաբեպրոք ընդ լատին թարգմանութեան սրբոյն։ Զի թէպէտև ՚ի Հ. գտանի այս պատմութիւն, այլ առ կարի համառօտութեան կարծի այլափոխեալ ինչ ինչ. զի փոխանակ գրելոյ երկիր պաֆլագոնայ՝ գրեալ է ֆռանկաց. և սպառերազմն ասի լինել ՚ի մէջ նչ և ունկռուզաց, այս է հունգարաց։ Ծ. ՚ի խորագրի յիշէ զանուն գթաց. այլ յընթացս պատմութեան գրէ զանուն բուլղարաց. զնոյն յայտ առնեն և յոյն և լատին օրինակք։

(10) Թէրմոն, որ է բառ յունական, և նշանակէ ջերմ կմ ջերմիկ, առեալ լինի ՚ի կարգի ըմպելեաց փոխ եռացեալ գինւոյ, զոր սովորութ է ըմպել առաւել գինեսիրաց. ուր լատին թարգմանն՝ յումպէտս եդեալ է Թէրմոփոլիում, և Թէրմո. որ է արգանակ, խոհ. ևն։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Ադոկտոսի ։

Հ. հոկտ. 4 ։ Յ. հոկտ. 3. և 4 ։ ( Լ. յօրինակս ենչ. հոկտ. 4 ։ ) Բոլլանդեանք ՚ի Է հատ. հոկտ. 4. և ՚ի Է հատ. փետր. 7 ։

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՎԿԱՅՆ քի մեծն ադոկտոս կմ աւտաւքտոս՝ էր յեփեսոս քաղաքի մեծաւ պատուով դուքս և եպարքոս՝ հաւատովն քրիստոնեայ ՚ի ծածուկ,

 յամն

յամս մաքսիմիանոսի կռապաշտ արքային ։
Ունէր և դուստր մի գեղեցիկ տեսլեամբ և կոյս՝ կալիսթինէ անուն ․ զորմէ լուեալ արքային՝ կամեցաւ առնուլ իւր ՚ի կնութի ․ և գիտացեալ հայրն նորա ադոկտոս՝ ոչ էառ յանձն վն պիղծ հաւատոց հեթանոսաց ․ այլ գաղտ առաքեաց զդուստրն իւր փախչել յարևելս ։

Իսկ լուեալ թագաւորն՝ զոր արարն ադոկտոս , և գիտացեալ՝ թէ քրիստոնեայ է , էառ զամ ինչս և զստացուածս նր յարքունիս ․ ընկեց ՚ի պատուոյն , և աքսորեաց ընտանեօքն իւրովք ՚ի միջագետս ․ և գրեաց առ աղեքսանդրոս դուքսն , զի նեղեսցէ զնա ուրանալ զքս , և զոհել կռոցն ․ և եթէ ոչ հաւանի , ՚ի չարչարանս մատնել և ՚ի դառն տանջանս ։ Որ և յոյժ բռնադատեցաւ յաղեքսանդրէ դքսէ ․ բայց քանզի ոչ ուրացաւ զքս , յետ բազում լլկանաց հատին զգլուխ երանելոյն ադոկտոսի ․ և թաղեցին զնա կինն , և միւս դուստր նորին պելագիա ։

Իսկ կալիսթինէ ՚ի փախստեան իւրում հաւատարիմ ընկերօք եկեալ ՚ի նիկոմիդիա՝ ոչ կարաց երթալ այլուր ․ զի զհետ էին խնդրակք ․ վոյ գերծեալ զգլուխն , և առնացի ձև զգեցեալ՝ թաքեաւ ՚ի նիկոմիդիա ․ ուր լուաւ զմարտիրոսանալ հօրն ։ Իսկ յետ ութ ամաց եղեալ ՚ի կերպարանս բժշկի՝ գնաց ՚ի թրակիա ․ և եկեալ առ կին մի այրի՝ որոյ դուստրն ախտացեալ էր աչօք , եցոյց ոչ թէ դեղօք ինչ օգնել նմա ․ և բժշկեաց զնա անուամբն քսի ։

քնի ։ Յայնժամ կամեցաւ մայր աղջկանն տալ զդուստրն իւր նմա 'ի կնութի, կարծելով՝ թէ այր իցէ․ քանզի ետես զնա երիտասարդ հասակաւ, գեղեցիկ երեսօք, և ճարտար յարուեստ բժշկութե ։

Իսկ կալիսթինէ իբրև գիտաց, թէ քրիստոնեայ են և նք՝ մայրն և դուստրն, յայտնեաց նց զինքն, և զանցս՝ որ անցին ը նա և ընդ ծնօղս իւր․ և զտեղի կալաւ անդէն առ ժամանակ մի ։

Իսկ յետ մեռանելոյ մաքսիմիանոսի՝ յորժամ էառ զթագն լիկիանոս, որոյ կին էր քոյր մեծին կոստանդիանոսի, գիտացեալ կալիսթինեայ՝ թէ քրիստոնեայ է թագուհին, գնաց առ նա, և պատմեաց նմա զամ եղելոցն․ և թագուհին ընկալաւ զնա յապարանս իւր, և անուանեաց զնա մայր որդւոյն իւրոյ․ և դարձոյց առ նա զամ ինչսն, զոր առեալ էր մաքսիմիանոս 'ի հօրէ նր ։ Ապա առեալ կալիսթինեայ զօրականս 'ի թագուհւոյն՝ գնաց 'ի միջագետս ասորւոց․ և էառ զմայրն իւր և զքոյրն և զնշխարս հօրն իւրոյ, և տարաւ յեփեսոս, և եդ անդ պատուով․ ուր և ինքն և քոյրն իւր հանդերձ մարբն կային 'ի սպասու նը մարտիրոյ հօրն իւրեանց ադոկտոսի՝ բարի և առաքինասէր վարուք․ մինչև խաղաղութ հանգեան 'ի քն, և եդան մերձ առ նըյն ադոկտոսի․ ը որում տօնախմբի 'ի յունաց, և 'ի մէնջ գլխովին զօրութ՝ նաև սքանչելի դուստր նր կալիսթինէ ։

Տօնակից դոգցես ը առաջնոյն, եթէ չիցէ նոյն,

նոյն , զմիւս եւս՝ ադոկտոս վկայ՝ իշխան պատ-
ուական 'ի նմին ժամանակի . զորմէ այսպէս
յիշատակէ եւսեբիոս կեսարացի ( պատմ .
եկեղ . է . 21 ) . * Որդ երբեմն զքրիստոնէից
քաղաք մի ողջոյն նովիմբք իսկ արամբք (կմ
զքաղաքն անտանդրոն 'ի փռիւգիա ) շուրջ
պատեցին սպառազէնք . և հրձիգ արարեալ
այրեցին զնոսա հանդերձ տղայովք և կա-
նամբք , 'ի կարդալն նց զ'ի վր ամի ածն զքս :
Մն զի առ հասարակ համօրէն բնակիչք քա-
ղաքին , և վերակացուն ինքնին և դատա-
ւորք՝ ամ պատուականօք հանդերձ և բո-
վանդակ ժողովրդովք քրիստոնեայս զան-
ձինս խոստովանեալ , ոչ ինչ հաւանէին
հնազանդել՝ որոց հրամայէինն կռապաշտել :
Նաև այլ ոմն՝ 'ի հռովմայեցւոցն աշտիճանի
երևելի , ադոկտոս անուն , ազգաւ նշանա-
ւոր 'ի մէջ իտալացւոց , և է ամ անցեալ այրն
առ 'ի թգւորաց պատիւ . ոչ զի և զէ հան-
րական տնտեսութե՝ զառ 'ի նոցանէ կոչե-
ցելոյն մագիստրութե և համարակալութե
անարատ վճարել զգործս . և յայսր ամի վր
փայլեցեալ ածպաշտութեն ուղիղ կարգօք
և առ քսն ալ խոստովանութք , վկայութեն
պսակաւ զարդարեցաւ , 'ի վր համարակա-
լութեն գործոյ՝ զյաղագս բարեպաշտութեն
ժուժկալեալ զմրցանս || :

Զսա յիշատակեն հռովմայեցիք 'ի փետր .
7 . թանիւ եւսեբի . ոչ և յոյնք 'ի նմին աւուր
է ժամագրոց նշանակեն զփռիւգացի վկայս :
Նայլէ և ադոկտոս ոմն վկայ զայնու ժամա-
նա-

նակաւ նահատակեալ 'ի հռովմ ընդ փեղլիքսի
քահանային ․ որ ընդ ցուցանելոյ արևմտեան
վկայագրաց յօգոստոսի 30 ․ առ անծանօթ
լինելոյ՝ թէ ո՛ ոք իցէ և ուստի՛, և զի՞նչ անուն
նորա, 'ի հռովմայեցւոց կոչեցաւ ատաւքտ-
դուս, իմա յաւելեալ կամ աճեցեալ 'ի լինել
պսակակից նոյն փեղլիքսի ․ և սմին ադովկտո-
սի շինեաց դամբարան 'ի հռովմ դամասոս
հայրապետ ։ Այս որիշ է սա յերկոցունց
առաջնոց ․ բայց՝ զերկոսին զնոյն զնահատա-
կեալսն յարևելս՝ ոմանք իբրև զմի համա-
րին ։ (1)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Եթէ պարտ իցէ որոշել զադովկտոս եփեսացի 'ի
փռիւգացւոյն, յոյսմաւուրք Հ․ զառաջինն միայն յի-
շեն ընդ դստեր իւրում 'ի հոկտ․ 4․ այսպէս․ * 'Ի սմին
,, աւուր յիշատակ վարուց և նահատակութեան սրբոյն
,, ադոքտոսի, և դստերն իւրոյ կալիսթինեայ ||․ ոմն և
Ց․ բս․ 'ի նոյն հոկտ․ 4․ ուր ժամագր․ յն․ զհայրն դնէ
ուրոյն 'ի հոկտ․ 3․ և զդուստրն 'ի հոկտ․ 4։ Իսկ Լ․ չու-
նի սատ զյիշատակ սոցա, բաց յառանձին վկայագրոց․
ընդ գալեսինեան օրինակն յիշէ զհայրն ևեթ 'ի հոկտ․ 4․
և կոստեղանեանն զդուստրն միայն 'ի հոկտ․ 4։
Բայց քանզի 'ի տօնացոյցս մեր չիք անուն կալիսթի-
նեայ, այլ միայն ադովկտոսի (գրեալ հասարակօրէն ա-
դոքտոս, և ընդ օրինակաց ինչ ադոքդոս, կամ աթոքդոս)․
կամ անխտիր մարթի հայիլ յեփեսացին և 'ի փռիւգա-
ցին, և կամ զերկոսին ընդ մի համար առնուլ․ զորս հա-
սարակօրէն այլք զանազանեն, ոմն և բոլլանդեանք իսկ․
բայց վկայեն՝ թէ ընդ ոմանց երկոքեան մի կարծին ։ Զի
թէպէտև մին ասի լինել յեփեսոս, կամ յեփեսոսէ, և
սպա նահատակեալ 'ի միջագետս, և միւսն յիտալիոյ՝ և
նա-

նահատակեալ 'ի փռիւգիա, բայց չեն կարի որոշ անուանք քաղաքացն արեւելից, յորս մին և միւսն ասի կատարեալ. զի ոմանք փոխանակ եփեսոսի՝ ափրիկէ գրեցին. Ժամագիրքն յունաց փոխանակ միջագետաց դնէ մելիտինէ. և առ եւսեբի չէ յայտ, արդեօք ուղղանորո՞ն պարտ է ընթեռնուլ. զի հանդերձ նոքիմբք իսկ արամբք, եթէ անդանարոն, որ է անուն քաղաքի 'ի փռիւգիա. Թող զի եւսեբիոս յետ կատարելոյ զբան իւր՝ որ զփռիւգացի վկայից հրով կատարելոց, ուրոյն յիշէ և զկատարումն մեծի առն ադոկտոսի. նմին իրի և յոյնք ոչ յիշեն 'ի փետր. 7. ընդ փռիւգացի վկայս զադոկտոս, որպէս առնեն լատինք: Թող զի ոչ զեփեսացի կարծեցեալն, նոյնպէս և զփռիւգացի համարեալն՝ անխտիր գրեն յոյն և լատին օրինակք ատաւքդուս կամ ատաւքուս, ատաւքդոս կամ ատաւքոս:

Առ 'ի պահել զայս խնդիր անգիտելի յիւրում վիճակի՝ պահեցաք մեք զընթերցուած Հ. * յեփեսոս քա-
,, ղաքի ||. որում մարթ է իմանալ զադոկտոս իտալացի՝ դուքս լեալ յեփեսոս. ուր 'ի Յ. դնի * յեփեսոս քա-
,, ղաքէ ||. որպէս թէ լինել ծննդեամբ եփեսացի, ըստ որում պարզաբանեն և լատին Թարգմանք: Հենսքենիոս բոլլանդեան՝ որ 'ի փետր. 7. խօսի զնահատակելոյն 'ի փռիւգիա, համարի զկատարումն նորա լինել յամի իբր. 303: Իսկ բիւյէոս բոլլանդեան, որ 'ի հոկտ. 4. խօսի զհօրէն կալլիսթինեայ, զկատարումն նորա դնէ յամի իբր 305. և զփոխադրութիւն նշխարացն 'ի միջագետաց յեփեսոս՝ յամի իբր 313:

Զուարճալի է վէճն հենսքենիոսի ընդ սոլանիացի հեղինակս, որք ջանացանն ցուցանել, թէ ադոկտոս յիշատակեալն յեւսեբեայ հանդերձ ընկերօքն ոչ 'ի փռիւգիա արեւելից իցէ նահատակեալ, այլ 'ի քաղաք մի սոլանիոյ՝ փռիգիա անուանեալ, որ այժմ փռիաս ասի. որ է անհիմն զրոյց:

Զարմանալի ևս է յերկուս հետս կալալն բիւյէոսի վասն պատմութեան հօրն կալլիսթինեայ: Գիտնաւորք ասէ խիթան, թէ կեղծիք իցէ կարծիքն այն, որ վասն խնդրելոյ կայսեր զդուստրն ադոկտոսի զկալլիսթինէ 'ի կին. թէպէտև աստիճան հօրն ոչ էր անվայելչական. * Բայց
,, զիարդ և իցէ (ասէ), ինձ իսկ ոչ ճշմարտանման երեւի,
,, թէ մաքսիմինոս խնդրեալ իցէ զկալլիսթինէ յօրինա-
,, ւոր ամուսնութիւն: Այն կարծիք երեւի ընդունելի,
,, թէ մաքսիմինոս՝ որ յամէ 305 մինչև ցամն 313 յարեւե-
,, լեան

,, լեան կողմանս ունէր զլեկ իշխանութե՛, երեւի թէ
,, ամուսնացեալ էր ը՛ բոլանդակ այն միջոց ժամանա-
,, կի, յորում ը՛ սսացելոցս ողան զ՚րըն ադոկտոս, և
,, այն յառաջ քան զամն 312, վ՚ն չտալոյ նմա զդուստրն
,, իւր զկալիսթինէ։ Այլ ասիցես. և միթէ չկայցէ՞
,, ինչ նշմարանք ճշմարտութե՛ 'ի բանս ժմ. յն. (փ՛ 'ի
պատմութե՛ ադոկտոսի և կալիսթինեայ): Մաքսիմի-
,, նոս թէպէտև ամուսնացեալ, անսանձ վաւաշոտութ՛
,, էր ջեռեալ. որով զո՛ ոք և է 'ի տիկնայց պատուա-
,, կանաց գարշաբար ապականեաց. զոր ունիս 'ի միտ
,, առնուլ յեւսեբեայ. պատմ. էկէղ. Է. 14... (ոպ և 'ի
լակտանտիոսէ յաղագս բարուց հալածչաց. Գլ. 38. և 39):
,, Այլ ամենեին իսկ հաւատալի է, թէ մաքսիմինոս
,, տռփեալ իցէ 'ի կալիսթինէ առ անարժան և անօրէն
,, անկողին կմ՛ 'ի պէտս հարճութե՛||:

Զարմանալի ասեմ. զի յետինք 'ի բոլանդեանց, յորոց ոսկի տեսաք զատիլտինդ 'ի պատմութե՛ հւփսիմեանց, և ասա զբիւյէոս զվերջինն արդեօք 'ի բոլանդեանս՝ 'ի պատմութե՛ կալիսթինեայ, վարանական մտօք խղճահարութե՛ դոգցես խօսին զամպարիշտ և զչեղծ թագաւորաց հեթանոսաց, զդիոկղետիանոսեանց և զմաքսիմիանոսեանց, զի մի՛ արդեօք սխալեսցին 'ի գնելն՝ թէ նք ոչ շատանային միով կնաւ. ուր գիտեն՝ թէ թէպէտև անոճամբ մի էր գլխաւոր թագուհին, բայց արդեամբք բազում էին նց կանայք, եթէ՛ օրինաւորք և եթէ ապօրինաւորք. և զի՞ այնուհետև այսչափ այսր և անդր դեգեին 'ի տալ լուծումն խնդրոյն, որ և ոչ խնդիր իսկ տանի. թո՛ղ զթ՚րաց քրիստոնէից այդպէս զգուշութե՛ խօսեսցին, և մի՛ զանհաւատից, առ որս օրէնք են այդպիսի խառնակեցութիւնք։

Թողից զսխալանս հենրիկոսի վալեսիոսի 'ի ծանօթութիս եւսեբիոսի, ուր թէպէտ բարւոք ասէ՝ թէ ուղղագոյն է ընթերցուածն, որ ը՛ բազում ձեռագրաց. տատաւքդոս, համաձայն հռուփինոսի և այլոց, քան ը՛ ոմանց՝ ատաւքոս, սակայն որոշէ զատաւքդոսն եւսեբեան յայնմանէ՝ որ դնի 'ի Ղ. փետր. 7. փոխանակ ասելոյ՝ թէ անդ եդեալն է նոյն՝ նովին իսկ բանիւ եւսեբեայ. և տարբեր է եդեալն 'ի Ղ. օգոստ. 30. ը՛ փելիքսի. ոպ և յայտ է։

ՍԿՄ.

# ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

## Ռոմանոսի կմ Ռոմանոսի երգեցողի ։

Հ. Հոկտ. 9 ։ Յ. Հոկտ. 1 ։

ՌՈՄԱՆՈՍ ԵՐԳԵՑՈՂ երանելին, որ 'ի յունաց կոչի ռոմանոս մելոդիստաց կմ քերթող կոնդակաց, էր հայրենեօք յերկրէն ասորւոց 'ի քաղաքէն եմեսացւոց (որ և Հեմէս կամ Համս). և եղև սարկաւագ եկեղեցւոյն բերիւտայ (որ է պէրութ), քաղցրաբարբառ և բանիբուն, վարժեալ յամ տեսակս առաքինութե, և կեցեալ մեծաւ ջգնութբ 'ի մանկութէ իւրմէ ։ Սա գնացեալ 'ի թագաւորեալ քաղաքն 'ի կոստանդինուպօլիս յաւուրս անաստասայ կայսեր՝ որ նստաւ յամի 491, բնակութի կալաւ առ դրան տաճարի ամենասրբ աստուածածնի, որ 'ի տեղին կոչեցեալ կիրու կմ կիւրայք՝ մօտ յեկեղեցի կուսին, որ 'ի վլաքերնա. և կայր անդէն ամ երկիւղածութբ և բարեպաշտութբ. և ջերմեռանդն աղօթիւք զամ գիշերս տքնէր 'ի վլաքերնա, և ընդ առաւօտն դառնայր 'ի կիրու, ծածկեալ յամենեցունց զառաքինութի իւր և զգիտութի ։

Եւ

Եւ եղեւ 'ի միում գիշերի երեւեցաւ նմա յե-
րազի ս՟բ ա՟ծածինն , և ետ նմա տումար մի
գրեան, և հրամայեաց ուտել զայն. և թուէր
ռոմանոսի բանալ զբերանն և կլանել ըզ-
թուղթն զայն . և օրն էր տօն ծննդեանն
ք՟ի ։ Եւ զարթուցեալ առ ժամայն 'ի քնոյն՝
ել յամպիոն , և սկսաւ նուագել կցորդ 'ի
խորհուրդ ծննդեանն ք՟ի քաղցր եղանակաւ
և անոյշ ձայնիւ՛ ը՟ յունաց , սկսանելով այս-
պէս . * Կոյսն այսօր զգերագոյականն ծնա-
,, նի || ։ Եւ այնուհետև յօրինեաց երգս 'ի
վերայ ա՟մ տ՟րունական տօնից , և 'ի պատիւ՛
երևելի երևելի ս՟բց , կցուրդս իբր հազար .
որ առ յոյնս կոնդակ կ՟ի գօնդա՛գիօն ասի .
զոր և մինչև ցայսօր պաշտեն ա՟մ եկեղեցիք
հոռոմոց ո՟պ զշարականս՝ զոյգ ընդ շարակա-
նաց յօրինելոց 'ի ս՟բյն գերմանոսէ և յայլոց
երգաբանից իւրեանց ։ Եւ ինքն ս՟բն ռոմա-
նոս կատարեալ զընթացս իւր առաքինի քա-
ղաքավարու՟բ՝ հանգեաւ խաղաղու՟բ 'ի տ՟ր ։
Այսչափ ինչ միաբան աւանդութ՟բ յայսմա-
ւուրաց յունաց և հայոց զերանելւոյս . զոր
ը՟ ադօկտոսի տօնեմք յայսմ վայրի , զի կա-
տարումն երկոցունց ևս եղև յամսեանն հոկ-
տեմբերի . ո՟պ և 'ի նոյեմբերի 3 . է և առ
այլս փոխադրութիւն նշխարաց ս՟բյն գէոր-
գեայ , որում տօնակից լինին առ մեզ ադոկ-
տոս և ռոմանոս ։

Վ.ԿՐ.

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Դաւթի Դունեցւոյ։

Հ. մարտ. 31։ Յովհ. կաթ. և այլ պատմաբանք մեր։

ԽԱՂԱՂԱՍԷՐ ՆԱ-
հատակն և քաջայաղթ վկայն
քրիստոսի Դաւիթ երանելին, որոյ
առաջին անունն Սուրհան,
պարսիկ էր ազգաւ՝ յարքունի զարմէ իջեալ,
որդի առն մահմետականի․ բայց քզի մայրն
էր քրիստոնեայ ՚ի հայոց անտի ծին պար-
սից, ունէր տեղեկութիւն և օրինաց քրիստո-
նէութեան։ Դէպ եղև սմա գալ ՚ի հայս ընդ
զօրս այլազգեաց՝ յամի տն իբր 665, ՚ի կա-
թողիկոսութեան տն անաստասայ, և ՚ի պատր-
կութեան գրիգորի մամիկոնենի, որ կարգեալն
էր իշխան հրամանատար հայոց մեծաց՝ ընդ
տրութեամբ ամիրապետին հագարացւոց։

Նա տեսեալ սուրհանայ զպարկեշտ վարս
քրիստոնէից՝ հաւանեցաւ կարգաց և կրօնից
մերոց․ եթող զընկերսն իւր, և եկեալ առ
գրիգոր բարեպաշտ իշխանն հայոց՝ ասաց
նմա զկամս հաւանութեան իւրոյ ՚ի քնական հա-
ւատս մայրենի․ և նա առեալ տարաւ զնա
առ առաջինի հայրապետն անաստաս։ Յայն

ժամ երախայացոյց զնա հայրապետն աւուրս ութ, ուսուցեալ նմա ը՟ ՚ոք հաւատոց և զամ կարգ բարեպաշտութե. և ապա յետ ութ աւուրց մկրտեաց զնա տր անաստաս 'ի կաթողիկէն ուրձոյ. և կոչեաց զանուն նր դաւիթ յանուն հօրն գրիգորի մամիկոնէի, որ եղև նմա կնքահայր՝ ընկալեալ զնա 'ի նք աւազանէն. և ետ նմա 'ի կալուածս զձագաւանն 'ի նահանգին կոտայից:

Նա յետ աւուրց ինչ յորդորեալ 'ի բարեկամաց՝ ամուսնացաւ դաւիթ 'ի կարգ Տիս, քանզի յարբունս իսկ հասեալ էր. և կալաւ իւր բնակութի 'ի դուռն քաղաքի, յորմէ և դուռնեցի կոչեցաւ, քաղաքավարեալ բարի և աստուածահաճոյ վարուք. և ծնաւ ուստերս և դստերս. զորս և վարժեաց հաւատոյն քնի և աստուածապաշտ կարգօք, մինչև 'ի հասանել իւր 'ի բարւոք ծերութի իբր վաթսուն ամաց հասակի:

Յորում ժամանակի առ հայրապետութբ երանելւոյն սահակայ կթղկսի ձորոփորեցւոյ առաքեցաւ 'ի դրանէ ամիրապետին յՏն հայոց ոստիկան առաջին հագարացի՝ աբդլլայ ամիրայ կոչեցեալ, այր խորամանկ և անագորոյն. որոյ նստեալ 'ի մայրաքաղաքն 'ի դուին՝ նախ քաղցրութբ ժողովեաց առ ինքն զմեծամեծ նախարարսն և զաւագ ազատորդիսն հայոց. և ապա սկսաւ նեղել զնս ծանր հարկապահանջութբ, մինչև կողոպտել զամենեսին 'ի ստացուածոց, և մերկացուցանել զզարդս եկեղեցեաց. որ և զերանելին

սահակ հայրապետ, և զամբաստ բնութեան ապարապետ առաքեաց կապանօք 'ի դուռն 'ի դամասկոս ։

Յետ այսորիկ ազդ եղև նմա վասն դաւթի դունեցւոյ, թէ 'ի խորասանայ եկեալ է աստ այր ոմն սուրհան անուն' որդի առն պարսկի․ որոյ թողեալ զայլազգութիւն, և եղեալ քրիստոնեայ' դաւիթ կոչի ։ Հրաման ետ վաղվաղակի ածել զնա առաջի իւր․ և հարցեալ զնա' եգիտ անշարժ 'ի հաւատս քրիստոսի․ և որ ցասուցեալ ոստիկանին' հրամայեաց հարկանել զբերան նորա վասն զՔրիստոս Աստուած փառաբանելոյն ։ Նա և իբրև վերացոյց զօրականն ըզձեռս իւր 'ի հարկանել զսուրբն, կապեցաւ բազուկ նորա, և ոչ կարաց պարզել ։ Յայնժամ զահի հարեալ ոստիկանին' ետ տանել և արկանել զնա 'ի բանտ, և թողուլ անսուաղ․ իսկ սուրբն դաւիթ լցեալ հոգւովն սրբով' կամաւոր յօժարութեամբ ձգնէր վասն սիրոյն քրիստոսի, և անդադար աղօթիւք գոհանայր զԱստուծէ․ զի վասն անուան նորա արժանի եղև անարգանաց և չարչարանս ընդունել և 'ի բանտ մտանել 'ի ժամանակի ծերութեան իւրոյ ։

Նա յետ ութ աւուր հանեալ կացուցին զնա յատենի․ և ասէ ցնա ամիրայն․ մինչև յերբ կեաս յամառեալ անմտութեամբ․ եկ դարձիր յօրէնս հայրենիս ։ Ասէ դաւիթ․ յամառեալ դուք էք, որ ոչ գայք 'ի ճշմարիտ Աստուածգիտութիւն քրիստոնէական սուրբ հաւատոյս ։ Իսկ բռնաւորն հրաման ետ ընկենուլ զնշան սուրբ խաչին յերկիր, (զոր կամ 'ի ծոց նորա գտին, և կիմ յե-

կե-

կեղեցւոյ բարձեալ էին , ) և ակնարկեաց ծառայից իւրոց կափահարել և նեղել զդաւիթ , զի կոխեսցէ ոտիւք զխաչն ։ Իսկ երանելին փութացաւ 'ի վեր էառ զն՟ր խաչն ․ և համբուրեալ արտասուօք եդ 'ի վ՟ր աչացն ․ և ցասմամբ առէր ցամիրայն ․ ա՛ ամենաչար , գիտեա՛ , զի 'ի սիրոյն ք՟սի , և յերկրպագութե՟ն ս՟բյ խաչիս՝ որ է պսակ պարծանաց հաւատացելոցս 'ի ք՟ս , ոչ կարես զիս մեկնել՝ ոչ հրով , ոչ սրով , ոչ կենօք և ոչ մահուամբ ։ Իբրև ետես ամիրայն զհաստատուն միտս ն՟ր 'ի ք՟ս և 'ի սէր խաչին , հրամայեաց սպանանել զնա 'ի վ՟ր խաչափայտի ը՟ս օրինակի տ՟ն իւրոյ ։ Իսկ յորժամ եկին ս՟բ վկայն 'ի տեղի կատարմանն՝ մօտ 'ի դուռն վանաց ս՟բյն սարգսի 'ի վերայ բուռն պողոտային , անդ խնդրեաց 'ի դահճաց ներել նմա փոքր մի , զի յաղօթս կացցէ ․ և անկեալ առաջի խաչին՝ որ պատրաստեալ էր վ՟ն նորա , տարածեաց զձեռս իւր , և ասէ ․ տ՟ր ա՟ծ իմ , գոհանամ զքէն , որ արժանի արարեր զանարժանու՟իս իմ մեռանիլ այսու օրինակաւ վ՟ս անուանդ քում ս՟բյ , և ընտրեցեր զիս քեզ 'ի խաչակցութե՟ն , և 'ի մասն ժառանգութե՟ն վիճակի ս՟բց քոց ։ Իսկ ասացեալ զամէնն՝ կնքեաց զանձն նշանաւ ս՟բ խաչին , և իւրովի տարածեցաւ 'ի վ՟ր խաչափայտին ։

Իսկ դահճացն կապեալ զոտս և զձեռս դաւթի 'ի վ՟ր խաչին՝ կանգնեցին զխաչն դէպ յարևմուտս ․ յայնժամ նշան զարմանալի եղև , զի փայտ խաչին իւրովի ճախր առեալ՝

դարձոյց զերեսս սրբոյն յարեւելս ։ Եւ առեալ դահճացն զգեղարդունսն ՚ի ձեռս՝ ասեն ցնա ․ ասա՛ եւ արա՛ վաղվաղակի զհրամայեալն քեզ յամիրայէն , զի մի՛ կորիցես ։ Իսկ սուրբն անփոյթ արարեալ զխօսից նոցա եւ զտանջանացն , յաղօթս կայր զուարթ երեսօք ՚ի վերայ խաչին ։ Կայր մօտ եւ ամուսին սրբոյն , եւ քաջալերէր զնա պինդ կալ ՚ի հաւատս Քրիստոսի Աստուծոյ ։ Յայնժամ դահճիքն խոցեցին զերանելին գեղարդեամբ ՚ի սիրտն եւ յերկուս կուշտսն , եւ այնպէս կատարեցաւ ՚ի Քրիստոս սուրբն դաւիթ բարի հաւատով՝ յաւուր երկուշաբաթի աւագ զատկին՝ յիններորդ ժամու , յամի տեառն 693 ․ եւ ՚ի թուին հայոց ճխբ ․ ՚ի մարտի ․ 31 ․ քանզի զատիկն եր յայնմ տարւոջ ՚ի մարտի ․ 30 ։

Ապա հրաման առին մեծամեծք հայոց բազում աղաչանօք եւ ընծայատրութեամբ յամիրայէն՝ բառնալ եւ թաղել զնահատակն ըստ օրինի քրիստոնէից ․ եւ վաղվաղակի հասին ՚ի տեղին տէր սարգիս եպիսկոպոսն ամատունի քահանայիւք եւ պաշտօնէիւք , եւ մուշեղ իշխանն ՚ի մամիկոնեան ցեղէ , եւ արտաւազդ եղբայր նորա , եւ այլք բազումք յազատացն մնացելոց ․ եւ առեալ ՚ի փայտէն զմարմին սրբոյն դաւթի՝ տարան ՚ի սուրբն գրիգոր կաթուղիկէն դուինայ ․ եւ պատեալ մաքուր կտաւօք եւ անոյշ խնկօք՝ եդին սաղմոսիւք եւ օրհնութեամբ առընթեր վկայարանի սրբոյն յիզտբուզտի ։ Եւ զփայտ չարչարանացն դաւթի յօրինեցին խաչ , եւ կանգնեցին ՚ի վերայ տապանի սրբոյն ․ որպէս եւ

զգե-

զգեղարդն՝ որով խոցեցին զնա, գնեաց մեծա-շեղ քան զահեկանի, և ետ խաչ ձևացու-ցանել. զի երկրպագեսցի և պատուեսցի 'ի փառս քի, և 'ի յիշատակ խաչազգեաց նա-հատակի նորա սբյն Դաւթի Դունեցւոյ ։

Արդ՝ ոչ տօն սբյն Գէորգեայ 'ի միջոցէ յի-նանց 'ի գարնայնոյ բերաւ 'ի միջոց աշնայ-նոյ, նոյնպէս և զկնի նորա եղաւ աստանօր տօն երանելւոյն Դաւթի առընթեր վարա-գայ խաչի ։

## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### Սբյն Պամպէոսի և Պամպէուհեայ, որ և Նուղամպիոս և Նուղամպիա ։ (1)

Ն. հոկտ. 9 ։ Յ. և Ժ. հոկտ. 10 ։ Ճառընտ. Ա. էջ. ՆԸ = ՆԺԶ ։ Մետափր. առ սուր ։ Բոլլանդեանք. 'ի Ե հատ. հոկտ. 10 ։ (2)

ԴԱՍԲԱԲՔ ՍՐԲՈՒ-թեան ընդ անուանեցն արդիւնա-ցեալք և ջահաւորեալք 'ի հան-դէս վկայական, սիրունք և սի-րեցեալք՝ եղբայր և քոյր Նուղամպէոս և Նուղամպէուհի, որ և Նուլամբիոս և Նուլամ-բիա ընդ յունաց, էին 'ի Նիկոմիդեայ քաղա-

քէ բիւթանացւոց՝ 'ի ժամանակս Հալածա-
նաց Մաքսիմիանոսի կայսեր. իմա՛, կամ Հե-
րակլէս կոչեցելոյ՝ գահակցին Դիոկղետիա-
նոսի, և կամ Գաղերիոս արմենտարիոս ան-
ուանելոյ՝ փեսային Դիոկղետիանոսի. քան-
զի և երկոքեան սոքա մի քան զմի բորբոքե-
ցին զՀալածանս։ Արդ 'ի միում նուագի նո-
րոգել կամեցեալ Մաքսիմիանոսի զդառն Հրա-
մանն Հալածանաց՝ յեօթներորդ ամի Թ̃գրու-
թ̃ե իւրոյ, 'ի Հեթանոսական տօնի դեմե-
տրեայ ա̃ծուՀւոյն, Հրովարտակ առաքէր
ը̃ ա̃մ գաւառս իւրոյ իշխանութե̃ն, որ ունէր
օրինակ զայս.

Մաքսիմիանոս ինքնակալ Թագաւոր՝ ողջոյն
ասեմ ամենեցուն, որոց ը̃ ա̃մ ա̃ծս մերոյ Թա-
գաւորութե̃ս քաղաքք իցեն, ծառայից և
ազատաց, մեծատանց և փոքունց։ Կամ եղև
ինձ Հանդերձ սինկղիտոսիւ պատուակա-
նաւ, ո̃պ զի յորժամ՝ Հասցէ առ ձեզ դիր
Հրամանիս մերոյ, ամենեքեան առ Հասա-
րակ՝ յերևելւոջ աւուրն, որ օր երեք է ա-
րէոս ամսոյ (3), պատարագօք և անուշահոտ
խնկօք մտանիցէք յաղօթս 'ի բագինս մեծի
ա̃յն դեմետրի. որպէս զի 'ի ձեռն զոհից և
նուիրաց Հաշտեսցի մեծ ա̃ծն ընդ ա̃ծս մեր.
ապա եթէ ոք ընդդէմ ապստամբ երևեալ՝
Հակառակ կացցէ Հրամանաց մերոց, և ոչ
զոհիցէ, զայս խորհեցաք 'ի վ̃ր այնպիսեացն՝
նախախնամութ̃բ ա̃ծոցն՝ չարաչար տանջանս
ածել 'ի վ̃ր նց, և զանազան կտտանօք բառ-
նալ 'ի կենաց։

Արդ

Արդ իբրև տարածեցաւ ամպարիշտ քարո-
զութիս այս ը ամ Յն յունաց, բազում խու-
ժութիւնք և տարակուսանք հասանէին 'ի վր
քրիստոնէից. վն զի ոմանք նաւակոծեալք՝
թուլացեալքն 'ի հաստատութենէ հաւատոցն՝
'ի խորս սատանայական կռապաշտութեն ըն-
կղմէին. և այլք քաջասիրտ գոլով հաստա-
տեալքն 'ի վր վիմին հաստատնոյ, յայտ-
նապէս խոստովանելով զքս՝ փառաւորեալք
լինէին վկայական մահուամբ. և բազումք
խոյս տուեալ 'ի ժամանակին՝ թողեալք զիւ-
րաքանչիւր բնակութիս, 'ի լերինս և 'ի յայրս
բնակէին, յինքեանս բերելով զվշտպութիս
սբց պատուիրանաց. և ոպ նախանձաւորին
եղիայի փախուցեալք լինէին 'ի կռապաշ-
տութեցն, ոպ և նա յանօրէնութեցն յեզա-
բէլի։

Ընդ այսպիսի փախուցեալս և թաքուցեալս
յայրի միում 'ի լերինս նիկոմիդեայ էր և եւ-
ղամպէոս պատանի ուշիմ և իմաստուն՝ համ-
դերձ քերբն իւրով, զոր իւր իսկ կրթեալ
էր 'ի հաւատս քսի ( վն որբ մնալոյ 'ի ծնո-
ղացն ) ։ Դէպ եղև յաւուր միում առաքել
փախստականաց զեւղամպէոս իբրև մանուկ
ժիր 'ի քաղաքն՝ գնել նշ հացիկ. միանգա-
մայն և գիտել վն հալածանացն, թէ զի՞նչ
արասցեն։ Արդ իբրև եկն անդր պատանին,
ետես զբազումս՝ զի խուռն ընթանային 'ի
տաճար կռոց. քանզի հասեալ էր նշանա-
կեալն օր տօնի հեթանոսաց։ Նա մինչդեռ
պշուցեալ հայէր ը հրովարտակն եդեալ 'ի

վր սեան առ դրան քաղաքին , և զարմացեալ
էր ըստ կուրութեն մտաց մարդկան անզգայե-
լոցն ՚ի կուռսն , յանկարծակի տեսին զնա
պահապանք դրանն , և ասեն ցնա . վն էր
այդր պշուցեալ կանգնեալ կաս պատանի
դու , և ոչ երթաս ՚ի տաճար մեծ ածոցն և
զոհես նց , ոպ ամ մարդիկդ՝ զոր տեսանես .
և կամ թէ ոչ գիտես , եթէ այսօր մեծ տօն
է դից : Իսկ նր այպանեալ զբանիւք նց՝ դար-
ձաւ յետս , և ոչ կամեցաւ մտանել ՚ի քա-
ղաքն , այլ փութայր երթալ պատմել եղ-
բարցն՝ զոր ետես :

Յայնժամ իմացեալ պահապանացն՝ եթէ քրիս-
տոնեայ է նա , զհետ մտեալ կալան զերա-
նելի մանուկն . և տան հարեալ հարցանէին ,
եթէ ուստի իցէ : Իսկ իբրև խոստովան եղև
զքրիստոնէութի իւր , կապեցին զնա , և ա-
ռեալ ածին առաջի դատաւորի քաղաքին ,
որում անուն էր Մաքսիմոս . և ասեն . դտաք
զսա , զի մտանէր ՚ի քաղաքս՝ զբաղումս դար-
ձուցանել կամելով ՚ի զոհից կռոցն . և վն
այնորիկ կալեալ ածաք առաջի ձերոյին քա-
ջութեդ , ոպ զի արժանապէս դատեալ ե-
կեսցէ ՚ի հաւանութի երկիր պագանել կռոցն :
Իբրև հայեցաւ դատաւորն ըստ հասակ ման-
կութեն և ըստ գեղեցկութի պատկերին , կա-
մելով որսալ զնա պատրանօք հրապուրանաց՝
սաստիկ պինի ետ արանցն՝ որ բերին զնա ,
և ասէ . Իսկ ընդէր այդպէս յանդգնաբար
կապեցիք զդա ով ամենաչարք . վն զի այդ-
պիսի դեղ ոչ թշնամանաց է արժանի , այլ՝
պատ-

պատուո՛յ ․ այլ 'ի բանն արձակեցէք զդա , և մի՛ ահացուցանէք ․ ո՞չ զի մեղմով ուսանիցիմ 'ի դմանէ զա՟մ , թէ ո՞վ է և ուստի՞ ․ և կամ ե՞ր վարկպարազի մատնեցաւ յատեան մեր դատաւորութեան ․ զի և ո՛չ է արժան զուր իսկ սպանանել զոք , և ո՛չ ինքնակալքն զդոյն հրամայեցին , մանաւանդ զայնոսիկ՝ որք զօհեն ա՟ծոցն ։

Եւ յասել նո՟ր զայս՝ մատուցեալ ո՟մն , որում անուն էր ապողոն , արձակեաց զձեռս եւղամպէոսի ։ Յայնժամ ասէ ցնա դատաւորն ․ ո՞վ մանուկ դու պատմեա՛ ինձ , թէ զի՞նչ անուն է քո ․ և՝ ծառա՞յ իցես , եթէ ազատ ։ Պատասխանի ետ նմ՟ա մանուկն , և ասէ ․ անուն իմ եւղամպէոս կոչի 'ի ծնողաց իմոց ․ և ծառայ եմ միայնոյ ա՟յ՝ որ յերկինս է ․ իսկ ը՟ս մարդկան ազատ , այլև 'ի նշանաւոր ծնողաց ։ Ասէ ցնա դատաւորն ․ և ը՟է՞ր այդպէս իբրև զվատթարազգի ոչ հնազանդիս ինքնակալացն և զոհես ա՟ծոց ։ Պատասխանի ետ եւղամպէոս և ասէ ․ որո՞ց ա՟ծոց ունիցիմ զոհել ։ Ասէ դատաւորն ․ դիայ և ապողոնի , և մանաւանդ մեծին դեմետրի 'ի տօնի նո՟ր ։

Եւղամպէոս ասէ ․ յոյժ մոլորեալ ես ո՛վ դատաւոր՝ զկորստականսդ ա՟ծս ասելով ․ քանզի դիայդ անունն սկիզբն ասի կորստեան ․ և ապողոնն այլովքն հանդերձ կործանումն անձանց հաւանելոց նմա (4) ։ Պատասխանի ետ դատաւորն , և ասէ ․ եւղամպիէ ո՛չ բարւոք առնես այդպէս թշնամանօք հրապարակախօս լինել յա՟ծսն ․ երկնչի՛մ , դուցէ բարկանան

և

և սատակեն զքեզ։ Իսկ սուրբն ասէ աներկիւղ համարձակութեամբ. աստուածք հեթանոսաց դևք են՝ գործք ձեռաց մարդկան. նման նոցա եղիցին՝ որք առնեն զնոսա, և ամենեքեան՝ որք յուսացեալ են 'ի նոսա։ Յայնժամ բարկացաւ դատաւորն, և ասէ. Իբրու տեսլեամբդ քո յափշտակեցեր զիս, և մինչ այնորիկ գթացայ 'ի քեզ. կարծիցես թէ իսպառ այսպէս պատրեցայց 'ի քէն. իսկ արդ՝ ոչ գիտես, զի և աստուածքն իսկ բարկանան մինչ չարաչար հայհոյութեանդ քո. և զոր առ 'ի քէն արժան էր մատուցանել նոցա զոհս, ոչ պարտ վարկան արդեօք ընդունել, այլ մատնեցին զքեզ 'ի ձեռս իմ, որպէս զի չարաչար կորիցես. բայց և արդ ես մարդասիրապէս խրատեմ զքեզ. Երթ գնա՛ 'ի բագինս պատարագօք, որպէս զի հաշտեսցին ընդ քեզ։ Աւղամպետս ասէ. ով անզգամ և անմիտ, աստուածք՝ որ ոչ ունին զգայարանս և միտս, զիա՞րդ իցէ բարկանալ նոցա ումեք կամ հաշտիլ։ Յայնժամ հրամայեաց դատաւորն մերկացուցանել զնա, և տարածել 'ի գետնի հարկանել նախ բրօք, և ապա արջառաջլօք. որպէս զի ակամայ ասէ խոստովանիցի զաստուածսն։ Նա տանջեալ սրբոյն յերկար՝ ամենևին ոչինչ ետ պխնի, առ ոչինչ համարելով զտանջանսն. և ապա յետոյ ուրեմն յոգւոց եհան, և բացեալ զբերան իւր՝ սկսաւ ասել այսպէս. Աղաչեմ զքեզ Յիսուս միածին որդի Աստուծոյ՝ արարիչ երկնի և երկրի. որ քոյին ոք չարչարանօքդ բժշկեցեր զչարաչար վէրս ադամայ. որ կապեցեր անլոյծ կապանօք

զկռ-

զկորստեանն զօրապետն . որ հաստատեցեր զգասս ս՟րբ քոց 'ի սէր պատուիրանաց քոց . որ փրկեցեր զիս 'ի մեքենայից բանսարկուին, և ՟որք պահեցեր զանդամս մարմնոյ և մտաց իմոց 'ի չար խորհրդոց ն՟ր, և ոչ ետուր նմա թոյլ տիրել 'ի վ՟ր իմանալեաց զգայարանացս իմոց ։ Աղաչեմ զքեզ փրկի՛չ Տէր՝ փրկեա՛ զիս 'ի հպարտութ՟ե մաքսիմոսի բռնաւորիս, և անկապուտ պահեա՛ զգեղեցիկ զարդ հոգւոյս իմոյ, և ցրուեա՛ յինէն զահ սպառնալեաց ն՟ր . ո՟պ զի յաղթեցից հակառակորդին ամենայաղթ զօրութ՟բ քո, և ընկալայց 'ի քէն զխոստացեալ բարիսն սիրողաց քոց ։

Նուէ ասել ս՟րբոյն զայսոսիկ՝ տանջօղքն լքան 'ի հարկանելն, և ոչ մնաց զօրութի 'ի ն՟մ . իսկ երանելին ևս քան զևս զօրացեալ լինէր հոգւովն ՟որբ ։ Ս՟այ հրաման ետ դատաւորն կանգնել զնա, և սկսաւ դարձեալ ողոքել զնա պատրողական բանիւք իւրովք, և ասէ . տես պատանի դու, ո՟րքան ներեն քեզ ա՟ծքն . թէպէտև դու չարահաւան բանիւք հայհոյես զնոսա ։ Պ՟խնի ետ ՟որբն, և ասէ . ընդէ՞ր այդպէս անզգայեալ ո՛վ դատաւոր՝ ոչ իմանաս զզօրութ՟ին ա՟յ, այլ կորստականացն գրես զնորայն . ո՞չ գիտես, եթէ ոչ միայն զմեզ զքրիստոնեայսս զօրացուցանէ, որք 'ի մանկութ՟է 'ի նա անկաք հաւատովք, այլև որ արդ ևս 'ի հեթանոսաց 'ի նա դառնան, վաղվաղակի 'ի թիկունս հասանէ . և դու իսկ՝ եթէ ապաւինեսցիս 'ի նա, վայելես 'ի բա-

բարութեան նորա, և ընդունի զքեզ ։

Իսկ սրտմտեալ դատաւորն հրամայեաց կախել զնա և քերել․ և մինչդեռ քերէին դահիճքն, սկսաւ երանելին ձայնիւ մեծաւ ասել այսպէս․ Որ թագաւորդ ես յաւիտենից Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ամենայն ինչ զհետ գայ հրամանաց քոց, և ոչինչ անհնարին մնայ քում կարողութեանդ, լուր ինձ, և ցոյց անզգամիս այսմիկ զզօրութիւն քո, ո՛չ զի յայսմանէ ծանիցեն ամենեքեան, եթէ ճշմարիտ են պարգևքն՝ զոր տաս համբերողաց քոց ։ Իսկ իբրև զայս ասաց, լքեալ լինէին ձեռք դահճացն՝ որ քերէին զկողս նորա․ և նահատակն Քրիստոսի ոչինչ զգայր ամենևին տանջանացն ։

Հրաման ետ դատաւորն իջուցանել զնա ՚ի կախաղանէն, և պնդել զնա երկայն չուանօք ՚ի ծագէ ոտիցն և ձեռացն․ մինչև սկսան ճարճատիլ ամենայն ոսկերք նորա ։ Իսկ իբրև այսպէս պնդեալ կայր երանելին մինչև ցմեծ ժամս, ամենևին ոչինչ ետ պատասխանի առ հարցումն բռնաւորին, այլ միայն լուռ բերանով օրհնէր զԱստուած ։ Յետ այսորիկ ետ արձակել զնա դատաւորն ՚ի տանջանարանաց (5), և սկսաւ խօսել առ նա այսպէս․ Մի՛ հակառակիր ընդդէմ հրամանի ինքնակալին, այլ հաւանեա՛ նմա, և զոհեա՛ աստուածոցն․ զի մի՛ չարաչար կորիցես ։

Ասէ երանելին․ Ես դիւաց պղծոց ո՛չ զոհեմ, այլ միայն Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի երկիրպագանեմ խաչելոյն վասն իմ ։ Մաքսիմոս դատաւոր ասէ․ Յայտ արարեր զանմտութիւն քո, զի խա-

խաչելոյ երկկրպագանեմ : Նուղամպէոս ասէ · և զի՞նչ է՝ որ արգելու զքեզ զյարութենն զնշանացն ճառս իմանալ, բայց եթէ կուրութի մտացդ · քանզի և գրեալ իսկ է, եթէ հրէից գայթակղութի, և հեթանոսաց յիմարութի · իսկ մեզ քս՝ այ զօրութի, և այ իմաստութի : Մաքսիմոս դատաւոր ասէ · և գո՞յ իսկ բնաւ ած խաչեալ : Նուղամպէոս ասէ · և իցե՞ն իսկ բնաւ ածք և ածուհիք քարեղէնք · իսկ զքսի այն իմոյ և ոչ զմարմնազգեցութեն զճառումն հետազօտել կարես : Մաքսիմոս ասէ · հայեա՛ց յերկինս, և տե՛ս զբազմալոյս արեգակն, և զլուսաբեր կաճառս աստեղաց, զոր Թողուլ կամիս և մեռանիլ : Նուղամպէոս ասէ · վա՜ էր ով դատաւոր զերկինս և զլուսին և զարեգակն և զկաճառս աստեղաց տեսանես, և զարարիչն նց ոչ իմանաս · կամ թէ ո՞չ զմտաւ ածես, եթէ ո՞չ երբէք արեգակնն զլուսինն արար, և ո՞չ լուսինն զաստեղս · այլ այս ամ որ երեւին, և որ այլ ևս աներևոյթ արարածք են, բանիւն այ ստեղծան և պահին · իսկ ինքն արարիչն անեղ է և անսահման՝ բնակեալ 'ի լոյս անմատոյց : Մաքսիմոս ասէ · և զլուսաւո՞րսդ անգամ յայլմէ արդեօք ասիցես եղեալ, և ո՞չ զայն՝ որ 'ի ներքոյ նց է, 'ի նոցանէ եղեալ : Նուղամպէոս ասէ · քա՛ւ լիցի ինձ զտարերսդ ածս ասել, զի և լուսաւորքդ տարրեղէնք են : Մաքսիմոս ասէ · ցո՛յց ինձ զածն քո, և ես զինքնակալն հաւանեցուցից : Նուղամպէոս ասէ · ո՞չ վաղ իսկ ասացի, ե-

եթէ ա՟ծ անտեսանելի և անիմանալի է · որ 'ի վեր քան զերկինս նստի , և զա՟մ յա՟մի լնու · զիա՞րդ մարդկան հնար է զնա տեսանել · վ՟ն զի ինքն զա՟մ տեսանէ , և բարերարութ՟բ նախախնամէ · այլ ումեք յայտարածական բնութեամբս ոչ տեսանի ։ Բայց եթէ կամիս ճանաչել զնա 'ի սքանչելեաց նորա , լո՛ւր և պատմեցից քեզ · արեգակն ոչ յորժամ կամի՝ ծագէ , այլ յորժամ արարիչն հրամայէ · լուսինն և աստեղք ոչ յորժամ կամին՝ լուսաւորեն , այլ յորժամ հրաշագործողն ակնարկէ · ամպք ոչ յորժամ կամին՝ ժողովին կի՟ցողեն յերկիր , այլ յորժամ կառավարին · ծով ոչ յորժամ կամիցի՝ վերանայ , կի՟ լռեալ դադարէ , այլ յորժամ հրաման առնու 'ի տ՟նէ · մարդ ոչ յորժամ կամիցի՝ առողջասցի , այլ յորժամ ստեղծիչն հրամայէ ։

Մաքսիմոս ասէ · զայդ ա՟մ ճարտարասանեալդ 'ի բաց թողեալ՝ խնայեա՛ 'ի մանկութիւն քո , և մատուցեալ երկիր պագ ա՟ծոցն , և լե՛ր բարեկամ ինքնակալին , և բազմաց իշխեսցես ։ Նեղամպէոս ասէ · և որո՞ց ա՟ծոց ունիցիմ երկրպագանել ։ Մաքսիմոս ասէ · ասացի քեզ , դիայ և ապողոնի և մեծին դե՟մետրի ։ Նեղամպէոս ասէ · և սիրե՞ն ա՟ծքն քո՝ զի տեսից զնոսա ։ Օ՛ այս լռե՛ալ դատաւորին՝ ուրախ եղև յոյժ առ չիմանալոյ զմիտս մ՟րյն · վ՟յ ասէ ցայնոսիկ՝ որ առաջի ն՟ր կային · զմանուկդ զայդ՝ որ կարի արժանի է ա՟ծոցն , առէք տարայք 'ի

սեն

սենեակն արքունի պատուով. որպէս զի առ վաղիւն հանդերձ ամենեքումբք մտեալ 'ի տաճար աստուծոյն՝ զոհեսցէ նմա. և զայս ասացեալ՝ քարոզ կարդալ 'ի քաղաքին հրամայեաց, որպէս զի առ վաղիւն անդր ժողովեսցին ընդ կարգի աւուրց տօնի. քանզի և ինքն իսկ դատաւորն խորհէր երթալ:

Իսկ 'ի ժողովիլ բազմութեանն 'ի մեհեանն, եկաց անդր և դատաւորն իւրովքն հանդերձ. և իբրև ածին մուծին անդ և զերանելին եւղամպէոս, կացեալ նորա առաջի անշունչ պատկերացն կռոց՝ ասէ ցնոսա ձայնիւ մեծաւ յանդիման ամենեցուն. Զեզ ասեմ ա՛յ քարեղէնք և փայտեղէնք, կամի՞ք ուտել, կամի՞ք ըմպել, կամի՞ք հոտոտել, կամի՞ք զգենուլ: Ապա դարձեալ առ դատաւորն՝ ասէ. տե՛ս, թէ որպէս լռեալ կան աստուածքդ ձեր. կանգնեալ կան, և ոչ նստին և ոչ յառնեն երբեք. արդ որո՞վ իմի՞ք ուրախացուցուք զդոսա. զի թէ քնարս հարկանիցեմք, ոչ լուիցեն. և եթէ միս զոհեալ մատուցանիցեմք 'ի բերանս դոցա, ոչ ճաշակեն. և եթէ երկիր պագանեմք նմա, ոչ տեսանեն. և եթէ հարկանիցեմք զմի 'ի նոցանէ, ոչինչ առնել կարեն, և ոչ զինքնակալն կոչեն յօգնականութիւն. և եթէ դուք վրէժխնդիր լինիք վասն կռոցդ, զիա՞րդ իցէ աստուած, որ մարդկան կարօտանայ առ վրէժխնդրութիւն. և որպէս կարեն զմարդիկ կեցուցանել, որոց կեանք է 'ի պահպանութեան մարդկան. արդ տե՛ս դատաւոր, թէ որպէս ընդունայն

են

են պաշտամունքդ ձեր ։

Զարմացաւ դատաւորն ը՟ իմաստութի՟ նըյն, և ասէ ․ ո՞չ ապաքէն դու այր վայրաբանակ ես , և զազանաց խօսակից ․ զիա՞րդ այդպէս ճարտարասանել ուսեալ ես , ո՞չ զի զամենեսեան զարմացուցեր լռութեամբդ քո զածսն ։ Եւղամպէոս ասէ ․ ոչինչ է սքանչելի , թէ անգիտանաս առ ածային իմաստութի՟ աշգիս քրիստոնէից ․ վն՟ զի յոյժ խաւարեալ ես 'ի լուսոյ պատուիրանացն ա՟յ , որ ասէն , եթէ տ՟ր տայ զիմաստութի՟ , և յերեսաց նր՟ է գիտութի՟ և հանճար ։ Եւ զայս ասացեալ նըյ մանկանն՝ ամբարձ զաչս իւր յերկինս ․ և 'ի միտս իւր աղօթեալ , և կնքեալ զինքն նշանաւ սբ խաչին , դարձաւ 'ի պատկերն դիւաց , և ասէ ․ քեզ ասեմ խուլ և համր , յանուն տն մերոյ յի քի , անկիր յերկիր , և այլ մի ևս կարասցես կալ կանգուն ․ և ը՟ ասել նըյն զայս՝ անկաւ պատկերն , և եղև մանր իբրև զփոշի ։

Եւ իբրև այս այսպէս եղև , վազեաց բազմութին 'ի տաճարէ անտի 'ի դուրս , ը՟ որս և դատաւորն՝ ահիւ և սոսափմամբ ․ ձայն բարձրն բազումք յամբոխէ անտի , աղաղակեցին և ասեն ․ մեծ է ածն քրիստոնէից ․ և դղրդեցաւ քաղաքն ամ ։

Յայնմ հանդիսի գտաւ և աղջիկ մի կոյս՝ որում անուն էր Եւլամբիա , այն է Եւղամպէոսի քոյր նըյ վկայիս Եւղամպէոսի ․ զի 'ի լսել զըմբռնումն և զչարչարանս եղբօրն վն անուան քի , եկեալ էր հաւատովք չարչա֊

բանկից լինել նմա ․ Թէպէտև մատաղ էր հա-
սակաւ ․ ( որպ՟ս Թէ եղբօրն լինել ո՛չ աւելի
արդեօք քա՛ն զքսան ամաց , և քեռն 'ի հըն-
գետասանամենից և 'ի վայր ) ։ Արդ 'ի լի-
նել սքանչելեացս և աղաղակի , 'ի բաց վա-
զեաց աղջիկն յամբոխէ անտի , և գիրկս
արկեալ զպարանոցէ որդ՟յ մանկանն , ասէր ․
Եղբա՛յր իմ Եւղամպէոս՝ յիշեա՛ , զի մի մայր
ծնաւ զմեզ , և զմի ստին դիեցաք , և 'ի մի
քաղաքի սնաք ․ արդ պա՛րտ է , զի մի երկիր
զմեզ ծածկեսցէ , և 'ի միասին Թաղիմք ․ վ՟ն
զի մեծ է տ՟ր ա՟ծ մեր , զոր դու ընտրեցեր
ընտրեալդ 'ի նմանէ ․ որ և զիս ընկալցի ը՟ն
քեզ՝ զօրացուցանել 'ի հանդէս վկայուԹե՟ ․
զի մեծ է զօրուԹ՟ի նո՟ր ։ Եղբա՛յր իմ մի՛ 'ի բաց
մերժեր զիս 'ի պարգևացն՝ որ քեզն է պա-
տրաստեալ ․ աղօԹեա՛ վ՟ն իմ , զի և ես ար-
ժանացայց համբերուԹե՟ քում ․ ո՟պ զի և ը՟ն
քեզ փառաւորեցայց յարքայուԹե՟ն ա՟յ ։
Յայնժամ դատաւորն՝ որ զահի հարեալ էր
ը՟ն յանկարծահաս սքանչելիսն , որ եղեն 'ի
ձեռն Եւղամպէոսի , զարմացաւ յոյժ և ընդ
անկարծելի բանս քեռն նո՟ր Եւղամպիայ ․ և
հրամայեաց զերկոսեանն պահել զգուշու՟Թ ։
Իսկ յետ երից աւուրց նստեալ յատենի՝ հրա-
մայեաց առաջի իւր կացուցանել զերանելի
կոյսն , և ասէ ցնա ․ ասա՛ աղջի՛կ դու զանուն
քո և զբախտ ։ Կոյսն ասէ ․ անուն իմ այժմ
քրիստոնեայ կոչի ․ իսկ ը՟ն մարմնոյ Եւղամ-
պիա անուանեցայ 'ի ծնողաց իմոց՝ համա-
նման եղբօրն իմոյ Եւղամպէոսի , որով ծա-

նեայ առաւելապէս զճշմարտութին . այլև ազգաւ ազատ եմ, բայց և այժմ աղախին քի :

Մաքսիմոս ասէ . տեսանեմ զվայելչութիւն դէմաց քո , և զհամեստութի բանից քոց . և վասն այնորիկ ողորմիմ քեզ , և խրատ տամ . արդ մատի՛ր զոհեա՛ զծնողսն , և մի՛ հնազանդիր կախարդին այնմիկ , որ ափշեցոյց զսիրտ քո , և օտարացոյց 'ի սիրոյ նց : Եւղամպիա ասէ . զոր դու յիմարութի կոչես , ես զնոյն միշտ աղօթեմ առ ած՝ չհեռանալ յայնմանէ , այլ միշտ բևեռեալ կալ 'ի սէր փեսային իմոյ և երկնաւոր թագաւորին քի , ոպ և ոք եղբայրն իմ և վիճակն իմ: Եւ բարկացեալ դատաւորն՝ ասէ ցդահիճսն . ապտակեցէք զդա , որ զի խրատեսցի մի՛ այդպէս անամօթաբար խօսել առաջի մեր :

Ապա հրաման ետ ածել կացուցանել զառաջեաւ և զերանելի մանուկն եւղամպէոս . և իբրև եկն , ասէ ցնա . մի՛ կար 'ի նմին յամառութե . ապաթէ ոչ՝ աւաղան վն քո ջեռնու , և անդր ունիս այրիլ . քանզի հրամայեալ էր բռնաւորն եռացուցանել ջուր 'ի կատսայ մեծ իբրև յաւազան . և սպառնայր յեռանդն անդր արկանել զնահատակսն :

Իսկ նոյն եւղամպէոսի անդէն վաղվաղակի կնքեալ զինքն նշանաւ խաչին՝ ինքնին եմուտ 'ի ներքս . և ամբարձեալ զձեռս իւր՝ սկսաւ փառաւորել զած ըստ նմանութե երից մանկանցն . և զնոյն երգս օրհնութե 'ի բերան առեալ կարդայր ձայնիւ մեծաւ :

Զայն

Զայն տեսեալ սրբուհւոյն եւղամպիայ՝
ձայնեաց առ նա, և ասէ. աղօթեա՛ վ̅ն իմ
ծառայ ք̅ո, վասն զի և ես կամիմ առ քեզ
մտանել. և անդէն կնքեալ զա̅մ զգայարանս
իւր՝ ՚ի բաց վաղեաց ՚ի դահճաց անտի, և
եմուտ յաւազանն (6) ։ Եւ կացեալ երկուց
երանելեացն ՚ի մէջ ջեռուցեալ եռանդան
ջուրցն, և լցեալ հոգւով ս̅րբ՝ իբրև ՚ի մի
բերան սկսան ասել այսպէս. Տ̅ր մեր յ̅ս ք̅ս
որդի ա̅յ, որ զանճառելի անունդ քո ՚ի ձեռն
քոյոց ս̅րց առաքելոցն ՚ի հաւատացեալս քո
վերագրեցեր՝ քրիստոնեայս զմեզ անուա-
նելով. ա̅ծ հրեշտակաց և ա̅մ անուանն ան-
ուանելոյ, որ ՚ի վերդ ես քան զա̅մ անուն.
դու պահեա՛ զհօտ քո, և հալածեա՛ ՚ի նոցա-
նէ զգայլն յափշտակօղ ։ Ընկա՛լ և զմեզ
մարդասէր տ̅ր, և խառնեա՛ ՚ի թիւ սիրե-
լեաց քոց. մո՛յծ զմեզ ը̅ նեղ դուռնն յերկ-
նաւոր և յանմահ թագաւորութի̅ ք̅ո. որ̅պս
զի և մեք արժանաւորեսցուք փառաւորել
զանմահ փեսայդ ընդ իմաստուն կուսանսն.
վ̅ղի քեզ վայելէ փառք, և հօր քում՝ հան-
դերձ կենդանարար հոգւովդ քո, այժմ և
յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Եւ զայս ասացեալ՝ ելին արտաքս յաւազա-
նէն, ամենևին ոչինչ վնասեալք. և կացին
առաջի դատաւորին ։ Զայն տեսեալ բազ-
մութե̅ն՝ սկսան աղաղակել և ասել. մե̅ծ
է ա̅ծն քրիստոնէից. և մեք հաւատամք ՚ի
նա, և քրիստոնեայս զանձինս խոստովանիմք ։
Ընդ որ դառնացեալ բռնաւորին՝ հրամայ-

 եաց

եաց գլխատել զամենեսեան, որք էին արք
թշնամի երկերիւր. որք կատարեալք պսակե_
ցան 'ի քէն՝ մկրտեալք իւրեանց արեամբ: (7)
Յետ այսորիկ ասէ դատաւորն ցերանելին
Եւղամպէոս. մօտ և ամբարհաւաճ ոչ շատա_
ցար քոյին կորստեամբդ, այլև զբազումս ըն_
քեզ կորուսեր. մանաւանդ զտղայ աղջկդ
զայդ: Եւղամպէոս ասէ. անզգամ և նեն_
գաւոր, ոչ կարես այդպէս փաղաքշելովդ
քո կորուսանել զոբ հարսնդ քնի. վասն զի
որ ամի բաւական է, նա է ձեռնկալու դո_
րա: Յայնժամ բարկացեալ դատաւորն՝ հրա_
մայեաց փորել զաչս երանելւոյն. և ասէ
ցկոյսն. աՀաւասիկ խաւարեցուցի զաչսդ
կախարդիդ այդորիկ, որ զքեզդ կուրացոյց
'ի սիրոյ ածոցն. արդ մատիր զոհեա դոցա,
զի ոչ ոք է՝ որ արգելու զքեզ 'ի նոցանէ:
Այն Եւղամպէուհի ասէ. ով անամօթութեդ
քո, եթէ ո՞րքան սքանչելիս տեսեալ տակա_
ւին ջանաս խոցոտել զմեզ մեքենաւոր բա_
նիւքդ քո: Եւ յայսմանէ սրտմտեալ դա_
տաւորն՝ հրամայեաց կախել զնա զհերաց
գլխոյն, և քերել երկաթի եղնգամբք զկողս
նր: Իսկ սբ կոյսն մինչդեռ 'ի տանջանս էր,
կարդայր առ փրկիչն իւր՝ ասելով. տր յս
օգնեա ինձ, և փրկեա զաղախին քո 'ի ձե_
ռաց անզգամիս այսմիկ: Եւ այնպէս յերկա_
րեալ 'ի տանջանսն՝ ոչինչ գրէր զոր կրէրն առ_
նէր երկնաւոր փեսային. Քզի և որն Եւղամ_
պէոս քաջալերէր զնա՝ ասելով. զօրացի՛ր
քոյր իմ և հարսն քնի, զի աՀաւասիկ հա_
սեալ

սեալ կայ Երկնաւոր փեսայն յօգնականու-
թ̃ն քեզ:

Ընդ որ եւս բարկացեալ բռնաւորն՝ հրամայեաց չորս ցիցս բեւեռել յերկիր, և 'ի նոսին պնդել զերանելին Եւղամպէոս յոտից և 'ի ձեռաց. և 'ի ներքոյ կողից նր̃ տարածանել խեցի, և 'ի վր̃ լանջացն դնել վէմս բստուռարս: Նաև զնը̃ ող ջիկն հրամայեաց իջուցանել 'ի կախաղանէն, և ետ հրաման քարամբ հարկանել զկզակս նր̃. այլ նա ոչինչ պխնի տայր դատաւորին. բայց միայն կարդայր առ ա̃ծ՝ օգնական լինել մարտի նահատակութ̃ն զա̃մ աւուրս, մինչև հասցէ 'ի կէտ կոչմանն: Իսկ երանելին Եւղամպէոս՝ մինչդեռ այնպէս պնդեալ կայր, ետ պխնի դատաւորին, և ասէ. ո̃չ զգաս ո՛վ բռնաւոր, եթէ ոչ մարմնոյ բնութ̃ես զօրութ̃ե է տակալ տեւել և տանել այսպիսի տանջանաց, այլ՝ վերին օգնականութ̃են է. զի ահաւասիկ տանջանքս քո բթեցան, և տանջիչք քո տկարացան. և մեք դեռ պնդակազմեմք ա̃ծային օգնականութ̃բն:

Յայնժամ հրամայեաց դատաւորն տանել զնա̃ 'ի բանտ. և ինքն ետ պատրաստել հնոց հրոյ՝ բորբոքեալ զայն մինչև ցերիս աւուրս. և ապա ետ բերել, և անդ ընկենուլ զերանելին: Նաև 'ի մտանել նորա 'ի հնոցն՝ սքանչելիք իմն մեծ եղեն. զոր և բազումք տեսին՝ որոց կամեցաւ ա̃ր ցուցանել. քանզի հրեշտակ ա̃յ եկն եկաց առ նա̃ 'ի մէջ հնոցին, և ցրուեաց 'ի նմանէ զբոց հրոյն. և սբ̃ցն պար-

առեալ իբրև 'ի բուրաստանի՝ այնպէս շրջէին 'ի մէջ հնոցին, և ըս նմանութե երից մանկանցն գովէին և փառաւորէին զած (8)։ Իսկ դատաւորն իբրև ետես և լուաւ զայն ամ սքանչելիսն, մոլեգնեալ 'ի սատանայէ՝ կախարդութե զեղեալսն համարէր. ապա հրամայեաց հանել զնս 'ի հնոցէն. և եհատ 'ի վն նց վճիռ՝ սրով բառնալ զգլուխ նց։

Եւ առեալ զնս դահճացն՝ տարան 'ի տեղին, ուր զմահապարտսն սպանանէին. յայնժամ աղաչեցին սբքն զդահճսն՝ անսալ սակաւիկ մի կալ յաղօթս առ տր ած իւրեանց. և իբրև առին ներումն՝ ոպ խնդրեցինն, կացեալ սբցն ըս արևելս՝ տարածեցին զձեռս իւրեանց յերկինս, և սկսան ասել այսպէս. Փառք քեզ հայր տր, որ փրկեցեր զմեզ յիշխանութէ խաւարի, և առաջնորդեցեր մեզ հոգւովդ քով սրբով 'ի լոյս փառաց միածնի քո, և արժանաւորեցեր զմեզ հասանել յորս յայս, յորում հանդերձեալ եմք մկրտիլ զմկրտութի արեան որդւոյ քո սիրելւոյ, և ըմպել զբաժակ չարչարանաց նր։

Աղաչեմք զքեզ տր, պահեա զմեզ և 'ի ժամս յայս. ոպ զի և՛ հոգւով և՛ մարմնով և՛ մտօք քեզ բարերարի տն բովանդակ ողջակիզեալ զպատարագս վկայութես մերոյ՝ առանց արատոյ կատարեսցուք։ Եւ հաւատացելոց 'ի քեզ՝ որք հաւատով կարդան 'ի բարեխօսութե քեզ զհեղումն արեանս մերոյ որ վն քո, ողորմեսցիս տր, և փրկեսցես յամ վտանգից՝ որ ըս հոգւոյ և որ ըստ մարմնոյ. վն զի դու

միայն

միայն բուռնական ես յամի՝ որոց ապաւինեալ կարդան առ քեզ. և քեզ վայելէ փառք, և միածնիդ քո, և կենդանարարիդ զարարածս՝ եղղիդ 'ի քեն սբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն: Նուաստ ցեալ զամէնն՝ խոնարհեցուցին զպարանոցսն. և առժամայն հատին դահճքն զգլուխս երանելեացն (9), յամսեանն հոկտեմբերի, որ օր տասն էր ամսոյն, յեօթներորդ ամի Թագաւորութեան Մաքսիմիանոսի՝ Հերակլեայ, կամ Գաղերիոսի. և ըստ նմին յամի Տն 291.

կամ 310:

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Որ առ յոյնս կոչին և գրին Էւլամբիոս և Էւլամբիա, 'ի Ճառընտիրն մեր վերծանին Եւղամպէոս, կամ եւղամբէոս, կամ եւղամպիոս. և Եւղամպէուհի կամ եւղամբէուհի, կամ իւղամպէուհի և կամ իւղամբիուհի. և 'ի Հ. եւղամբիաս, և եւղամբիա. այլ 'ի տօնացուցի սովորութն եղև ասել միշտ Ղամբէոս և ղամբէուհի, կամ ղամպէոս և ղամպէուհի. և յայտ է թէ λαμπας յն. 'ի մեզ է ղամպար և լապտեր. իսկ Εὐλάμπιος թարգմանի լուսաղամպար կամ ղամպարափայլ:

(2) Զայս ընտիր վկայաբանութն առաք գրեթէ բառ առ բառ 'ի մեծ Ճառընտրէ մերմէ նշանակելոյ. այն իսկ է՝ զորոյ և զյունական օրինակ գտեալ բոլլանդեանց առանց անուան հեղինակի՝ տպագրեն յունարէն, և թարգմանեն լատիներէն, իբրև աղբիւր այլոց վկայագրաց՝ առանց յլ բանս ինչ ածելոյ. վյ և մեզ եղև շատանալ օրինակաւ մերով ըստ նախնեացն թարգմանութե, ոչինչ հոգացեալ մի առ մի նշանակել զնիւթական տարբերութիս 'ի յունականէն. թող զի դժուարագիւտ է և մին 'ի վերջին հատորոց սոսա բոլլանդեանց. այն է՝ Է.

Է. հատորն հոկտեմբերի, տպագրեալ 'ի պրուքսել յա-
մի. 1786. զոր գտի 'ի գրատան մալթայու: Իսկ Թէ որ-
չափ երկարեն վերջինք 'ի բոլանդեանս զպիտանի և զան-
պիտան ծանօթութիւնս իւրեանց, օրինակ զայս ինձ առ-
ցես, զի 'ի սմին հատորի կային միայն երկու աւուրք
հոկտեմբերի. ի Ժ. և ԺԱ. զորս լոկ վերծանել ամսի
պիտոյ արդեօք ամբողջ:

(3) Քանզի ը վկայաբանիս մերում և ը այլոց՝ կատա-
րումն սբ՜ ցս եղև յամսեանն հոկտեմբերի, վ՜ն և ամսոյն
արեգս նշանակեալ 'ի հրովարտակն արքունի՝ կամ է ա-
ռաջին ամսոյն բիւթանացւոց, որ կոչիւր Իրէոս, սկսեալ՝
ոմ՜ կարծի յաշնանային հասարակածէ, և կմ՜ իններորդ-
ամսոյն ն՜յ փոխեցեալ ո՛րինս: Թող զի մարտ, որ ը լա-
տինացւոց է մարս, առեալ 'ի տեղի հրատի և չ՜ոյն պա-
տերազմաց, առ յոյնս սափ արէս, 'ի սեռականն արէօս.
զոր մեք արէս կոչեմք:

(4) Ապողոն, ը յն. աբօլլօն, Թարգմանի կորուսանող.
Իսկ դիոս, դիոյ, կմ՜ զեւս, կմ՜ փեւս, 'ի սեռականն ը յն.
դիօս, հյց. զէնս կմ՜ դիս, Թէպէտև 'ի հեթանոսաց մեկ-
նեալ լինէր կենսատու կմ՜ կենարար՝ 'ի բայէս զաօ կմ՜
զէօ կմ՜ զօ, ո՛ր կեամ, կենդանի եմ. բայց քրիստոնեայք
ստուգաբանէին. այրիչ, կորուսիչ կամ վնասակար, 'ի
բայէս դէօ. որ է այրեմ, և այրիմ: Եւ յայս միտ հայի
բանն եւղամպէոսի. որ և Թերևս 'ի մի զօդեալ է հեգ-
նելով զանուանս երկուց դից, դէս աբօլլօնոս. որ Թարգ-
մանի, 'Ի Յէսն Կորուսանողն. որով մին լինի սկիզբն կո-
րստեան (կարծեցեալն հայր չ՜ծոց), և միւսն բուն իսկ
կորուստ. ո՛մ՜ և աբօլլիոն՝ որ 'ի յայտնութե՛, Թարգմանի
կորուստ կմ՜ կորուսիչ:

(5) Յաւելու օրինակն սուրխսեան զկնի քերանաց և
չոճանաց աւանդելոց 'ի մէնջ ը Ճառընտրի, զառանձին
զայս տեսակ երևելի տանջանաց. * Հրամայէ (դատա-
" ւորն ) վաղվաղակի մահիճ հրացեալ վառել. և իբ-
" րև վառեցաւ, հրամայէ 'ի վ՜ր ն՜ր տարածել զվկայն.
" և ն՜ր կնքեալ զանձն նշանաւ խաչի՝ տարածեցաւ բո-
" վանդակ մարմնովն: Եւ անդէն ը մերձենալ մարմնոյն
" յերկաթ շանթացեալ՝ ծախէին և լուծանէին, և յա-
" րիւն ապականէր և 'ի կեզս և 'ի վէրս փոխէին. մինա-
" ւանդ Թէ և մասունք ինչ յանդամոց յաճխուն դ՜րձլ՝
" տային տեսանել զմերկ յօդուած ոսկերաց: Իսկ նա
" քաջութ՜բ տարեալ տանջանաց, և իբրև 'ի փափուկ
" անկողնի ընկողմանեալ, գոհանայր զնմանէ՝ ո՛յր վասն
" այ.

,, այսօցիկ տանէր ||. որոց չէք նշմարանք 'ի Ծ. ոմ և
զկնի, ուր պատմեցաք ըստ Ծ. զկապիլ սէրն 'ի չորս
ցիցս ևն, ոչ յիշէ սուրբն. բայց կայ և 'ի Հ:

(6) Վայելուչ է համառօտս այս ձև բանից Ծ. որում
եւղամպիա՝ Թէպէտև տկար բնութ., ապաւինել յա-
ղօթս եղբօրն՝ համարձակեցաւ մտանել ընդ նմա 'ի կատ-
սայ եռացեալ: Զոր առաւել երկիւղագին են իմացել
այլք 'ի վկայագրաց. վասն այսպէս պարզի 'ի Հ. * Եւ
,, քոյրն երկեաւ մտանել 'ի կատսայն. ձայնեաց առ
,, եղբայրն իւր, և ասաց. աղօթեա՛ վասն իմ եղբայր.
,, զի յոյժ երկեայ 'ի կատսայէդ: Յայնժամ եւլամպիոս
,, կանգնեցաւ 'ի մէջ կատսային, և ասաց քոյրն իւր.
,, արա՛ 'ի քեզ զնշան սբ խաչին. և էկ աներկիւղ: Եւ
,, նա խաչակնքեաց զինքն, և եմուտ 'ի յեռանդն. և առ
,, ժամայն ցրտացաւ կատսայն ||: Այս ևս է տանելի
իբրև պարզաբանութի. բայց աւելորդաբան երևի սու-
րիւսեան օրինակն, երբ ընդ այնէ զբանն այսպէս. * Իսկ
,, եւլամպիա իբր ամբոխեալ, զի էր բնութ. փափկա-
,, սուն, և 'ի չարէն գրգռել յերկշոտութ. սրտաբեկ լի-
,, նէր. իսկ եղբայրն՝ որ և մարտակից նր, 'ի վեր յա-
,, րուցեալ 'ի յատակէն իբրև 'ի խնջոյից ուստեք և 'ի
,, հանգստենէ, կոչէր զքոյրն և քաջալերէր զնա, և
,, յորդորէր մտանել 'ի կատսայն՝ ասելով. մի՛ ինչ եր-
,, կիցես՝ հայելով ընդ յայն, որ երևի, և ոչ հաստատե-
,, լով զյոյս հոգւոյդ առ ած՝ յոր միաբան հաւատա-
,, ցաք, և 'ի նմանէ գտաք (կմ գտցուք) զհատուցումն
,, մեծ. զի եթէ յեռայեալ ջուրս մերձեցիս ևեթ, 'ի
,, նմանէ զմեծ օգնականութի յանձին զգասցես. որում
,, ես եղբայր քո վկայեմ. զոր տեսանես անկիր և անըզ-
,, գայ 'ի ցաւոց: Աղբիւրք հաւանեալ եւլամպիայ, և
,, ածին հանդարտեալ խրատուք նր, նոյնժամայն յօ-
,, ժարութ. և զուարթութ. եմուտ 'ի կատսայն. . .
,, և նոյնժամայն կատսայն ցրտացաւ ||. ևն: Օրինակ
լիցի բանս, թէ այսպիսի աւելորդ երկարաբանութք
է յօրինեալ սուրիւսեան օրինակն ողջոյն. ուր ընթացք
ճառընտրին մերոյ՝ ոմ տեսանես, է ճիշդ և վայելչա-
կան յոյժ:

(7) Զգարձ բաղմութեւս ամ վկայագիրք յիշեն ընդ մեզ.
այլ չգիտեմ, ուստի՛ առեալ գնի 'ի Հ. այս ինչ մասնա-
ւոր պարագայ. * Եւ սբն եւլամպիոս ջուր ցանելով 'ի
,, կատսայէն լինել 'ի վր նց 'ի մկրտութի ||. զոր եթէ
գտանէաք 'ի բուն վկայաբանութես, ոչ փոքր վկայութի
լի-

լինէր վ՟ն ցօղմամբ մկրտութ՟ե. բայց վկայաբանս մեկն ասէ զմկրտիլ ն՟ց արեամբ եւեթ. բայց եթէ համարեսցի ոք, թէ որպէս եւղամպէոս և եւղամպէուհի՝ որք արդէն մկրտեալ էրեւին, սոսին մկրտեալ և արեամբ իւրեանց, նոյնպէս պարտ իցէ իմանալ և զայլոցն:

(8) Զոր մեք զօրութ՟ք իմանամք, դ՟րձլ պարզաբանութ՟ք գրէ սուրբսեան օրինակն 'ի նկարագրութ՟ե հնոցի հրոյն այսպէս. * ածեալ եղեն վկայքն. ուր ա՟ծայինն եւլամ_
,, բէոս՝ ջ՟զի բրեւ՟լ էին աչք ն՟ր, յայլոց ածեալ լինէր.
,, իսկ առաքինին եւղամպիա յարձակ յարձակ խաղացեւ՟լ
,, գայր, ո՟չ թէ յառագաստ, և ո՟չ 'ի հնոց ունէր մտա_
,, նել||: Այլ զարմանք են, զի 'ի գրեւ՟լ անդ համաձայն մեզ զցօղանալ հրոյն, և զկալ ս՟բցն 'ի մէջ հնոցին իբրև 'ի բուրաստանի, մոռանայ յիշել զերևումն հրեշտակին. զոր համարիմք զանցառութ՟ի գրչի առ մոռացութ՟ե: Իսկ ՟է հակառակն Հ. չփոթեալ զթիւ երկուց ս՟բցս ՟է հրեշտակին՝ որով լինին երեք. ո՟չ և 'ի հնոցին բաբելոնի ՟է հրեշտակին եղեն չորս, դնէ՝ թէ երեք հրեշտակք երևեցան 'ի հնոցի աստ:

(9) Հանգոյն Ծ. գրի և 'ի Յ. բս. թէ ղամպէուհի գլխատեցաւ ՟է եղբօրն. իսկ Հ. ՟է սուրբսի դնէ, թէ յառաջ քան զգլխատումն աւանդեաց կոյսն զոգին. որ է առեալ 'ի համաձայնութ՟ե յունական բանի, զոր այլուր նշանակեցաք, և աստ ևս տեսանեմք 'ի կիր արկեալ յերգս ժամագր. յն. այսպէս. * Եւ կանխեալ ( յն.
• բռօֆթանսաս ) զհատումն եւլամբիայ, եւլամբիոսի
• հաւելոյ հաղորդի սպակին ||: Սուր բայս կանխեւ՟լ՝ ՟ը ինքեան նշանակօղ փութապէս կատարման, կ՟մ թերևս կանխագոյն ՟ք զեղբայրն գլխատման, եդեալ է 'ի նշանակել զմեռանիլն նախ քան զգլխատումն: Եւ սակայն առաւել միաձայնի ՟է մեզ և ժամագիրքն 'ի պատմութ՟ե անդ յասել՟ն. * հաւատացին արք երկերիւր, և գլխա_
,, տեցան ՟է ն՟ն||. ՟ք ՟է ղամպէոսի և ղամպէուհւոյ. ուրեմն և ս՟ք երկոքեան ևս գլխատմամբ կատարեցան:

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Եւստաթէի կամ Եւստաքէոսի, և կնոջ նր Թէոպիստեայ, և երկու որդւոցն Ագապիոսի և Թէոպիստոսի ։ (1)

Տ. Յ. Լ. սեպտ. 20։ Ճառընտ. Ա. յէդ = յլը։ Բ. ժը = ժէդ։ Օ. ... = էէ։ Բոլլանդեանն եղերս. 'ի Ի. հատ. սեպտ. էջ. 106 = 137։ Մէ-նաէր. աա սուրբոսէ. 'ի նոյեմբ. 2։ Պատմաբանութեան 'ի ճառն Է. յէ. պատմէրոյ։ Բարոնիոս յամբ. 103. և 120. [illegible]։ (2)

ՔԱՋ ՆԱՀԱՏԱԿՆ քսի՝ երանելին Եւստաթէոս, որ և Եւստաքէոս, այր կատարեալ առաքինութբ ըն հոգւոյ և ըն մարմնոյ, և նմանօղ յոբայ ըն համբերութե, էր քաղաքացի Հռովմայ, իսկ հայրենեօք ըն ոմանց 'ի գամրաց. և առաջին անուն նորա պլակիդոս կմ պլակիդաս, որ և գրի 'ի մեզ ապլակիդոս։ Սա նոյն այն կարծեցեալ, որ ստէպ յիշատակի առ յովսեպոսի իբրև զմի յականաւոր զօրավարացն Հռովմայեցւոց առ վեսպասիանոսիւ. այլ առ դոմետիանոսիւ առաւել երևելի գտաւ 'ի ստրատելատութե մինչև ցաւուրս տրայիանոսի (3)։ Ունէր պլա-կի-

կիդոս և կլին իմաստուն և համեստ՝ համա-
նման ինքեան զուգելի վարուք․ որում անուն
էր տատիանէ․ որ և տրայիանէ ը՟ ոմանց։
Այս էին նց՟ երկու որդիք արուք․ առաջինն
վեց ամաց, իսկ երկրորդն չորից՝ 'ի ժամա-
նակի դարձի ծնողացն 'ի հաւատս ք՟ի․ և
մեծութ՟ի բազումյոյժ, ծառայք և աղախ-
նայք, հօտք և անդեայք, հանդերձ ոսկւով
և արծաթով և բազմապայծառ հանդեր-
ձիւք․ քանզի 'ի սեղան պլակիդոսի երեքհա-
րիւր սկտեղք արծաթի գային 'ի սպաս նր՟։
Այս էր ինքն ցանկալի ամենեցուն և սիրելի․
զի՝ թէպէտև հեթանոս էր յազգէ, բայց
բարեսէր և առաքինասէր ը՟ կուռնելեայ․
օգնական ա՟մ նեղելոց, և ձեռնկալու ա՟մ
քաղցելոց և մերկոց, բանտարկելոց և վի-
րաւորաց․ մինչ զի և զդատապարտեա՟լն յա-
տեանս տանջողագինս բազում անգամ առ-
նոյր ը՟ հովանեաւ թեւոց իւրոց․ որ և զծա-
ռայսն յետ քառից ամաց 'ի վե՟ր անցելոց յա-
զատութ՟ի առաքէր բազում պարգեւօք․ և
ա՟մ կարօտելոց տեսուչ էր, և հայր որբոց և
այրեաց և աղքատաց՝ ը՟ յոբայ։

Այլ և զնա ա՟ծային այցելութի՟ն ը՟ իւրում
աննախանձ առատութե՟ և աննուազ մարդա-
սիրութե՟ ոչ կամեցաւ ը՟ լծով ծառայութե՟
կռոց թողացուցանել, այլ արժանի արար
առանձինն սքանչելեօք պատահել հոգևոր
ազատութե՟ն՝ մաքուր զհոգին կացուցանե-
լով ամենասուրբ մկրտութե՟ն ք՟ի։ Այս զի էր
առաքինի զօրավարն պլակիդոս փորձ յա՟մ

որ-

որսականութ՟ն , և առաւել յորսորդութիւն
եղջերուոց և այծեմանց և մանրագոյն չոր-
քոտանեաց , ել նա 'ի միում աւուր 'ի լերինս՝
գիտելով զհովիտսն , եթէ 'ի կենդանեաց
ինչ որս գտանիցէ անդ :

Իսկ նոյն յա՟ որդին ա՟յ՝ որ 'ի կերպարանս ա՟յ
էր , և վ՟ մեր յանձն էառ զծառայի կերպա-
րանս 'ի մ՟բ կուսէն , այսպէս և այժմ զիջա-
նէր ցուցանել զինքն պլակիդոսի 'ի վ՟ գլխոյ
նմանութ՟ե եղջերուին . ա՟ց գրեցելումն , որ
սիրելին է ո՟ւ զորդիս մեղջերոյ . և թէ՝ սա
եկն վազելով 'ի վ՟ լերանց , խայտալով 'ի
վ՟ բլրոց . նմանէ եղբօրորդին իմ այծեման
կմ՟ որթուց եղանց 'ի վ՟ լերանց բեթելայ :
Քանզի տեսանէր պլակիդոս եղջերու մի ա-
հեղ և սքանչելի . որոյ եղջերքն բարձրակա-
տար , և 'ի մէջ եղջերացն օրինակ խաչին
լուսով կազմեալ . և զոյգ ընդ երևին յեղր
հովտին՝ արագ արագ անցանէր ը՟ անտառն ,
և վազէր 'ի բարձրաւանդակն : (4)

Օ որ տեսեալ զօրավարին և սքանչացեալ ,
միանգամայն իբրև նահատակուն կամեցաւ
ցուցանել պայծառագոյն առաջի և այլոց զօ-
րաց որսորդաց գլխաւորայ ընդ նմա . վ՟յ և
յառաջ խաղացեալ՝ մեկնեցաւ յայլոցն ինքն
միայն գիտել զառաջիկայն . և այնպէս հե-
ռացաւ յանգիտելի և յանընդել տեղի , զի
'ի բազում ժամս փախչիլ ցուցանէր զինքն
կենդանին : Նաև 'ի մերձենալն առ նա , իբրև
կամեցաւ զօրավարն սրով հարկանել զանա-
կուշտ եղջերուին , յանկարծօրէն երևեցաւ
կեն-

կենդանին հեռագոյն յանել տեղւոյն։ Եւ եղև ձայն 'ի միջոյ եղջերաց նր̃, որ ասէր. Ո՛վ պլակիդէ զի՞ հալածես զիս. զի ես վն̃ քո եկի, և 'ի քէն հալածիմ. քանզի և սաւղոս երբեմն հալածէր զիս, ոչ̃ և դու առ որսալ. բայց ես 'ի ծոց իմ ըմբռնեցի զհալածիչն իմ. նոյնպէս և այժմ ը̃ քեզ եղիցի։ Եւ զօրավարին յերկիւղի եղեալ՝ անկաւ յերկիր. իսկ յետ փոքր մի պահու 'ի վր̃ անցելոյ լինքն եկեալ, յարեաւ կանգնեցաւ՝ տեսանել թէ ո՞վ էր, որ խօսէրն ը̃ նմա. և ոչ զոք ետես, բայց միայն զհրաշալի եղջերուն, և 'ի մէջ եղջերաց նր̃ խաչ ճառագայթեալ. և ասէ զօրավարն. զի՞նչ է ձայնս այս՝ զոր լսեմս իբրև 'ի միջոյ եղջերաց եղջերուիս. յայտնեա ինձ զքեզ՝ որ խօսիդ առ իս։

Զայս ասացեալ, և դէտակն կալեալ՝ տեսանէր զտպաւորութի̃ խաչին, զի 'ի վր̃ կրէ զդէմս մարդոյ, ը̃ զկերպարանս տն̃ մերոյ յս̃ի քս̃ի մարդացելոյ. և նոյն ինքն դէմքն բարբառէր առ զօրավարն, և ասէր. Ես միտ առ պլակիդէ, զի ես եմ առաջին և վերջին, որ միշտն էի, և որ երևեցայ 'ի վախճան ժամանակաց, կանխաւ նշանակէ̃ զխորհուրդս գալստեան իմոյ յձ̃ 'ի ձեռն նահապետաց և մարգարէից. ես եմ ած̃՝ որ մարդ եղայ վն̃ փրկութե̃ մրդ̃ի. ինև եղև ամ̃ ինչ, և ինև նորոգեցաւ ամ̃ն։ Լո՛ւր և երկրորդ բան. վն̃ զի 'ի վր̃ մարդկան բան իւր սահմանել̃ է առ յոյ̃ ը̃ գեղեցիկ կարգի տնտեսութե̃ 'ի պէտս փրկութե̃ իւրաքանչիւր հոգւոց, ուղ-

ղեալ

զեալ առ ի՞նչ և իցէ 'ի ծփանս ծ̃ի կենացս այսոցիկ՝ ստանալ անցաւորօքս զանանց բարութիւնս. և 'ի վ̃ր քո դրեալ է, և ոչ անցանէ. ահաւասիկ մինչև ցայժմ բարձրացար յիրս ստացուածոց քոց և մեծութե՛. և պա՛րտ է քեզ խոնարհիլ յառաւել մեծութ̃էդ. ո՞չ թէ ընկեցեալ յերկիր զկեանս քո, և դարձեալ բարձրացուսցէ զքեզ հոգւով՝ որ խօսիդ ը̃ քեզ: Այլ զի բարի քաղաքավարութ̃ կազմեցան վարքդ քո, և անգիտաբար պաշտէիր զիս բարեգործութ̃ առ մարդիկ, ասա՛ ինձ, կամի՞ս խոնարհիլ այժմ, եթէ յետոյ. ք̃զի պա՛րտ է լինել ա̃մ գրելոց 'ի վ̃ր քո: (5) Եւ զօրավարին 'ի դողման եղեալ, երկիր եպագ ա̃ն, և ասէ. աղաչեմ զբարի նախախնամութիւդ քո, զի եթէ ոչինչ յայսցանէ զինև անցցէ, թողացո մինչև 'ի վաղիւն, զի պատմեցից աղախնոյ քում կնոջ իմում, և նա ևս եկեսցէ զկնի բանից քոց. և զոր ասացերդ՝ արասցուք. աղաչեմ զքեզ՝ անսա՛ ինձ աստ, և վաղիւն պատմեցից քեզ: Եւ ասէ ցնա Տ̃ր. եթէ վաղիւն կամիս դառնալ այսր, երթ նախ լուացջի՛ր աւազանի ջրով ը̃ օրինի քրիստոնէից 'ի քահանայէն. և ապա տեսցես զիս 'ի տեղւոջս յայսմիկ:

Յայնժամ իջեալ զօրավարին 'ի լեռնէ անտի ահի՛ մեծաւ, ժողովեաց զօրականս զօրականսն. և ո՛չ ումեք յայտնեաց զոր ինչ ետես և լուաւն. այլ եկեալ 'ի տուն՝ սկսաւ պատմել զտեսիլն կնոջ իւրում: Իսկ նա իբրև լուաւ, աղաղակեաց և ասէ. զխաչեալն

տե-

տեսեր տէր իմ, զոր քրիստոնեայքն պաշտեն ։ Օ այս ասէր, և առ քս կարդայր ասելով. ո՞րդի այ ողորմեա ինձ և տղայոց իմոց ։ Եւ 'ի զարմանալ զօրավարին ընդ իրսն, եթէ զիա՞րդ գիտաց իցէ այնմ կինն, սկսաւ և նա պատմել, թէ ես իսկ տեսի զտեսիլդ. նա՛ է քս. և կամօք ողորմութեն իւրոյ երևեցաւ քեզ այնպիսի ձևով, մինչև կրթեսցէ զմիտս մեր նշանօք 'ի ճշմարտութին. զի առանց նորա մկրտութեն նո՛ր եմք ։ Արդ էկ 'ի գիշերիս յայսմիկ գաղտաքար մկրտեսցուք. և 'ի վաղիւն երթիցես առ նա, և ասասցես. Տէր, եթէ ոչ անցցեն գրեալքն, ապա լաւ է մեզ այժմ նուաստանալ, մինչ կայ 'ի մեզ զօրութի, և ո՛չ 'ի վախճանի ծերութեն. վն զի լաւագոյն է մեզ անցանել ընդ հուր, և ակն ունել ցօղոյ, քան թէ լինել 'ի ցօղ, և ակն ունել բոցոյ ։

Եւ իբրև եանց 'ի գիշերոյն պահ մի, առեալ զերկուս տղայսն՝ գնացին առ քահանայն կիմեղսն յովհան (6), և պատմեցին նմա զայցելութի տն՝ որ եղև առ նս. և խնդրեցին կարօտանօք զքնական կնիքն ։ Եւ յովհաննու տեսեալ զյօժարութի նց և զհաւատս, առեալ երեխայացոյց զնս, և բացադրեալ նոցա զխորհուրդս հաւատոյ, որք և ինքնին ածուսոյցք էին, մկրտեաց զնս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ. և հաղորդեցոյց զնս 'ի սբ մարմնոյ և 'ի պատուական արենէ տն մերոյ յի քի ։ Փոխեաց և զանուանս նց. զի պլակիդոս 'ի մկրտիլ անդ Եւստաթէոս կոչեցաւ, որ և Եւստաքէոս. և կին նորա

տատխանէ` Փէոպխատէ անուանեցաւ, որ
թարգմանի ածահաւատ կին. (այն է ըստ
Ճառընտրաց` յածահաւատուհի, կմ յածհա-
ւատուրհի.) և որդիքն կոչեցան, անդրանիկն`
Ագապխոս, որ սիրուն. և կրսերն` Փէոպխա-
տոս, որ ածահաւատ. (կմ ը Ճառընտրաց,
յած հաւատացեալ):

Եւ ասէ ցնս քահանայն. տր ած եղիցի ը
ձեզ, և առաջնորդեսցէ ձեզ յարքայութին
իւր. քանզի գիտաց` եթէ ձեռն տն էր 'ի
վր նց. վնյ աղաչեաց զնս, և ասէ. յորժամ
հանդիպիք դուք երկնաւոր դրախտին փափ-
կութե, անդ յիշեսջիք զհոգին յոհաննու:

Եւ իբրև այգ եղև, առեալ եւստաթէի
միւսանգամ հեծեալս իբրև 'ի պատճառս
որսոյ` ել 'ի լեառնն. և յորժամ մերձեցան
'ի վայրն, եդեալ պատճառս` առաքեաց զնս
յայլ կողմն. և ինքն միայնացեալ 'ի տեղին`
ուր զառաջինն դէպ եղև նմա տեսանել զգ-
տեսիլն, տեսանէր և այժմ զնոյն օրինակ` ը
որում և զառաջինն. և անկեալ 'ի վր երե-
սաց իւրոց` գոչէր ասելով. Խոստովանիմ
զքեզ տր, զի դու ես որդի այ կենդանւոյ.
և այժմ ը հրամանի քում եկի այսր. արդ
աղաչեմ, զի այժմ հանդիպեսցուք առաջի-
կայ տառապանացն, քան թէ 'ի վախճան
ծերութե:

Եւ ահա լսելի եղև ձայն առ երանելին եւս-
տաթէոս, զի ասէր. երանի է ձեզ, որ ըզ-
լուացումն յաւիտենից մաքրութե լուացայք,
և հակառակողին ձերոյ յաղթեցիք. և ահա

յաւուրս երիս եղիցի ձեզ այդ ա̃մ՝ զոր ա-
սացիդ. բայց զգո՛յշ կացէք, մի՛ ելանիցէ 'ի
բերանոյ ձերմէ բան տրտնջման, այլ պի՛նդ
կացէք և քաջալերեցարո՛ւք. զի յորժամ ա-
ձիցէք զաձուն̃ ձ̃յ փորձանօք վշտաց և տա-
ռապանաց, դարձեալ միւսանգամ այց արա-
րեց ձեզ, և մխիթարեսջի՛ք նաև 'ի կեանս
յայս. և զայս ասացեալ տ̃րն՝ եղև անե-
րևոյթ։ Իսկ եւստաթէոս երկրպագեալ տ̃ն՝
դարձաւ ուրախութ̃բ և գոհութ̃բ 'ի յարկս իւր։
Իսկ յառաջքան զի՛ջանել նորա 'ի տուն իւր՝
մեռան սրածութ̃բ ժանտախտի ձի՛ք ն̃ր եօթա-
նասուն, և սենեկապանք և զինակիրք, ծա-
ռայք և աղախնայք։ Իսկ 'ի վաղի՛ն անդր յե-
րեսաց աճագին օդոյ՝ որոտմանց և կայծա-
կանց սպառեցան ա̃մ հօտ ն̃ր և անդեայք։
Իսկ 'ի միւսումաւուր՝ յորժամ էին եւստա-
թէոս և կինն ն̃ր և որդիք ն̃ց 'ի ներքսագոյն
պարսպի և 'ի սենեակ բուրաստանին, կոր-
ծանեցաւ բարձրաբերձ և հոյակապ ապա-
րանք ն̃ց. և 'ի միասին դիմեցին անդր ա̃մ
բազմութի՛ք յափշտակողաց, և յափշտակե-
ցին զա̃մ մեծութի և զստացուածս եւստա-
թէոսի. և ո՛չ մնաց նմա և իւրոցն՝ բայց միայն
'ի հանդերձիցն, զոր զգեցեալն էին 'ի ժա-
մուն յայնմ։ Իսկ յաւուրսն յայնոսիկ կայր
ուրախութի 'ի քաղաքին վ̃ն յաղթութե թա-
գաւորին ը̃դէմ պարսից. և 'ի լինել մեծա-
մեծաց 'ի խրախութե ը̃ թագաւորին՝ զար-
մանային ընդ յամել պլակիդոսի գալ 'ի տօն
անդր յաղթանակի. և խնդրեցաւ և ո՛չ գը-
տաւ.

տաւ ․ զի և ինքն ծածկէր զանձն ․ և չշնչիւն էր զնմանէ ․ և զարմանք կալաւ զամենեսին մն իւրացն եղելոց ․ զի չէ՛ք ասէին իբրև ըզպլակիդոս և զկին նր և զորդիս նր ։

Յայնժամ Թէոփիստէ կին նր ասէ ցայր իւր ․ լո՛ւր ինձ այսուհետև տէ՛ր իմ ․ ե՛կ ա՛ռ զիս և զորդայքս , և փախիցուք տարադէմ յերկրէ աստի ․ զի նախատինք եղաք յառաջագոյն ծանօթից մերոց ։ Եւ 'ի գիշերին եդին զերկոսին տղայսն 'ի մախաղի , և ելեալ գնացին՝ դիմեալք յեգիպտոս ․ և արարեալ աւուրս ինչ ճանապարհ ՟Ը ցամաք , իբրև մերձեցան 'ի ծով , փութապէս խնդրէին նաւել ։ Եւ դիպեալ նաւավարին՝ որ յազգէ բարբարոսաց էր , այլ անագորոյն և չնաբարոյ , ( որ մն արդեօք ոմանք յազգէ շանագլխաց ասեն , ) մտին 'ի նաւն և գնացին ՟Ը մէջ ծովուն ։ Եւ էր կինն եւստաթէի գեղեցիկ յոյժ և բարի տեսլեամբ ․ վն իբրև խորամուտ եղեն 'ի ծովուն , ցանկացաւ նմա նաւավարն ․ և խորհէր չարիս 'ի վր եւստաթէի , զի առցէ զթէոփիստէ ։

Եւ եղև իբրև եհաս նաւն 'ի ցամաք , և կամէր եւստաթէոս ելանել 'ի նաւէն հանդերձ կնաւ իւրով և որդւովք , խնդրեաց 'ի նմանէ նաւապետն զկին նր փոխանակ վարձու նաւին , զոր թերևս և ոչ իսկ ունէր տալ ըստ բաւականին ․ և 'ի հակառակիլ նր՝ ակնարկեաց բարբարոսն մերձակացացն ընկենուլ զնա 'ի խորս ծովուն ։ Տեսեալ եւստաթէի զչարիսն 'ի վր հասել , զի սպանանեն զինքն ,

և ոչ թողուն զԹէոպիստէ, էառ զերկուս տղայս իւր, և ել 'ի նաւէն ողբով մեծաւ, յանձն արարեալ ա̃յ զպահպանութիւն որբա-սէր ամուսնոյ իւրոյ. և ինքն երթայր լալով և հառաչելով. և հայելով 'ի մանկունսն՝ ասէր. վա̃յ ձեզ տառապելոց, զի զմայր ձեր դերեաց այլազգին, որ 'ի ժամու ցասման իւրոյ գազանաբար գիշատէ զնա խուժա-դուժն այն. այլ ո̃ն կամք եղիցին յա̃մ։

Եւ գնացեալ աւուրս ինչ հանդերձ ման-կամբքն, եհաս 'ի գետ ուրեմն՝ Իդասպիս ա-նուն. և վ̃ն սաստկութե̃ ջրոյն զարհուրեա̃լ զերկուս տղայսն 'ի միասին անցուցանել, զանդրանիկն զԱգապիոս թողու յայսկոյս. և բարձեալ զկրսեր մանուկն Թէոպիստոս յուս իւր՝ անցոյց ընդ գետն. և փութայր դառնալ առնուլ զեղբայր ն̃ր. և 'ի դարձին իբրև եհաս 'ի մէջ գետոյն, զմին 'ի ման-կանց յափշտակեաց առիւծն, և զմիւսն գայլն։ Եւ լուեալ Եւստաթէի զճիչ ման-կանցն, և հայեցեա̃լ յայսկոյս յայնկոյս՝ իբրև ետես զաղէտս ն̃ց, անյոյս եղև յազատութե̃ երկոցունց. փետէր զմօրուսն և զհերսն գլխոյն. և առ տագնապի ոգւոյն մերձ էր և ինքն գետամլեժ լինել. այլ նախախնամու-թ̃ին ա̃յ եհաս 'ի վ̃ր ն̃ր, և եհան զնա անվը-նաս 'ի ցամաք։

Պահեաց տ̃ր և զմանկունս ն̃ր առանց գի-տելոյ ն̃ր. քանզի առիւծն՝ որ յափշտակեաց զմին 'ի մանկանց, 'ի լող անկաւ 'ի գետն, և զդէմս իւր ուղղեալ գնայր՝ ունելով զմա-նուկն

նուկն ողջ ՚ի բերան իւր . և տեսեալ հովուաց ոմանց, զի ձեռն առեալ գայր առիւծն, հասին ՚ի վր, և ՚ի բաց զերծուցին զմանուկն ՚ի գազանէ անտի ։ Դարձեալ և զգայլն տեսին արտավարք ոմանք ՚ի դաշտին նախախնամութեամբ այ . և ընթացեալք ամենեքեան ձեպով՝ հանդերձ շամբք, թափեցին զմանուկն ՚ի գայլոյ անտի անարատ . և երկաքանչիւրքն՝ հովիւքն և արտավարքն ՚ի միոյ գեղջէ հանդիպեցան . և սնուցին զմանկունսն ուրոյն ուրոյն, մինչև չճանաչել նոցա զմիմեանս՝ թէ եղբարք իցեն ։

Իսկ երանելին Եւստաթէոս մերկեալ և թօթափեալ յամենայն առաւել քան զՅոբ՝ փառս մատուցանէր այն վս եղելոցն ամի . և անկեալ ՚ի ճանապարհ հեծեծելով՝ ոչ գիտէր, յո երթիցէ, և կամ ուր մխիթարեսցի ՚ի տառապանաց իւրոց . և աղէխարշեալ ՚ի հեծմանէն՝ ստէպ ստէպ նստէր . և յոյժ վտանգեալ յարտասուացն՝ պօղն պայծառ իբրև խաւարեալ տեսանէր . միանգամայն և առաջի իւր գտանէր նկարեալ միշտ զգէմս սիրելի զաւակաց իւրոց և զպարկեշտ ամուսնոյն, և զպատկեր ամ մեծութեանց իւրոց և փառաւորութեանց . վոյ և յերթալն իւրում ասէր ՚ի փարատումն թախծութեան իւրոյ . Տէր իմ նայեաց յիս և ողորմեա ինձ, և առ յինէն զոգի իմ, եթէ հաճոյ իցէ քեզ . զի ոչ մնաց ինձ այլ ինչ ։ Վայ ինձ, երբեմն ծառս ծաղկեալ՝ այժմ տերևաթափ եղայ . երբեմն թագաւոր երևեալս՝ յայս հասի թշուառութիւն . պսակն

գլխոյ իմոյ 'ի ծովուն գերեցաւ, և պտուղք որովայնի իմոյ գազանակուր եղեն. զօրականս սպառազէն անզէն մնայի, և հաստատունս անհաստատ եղէ։ Բայց դու Տ̃ր իմ, մի՛ զիս անտես առներ վն̃ հեծութեանս՝ զոր ունիմ, այլ ամենամեղ ոգիս՝ Տ̃ր եկեսցէ առ քեզ. քանզի յիշելով զյոբայն՝ համբերեմ հեծութեանս։ Այլ զպտուղ որովայնի իւրոյ գիտաց յոբ՝ ուր թաղեցաւ. և թէպէտև զպտուղն կորոյս, սակայն զոստ կնոջն իւրոյ տեսանէր և մխիթարէր. իսկ ես տառապեալս յամէ արմատախիլ եղէ, և փոքր ինչ կայծակն 'ի զամբարէ մնայի. և հողմոյ մրրկի շնչեալ՝ ահա պակասելոյ ակն ունիմ։ Բայց մի զայրասցիս Տ̃ր շատխօսութեանս իմոյ առ քեզ. քանզի ցաւով վարանիմ, և ակամայ գամ յասել. գիտակակից լեր ինձ Տ̃ր, զի զոր ոչն ունէի՝ առի առ 'ի քէն, և որ ետուրդ՝ 'ի բաց զերծուցեր. Ընդունայն եմ ես այսուհետև, և մաշիմ 'ի տրտմութ̃է։ Տո՛ւր ինձ Տ̃ր հանդիստ յամ̃ նեղութ̃եցս՝ հանելով 'ի բանտէ մարմնոյս. զի մի՛ ակամայ անտեղի բանս ասացից՝ Ընդդիմանալով քեզ, և արտաքոյ հօտի քո դտեալ՝ գազանակուր եղեց։

Զայսոսիկ և զսոցին նմանս խօսելով՝ եհաս 'ի գեօղ մի կոչեցեալ բանտխտոն. և աղաչէր զբնակիչսն՝ առնուլ զինքն 'ի վարձկանութ̃ի 'ի պահել զանդաստանս ն̃ց. և եղև վարձկան այգեստանեայն, և աշխատեալ վաստակէր յայգւոջ միում, կացեալ անդ 'ի վարձաւորութ̃ե ամս հնգետասան։

Իսկ

Իսկ նաւավարն՝ որ էառ զԹէոպիստէ զկին Եւստաթէի , և տարաւ յծ իւր և 'ի տուն ( 'ի լիբիա կոչ յափրիկէ ) , ածային խնամոքն ոչ մերձեցաւ 'ի նա . քանզի յորէ՝ յորմէ արգել զնա 'ի նաւն , հիւանդացաւ նաւավարն . և հասեալ 'ի տունն՝ մեռաւ . և շնորհք այ եղեն 'ի վր Թէոպիստեայ՝ պահել զնա անփորձ 'ի մէջ այլազգեաց . ուր պարկեշտ վարուք կեցեալ՝ այլոց ծառայութի առնէր և

ապրէր :

Եւ եղև յետ աւուրց ժամանակաց յարուցումն այլազգեացն այնոցիկ՝ առ որս էր կին Եւստաթէի , ընդէմ հռովմայեցւոց , և առին զքաղաքս գաւառս նց . և 'ի քաղաքն նեղութե լինէր Թագաւորն , այն է ներուան յաջորդն դոմետիանոսի . և յիշեաց զքաջ զօրավարն պլակիդոս . առաքեաց խնդրակս յամ քաղաքս և 'ի գաւառս՝ խոստանալով նոցա պարգևս . ասէ . որ ոք ածցէ ինձ զպլակիդոս , յաւելում նմա անուն՝ ( այն է ը հռովմայեցւոց՝ աննօնա , ռոճիկ տարեկան ) ամս

հնգետասան , և այլ ևս պատիւ :

Արդ երկուք ոմանք 'ի խնդրակաց , միոյն անտիոքոս անուն , և երկրորդին ակակիոս , որք երբեմն ընդ ձեռամբ Եւստաթէի էին , եկին հասին 'ի գեօղն՝ յորում էր Եւստաթէոս : Եւ տեսեալ զնս Եւստաթէի 'ի բացուստ՝ գնայր պատճառաւ զբօսանալոյ մերձ առ նս . և ծանուցեալ զնս՝ յիշեաց զառաջին վիճակ իւր և զառաջիկայ նեղութիւնն . և սկսաւ ասել առ ած . տէր զօրութեց՝ ած

Հարցն մերոց, գտնէ յաւուր գիտութեան 'ի Հանդերձելումն հրամայեա՛ ինձ տեսանել զլծակիցն իմ, և զթշուառացեալ տղայսն իմ, որք վ͞ն իմոյ թշուառութեանս գազանակուր եղեն. տո՛ւր ինձ տ͞ր յողորմութենէդ քումմէ, ո՜ զի այժմ մեռացայց, և 'ի Հանդերձեալ աւուրն տեսօղ եղէց անդամոցն իմոց և ոսկերաց։ Եւ լուեր յերկնից ձայն՝ որ ասէր. քաջալերեա՛ց Եւստաթէոս, զի 'ի մերձակայ ժամանակիս տեսցես զկին քո և զերկոսին որդիսն քո. իսկ 'ի յառնել քո 'ի տառապանաց՝ բազմաց օգնական գտցիս նեղելոց. և զանուն քո մեծացուցից յազգի մարդկան։

Ապա եկաց Եւստաթէոս 'ի վ͞ր Ճանապարհին՝ անսալով գալստեան արանցն. և իբրև մերձեցան առ նա զօրականքն, ողջոյն ետուն նմա իբրև օտարի, և ասեն. ուրախացի՛ր (ա՛յս է, ո՛ղջ լեր). և նա ասէ. խաղաղութի՛ ը͞ն ձեզ։ Եւ հարցանէին ցնա. միթէ գիտես դու զոք աստ, որ կոչի պլակիդոս, հանդերձ կնաւ և որդւովք. պատմեա՛ մեզ, և տացուք քեզ պարգևս բազումս։ Իսկ նա խուովեալ՝ ոչ զօրէր տալ նոցա պ͞խնի. և յետ այնորիկ ասէ. ո՛չ գիտացի այդպիսի զոք աստ. բայց դուք եկա՛յք հանդերձո՛ւք փոքր մի 'ի տանն՝ յորում ես պանդխտանամ. քանզի և ես ինքն օտար եմ, և պանդուխտ 'ի գաւառի աստ. զի թերևս գտից սակաւ մի գինի, և տաց ձեզ յարբումն վ͞ն տօթոյ երկրիս։

Եւ երթեալ՝ ասէ ցտ͞ր տանն իւրոյ. ծանօթք իմ են եկեալ 'ի Ճանապարհէ, բերցես նոցա

կակ-

կակղագոյն կերակուրս . զի նշանաւորք եկին
առ մեզ . և զա̃մ հատուցից քեզ 'ի ժամանա-
կի վարձատրութե̃ իմոյ . և տանուտ̃րն բա-
զում յօժարութբ̃ արար նմ̃ ուրախութի . և
'ի բազմելն նմ̃ ինքնին տանուտ̃րն լուանէր
նոցա գինի . իսկ Եւստաթէոս բերեալ ջուր
մատուցանէր . և յեղանելն իւրում լայր , և
լուացեալ զդէմսն՝ սպասաւորէր դարձեալ :
Եւ զի ունէր Եւստաթէոս նշան 'ի պարանո-
ցի , այն է սպի մնացեալ 'ի վիրաւորելոյ 'ի
պատերազմի , մինչդեռ սպասաւորէր , ան-
տիոքոս մին 'ի զօրականացն տեսեալ զպա-
րանոց նր̃՝ 'ի վեր վազեաց լալով , և համբու-
րեաց զԵւստաթէոս : Օ մտաւ ածէր ակա-
կիոս՝ թէ զի՞նչ է այս . ապա իմացեալ և
սորա զնշանն՝ վաղվաղակի գիրկս արկեալ
համբուրէր նոյն օրինակաւ : Եւ իբրև յայտ-
նի եղև բանն , սկսան և ընտանիքն նովին
ձևով համբուրել և լալ ը̃ նմ̃ . մինչ զի և ա̃մ
գիւղն անդր ընթացեալ՝ ասէին , թէ զի՞նչ
է այս : Եւ փոքր մի ցածուցեալ զինքեանս
զօրականացն՝ հարցանէին զնա վս̃ կնոջն և
երկու որդւոցն :

Իսկ Եւստաթէոս ասէ ցնս̃ . ո՛չ գիտեմ ես
զպլակիդոս , և ո՛չ ես նա եմ . զի՞ աշխատ
առնէք զիս : Եւ նք̃ ասէին ցնա . դու ես տ̃րն
մեր . և դարձեալ պատմէին բնակչացն յա-
ղագս մեծութե̃ և քաջութե̃ նորա . իսկ նք̃
լալով ասէին , եթէ ո՞րպիսի այր վարձկան
մեզ եղև . և եկեալ 'ի ծունր իջանէին՝ աղա-
չելով զնա թողութի շնորհել նմ̃ : Իսկ զօ-

րա-

րականքն զհրաման Թագաւորին մատուցա-
նէին. և 'ի հարցանելն մ͞ո կնոջն և որդւոցն՝
ասէր, թէ մեռան. և նոցա առեալ զնա և
զգեցուցեալ հանդերձս պատուականս՝ դի-
մեցին 'ի Ճանապարհ իւրեանց. իսկ որք 'ի
տեղիսն էին՝ լալով յուղարկէին զնոսա. և
ինքն աղաչելով արձակեաց զն͞ս:

Այլ իբրև եհաս առ Թագաւորն, տեսեալ
զնա Թագաւորին՝ ասէր. ո՞րպիսի Ճանա-
պարհ գնացեր պլմկիդէ, և զի՞արդ մեզ ան-
յայտ եղեր: Իսկ նա սկսաւ կարգաւ պատ-
մել նոցա առաջի ա͞մ սինկղիտոսաց յաղագս
կնոջն, թէ ո՞րպէս 'ի ծովու մնաց, և կամ
զի՞արդ որդիքն գազանակուր եղեն. և ո՞րպէս
ա͞մ նեղութեցն համբերեաց. մինչև յար-
տասուս ցնդիլ ա͞մ ունկնդրաց: Ապա մխի-
թարեալ 'ի Թագաւորէն և յամենեցուն՝ ըն-
կալաւ և աճաւ զկամարն ը͞ն առաջին զօրա-
վարութեն:

Այլ իբրև եւ 'ի Ճանապարհ բանակաւն, տե-
սեալ թէ ոչ են զօրք ժողովեալ ը͞ն պիտոյից
առաջիկայ պատերազմաց, հրամայեաց գիր
առնել, և նորընտիր լինել ը͞ն ա͞մ տեղիս՝ ը͞ն
որ անցանէր. և երկուք ոմանք եկեալ 'ի
գիւղն՝ ուր որդիքն սնեալ էին Եւստաթեայ,
իբրև խնդրէին զօրականս 'ի վարձու, գեղ-
ջայինքն յանձն առին վաճառել զերկոսին
պատանեակս իբրև զօտարս եղեալս 'ի միջի
նց. բայց պահանջէին զին ծանր մ͞ն պատ-
ուականութե նոցին. զի էին վայելուչք հա-
սակաւ, կորովիք և առաքինիք, և ամբիծք
ամե-

ամենեքին . և տուժեալ արանցն բազում ինչ 'ի գինսն՝ առին զնս , և բերեալ առաջի կացուցին տն իւրեանց ։ Եւ առեալ զնս Եւստաթէի՝ եգիտ ընտիրս 'ի մէջ հազարաց , և հաճոյս ինքեան տմ իրօք . և սիրեաց զնոսա յոյժ առ բնաւորական հայրենի գթոյն յանգէտս . և կացոյց զմին 'ի նոցանէ իւր զինակիր , և զմիւսն 'ի վր սեղանոյ իւրոյ և սենեկի ։

Եւ 'ի հաւաքիլ տմ զօրաց՝ խաղաց պատրաստութբ մեծաւ 'ի պատերազմ . և զգաւառն՝ զոր առեալ էր բարբարոսաց՝ ազատեաց . և նուաճեալ զնս , և հարեալ զդիմակացս՝ ( զորս ոմանք եղիմացիս կոչեն ) , էանց ընդ գետն՝ զոր կէսք անօր կոչեն , և այլք իդասպիս , և միջամուխ եղև 'ի ներքսագոյն տն բարբարոսաց . քանզի նախախնամութին քնի ածէր զնա 'ի տեղին , յորում բնակեալ էր կին նր . մինչև եղև գալ բանակին Եւստաթէի զօրավարին 'ի գիւղն , ուր պանդխտէր Թէոպիստէ , հարեալ զխորան մօտ 'ի պարտէզն՝ զոր նա պահէր , հանգչեալ անդ զաւուրս երիս ։ Եւ Թէոպիստէ ուրախ եղև ընդ գալ բանակի հռովմայեցւոց . զի դիմելով առ զօրավարն իբրև քաղաքացի՝ թերևս հնար լիցի նմա դառնալ 'ի հայրենիս ։ Եւ եղև յաւուրն երկրորդի՝ յորժամ յետ ճաշուն 'ի քուն եմուտ Եւստաթէոս 'ի խորանի իւրում , երկու եղբարցն շրջելով ընդ միմեանս 'ի մերձակայ բուրաստանին , և նստեալ ը՟ ծառովն՝ պատմէին միմեանց զտղայութի

ութեան խորհրդոց. իսկ մայրն նորին նստէր 'ի պատուհանին՝ յիշատակելով զանցեալ հեշտութիւնս, և գաղտաբար ունկնդրութիւն առնէր ասացելոցն 'ի պատանեկաց: Քանզի ասէր երէց եղբայրն ագապիոս ցկրտսերն թէոպիստոս, եթէ ոչ այլ ինչ զողջայութենէ յիշատակ ունիմ, բայց միայն զայս, զի զհայրն իմ գիտեմ, թէ զօրավար էր և մեծատուն՝ ոմն և տէր մեր, և աղքատացաւ. և մայրն իմ գեղեցիկ յոյժ եղեալ. և միւս եղբայրն իմ փոքրիկ խարտեաշ հերովք. իսկ հայրն մեր եդեալ զմեզ 'ի մախաղի՝ մօրն զկնի գալով, ել 'ի նաւ մեօք հանդերձ և մարբն. իսկ յելանելն մեր՝ մայրն մեր ոչ ել ընդ մեզ. ոչ գիտեմ, թէ զիա՞րդ 'ի ծովու մնաց, կամ զի՞նչ եղև: Իսկ հայրն մեր բարձեալ զմեզ՝ հեծեծելով գնայր. և հասեալ 'ի գետ ուրեմն՝ անցոյց զմիւս տղայն, աստուստ զիս թողեալ. և հանդերձեալ նորա դառնալ՝ յայնմ վայրի յափշտակեաց զնա առիւծ. յորմէ թափեցին զիս հովիւք ոչխարաց. և սնայ 'ի գեօղն՝ յորում և դու գիտես. բայց յաղագս հօրն իմոյ և միւս մանկանն ոչ գիտեմ թէ զի՞նչ եղեն: Յայնժամ վաղվաղակի 'ի վեր վազեաց թէոպիստոս, և գիրկս արկեալ զպարանոցաւ ագապիոսի՝ ասէր կականելով. զօրութեամբն Քրիստոսի՝ եղբայր քո եմ. զի հայրն իմ և մայրն իմ և եղբայր նոքա են՝ զոր դու ասացեր. և ես յիշեմ զանցս գետոյն, զի մնացի 'ի մի կողմն միայնակ, և ոչ ևս տեսի զհայրն իմ և զեղբայրն իմ. զի գազան յափշտակեաց զնա.

զիս . և որ զիմն անուցին՝ ասացին, թէ 'ի դայլոյ զերծուցաք զքեզ, և ոչ գիտացաք ինչ զծնողաց քոց՝ թէ ո՞ւր իցեն . Օ այսպիսիս պատանիքն ։

Իսկ մայր նը իբրև լուաւ զայս ամ, խռովեցաւ 'ի սրտի իւրում յոյժ . զի գիտաց որդւիս իւր զնմ գոլ . և տեսեալ՝ թէ որպէս նքք միմեանց գիրկս արկանելով լային, առ անձուկ սրտին ոչ ևս կարէր արգելուլ զինքն 'ի լալոյ մինչև յերեկոյ . և ոչ իսկ կամէր ծանօթս տալ զանձնէ, մինչև գտցէ օգնականութիւն 'ի զօրավարէն՝ ելանել յօտարութէ անտի ։ Այս և ժուժկալեալ մինչև ցառաւօտ՝ 'ի վաղիւն անդր համարձակէր առաջի գայր Եւստաթէի, ասելով . Աղաչեմ զքեզ տր իմ, ես հռովմայեցի եմ, ոմն գերի թափառական անկեալ 'ի կողմանս յայսոսիկ . զերծո զիս 'ի գաւառն իմ՝ հանելով 'ի տեղւոջէս ։ Նա և զայս ասացեալ՝ նկատէր զնշան առն իւրոյ 'ի պարանոցի նր . և ծփեալ 'ի խորհուրդս իւր՝ ոչ կարաց ժոյժ ունել . ասէ . աղաչեմ զքեզ տր, մի գարշիր յաղախնոյ քումմէ . այլ պատմեա ինձ վասն 'ի սկզբանէ վարուց քոց . մի՛ գուցէ դու ես՝ որ կորուսերն զիս . պատմեա ինձ, երդուեմ տուեալ 'ի զօրութիւն տն քմին քո ։

Նա լուեալ Եւստաթէի զանունն քմի անուանեալ յԴին բարբարոսաց, զմտաւ ածէր՝ ասելով, եթէ իբրև զմի ոք 'ի հռովմայեցւոց հաւատացելոց ուսեալ է կինս այս զքն . և ակն ածեալ բանից կնոջն՝ զի մեծամեծ աւետեաց

տեղաց տայր նշանակ, սկսաւ փոքր ’ի շատէ պատմել նմա յանցից իւրոց. և մինչ նա բան մի ’ի պատահելոցն ասէր, կինն զաւաջի-կայսն պատասխանէր ’ի դիպուա՛ծոցն: Եւ ’ի սկսանել առնն ասել, թէ զիա՞րդ նաւա-վարն յափշտակեաց զկինն իւր, նա ’ի վերայ էած զպատմութ՟ի որդւոցն յափշտակելոց ’ի գազանաց:

Յայնժամ իբրև ’ի հիացման եղեալ եւստա-թէոսի՝ ասէ. երդմնեցուցանեմ զքեզ ’ի ք՟ս, ուստի՞ զպատահմունս իմ գիտացեր: Եւ նա ընթացաւ անկաւ առ ոտս ն՟ր, և ասէ. ես եմ տառապել կինն քո թէոպիստէ. մի բար-կանար ’ի վ՟ր իմ տ՟ր. քանզի որդին ա՟յ՝ որ երևեցաւ քեզ ’ի լեառնն տեսլեամբ եղջեր-ուի, ն՟ր շնորհիւ՛ անմերձենալի եմ ես յայլ-ազգւոյն՝ որ յափշտակեացն զիս: Եւ եւս-տաթէոս լալով ասէ. ո՞չ ներողութ՟ի է ինձ վ՟ս այնորիկ. օրհնեա՛լ է ա՟ծ՝ որ ա՟մ ուրեք մերձ է առ իս: Իսկ թէոպիստէ ասէ. արդ գի-տացե՞ր ինչ վ՟ս որդւոցն քոց, թէ ոչ: Եւ նա ասէ. ասացի՝ թէ գազանակուր եղեն ման-կունքն, ո՟պ և գիտակ զանձինդ ցուցեր. և այժմ զիա՞րդ հարցանես, թէ գիտացե՞ր վ՟ս որդւոցն քոց:

Եւ ասէ կինն. տ՟ր իմ, սոքա երկոքին զինա-կերքս քո գեղեցիկք՝ մեր որդիքն են. այլև ոչ ինքեանք իսկ գիտէին մինչև ցայժմ եղ-բարք միմեանց լինել. քանզի լուա՛յ երէկ ’ի պարտիզին, զի պատմէին միմեանց զանցս իւրեանց: Եւ կոչեցեալ զն՟ս եւստաթէոսի

առաջի

տաճարի իւր՝ հարցանէր, թէ երբ մնայք. և նոքա կարգաւ յիշատակեալ իմացուցանէին զպատահումն իւրեանց ։

Եւ երբև ծանեան ծնօղքն զորդիսն, և որդիքն զծնօղս իւրեանց, և զիրեարս, ձեռն 'ի ձեռն եդեալ իւրաքանչիւրոց, և անկեալ զպարանոցաւ միմեանց՝ լային 'ի խնդութ՟ն մինչև ցժամս երկուս, և գոհութ՟բ աղաղակէին առ ա՟ծ տուօղն սքանչելեաց. և յերկրորդ ժամէ աւուրն մինչև 'ի վեցերորդն ընթանայր համբաւ եղելոցն ը՟ն ա՟մ բանակն. մինչև ա՟մ զօրացն ժողովիլ, և մխիթարակից լինել ն՟ց յաղագս գիւտի ծանօթութ՟ն, և տօն մեծ կատարել ։

Ապա 'ի վաղիւ անդր զօրացեալ քաջին Եւստաթէի հ՟րամբ՝ կոտորած մեծ հասուցանէր 'ի վ՟ր այլազգեաց. և մեծաւ յաղթութ՟բ և փառօք դարձ արարեալ գայր հասանէր 'ի հռովմ (7) ։ Այլ յառաջ քան զդառնալ ն՟ր մեռաւ սիրելի թագաւորն իւր ներուաս, որ էր այր խաղաղասէր և բարեսէր առ քրիստոնեայս, բայց ոչ յերկարեաց յաթոռն աւելի ք՟ զտարի մի և զամիսս չորս. և եղև այլ թագաւոր՝ անուն տրայիանոս, որ 'ի սկզբան անդ ատելութ՟բ էր առ հաւատացե՟լս ք՟սի. վ՟սյ գիտացեալ զպլակիդոսէ՝ որ և Եւստաթէոս, թէ զք՟ս անուանէ, ապախտ արար զա՟մ վաստակօք ն՟ր ։ Եւ կոչեալ յատեան զառաքինի նահատակն և զընտանիս նորա, բազում մարտնչէր ը՟ն ն՟ս բանիւք՝ դառնալ 'ի պաշտօն կռոց. և երբև ոչ կարաց որսալ

զն՟ս

զնմ բանիւք, Հրաման ետ՝ զի 'ի հանդէս
ասպարիզի առիւծամարտիկ լինիցի եւստա-
թէոս հանդերձ կնաւ և որդւովքն. բայց
ոչինչ վնասեցին զնմ գազանքն. այլ եկեալ
յասպարիզէն՝ հեզաբար գնացին 'ի տեղիս
իւրեանց. զոր լուեալ բազմութե հաւատա-
ցելոցն 'ի քմ՝ գային 'ի տեսանել զկենդանի
նահատակսն, և փառաւորէին զած ։ (8)

Իսկ Թագաւորն զայրացեալ մեծաւ սրտմը-
տութբ՝ հրամայեաց յուլ պղնձի առնել, և
բազում հրով ջեռուցանել զնա, մինչև լի-
նել իբրև զփայլակն. և անդ արկանել զնս,
մինչև վճարեսցին 'ի կենաց ։ Իսկ իբրև մեր-
ձենային երանելիքն յամենադժնեայ մեքե-
նայսն, խոնարհեցուցեալ ծունր՝ աղօթէին
ասելով. Տր ած զօրութեց՝ անտեսանելիդ
ած, որ երևեցար մեզ ողորմութբ քով, լուր
մեզ մարդասէր, և ընկալ զպաղատանս մեր.
զի միաբանեալք արժանի լիցուք մասին քնի
քո հասանել, ընդ ամբիծ մանկունքն՝ որ 'ի
հուրն ընկեցան ։ Տուր տր յիշողացն զան-
ուանս մեր առատութի յերկնէ և յերկրէ.
ը ծով և ը գետ առանց վնասու և վտանգի
անցանել. և որոց զաւակք կոտորին, նոցա
վաղվաղակի յօգնութի հաս. զմեղս ծանունս
թեթևացո. և որ 'ի ճանապարհի յիշեն զմեզ,
տմր բարեգործեա. և որք 'ի հիւանդութե յի-
շեն զմեզ, վաղվաղակի բժշկութի շնորհեա. և
զեռացուցմն հրոյս 'ի ցօղ փոխարկեա. և ըզ-
հոգիս մեր ընկալ խաղաղութբ. և զմարմինս
մեր մի բաժաներ 'ի միմեանց, այլ 'ի միա-

սին հանդի ։ Նա ասէ ցնա տէր 'ի ձեռն հրեշտակի . Ճշմարտապէս այդպէս եղիցի ձեզ, և աւելի ևս քան զայդոսիկ . Քանզի ուր քղանցք հանդերձից ձերոց հասցեն , անդ եղիցի և

զօրութիւն իմ ։

Նա իբրև արգելին զնա 'ի ցուլն , անօթ տանջանարանին եղև նոցա աղօթանոց . և եռացուցին հրոյն զինջաւ . և աւանդեցին զոգիս իւրեանց խաղաղութեամբ . և կատարեցան բարեյաղթ վկայքն այսպիսի օրինակաւ , յիշատակ բարի թողեալ յերկրի , որ օր քսան էր սեպտեմբերի ամսոյ , յամի տն իբր 100 . զոր այլք փոքր մի յետոյ դնեն , որպէս յամի 120 , կամ 124 ։ Նա յետ երից աւուրց հանին զնոսա 'ի հրացեալ ցլոյ անտի . և տեսին , զի մազ մի 'ի գլխոյ նոցա ոչ էր այրեցեալ . և էին մարմինք նոցա պայծառ քան զձիւն . զորս առեալ քրիստոնէից՝ եդին պատուով 'ի միում տապանի . և յետ ժամանակաց շինեցաւ վկայարան 'ի

'ի վերայ նոցին 'ի փառս քրիստոսի այ մերոյ ։ (9)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) 'Ի տօնացոյցս հասարակօրէն եւստաթէոս գրի ըստ հին օրինակաց՝ համաձայն Ճառընտրաց և յունականին . բայց 'ի յետին օրինակս սովորութիւն եղև գրել եւստաքէոս՝ համաձայն Հ . լատինք ևս է զի եւստաթիոս ասեն , և է զի եւստաքիոս կամ եւստոքիոս ։ Զոր օրինակ և զառաջին անունն՝ որ ոչ յիշի 'ի Ճառընտիրս , յոյնք գրեն բլագիտաս , լատինք բլաչիտուս . և Հ . պղակիդոս , փոխանակ ասելոյ պլակիդոս ։ Իսկ առաջին անուն կնոջն՝ որ 'ի մեզ և առ յոյնս միօրինակ գրի տատիանէ,

առ լատինս գրի նաև տրայիանէ • ուստի և ոմանց
կարծել զնա յազգէ տրայիանոսի :

(2) Վկայաբանութիւս ողջոյն՝ զոր ունիմք յերկս Ճառընտիրս մեր, ուրեք գոյզն տարբերութք գրչաց, և ուրեք քանի մի տող առաւելութք կմ նուազութք բանից երևելեաց, գտանի նոյն ըստ գոյացութե, և բազում մասամբ նաև նովին շարադրութբ՝ 'ի յունական օրինակն յառաջ բերեալ 'ի բոլլանդեանց • զոր և ըստ այլևայլ ձեռագրաց 'ի մէջ բերեն և այլ արք երևելիք • նոյնպէս կայ և հին թարգմանութն լատին՝ ինչ ինչ տարբերութբ • թող զօրինակն սուրիոսեան, որ է թարգմանութն մետափրաստեան օրինակի՝ Ճոխագոյն և ներբողական ոճով • և զօրինակս յայսմաւուրաց մմ ազգաց, որ են քաղուածք առաջնոցն • յորս առ հասարակ է մի և նոյն պատմութն հրաշալի :

Հրաշալի ասեմ ոչ միայն ըստ գերբնական շնորհաց կոչման սոյս 'ի քս՝ հանդերձ նորահրաշ տեսլեամբ եղջերուին, այլև ըստ բնական նախախնամութեն այ, որով թոյլ ետ նմ կրել զանցս նման յոբայ և յովբեփայ, և անդրէն յառաջին վիճակ նորոգեաց, զարմացուցիչ պարագայիւք • որք ըստ առաջին տեսութե անհաւատալիք կմ դժուարահաւատալիք լինին լսելեաց • սորին վս և հակառակութն ոչ սակաւ կրեաց առ կրիտիս անուանեալ քննիչս պատմութեց, յորոց ոմանք բերեալ եղեն 'ի հաստատել, այլք 'ի դրդուել, և կէսք յերկուս կողմանս տատանել զառաջիկայս վկայաբանութն : Շատ լիցի լսել զքաղուած տարատամ ոճոյ յովհաննու կղէոսի բոլլանդեան, որ ունի աստանօր այսպէս •

* 'Ի մէջ այլոց՝ զանկեղծութիւն վկայաբանութեանս
,, ջատագովէ լեոն ալլասիոս, պնդելով՝ թէ յունա-
,, կան վկայաբանութեան հեղինակն է ժամանակակից
,, սբյն : Զնոյնպիսի հեղինակ նաև խուռումն օրինակի
,, 'ի մէջ առնուլ բազմօք հնարի կոմբեփիզ 'ի ծանօթու-
,, թիս : Եւ աթանաս կիրգեր զնմ փոյթ 'ի մէջ առ-
,, նու հաստատել 'ի հին յիշատակարանաց զճշմարտութ
,, եւստաթեան պատմութե : 'Ի հակառակ կողմն կան
,, հանդերձ բազմօք տիլլեմոնտ և բայիլլէտ, որք ողոր-
,, մելաբար ծուծատեն զայս վկայաբանութն • 'ի նս երևի
,, ըստ իմիք յարել և սոլլերիոսն մեր • • • հեղագոյնս ըղ-
,, գան զեւստաթեանց, և զմիջին գոգցես Ճանապարհ
,, ընթանան բարոնիոս և մերս բաբեպրոք || : Սոյնպէս
ասէ՝ և այլ ծմ քննիչք զմիոյ յերից տեսակաց արանցս

զհետ

զհետ երթան. և զի միջին ճանապարհն կարծի գոլե-
լի, զի այն կամի ընթանալ և ինքն կղէոս. և ընթացք
նոր են այսպիսի ։

Նախ զխոստորեալն յաջեակ կշտամբէ ոճով. զի ասէ,
յանդուգն է տիլլեմոնտ՝ որ զմերժօղս պատմութեն
իմաստունս համարի, և զընդունօղսն՝ ոգէոս. * Իբր-
,, այսպէս զկեռն ալլատիոս, զկոմբեփիզ, զմանզինոս,
,, զալթանաս կերգեր, և զայլ ոչ սակաւ գիտնականս 'ի
,, դուրս հանէ 'ի դասակարգէ գիտնականաց. և ինքն
,, 'ի մերժել զեւստաթեան գործս՝ այնու ևեթ դատապ-
,, տանաւ գիտնականաց (կուսակցաց) վարի, որ հաս-
,, տատեալ է միայն յանստորութե սքանչելի գործոց
,, շղթայատող պատմելոց 'ի վարս անդ ։ Նովին մեքե-
,, նայիւ, զտիլլեմոնտի զհետ երթեալ բայլլէտ, զպատ-
,, մութի մեր դղորդէ. և պարզաբար՝ զորս միանգամ
,, տեսի ցայս վայր գիմամարտս, զայս մանաւանդ՝ և
,, գրեթէ զմի միայն՝ նետ ձգեն. որով իսկևիսկ տա-
,, պալեալ համարին զամ հաւատ վկայաբանութեն, և զայ-
,, լովքն իբրև զանշուք աւերակօք զանց առնեն... Բայց
,, սակայն 'ի դէպ էր ձեռնարկել, թէ ոսկ շղթայա-
,, շարութի սքանչելի իրաց ոչ ինչ յուցանէ զատուե
,, պատմութե իրէք. ահա կան 'ի մէ գիրս՝ յովսեփայ,
,, եսթերայ, դանիէլի, շուշանայ, յովնանու. (ևս ա-
,, ռաւել՝ յոբայ,) և այլոց ևս գործք, յորս ոչ նուազ
,, է սքանչելի աղխաղխումն և անընդհատ շարունակու-
,, թի անստոր գործոց. և սակայն ամայն հեղինա-
,, կութին առնէ մեզ զնոսին ամի անտարակուսելիս ։

Այնպէս և այլ քանի մի ձեռնարկս բերել ջատագովու-
թե՝ բարւոք ասէ. * և այսպիսի ձեռնարկողաց դժուա-
,, րին է տալ պնի ։

Երկրորդ՝ սկսանի յանդիմանել և զնս, որք կարծին
յաջակողմն խոստորեալ, զի ոյք զամ մասունս պատմութե
պինդ ունին. և որչափ յերկարէ զբանս վս սոցին իրաց,
ոչինչ ստոյգ ձեռնարկէ. այլ զայս, թէ * հաւատամ,
,, թէ ինչ ինչ... կա բաղում ինչ 'ի վկայաբանութե
,, ասա վկայից մերոց յաւելեալ և պատուհասել իցէ.
,, յորոց միջի կան իրք ինչ, որք ինքնին մատնեն իսկ-
,, և իսկ զինքեանս. (զի) երևի 'ի մէջ եղջերաց եղջեր-
,, ուին փրկիչն, և զեւստաթէոս յորդորէ յընդունե-
,, լութի հաւատոց. 'ի կարի սակաւ ժամս կրթին 'ի
,, հաւատս եւստաթէոս և կին նր թէոպիստէ. և իս-
,, կոյն մկրտին, խակոյն ոբ մարմնոյ և արեան փրկչին



,, հա-

,, Հաղորդին· այնպէս խօսին զծածայնոց, և այնպէս քա֊
,, ղէն զօրինակ և զկարգութիւս 'ի ՃԲ գլուց, մինչև 'ի
,, միտ առնուլ քեզ, թէ ոչ միայ կիմ երկու աւուր քրիս֊
,, տոնեայք են: Մանուածոյ են և անյարիր՝ զոր ինչ
,, յիշատակեն ազապիոս և Թէոփիլոս 'ի Ճանաչելն
,, զմիմեանս· պատրաստ կան յերկուս կողմանս գետոյն
,, առ իւծ և գայլ, որք առաւ և անտի յափշտակեն զոր֊
,, դիս եւստաթէի, և ողջանդամս դարձուցանեն չէ֊
,, նականաց 'ի վր հասելոց· Թէոփիլոսէ երջանկագոյն
,, յայնմ վայրի զօտարազգւոյ զպարտէզն պահէ, ուր
,, որդիք նր 'ի մի եկեալ գտանին՝ հանդերձեալք զին֊
,, ուորիլ· լսէ զբանս նոցա յաջողուածով 'ի պատմել
,, իւրեանց զանցս իւրեանց, Ճանաչէ, գալարին աղիքն·
,, բայց յապաղէ զանձն յայտնել· և առ զօրավարն եր֊
,, թայ աղաչել, զի զինքն զվտարանդեալն 'ի հայրենիս
,, դարձուսցէ· զայրն յայլ նշանաց Ճանաչէ, և նմին եր֊
,, ջանկապէս զայն ինչ 'ի յայտ եկեալ զերկոսին որդիսն
,, մատուցանէ: Որք առ հասարակ թէպէտև կարելիք,
,, բայց երևին նուազ արժանահաւատ, եթէ ոչ առոյգ
,, պատգամաւ հաստատեսցին ||:

Տեսանեմս, զի պատՃառքն իմն կղէոս ոչ 'ի վր մասնա֊
ւոր պարագայից՝ որք գտանին յօրինակս ինչ օտար 'ի
Ճշմարտութէ, այլ 'ի վր բովանդակ հանդամանաց պատ֊
մութե· և այսպէս անձամբ անձին հակառակի· զի որ
ձախակողմեանց կշտամբիչ եղև, արդ Ը նոսին միաբա֊
նի 'ի կշտամբել զաջակողմեանս· և դարձեալ խառնա֊
կէ զբանն, այնպէս ընդունելով զպատմութիւն՝ որ չար
ես է քան զմերժելն· զի այսպէս եզրակացուցանէ·
* Արդ՝ եթէ զայսոսիկ 'ի բաց հանցես 'ի վկայաբանու֊
,, թէս, զմնացեալսն թուի թէ հնար է իբր երկբայա֊
,, կանս ջատագովել· այլ այնպէս՝ զի և զայնոսիկ չկա֊
,, րէ ոք ցուցանել, թէ իցեն անկեղծ· զոր ոչ այլազգ,
,, բայց յանիրաւի արդեօք լինէր պահանջել: Եւ ար֊
,, դարև՝ եթէ զայլ ինչ ինչ իւս յայլոց վարուց, որք
,, յայտնի առասպելայօդ են, իբրև հաւանականս առ֊
,, նուն կրիտիկք, չգիտեմ ԶԷր զայդ ժխտիցեն գլխա֊
,, ւոր մասանց պատմութես մերոյ· որ առաջքն այլ֊
,, ուստ 'ի վեր քան զայլ վարս՝ յորոց ինչ ինչ Ըունին
,, այլք, զայնչափ աւելի հաւանականութի ունի, մինչ
,, զի յիմաստուն արանց ԾԹ բոլորին իբրև անկեղծ և
,, հարազատ ընկալեալ եղև ||:

Առաջքն այդ ձև պատ'իպաւ և մանուածոյ բանից,

որք

որք լի են թերեհաւատութ՟բ, ոչ ս՟բյն եւստաթէի է հաճոյ, և ոչ թշնամեաց վարուց ն՟ր: Թշնամիքն զայրանան, զի կղէոս իրօք միաձայն է ն՟ն՝ կամի դիմախօս երևիլ ն՟ց. և ս՟բն ցասնու, զի որ այսպիսի աչօք հայի 'ի նա, ոչ ճանաչէ զնա. վ՟ն զի որ ոք զն՟մ կարգ պատմութ՟ե ս՟բյ ուրուք յերկբայս տրկանէ, իմ՟է է՟ունի զսրբու՟ե ն՟ր. զի ն՟մ ո՟բ լուրովք գործովք ճանաչի և պաշտի, ը՟ն որում ծառն 'ի պտղոյն ծանիցի. և տարակուսիլ ընդ գործս ս՟բյն՝ է տարակուսիլ, թէ լեալ իցէ այնպիսի ս՟բ: Եւ յետին ծանծաղմտութի է, յետ խոստովան լինելոյ զհնարաւորութի գործոյ ինչ՝ մանաւանդ առ յո՟յ, մնալ ստուգութ՟ե առ 'ի պատգամաց. զի այդ ա՟ծային պատմութ՟ե է սեպհական, և ոչ մարդկայնոյն: Ապա թէ ոչ՝ և ես ունիմ ասել, թէ թէպէտև հնար է՝ թէ կղէոս գրեալ իցէ զայդպիսի ներհակախօսութիս, բայց առ 'ի հաւատալ՝ թէ արդարև ն՟ր իցէ գրուածս, մնամ պատգամաց. և ո՞ կարէ տանել այսմ. զի թէ հաւատացից ես, և եթէ ոչ, կղէոս այդպէս անյարիրս խօսեցաւ. և ընդ հակառակն՝ եթէ հաւատասցէ կղէոս և եթէ ոչ, ս՟բն եւստաթէոս այնպիսի օրինակաւ եղև ս՟բ՝ որպիսի աւանդի միաձայն յա՟մ եկեղեցիս քրիստոնէից 'ի սկզբանէ և այսր:

Ոչ ոք 'ի թուլամիտ կրիտիկաց եղև իմաստուն իբրև զս՟բն յովհան դամասկացի զճշգրտող վ՟պ. և ահա նա առանց է բանս ինչ ածելոյ է՟օրինակէ զերևելի հաստուած 'ի վկայաբանութէ աստի ը՟ յունական օրինակին, գրելով 'ի դիրսն յաղագս պատկերաց. ճա՟ռ ՟Գ. Երես. 372. այսպէս, * 'ի վկայութէ ս՟բյն եւստաթէի, որ
" և պլակիդաս: Յելանել ն՟ր 'ի միում յաւուրց ը՟ սո-
" վորութե 'ի լերինս յորս հանդերձ զօրականօք և ն՟մ
" ծառայիւք, երևեցաւ նմա ջոկ եղջերուաց արօտա-
" կան. և բաժանեալ ը՟ սովորութ՟ե զզօրն՝ զհետ եղև
" հալածել զն՟ա. և 'ի միտ դնել ն՟մ զօրուն յըմբռնումն
" եղջերուաց, գերազանցեալն յոյժ մեծութ՟բ քան զն՟մ
" երամակն և առաւել բարետեսիլն զատուցեալ յե-
" րամոյն՝ ընթացաւ արագութ՟բ է անտառախիտ վայրս
" մայրեաց և յանկոխ տեղիս: Զոր տեսեալ պլակիդո-
" սի, և ցանկացեալ ունել զնա, եթող զամենեսին, և
" սակաւ զօրականօք պնդեցաւ զհետ ն՟ր. և 'ի խոնջիլ
" այլոց և 'ի կասիլ՝ միայնակ հանապազորդէր 'ի հա-
" լածել. և ը՟ նախախնամութ՟ե ա՟յ ոչ երբէք նորա
" խոնջեցաւ, և ոչ ինքն վ՟ն դժուարութեան վայրացն
" լքաւ.

,, լքաւ. այլ յերկար զհետ մտեալ՝ հեռաւորոյն դատաւ
,, 'ի զօրաց իւրոց. իսկ եղջերուն փախչէր. և նա հա-
,, սեալ 'ի բարձրաւանդակ վիմին՝ ոչ ուրուք առ նմա
,, լինելով. կայր դիտելով յամ կողմանց. և զմտաւ ա-
,, ծելով՝ թէ որով օրինակաւ կալցի զեղջերուն: Այլ
,, ամենիմաստն և բարեգութն ած, որ զամ ճանա-
,, պարհս հնարէ 'ի փրկութիւն մարդկան. որսայ զնա
,, յորսա. ոչ ոպ զկոռնելիոս 'ի ձեռն պետրոսի, այլ
,, ոպ զպօղոս հալածիչն՝ 'ի ձեռն երեւման իւրոյ: Եւ
,, 'ի կալ պղակիդասի յերկար և 'ի դիտել զեղջերուն՝
,, զարմացեալ ը մեծութն նր և յանհնարս մտեալ վն
,, ըմբռնման նր, եցոյց տր նշան իմն այնպիսի, որ ոչ
,, տարադէպ, և ոչ զանցեալ զկարողութե նր մեծութբ.
,, այլ ոպ առ բաղդատմու բան տուեալ իշխն՝ կչռամ-
,, բեաց զնր միտս. սոյնպէս և սատանոր եցոյց այս-
,, ուէիկ. 'ի վր եղջերաց եղջերուէին զտիպ սբյ խաչին
,, առաւել քան զպայծառութն արեգական փայլեալ,
,, և 'ի մէջ եղջերացն զպատկեր ածազգեաց մարմնոյն,
,, զոր վն փրկութե մերոյ առնուլ հաճեցաւ. և ձայն
,, մարդկային տուեալ եղջերուէին՝ կոչէ զպղակիդաս,
,, ասելով. Ով պղակիդէ զի՞ զիս հալածես. ահա վն
,, քո եկի. և 'ի կենդանւոյս յայսմ երեւեցայ քեզ. ես
,, եմ յն քսն, զոր անգիտութբ պաշտես. զի բարեգոր-
,, ծութիւք քո, զորս դու առնես 'ի կարօտեալս, յան-
,, դիման եղեն առաջի իմ, և եկի ցուցանել քեզ զանձն
,, իմ 'ի ձեռն եղջերուէիս այսորիկ, և որսալ զքեզ և
,, ըմբռնել յուռկանս մարդասիրութե իմոյ. զի չէ ար-
,, ժան՝ եթէ այն, որ սիրելին է ինձ վն բարեացն
,, գործոց, ծառայեսցէ դիւաց պղծոց և կռոց մռե-
,, լոտւոց և խլից. զի վնկ եկի յերկիր յայս կերպա-
,, րան՝ յորում այժմ տեսանես, փրկել կամեցեալ ըզ-
,, մարդկան ազգ||.

Սովիմբ յայտ առնէ ժամանակայինն, թէ զնոյն զայն վկայաբանութիւն ունէր 'ի ձեռին և ընդունէր և ընդունելի գիտէր ամենեցուն, որ և կայ մինչև ցայսօր. այն է՝ զոր և իմաստուն քննիչք, ալլատիոս, կոմբեփիզ, կլիրգեր ևն, համարին գրեալ 'ի ժամանակակից մատենագրէ. որոյ յառաջաբանն յունական սկսանի այսպէս.

* Արդ ոչինչ փոքր եդեալ կայ ինձ առաջի՝ յաւելուլ
,, յարիական ներբողութեան հին արանցն և զոր այժմ
,, 'ի ժամանակս մեր ուղղագործեալս՝ առ բարելաւութե
,, լսելեացն. և 'ի դարձ կարծելեացն՝ եթէ անհնար

,, իցէ

„ իցէ գործիւ նոյնպիսեաց, որպիսիք 'ի հին ժամանակս
„ (լինէին դարձմունք, վ՟ր պօղոսի)՝ զի ծանիցեն ամե-
„ նեքեան, թէ որպէս՝ ոչ ժամանակն, և ոչ ժամանա-
„ կայն դժուարութիւնք, և ոչ անուղղայութիւն կենացն
„ անցելոց՝ խոչընդոտ լինի յուղղագործութիւն բարեաց
„ գործոց... Այսպիսի են և որ այժմ մեզ առաջի
„ եդեալք 'ի պատմութիւն՝ արք. զորոց և զ'ի սկզբա-
„ նէ զվարս վերագրեցից, և զկատարածի զգովեստ
„ զառ 'ի նոցանէ գործոց ապացուցից: Յաւուրս թա-
„ գաւորութեան տրայիանոսի (սկսեալ 'ի դոմետիանո-
„ սէ), մինչդեռ զօրացեալ էր կռապաշտութիւն, յա-
„ ռաջադէմ լինէր առ թագաւորին ստրատելատ՝ ան-
„ ուամբ պլակիդաս, ը՟ մարմնոյ ազգի փառաւոր, մե-
„ ծատուն յոյժ, գերազանցեալ զա՟մ փառաւորօք՝ ըս-
„ տացուածովք և ոսկւով և արծաթով և ծառայիւք
„ և այլ ընչիւք. և թէպէտև հեթանոս էր նա ը՟ կրօ-
„ նի, այլ գործովք արդարութե՟ ամե՟ զարդարեալ...
„ նոր ա՟մ կուռնեղիոս 'ի ժամանակսն անդ 'ի վեր ե-
„ րևեցաւ: Անէր և կին ||, եւն:

Նոյն վկայաբանութիւն է, զոր ունիմք 'ի ճառընտիրս մեր առանց նախընթաց յառաջաբանութե՟, և ինչ ինչ տարբերութե՟ ոճոյ ընթացս՝ որ զառաւել հնագոյն օրինակի տայ տարացոյց. նոյնպէս և առ լատինս նովին իմաստիւք՝ թէպէտև ոչ նովին շարադրութե՟, են զանազան օրինակք. արդ 'ի միաձայնութե՟ սոցա ամենեցուն յօրինեցաւ և մերս վկայաբանութի. իսկ թէ կայցէ ուրեք երևելի տարբերութի կա՟մ խոտորութե՟ յայս ինչ և յայնմ օրինակի, ծանուցանեմք 'ի կարգին. զի ոչ այլ ինչ պահանջի 'ի մէնջ 'ի պէտս հաւատարմութե՟:

(3) Յայժմու յունական օրինակ վկայաբանութեան՝ ո՟չ տեսեր, դնի 'ի սկզբան անուն տրայիանոսի կայսեր. և յաւուրս կատարման սը՟յն դնի ադրիանոս կայսր յաջորդ նր՟. նոյնպէս դնէ և մետափրաստէս առ սուրիոսի: Իսկ ճառընտիրք մեր՝ թէպէտև սխալագրութե՟ հանդերձ, ցուցանեն՝ թէ 'ի սկզբան էր դոմետիանոս, և 'ի վախճանի տրայիանոս, ը՟ որում և 'ի Հ. պարզապէս դրի, * ստրատելատ պատուեալ 'ի դոմետիանոսէ ||: Սխալագրութիւն առեմ 'ի Ճ՟. ուր յառաջն դրի. * Յամին երկրորդի մարկիանոսի թագաւորի ||, իսկ 'ի կատարման անդ՝ Ճ. Ա. գրէ ադրիանոս թգ՟ր. և Ճ. Բ. և Զ. (որ է երկաթագիր,) տրայիանոս. ը՟ որոյ նախընթաց նր՟ լինի ներուաս, և յառաջ քան զնա

դոմետիանոս: Արդ զի ոք և յանխաւ անուանցս կալցի ոք, ոչ սխալէ. այլ մեզ առաւել ընդունելի դատեալ եղև ընթերցուածն Հ. յորում հետ զհետէ կարգաւ յիշին թագաւորք ժամանակին՝ դոմետիանոս, ներուաս, և տրայիանոս. առ որով դնի թ̄ պատշաճի և կատարումն սրբոցս (նախ քան զթագաւորութիւն ադրիանոսի). մանաւանդ եթէ պլակիդոսն յիշատակեալ 'ի յովսեպոսէ իցէ նոյն ընդ սրբոյն պլակիդոսի եւստաթէոս կոչեցելոյ. ոչ միաբանի ընդ մեզ և եկեղեցական տարեգիրն այլովքն հանդերձ: Քանզի բարոնիոս հատ. Է. յամի Քն. 103. համար. 4. գրէ այսպէս. * Տրայիանոսի զօրավար զօրաց մեծապէս գովի պլակիդոս անուամբ, որ և յետոյ քրիստոնեայ եղեալ՝ եւստաթէոս կոչեցաւ. այն՝ որ զինուք գործ մեծ է վճարեալ 'ի ծառայութեան հռովմէական տէրութեան ընդդէմ թշնամեաց, նշանաւոր 'ի դրան և 'ի բանակի: Արդ յորժամ 'ի միտ ածեմք զպլակիդոսն զայն զայր երևելի, զնորին տրայիանոսի հօրն ոչ կարծեմ՝ երբեմն զինուորակից 'ի հրէական պատերազմի, որ էր զօրագլուխ հեծելոց, յորժամ ինքն տրայիանոս էր 'ի նախասացելոցս զօրավար տասներորդ լեգէոնին, և զի արութիւն քաջութեան նորա 'ի մարտս պատերազմի մեծապէս գովի 'ի յովսեպոսէ, դիւրաւ բերիմք յայն կարծիս, զի զայսպիսի այր՝ հայելով 'ի համեմատութիւն ժամանակի և անուանն և վաստակոց, նոյն ինքն համարեսցուք լինել, որ 'ի սոյն պատերազմունս յարդարեալս 'ի տրայիանոսէ ընդդէմ բարբարոսաց՝ զօրավար էր առաջին կարգի. և ապա յածուստ կոչեցեալ յընդունելութիւն քրիստոնէական կրօնի, ոչ աւանդէ վկայաբանութիւն նորա, հուսկ յետոյ իւրովքն հանդերձ՝ առ ադրիանոսիւ, զոր ունիմք ասել յիւրում տեղւոջ, փառաւոր նահատակութեամբ կատարեցաւ. (զոր և դնէ յամի Տն 120. 'ի Գ ամի ադրիանոսի): Բայց քանզի բանս է ընդ կարծեօք, որչափ և կարի հաւանական ցոյցս ունիցի, ազատ է իմաստուն ընթերցողն կարծել զոր կամիցի ||:

Բարւոք և իմաստութեամբ. այլ ծանիր, զի յայն սակս չիշխէ բարոնիոս հաստատել զիրսդ, ոչ և այլ քննիչք յայսկոյս յայնկոյս բերին, զի 'ի դնել իւրեանց զեւստաթէոս առ տրայիանոսիւ զառաջինն եղեալ զօրավար, և առ ադրիանոսիւ նահատակեալ, հասանէ ծերութիւն տիրէ նմա յոյժ, եթէ դիցի՝ թէ նոյն է սա ընդ պլակիդոսի յիշատակելոյ 'ի յովսեպոսէ. բայց սակայն մեք՝ որ

հա֊

հաւանական դատիմք ՟Ը ՟Հ, զեւստաթէոս առ դոմե-
տիանոսիւ յառաջագէմ 'ի զօրավարութե, եւ առ ներ-
ուասաւ յղեալ ՟Ըդեմ բարբարոսաց, եւ 'ի սկզբան թա-
գաւորութե տրայիանոսի նահատակեալ, քաջայարմար
տեսանեմք զժամանակ նր ՟Ը պլակիդոսի, զոր ասէպ
յիշէ յովսեպոս ։

Զոր օրինակ 'ի վարս իւր · հատոր · 43 · այս բանք են
յովսեպոսի · * Իբրեւ հասին առ իս հինգ հազարքն
,, ('ի զօրաց գալիլեացւոց), առեալ զնն եւ զոր ՟Ը իմ
,, զերեք հազար զօրականս, եւ հեծեալս ութսուն, ճա-
,, նապարհ արարի 'ի գիւղն քաբողոն՝ սահմանակից
,, պտղոմայիդայ · եւ անդ միաբան պահէի զզօրութիս,
,, ձեւացեալ 'ի պատրաստիլ 'ի պատերազմ ՟Ըդեմ պլա-
,, կիդոսի · իսկ սա եհաս հանդերձ երկու գնդաւ հե-
,, տեւակ զօրաց, եւ թեւով միով հեծելոց՝ 'ի կեստիոսէ
,, դաղոսէ առաքեալ, զի հրձիգ արասցէ զգիւղս գա-
,, լիլեացւոց, որք մերձ էին պտղոմայիդայ, եւ 'ի գոր-
,, ծել նր զակիչ առաջի քաղաքին պտղոմէացւոց, բա-
,, նակեցուցի եւ ես զզօրն իբր վաթսուն ասպարիզաւ
,, 'ի գեղջէ · թէպէտեւ բազում անգամ զզօրութիւն յա-
,, ռաջ ածաք ոնն թէ 'ի մարտ, բայց ոչինչ աւելի քան
,, զգրգռութիւն գործեցաք · քանզի պլակիդոս ցորչափ
,, ետես զիս փոյթ 'ի մարտ, ինքն զանգիտեալ կասէր ·
,, բայց 'ի պտղոմայիդայ ոչ մեկնեցաւ || ։

Եւ 'ի հատորն · 74 · * Սոյն բազում ժամանակի վես-
,, պասիանոս 'ի տիւրոս գայ, եւ ՟Ը նմա արքայ ագրիպ-
,, պաս · · · · Իսկ սեպփորացիք ընդ առաջ ելեալ եւ ող-
,, ջունեալ զվեսպասիանոս՝ առին զօր յօգնականութի,
,, եւ զզօրավարն պլակիդոս · եւ ելեալ խաղացին ստքօք
,, հանդերձ · · · եւ առ տարիքէա գիւղիւն զառաջինն մար-
,, տեան ՟Ը իս · եւ անտի 'ի յոտապատ չոգեցին · · · · եւ
,, ես կենդանւոյն ձերբակալ եղեալ կապեցայ, եւ զկնի
,, արձակեցայ || · եւն ։

Ճոխագոյն եւս գրէ 'ի գիրս պատերազմաց հրէից · ՟Գ ·
6, կմ 7 · թէ զկնի վեսպասիանոս'ի մախ եդեալ առ-
նուլ զյոտապատ, ուր անկեալ էր եւ ինքն յովսեպոս,
առաքեաց անդր զպլակիդոս եւ զերոււտիոս զերեւելի
զօրավարս, եւ ինքն եւս եհաս զկնի · եւ յետ բազում
մրցանաց էառ զայն · ուր եւ ըմբռնեցաւ յովսեպոս ։
Յառման քաղաքին ասէ * զառաջինն 'ի վեր ել տիտոս
,, ՟Ը միում 'ի հազարապետաց դոմետիոսի սաբինոսի,
,, սակաւ արս ածեալ ընդ իւր 'ի հնգետասաներորդ
,, գնդէ ·

,, գնդէ. և խողխողեն զպահապանսն՝ մօլին 'ի քաղաքն
,, հանդարտիկ. յետ որոյ սեքստոս ոմն կերէալիոս հա_
,, զարապետ և պղակիդոս զհիւրեամբք կարգեալսն 'ի
,, ներքս մուծանէին ||:

Դարձեալ պատմէ անդ. Գ. 1, կմ 2. Թէ * 'ի ժողո_
,, վիլ բազմութ յոյժ 'ի վր նր ('ի դժուարակոխ և յան_
,, մատոյց լեառն խաբերայ), վեսպասիանոս զպղակի_
,, դոս առաքէ հանդերձ վեց հարիւր հեծելովք... և
,, պղակիդոս հեզագոյնս խօսի ընդ նմա, հնարելով 'ի դաշ_
,, տի ուսալ զնա... և արդարև յաղթեաց խորագիտու_
,, թն պղակիդոսի ||. ևն: Իսկ ևս անդանօր. Գ. 3, կմ
7, գրէ, Թէ * վեսպասիանոս առաքէ 'ի վր փախու_
,, ցելոցն 'ի գադարայ զպղակիդոս՝ հինգ հարիւր հե_
,, ծելովք, և երեքհազար հետևակօք ||. և յերկար պատ_
մէ, թէ զիարդ քաջութբ եհար զփախստեայս. ևն:

Արդ քանզի 'ի պատերազմաց առաւ՝ ոչ աւելի քան
զամս երեսուն և հինգ անցին ըստ մեզ մինչև ցկատա_
րումն սրբյն եւստաթէի պղակիդոսի առ տրայիանոսիւ,
վսյ քաջայարմար թուի կարծիքն՝ թէ սա ինքն է յիշա_
տակեալն 'ի յովսեպոսէ իբրև մանաւոր զօրավար, որ
զկնի եղև ընդհանուր զօրավար. զի և ո՛չ զոք գտանեմք այլ
յայնմ դարու 'ի զօրավարս հռովմայեցւոց պղակիդոս
անուամբ, այն է Պլակիտոս, որ նշանակէ 'ի բարբառ
հռովմայեցւոց՝ հաճոյական, բարեմոյն բարուք: իսկ անուն
քրիստոնէութեն Եւստաթէոս՝ յունարէն ստուգաբանի, բարէ-
հաստատ, բարէկայմ, հաստ, [illegible]. այլ եթէ ընթերց_
ցիս Եւստաքէոս, լինի բարէհասկ, [illegible], կամ [illegible]:

(4) Միօրինակ պատմի յամ օրինակս Ճառընտրացն.
հյ. և լտ. տեսիլ եղջերուին՝ համաձայն գրելոցս, զոր
և երկրորդեաց դամասկացին 'ի վեր անդր. բայց քան_
զի յոյապիսի նորատեսիլ իրս պէսպէս նկարագրութիս
յաւելուն գրիչք, յաւելեալ է և 'ի Ճառընտիրս մեր
այս ձև չափազանցութե. * որոյ եղջիւրքն մինչև յամպսն
էին (կամ հասանէին) ||. զոր եթէ և անձամբ իսկ
պատմէր մեզ սրբն եւստաթէոս, ունէաք 'ի վր բերել,
թէ որովհետև 'ի սաորէ 'ի վեր երևեցաւ եղջերուն 'ի
գագաթան լերին, 'ի հարկէ եղջիւրք նր կից երևէին
ընդ ամպոց: Սոյնք զայն՝ որ գրի յօրինակս ինչ, թէ եղ_
ջիւրքն բազմաստեան՝ էին իբրև սլոտովք լի, կմ լուսե_
ղէն խաչն էր խաչ մարգարտով. որ են ըստ կամի բացա_
դրութիք գրչաց:

(5) Եւս առաւել խօսակցութի քնի ընդ պղակիդոսի կմ
եւս_

եւստաթէի Ճոխագոյն աւանդեալ յամ օրինակագրաց՝ ունի զպէսպիսութիւն ոճոյ, թէպէտև ոչ իմաստից, առ զանազանս. զ̃ի և Հ. յետ համառօտելոյ այլով պարզութ̃ե՝ 'ի վճ̃ բերէ. * և այլ բազում բանս խօսեցաւ
• ը̃ նմա տր̃, որ գրեալ կայ 'ի լիակատար պատմութ̃ե
• իւրում||: Օրինակի վճ̃՝ 'ի Ճառընտիրս մեր գրի այսպիսի խրթին ոճով. * 'ի միտ առ Եւստաթիէ, քանզի
• ես եմ, յորժամ զաշխարհս մարդոյն աղօթաւ խմա-
• ցեալ լինէր սահղծանել, և զպղպջակ հաստատուեդ
• մածուցանէր պնդեալ. յորժամ ջուրն ովկիանոսի
• վարսաւոր օդով զօրանայր՝ արեգակնանաւութ̃բ և
• լուսնանաւութ̃բ՝ արջնաբոլորդ լուսնաւորական գի-
• շերոյ. յորժամ ջուր պխսխդոնացեալ սանձս ընդու-
• նէր||. ևն: Ուր երեք ինչ է դիտելի. մի՝ զի այսպիսի ոճ քերթողական և հելլենական ոչ է օտար 'ի սովորութէ դարուց սր̃յն եւստաթէի. և զի նա սովորէր էր 'ի լուր մթին պատգամախօսութեց հեթանոսաց. թերևս զառաջինն այնպիսի մթութ̃բ ը̃ոստուցեր իցէ տեսիլն զմիտս նր̃, մինչև յստակութե Ճշմարտութեան լիցի ը̃ունակ. յոր հայեցեալ այլոց օրինակագրաց առյոյս և առ լատինս՝ պարզաբանեալ են զիրսն, 'ի բաց թօթափելով զմթութի հնախօսութե. ոպ̃ և մեք հարկեցաք առնել:

Երկրորդ՝ զի 'ի կարգի բանիցս այս խաէր կայ 'ի մէջ Ճառընտրաց մերոց. զի Բ. և Ջ. յետ յիշելոյ զադամ դրեն վն̃ անուանս Եւա, թէ * ածուածն թարգմանի ը̃
• ը̃արձակութե լեզուին դամրաց ||. ուր Ա. ոչ արդեօք ընթերցեալ եւա, այլ՝ եհովա, որ է րենական անուն ա̃յ առ եբրայեցիս, գրէ՝ թէ ած̃ * աւածուածն ( կմ̃ ածուածն ) թարգմանի ը̃ ընդարձակութե լեզուին դամրաց||: Արդ թէպէտև յերկաքանչիւր ընթերցուածս այլևայլ է իմաստ, և սակայն մի և նոյն է ենթադրութիւն, ոպ̃ թէ եւստաթէոս լսէ յադգէ դամրաց. ուր ոչ ոք 'ի վկայագրաց յիշէ զազդ նր̃ և զգաւառ, այլ միայն զօրավար հռովմայեցւոց ասեն. մինչ զի թէև քաղաքացի հռովմայ կոչեսցի կմ̃ հռովմայեցի, մարթ է իմանալ ոպ̃ զը̃բն պօղոս. որ էր տարսոնացի, բայց աղատութ̃բ հռովմայեցի. ոպ̃ և հաղարապետն՝ որ խօսէր ը̃ նմա, ասէր՝ թէ բազում գլխոց զլինելորութիս զայս հռովմայեցւոց ստացայ:

Երրորդ՝ զի 'ի սկզբան տեսլեանս և մթին խօսակցութեանս՝ Ճառընտիրն մեր Ա, ոչ խօսի յերրորդ դէմս պատ-

պատմագրի՝ ոչ այլ քն, այլ՝ յառաջին դէմս ՚ի բերանոյ
սրբոյն այսպէս. * Յայնժամ ես Եւստաթէոս տեսանէի
« զտպաւորութն խաչին ՚ի դէմս մարդոյ եղեալ. և նոյն
« ինքն դէմքն բարբառէին առ իս.... Եւ իմ՚ի դող-
« ման եղե՜ւ || ևն. որ է նշանակ առաւել հնութեան օրի-
նակիս քան զայլսն ամ:

(6) Զյոհան երեցն՝ որ մկրտեաց զԵւստաթեանս, պար-
զապէս քահանայ քրիստոնէից կոչէն հասարակօրէն Ճա-
ռընտիրք և այլ օրինակք վկայաբանութեան. միայն ՚ի
լատին օրինակի միում կոչի քահանայապետ քրիստո-
նէից. և ՚ի Հ. եպիս: Եւ այն ևս՝ թէ ՚ի հռովմ լեալ
իցէ, կամ յայլում քաղաքի՝ ուր դադարեալ իցէ Եւստա-
թէոս իբրև զօրավար հանդերձ ընտանեօքն, անորոշ-
մնայ առաւել ՚ի Ճառընտիրս մեր. իսկ այլք թուին
ենթադրել ՚ի հռովմ քաղաքի: Մթին են և յետագայ
անուանք երկրին բարբարոսաց, և քաղաքին բատխոնի,
և գետոյն լիդասպայ կամ դասպայ, և եղիմացւոց. միայն
դիմելն սրբոյն յեգիպտոս՝ միօրինակ յիշի առ ամենեսին.
բայց ընթացք պատմութեն ցուցանեն, թէ նաւավարն
ել յափրիկէ, և անդ եղեն ամ յետագայ անցք:

(7) Հ. դնէ, թէ Եւստաթէոս ՚ի դառնալն յաղթութ
՚ի պատերազմէ՝ եգիտ զորդիս իւր և զկինն. ուր Ճա-
ռընտիրք և ամ վկայաբանք դնեն զայն նախ քան զեր-
թալն ՚ի պատերազմ. ընդ որոյ և մեր հայեցեալ ՚ի համ-
գամանս պատմութեն՝ եդաք ՚ի խաղալն ՚ի պատերազմ:

(8) Ող Ճ. Ա. նոյնպէս և Հ., համաձայն յունականին
սոսկապէս գրեն, թէ առիւծքն ոչ մերձեցան ՚ի սրբսն.
զոր ընդարձակէ ճարտասանական ընդլայնմամբ մետափրաս-
տէս օրինակ զայս. * Իսօծ զնահատակսն յասպարէզ, և
« զամենհի առիւծս ՚ի վր արձակեաց նց... իսկ գա-
« զանքն իբրև մերձեցան առ սրբսն, ոչ ևս էին գա-
« զանք, այլ ճշմարտութեն վկայք տիրապէս մեծ, ոչ
« բանիւք խոստովանելով զայն, այլ՝ արդեամբք. քան-
« զի անդէն նմանեալ այնոցիկ՝ ոյք երկիր պագանեն,
« և զգլուխս խոնարհեալ սրբոցն, և ոչ թէ յայտնապս
« ցուցանելով խնդրել զներումն, զի ոչ ինքնին, այլ
« յայլոց ակամայ ածեալ եղեն, ապա և զմարմինս նց
« լիզեալ մեծաւ յարգանօք, յետս դարձան հեզութ...
« և այսպէս գազանքն յայտնապէս այնպէս վարեցան,
« ոչ այն թէ բանաւորք լինէին ||: Ուր յայտ է թէ ոչ
այնչափ աւելորդաբանութի տեսանի, որչափ ճոխաբա-
նութի, որով և զբովանդակ պատմութին զգալի օրի-

նա

նակաւ յանդիման կացուցանէ մետափրաստես ։ Եւ սա-
կայն ոչ գիտեմ, որդեակ՛ ի սմանէ իմացուածոյ այսպիսի
բանից, եթէ 'ի չարաչար յաւելուածոյ սորբոց ոմանց՝
պատուհասաւ է 'ի Ծ. Բ, և Ջ. այս հատուած ան-
հեթեթ. * Եւ եկեալ առեծուն՝ երկիրպագանէր նմ,
• և ասէր մարդկօրէն ձայնիւ. աղաչեմ զձեզ՝ որ առ-
• ժանիդ էք արքայութեանն այ, մի ինչ զայրանայք.
• զի ակամայ հասի առ ձեզ. և զայս ասացեալ՝ ել
• յասպարիսէն ||: Տեսանես, թէ որպէս տխմար օրի-
նակադիրք խանգարեն զստոյգ օրինակս պատմութեց.
և նովին ստուերածս 'ի վր ածեն աչաց այնոցիկ, որք
ոչն ակնարկեն 'ի լաւ օրինակս ։ Նոյնպիսի տխմարա-
բանութբ պատուհասաւ է 'ի նոյն Բ. և Ջ. Ճառըն-
տիրս վն ագապիոսի և թէոփիստոսի, թէ յորժամ
գտան, * էին զանազան գիրք իբրև զճառագայթս ա-
րեգական ||. որ է տարապայման չափազանցութի ։
(9) Բայց 'ի զանազան եկեղեցեաց և 'ի վանորէից, որք
գտանին յարեւելս և յարեւմուտս յանուն սբյն եւստա-
թէոսի կամ եւստաթէոսի, ( որոյ կայ և անուանակից
'ի կարգէ եօթանասուն և երկու աշակերտաց, և յայլ
դասուց սբց,) լսեմք թէ 'ի կողմանս ակնայ կայ վանք
սբյն ապլակիդոսի, որ այն ինքն է պլակիդոս՝ եւստա-
թէոս կոչեցեալ. և թէ ակնեցիք առանձին ջերմեռան-
դութբ պաշտեն զսբն ապլակիդոս. որոյ զօրաւոր բա-
րեխօսութի հասանէ ամ բարեպաշտից ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբուհւոյն Երմոնեայ կուսի և մարգարէի ։

Հ. սեպտ. 6 ։ Յ. սեպտ. 4 ։ (Լ. յունիս. 6 ։)
Ճառընտ. Ա. ՃԷ = ՃԸ ։ Բոլլանդեանն տեղեկագիրք
'ի Է հատ. սեպտ. երես. 181 = 186 ։ [1]

ՃՇՄԱՐԻՏ ԱՂԱԽԻՆ և հարսն քՙի Երմոնէ կմ երմոնիա, որ և Հերմիոնէ, տոհմ էր առաքելական ըստ մարմնոյ. որ և հոգւով ըստ նմին օրինակի առաքելաշնորհ ճոխութբ վայելչանայր գեղեցկապս. քանզի դուստր էր սա նորին Փիլիպպոսի առաքելոյն, ոչ մեծին՝ որ յերկոտասանից, (որպ ոմանց թուեցաւ,) այլ փոքուն՝ որ էր մի յեօթանց անտի սարկաւագաց, ընկեր նորին ստեփաննոսի նախավկային, և աւետարանիչ կարգացեալ 'ի նորին ղուկայ աւետարանչէ 'ի գործս առաքելոց. ուր յիշէ զչորեսին դստերս նորա 'ի կեսարիա փիլիպպեայ կուսանս և մարգարէս. և ահա մի էր 'ի նոցանէ առաքելուհին Երմոնիա՝ գերազանցեալ քան զայլս 'ի քերց իւրոց 'ի հանդէս առաքինութե և 'ի զանազան շնորհս հոգւոյն ։ [2]

Արդ

Արդ սա յետ կատարման այլոց առաքելոց , և աշակերտաց բազմաց՝ իղձ լինելով կալ առ ոտս տ̅ն յովհաննու աւետարանչի , որ յերկարեաց 'ի կեանս , էառ ընդ իւր զքոյր իւր զեւտիքիա , և ճանապարհ արար 'ի պաղեստինոյ յեփեսոս ասխացուոց ը̅ փափաքանաց՝ զոր ունէր առ տ̅ն յովհաննէս . և քանզի նախ քան զժամանելն երմոնեայ անդր՝ վերափոխեալ էր տ̅րյ աւետարանչին առ իւր սիրելին ք̅ս (3) , տրտմեցաւ . զի ոչ ետես մարմնով՝ որում ցանկացեալն էր հոգւով : Բայց ը̅ր ետ նմա զայլ մխիթարութիւն 'ի սփոփանս տրտմութե̅ն . քանզի պետրոնիոս անուն ոմն ընկալեալ զձեռնադրութի̅ յերանելւոյ առաքելոյն պօղոսէ՝ հովուէր յեկեղեցւոջն եփեսացւոց , այր լի իմաստութ̅բ և առաքինի գործովք . որ ոչ թէ բանիւք միայն ուսուցանէր , այլև առաքինի վարուքն և՛ս առաւել զբանն վ̅պուե̅ պայծառագոյնս երևեցուցանէր : Սա զպատուական և զիմաստուն կուսանսն առ իւր ընկալեալ՝ գործակից ունէր զնո̅ յաւետարանն . և 'ի միասին զբանն կենաց պատմէին : (4)

Սա էր երմոնիա 'ի յարուե́ստս բժշկութե̅ ը̅ մարմնոյ հմուտ և ճարտար . բայց բժշկութիւք հիւանդացն 'ի շնորհացն ա̅յ մանաւանդ բղխէին 'ի ձեռն կոչման անուա́նն ք̅սի 'ի վ̅ր ախտացելոց , քան թէ յարուե́ստոյ բժշկութե̅ն . քանզի զզանազան ախտսն՝ որ մարմնական արուե́ստի անհնարին երևի , ա̅ծային շնորհքն աղօթիւք կուսին փարատէր , և բժշ-

բժշկու՟ն արագ պարգեւէր . նաեւ չէր նուազ հոգւոց բժշկութ՟ին քան զմարմնոցն , զոր կատարէր . քանզի զկռոցն մոլորութ՟ն 'ի բաց տանէր , եւ զբարեպաշտութ՟ն հաւատոն՝ որ 'ի ք՟ս՝ մերձ կացուցանէր , դարձուցանելով զբազումս 'ի տ՟ր :

Յայնմ ժամանակի՝ յամի տ՟ն իբր 114 , տրայիանոս թագաւորն հռովմայեցւոց զինեալ ընդդէմ պարսից 'ի պատերազմ , եւ եկեալ յասիա՝ շարժէր խռովութ՟ք մեծաւ զ՟ն ա՟մ . եւ մոլեալ կռապաշտութ՟ք՝ հալածէր զազգ քրիստոնէից : Լուե՟լ եւ զհամբաւ ս՟բյ կուսին երմոնեսայ , քանզի ը՟ ա՟մ ասիա տարածեալ էր վդ՟պութ՟ն ն՟ր , վաղվաղակի հրաման ետ տասն երիտասարդի , զի փութով առ նա ածցեն զհռչակաւորն երմոնիա : Իսկ որք ճանաչէինն զնա եւ պատուէին վ՟ս բարւոք կարգի քրիստոնէութ՟ն , ազդ առնէին նմա զգուշանալ ինքեան վ՟ս չար խնդրողացն :

Եւ զինուորքն իբրեւ շրջեցան փոքր մի ընդ առանձնակին ասիա , եւ ոչ գտին , անյոյսք եղեալ՝ անգործ համարեցան զճանապարհն իւրեանց : Ապա երթեալ 'ի գիւղ մի՝ որ էր մերձ 'ի քաղաքն եփեսոս , անդ գտին զերմոնիա եւ զեւտիքիա , ուր ստէպ ընթեռնուին ն՟ք զա՟ծաշունչ գիրս , եւ քննէին ը՟ ս՟բյն պետրոնիոսի . եւ տեսեալ զինուորացն նախ զերմոնիա՝ ոչ ծանեան զնա , զի ոչ ունէր զտեսիլ զգեստուն ը՟ս հռչակաւոր անուանն . այլ ցածութ՟ք զարդարեալ էր գձուձ զգեստու՟ ը՟ս պատշաճի քրիստոնէական կարգի : Հար-

ցանէին ցնա, և ասէին, Թէ ո՞վ իցէ աստ պատմօղ աւետարանին ք͞ի, որոյ անունն է Երմոնիա. որ և զախտս հիւանդաց ճարտարա͞պս բժշկէ։ Իսկ նա յառաջագոյն ոչ յայտնեաց զինքն, այլ պատուասիրաբար խօսէր ը͞ նոսա. եկա՛յք ասէ՝ սակաւիկ մի հանգերուք. և եդից առաջի ձեր սեղան, և կերա՛յք. և ապա ցուցից ձեզ՝ զոր խնդրէքդ։ Եւ յորժամ զօտարսիրութիւն ելից զպատուիրանն՝ լորտիկս ազնիւս կազմելով ն͞ց, այնուհետև յայտնէր զինքն՝ յայտնապէս խոստովանելով, Թէ ես եմ՝ զոր խնդրէքն։ Իսկ ն͞ք 'ի տրտմութե͞ էղեալ՝ ո՛չ գիտէին, Թէ զի՛նչ գործիցեն. վ͞ս զի պատկառէին 'ի սիրոյ ն͞ր. և դարձեալ երկնչէին 'ի դժնդակ կամաց և 'ի հրամանէ Թագաւորին։ Իսկ կոյսն քանզի ջեռեալ էր 'ի սէրն ք͞ի, և ցանկայր մեռանել վ͞ս անուան նորա, աղաչէր զզինուորսն, զի կատարեսցեն զհրամայեալսն, և տարցեն զնա առ Թագաւորն. և այնպէս ինքնակամ յօժարութ͞բ հետևեալ զկնի զինուորացն՝ եկն առ Թագաւորն։

Իսկ Տրայիանոս իբրև ետես զնա, նախ խորամանկութ͞բ խօսէր ը͞ նմա, և բանս մարդասիրականս առաջի դնելով՝ ինչս բազումս և պատիւ և փառս մեծամեծս խոստանայր. միայն եթէ հաւանեսցի կամաց իւրոց, և 'ի բաց կասցէ 'ի ք͞ե։ Իսկ գեղեցիկ հարսն ք͞ի զա͞մ խոստմունս Թագաւորին յոչինչ գրէր, այլ միայն բարձր ձայնիւ 'ի լուր ա͞մ ամբոխին գոչէր ասելով. ես քրիստոնեայ

եմ, և զքն պաշտեմ. և վն նր ցանկամ մե-
ռանիլ. վն այնորիկ երագ և ստուէր համա-
րիմ զիմ փառս և զպատիւս քո՝ զոր ինձ խոս-
տանաս ։ Յայնժամ բռնաւորն զայրացեալ
ը համարձակութի կուսին՝ հրամայեաց չա-
րաչար ապտակել զնա. իսկ երանելին Երմո-
նիա զուարթութբ պխնի առնէր, թէ ոչինչ
կարէ մեկնել զիս ՚ի սիրոյն քսի ։
Յայնմ վայրի հայեցեալ ետես սրբուհին
զՏր ՚ի կերպարանս պետրոնիոսի քահանայ-
ապետին, որ քաջալերէր զնա առանց ահի
մատչել ՚ի չարչարանս. և պատմէր զոր ինչ
լինելոցն էր. զի զազատիլն նորա ՚ի տանջա-
նացն, և զյաղթութիւն տրայիանոսի՝ զոր գոր-
ծելոց էր ընդդէմ պարսից ։ Եւ տրայիանոս
յորժամ ետես զերանելի կոյսն, զի ոչ պատ-
րեցաւ ՚ի խոստմանցն, և արհամարհեաց ըզ-
տանջանսն, սքանչացաւ ը անդրդուէլի մտա
նր. և լուեալ ՚ի նմանէ բազում բանս իմաս-
տութե՝ առաւել քան զոր կարծէր և գիտէր
՚ի համբաւոյ, հաճեցաւ յոյժ ը նա. մինչ զի
առաւել ՚ի շնորհս երմոնեայ անկաւ ՚ի սիրտ
նր գութ ՚ի վր քրիստոնէից փոքր մի. և հրա-
մայէր այնուհետև ոչ ևս հալածել զքրիս-
տոնեայսն, բայց եթէ գտցի ոք յանցաւոր
յիրս արքունի, կմ ընդդէմ կացցէ ասէ տրու-
թեա մերում ։

Եւ ոչ այսչափ միայն, այլ և կարևոր համա-
րելով ունել առ իւր զայնպիսի կին հանճա-
րեղ՝ սկսաւ յորդոր լինել սրբուհւոյն եր-
մոնեայ, զի յօժարեսցի գալ զկնի իւր ՚ի
պարս.

պարտս ․ և խոստանայր մայրագիր առնել զնա, եթէ հաւանեցուսցէ իմաստութ՟բ իւրով 'ի հնազանդութ՟ն ինքնակալութեն ն՟ր զազգսն, որոց ը՟դէմ զինեալն էր ։ Իսկ նա վկայն ք՟ի պնդեալ ասէ ․ չէ ինչ օգուտ քեզ ո՛վ թագաւոր ճանապարհակցութ՟իս իմ, եթէ ոչ ը՟ունիցիս զբարեպաշտութ՟ն բանս իմ, որ յաղագս ճանապարհին հաւատոցն է ․ բայց զայս ասեմ քեզ, եթէ ճշմարիտն ա՟ծ արարիչն արարածոց՝ զոր եսն պաշտեմ, յաղագս անոխակալ մարդասիրութ՟ն իւրոյ՝ նա պատերազմի զպատերազմ քո, և վանէ զթշնամիս քո առաջի երեսաց քոց ․ և դարձուցանէ զքեզ փառօք և յաղթութ՟բ ․ զի 'ի նմ՟անէ է յաջողութ՟ի և յաղթութ՟ի ։

Յայնժամ հրամայեաց տրայիանոս հանդերձ մեծագինս պարգևել երմինեայ փոխանակ յաղթութ՟են, զոր մարգարէացաւ նմա երանելիկոյսն ․ բայց նա ոչ էառ յանձն, այլ բաւական է ինձ ասէ՝ զոր ունիմ, հանդերձ մեծագունիւն ․ քանզի զք՟ս զգեցեալ եմ ․ վ՟ս այնորիկ չկարօտանամ զարդու ապականացու հանդերձից ։ Եւ այսպէս արձակեցաւ երմինիա 'ի տեղի իւր ․ ուր ասպնջական լինէր հաւատացելոց, և սփոփէր զամենեսին և դարմանէր ը՟ս հոգւոյ և ը՟ս մարմնոյ ․ և էր տեսանել անդադար աներկիւղ համարձակութ՟բ պաշտել ամենեցուն զտ՟ր և փառաւորել մինչև 'ի վախճան տրայիանոսի ։

Իսկ թագաւորն գնացեալ 'ի պատերազմ՝

ը՟ մարգարէութե՟ նոյն յաղթեաց պարսից և մարաց , ամ՟ յետոյ և գլթաց . և ուրախութե՟ և յաղթութե՟ մեծաւ դարձ արարեալ՝ մարդասիրագոյն զինքն առ քրիստոնեայսն ցուցանէր . մինչև մեռաւ յետ քանի մի ամաց՝ մինչդեռ էր 'ի սեղինուս կիլիկեցւոց յամի տն՟ 117 ։ Սա թագաւորեաց փոխանակ նր՟ ադրիանոս 'ի կողմանս անտիոքայ ասորւոց . և 'ի նմին իսկ ամի՝ մինչև էր դարձեալ 'ի հռոմ , յորոյ հալածանս 'ի վր՟ եկեղեցւոյն քն՟ի . քանզի ետ հրաման ամ՟ ուրեք 'ի վր՟ քրիստոնէից՝ զոհել կամ մեռանել ։ Սա եկեալ յեփեսոս՝ իբրև լուաւ վն՟ սրբուհւոյն երմոնեայ , առաքեաց զինուորս՝ կոչել զնա քաղցրութբ՟ . և թէ ոչ հնազանդեսցի , բռնի ածել զնա առաջի իւր ։

Իսկ զինուորացն բազում հոգաբարձութբ՟ խնդիր արարեալ՝ ոչ գտին . ապա ժամանեցին 'ի գեօղ մի՝ որ մերձ էր 'ի քաղաքն եփեսոս իբրև տասն ասպարիսաւ . և տեսանեն զերանելին՝ զի մտանէր անդ քարոզել զբանն կենաց . և քանզի ոչ ծանեան զնա , ողջոյն տուեալ նմա հարցանէին , թէ իցէ՞ անդ աղջիկ կատարեալ հաստկաւ երմոնիա անուն՝ հաւատովք քրիստոնեայ , որ և պէսպէս հիւանդութեց բժշկութիս առնէ ։ Իսկ նա ը՟ առաջնոյ օրինակին տարեալ զնս՟ առ իւր , և տուեալ ջուր 'ի լուացումն ոտից նոցա՝ եդ առաջի նց՟ սեղան , և ուրախ արար զնս՟ զանազան խորտկօք ։

Յետ այսորիկ ծանուցանէր զանձն , եթէ

նա

նա ինքն է՝ զոր խնդրեմն . և զինուորացն
լուեալ զայս՝ տրտմեցան յոյժ . և ոչ կամէին
կատարել զհրամանս թագաւորին . վն̅ զի
պատկառէին ՚ի յօտարսիրութենէն՝ զոր եցոյց
նմ̅ ։ Իսկ երանելին բռնադատէր զնմ̅՝ գնալ
ը̅ նմ̅ , երկուցեալ՝ մի՛ գուցէ չար ինչ անցա-
նիցէ ը̅ նմ̅ . մանաւանդ թէ ցանկայր իսկ ,
զի յաղագս ք̅ի արբցէ զբաժակ մարտիրո-
սական արեանն ։ Եւ իբրև հաւանեցոյց զնմ̅,
առեալ տարան զնա և կացուցին առաջի թա-
գաւորին ։

Իբրև ետես զնա կայսրն Ադրիանոս , ասէ
ցնա . ասա՛ նախ աղջի՛կ դու պառաւեալ
զանուն քո և զբախտ և զթի՛ւ ամաց քոց և
զազգ քո . և եթէ որո՞վ զօրութ̅բ հպարտա-
ցեալ ես , և նախատելով աղարտես և նզովես
զդ̅ս մեր , և զիմ բարեպաշտութիւս թշնա-
մանես և անարգես . և զորս մտանեն և ե-
լանեն ՚ի քաղաքէս՝ հիւրընկալես և հնա-
զանդես , զի յանյաղթելի զ̅դ̅ոցն ՚ի բաց կաց-
ցեն . և ՚ի խաչելոյն պաշտօն զամենեսեան
յորդորես ։

Իսկ երանելի վկայուհին ք̅ի պ̅նի ետ առ-
նա , և ասէ . եթէ զանուն իմ խնդրես ո՛վ
թագաւոր , երմո՛նիա կոչիմ . և քրիստոնեա-
կան կրօնիւք սնեալ՝ բժշկեմ զախտս և զհի-
ւանդութիւս շնորհօքն ք̅ի . և թի՛ւ ամաց
իմոց կատարեալ է , զոր ք̅ն իմ գիտէ . և
զօրութ̅բ ք̅ի եմ զօրացեալ , որ է ա̅ծ ճշմա-
րիտ՝ արարիչ երկնի և երկրի և որ ՚ի նմ̅ ա-
րարածք են . և ո՛չ եթէ զդ̅ս իմ̅ նզովեմ,

այլ՝ զդիմաց տկարութ՟ին յանդիմանեմ. քան-
զի չե՟ն ա՟ծք, այլ՝ ձեռագործք մարդկան և
դևք. և զմարդիկ՝ զորս ՚ի նշ՟ մոլորութե՟ն
խաբեցէն, ազատեմ, և ճշմարտին ա՟յ մերձ
կացուցանեմ: Իսկ ազգ իմ և հայրենիք և
փառք և մեծութի՟ք ք՟ս՝ է, որում և ՚ի մանկու-
թէ իմմէ նմա ընծայեցայ:

Երբև լուաւ բռնաւորն զայս ա՟մ յերանե-
ւոյն, լի եղև բարկութ՟բ, վ՟ս զի կարեւէր
խոցեցաւ ը՟ ուղիղ համառօտեալ պ՟խնիս նր՟.
և հրամայեաց զա՟ծաբան բերան նր՟ հարկա-
նել անխնայ: Իսկ նա առ ոչինչ համարեցաւ
զապտակուա՟ծ ծնօտիցն և զջախջախուա՟ծ բե-
րանոյն, այլ ևս առաւել պատրաստագոյն
էր ՚ի փառաբանութե՟ն ա՟յ: Յայնժամ ետես
թագաւորն, եթէ առ ոչինչ գրեաց զտան-
ջանսն, խորամանկութ՟բ իւրով ՚ի միւս կողմն
շրջեալ զբանն՝ ինչս բազումս և հանդերձս
մեծագինս առաջի դնէր. և հանդերձ այսու
ևս տիկին առնել զնա հռովմայեցւոց տէրու-
թե՟ն խոստանայր՝ իբրև կին իմաստուն և
կատարեալ. միայն թէ երկիրպագանիցէ
ա՟ծոցն:

Իսկ տ՟րն այսպէս արարեալ զամենայն առաջի
եդեալսն նմա ՚ի թագաւորէն՝ զայս պ՟խնի
առնէր. յայտնի լիցի քեզ ո՛վ թագաւոր,
թէ՝ և ոչ բոլոր իսկ ա՟մ թգ՟րութի՟ք տիեզե-
րաց, այլ և ոչ ազգի ազգի տանջանք կարեն
մեկնել զիս ՚ի սիրոյն ք՟սի. այլ եթէ կամիս
հաճել զմիտս իմ, ընկա՛լ զիս խորհրդակից
քեզ. որ ոչ միայն զայս թգ՟րութիս հաստա-
տուն

տուն առնեմ քեզ, այլ և զերկնաւոր մեծու-
թիւն աւանդեմ քեզ. միայն ծանի՛ր զճշմա-
րիտն ա՟ծ՝ որ ետ քեզ զթ՟գրութիւդ, և 'ի
բաց լեր 'ի սնոտի կռոցդ :

Յայնժամ Բռնաւորն իբրև գիտաց՝ թէ ոչ-
ինչ ազդեն 'ի նա խորամանկութիւնք իւր, ետ
հրաման լուծանել զկօշիկս նր՟, և սաստիկ
հարկանել զներբանս ոտից նր՟. և այնչափ
հարին, մինչև առուք արեանց անտի բղ-
խէին (5) : Եւ ապա ետ հրաման աւազան
պղնձի առնել, և լնուլ զայն հալեալ կա-
պարով. և նաւթ և ծծումբ արկանել 'ի
ներքս, զի առաւել ևս բորբոքեսցի. և հրա-
մայեաց արկանել 'ի նա զերանելի վկայն
ք՟ի : Եւ ն՟ք կոյսն կնքեալ զինքն նշանաւ
ն՟ք խաչի՛ն, ուրախութ՟ մեծաւ օրհնելով
զա՟ծ՝ եմուտ յաւազանն բորբոքեալ հրոյն.
ուր և սքանչելիք իմն եղեն. քանզի ո՛չ իբրև
'ի հուր, այլ ո՟չ յառագաստի այնպէս պա-
րէր և օրհնէր զա՟ծ : Իսկ Բռնաւորն իբրև
ետես՝ եթէ ոչ այրեաց հուրն զերանելին,
ևս առաւել հրամայէր բորբոքել, կարծե-
լով զովացումն ինչ ունել աւազանին :

Տեսեալ ն՟քյն զկուրութի հոգւոյ նր՟ և զխե-
լագարութի միտացն առ սքանչելիս ամենա-
զօրն ա՟յ, գոչէր առ նա ասելով. ո՛վ հպարտ
և ամբարհաւաճ թ՟գւոր, զի՞ այդքան դիւա-
կան մոլորութ՟ արբեալ ես, և ոչ զգաս ըզ-
զօրութի ամենազօրին ա՟յ. որ զհուրս զայս՝
զոր տեսանես, ցօղ ինձ առնէ : Իսկ Թագա-
ւորն ո՛չ հաւատայր տեսութեն, մինչև կա-

մեզաւ և ձեւօքն խակ իմանալ զճշմարիտն. միոյ եկեալ մերձ յաւազանն՝ զաջոյ ձեռնն կամէր 'ի ներքս արկանել. և մինչև կարի քաջ մօտեալ էր, առժամայն լուծաւ ձեռն նորա 'ի հրոյ անտի. և սկսաւ աղաչել զերանելին, զի արտաքս ելեալ բժշկեսցէ զինքն, խոստանալով հաւատալ յԱստուած նորա: Իսկ սուրբն թէպէտև գիտէր զանդառնալի միտս նորա, սակայն հայեցեալ 'ի մարդասիրութիւն Քրիստոսի՝ կատարէր զխնդիրս նորա:

Իսկ թագաւորն թէպէտև առ ժամն քաղցրութեամբ լսէր կուսին, բայց 'ի նոյն ամպարշտութեան իւր կացեալ՝ յետ սակաւ աւուրց հրամայեաց վերստին ածել զերանելին զառաջեաւ, և ստիպէր զոհել կռոցն: Ասէ երանելին երմոնիա՝ այպանելով զբազմաստուածութիւն նորա. քանի՞ աստուածս ունիս, և ո՞ւմ 'ի նոցանէ հրամայես զոհել: Իսկ նա կարծէր՝ եթէ ստուգապէս վասն զոհելոյ բազմութեան աստուածոյն հարցանէ. և սկսաւ թուել զանուանս ամենայն դիւաբնակ կռոցն. ասէ. Արամազդ, և Կռոնոս, Աթինա, Արէս, Մինա (կամ Լուսին), Ապողոն, Պոսիդոն, Արտեմիս, Ափրոդիտէ. և այլ ևս բազում անուանս հիւսէր դիւացն՝ յիմարաբանութեամբ:

Իսկ երմոնիա լցեալն աստուածային իմաստութեամբ ասէ. ո՞վ որքան ամբոխիք ելից զսիրտս ձեր սատանայ. զի թողեալ զԱստուած ճշմարիտ՝ զմինն և զմիայն հզօրն, բազմութեան դիւաց երկիր պագանէք. արդ ասա՛, եթէ որո՞ց խնդրուածոց հասեր յաղագս երկրպագութեան բազմաստուածոց

ա͞ծոցդ քոյ · այլ գիտեմ, եթէ ոչ ունիս ասել ինչ · վ՞ն զի անշունչք են, որ ոչ ան-ձանց օգնել կարեն, և ոչ այլոց : Իսկ ես մի ա͞ծ պաշտեմ յերիս անձնաւորութիւնս միով բնութբ̃ և ա͞ծութբ̃ և զօրութբ̃ · և զոր ինչ խնդրեմ, վաղվաղակի կատարէ · ո՞չ և դու ինքնին քաջ իմացար 'ի փորձոյ անտի զզօրու-թ͞ի ամենազօրին :

Յայնժամ ևս առաւել բորբոքեցան սրտմտութ͞բ թագաւորն՝ հրաման ետ տապակ հրացուցանել, և անդ արկանել զերանելին : Իսկ սրբուհին իբրև ետես զտապակն 'ի հրոյ կերպարանս եղեալ, ամբարձ զաչս իւր 'ի յերկինս, և կարդայր յօգնականութ͞ի զամենակարօղ զօրութիւն · զի ցուցցէ զսքանչելիս իւր, ո՞չ և յառաջին նուագին : Եւ կնքեաց զա͞մ զգայարանսն նշանաւ ս͞բ խաչին՝ տարածեաց զինքն 'ի վ͞ր հրացեալ տապակին · և վաղվաղակի տապակն զովացաւ · և բոց հրոյն՝ որ 'ի ներքոյ ն͞ր էր, այսր անդր ցոլացեալ՝ զբազումս 'ի շրջակայ հեթանոսաց կիզեալ ապականէր · ուստի և բռնաւորն զարհուրեալ 'ի սքանչելեացն՝ սակաւ մի զիջաւ 'ի հպարտութ͞էն · և հրամայեաց հանել զն͞ա 'ի տապակէն, և պահել 'ի դիպահոջ :

Բայց զի ոչ կամեցաւ ը͞ունել յինքն զլոյս ա͞ծգիտութ͞են, յետ սակաւ ժամանակաց դարձեալ հրաման ետ ածել զերանելի կոյսն առաջի իւր՝ յապարանսն, ուր հաստատեալ կային բազմութիւնք դիւական պատկերաց · և տես ցա͞բն · ահա ա͞ծք մարդասէրք՝ զոր

եսն

եմն պաշտեմ, ՚տես թէ որչափ բարեմտութիւնս ցուցանեն առ քեզ. որոց դու ապերախտ գտանիս, և ոչ զոհես նմա։ Ո՜վ երանելին. զխարդ զոհեցից անշունչ պատկերացդ, որք ոչինչ տան պատասխանի՝ որոց յաղօթս կան առաջի դոցա։ Նաև կացեալ առընթեր պատկերացն երանելի վկայն կարդայր առ Ած, այսպէս ասելով. Տր Ած զօրութեց՝ որ յամ դարս ցուցանես զսքանչելիս քո. դու ՚ի քաղանէ զամբարտաւանութի մարդկանն խափանեցեր բաժանմամբ լեզուացն, և զբարձրութե խորհուրդս նը՝ որ յաշտարակին, քակտեցեր. դու զամբարտաւանն զփարաւոն՝ որ ոչ ծանեաւ զզօրութի սքանչելեաց քոց, ընկղմեցեր, և զժողովուրդն քո ազատեցեր ՚ի նմանէ. դու ՚ի ձեռն յեսուայ ընտրելոյն քո զպարիսպն երիքովի իբրև զջուր հեղեր ՚ի ձայն յոբելեան փողոյն, և զժողովուրդն քո առանց զինական պատերազմի ՚ի ներքս ածեր. դու նոյն Տր և այժմ ցոյց զզօրութի Ածութեդ քո կործանմամբ կռոցս այսոցիկ. զի ծանիցեն ամենեքեան, եթէ դու միայն ես Ած, և չիք այլ ոք։

Նաև մինչդեռ աղօթքն ՚ի շրթանսն էին, յանկարծակի անկեալ կուռքն առհասարակ կործանեցան, և եղեն իբրև զփոշի. և սբ վկայն գոհանայր զԱյ՝ որ այնպէս սքանչելագործէ առ ծառայս իւր։ Ապա դարձաւ առ բռնաւորն, և ասէ. տուր ձեռն Ածոցդ քո, և կանգնեա զդոսա. քանզի ահաւասիկ անձայն եղեն, և հեղեալ մանրեցան առաջի քո։

քո ։ Իսկ Թագաւորն մթացեալ ոգւով ՚ի լուսոյ ա՟ծեղէն սքանչելեացն՝ ոչ էառ ՚ի միտ զմեծամեծսն ա՟յ․ այլ վաղվաղակի ետ վճիռ ՚ի վ՟ր երմոնեայ՝ սրով սպանանել, հեգնելով այսպէս․ Թերեւս արդեօք ասէ և ՚ի սրոյ կարիցէ կախարդութ՟բ ապրել․ և ետ զնա ՚ի ձեռս երկուց քաջ զինուորաց, որոց անուանք էին Թէոդուղոս և Թէոտիմոս․ զի հանցեն զնա արտաքոյ քաղաքին եփեսացւոց, և անդ հատցեն զգլուխ ն՟ր ։

Իսկ եղեւ յորժամ Թէոդուղոս վերացուցեալ զսուրն՝ կամէր հարկանել զերանելին, վաղվաղակի չորացաւ ձեռն ն՟ր․ յայնժամ միւս զինուորն Թէոտիմոս՝ որ և տիմոթէոս, ծաղր արարեալ զընկերն՝ յանկարծադէպս ինչ համարելով զվրիպելն ն՟ր, ինքն աճապարեաց վաղվաղակի, և հանեալ զսուրն՝ յարձակեցաւ ՚ի վ՟ր կուսին․ և նոյն ժամայն ցամաքեցաւ և ն՟ր ձեռն հաւասար ընկերին ։

Ապա անկեալ երկոցունց զինուորացն ՚ի վ՟ր երեսաց իւրեանց՝ աղաչէին զս՟բ վկայն, և խնդրէին զթողութ՟ի ՚ի նմանէ և զբժշկու՟ի անդամոց իւրեանց, խոստովան լինելով՝ թէ հաւատամք ՚ի քո ա՟ծն․ զի նա միայն է ճշմարիտ արարիչ երկնի և երկրի ։

Իսկ ս՟բն իբրեւ ստուգեաց զճշմարտութիւն հաւատոց ն՟ց ՚ի նոցին բերանոց, միանգամայն և հոգւոյն ս՟բ ծանեաւ զխորս սրտից նոցա՝ թէ ճշմարիտ են, յաղօթս եկաց առ ա՟ծ․ և ՚ի կնքել զնոսա նշանաւ ս՟բ խաչին՝ առժամայն առողջացան ցամաքեալ ձեռք ն՟ց ։

Աստանօր գեղեցիկ 'ի վր̃ ածէ հին վկայա-գիրն. Արդ զայս այսպէս սքանչելագործէ̃ ա̃յ, զի և նախ քան զհանդերձեալ փառսն՝ աստէն փառաւորեսցէ զս̃բս իւր, և անմար-տընչելի սատանայի մեքենայիցն ցուցցէ. զի թէ նա 'ի ձեռն պատրանաց իւրոց մահկա-նացու արար զմարդն և մեղաց գործօնեայ, ցուցանել կամեցաւ տ̃ր՝ թէ որք արհամար-հեն զնա, աստէն իսկ անմահանան և հա-ւասար հրեշտակաց լինին. և դարձեալ՝ զի յայտնի արասցէ զզօրութի̃ իւր առաջի հպար-տացեալ թագաւորին, որ զսքանչելիսն ա̃յ կախարդութի̃ վարկանէր, տ̃ր զայրել կու-սին 'ի հալեալ կապարոյն և 'ի հրացեալ տա-պակէն, և ասէր՝ եթէ զսուր ոչ կարէ բժշկել. կամեցաւ ցուցանել, թէ՝ և սուր ո՛չ կարէ գործել զինչ, մինչև հրաման առնու յա-րարչէն. միանգամայն զի և զբազմաց փրկ-կութի̃ շահեսցի սքանչելեօքն՝ զոր ցուցանէ առ ս̃բս իւր:

Եւ քանզի 'երանելի կոյսն՝ թէպէտև սքան-չելեացն ա̃յ շտեմարան եղև, և բազմաց՝ հաւատոց պատճառ, սակայն միշտ ըղձայր երթալ առ փեսայն երկնաւոր, յաղօթս ե-կաց առ ա̃ծ՝ այսպէս ասելով. Ով տ̃ր իմ տ̃ր, դու գիտես զխորհուրդս անձին իմոյ, որ միշտ փափագեմ տեսանել զքեզ զճշմարիտ բաղձալիդ իմ և տ̃մ սր̃ց. արդ առաքեա զհ-րեշտակ քո, և ընկալ զոգի իմ խաղաղութ̃բ: Եւ ը̃դ ասելն նր̃ զայս՝ երևեցաւ հրեշտակ ա̃յ 'ի կերպարանս լուսոյ. և նոյնժամայն ա-

ւան-

ւանդեաց կոյսն զմաքուր հոգին 'ի ձեռս Ա՟յ , ը՟ գրեցելումն' թէ հոգիք արդարոց 'ի ձեռին Ա՟յ են ։

Իսկ արք երկիւղածք' որ բնակեալ էին յԵփեսոս , առեալ զվկայական մարմին կուսին Երմոնեայ' տարան 'ի ներքս 'ի քաղաքն ․ և ը՟ արժանի սրբուհե՟ ն՟ր տապանակ արարեալ' եդին յարժանաւոր տեղւոջ ։ Առ նմին եդին և զերկու զինուորսն , որք հաւատացին 'ի կատարման ն՟րյն ․ քանզի և ն՟ք կատարեցան հրամանաւ բռնաւորին' պսակաւորեալք 'ի ք՟ս 'ի ձեռն Ճշմարիտ հաւատոցն (6) ։ Եւ ամ ը՟ ամէ ժողովել՟ ամ քրիստոնեայքն' որք էին յԵփեսոս , զօր յիշատակի սրբուհւոյն Երմոնեայ տօնէին յաւուր կատարման նորին , որ օր չորս էր , կմ՟ վեց սեպտեմբերի ամսոյ , 'ի փառս և 'ի գովութի՟ հօր և որդւոյ և հոգւոյն ս՟րբ' այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Յաւելու ժամագիրք յունաց 'ի դեկտ ․ 2 ․ թէ ս՟ր կոյսն միւռոպէ ( որոյ յիշատակ լինի 'ի յայսմաւուրս մեր ․ մայ ․ 15 ․ և առ այլս ․ յուլ ․ 13 ․ ) յաւուրս դեկոսի կայսեր' ստէպ երթայր 'ի գերեզման սրբուհւոյն Երմոնեայ դստեր ս՟րյն փիլիպպոսի առաքելոյ յԵփեսոս ․ և ընկալեալ 'ի գերեզմանէ ն՟ր ( ո՟չ և յայլոց ս՟րց ) զմիւռոն , ը՟ զիւղ անուշահոտ ծորեալ , աննախանձ բաշխէր ամենեցուն ․ ուստի եղև կոչիլ նմա միւռոպէ ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Բ։

(1) Որ 'ի մեզ գրի երմոն կամ երմոնձն, երմոնիա կամ երմոնձնիա, ըստ յունաց է երմինի, և ըստ լատ՛՛ հերմինէ։ Իսկ քոյր նորա եւտիքիա՝ 'ի յունաց կոչի եւտիքիս կամ եւտիքէ․ որ 'ի Հ․ վրիպակաւ գրի տիխա կամ եւտիխա։ Արդ ոչ 'ի բազմաց սրբոց, նոյնպէս և 'ի սրբոյն երմոնեայ կուսի վկայաբանութիւն գեղեցիկ պարծի ճառընտիրն մեր, որ անթերի մեզ զայն ընծեռեաց՝ բաց 'ի քանի մի բառից և 'ի տողից առ հնութեան մատենին մաշելոց կամ պակասելոց 'ի պատառմանէ․ ուր առ յոյժ չեն կարացեալ գտանել բոլլանդեանք զամբողջ վկայաբանութիւն․ թող զբասիլեան յայսմաւուրսն նոցա և զժամագիրս, յորս կայ քաղուած նոյն պատմութեան․ ոչ և 'ի յայսմաւուրս մեր։ Վասն և յովհաննէս ստիլտինգ բոլլանդեան ոչինչ այլ առնէ յայսմ վայրի, բայց զքաղուածոյն նեթ խօսել․ այլ լաւ ևս առնէր՝ եթէ խապառ լռէր․ զի ոչ եթէ պայծառացուցանէ զմթութիւն համառօտութեան, այլ զպայծառութիւն նսեմացուցանէ, և զճշմարտութիւն խաթարէ։ Եւ զի նա խօսեցաւ առանց հիման, և առանց վկայաբանութեան՝ ըստ կամի, մեզ արժան է հիմամբ խօսել ըստ անաչառ տեսութեան։

Բազմաբանութիւն իմաստնոյն ստիլտինգայ վեր 'ի վայր յեղյեղեալ՝ բովանդակի յայն բան նորա, զի ասէ 'ի նախածանօթս․ համար․ 17․ այսպէս․ * Վկայաբանութիւն
„ սրբոյն երմոնեայ պատմեալ 'ի ժամագիրս յունաց՝ ան-
„ տարակոյս շաղախեալ է առասպելեօք․ թէպէտև կա-
„ րէ լինել, թէ ինչ ինչ ճշմարիտ ըստ սուտ խառն գտա-
„ նիցին։ Աստ անդ, թէ սրբուհին նախ չարչարեալ իցէ
„ առ տրայիանոսիւ․ այլ յետ քանի մի տանջանաց յա-
„ զատութիւն թողեալ իցէ 'ի նմանէ․ ապա միւսանգամ
„ ըմբռնեալ հրամանաւ ադրիանոսի, և բազում տան-
„ ջանօք փորձեալ՝ հուսկ յետոյ վախճանեալ իցէ։ Այլ
„ սակայն այնչափ հրաշալի յաւելուածովք զգեստաւո-
„ րի բովանդակ իւր, մինչ զի ոչ ինչ արժանահաւատ
„ գտանիցին՝ որ ինչ պատմին յաղագս մարտիրոսութեան ||։

Բայց անհագին վճռոյս․ մեծ կրիտիկն (որ այլուր պաշտպան է հրաշից,) առասպելախառն գրէ զայն

պատ-

պատմութին, որ իցէ սքանչելախառն. ոչ արժանահա-
ւատ համարի զմարտիրոսութին, յորում հրաշք լինիցին,
և ուստի՞ ուսաւ իմաստուն այրն զայսպիսի անձեռնար-
կելի ձեռնարկութն ։ Մի՞ արդեօք յետս ընդդէմ ընթեր-
ցեալ իցէ զբանն տն, թէ որք հաւատանն 'ի նա՝ մեծա-
մեծս ևս քան զնոյնս գործեսցեն զգործս, զոր հրէայք
զարմանալին՝ տեսեալ 'ի վ͞ր քնի. զի թէ զայդ ուղիղ
ընթեռնուցք, ոչ կարէ 'ի պատճառս հրաշից 'ի սուտ հա-
նել զպատմութիւս սբց, այլ առաւել ճշմարտել. Թող
այլ պատճառս գտցէ ստիլլինգ ըստ կանոնաց կրիտ-
ութէ. և զի ոչ գտանէ, ապա 'ի զուր բանայ զբերան
իւր ( առանց բաւական տեղեկութէ ) ընդդէմ հրաշալի
պատմութէ սբյն երմննեայ, որ չէ ինչ ընդհատ յայլոց սբց
բազմաց. և կրկին անիրաւի, երբ բացարձակ վերնա-
գիր դնէ ։ * առասպելախառն վկայաբանութն 'ի ժա-
„ մագրոց յունաց ||. և 'ի յառաջ բերելն զայն՝ ոչ եթէ
ցուցանէ զառասպելախառն լինել, այլ՝ ենթադրէ ը
համօրս իւր. և վերստին վճռէ յընթացս բանից ասելով.
* Բայց արդ դիւրաւ ունի տեսանել ընթերցասէրն,
„ թէ բովանդակ այս պատմութն մարտիրոսութէ է այն-
„ պիսի, որ կամ սակաւ և կամ ոչինչ արժանահաւատ
„ գտանի ||։ Ահա երկրորդեալ և երրորդեալ եզրակա-
ցութն առանց և ոչ միոյ ցուցման. վն որոյ և արժա-
նի նմանօրինակ անդրադարձութէ այսպէս. * բայց արդ
„ դիւրաւ ունի տեսանել սրբասէրն և վկայասէրն, թէ
„ բովանդակ այս խօսակցութն ստիլլինգայ է այնպի-
„ սի, որ ոչ եթէ սակաւ, այլ բնաւին ոչ ինչ արժանա-
„ հաւատ գտանի ||։

Միով իմիք կարեմ արդարացուցանել զայրն, զի ոչ
ունելով 'ի ձեռին զաղբիւր պատմութեն զվկայաբա-
նութն մեր՝ կարծեալ է թէ փոքրն պղտոր իցէ. բայց
գիտասցէ՝ զի նոյն է ջուրն, որ 'ի փոքրն և յաղբերն.
և որում անհամ նայ մին, երկնչիմ թէ և միւսն ան-
համ թուեսցի ։ Այլ քաղցրացուցանէ զնա, միանգա-
մայն և լուծանէ զթերահաւատութէ կարծիս ստիլլին-
գայ՝ վայելչական վերջաբանութն վկայաբանիս մերոյ,
թէ զիա՞րդ լինէր սբց հրաշապէս անցանել իբրև ան-
մահ ընդ բազմապատիկ տանջանս զօրութբ ամենազօրին
այ ։ Բայց ըղձացեալ երևի ստիլլինգ փասն այսպիսի
բանից իւրոց, երբ 'ի փառս սբյն գենարիոսի սքանչելա-
գործեցին՝ յերկար ասէ, թէ չէին անհաւատալի սքան-
չելիք՝ որ 'ի փառս սբց ։

(2) Գովեմ զստիլտինգ, զի յերկուց կարծեաց՝ որ առ Նախնիս, թէ որո՞յ փիլիպպոսի իցէ դուստր սբ՟ն երմոնէ, միոյն յերկոտասանից, եթէ միոյն յեօթն սարկաւագաց, միաբանի ընդ մեզ զերկրորդն հաստատել: Բայց զիա՛րդ գովեցից, զի ուր չկայ և տարբերութիւն կարծեաց, ինքն տարակոյս ջանայ հանել, մանաւանդ թէ ’ի սուտ հանել. զի վ՟ն եւսեբիոյ քեան երմոնեայ այսպէս խօսի. * Յաղագս սորին եւսեբիոյ ոչ ինչ աւելի
,, գտանեմ այլուր. և մարթ է տարակուսիլ, արդեօք
,, Ճշմարիտ իցէ անունն, եթէ կեղծեալ ||. չգիտեմ մ սախալէ զնա բերիլ անպատճառ ’ի սուտ կասկածանս. բայց զի երևեսցի իմաստուն, եթէ չիցէ իմաստակութ:

(3) Պարզապէս առանց իրիք յաւելուածոյ՝ վերափոխեալ ասեն զաւետարանիչն յովհաննէս յերկինս՝ ճառընտիրն, և Հ. և Յ. բս: Միայն Յ. ժամագր. յաւելու նոր բացատրութի, * վերափոխեալ էր՝ ոմ՟ ե_
,, նովք և եղիա ||. ուր ասէ ստիլտինգ. * վերափո_
,, խումն այն սբ՟յն յովհաննու չէ՛ հաւանական, թէպէտև
,, երբեմն յոմանց հաստատեալ իցէ: ’ի 26. սեպտ. (’ի
,, նոյն ժամագիրս յունաց) ’ի ներբող սբ՟յն յովհաննու՝
,, մահ նր՟ են հաստատի. բայց հեղինակք ժամագրոց
,, ոչ փոյթ կալեալ յամի զմի և զնոյն կարծիս ունել || :
Քննութիւն ոչ գտեալ որպիսի. զի յայտ է թէ ժամագիրքն ոչ ցուցանէ, թէ առանց մեռանելոյ վերափոխեցաւ յովհաննէս, այլ յետ մեռանելոյն. վ՟յ բաղդատութին առ ենովք և եղիա ոչ է ը՟ ոչ մեռանելոյն, այլ ը՟ վերափոխելոյն մարմնով, թէպէտև յետ մեռանելոյ. որ է հրաշափառագոյն: Զայս ասեմ ոչ ’ի հաստատել զանյայտս, այլ ’ի ցուցանել զանհաստատութի բանից գեմախօսին. տես և ’ի վարս յովհ. աւետ:

(4) Որպէս կամի՝ ընկալցին ոք և զայն երկբանութի ստիլտինգայ * Պետրոնիոս այս աշակերտ պօղոսի անծանօթ
, է մեզ՝ ոչինչ ընհատ յեւսեբիոյ. եթէ ոչ՝ գուցէ իցէ
, պետրոնիոս եպս և վկայ յասիա, զորմէ համառօտիւ
, ճառեցաւ առ մեզ ’ի մարտի. 12. ’ի հերոնիմեան օրի_
, նակաց ||:

(5) Տանջանք կուսին՝ որ վ՟ն հարման բերանոյն, և հարման ներբանից, այլազգ բացատրին ’ի Հ. * հրամայեաց
, հարկանել վարոցով զերեսն սրբուհւոյն, և սուսերաւ
, զանձն ծակոտել ||. և այլազգ ’ի ժմ. Յ. * ’ի բաց
, առեալ զվերարկուն ’ի դմանէ ( ասէ ադրիանոս ),
, հարէք զդա անխնայ՝ ասելով. առ հարցուածս թա_

• դաւորին զգօնութիւն տուր ոխնի • և 'ի հարկանելն
• սաղմոս էր 'ի բերան նր • և 'ի լքանիլ դահճաց՝ հրա-
• մայեաց այլոց զինուորաց՝ 'ի ներբանս ոտից նր ճար-
• մանդս արկանել ||:

(6) Միաձայն է Ծ • գրեն և Հ • և Յ • ժմ • թէ յետ հաւատալոյ երկուց դահճաց՝ երբ կամէին այլք սպանանել զկոյսն, նա խաղաղութիւն աւանդեաց զհոգին • բայց տարաձայնին 'ի մէնջ, ուր համարին՝ թէ և երկոքին դահճքն խաղաղութիւն ը նմին օրինակի վախճանեալ իցեն • Քզի Ծ • ցուցանէ՝ թէ կատարումն նոցա եղև բռնական մահուամբ, թէպէտև ոչ յիշէ, սրով, եթէ հրով են, ուստի Յ • բս • իմացեալ է սրով • որ է ընունելի • բայց չգիտեմ զիարդ և զերմոնեա նոյնօրինակ առդնէ գլխատեալ յասելն • * և 'ի չորանալ ձեռացն դահ-
• ճաց՝ հաւատացին, և է նմա գլխատեցան || • և պատկերն իսկ կուսին նկարի անդ գլխատեալ • որում ոչ ուշ եդեալ սոփրոնդայ՝ կարծէ, թէ չէք յիշատակ դահճաց 'ի Յ • բս : Այլ որ զարմանալին է, 'ի Յ • ժմ • ուրոյն ևս գրի զերկուց դահճացս, թէ հրով կատարին, փինկ գրելոյ սրով • և 'ի վր բերի տալս • * Թէոտիմոս
• մեռանի է թէոդուղոսի, պատիւ է նմա ծառայա-
• կան տալով ՟ն || • ուր փակի ստուգաբանութիւն անուանց երկոցունց • որ կամ յատուկ անուանք էին նց, և կմ 'ի հաւատացելոց այնպէս կոչեցան խորհրդաբար :



# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Ս̃բյն Նեքտաւրինեայ փիլիսոփայի և կուսի վկային ք̃սի. որ և Կատարինէ աղեքսանդրացի ։ (1)

Հ. մարտ. 27 ։ Յ. Լ. նոյեմբ. 25 ։ Ճառընտ. Ի. շխդ = շխէ ։ Պ. տղդ = տղզ. և Օ. ճէ = հզ ։ Մեռաւէր. առ սուր. հայր. ղ. երեւ. 624 = 632 ։ Բարոնեոս յամի. 307. ե̅ա ։ (2)

ԻՄԱՍՏԱՍԷՐ ԵՒ ՀԱՆճարեղ կուսն սքանչելի Նեքտաւրինէ, որ և Կատարինէ, ('ի յունաց եգատեռինա կոչեցեալ, և 'ի հռովմայեցւոց գաթարինա,) էր 'ի քաղաքին աղեքսանդրու եգիպտացւոց՝ յազգականութէ մեծին կոստանդիանոսի, յամս մաքսենտի և մաքսիմինոսի բռնակալ թգ̃ւրաց, հաւատով քրիստոնեայ, և տեսլեամբ գեղեցիկ յոյժ. և անչափ մտավարժ և ճարտար մտօք ։ Որ և բաց յանձային դրոց գիտութէ՝ ուսաւ զամ̃ հելլենական գիտութիս հռետորականս և փիլիսոփայականս. զորս օրէն էր ուսուցանել 'ի ճեմարանս աղեքսանդրացւոց՝ ոչ միայն արանց, այլև կանանց ուշիմ եղելոց մտօք. յորոց միջի անհա-

մե.

մեմատ յառաջադիմութ՟բ փայլեաց Նեքտա-
ռինէ, քաղեալ յընդարձակութե՛ մտաց իւ-
րոց զգիրս Հոմերոսի հելլէն քերթողի, և
Վիրգիլիոսի հռովմայեցւոյ, որպէս և զմա-
տեանս Արիստոտէլի, Պղատոնի, Պիւթա-
գորայ, և այլոց իմաստասիրաց և հռետորաց.
Եւս և զնախաբժշկացն՝ Ասկղեպիոսի, Հռու-
փոսի, Հիպոկրատեսի և Գաղիանոսի. Թող
զԹուաբանական մակացուի և զգիտուի եր-
կրաչափական, աստեղաբաշխական, և նուա-
գարանական. մինչև զա՟մ արտաքին գիրս 'ի
բերան ընթեռնուլ. և 'ի լեզուագիտութե՛
զարմանալի գտեալ էր օրինակին միհրդա-
տայ՝ աւելի քան զերեսուն ազգաց լեզու ու-
սաւ, և խօսէր յիւրաքանչիւր բարբառ. ընդ
որ սքանչանային՝ որք տեսանէին զնա, և
լսէին 'ի նմանէ. և համբաւ իմաստուե՛ ն՟ր
էր ընդ ա՟մ ազգս :

Նա 'ի միում աւուր ետես զԹագաւորն մաք-
սենտիոս, կ՟մ մաքսիմինոս, զի եկեալ էր յա-
ղեքսանդրիա. և բազում ամբոխի՛ 'ի մեհ-
եանս զոհս կռոցն մատուցանէր յաւուր տօնի
հեթանոսաց: Նա զի ունէր համարձակուի
յարքունիս վ՟ն արքունի զարմին և սքանչելի
իմաստութեն, ազդմամբ շնորհացն ա՟յ ան-
վեհեր չոքաւ եմուտ առ Թ՟գւորն, և սկսաւ
իմաստուն բանիւք ըմբերանել և յանդիմա-
նել զնա վ՟ն գարշելի զոհից կռոցն. և վկա-
յութիս ևս 'ի ժամուն յանկաւորս 'ի մէջ
առնոյր 'ի գրոց իմաստնոցն հելլենացւոց վ՟ն
ստութե՛ դից նոցա. նոյնպէս և 'ի մատե-

նից այլոց ազգաց բերէր բանս 'ի նոցին լեզուս , և թարգմանէր և ցուցանէր՝ թէ սնոտի են ա̅մ պաշտամունք հեթանոսաց • մինչև զարմանալ թագաւորին և որոց ը̅ նմա յոյժ ը̅ սքանչելի բանս իմաստութե̅ նր̅ , և ը̅ բարբառ բազմազգի լեզուա́ցն ։

Եւ տեսեալ երանելի կինն զթագաւորն և զամբոխն շրջուցեալ ը̅դէմ իւր , զի ոչ կարէին պխնի առնել , սկսաւ անդրէն խօսել պարզ և յստակ բանիւք ցթագաւորն , և ասէ • Ընդէ՞ր ժողովեցեր զբազում ամբոխս , և ունայնութե̈ք կորուսանես զնն̅ 'ի մոլորութե̅ի կռոցն • և արդ թափեա́ց 'ի մոլորութէդ , և լո́ւր ինձ , և ծանի́ր զնա՝ որ բանիւ́ հաստատեաց զա̅մ ա̅ս • զի նա միայն է ճշմարիտ ա̅ծ , որ առաքեաց զմիածինն իւր յա̅ս , զի կեցուսցէ զմեզ խաչի́ւն իւրով • նա է փրկիչ մոլորելոց , և ա̅ծ յաւիտենական • և նմա միայնոյ փառք յաւիտեանս • ամէն ։

Յայնժամ 'ի տարակուսի լեալ թագաւորն՝ տարաւ զնա զկնի իւր յապարանս , կարծելով՝ եթէ ողոքանօք դարձուսցէ զնա՝ զոհել կռոցն , և 'ի բաց կալ 'ի ք̅ե̅է • այլ նա ջանայր զթագաւորն ա̅ծիմաստ բանիւք հաւանեցուցանել ։ Ապա խորհուրդ արարեալ թագաւորին ընդ իւրսն՝ ետ կոչել հռետորական վ̃դպս , զի խօսեսցին ը̅ նմա , և յաղթահարեսցեն զմիտս նր̅ 'ի հաւանութե̅ի դենից հեթանոսաց ։ Եւ ժողովեցան արքյիուն յիմաստնոց ճի՝ հռետոր և փիլիսոփոս անուամբ մեծարեալք • և յորժամ սկսան խօսել

սել առաջի թգ̃ւորին , որբուհի կոյսն Նեք-
տառինէ հրեշտակական օգնականութ̃ն զմե-
հագոյն հռետորական վ̃պսն զարմացոյց և
յամօթ արար , և երևեցոյց զն̃ տգէտս և
անիմաստս 'ի ճշմարիտ իմաստութ̃է . մինչև
յաղթ լինել փիլիսոփայ վ̃պաց , և ոչ իշ-
խել խօսել կմ̃ հարցանել 'ի փիլիսոփայական
գրոց :

Իսկ երանելին Նեքտառինէ տեսեալ զնոսա
'ի վարանս՝ սկսաւ առաջի առնել նց̃ բազմա-
պատիկ վկայութ̃իս 'ի նախնի իմաստնոց վ̃
աստուածութ̃ կռոց , և վ̃ ճշմարտութ̃ միոյ միայ-
նոյ ա̃յ արարչին երկնի և երկրի . և յաւել 'ի
մէջ բերել յարտաքին գրոց նաև բանս իմ̃
գուշակականս յաղագս խորին խորհրդոց ա̃ծ-
պաշտութ̃ե . զ̃ զայն բան ուրումն յառաջ-
նոյ , որ 'ի ճառընտիրս ընծայի յանուն վիր-
գիլիոսի . * Յերից միութ̃են մինն 'ի մարմնի
տեսաւորի . յերից աներևութից ոչ պակա-
սի || : Նոյս առաւել զբազմապատիկ բանս
'ի գրոցն սիբիլլայից , յորս գտանին մեկն
գուշակութիք զտնօրինական խորհրդոց փրրկ-
չին . ուստի զմին յառաջ բերեն ճառընտիրք
օրինակ զայս . * Ո՛վ երիցս երանեալ փայտ ,
„ յորում ա̃ծայինն տարածի . . . քահանայքն
„ զբժիշկն իւրեանց 'ի փայտի խաչեցեն ,
„ և ոչ կարացեն յաղթել նմա || : (3)

Նոյ յետ արկանելոյ զմիտս փիլիսոփայիցն 'ի
ծուփս յաղագս խորութ̃ե իմաստից այսպի-
սի բանից գտելոց յարտաքին գիրս 'ի կողմ̃ն
ճշմարտութ̃ե , այնուհետև 'ի վ̃ էած և այլ

բազում բանս զօրաւորս 'ի հին և 'ի նոր կտակարանաց , առաւել 'ի բանից պօղոսի և դաւթի . որովք ուսուցանէր և խրատ տայր հաւտորայն և փիլիսոփայիցն հաւատալ 'ի ք̅ս , և ոչ մնալ 'ի հեթանոսական կուրութե̅ և 'ի յետին անմտութե̅ . ծաներուք ասէ զտ̅ր մեր յ̅ս ք̅ս՝ զփրկիչն տիեզերաց , որ վ̅ս մեր մարմնացաւ , խաչեցաւ , թաղեցաւ , և յարեաւ 'ի մեռելոց , և համբարձաւ յերկինս . և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս : Իբրև ետես թագաւորն զիմաստուն կարծեցեալ վ̅դպս իւր յաղթահարեալ և անպինի մնացեալ առաջի անյաղթ վկային ք̅սի նեքտառինեայ ճշմարիտ իմաստասիրի , բարկացեալ 'ի վ̅ր ն̅ց՝ հրամայեաց հրով այրել զն̅ս 'ի միասին յիսուն այր : Եւ յորժամ տանէին զն̅ս , մինն 'ի նոցանէ խրատէր զայլսն , զի անկցին յոտս ս̅րբյ կուսին , և խնդրեսցեն ուսանել զհնարս փրկութե̅՝ առեալ յանձինս զդրոշմ ք̅սի : Յայնժամ ասէ ցն̅ս նեքտառինէ . մի երկնչիք , այլ խնդացէք 'ի տ̅ր . երանի է ձեզ՝ որ խափանեցայք 'ի մոլորութե̅է , և ծանեայք զա̅ծ ճշմարիտ . արդ ընկալարուք զմկրտութի̅ հրով , և ուրախասջիք ընդ հրեշտակս : Եւ այնպէս կատարեցան զուարթութե̅բ յիսուն արքն՝ խոստովանելով զտ̅ր յ̅ս ք̅ս . և մնաց մի 'ի գլխոյ նոցա ոչ կիզաւ . յայնժամ հաւատացին 'ի ք̅ս և բազումք յամբոխէ անտի . յորոց սակի յիշի ը̅ ոմանց յանուանէ պորփիւրիոս ստրատելատ երկերիւր զօրականօք հանդերձ :

Իսկ

Իսկ զերանելին Նեքտառինէ զանարատ հարսն քրիստոսի հրաման ետ բռնաւորն 'ի տանջանս գանից մատուցանել . վասն մերկացուցին 'ի նմանէ զծիրանիսն և զբեհեզն , և զոսկի զզարդսն հանին 'ի նմանէ , և թողին միայն զշապիկն . և 'ի վերայ այնր հարին զնա ուժգին արջառաջլօք , կամ ըստ այլոց խարազանօք՝ որ կոչին կարիճք յաղագս խայթոցացն . և արկին 'ի բանտ , մինչև նորանոր տանջանս հնարեսցին վասն նորա : Իսկ կին մի այրի , որ երբեմն թագուհի եղեալ էր մագնենտիոսի արքային , ցանկայր տեսանել զնեքտառինէ , և լսել 'ի նմանէ զբանս իմաստութեան . վասն և պորփիւրոս ստրատելատն տարաւ զթագուհին 'ի գիշերի առ նա . և վարդապետութեամբ նորա հաւատաց թագուհին 'ի քրիստոս , և դարձաւ 'ի տուն իւր . և մկրտեցաւ 'ի հաւատացելոց : Յետ այսորիկ միւսանգամ տարան զերանելի կոյսն Նեքտառինէ յատեան . և նա անփոփոխելի հաւատով խոստովանէր և քարոզէր զքրիստոս աստուած՝ լի իմաստութեամբ և հոգւով սրբով . վասն հրաման ետ թագաւորն ըստ խորհրդոյ խորսասադեմայ իշխանի , և կացուցին զկոյսն 'ի վերայ մեքենաւոր և սրալից անուոյ՝ հոլովել և խորտակել զամենայն մարմինն նորա . և 'ի կարդալ սրբուհւոյն 'ի սրտէ առ աստուած՝ հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ փրկեաց զնա 'ի դժնդակ մեքենայէն : Յայնժամ երանելի թագուհին՝ որ հաւատաց 'ի քրիստոս , ընթացեալ հերարձակ առ թագաւորն , անգոսնէր , և մեղադրէր նմա յաղագս անողորմ և անաւդորոյն

մտաց նր̄ . և ինքն խոստովանեցաւ համարձակ զքրիստոնէութի̄ իւր . վ̄ոյ հատին նախ զատինս նր̄ , և ապա զգլուխն . և այնպէս կատարեցաւ բարի խոստովանութբ̄ ՚ի ք̄ս . նոյնպէս գլխատի և պորփիւրիոս հանդերձ երկիւրիւր արամբքն :

Իսկ զսրբուհի կոյսն յետ բազում հարցափորձի՝ իբրև ետես բռնաւորն , զի ամենևին ոչ լսէր խրատու և սպառնալեաց նր̄ , հրամայեաց տանել և հատանել զգլուխ նր̄ : Եւ յորժամ տանէին զնա ՚ի տեղի կատարմանն , երթային զկնի նր̄ բազում ժողովուրդք . և հասեալք ՚ի տեղին՝ աղաչեաց զդահիճսն անսալ փոքր մի , մինչև կացցէ յաղօթս . և համբարձեալ զաչսն յերկինս՝ ասէ . Տ̄ր ա̄ծ իմ լուր ձայնի աղախնոյ քո , և շնորհեա ինձ զխնդրուածս իմ . և տուր ամենեցուն՝ որք յիշեն զանուն իմ , զառատ ողորմութիւ̄ քո , և բժշկութի̄ ա̄մ ցաւոց . և որք յիշեն զիս յաւուր ոգեվարին , առաքեա քաղցր հրեշտակ , զի խաղաղութբ̄ աւանդեսցէ զոգիս նց̄ . և զհոգիս իմ՝ խաղաղութբ̄ ընկալ . քանզի քո են փառք յաւիտեանս , ամէն :

Յայնժամ ձայն եղև յերկնից , և ասէ . եկ հանգիր ը̄ ո̄րս , ուր հրեշտակք սպասեալ մնան քեզ . և զխնդրուածս քո կատարեցից , և տաց ամենեցուն՝ որք կատարեն զօր հանգստեան քո , զխնդրուածս նոցա : Եւ յետ ա̄ծային ձայնին հատին զգլուխ երանելւոյն ՚ի նոյեմբերի ի̄է̄ . և ը̄ արեան կաթն բղխեաց . և հրեշտակք բարձին զմարմին նր̄ ,

և

և տարեալ եդին 'ի սինէական լերինն . ուրա-
նօր երևի միայնացեալ կոյսն առժամանակ
մի 'ի սկզբան հալածանաց . ուր և գտան
զկնի նշխարք նր (4) ։ Նախկին գրիչ վարուց
մեծ վկայուհւոյս Ճանաչի աթանաս ոմն յըն-
տանեաց նր . որ է Ճառընտրին այսպէս վեր-
ջաբանէ . * Ես աթանաս դպիր ծառայ նր
,, գրեցի զվկայութիւն տիկնոջն իմոյ սբյն
,, Նեքտարինեայ , որ կատարեցաւ 'ի քս յս
,, 'ի տր մեր . որում փառք յաւիտեանս .
,, ամէն || ։

Սա ինքն սբն Նեքտարինէ կամ կատարինէ
կոյս իմաստասէր՝ իրաւամբք ընտրի 'ի բա-
րեխօս և 'ի պաշտպան ամ դպրոցաց գիտու-
թե և իմաստութե . և խորհրդովն նկարի 'ի
պատկերս՝ իբրև այն թէ մատանի է ունի 'ի
մատն իւր 'ի քսէ յսէ տնէ մերմէ , ոչ միայն
իբրև զայլս 'ի կուսից կուսութե հարսնացե-
լոց փրկչին , այլ և ոգւ իմաստութե պսակեալ
է ածային իմաստութե . է որում և իմաս-
տունն յօրինակ քսի ասէ զիմաստութենէ .
* Ոչ զոք սիրէ ած , բայց զայն՝ որ է իմաս-
,, տութե բնակիցէ . . . Զնա սիրեցի և քննե-
,, ցի 'ի մանկութէ իմմէ՝, և խնդրեցի ածել
,, ինձ հարսնութե . և եղէ ցանկացող գեղոյ
,, նր . . . և ամենեցունց տրն սիրեաց զնա || .
Իմաստ . Ը . Բ Գ ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Բ։

(1) Նեքտառինէ անուն 'ի մեզ՝ կամ առ վայելչութե իմիք հնչման, և կմ ը նախընթաց բառի կապեալ՝ ընկալաւ զյաւելուած տառիդ Ն. զի այն՝ որ գրի 'ի ճառընտիրս, * վկայաբանութիւն նեքտառինեայ||. կամ * և անուն կուսին նեքտառինէ||, թերևս առանց կրկնութե Ն տառի վերծանելի է. * վկայաբանութիւն եքտառինեայ||, և * անուն կուսին եքտառինէ||. որով նոյնանայ ը յունականին էքադառինէ։ Ընդ հակառակն առ լատինս 'ի բաց անկեալ է առաջին տառն Է, և մնացեալ քադառինէ, կմ քադէռինա. և ը այսմ ասի 'ի մեզ նաև Կատարինէ. ոպ է տեսանել 'ի Հ։

Մինչ զի զարմանամք, զի վոսսիոս այր իմաստուն գտեալ զուղղագոյն ընթերցուած 'ի լատինն էգադարինա համաձայն յունականին՝ վրիպակ կարծէ, գրելով այսպս. * 'ի հին օրինակս գրի էգադարինա. կմ հեգադարինա||. որ երևի աղաւաղել 'ի ձայնէս ի գաթարինա||. ոպ թէ ի իցէ յունարէն յօդ իգական. բայց յայտ է թէ յատուկ անուանք անյօդ վարին հասարակօրէն. և յոյնք ոչ երբէք զյատուկ անուն սբյն գրեն իգաթարինա, այլ միշտ էգադարինա։ Սխալէ և հեղինակն գաղղիական բառարանի մոռէր, որ ընթեռնու զերկբարբառն Է՝ այի, ք այիգադարինէ. ոպ թէ սրբուհի կատարինէ, որ են գիւտք օտարաց ձեռնարկողաց ը հաճոյս, և ոչ ը սովորութե բնիկ ազգին։ Ապա եթէ պահմամբ ձայնիս էգադառինա՝ դժուարին ստուգաբանել, չէ ինչ. զի ստուգաբանութի յատուկ անուանց է բազմադիմի, ք ոմն 'ի καθαρὸς ձայնէ հանէ, որ է մաքուր, ևն. և ոմն 'ի ձայնէս Ἑκάτη. որ է այլ անուն դիցական։

(2) Իսկ վկայաբանութի սբյն լաւագոյն և ընտրելագոյն այն է, զոր եդաք միաձայնութբ երից ճառընտրաց մերոց. որոց ձայնակից լինի ծմիձ և Հ. ուր առ այլս թէպէտև նոյն պատմութի է ը գոյացութե, բայց բազմօք ճոխաբան. գուցէ և ուրեք աւելորդաբան. ոպ է տեսանել առ սուրիոսի յանուն մետափրաստեսի. յիշատակէ և զյունական օրինակ այլ՝ լեոն ալլատիոս,

և

և 'ի Նիմանէ բաբեպրոք • բայց քանզի չէր 'ի լոյս տպա֊
գրուէ 'ի ձեռն բոլլանդեանց ( զի դադարեցին գործք
նց 'ի հոկտեմբեր ամսոյ և անդր ) , շունիմք գուշակել
արդեօք առաւել Ճառընտրաց մերոց , եթէ մետափրաս֊
տեան օրինակի է մերձաւոր : Ջայս գիտեմք , զի որով֊
հետև 'ի վիճաբանութիւս կուսին բաղում յաւելուածս
արարին յոյն և լատին օրինակագիրք , նոյնպէս և յայլ
համգամանս սքանչելի պատմութեան , նմին իրի ըղեմ
այնպիսի օրինակաց զինին բանք քննչաց , և ոչ մերումս
օրինակի • զոր եթէ 'ի ձեռս ունէին , գուցէ այլազգ
խօսէին :

Շատ լիցի լսել զբանս բաբեպրոքայ , որ յերկուս հետս
ընթանայ 'ի սկիզբն ա • հատորոյն մայիսի • ( ուր խօսի
զայոնմոսկեան տօնացուցէ եղելոյ անդ , 'ի պէտս 25 •
նոյեմբ ) • * Ջոր յոյնք էգադառինա , լատինք գադա֊
,, ռինա կոչեն : Վկայաբանութիքն յերկոսին ազգս իսկ
,, որչափ զարմանալիս 'ի մէջ բերեն , այնչափ աւելի
,, դժուարութի կրեն առ 'ի ձգել զլսելիս 'ի հաւատ
,, նոցին : Ոչ թեթև դժուարութի առարկի և յաղագս
,, փոխադրութե սը մարմնոյն 'ի լեառն սինայ : Անտա֊
,, րակուսելի Ճանաչի այն ը գոյացութենէն • այլ ը հե֊
,, զինակացն և ը ժամանակին կարի յոյժ մթագին :
,, Այս ինչ ստոյգ է , թէ չիք ոք սրբուհի իբրև զսա ,
,, որոյ համբաւն և պաշտօնն յառաջին դարս զկնի հա֊
,, լածանաց անծանօթ իմն իցէ , իսկ 'ի յետագայ դարս
,, կարի հռչակաւոր , ոչ միայն յարևելեան , այլև յա֊
,, րևմտեան եկեղեցւոջ : 'Ի մերս բեղգիոն , թող զայլ
,, գաւառս , դժուարաւ գտանի քաղաք ինչ , մանաւանդ
,, թէ և աւան կամ գիւղ , ուր սրբուհւոյս այս չկայցէ
,, կամ խորան կամ տաճար • որում այլազգ անհնար էր
,, լինել , եթէ ոչ մը երևելի և յաճախ և յայտնի սքան֊
,, չելեաց եղելոց ը ձմկս ձմկս՝ 'ի կարգալ զանուն
,, նը • զորոց ունիմք զազգի ազգի ցուցակութիս 'ի ձե֊
,, ռագիր մատեանս յիշատակաց • և առաւել քան զամ
,, զգերմանացի պատմութի վաւերական յոյժ՝ յաղագս
,, նշխարաց և պաշտաման նը 'ի գրեմերոդեան վանս
,, կանոնիկոս կրօնաւորաց 'ի թեմն կողոնիոյ • ուստի
,, ոչ առանց սքանչելեաց հաղորդեցաւ ինչ մի քաղա֊
,, քին պրուքսելայ : Ցուսամք թէ բաղում ինչ իրք 'ի
,, բաղում տեղեաց հաւաքեսցին՝ նախ քան զհասանել
,, գործոյս մերոյ յայդ ամիս ( նոյեմբերի ) • և այն այն֊
,, չափ ստուգեալ և վկայեալ , մինչև համբացուցանել

,, զբե֊

,, զբերանս նորաւանդեց բարբանջողաց ։ Զի զի՞նչ
,, զարմանք են, եթէ զանուն նր և զգերեզման 'ի քանի
,, մի առաջին դարս զկնի նահատակութեն ծածկել կա_
,, մեցեալ իցէ ոմ, ոմ զմարմին սրբուհւոյն ուղալեայ
,, 'ի սիկիլիա. մինթէ չկարէ՞ զնորա՝ յետ կամելոյն 'ի
,, յայտնութեն բերել, զճշմարտութիւն անտարակուսե_
,, լի առնել քննական ժողովրդեան 'ի ձեռն աներկբայ
,, սքանչելեաց ։ Ո՛չ այդպէս թերահաւատք եմք. բայց
,, և ոչ այնքս դիւրահաւատք, զի յանցանս ընդէմ կրօ_
,, նի համարեցիմք զերկբայելն ը վկայաբանութիւս ա_
,, ռեալս 'ի յունաց. որոց աներկտրողական դիւրահա_
,, ւանութեն ազգի ազգի կեղծիս 'ի վր սց ընկալաւ՝
,, խիստ քննութե կարօտս, և լատինացւոց իսկ հաւր_
,, դեաց ։ Հարթեաց զայնս մետափրաստէս ։ Զառա_
,, ջին հեղինակն՝ բայց ը այլով անուամբ պատրուա_
,, կեալ, թուի գտեալ ալլատիոս, երբ զյունականն
,, եգիտ այսպիսի վերջաւորութբ յանգեալ. ,, Զայս
• ես աթանասիոս դպիր ծառայ տիկնոջն իմոյ եքադա_
• րինեայ շարագրեցի զյիշատակարան նր ամ իմաստու_
• թբ ,, ։ Իցէ՞ թէ գտանէր մեզ ոք զայդ ։ Աւ այժմ
,, կարող եմք 'ի կարծիս անկանիլ, թէ այնու հաւատով
,, հեղինակն յառաջ մատչի ը անուամբ ծառայի և դպրի
,, նորին իսկ սրբուհւոյն, որով զնոյնպիսի մակագրուե
,, առին ինքեանց հեղինակքն նահատակութեանց սբյն
,, գէորգեայ և սբյն թէոդորոսի. զորոց թերևս լաւ
,, ևս լինէր՝ թէ չէր ինչ գրեալ, քան զգրեալ դոյն
,, առանց հաստատուն հիման հին հեղինակաց || ։

Ուր տեսանես զայրն իմաստուն յայսկոյս յայնկոյս դե_
դեւիլ առ չունելոյ 'ի ձեռին զընտիր վկայաբանութի.
և սակայն խնդրելին նր է աւանդեալն 'ի Ճառընտիրս
մեր. յորոց 'ի միումն կայր և նոյն յիշատակարան յառաջ
բերեալ յալլատիոսէ, ըստ որում եդաք. իսկ յայլս յեր_
րորդ դէմս էր յեղանակեալ, թէ զայս գրեաց աթա_
նաս են ։ Զառաջին դէմս պահէ և Հ. այսպէս. * Եւ
• ես աթանաս դպիր ծառայ սբյն կատարինեայ, որոյ
• ականատես եղէ և ականջալուր, և ստոյգ գրեցի ըղ_
• պատմութիս || ։ Որով ունիս իմանալ, թէ այլ է զյի_
շատակարանն պահել, և այլ է զպատմութին. իսկ մե_
տափրաստէս՝ կմ ո և իցէ հեղինակն սուրիոսեան վկայ_
աբանութե, ոմ զբազում ինչ այլափոխեաց, նոյնպէս
և ոչ զյիշատակարանն պահեաց. բայց թէ և պահէր՝
ոմ ալլատիոսեանն, համեմատութի օրինակի ը օրինա_

կի

կի յայտ առնէ՝ թէ որ այն իցէ մօտաւոր անապակ և
յստակ աղբեր, և որ այն հեռացեալ և ճապաղեալ ՚ի
բազում առաջս․ վ̅յ կասկած բաբեպրոքայ ոչ անկանի
՚ի վ̅ր օրինակիս մերոյ, այլ՝ այլոցն․ զորոց զյայտնի
ապացոյց ունիմք և ՚ի նոյն իսկ առ ՚ի նմանէ յիշատա-
կեալ վկայաբանութիւն սբ̃յն գէորգեայ՝ որ ասի գրեալ
՚ի ծառայէ նր̃ պասիկրատեայ, և սբ̃յն թէոդորոսի՝
որ յաբգար գպրէ նորա ասի գրեալ․ իսր զի օրինակք
այլոց առ մերովքս են ո̃չ սղնձախառն մետաղք առ
ոսկւով զտով․ այսպէս իմն ինձ և յառաջիկայս վկայա-
բանութե̃ սբ̃ն նեքտառինեայ ։

Կարէր ոք կասկածիլ, թէ գուցէ օրինակ ճառընտրաց
մերոց իցէ նոյն ը̃ յունականին եղելոյ ՚ի ձեռին ալլա-
տիոսի․ զի պահէ զնոյն յիշատակարան ։ Բայց վկայէ
կոմբեփիզ, թէ փրոնտոն մակարիտ՝ որ ը̃ յորդորելոյ
իւրոյ սկսեալ էր թարգմանել զայն օրինակ, * ալդ-
„ արար՝ թէ այնչափ դժուարութի կրեն տրամախօսու-
„ թիւքն հեղինակի նր̃՝ ճշմարտի կմ̃ ստայօդի, մինչ զի
„ թերևս լաւ իցէ ծածկել՝ քան հրատարակել․ որ և
„ ՚յմերումս դատման ՚ի դէպ թուեցաւ ||։ Իսկ մերս օրի-
նակ անմասն է ՚ի տրամախօսութեանց անտի, վ̅յ և ՚ի
դժուարութե̃ց․ մինչ զի պարծանք են մեզ առ այլովք
զմերս հրատարակել քան ծածկել ։

Անհարազատ օրինակի հանդիպեալ և բարոնիոս՝ այս-
պէս դանդատի գիտնօրէն․ * Յոյժ դժուարիմք, զի վկայ-
„ աբանութի սորին գերազնուական վկայուհւոյ գրեալ
„ է յանստոյգ հեղինակէ՝ որչափ աւելի ճոխաբար,
„ նոյնչափ նուազ հաւատարմաբար․ քանզի լաւ ևս է
„ ՚ի գործս վկայից և այլոց ևս սր̃ց պակասիլ բազում
„ բանից, քան կատակիլ յոլովագոյն իրաց յա̃մ կող-
„ մանց տատանելոց։ Վ̅ զի լաւագոյն խնամք ընծային
„ եկեղեցական ճշմարտութե̃ լռութբ̃ իրաց, որք ոչ
„ են այնչափ ստուգեալ, քան եթէ ստայօդ իմն և
„ կեղծ յօրինուածով պատմուե̃, թէպէտև խառն ընդ
„ ճշմարիտս ։ Վ̅ զի յառաջինն թէպէտև սակաւք ի-
„ ցեն, բայց յեցեալք ՚ի ճշմարտութի՝ հանդարտին
„ միտք․ և ՚ի նոցունց անտի՝ զորս ստուգութբ̃ առնու,
„ զայլսն կարող է ոք իմաստասիրել, խորհել, և գրե-
„ թէ աչօք տեսանել, զորս ճշմարտատեսիլ դատաս-
„ տան հիմնեալ ՚ի ճշմարտութի առնէ յանդիման ։ Իսկ
„ ՚ի յետինն անշուշտ հանդիպի, զի իմ̃ք՝ թէպէտև
„ դուզնաքեայ՝ ստութբ̃ միանգամ պղծորեալ մատց
„ ըն-

,, ընթերցողին, ալէկոծի 'ի միացեալս, և տատանի 'ի
,, ճշմարիտս, և ոչ կարէ անքոյթ և հաստատուն ունիլ
,, առկայանալ. այլ նաև զճշմարիտսն առ կասկածելիս
,, ունի՝ որ եւեթ միանգամ զստութիւնն ||: Եւ կարի
իսկ քաջ. սորին վն և պարծանք ճառընտրաց մերոց
այս են, զի ազատ են յայնպիսի աւելորդ բանից ան-
հարազատ օրինակաց. մինչ զի կամ նախկին հարազատ
գրչի ամթանաս դպրի է ընծայելի մերս վկայաբանուն,
և կմ համարելի անայլայլակ հետևողութե ածանցեալ
'ի բուն ականէ անտի. որպս յայտ է որոց բաղդատեն
զմերս ը այլոց: Այսքան առ այս. զի զոր արժան էր
խօսել ըդէմ խպառ ժխտողաց զգոյացութի պատմու-
թես, ոմք են բայլլեա և մոռեր և այլք 'ի թերեհա-
ւատից, բաւական են ասացեալքն 'ի բարեպրոքայ:
Կամ է տեսանել և զհաւանական դատումն ինչ բարո-
նիոսի նախ քան զյառաջագրեալ բանսն. թէ երևի
սբն նեքտառինէ կմ կատարինէ վաղագոյն մեկուսացել
առ ժամանակ մի 'ի լեառն սինէական (ուր յետոյ փո-
խադրեցաւ և գտաւ մարմին նր) յերեսաց հալածա-
նաց բռնակալին մաքսիմինոսի. քանզի և 'ի դէպ իսկ
գայ առէ սմին մեծանուն կուսի՝ զոր ինչ միանգամ գրէ
եւսեբիոս վն երևելի կնոջ միոյ աղէքսանդրացւոյ, 'ի
խօսելն զանկարգութեց այնր թագաւորի: Բանք եւսե-
բի կեսարացւոյ այս են 'ի պտմ. եկեղ. ը. 14:

* Զինչ պարտ է զախտաւոր անամօթութիս առն յի-
,, շատակել . . . զոր ըդէմ բոլորեցուն ն կամի 'ի կիր
,, արկանէր, բայց միայն 'ի քրիստոնէից. որոց արհա-
,, մարհել զմահ՝ առ ոչինչ համարեցան զայնպիսի բռ-
,, նաւորութի նր. քանզի արք յանձն առեալ զհուր և
,, զսուր և զհեղուսիլն բևեռօք, զգազանս ամեհիս և
,, զխորս ծովու, զհատումն անդամոց և զխանձողումն,
,, զաչաց խայթումն և զբրումն, և զբովանդակ մարմ-
,, նոյն ծայրաքաղութիս, առ այսոքիւք և զսով և զմե-
,, տաղս և զկապանս, յոմն առաւելապէս զհամբերութե
,, 'ի վն բարեպաշտութե ընկալան, քան եթէ յօժարիլ
,, կռոցն ընծայել զառ ծն պաշտօն: Եւ կանայք գլխո-
,, վին ոչինչ պակաս քան զարս յմծայլին բանին վդպուէ
,, արիացեալք, կէսք զնոյն զայն զարանց մրցմունս
,, յանձինս բերեալ՝ զզուգահաւասար զառաքինութե
,, ստացան զյաղթանակս. և կէսք 'ի պղծութե բռնա-
,, զբօսելոց՝ վաղագոյն զանձինս 'ի մահ, քան եթէ ըղ-
,, մարմինս յապականութե մատնեցին: Ապաքէն 'ի ծփիլ

,, այ.

„ այլոց 'ի բռնաւորէն 'ի գործ պղծութե , միայն կին
„ ոք քրիստոնէայ՝ նշանաւոր յոյժ 'ի մէջ աղեքսանդրաց-
„ ւոց և պայծառափայլ , զուարթաւոր և զանգուսպ ո-
„ գին մաքսիմինու՝ քան զայս արտօրագոյն հանդիսիւ
„ յաղթահարեաց պանծապէս․ որ թէպէտև այլով մա-
„ սամբ էր փառաւոր , մեծութբ և ազգաւ և վար-
„ ժիւք ուսման , բայց զամն երկրորդ գրէր առ զգաս-
„ տութբ․ զոր և բազում անգամ հրապուրեալ , սպա-
„ նանել զնա՝ որ պատրաստ էր 'ի մահ , ոչ ժուժէր ,
„ ցանկութեն առաւել զօրացելոյ 'ի վր նր՝ քան ցաս-
„ ման․ մինչև փախստեամբ տուգանեալ՝ զամ թողոյր
„ զինչս||:

Արդ ըստ կարծեաց բարոնիոսի, որ չէ՛ խոտելի, այս անցք մարթին գեղեցիկ միաբանիլ ը վիճակին նեքտառինեայ, որ էր այսպիսի ոք՝ ոպս նկարագրի յեւսեբեայ․ ( թերևս և խորհրդով լռելով զանունն վն ազգականութե ընդ կոստանդիանոսի․ ) իբր զի յետ փախստական լինելոյ յառանձնութի ուրեք, և թերևս 'ի լեառն սինայ, գուցէ յետոյ իջեալ իցէ՝ ոպս մեզ թուի, ազդմամբն այ 'ի կշտամբել զմոլորութի հեթանոսաց առ մաքսենտիոսիւ՝ 'ի տունի ինչ աղեքսանդրացւոց․ ոպս դէպ եղև և այլոց ոմանց 'ի սբց․ և կմ ը բարոնիոսի՝ նա ինքն մաքսիմինոս խնդրակս առաքեալ՝ տոհել իցէ բերել զնա, կարծելով որսալ 'ի ձեռն իմաստնոց իւրոց․ և այնպէս նահատակեալ իցէ : Որով ինքնին լուծանի և դիմախօսութի ոմանց ը պագիոսի, թէ * վկայաբա-
„ նութին սբյն կատարինեայ աւանդէ նահատակեալ
„ զօլ զնա հրամանաւ մաքսիմինոսի ( ը մեզ՝ մաքսեն-
„ տիոսի )․ իսկ կինն՝ զորմէ խօսի եւսեբիոս, յաքսորս
„ եւեթ առաքեցաւ ||: Գիտեմք, զի հռուփինոս զանուն կնոջն յիշելոյ յեւսեբիոսէ կոչէ դորոթէա․ բայց պինէ բարոնիոս, թէ թող զայդ՝ զի ոչ 'ի հաւաստի վկայութէ 'ի մէջ բերէ հռուփինոս զայդ անուն , մարթի լինել՝ զի եքադարինա իցէ անուն հեթանոսութե , և դորոթէա ( որ թարգմանի տծաշնորհ ) անուն քրիստոնէութե :

Արդ զայս կարծիս բարոնիոսի թողեալ 'ի հաւանականութե իւրում՝ մեք շատ համարիմք զվկայութիւնն եւսեբեայ առ 'ի հաստատել զվիճակ ժամանակին , թէ ուրեմն այնպիսի հալածանաց և ամենատեսակ տանջանաց տարան յայնժամ ոչ միայն արք , այլև կանայք․ և թէ կային 'ի կանայս քրիստոնէից նմանիք նեքտառինեայ

փա-

փառաւորք մեծութբ և ազգաւ և վարժիւք ուսմանց աղեքսանդրացւոց, ևս առաւել զգաստութբ զարդարեալք. վս ոչինչ զարմանս պարտին զարմանալ թերահաւատք և ը նեքտառինէ կոյս փառաւոր՝ մեծութբ և ազգաւ և իմաստութբ և զգաստութբ։ Եւ 'ի դնիլ այսմ, որ է անտարակուսելի, ոչինչ ըդիմաւն յինքեան բերէ անժխտելի վկայաբանութիւն նեքտառինեայ։

Օգտէ 'ի հաստատութիւն իրացս, միանգամայն և յորդոր մեծ լինի իմաստուն կանանց և օրիորդաց՝ հաւաքումն պատմական զուսումնասէր եղելոց յազգի նց, զոր քաղէ վոսսիոս գերարդոս 'ի գիրս բանասիրութե. այն է Գիրք Ը. ԳԼ. ԲՆ. Արուեստից և Գիտութեանց. ԳԼ. 2. ունելով բանիւն այսպէս. * Որք միանգամ զազգ կա-
,, նանց անյարմարս դատեցան առ ուսումն, վաղու ևս
,, կշտամբեցան յոմն փիլիսոփայից.... Անհամար զոգ-
,, ցես կանայք եղեն ուսումնասէրք. զորոց բազում
,, ինչ բերաք 'ի քառեակ գործն յաղագս յոյն և լատին
,, վիպասանից և քերթողաց... Յորոց սակի է արիգ-
,, նոտէ, որ գրեաց զգործս գինիսի բանաւորի...
,, Եստիէ աղեքսանդրացի գրեաց զքերականութիւն...
,, Արետէ դուստր արիստիպպոսի կիւրենացւոյ աշա-
,, կերտի սոկրատայ՝ առ ոտս հօր իւրոյ վարժեցաւ ի-
,, մաստիւք... Ըստ ասելոյ եղանիկոսի՝ յորմէ և տա-
,, տիանոսի, սաովսա (կամ հադուշա) կին 'ի պարսս
,, Թագաւորեաց, և նախ զառաջինն ուսոյց զնամակա-
,, գրութիւն։ Առ մեծն աղեքսանդրիւ... հիպարքիա
,, քոյր մետրոկղի կիւնիկեան և կին կրատերայ կիւնի-
,, կեան՝ գրեաց զփիլիսոփայական պատճառս. ոչ և
,, զձեռնարկս և զխնդիրս առ Թէոդորոս... Պամփի-
,, լիայ եգիպտուհւոյ առ ներոնիւ ութ գիրք պատմու-
,, Թեց 'ի մէջ բերին... Անուանի է առ աթենէոսի
,, ադլայիս կմ անագաղիս կորկիւրացի բանաստեղծու-
,, հի... Զերիս հռովմայեցի կանայս այսպէս գրուա-
,, տէ կուինկտիլիանոս. Գիրք. Ա. ԳԼ. 1." Գրակեանց
◆ պերճախօսութե մեծապէս սատար եղև՝ ոչ լուաք,
◆ կոռնելիա մայրն. որոյ գերիմաստ ասացուած նաև
◆ յետնոց աւանդեցաւ Թղթովք. և դուստրն լելիո-
◆ սի ասի զհայրենի պերճախօսութիւն յանդիման առ-
◆ նել 'ի խօսս. և ճառ դստերն կուինկտոսի հորտեն-
◆ սիոսի ատենաբանեալ է առաջի եռապետաց"...
,, Հերոնիմոս առեալ 'ի տրանկուիղոսէ՝ գրէ, թէ կոր-
,, նիփիկէ քոյր կորնիփիկիոսի քերթողի գրեաց զպան-

„ ծաղն վերտառութիս... Մարտիալէս գովէ զներ-
„ հունն Թէոփիլա կին կանխոսի... Կատարինէ աղեք-
„ սանդրացի՝ կոյս գերիմաստ, եթէ վկայաբանութեն
„ ն͞ր հաւատամք, ծաղկեալ առ Մաքսիմինոսիւ, 'ի հա-
„ սակի ԺԸ ամաց ասի վիճեալ ը͞ յիսուն իմաստասի-
„ րաց, և յաղթեալ ն͞ց նրբութբ բանից. և դարձու-
„ ցեալ 'ի ք͞րստոնեայ հաւատս... Եւ ո՞ իմաստնագոյն
„ ք͞ զզենոբիա դշխոյ պալմիւրացւոց՝ կրօնիւք հրէայ.
„ զորոյ զչափ գիտնականութեանն ունիս տեսանել 'ի
„ Թուղթն աւրելիանոսի կայսեր առ ծերակոյտն հռով-
„ մայ՝ 'ի գիրս տրեբելլիոսի պողլոնի. որ և սա ինքն
„ պողլոն գրէ զնմանէ, թէ գիտէր լատիներէն, խօ-
„ սէր և եգիպտացի. և թէ 'ի համառօտութն բովան-
„ դակեաց զպատմութն աղեքսանդրացւոց և արևե-
„ լեայց. և թէ՛՛ 'ի մ͞ր լատինականին յունարէն ընթեռ-
„ նոյր... Սոսիպատրա կին եւստաթէոսի մեծանուն
„ առն, ը͞ ասից եւնապիոսի յեդեսիոսն, "զքերթո-
« ղացն գիրս 'ի բերան ունէր, և զփիլիսոփայից և
« զհռետորաց. և զոր այլք աշխատութբ և տաժան-
« մամբ և տանջանօք հազիւ ըմբռնէին, նա զ͞ամ զբօ-
« սանօք և հեշտեաւ պարզէր, և անաշխատ յայտնաբա-
« նէր": Եւ թէպէտ այր ն͞ր եւստաթէոս կատարել
„ էր ասէ ուշիմութբ, բայց կին ն͞ր այն͞պս փայլեալ,
„ մինչև աղօտացուցանել զփառս առն...
„ Զի՞նչ ասացից զեւստոքեայ դստերէն պաւղայ հռով-
„ մայեցւոյ, որ գիտէր եբրայեցերէն, յունարէն և լա-
„ տիներէն. և գրեթէ հանապազ զհետ լինէր վերծա-
„ նութե ս͞բ գրոց. զորոյ զգովութիւն բազմօք տեսցես
„ առ երանելոյն հերոնիմոսի: Զի՞նչ ևս զայլոց խօ-
„ սեցայց, առ որս կան թուղթք նորին հերոնիմոսի.
„ զ͞ք են պաւղա, լետա, փաւիոլա, մարկեղա, փու-
„ րիա, դեմետրիաս, սաղոմ͞ինա և գերոնտիա. ո՞չ և
„ զայլոցն՝ առ որս կան թուղթք ամբրոսիոսի, օգոս-
„ տինոսի, և փուլգենտիոսի. որոց գիտնականութեան
„ նոյն իսկ թուղթքն են վկայ: Աֆէոփնի աղեքսանդրա-
„ ցւոյ՝ որոյ գրուածք կան 'ի միջի, դուստր էր հիւ-
„ պատիա՝ քաջ խելամուտ աստեղաբաշխութեան ( առ
„ մեծն կիւրղիւ )... կան թուղթք սինեսիոսի առ
„ նա. ուր է զի մակագրէ, — Հիպատիա ֆիլիսոֆայու-
„ հի. և է զի պարզապէս, — ֆիլիսոֆայուհի... Զայ-
„ նու ժամանակաւ ծաղկեցաւ և եւդոկիա՝ երբեմն
„ աթենայիս ասացեալ, դուստր ղեոնդիոսի իմաստա-

,, սիրի. և կին Թէոդոսի կայսեր փոքու, ներկուռ ՚ի
,, յոյն և ՚ի լատին գիրս, փոյթ ՚ի քերթողութե, ՚ի
,, մաթեմաթիգական և ՚ի փիլիսոփայական ուսմունս
,, քաջավարժ... Յամի տն իբր 500 երևելի եղև գի_
,, տութբ և իմաստութբ ամալասուէնտա դուստր Թէո_
,, դորեկոսի գթաց արքայի... և մայր աթալարիկոսի
,, արքայի. զորմէ բաց յայլոց բանից ասէ կասիոդո_
,, րոս. "Վնկ գիտուն նր ազանչելի ՚ի բազում լեզուս
• յորդառատ ծաւալի. որոյ հանճարն այնպէս դիւ_
• րապատրաստ է ՚ի յանկարծականս, մինչև չհամարիլ
• երկրաւոր գոլ: ՚Ի գիրս Թագաւորաց դշխոյն հա_
• րաւոյ ասի եկեալ առ ուսանել զիմաստութիւն սողո_
• մոնի. աստանօր իշխանք Ծի լռէիցեն՝ զոր ապշութբ ՚ի
• միտ ածցեն"... Առ յուստինիանոսիւ կայսերաւ
,, ծաղկեցաւ և Թէոդորա կին հեթանոս՝ ոչինչ անտե_
,, ղեակ փիլիսոփայութե, քերթողութե կմ քերակա_
,, նութե, այլև յերկրաչափական և ՚ի Թուաբանական
,, տեսութիս վարժ, ուսեալ առ ոմն խնդորոսի փի_
,, լիսոփայի և դամասկոսի դամասկացւոյ, զորոց զվարս
,, գրեաց և ընծայեաց նմին խնդորոսի, ըստ վկայելոյ
,, փոտայ... Յամի իբր 680 ծաղկեցաւ հիլդա աբբա_
,, սուհի անգղիացի... քոյր հերեսվիդայ մօրն արդուլ_
,, փոսի արքային արևելեան անգղիացւոց. բազում
,, գիտութբ նշանաւոր զնա ասէ լինել յովհաննէս սկո_
,, տէոս ՚ի խօսելն զանգղիացի մատենագրաց... և տր
,, բեդայի՝ Թագաւորք և իշխանք անգամ խորհուրդ
,, հարցանէին ՚ի նմանէ...

,, Յամի իբր 770 սրբուհին հռիքտրուդա՝ կոյս աղնուա_
,, կան, մեծապէս զարգացաւ ՚ի գիրս... որոյ կան
,, Թուղթք և այլ գրուածք յանգղիական մատենագա_
,, րանս... Առ ոթոն կայսերաւ առաջնով և երկրոր_
,, դիւ (այ ՚ի Ժ դարու) ծաղկեցաւ հռոսուիթէ միանձ_
,, նուհի՝ հմուտ լատին և յոյն բարբառոյ. գրեաց ներ_
,, բողական Ճառս, և տաղաչափութիս || ևն:

Նոյնպէս յառաջ բերին ՚ի վոսսիոսէ և կանայք և կու_
սանք իմաստունք գրով ծաղկեալք ՚ի յետին դարս.
յորս երևելի են աննա կոմնենա յոյն, սրբուհին իլդե_
գարդիս մոգունտացի, սրբուհին եղիսաբէթ շոնաուկե_
ցի. սրբուհին կատարինէ սենացի, կասանդրա կոյս վե_
նետիկեցի, կատարինէ դշխոյ անգղիացւոց, և քոյր նր
յովհաննա. ևն: ՚Ի վախճանի ասէ, * Յամի 1605. յու_
,, լիանէ մորելլա բարկինոնացի՝ կոյս սպանիացի, ՚ի

,, հա_

„ հասակի ժը ամաց զգեցեալ զքեմ գաբուչինաց. համ-
„ գիտապէս պաշտպան եկաց փիլիսոփայական դրու-
„ թեց, զորս մակագրեաց յանուն մարգարիտայ դշխոյ-
„ հին աւստրիացւոց, սպանիացւոց, և հնդկաց: Սա
„ ինքն մորեալս ոչ միայն լատին լեզուի էր ներհուն,
„ այլև յունականին և եբրայականին. և ոչ միայն փի-
„ լիսոփայութե, այլև գրոց իրաւանց խելամուտ. նաև
„ երաժշտական նուագարանաց տեղեակ, և յոյլ ևս
„ արուեստս կիրթ ... զայսոսիկ պատմէ գրեաղեր,
„ ասէ՝ թէ տակաւին փայլէ այժմ 'ի լուգդոն գաղ-
„ ղիացւոց. իսկ ինքն գրեաղեր մեռաւ յամի 1625 ||:
Յայտնանէ ունիս իմաստասիրել, թէ ոչինչ անհաւա-
տալի են գրեալքն զմարդկային և զածային իմաստութե
սբյն նեքտառինեայ. և 'ի գնիլ այսմ չմնայ ինչ դժուա-
րահաւատալի 'ի վարս նորա: Մինչ ևեթ 'ի նախագրե-
լոց շատանայ օրինակաւ բարոնիոս 'ի ցուցանել, թէ
զիարդ յաղթեաց բազմութե փիլիսոփայից ածիմաստ
կոյսն նեքտառինէ: * Ապաքէն չունի ոք (ասէ) զար-
„ մանալ է այդ, որ միանգամ գիտակ իցէ՝ թէ կայր
„ միւս ևս կին նոյնպէս աղեքսանդրացի՝ հիւպատիա
„ անուն, նշանաւոր գիտնականութե. որ փայլեաց առ
„ փոքրն թէոդոսիւ ը պատմելոյ սոկրատայ Գիր. է.
„ Գլ. 15. յորմէ յառաջ բերեմք զայս սակաւ բանքս.
„ "Սա (ասէ) այնչափ յառաջադէմ գտաւ 'ի գիրս,
„ մինչև զամ փիլիսոփայիւք իւրոյ ժամանակին գեր 'ի
„ վերոյ անցանել. և ոչ միայն յաջորդեաց 'ի պղատո-
„ նական դպրոցի իջելոյ 'ի պղոտինոսէ, այլև զփիլի-
„ սոփայից առ հասարակ զամ հրահանգս և զաւանդս՝
„ ամենեցուն, որոց կամեցան լսօղ լինել նմա, բացա-
„ գրեաց. նմին իրի որ միանգամ 'ի փոյթ իմաստասի-
„ րութե վառեալ էին, յամ կողմանց առ նա ընթա-
„ նային": Զայս և առաւել քան զայն զնմանէ սոկրատ
„ և շոճիատս. բայց հռչակեալ է անուն հիւպատեայ
„ և առ սինեսիոսի մեծանուն փիլիսոփայի, որ կոչէ
„ զնա իւր վրպուհի ||: Արդ՝ եթէ սա այսպէս, որ
էր կին հեթանոս, զի՞նչ պարտ է ասել զնեքտառինեայ,
որ արտաքին իմաստից էր ներհուն, և ածային շնորհօք
և գիտութե ճոխացեալ:

Զայլ ինչ 'ի մասնաւորի չունիմք ասել զսբյն նեքտառի-
նեայ, զի ամ ինչ բովանդակի 'ի նախաճառել ընհանուր
գիտելիս. և ոչ իսկ բերեմք զարբերութս մետափրաս-
տեան կամ սուրիոսեան վկայաբանութեան. զի չափ է՝

զոր ծանուցաքն, թէ երկարապատում ոճով յօրինեալ է այն, և ոչ ունի զվաւերականութին ուղիղ համառօտութե մերոց ժամանակաց:

(3) Հարցանիցէ ոք հետաքննաբար. ունի՞ն ինչ արդեօք հիմն բանք արտաքնոց, և մանաւանդ սիբիլլայից, յորոց մի բան բերէ ժամանակին մեր, և այլք յաւելուն այլս ևս 'ի վ՟ր, պարզ տասցուածովք զխորհրդոց գաղտնեաց ս՟բ հաւատոյս մերոյ:

Գիտեմ. վիրգիլեոսին բանք՝ որչափ ինչ կան մինչև ցայժմ 'ի գիրս նր՟, ը՟ ինքեան ոչ հային 'ի խորհուրդ երրորդութե, բայց եթէ յարմարական մտօք ինչք, յաւել նր՟ յայլ միտս 'ի Ծաղկաքաղն, Է.

* Երրեակ քեզ զայս՝ 'ի ձօն արձան,
Նարօտ պատեմ՝ երեքգունեան:
Երիցս յածեմ՝ և ընդ սեղան.
ըզքո պատկեր՝ կենդանական:
Զի տարազոյգ՝ թուովս այսքան,
բերկրի ԱԾ՝ միանգամայն ||:

Եւ սակայն զոր ինչ բերէ նա ինքն վիրգիլիոս 'ի կումենայ սիբիլլայէ, 'ի Ծաղկաքաղն Դ. և յարմարէ խորումն ժամանակի, ը՟ ինքեան երևին հայիլ առ ք՟ս. թէպէտ և ինքն առ այլ ոք ուղղեսցէ զբանն. արժան է լսել և որոշել ը՟ միտս:

* Ահա եհաս՝ մեզ դար վերջին,
կումեան տաղի՝ (սիբիլլային).
Նոր ծնանի՝ մեր շրջանին
կարգ, 'ի դարուց դարուց կարգին:
Ահա դառնայ՝ և կոյս ինքնին,
արքայութիւնըք կռոնոսին.
ահա նոր զարմ ազգատոհմին,
յերկնից բարձանց առաքելին:
Դու ողջախոհ՝ լուսին տիկին,
լե՛ր առընթեր՝ այս նորածնին.
մանկան՝ ասեմ, առ որով հին՝
ազգ դադարէ՝ տխուր երկաթին:
Եւ ը՟ ոլորտս բոլոր երկրին,
ազգ յարիցէ՝ ստոյգ ոսկին.
քոյդ աւասիկ՝ պայծառ արփին,
թագաւորէ՝ քո պանծալին:
Եւ արդ 'ի քում 'ի հիւպատին,
ով պողիոն, ընկսանելին,

այս

այս փառք դարուց քարոզելին,
և մեծ սխրանք յառաջ շարժելին (յուլիս. օգոստ)։
Աւ.քն՝ մեղաց մեր հետք յետին,
ջրեալ յաւէժ անհետ լինելին.
կեցցէ՛ նա ինքն արփին վերին,
զծծեղէն կեանս գլխովլին։
Յածարեալ արանց մասին,
տեսցէ զընտիրս, տեսցի նոցին.
և տնտեսէ առաքինին,
զերեսս հանդարտ՝ մեծ Տին։
Այլ քեզ մանուկ՝ նախ զառաջին,
ոչ մշակեալ բերք ընծային.
'ի տուն խաշինք բերեն ինքնին,
զծանրացեալ կաթամբ ըստին։
Եւ ոչ անդեայք անդ երկնչին,
և՛ յառիւծուց իսկ ահագին.
և առընթեր օրօրոցին,
ծաղիկք փափկիկք քեզ զեղանին։
Սատակեսցի և ազգ օձին,
Թոյն կորիցէ մոլեխնդին....
Աւ այսպիսի դար անձկալին,
իւրեանց ողջոյն՝ յորդոր տային,
ընթացարո՛ւք, դո՛ղ ասէին,
պարկայք՝ հինիչք ամանակին։
Եւ արդ քանզի եկին հասին,
լե՛ր փառաւոր՝ ըստ արժանին.
ծծորդի՛դ սիրուն անդին,
փառք աճեցուն՝ հօրըն վեհին (կմ՟ արամազդին)։
Նայեա՛ց յԾ երերալին,
իւր ծանրութե՟ կորնթարդին.
նայեա՛ց յերկիր 'ի ծագ ծովին,
նոյն և 'ի բարձր երկինք խորին։
զի միաբան ուրախ լիցին,
'ի հանդերձեալ 'ի դար քոյին։
Իցի՛ւ թէ, ո՛հ, ինձ մնային,
յերկայն կենաց՝ բաժինք յետին.
և բաւական առ այդ՝ ոգին,
ըղձքոյդ ճառել գործս առանձին։
Ո՛չ ինձ յաղթէր երգովք տաղին,
որփէս Թրակ, կամ լինոսն հէն.
մին 'ի գով մօր՝ կալլիոպեայ,
միւսն հօր չքնաղ՝ ապողոնին։

Թէպէտև զան արկադացին,
  գայր 'ի պայքար ինձ 'ի դաշտին,
  անդէն վկայ լինէր ինքնին,
  Թէ պարտութեն խոստովանիմ:
Արդ սկսիր մանաղածին,
  ծաղու ծանօթ տաղ մօր քոյին.
  շատ են մօր քո́ առ ժոյժ սրտին,
  ամօք անձուկք՝ 'ի տես նախկին:
Արդ ցոյց առեմ զցո́ց խնդին,
  զի և ծնօղք խրատ ուսցին,
  Թէ անժպիտք չարժանացին,
  և ո՟չ՝ իսկ սեղանին||:

Պողիոնն յիշատակեալ 'ի վիրգիլեան՝ նոտաւ հիւպատոս երեսուն և եօթն ամօք յառաջ քան զծնունդն ք՟ի. բայց եկաց կենդանի մինչև ցամ ՟ՊՆ 4: Իսկ ինքն վիրգիլիոս մեռաւ իբր քսան ամօք յառաջ քան զծնունդ ք՟ի. վ՟յ ոչ եհաս խնդրոյն՝ զոր յանդգետս խնդրեր, գտանել յաւուրս ն՟ր և գրել զնմանէ: Զայսոսիկ բանս բերէ և եւսեբիոս 'ի վարս մեծին կոստանդիանոսի՝ 'ի բերանոյ ն՟ր ը՟դէմ հեթանոսաց. այլ մեք անցցուք առ սիբիլլայս:

Ամ մատենագիրք հեթանոսաց և քրիստոնէից միաբանին յայսմ, թէ կային օրիորդք կուսանք՝ զգաստք և առաքինիք բնաւորա՟ս 'ի զանազան կողմանս Ծ՟ի նախ քան զգալուստ ք՟ի. և թէ ոմանք 'ի նո՟ցէ եղեն երևելիք իմաստութ՟ և ոգւով իմն քերթողական գուշակութ՟. սոսա կոչեցան Սիբիլլա, որ թարգմանի ա՟ծախոհ, և թէ յանուն սոցա գտանին գրուածք ինչ զարմանալիք եթէ 'ի նոցանէ իցեն յօրինեալ, և եթէ յայլոց յանուն ն՟ց ընծայեալ 'ի հին դարուց. յորս են այնպիսի յայտնի գուշակութիք զք՟է, ո՟մ թէ յաւետարանէ առեալ իցեն՝ սկսեալ 'ի ծննդենէ փրկչին մինչև 'ի չարչարանս և 'ի յարութի և 'ի համբարձում՟ն ն՟ր, հանդերձ երևելի անօրինական գործովք: Ընդ այս ոչ միայն հեթանոսք զարմանային, թէպէտև ոչ քաջ իմանային, այլև քրիստոնեայք. որք եթէ հաւատս ընծայելով՝ և եթէ չընծայելով, իրաւունս ունէին բերել անտի վկայութիս ը՟դէմ հեթանոսաց. զի 'ի հեթանոսաց միջի գտին զայն մարգարէութիս. վ՟յ թէպէտև անլուծանելի է խնդիր ստուգութե սիբիլլեան մատենից, բայց անտարակուսելի է՝ թէ ոչ միայն նեքտաւինէ կոյսն, այլև ժամանակակիցք ն՟ր կոստանդիանոս թագաւոր, լակտանտիոս,

և

և այլ հարք հնագոյնք քան զն՟ա՝ ակնեալ 'ի յուստինոսէ փիլիսոփայէ, 'ի ձեռս առնուլին զայն վկայութիւս իւրաւամբք ընդդէմ հեթանոսաց. օրինակի վ՟ 'ի մէջ բերցուք ինչ ինչ :

Պղատոն, հերակղիտոս, և այլք ոմանք 'ի փիլիսոփայից և 'ի հնախօսից յիշեն ընդհանրապէս զսիբիլլայս իբրև մարգարէուհիս կ՟մ պատգամախօս բանաստեղծուհիս. որպ՟ս և բազմավէպն աղեքսանդրոս 'ի սիբիլլայէ բերէ զպատմութիւն աշտարակաշինութե՟ ն՟ն : Պատմէ սուետոնիոս 'ի վարս օգոստոս կայսեր, թէ նա ետ այրել զայլ ըղձապատում գիրս գուշակութե՟ց, և միայն զսիբիլլեան մատեանս պահեաց ընտրանօք. յորս և ընթացան իբրև 'ի պատգամախօս դաբիրայս հռովմայեցիք յաւուրս աւրելիանոսի կայսեր յամի տ՟ն 271. ը՟ս գրելոյ վոպիսկոսի : Վարրոն յանուանէ թուէ զտասն սիբիլլայս՝ յանուանց ծայց և տեղեայն առեալ. և որ մեծն է, կիկերոն քանզի թշնամի էր ինքնակալութե՟ կեսարու, և անդադոյն պաշտպան հ՟րկապետութե՟, ընթերցեալ 'ի գիրս սիբիլլայից այսպիսի ինչ, թէ * եկեսցէ յերկնից թագաւոր՝ որ լինելոցն է յաւիտեանս||, ջանայ 'ի սուտ հանել զայն՝ 'ի Գիր. գուշակութ. Բ. 54. մերթ ցնորումն կոչելով զայնպիսի նախասացութիւս կանանց, և մերթ կամելով ցուցանել՝ թէ կուսակիցք թզրուե ճարտարեալ իցեն զայն. զի ո՛չ ցնորեղոյ է ասէ այնպիսի ոտանաւոր յօրինել՝ որ իցէ ստիքածայր, ը՟ս որոյ սկզբնատառք յօդեսցեն բան նշանական : Իսկ թէ ո՛ր այն իցէ, հաստատէ մեծն կոստանդիանոս առ եւսեբի, թէ նոյն ոտանաւորն է երիթրեայ սիբիլլայի. որ 'ի սկզբնատառս տողին իւրոյ կայ զայս անուանս. Իէսուս Քրէիստոս, Թէու Իիոս, սոտիր, ստաւրոս. ը՟ս Յ՟ս Ք՟ս Ա՟յ Որդի, Փրկիչ. Խաչ. և բերէ զբովանդակ բանն. զ՟ի զյ՟ն անուն յօդէ այս տաղ.

* Զի քրտնեսցի երկիր, յորժամ նշան դատաստանի
" եղիցի.
" Եւ եկեսցէ յերկնից թ՟գր, որ լինելոցն է յաւիտեանս.
" Հասեալ 'ի դատել զա՟մ մարմին և զտ՟ս համօրէն.
" Եւ տեսցեն զա՟ծ մարդիկ՝ հաւատացեալք և անհաւատք.
" Զբարձրեալն հանդերձ ս՟բվք՝ 'ի վախճան ժամանակի զմարմնազգեացն : Եւ զոգիս արանց դատեսցէ յատենի|| :

Ո՟պ և սկզբնատառք վերջնոյս յօդեն զխաչ յունարէն.

* Եւ եղիցի յայնժամ նշան մեծահռչակ ամ մահկանաց-
,, ուաց՝ օրինակ զայս.
,, փայտն 'ի հաւատացելս եղիցի եղջիւր ցանկալի.
,, Արանց բարեպաշտից կեանք, և ծի գայթակղութ.
,, Ջրովք լուսաւորեալ զհաւատացեալսն՝ յերկոտա-
,, սան աղբիւրսն.
,, Գաւազան հովուիչ երկաթի տիրեսցէ:
,, Սա՝ որ այժմս նախագրեցաւ 'ի տակքածայրս, Աճ մեր՝
,, Փրկիչ, անմահ Թագաւոր չարչարեալ վն մեր ||:

Եւ թէպէտ կարծէր ոք կասկածիլ, թէ քրիստոնեայք առաջին դարուց յաւելեալ իցեն զայսպիսիս, որպս և առարկէին ոմանք 'ի հեթանոսաց, բայց զայդ չառնուն յանձն ոչ կոստանդիանոս՝ որ գիտակն էր ամ հեթանոսական հնութեց, և ոչ այլք 'ի հարց. զի լակտանտիոս 'ի գիրսն յաղագս ճշմարիտ իմաստութե, գ. 15. բերեալ զայսոնի գուշակութիս սիբիլլայից վն չարչարանացն քի և յարութե, 'ի վր ածէ. * 'ի վկայութեց
,, սուտ յաղթահարեալ ոմանց՝ սովոր են յայն ապաստան
,, լինել, զի ասեն՝ թէ այդ տաղք չեն սիբիլլեան, այլ՝
,, ոմ թէ 'ի մերոց սուտ յօդեալ և յարմարեալ իցեն:
,, Զոր ոչ է՛ մարթ կարծել այնմ, որոյ վերծանեալ իցէ
,, զկիկերոն և զվարրոն և զայլ նախնիս, որք զերի-
,, թրէա սիբիլլայն և զայլսն յիշատակեն. և 'ի գրոց
,, նց զայդոսիկ օրինակս յառաջ բերեմք. ուր այն մա-
,, տենագիրք մեռան, մինչև էր քի ըստ մարմնոյ ծնեալ ||:

Զօրաւոր ևս է պխնի որոգինեայ առ նոյն ընդդիմութե կելսոսի եպիկուրեան փիլիսոփայի. գիրք. է. գլ. 56.
* Մ'չ գիտեմ, զիարդ կամի (կելսոս), զի մեք առա-
,, ւել զսիբիլլայն կոչեսցուք որդի այ՝ քան զյն, ապա-
,, բանեալ՝ թէ յաւելուածով գրեալ իցէ մեր 'ի նո-
,, րայսն՝ բանս բազումս և հայհոյականս. և ոչ ցուցեալ
,, և ոչ միով իմիք զայն, թէ զի՛նչ ինչ յաւելուածով
,, գրեալ իցէ մեր: Եւ ցուցանէր արդեօք, եթէ զհնա-
,, գոյնս և զմաքրագոյնս նշանակէր ('ի ձեռագրաց),
,, և զոչն ունօղս՝ զոր միանգամ համարի յաւելուածով
,, գրեալս. և ոչ իսկ զայն եցոյց, եթէ հայհոյական
,, իցեն այնպիսիկ ||:

Յայսցանէ և յայլ բազում բանից յայտնի է հնութն սիբիլլեան գուշակութեց. զորոց չէ տեղւոյս վիճել. իսկ եթէ զյետին քննչաց դատաստան կամիս իմանալ, այսպէս խօսի իմաստունն պագիոս և այլք ընդ նմա. * Կան
,, պատգամք սիբիլլայից յեօթն գիրս ոտանաւորաց,
,, սփռեալք

,, ամփոփեցէք 'ի մատենադարանի հարց, զորս նախնի հարք
,, սոփեալ յառաջ բերեն 'ի հաստատութիւն քրիստոնէա-
,, կան կրօնի : Այլ թէ այնոքիկ իցեն հարազատ յօ-
,, րինուածք սիբիլլայից, վէճ մեծ յուզեցաւ 'ի մերումս
,, դարու. տես զգործս վ՟ն սոցին իրաց 'ի լոյս ընծա-
,, եալս. քանզի մեզ աստանօր շատ է ասել, թէ թէ-
,, պէտև ոտանաւորք սիբիլլայից չիցեն ճմ իրօք հա-
,, րազատք և անվթարք, բայց սակայն զոր միանգամ
,, յառաջ բերեն նախնի հարք, չէն յօդեալք 'ի քրիս-
տոնէից || :

(4) Զոր օրինակ բազմաց 'ի մէջ մարմինք 'ի սկզբան անյայտ մնացին, և յետ դարուց բազմաց յայտնեցան՝ եթէ սքանչելեօք, և եթէ իմիք յաջողուածով՝ հանդերձ յայտնի նշանակօք անուան իւրեանց, սոյնպէս եղև և գիւտ նշխարաց սրբոյն Նեքտարիոսեայ՝ ոչ կարծի, 'ի յաճախել քրիստոնէից յերկիրն պաղեստինոյ և 'ի լեառն սինեական. ուստի և յետ առման եղծմի յարևմտեայց առաւելաւ ջերմեռանդութիւն նց առ նը վկայուհիս : Այլ անհնեթեթ է ձեռնարկելն ստուգապէս նորաղանդից ոմանց, թէ յետ այնորիկ յարմարեալ իցեն և զպատմութիւն Նեքտարիոսեայ. ուր յարևելս 'ի սկզբանէ հետէ կայր վկայաբանութիւն նր. ոչ և թարգմանութիւն մերումս օրինակի 'ի յունականէն երևի լինել յառաջ քան զառումն եղծմի, կմ զայնու ժամանակաւ 'ի բուն և 'ի հին մատենից յունաց : Իսկ կատարումն տօնին ՟ը տօնացուցից կայր 'ի սկզբանէ հետէ՝ ուստի ընդհատ յայլոց նախնի սրբոց :

ՎԵՐՋ

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սբ̃ց իշխանացն հայոց՝ Սահակայ և Համազասպայ:

Հ. տարբ. 8. կամ ահեկե. ա: Կատարեցա. Ա. Նոյ= Նոյ: Ատուլեկ. Է. 4. և այլք: (1)

ՓԱՌԱՒՈՐ ԻՇԽԱՆՔՍ մեր Սահակ և Համազասպ եղբարք հարազատք, էին պատուականն նախարարք ազգին Արծրունեաց, և տեարք երկրին Վասպուրականի՝ ընդ եղբօր իւրեանց Մերուժանայ, որդիք Գագկայ Արծրունւոյ որդւոյ Վահանայ, յաւուրս Եսայեայ կաթուղիկոսի յութերորդ դարու, և 'ի կայսերութե̃ Կոստանդնի և Երինեայ, և յամիրապետութե̃ Մուսէի, և եղբօր նր̃ Հարոնի: Յորում ժամանակի նեղեա̃լ իշխանաց հայոց 'ի հարստահարութե̃ այլազգի ոստիկանաց 'ի բաց վանեցին զն̃ո յերկրէն. և իւրաքանչիւր նախարարք նստէին 'ի սեպհական գաւառս, և պահէին 'ի թշնամեաց: Իսկ զի մեծ էր 'ի մէջ ամ̃ նախարարաց Համազասպ Արծրունի, նա ոպ̃ մարզպան համարեալ լինէր երկրին. և եղբարք նր̃ Սահակ և Մերուժան՝ օգնական նմա. և էին երեքեանն

քեանն իսկ արք անուանիք և քաջք՝ 'ի պա-
տերազմունս . և 'ի կրօնս և 'ի կարգս քրիս-
տոնէութե աներկբայ և անսայթաք . գնային
յօրէնս և 'ի պատուիրանս տն անարատք .
մանաւանդ երկոքին երանելիքն Համազասպ
և Սահակ :

Իսկ սկզբնաչարն սատանայ մախացեալ ընդ
պատուական արանցն բարեհամբաւութի՝
նախանձ ըդէմ վառէր նր 'ի սիրտս արքանե-
կաց իւրոց . քանզի արք ոմանք սուտակաս-
պասք քսութիս զնոցանէ 'ի դուռն ամիրա-
պետին առնէին , և ամբաստան լինէին , թէ
երեքին այն եղբարք արծրունիք են պատ-
ճառք ապստամբութե հայոց երին , և ձեռն-
տուք 'ի յոյնս :

Ընդ որ սաստիկ զայրացմամբ բորբոքեալ ա-
միրապետին մուսէի՝ յորդորեաց զեղբայր իւր
զհարոն , որ և ահարոն , վրէժ խնդրել 'ի նո-
ցանէ . քանզի նմա իսկ յանձն եղեալ էր հոգ
հայոց երին . և նա իսկ և իսկ փութանակի յղեաց
'ի հայս ոստիկան զոմն եզիտ անուն , և ընդ
նմա զհազարապետն խուզիմայ , զօրու ծա-
նու՝ ահ արկանել յամենեսին , և նուաճել
զապստամբսն սպառնալեօք և ողոքանօք . և
առնուլ զվրէժ յիշխանացն արծրունեաց՝ կէս
յայլազգութի դարձուցանելով , և կէս մա-
հու սպանանելով :

Եկեալ սոցա 'ի հայս՝ խաղաղութբ նուա-
ճեցին զամ իշխանս . ապա փութացաւ հա-
զարապետն յղեաց կոչնականս և զերեցունց
արծրունեաց՝ գալ նր առ նա սիրով խաղա-
ղու.

զութ , ոչինչ յայտնելով զոր ինչ խորհեին եւին զնոցանէ չարիս ։ Իսկ նք քանզի ոչինչ գի-տէին զանձանց իւրեանց խիղճ , ելեն գնացին աներկիւղ համարձակութբ զկնի եկելոց կոչ-նականացն , թէպէտեւ 'ի կասկած լինէին 'ի նց խարդախութէն . և զվերակացութի Ծին և զգործ իւրեանց տային 'ի ձեռս դաւթի մամիկոնէի ։ Իբրև ետես զնոսա հազարա-պետն , ընկալաւ առ ժամն վեր 'ի վերոյ մար-դասիրութբ . և ապա պատճառանօք էանց գնաց 'ի քաղաքն պարտաւ՝ ը իւր տանելով զպատուական նախարարսն արծրունեաց ։ Իսկ իբրև հասին անդր , զպատրուակեալն վն նց չարիս յայտնի կացուցանէր , առաջի դնելով նոցա՝ կա՛մ 'ի բաց կալ 'ի հաւատոցն քի , և կամ մեռանել խոշտանգանօք . զի զայս խորհեցան այլազգիքն , եթէ ոչ այլազգ է մեզ անկասկածելի մնալ 'ի քաջ արանցս , բայց զի կա՛մ 'ի բաց վճարեսցին 'ի կենաց , և կմ դարձցին յերկրպագութէ քի՝ 'ի բաց կալով 'ի հաղորդութէն յունաց ։ Իսկ քաջ նախարարքն ընտրեցին զմահ քան զկեանս ուրացութբ . վնյ հազարապետն ետ դնել զնս 'ի բանտ կապանօք հանդերձ . և յղէր առ նն պատգամս՝ խրատելով յանձն առնուլ զդենն իւր , և զկարծեցեն խորհուրդսն ապս-տամբութե 'ի ձեռն այնր իրի բառնալ 'ի մի-ջոյ , և սիրելի լինել ամիրապետին , և պար-գևս և պատիւս մեծամեծս ընդունել նոցա յարքունուստ , և ևս 'ի մեծագոյն ձգիլ գա-հակալութիս , և հաւատարիմ լինել 'ի դրանն

ար-

արքունի, և շքեղ և երևելի ը՟ ա՟մ կողմանս տ՟րութե՟ն տաճկաց. քանզի և խոստանայր յերկրորդական կեղծաւորեալ հատուցանել պատիւ ։

Բայց քանզի հիմնացեալ էր 'ի միտս և 'ի խոր-հուրդս ն՟ց հաւատք ս՟բ երրորդութե՟ն 'ի վ՟ր առաքելական վիմին հաստատնոյ, իբրև ըղ-խաղս մանկտւոյ և զառասպելս պառաւանց զայն 'ի նմանէ խոստմունսն համարէին. և իբրև զմեքենայ ինչ յամուր պարսպէ 'ի բաց դառնային առաքեալքն առ ն՟ա արքա-նեակք չարին ։ Դարձեալ վերստին սպառ-նալիս յղէր ն՟ց խոշտանգանաց, և կտտամահ տանջանօք զրաւ կենաց ն՟ց առնել խոստա-նայր 'ի ձեռն չարաշուք դահճացն. որք և եկեալ 'ի բանտ անդր՝ ահ արկանէին 'ի գործ-դնել զսպառնալիս հազարապետին, և չարա-չար սատակել զն՟ս ։

Անըմբերելի գտաւ ահարկութիս 'ի միտս մերհուժանայ օգտելոյ 'ի միաբանութէ եղ-բարցն, և 'ի Թուլամիտ վատասրտութի վա-րակելոյ. մինչ զի և նախ քան զմտանելն 'ի տանջանս՝ ինքնակամ մերկացեալ զհաւատոյն զգեստ՝ զառ 'ի քս՟ մկրտուէ օծումն, ձախողա-կի դիմեցմամբ անյապաղ փութով եղ դնաց յանդիման հազարապետին 'ի տեղի կործան-մանն. յանձն առնոյր արագա՟պ Թլփատիլ. և այն՟պ եղ նա արտաքս իբրև զուռն, և ցամաքե-ցաւ փութա՟պս 'ք զԹզենին՝ որ ոչ պտղաբե-րեաց տ՟ն իւրում ։ Նա և եղեալ գայր իշխանա-կան ձօխութ՟բ՝ երթալ մտանել յ՟ն վա-

պու

պուրական, տիրել փոխանակ եղբարց իւրոց, զորոց գիտէր զհաստատուն միտս նոցա 'ի ք(րիստո)ս և զկամակար յօժարութիւն 'ի մահ: Զայս լուեալ դաւթի մամիկոնեան՝ փութացաւ վաղվաղակի ընդ առաջ ուրացելոյն, պատահեաց նմա, և եհատ զգլուխ նորա. և եբարձ զնախատինս նորա 'ի տանէն արծրունեաց. և այնպէս յերկոցունց զրկեցաւ կենաց մերհուժան:

Իսկ երիցս երանելիքն համազասպ և սահակ, որք հաստատեալ շնորհօք 'ի սէրն ք(րիստոս)ի՝ միայնին ծարաւեալ ոգւով հանդիսի նահատակութեան, իբրև լուան զգլորումն եղբօրն իւրեանց, և զազդեցութիւն չարին 'ի մէջ նոցա, մեծակական ողբովք՝ դառնապէս արտասուօք, և անհանդուրժելի հառաչմամբ ձայն ողորմելի բարձրացուցանէին 'ի վեր առ յոյսն իւրեանց ք(րիստո)ս. զի մի գուցէ մերկացեալ լիցին 'ի նախախնամութենէ պահպանող ամրածածուկ ձեռացն ա(ստուծո)յ, և մի ըմբռնեալ 'ի հնարս բանսարկուին՝ գունակ եղբօրն թշուառականի ը(նդ) չարադժնեայ լծակցեսցին հոգւոց. այլ զի կացցեն մնասցեն հաստատուն 'ի հաւատսն ք(րիստոս)ի, յոր լուսաւորեալ կնքեցան հոգւովն սրբով: Սոյն և մտադիւր տանէին կապանաց բանդին, և ամ(ենայն) խոշտանգանաց. և խնդրէին 'ի բազումողորմ ք(րիստոս)էն՝ գտանել պարգևս հանդիսի մարտիրոսական նահատակութեան:

Իսկ ամենաչարն դարձեալ սաստկագոյն քան զառաջինն զինէր զորբանեակն իւր զհազարապետն ը(նդ)դէմ ն(ոցին)՝ սպառնալեօք և ահարկու-

կութիւնք , և ողոքական խաբէութիւնք ․ զի թերևս կարասցէ 'ի վայր կործանել զնոսա 'ի հրապոյրս պղտորս մահածինս մոլար մտաց ։ Առ յանդիմանակաց միմեանց ատեան գործեալ հրապարակակոյտ ամբոխին , կոչեաց հազարապետն և զայլս ոմանս 'ի նախարարացն հայոց , որք 'ի հանդիպմանն նորին եկեալ էին ․ զորս և միջնորդ կալեալ էր առ պատրանս մոլորութեան՝ ասել ցհամազասպ և ցսահակ , թէ գոնէ առ արտաքս կատարեցէք զկամս հազարապետին , պահելով 'ի սրտի զհաւատս քրիստոսի ։

Բայց սուրբ վկայքն հերքեալ զամենայն հրապոյրս չարին , և ոչինչ զանգիտեալ 'ի մահուանէ , համարձակաձայն դաւանեցին յատենի անդ զճշմարտութիւն քրիստոնէական հաւատոց , և յայտնապէս ընդ վայր հարին թշնամանօք զդենս մոլորութեան ։ Քանզի քաջայուշ մտաւոր բանաւորութիւնք և աւետարանական պատմութիւնքն զառ 'ի քրիստոս հաւատոցն մի ըստ միոջէ կարգաբանութիւն , զանսկզբանական էութիւն բանին առ հայր , և ըստ ժամանակի տնօրէնութեան հանդէս , և զմիաւորական երրորդութեան աստուածաբանութիւն՝ աներկիւղ համարձակութեամբ առաջի բռնաւորին համառօտ եդեալ , անդրդուելի զանձինս 'ի նմին ճշմարտութեան վկայէին լինել ․ մինչ զարմանալ ամենեցուն ընդ համարձակութիւն նոցա մեծաւ հիացմամբ ․ Եւս առաւել յորժամ յաւելին անարգել զօտարոտի կրօնս և զպաշտօնէայս մոլորութեան , վասն անունկնդիր գոլոյ նոցա տիեզերալուր առ-

'ի

'ի քն̅ հաւատոցն 'ի քարոզութե մարգարէիցն
և նրց առաքելոցն ուղղապատում վկայից
ածութե̅ն քնի ։ Որպէս և զխրատատու չա-
րութե զնախարարսն ըմբերանեցին բանիւ-
ածն ․ մինչև իսպառ կորանալ նոցա , և յոյժ
մտապահ լինել է սպառնալիս տրունեան
ահարկութեցն ․ զոր եդին առաջի նց նքն
զասացեալսն կենարար փրկչին , թէ որ գայ-
թակղեցուցանէ զմի 'ի փոքրկանցս յայսցա-
նէ յիս հաւատացելոց , լաւ էր նմա՝ թէ կա-
խեալ էր քար երկան իշոյ զպարանոցէն , և
ընկղմեալ 'ի խորս ծովուն ․ և դարձեալ՝ եթէ
վայ մարդոյն , յորոյ ձեռն գայցէ գայթակ-
ղութի ․ լաւ էր մարդոյն այնմիկ , եթէ չէր
ծնեալ ։

Իսկ բռնաւորն զայրացեալ յոյժ յոյժ՝ առա-
ւելապէս տառապանօք վարանէր է արհա-
մարհանս առաջնորդին իւրեանց , և է նա-
խատինս անուանեալ օրէնսդրին ․ և յապուշ
կրթեալ մտօք , եթէ զինչ խորհեսցի չարու-
թի ընդդէմ նրցն , անգիտանալ թուէր ։
Այնուհետև ետ հրաման անյապաղ զրաւ-
առնել կենաց նց ․ և դահճացն առեալ տա-
նէին զնս 'ի տեղի նահատակութե̅ն ։

Իսկ նրցն ձեմս առեալ 'ի գնացս՝ այնպէս
սիգաքայլ գնացին ընթանային , ոչ որք
յառագաստ հարսանեաց հրաւիրեալ կոչին ,
անտրտում ուրախութբ առ հանդէս մար-
տիրոսութե դիմեալք ։ Եւ մինչդեռ զգնային
և երթային միաբան երկոքին հարազատքն ,
սկսան յորդորել զմիմեանս՝ աներկիւղ հա-

մարձակութեամբ մատչել ՚ի տեղի մարտիրոսական վկայութեանն, և մի՛ ինչ փոյթ յանձին ունել հոգ տանել զկենաց աշխարհի, զկանանց և զորդւոց ․ և ասեն առ միմեանս ․

Յուշ լիցին մեզ աւետիք գալստեան յուսոյն մերոյ քրիստոսի, զոր ասացն, եթէ ոչ ոք է՝ որ եթող զտուն կամ զկին կամ զորդիս կամ զագարակս հալածանօք հանդերձ վասն իմ, կամ վասն աւետարանին, եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ յաշխարհի յայսմիկ, և ՚ի հանդերձելումն՝ որ գալոցն է՝ զկեանսն յաւիտենական ։ Յուշ լիցին մեզ պետրոսի առ փրկիչն ասացեալքն, և պատասխանեալքն ՚ի փրկչէն, եթէ դուք՝ որ եկիք զկնի իմ, ՚ի միւսանգամ գալստեան իմում նստջիք յաթոռս իշխանութեան, զոր հաստուցից ձեզ ։ Յուշ լիցի մեզ յորդորումն փրկչին․ եթէ ոք կամեսցի զկնի իմ գալ, ուրասցի զանձնն, և առցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ, և՝ եթէ ոք կամեսցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա ․ և որ կորուսցէ զանձն իւր, գտցէ զնա ։ Յուշ լիցի մեզ և կինն ղովտայ, որ նայեցաւն ՚ի սոդոմ ։ Յուշ լիցի մեզ սպառնալիք և խոստաբանութիւնք փրկչին առ խոստովանօղս և առ ուրացօղս ․ մի՛ շլասցուք երթալ զհետ կոչողին ՚ի յաւիտենական հանգիստն, առնուլ ՚ի մեզ զքաղցր լուծն, և զթեթև բեռնն ։ Ո՛չ վայելէ աշխատաւոր մշակի ձեռն զմաճով արկանել, և հայել յետոյսն ․ ոչ ոք զինուորի ՚ի ձգունս աշխատասիրեալ, և ՚ի կարգս զինուորականս որոշեալ, պատաղմունս բաջաղմանց զինքեամբ

շուրջ դիցեն՝ եղծանել զմարտնչելն ընդ օրէ-
նին, և յետնել զտանիցի 'ի պսակողին հա-
տուցմանց. մի՛ զարհուրեսցուք յայնցանէ՝ որ
սպանանեն զմարմինն, և այլ աւելի ինչ ոչ
կարեն առնել. համբերութե̅ մերով ստաս-
ցուք զոգիս մեր: Հայեսցուք 'ի զօրագլուխն
հաւատոց և 'ի կատարիչն յս̅. զի որում կալ
մնալն էր խաղաղութի 'ի փառս բնութեան
ածութե̅ իւրոյ, վս̅ մեր մեղաւորացս հնազանդ
եղև մահու խաչի. ապա և մեք պարտիմք
վս̅ նորա մեռանել, մանաւանդ թէ վս̅ մեր
իսկ. և եթէ արդարն 'ի վերայ անարդարոցս
մեռաւ, ապա և մեք պարտիմք երթալ զհետ
օրինակի հետոց մահու նր̅: Մի՛ ամօթ հա-
մարեսցուք վկայ լինել ածութե̅ նորա մահ-
ուամբս մերով. զի մի՛ և քս̅ յամօթ արասցէ
զմեզ, յորժամ գայցէ փառօք հօր իւրոյ և
հրեշտակաց ս̅րբց. որպէս և գրեալ է: Իսկ ես
բազում օրինակ յորդորմանց մի ը̅ միոջէ կար-
դեցին եդին առ միմեանս՝ կալ հաստատուն
'ի հաւատսն քս̅ի. բարիոք համարել զմեռա-
նիլն վս̅ սիրոյ նր̅՝ քան առժամանակօքս յօ-
րանալ, և արտաքոյ մնալ երկնաքաղաքացի
Ճոխութե̅ փառաց ս̅րբ երրորդութե̅ն:

Երթայր զկնի նոցա և բռնաւորն հանդերձ
նախարարօքն հայոց, և այլ բազմամբոխ
դասք 'ի քաղաքէն 'ի տեսիլ նահատակութե̅
ս̅րբցն: Զայն զկնի արձակեալ բռնաւորին
ասէ. ը̅նդէ՞ր տարապարտ մեռանիք՝ անունկն-
դիր իմոյ քաղցրահնչիւն ողոքական բանիցս,
չտացեալ ձեզ լսարան. դարձարուք 'ի յա-
մա-

մառեալ իմացմանց այտի մնոտեաց , եւ կեց-
ջիք ը՟ մեզ : Սրբքն ասեն . լո՛ւաք քո՟ աւե-
տարեր եւ կենսածին վ՟ղպուե , եւ նմա ծա-
ռայեցուցաք զլսելիս մեր . որով սրբեցաւ-
առաջին աղտեղութի բանսարկուին . մի՛ լի-
ցի լսել մեզ դարձեալ կործանօղ եւ դառնա-
շունչ ձայնի քո , որ 'ի կորուստ անդիւտ ձգէ
զմեզ . պարգեւեք քո եւ վայելք քեզ եւ նմա-
նեացքոց եղիցին , եւ մի՛ մեզ՝ որ հասեալ եմք
'ի վ՟ր ճշմարտուէն՝ 'ի ճաշակմանէ հոգւոյն
՟րբյ կրթարանէ առ 'ի յընտրել զբարի եւ
զչար : Որո՛վ միահու հաճոյ թուէի քեզ՝ կա-
տարեալ զհրամանն արքունի զառ 'ի բան-
սարկուէն ազդեալ . մեք պատրաստ եմք 'ի
մեռանել իբրեւ զոչխարս՝ 'ի սէր վ՟ր մեր կա-
խեցելոյն զփայտէ դառինն անմահի , որ
բառնայ զմեղս աշ՟ի :

Իսկ իբրեւ հասին յասպարէզ նահատակու-
թե՟ն , եւ դահիճքն սուսերս կազմէին ը՟ հրա-
մանի բռնաւորին , յայնժամ ՟րբքն որ կային
'ի հանդիպօղ մեկուսի յամբոխէն , ծունր
կրկնեալ՝ յորդահոս արտասուօք աղօթս ա-
բարին առ ք՟ս , զի հասցէ յօգնականութիւն
իւրեանց զօրացուցանել զն՟ս անվեհեր մտօք
մատչել 'ի տեղի զենմանն բանաւոր պատա-
րագին : Եւ այս մատեան սպասաւորք չարին
սրով 'ի կատարումն ՟րբցն :

Յայնժամ երկնագոյնն համազգապ ասէ ցե-
բանեալն սահակ . Արսէր ը՟ մարմնոյ հանդե-
րեալ քո իմումեղբայրութէս՝ այժմ անդրէ-
նէն վկայ լինիցիս քան զիս . փոքր ինչ թուէ-

ցեալ երբեմն առ իմով իշխանութիս՝ արդ ա-
ռաջին գահանստեա՛լ լինիջիր՝ առաջին քոյ-
ով մարտիրոսական վկայութեդ ․ զառա-
ջին նոհագն ես ըմպէի ՚ի բազմականին , յոր-
ժամ զոհարթարար բաժակն զմայլեալք
ուրախ լինէաք մարմնական խրախճանութէ ․
այժմ դու յառաջ արբցես զբաժակ փրկութե
քոյ , և փառաւոր լիցի անուն տն նախ ՚ի
քում նահատակութեդ ։ Իսկ սրբն սահակ
խրախսամիտ ընկալեալ զայն հրաւէր մեծա-
րանաց՝ իբրև ՚ի հրահանգարանէ մարժող
դաստիարակէ յառաջ եւ արիաբար ընդէմ
սրոյն ․ և կնքեալ զնմ զգայարանսն նշանաւ
սրբ խաչին՝ խոնարհեցոյց զպարանոցն առա-
ջի սրոյն ․ և դահճին ձգեալ զսուրն՝ եհատ
զգլուխ երանելոյն ։

Յայնժամ սրբյն համազասպայ համբարձեալ
զձեռս իւր յերկինս՝ ասէ ․ գոհանամ զքէն
հայր տն մերոյ յի քի , որ արժանի արարեր
զմեզ մեռանել վն անուանդ քում սրբոյ , պա-
հելով զյոյսն մեր հաստատուն՝ որ ՚ի քեզ ․
և ուրախ արարեր զմեզ ՚ի ձեռն մխիթարիչ
հոգւոյդ քո սրբոյ ՚ի մեզ բնակելոյ , տալով
արհամարհել զփառս անցաւորս , և զլքա-
նելիս մերկանալով զհին մարդն՝ զգենուլ
զնորն , որ է պատկեր որդւոյ քո , որ հրաւի-
րեաց զմեզ ՚ի կոչումն երկնաւոր հարսա-
նեացդ ։ Փառք քեզ որ և զուգահաւասար
երրորդութե , որ նախաժամանեցուցեր զեղ-
բայրն իմ հանդիսանալ և յաղթել հակառա-
կորդին , և ուրախ արարեր զիս բաժակա

յոր-

յորդահոս վտակի հեղման արեանն սահակայ, որոյ անուննն խնդութիւն թարգմանեալ է։ Լո՛ւր տէր խնդրուածոց իմոց հեղմամբ արեան ծառայիս քո, որ կամաւորաբար ըդմեռանել յանձն էառ վն փառաւորեալ անուանդ քո մեծի և ահաւորի՝ լինել վկայ կատարեալ քո ճշմարիտ տէրութեանդ. որոյ էութի երրորդութեանդ ոչ է բաժանեալ ՚ի խոստովանութենս մերում, և անձնաւորութիւն երից դիմաց և մի տէրութեանդ ոչ է շփոթեալ ՚ի վկայութենս մերում, յն ամպարիշտ խեղադարութեն նեղչաց մերոց, յորոց աստանօր կրեմք զվկայական տանջանս։ Այս է ժամանակն կանխասացութեն քո, զոր ցուցեր խորհրդակցաց քի, եթէ եկեսցէ ժամանակ, զի որ սպանանիցեն զձեզ՝ համարիցին պաշտօն մատուցանել այ։ Արդ ընկալ տէր զբանական պաշտօն զենմանս մերում ՚ի փառս որդւոյ քոյ, և ՚ի պատիւ զուգափառ հոգւոյդ նորոգողի զարարածս քո։ Լո՛ւր տէր պաշտանաց ծառայիս քո, և արժանի արա խառնիլ արեանս իմոյ յարիւն եղբօրն իմոյ, որ հեղաւ վն նբ արեան միածնիդ վն մեր հեղլոյ. զի միաբանեալ վկայական ձգնութեամբս՝ փառաւորեսցի անունն քո ՚ի նահատակութեանս մերում. զի քո է իշխանութիւն և տէրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից,

ամէն։

Նա տեսեալ զքյն՝ եթէ տակաւին դանդաղին դահիճք հատանել զգլուխ իւր (թերևս անոտի յուսով ահ արկանելոյ նմա արեամբ եղ-

եղբօրն ), յաւէլ յերկարել յաղօթս. և դարձեալ համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ լի հառաչանօք փոխահեղձ արտասուօք հարուստ մի ժամ աղօթս վասն Տէր և նորուն բնակչաց, և որք զկնի իւրեանց տիրել հանդերձեալ էին, մատուցանէր՝ այսպէս ասելով. Ո՜վ փրկիչ Տէր, յերկրի երևելով քո՝ խաղաղութի աւետարանեցեր 'ի ձեռն աշակերտաց քոց. մի՛ անտես առներ և այժմ զաղաչանս ծառայիս քո. և դարձուցես զցասումն քո, և անցուցես զյարձակմունս թշնամեաց, և խաղաղացուցես զեկեղեցի քո խաղաղութբդ՝ որ ոչ անցանէ. զօրավարաց և զօրաց հայաստան Տէր բարեյաղթութեան շնորհս ընդէմ պատերազմողացն շնորհեսցես, և զբնակիչս երկրի դադարեցուցես 'ի վրդովմանց հողմոց հարաւային յուզմանց, որ խռովէ զմեզ. և զմեր պէտս երկրպագուաց քոց լցուցես 'ի բարեխառնութե օդոց, և 'ի շայեկան անձրևաց, և 'ի բաւականաբուխ աղբերաց ջուրց. և զօրացուցես զտկարութի ժողովրդեան քո բովանդակ ամի՛ 'ի ձեռն ամենազօր բազկի քո. զի քո է կարողութի և զօրութի և պատիւ և փառք յաւիտեանս. ամէն: Եւ զայս ասացեալ խոնարհեցոյց երանելին զպարանոցն ծնկօք կրկնելովք. և նոյնժամայն ըստ ակնարկելոյ բռնաւորին դահճին ձգեն զսուրն՝ եհատ զգլուխ սրբոյ վկային համազասպայ:

Որքա այսմս կատարեցան պատուական նախարարքս ցանկալի մահուամբ և բարի խոս-

տու

տովմանութե՟ , յիշատակ բարի թողեալ յա՟ի 'ի պարծանս եկեղեցւոյ և 'ի փառս ն՟րյ երրորդութՆ ։ Իսկ զմարմինս ն՟րցն ետ կախել բռնաւորն զփայտէ իբր 'ի նշաւակ բազմութե. այլ այն իսկ էին պարծանք քրիստոնէից. որք յետոյ հաւանեցուցին զպահապանս , և ամփոփեցին զպատուական նշխարս վկայիցն, բարեխօս ունելով զն՟ս առ ա՟ծ յիշատակաւ փառաւոր հանդիսի նահատակութե ն՟ց ։ Կատարումն պանծալի և երանելի իշխանացս սահակայ և համազասպայ եղև յամի տ՟ն 785 կմ 786 . այն է 'ի թուին հայոց մլդ , կամ մլե . յամիրապետութե մուսէի , և յաթոռակցութե եղբօր ն՟ր հարոնի . առ որովք հալածումն մեծ լինել քրիստոնէից վկայէ և թէոփանէս պատմագիր յունաց ։ Արդ սովին փառաւոր վկայութե՟ երկուց եղբարց արծրունեաց , յորոց երրորդն մերհուժան 'ի բաց օտեաւ և կորեաւ , 'ի գլուխ ել յայտապատում նախագուշակութի առն ա՟յ ն՟րյն մովսեսի խորենացւոյ 'ի թուղթն իւր առ սահակ արծրունի՝ իբր երեքհարիւր ամօք յառաջ գրեալ . ը՟ որում տեսաք 'ի վարսն՟ր ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) 'Ի նշանակեալ մեծ ճառընտրէ մերմէ հանաք զայս գեղեցիկ վկայաբանութի , իւիք իւիք պարզաբանութ՟բ ը՟ մերումս ոճոյ . անտի քաղեալ է և համառօտութի Հ . Թող զստեփաննոս տաղիկ և զորս զկնի , որք հարևանցի եւեթ նշանակեն ։ Պէտք էին թովմայի արծրունւոյ շառնել

անուես զյիշատակութ պանծալի վկայից իւրումն սեպ-
հական Ծի․ բայց նա յիւրոյ ժամանակի անցս ձեռլեալ՝
հազիւ զնախընթացս դարու զամիրապետս նշանակէ յան-
ուանէ՝ ասելով․ * Զրոյցք ժամանակաց սոցա յայլոց
,, գրեալ յառաջագոյն՝ աւելորդ համարեցաք երկրոր-
,, դել || ։ Բայց մի աւուրցն՝ յորս եղև նահատակութիւն
սբցս, զի ՚ի յառաջաբանի Ճառընտրիս մերոյ առ Ընձան-
բայեցս, թէ * Ընդ ժամանակս թգրութն Լևոնի կայ-
,, սեր ( որ յառաջ քան զԿոստանդին և զեռլինէ ) ․․․
,, սաստկացեալ զօրանայր հալածահարութիւն տաճկաց
,, ՚ի վր քրիստոնէից, յոլովք քան թէ սակաւք եղեն
,, վկայք ՚ի միջագետս ասորւոց և ՚ի կողմանս կապպա-
,, դովկացւոց և յարաբիա || ․ Նոյնպէս և Թէոփանէս
յոյն պատմիչ գրէ ՚ի Է ամի նորին Լևոնի կայսեր այս-
պէս ․ * Մադի իշխան արաբացւոց ․․․ առաքէ զորդի
,, իւր զահարոն ընդդէմ հռոմոց Ծին ․․․ և զմախեզիա
,, ( Ը մեզ խուզիմա ) զնախանձաւորն անուանեալ, որ-
,, ճեալ նմա իշխանութիւն յինքն առարկանելոյ զծառայս
,, քրիստոնէից, և աւերելոյ զՌԲ եկեղեցիս ․․․ Եւ ե-
,, կեալ ՚ի յեմէս ․․․ փաղփաղակի սկսաւ անհնարաբար չար-
,, չարել, ոչ և ոչ լիւսխաս և ապրիկողայսս երբեմն, և
,, զբազումս կորոյս || ։ Ոչ և ՚ի Զ ամի կոստանդնի և
եռինեայ ասէ ․ * Յայսմ ամի մովսէս իշխանն արաբաց-
,, ւոց մեռաւ, և կալաւ զիշխանութիւն ահարոն եղբայր
,, նր Ը նր․ որ և բազում չարիս եցոյց քրիստոնէից || ։
Եւ ՚ի հինգերորդ ամի նորին ահարոնի պատմէ, թէ զեւթն
նահատակեաց նա զթէոփիլոս զօրավար յունաց զայր
քաջ․ որոյ յիշատակ լինի ՚ի Հ․ և Յ․ յունվար ․ 30։ Եւ
եթէ սոյն իցէ ահկի Ա․ նշանակեալ ՚ի Հ․ մի աւուր
կատարման սբց իշխանացն մերոց սահակայ և համա-
զասպայ, յոյնժ ժամանակի անկանի ՚ի յունվարի 7․ թէ-
պէտև Ը անշարժ տումարի Հ․ դնի յապրիլի․ 8։ Ուր
՚ի Ճ․ չէք յիշատակուն աւուր ամսոյ, ոչ և ոչ տար-
ւոյ, եթէ չիցէ զանցառութն գրչաց․ այլ միայն դնի
յաւուրս մուսէի և ահարոնի ։ Հ․ յաւելու զԹուականն
հայոց․ մԼԸ․ իսկ սողին դնէ մԼԴ․ բայց թէ յետ մե-
ռանելոյ մուսէի՝ յաւուրս ահարոնի լեալ իցէ, յայն-
ժամ պարտ է դնել մԼԵ․ ոչ եդաւ ՚ի պատմութեան
հայոց ։

՚Ի բառնալ զերկբանութն մի ամիրապետաց ժամանա-
կին՝ Ճառընտիրն տայ զայս կարևոր տեղեկութն․ * Եւ
,, քանզի երկուք ոմանք ( ասէ ) էին ՚ի ժամանակին
,, յայն-

,, յայնմիկ գլխաւորք տաճկաց, մուսի և աշարոն ան-
,, ուանք նց՝ որդիք մահմեդեայ. յերկուս բաժանեալ
,, էին զնս, զոր էին նուաճեալ է տրութբ իւրեանց.
,, և էր վիճակեալ նն հայոց աշարոնի ||:

Իսկ զասելն Ճ. * 'ի ժմկին յայնմիկ էր հաւատացեալ
,, մարզպանութին համազասպայ 'ի տանէն արծրունեաց.
,, սա տիրէր սեպհական տրութե վասպուրական կոչե-
,, ցեալ իշխանութե ||, այսպէս հարկիմք իմանալ, թէ
յաւուրս փոարանջութե հայք ինքնին իբրև մարզպան
ծանեան զհամազասպ զտրն վասպուրականի. յորմէ և
առթեցաւ նմա նահատակութի. և ոչ զի մարզպան էր
կարգեալ 'ի դրանէ. այլ է համազասպ մամիկոնեան՝ որ
էր փոքր մի յառաջ բուն մարզպան:

Ո'չ յիշէ Ճ. յանուանէ և զեկեալ ոստիկանն կմ զհազա-
րապետն եգիպ, այլ միայն զխուզիմա հազարապետ (որ
և յետոյ եղև ոստիկան). բայց յոքնակի խօսելով՝ յայտ
առնէ և զերկոսեանն յասելն, թէ աշարոն * փութա-
,, պէս յղեաց առ հազարապետն հայոց զոմն, որոյ ա-
,, նուն ճանաչիւր խուզիմայ ||. և թէ, * իբրև եկն 'ի
,, սահմանս հայոց, փութացաւ յղեաց կոչնականս զնչէ՝
,, գալ նց առ նա սիրով խաղաղութբ, ոչինչ յայտնելով
,, զոր ինչ խորհեալ էին զնոցանէ չարիս ||: Զնոյն խու-
զիմա գործակալ կոչէ Հ. որ և բուն գործադիր եղև
նահատակութե սոցա՝ է ոստիկանութբ եգիպտայ. ոչ
յայտ առնէ պատմութի ժմկին:

# ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍՐԲՈՑ

## Եօթանասուն և երկու Աշակեր-տացն քՙի ։ (1)

Դ. տարր. 9. ԷՏ ահեկի է։ Յ. ժամագր. յունվ. 4։ Բոլլանդեանն չորեքը. յուլ. 14։ Հ. ասուրնոփ. Օ. ճհԷ = ճյԷ. 'ի դորոթէոսէ. և այլ 'ի հայոց և 'ի Մենիոնաց ։

ԵՐՋԱՆԻԿ ԴԱՍՔ ԵՕ-թանասուն և երկու աշակերտաց քՙի, որ և բոլորական թըւով Եօթանասունք կոչին՝ ըստ սովորական ընթերցուածոյ յունաց (2), գործակիցք էին առաքելոց երկոտասանից՝ իբր քորեպսունք եպսաց. յորոց և բազումք՝ եթէ ոչ ամենեքին, եպսունք իսկ եղեն, և առհասարակ առաքեալք ասին և են. քանզի և զսոսա տէրն ինքնին ընտրեաց, և առաքեաց 'ի քարոզութիւն երկուս երկուս, նախ 'ի սահմանս հրէաստանի, և ապա յետ յարութՙե իւրոյ՝ ընդ տիեզերաց հրաման տուեալ լինել քարոզ աւետարանի 'ի դարձ հեթանոսաց. որք և խորհրդական թիւ գնդի նոցա վերին տեսչութեամբ 'ի սոյն կարգեցաւ ։

Քանզի զոր օրինակ երկոտասան առաքեալք էին

էին ըստ Թուոյ երկոտասան ցեղիցն Իսրայէլի , նոյնպէս և եօթանասուն և երկու աշակերտքն՝ վեց վեց միոյ միոյ յերկոտասանից պաշտօնակից գոլով , զառաջինսն զտունն Իսրայէլի տնտեսեցին՝ հանգոյն եօթանասուն և երկու ծերոց ընտրելոց 'ի Մովսիսէ ընդունելութեամբ Հոգւոյն Սրբոյ ։ որ և նշանակեցաւ երկոտասան աղբերբքն յաղիմայ , և եօթանասուն արմաւենեօք ։ Եւ-ոպ երկոտասանքն եղեն լուսաւորիչք Քրիստոսի բարձր քարոզութեամբ՝ ըստ օրինակի երկոտասան կենդանատեսակաց երկնային զարդուց , նոյնպէս և եօթանասուն և երկուքն սփռեցան 'ի ներքոյ երկնից ընդ ամենայն ազգս հեթանոսաց , որք 'ի սկզբանէ անտի բաժանման լեզուաց յեօթանասուն և երկու ազինս տրոհեին , 'ի ժողովել զորդիսն Աստուծոյ զցրուեալսն 'ի մի ։ ընդ որում և ասէ հոգեկիր հռետորն մեր ։

* Եօթանասնեկի երկակի լեզուաց այլա-
,, սեռ ձայնից 'ի մի տեսակ զուգաշուրթն
,, խօսակցութեան համահաւաքիչք ։ բաժանե-
,, լոց յօքնակի ազգաց անսասանելի շաղ-
,, կապք սիրոյ ։ դասք և դասապետք վայել-
,, չական պարուց ։ տիեզերաց երկրի դատա-
,, ւորք ‖ ։

'Ի նոյն խորհուրդ՝ և Թարգմանութիւն սրբոց գրոց յեբրայականէն 'ի հելլենականն եղեւ զառաջինն 'ի ձեռն եօթանասուն և երկու ծերոց Իսրայէլի , վեց վեց յիւրաքանչիւր ցեղէ ընտրեալ ։ Ուողից և զայլ բազմապատիկ տեսութիւս խորհրդաւոր Թուոյս հբ , կամ Հ ։ որ միշտ 'ի յարգի էր առ տունն Իսրայէլի՝ վասն զուգա-

գալթիւ՛ լինելոյ անձանց մտելոց Ը՟ իէլի յեգիպտոս. զի էին 'ի ժամուն ոգիք ՀԶ. իսկ յովսեփաւ համդերձ, և երկու որդւովք ն՟ր՝

որ եղեն յեգիպտոս, լինին ՀԵ:

Արդ յայտնի է նախ առ ա՟մ նախնի մատենագիրս, և 'ի ստոյգ աւանդս եկեղեցւոյ, թէ եօթանասուն և երկու աշակերտքն ք՟սի յետ շրջելոյ քարոզութե՟ 'ի զանազան կողմանս աշ՟ի՝ մեծամեծ նշանօք և զօրութե՟ հանդերձ, ազգի ազգի մահուամբ կատարեցան ը՟ս անուանն տ՟ն: Յայտնի է երկրորդ, թէ ո՟չ յուդաս մին 'ի դասէ երկոտասանից անկաւ, և ելից զտեղի ն՟ր մատաթիաս՝ որ 'ի թուոյ եօթանասնից. նոյնպէս և 'ի դասէ եօթանասուն և երկուց աւելի քան զերկուս և զերիս 'ի բաց անկան, ո՟չ կարծին լինել՝ նիկողայոս եկն անտիոքացի աղանդապետ, փիգեղոս և հերմոգինէս այլափառք, դեմաս ուրացող, ը՟ս ոմանց և աղեքսանդրոս դարբինն. և սակայն այլք ընտրելոց աշակերտաց 'ի տեղի ն՟ց մտին. և այնպէս զառ 'ի ք՟է սահմանեալ թիւն ամբողջ պահեցին: Յայտնի է երրորդ, զի ո՛չ յաւետարանէ և ո՛չ 'ի գործոց և 'ի թղթոց առաքելոց ունիմք աւանդեալ յանուանէ՝ թէ ո՞ք էր 'ի թուոյ եօթանասնից, և զի՞նչ անուն միոյ միոյ 'ի նոցանէ. վ՟ն եթէ կայցէ ինչ յաւանդութ՟ս նախնի հարց և վ՟դպաց, նոքիմբք պարտ է շատանալ. և այն՝ եթէ միաբան աւանդութե՟ իցանէ, ստոյգ է համարելի. ապա թէ ոչ՝ անստոյգ կամ վիպական: Զոր օրինակ և

եւ

եւսեբի զստոյգս և զանստոյգս անխտիր
նշանակէ բանիւս. (պատմ. եկեղ. ա. 12.)
* Առաքելոցն փրկչին մերոյ յաւետարանէ
յայտնի են անուանք նց ժբ ումեք. իսկ եօ-
թանասունն աշակերտացն երկրորդուն ան-
ուանն նց ուրեք չէ յայտ. բայց ասի, եթէ
բառնաբաս մի 'ի նոցանէ էր. զի զնա յակա-
նէ յանուանէ 'ի բազում տեղիս յիշէն գործք
առաքելոցն, և պօղոս՝ յորժամ գրեաց առ
գաղատացիսն: Այլ ասի՝ թէ սոսթենէս,
այն՝ որ գրեալն է ը պօղոսի 'ի թղթի անդ կո-
րնթացւոց, թէ՝ և նա 'ի նոցանէն էր: Բայց
ը ասելոյ պատմութեցն կղեմենտայ՝ և կե-
փաս, այն՝ որ ասաց պօղոս վն նր, թէ յոր-
ժամ եկն կեփաս յանտիոք, առաջի ամենե-
ցուն յանդիմանեցի զնա, մի յեօթանասնից
անտի աշակերտաց ասի լինել՝ անուանակից
պետրոսի առաքելոյ: Եւ մատաթիա՝ այն
որ եմուտ 'ի համար առաքելոցն փոխանակ
ը յուդայի, և յուստոս՝ այն որ եկաց ը նմա
'ի վիճակի անդ, ասի՝ թէ յեօթանասնից ան-
տի էին նք: Եւ վն թադէոսի ասի, թէ մի
'ի նոցանէն էր նա. որ և պատմութի ևս եկն
վն նր 'ի ձեռս մեր. արդ եդից զնա. (ոչ
և զնէ 'ի յաջորդ գլուխն զգալուստ նր առ
աբգար): Նաև աւելի քան զայս եօթանա-
սունս գտանես դու, որք յայտ եղեն՝ զի էին
նք աշակերտք փրկչին մերոյ, իբրև 'ի վկայ-
ութե պօղոսի, զի ասաց, եթէ յետ յարուե
փրկչին մերոյ 'ի մեռելոց երևեցաւ նախ կե-
փայի (կմ պետրոսի), և ապա երկոտասա-
նիցն.

նիցն . և ապա երևեցաւ և աւելի քան զհինգ-
հարիւր եղբարց միանգամայն . . . և ապա
ասաց , եթէ երևեցաւ յակոբու , այն որ մի
յայնցանէ է , որ ասին եղբարք փրկչին մե-
րոյ ։ Եւ քանզի բաց 'ի սոցանէ ըստ նմանութե
երկոտասանից՝ յոլովք ոմանք եղեն առա-
քեալք , ոչ էրն ինքն պօղոս , յաւելու իսկ
և ասէ , եթէ ապա երևեցաւ առաքելոցն
ամենեցունց || ։

Ուր որչափ ստոյգ երևի , թէ յակոբոս եղ-
բայր տեառն , և թադէոս առաքեալ հայոց ,
և այլք էին 'ի թուոյ եօթանասնից , նոյն-
չափ և անստոյգ՝ թէ սոսթենէս իցէ 'ի նմին
կարգէ . զի սա թուի լինել սոսթենէս ժո-
ղովրդապետն՝ որ զկնի հաւատաց . ևս առա-
ւել վերջական կարծիք , թէ կայցէ կեփաս
այլ յաշակերտս բաց 'ի պետրոսէ ։ Սոյնպէս
իմն և զբանից այլոց 'ի մատենագրաց , որ
չեն ստուգաբանք քան զեւսեբի ։

Այլ առաւել քան զամենայն հանդիսացեալ են
երկու օրինակք աւանդից զանուանէ և զկա-
տարմանէ միոյ միոյ եօթանասնից ողջոյն , կէս
մի հաւանելի՝ և կէս մի անհաւանելի՝ մի քան
զմի ։ Առաջինն է ըստ ճառընտրաց՝ առեալ 'ի
յունաց , և այն ոչ թէ 'ի հռովմայեցւոց , և
մակագրեալ յանուն սրբոյն դորոթէոսի եպիսկոպոսին
տիւրոսի , որ նահատակեցաւ առ յուլիանո-
սիւ . և երկրորդն է ըստ յայսմաւուրաց մերոց՝
քաղեալ 'ի զանազանից . որ թերևս լաւ ևս
է քան զառաջինն . ըստ որում դորոթէոսն՝ իբր
հետևողութե հիպողիտոսի , ոչ այլ ինչ առ-
նէ ,

նէ, բայց զի որչափ ինչ յատուկ անուն գտա-
նէ յաւետարանի և 'ի գործս և 'ի թուղթս
առաքելոց, մանաւանդ զբազմութիւն ան-
ուանց՝ զորս ողջունէ պօղոս 'ի թուղթն առ
հռովմայեցիս, վերածէ 'ի կարգ եօթանասա-
նից. իսկ յայսմաւուրքն թէպէտև մասամբ
զնոյն անուանս երկրորդէ, բայց ըստ մասին
ևս յայլ պատմութեանց հաւաքէ ։ (3)

Յերկոսեանն իսկ գտանեմք զայս ճշմար-
տութիւն, թէ անուանքն այնոքիկ են անուանք
աշակերտելոյն տեառն և առաքելոց. վասնորոյ ոչ այն-
չափ զեօթանասնից պատմութիւն ուսանիմք 'ի նո-
ցունց, որչափ զաշակերտելոյն քրիստոսի առ առա-
քելովք. բայց և զայն ստոյգ վարկանիմք,
թէ ոչ սակաւք 'ի նոցանէ են 'ի թուոյ եօթա-
նասնից. վասնզի յայտ է թէ առ առաքելովք
առաւել նախապատիւ էին եօթանասունքն
քան զայլ աշակերտեալս. վասնորոյ և անձինք ե-
րևելիք յիշատակեալք 'ի գործս և 'ի թուղթս
առաքելոց՝ առաւել 'ի դասէ եօթանասնից
ունին լինել. այլ ոչ եթէ ամենեքին ։ Նաւ
ըստ այսմ ընտրութեան յերկուս որոշեմք կարգս
զամենայն անուանս ընծայեալս եօթանասնից.
դնելով յայսմ վայրի նախ զստոյգ կարծե-
ցեալս, և ապա զանստոյգ դատեալս. և ո-
րոց միանգամ առանձին պատմութիւն կայցէ,
ոչ գրեմք աստանօր զնոցուն վարս, զի պա-
հին աւուրց առանձին տօնից իւրեանց. իսկ
զայլոց՝ զորոց չունիմք խօսել այլուր, յայսմ
վայրի գրեմք՝ որչափ ինչ պատմական աւանդ
գտանիցի առ զանազանս ։

Ն.

## Նշանաւորք աշակերտաց՝ որք երևելիք գրեն ՚ի Թիւս Եօթանասնից ։

Ա. Յակոբոս եղբայր տն կոչեցեալ, կին ամենեղբայր. որ և արդարն յակոբ՝ առաջին եպս եղև. զոր ոմանք առաւել յարևմուտս ՚ի յետին դարս՝ համարեցան լինել մի յերկոտասանից յակոբ փոքր կոչեցեալ. բայց ոմք ճառընտիրն ըստ դորոթէոսի և հիպողիտայ կարգէ ՚ի գլուխ եօթանասնից, նոյնպէս և յայսմաւուրքն ․․․ յասելն ՚ի վարս նորա. * Որոց առաջին և մեծ և գլուխ՝ սբն յակովբոս եղբայրն տն ‖. և ըստ այսմ եդեալ է և ՚ի շարականի նր. * Սա եղև գլուխ առաքելոց սբց (որք եօթանասնից), և կոչեցաւ եղբայր տն ՚ի տանէ դաւթի ‖ ։

Բ. Մատաթիաս, որ ելից զթիւ երկոտասան առաքելոցն, ըստ դորոթ". և հիպող" ։ ՚Ի նոյն ակնարկէ և բանն պետրոսի ՚ի գործս առաքելոց. * Արդ պարտ է յարանցս յայս„ ցանէ եկելոցս ընդ մեզ յամ ժամանակի, „ յորում մուտ և ել առ մեզ տրյս, սկսեալ „ ՚ի մկրտութենէն յովհաննու՝ մինչև յօրն, յո„ րում վերացաւ ՚ի մէնջ, վկայ յարութեան նր „ ընդ մեզ լինել միում ՚ի սոցանէ ‖ ։

Գ. Յովսէփ՝ որում բարսաբայն կոչէին, նոյն և յովսէ կին յեսոս և կին յիսուս, որ անուանեցաւն յուստոս, որ արդար, վիճակակից մատաթեայ ։ Սա ըստ ոմանց եղև եպս ելևթե-

 բու-

րուպօլսոյ 'ի պաղեստին . և ըստ այլոց եղև երրորդ եպս եհմի զկնի շմաւոնի . մանաւանդ թէ կարծի մին յեղբարց տն յովսէս կոչեցեալ , այն է եղբայր յակոբայ և շմաւոնի և յուդայի ։ ∸ . աստ ։ Ց . ժմ . յունիս . 30 ։ Լ . յուլիս . 20 ։ Սա ըստ պապիայ առ եւսեբի , բաժակ մահադեղոյ արբեալ՝ անվնաս պահեցաւ տր ։

Դ . Թադէոս առաքեալ հայոց , որ և յուդա եղբայր թովմայի առաքելոյ . զոր ոմանք շփոթեն ընդ յուդայի եղբօր տն , որ և ղեբէոս թադէոս մին յերկոտասանից ։ Բայց 'ի կարգի եօթանասնից է ըստ եւսեբի , խորենացւոյն , դորոթէոսի , և այլոց ։

Ե . Շմաւոն ազգական քսի՝ երկրորդ եպս եհմի , այն է որդի կղէովպայ եղբօր սբյն յովսեփայ տծահայր կոչեցելոյ . վնյ և եղբայր յակոբայ արդարոյ և յովսեայ և յուդայի՝ սիմոնն յիշատակեալ յաւետարանի . զոր ոմանք շփոթեն ընդ սիմոնի կանանացւոյ , որ և շմաւոն նախանձայոյզ մի յերկոտասանից ։

Զ . Ստեփաննոս նախասարկաւագ և նախավկայ ։

Է . Փիլիպպոս ընկեր նր՝ աւետարանիչ կոչեցեալ ։

Ը . Պրոխորոն կմ պռոքորոն 'ի նմին կարգէ՝ մին յեօթանց սարկաւագաց . որ ապա լեալ եպս նիկոմիդայ բիւթանացւոց . և գործակից և դպիր աւետարանչին յովհաննու յասիա . և ապա նահատակեալ յանտիոք . որոյ

և նշխարք յիշին 'ի բոնոնիա յեկեղեցւոջ սրբոյն յովհաննու, եթէ չիցեն պրոկղոսի եպիսկոպոսին բոնոնիոյ : Տ. աստ : Յ. յուլ. 28 : Լ. ապր. 9 :

Թ. Նիկանովրա կամ Նիկանովր մի յեօթանց անտի. որ ըստ դորոթէոսի կարծի նահատակեալ 'ի նոյն հալածանս ընդ սրբոյն ստեփաննոսի՝ հանդերձ այլ ևս բազմութեամբ. և ըստ այլոց 'ի կիպրոս կատարեցաւ, և անդ թաղեցաւ : Տ. աստ : Յ. յուլ. 28. և ժմ. դեկտ. 28 : Լ. յունվր. 10 :

Ժ. Տիմովնա կամ տիմոն՝ մի յեօթանցն. որ յետոյ ասի շրջեալ 'ի կորնթոս և 'ի բերիա. և եղեալ եպիսկոպոս բոստրայ քաղաքի արաբացւոց կամ ասորւոց. ուր և մատնութեամբ հրէից 'ի հնոց հրոյ արկեալ 'ի հեթանոսաց, և այնպէս կատարեալ. այլք ասեն՝ թէ զերծաւ 'ի հրոյ, և 'ի խաչի մեռաւ : Գուցէ այլ իցէ և տիմոնն այն, զորմէ գրեն ոմանք 'ի վարս բառնաբայ առաքելոյն՝ թէ գտեալ զտիմոն 'ի կիպրոս տապացեալ ջերմամբ, ընթերցաւ 'ի վերայ նորա զաւետարանն մատթէի, և կարդաց զանուն տեառն. որով առողջացեալ գնաց զհետ նորա 'ի քարոզութիւն : Տ. աստ. և մայիս. 9 : Յ. դեկտ. 30 : Լ. ապր. 19 :

ԺԱ. Պարմենաս՝ մի յեօթանց անտի. որ ըստ ոմանց ասի խաղաղութեամբ վախճանեալ 'ի սպասաւորութեան առաքելոց. և ըստ այլոց 'ի հրէից նահատակեալ 'ի հալածանս՝ որ եղև 'ի վերայ ստեփաննոսի. իսկ ըստ հիպողիտայ ասի եպիսկոպոս լինել սողոնաց. և այլք թէ շրջեցաւ քարո-

զու-

զութք 'ի Փիլիպէ Մակեդոնիոյ և յայլ տե-
ղիս . մինչև կատարեցաւ մարտիրոսութք :
Տ. սատ : Յ. մարտ. 2. և ԺՄ. յուլ. 28 :

Յունվր. 23 :

ԺԲ. Նիկողայոս եկն անտիոքացի՝ որ 'ի Թը-
ւոյ եօթանց , ընդ դորոթէոսի եպս եկեղսա-
մարացւոց՝ այլափառեաց ընդ սիմոնի մոգի .
և 'ի նմանէ բուսաւ աղանդն նիկողայեցեաց .
բայց չէ՛ ստոյգ , արդեօք 'ի՞նքն նիկողայոս
մոլար վրդպութի սերմանեալ իցէ , եթէ 'ի
բանից ինչ նր աշակերտք նորին հանին և ու-
սուցին զմոլորութի , ասեն քննիչք :

ԺԳ. Անանիա առաքեալ , որ մկրտեաց զպօղն
պօղոս 'ի դամասկոս , եպս համարեալ դա-
մասկացւոց :

ԺԴ. Տառնաբաս առաքեալ՝ գործակից պօ-
ղոսի :

ԺԵ. Մարկոս աւետարանիչ՝ գործակիցն
պետրոսի :

ԺԶ. Ղուկաս աւետարանիչ՝ գործակից պօ-
ղոսի :

ԺԷ. Շիղա գործակից պօղոսի . ընդ որում
իրաւամբք նոյնացուցանեն զսիղուանոս , և
այլք զատանեն :

ԺԸ. Յուդա ընկեր շիղայի , և մարգարէա-
կից նորա յանտիոք . սա ևս բարսաբա կոչի
համգոյն յովսէփ կմ յովսեփայ յուստոսի . վնյ
կարծի յոմանց մի լինել 'ի չորից անտի եղ-
բարց անուանելոց եղբայր տն . որ են յակո-
բոս , սիմոն , յովսէս , յուդա . բայց այլք
զայն յուդա ասեն մի յերկոտասանից՝ ոչ ըս-

կարխովտացին, այլ՝ Թադէոս ղերբէոսն ։
ժԹ. Յովհաննէս՝ որ կոչեցաւն մարկոս, եղբօրորդի բառնաբայ, որին համարեն յաւետարանչէն ։

Ի. Բարդուղիմէոս՝ գործակից փիլիպպոսի առաքելոյն, որ յերկոտասանից, և նահատակակից ։ Զսա 'ի Թիւս եօթանասնից դընեն միայն յայսմաւուրք ÷. աստ, և 'ի նոյեմբ. 17. զոր և հաստատել երևի Յ. 'ի նոյեմբ. 14. 'ի վարս փիլիպպոսի. ուր և 'ի տօնելն ընդ բառնաբայ 'ի յունիսի. 11. ուրոյն 'ի բարթուղիմեայ առաքելոյ՝ որ 'ի յնս. 30 ։

ԻԱ. Ղազարոս սիրելին և բարեկամն քնի, որ յարոյց զնա 'ի մեռելոց. ըստ ÷. համարեն յեօթանասնից ։

ԻԲ. Նաթանայէլ՝ որ 'ի կանայ գալիլեացւոց. որ ըստ ÷. է մի յեօթանասնից. զնոյն ցուցանէ և Յ. 'ի 22. ապր. բայց ժամագիրք Յ. 'ի 30. յունիսի. դնէ լինել մի յերկոտասանից՝ նոյն ընդ սիմոնի կանանացւոյ ։

ԻԳ. Ղուկիոս, ըստ ոմանց ղուկաս, կիւրենացի, յիշատակեալ 'ի գործս առաքելոց. ժԳ. 1. և հռոմ. ժԶ. 21. ասի եպս լեալ լաւոդիկեայ ասորւոց, և 'ի բազում տեղիս քարոզեալ զքն ընդ ապեղեայ և ընդ կղեմայ ։ ÷. աստ ըստ դորոթ ։ Յ. ժմ. ապր. 22 ։ Լ. ապր. 22. և մայ. 6. և սեպտ. 10 ։

ԻԴ. Մանայէն դայեկորդի հերովդի չորրորդապետի, գործակից ղուկիոսի յանտիոք. քարոզեալ զքն հրէից և հեթանոսաց՝ 'ի նմին կատարեցաւ կի հանգեաւ ։ ÷. աստ ։

Լ.

Լ. մայիս. 24 :

իե. Ընդ սոսա դասելի էր և մարգարէակից և գործակից նր շմաւոն նիւգէր. բայց ոչ գտաք կարգեալ յումեքէ :

իզ. Տիտոս եպս կրետայ՝ գործակից և աշակերտ համարեալ պօղոսի, կարծի անդստին աշակերտեալ քնի, ըստ ⁖. աստ. և ըստ Յ. ժամադր. յունվր. 5 :

իէ. Գայիոս ասպնջական պօղոսի, նոյն համարեալ՝ առ որ և աւետարանիչն յովհաննէս գրեաց գիր. սա է եպս լեալ եփեսացւոց յետ տիմոթէի. կմ ըստ այլոց 'ի լիւրիկիա կատարեալ է յովհաննու ումեմն : ⁖. աստ. ըստ դորոթ. և Յ. նոյեմբ. 4 :

իը. Ագաբոս մարգարէ յիշատակեալ 'ի գործս առաքելոց. ըստ դորոթէոսի դասի 'ի կարգ եօթանասնից. այլ ոչ 'ի յայսմաւուրս :

իթ. Կրեսկէս յիշատակեալ 'ի բ թուղթն պօղոսի առ տիմոթէոս, է եօթանասունս գրի 'ի դորոթէոսէ և 'ի յայսմաւուրաց : Առանձին յիշատակ նորա լինի 'ի Յ. յուլ. 30. և Լ. յունիս 27. և դեկտ. 29 : Այն՝ որ գրի 'ի մեզ. * կրեսկէս 'ի գաղիլեա ‖, յոյնք և լատինք ընթեռնուն 'ի գաղատիա. ուստի առեալ՝ ոմանք համարին զնա եպս գաղղիացւոց, այլք գաղատացւոց. և կէսք դնեն՝ թէ թէպէտև 'ի գաղղիա եւս գնաց, այլ բնիկ վիճակ նր էր գաղատիա ասիացւոց :

Լ. Դեմետրիոս, որ 'ի յայսմաւուրս մեր ևեթ դնի 'ի կարգ եօթանասնից, և սա է 'ի հրէից քարկոծեալ, է այն՝ զոր գովէ նբն յովհան-

նէս 'ի Թուղթն առ Գայիոս. * Զդեմե-
տրեայ վկայեալ է յամենեցունց և յեկեղեց-
ւոյն և 'ի ճշմարտութենէ. և մեք վկայեմք.
և դու գիտես, զի ճշմարիտ է մեր վկայու-
թիւն ||:

լա. Մինաս, որ ըստ յայսմաւուրաց ասի քար-
կոծեալ 'ի բերիա՝ այսինքն 'ի Հալապ, կամ 'ի բեւրի-
տոն, վասն քարոզելոյ զկուսութիւն և զպարկեշ-
տութիւն. զոր ոչ գտաք առ այլս, եթէ չիցէ
նոյն, զոր այլք զինաս կամ զենոն կոչեն. զոր-
մէ տես յերկրորդ կարգի. իե:

լբ. Մուրզաս 'ի կեսարիա կատարեալ, նոյն-
պէս անծանօթ այլոց:

լգ. Նիկիտաս 'ի տաքարիա կամ 'ի տաքերա
սղոցեալ. նոյնպէս անյիշատակ առ այլս:

լդ. Ղազար երկրորդ՝ 'ի բերիա նահատա-
կեալ. անյիշատակ:

լե. Զաքարիա՝ այրւոյն որդի, զոր տէրն յա-
րոյց 'ի նայինն քաղաքի, 'ի հուրինա կամ 'ի խու-
րինա կատարեալ. և այլ զաքարիա ընդ նմա.
անգիտելի այլոց: Միայն առ լատինս 'ի 26.
մայիսի լինի յիշատակ * 'ի վեննա (գաղ-
ղիոյ) սրբոյն զաքարիայ եպիսկոպոսի և վկայի, որ
նահատակեցաւ առ տրայիանոսիւ ||:

լզ. Զաքէ կամ զակքէ առաջին և երկրորդ՝
յանապատն կատարեցան. թերևս մին այն
է, զորմէ լինի յիշատակ 'ի Լ. օգոստ. 23.
* Յորում՝ սրբոյն զաքէի եպիսկոպոսի, որ չորրորդ յե-
րանելւոյն յակոբայ առաքելոյ հովուեաց
զեկեղեցին երուսաղէմացւոց ||. բայց սա էր աշա-
կերտ աշակերտաց:

լէ.

լէ. Անանիա ը՟ սիմէոնի 'ի բիւզանդիա ասի
կատարեալ. զոր ոչ յիշեն այլք ։

լը. Եղիշէ յաղուանս կատարեալ, թէպէտ և անծանօթ իցէ առ այլս, բայց անուանի յոյժ առ մեզ՝ իբրև գործակից և աշակերտ սբյն թադէի. զոր ոչ միայն աստ յիշէ յայսմաւուրք †. այլև ուրոյն գրէ զվկայաբանութիւն նր 'ի սեպտ. 21 ։

լթ. Դեմաս այլափառ ։

խ. Հերմոգինէս այլափառ ։ Օ երկոսին ես յեօթանասնից դասէ ասեն լինել ը՟ դորոթէոսի և յայսմաւուրք. որ և յաւելու 'ի նմ զաղեքսանդրոս գարբին. իսկ դորոթէոս յաւելու և զփիգեղոս, գրելով այսպէս. * Փիգեղոս՝ որ զսիմոնին խորհէր, եպս եփեսոսի եղև ։ Երմոգինէս, որ և Նա մոգ, արաբացւոց զետեղեցաւ եպս . . . Սա դեմաս սիրել զայժմուս յաւիտեան՝ բացամերժեաց զաւետարանական բանն, և 'ի թեսաղոնիկէ քուրմ կռոցն եղև ։ Յաղագս որոյ յովհաննէս առաքեալ գրեաց. առ 'ի մէնջ ելին, այլ ոչ էին 'ի մէնջ ‖ ։

Յանուանց աստի աւելի քան զքառասուն՝ երեսնից չափ առաւել հաւանելի դատին լինել 'ի թուոյ եօթանասնից. իսկ մնացեալքն անստոյգ. Ճանաչին. Ես առաւել զորս ունիմք յիշել յայսմ հետէ յերկրորդ կարգի ։

## Անուանք աշակերտաց, որ ոչ ուրեք գտնին յանուանց 'ի կարգս եօթանասնից ։

ա. Կղէովպաս ազգակից տն, ք եղբայր յովսեփայ ածահօր, ընդ եօթանասունս գրի 'ի դորոթէոսէ և 'ի հիպողիտայ. և կոչի եպս եմի՝ շփոթելով ընդ որդիս նր, որք եղեն եմի եպս, ք յակոբ արդարն, և զկնի շմաւոն Լե. յորոց զշմաւոն վրիպակաւ կղէովպաս անուանէ ժամագիրք յունաց 'ի յունիսի. 30 ։ Այլ և յայսմաւուրք հայոց զկղէովպաս համարի յեօթանասնից. բայց ուղիղ գրէ զպատմութիւն՝ ասելով. * Կղէոպաս եղբայրն յովսեփայ ածահօրն, որ յաւուր աւագ զատկին ետես զքս յեմմաւուսայ ճանապարհին, քարոզեաց զքս հրէից, և անդէն կատարեցաւ յեդեմ‖։ Իսկ լատինք 'ի սեպտ. 5. ուրոյն կատարեն զյիշատակ նր այսմ. * 'Ի գիւղն եմմաւուս կատարումն երանելւոյն կղէոպայ աշակերտին քսի. զորմէ աւանդեն, թէ 'ի նմին տան՝ ուր պատրաստեաց սեղան տն, վս խոստովանութե նր սպանեալ իցէ 'ի հրէից, և փառօք թաղեալ‖։

բ. Յովսէփ արեմաթացի, որ զտրն թաղեաց. միայն 'ի ÷. դնի 'ի կարգ Հ. ից։

գ. Նիկոդեմոս գործակից նր՝ նոյնպէս. որոյ մարմին թաղեցաւ զկնի ընդ նխյն ստեփաննոսի ։

դ. Սիմոն կիւրենացի՝ բարձօղ խաչին քսի. ընդ նմին և երկու որդիք նր ռուփոս և աղեքսանդրոս ։

դրոս ։ Յորոց զռուփոս միայն դնէ դորոթէոս 'ի դաս ԺԸ ։ Յայտ առնէ աւետարանիչն՝ թէ որդիք սիմոնի անուանիք և երևելիք էին քան զհայր իւրեանց, զի անուամբ որդւոյն ծանօթս տայ զնմանէ, * հայրն աղեքսանդրի և ռուփայ || ասելով, որք թերևս էին 'ի կարգս աշակերտաց. բայց ինքն սիմոն ոչ էր յայնմ կարգէ. ըւ որոյ և 'ի Ճառընտիրս ուրոյն գրի զկնի պատմութե՟ն եօթանասնից այսպէս. * Ակայութի սիմոնին կիւրենացւ-

,, ւոյ ։ Տեսեալ սիմոնին զսքանչելիսն՝ որ
,, եղեն 'ի խաչելութե՟ն ք՟ի, հաւատաց գաղտ
,, 'ի ժողովրդենէն. և ոմն յազգականաց իւ-
,, րոց երթեալ մատնեաց զնա առ հրէայսն
,, և առ քահանայապետսն. և նք կաշառե-
,, ցին զպիղատոս, և խաչեցին զսիմոնն վ՟ն
,, անուանն ք՟ի. և խոցեցին զերկուս կողսն.
,, և հեղաւ յոյժ արիւնն. և աւանդեաց զո-
,, գին բարի խոստովանութ՟բ, 'ի մարտի.
,, ա՟. և է մեզ բարեխօս առ ք՟ն || ։ Օ որ և

պարտ է համարել գեղեցիկ վարձ խաչաբարձութե՟ն սիմոնի, որ թարգմանի հնազանդ ։

Ե. Կեփաս իբրև որիշ 'ի մէջն պետրոսէ՝ ըւ յիշելոյ եւսեբի, 'ի համար ԺԸ դնի 'ի դորոթէոսէ, և 'ի [illegible] ։

Զ. Մարկոս երկրորդ, կմ՟ յովհաննէս երկրորդ՝ նոյնպէս, անորոշակի քաղեալ 'ի գործոց և 'ի թղթոց առաքելոց ։ ըւ որում և յետագայ անուանք նոյնպէս են հաւաքեալ ։

Է. Ստաքէոս, որ յիշի 'ի թղթ. հռ. ըւ դորոթ.

րոթ. և ÷. յունիս. 11. և Յ. Լ. հոկտ.
32. ասի եպս կարգեալ բիւզանդացւոց յան-
դրէն առաքելոյ ։

Ը. Ղուկիոս, եպս կարգեալ յանտիոք 'ի տրյն պետրոսէ. ը̄ դորոթ. և Յ. Ժմ. սեպտ. 7. և Լ. մայիս. 6 ։ Օ անուն սորա գտանեմք յիշատակեալ 'ի տրյն Իգնատիոսէ 'ի թուղթն առ անտիոքացիս. ապա վերպակաւ գրեաց դորոթէոս. * որ և զնմանէ յիշատակէ առաքեալ‖. զի ոչ կարէ ոք չփոթել ը̄ իգական անուան' զոր յիշէ առաքեալ. փիլ. դ̄. 2. * զեւոդիա աղաչեմ և զսիւնտիք աղաչեմ‖ ։

Թ. Սպենտոս կմ̄ եպենետոս. զոր առաքեալն առ հռովմայեցիսն յիշատակէ 'ի թղթին, որ եպս արտագենացւոց եղև 'ի գաղիղիա, ասէ դորոթէոս. իսկ հիպողիտոս, եպս կարքեդոնի դնէ. և ÷, գրէ' թէ յատալիա կատարեցաւ ։

Ժ. Անդրոնիկոս. 'ի նմին թղթի. եպս եղև պաննոնիոյ ը̄ դորոթ". և ÷. գրէ. * անդրոնիկոս և յունիաս ազգականք պօղոսի 'ի տարսոն կատարեցան‖ ։ բայց յունիոս կմ̄ յունիաս է սխալ. զի պարտի լինել իգական անուն յունիա ։ Իսկ Յ. ունի այսպէս 'ի մայիսի. 17. * Յիշատակ նբ առաքելոյն անդրո-
„ նիկոսի' միոյն յեօթանասնից, և յունիայ ։
„ Անդրոնիկոս քնի առաքեալն ը̄ ամ տիե-
„ զերս սլացեալ ոպ̄ թեւաւոր, և զքն քարո-
„ զեալ' զամ մոլորութն խլեաց յարմատոց,
„ և զամ բարեպաշտութն և զանձգիտութն
„ տնկեաց, հետևօղ իւր ունելով և գործա-
„ կից

,, կից յա̃ծայլին քարոզութեան զսքանչելին 'ի
,, կանայս զյուղիա, զմեռեալն ծի և մար-
,, մնոյ, և զ'ի քո̃ միայն կենդանին և զբար-
,, ւոք պաշտօնեայն .... զմեհեանս կուոց
,, կործանեցին, և զեկեղեցիս քո̃ի յա̃մ
,, տեղիս շինեցին ... զայսս պիղծս 'ի մարդ-
,, կանէ հալածեալ, և զախտս անբուժե-
,, լիս բժշկեալ՝ առ տր փոխեցան ‖ ։ Պան,
ծալի են և բանք առաքելոյն զսոցանէ ․
* ողջոյն տաջիք ( ասէ ) անդրոնիկեայ և յու-
նեայ ազգականաց իմոց և գերեկցաց, որք
երևելիքն իսկ են յառաքեալս ․ որք և յա-
ռաջ իսկ քան զիս եղեն 'ի քս̃ ‖ ։

ժա̃ ․ Ամպղիաս՝ սիրելի կոչեցեալ յառաքե-
լոյն, ասի եպս̃ լեալ ոդիսացւոց 'ի մակեդո-
նիա ըստ դորոթ" ․ և ըռ̃ ÷ ․ 'ի զմիւռոն կա-
տարեալ ։

ժբ̃ ․ Ուրբանոս, որ անդ յիշի, ըռ̃ դորոթ"
եղև եպս̃ մակեդոնացւոց ․ և ըստ ÷ ․ 'ի
հռովմ կատարեցաւ ։ Իսկ Յ ․ և Լ ․ 'ի հոկտ․
31 ․ գրեն, թէ ապղիաս և ուրբանոս և ստա-
քես ( կմ̃նարկիսոս ) յայլ և այլ տեղիս նա-
հատակեցան ․ * Իսկ պատուական նշխարք
,, նց̃ յետոյ փոխադրեալք 'ի կոստանդինու-
,, պօլիս, եդան յանուանեալ աղբիւրն ‖ ։

ժգ̃ ․ Ապեղիս, որ կոչի անդ ընտիր 'ի տր,
ըռ̃ դորոթ" եղև եպս̃ հերակղեայ կամ հե-
րակլիոյ ։

ժդ̃ ․ Ապեղէս, զոր զանազանէ դորոթէոս
'ի նախընթացէն ․ և ասէ լեալ եպս̃ զմիւռ-
նացւոց նախ 'ք զպօղիկարպոս ․ ոմ̃ և Յ ․ և

Լ․

Ի. 'ի 22. ապրիլի:

ԺԵ. Ապողոս, որ և ապեղէս կոչի 'ի ÷. յիշատակեալ 'ի Ա. կորնթ. Գ. 4. 6. և ԺԶ. 12. ոմն և 'ի գործս առաք. ԺԸ. 24. եպս եղև կեսարու ըստ դորոթ. բայց յայտ է թէ սա չէր յեօթանասնից, այլ աշակերտեալ զկնի, և ուսեալ 'ի պրիսկեայ և յակիւղայ: Սա թէպէտ և ապողոն էր կոչելի, բայց թերևս առ որոշելոյ յանուանէ կռոց՝ մերքն կոչեն ապողոս կամ ապեղէս:

ԺԶ. Սոսթենէս. որ ըստ եւսեբի 'ի կարգ եօթանասնից եդեալ յոմանց, նոյնպէս դնի և 'ի ÷. աստ. ոմն և 'ի Յ. դեկտ. 9. ըստ դորոթէոսի և հիպողիտայ, որք կոչեն զնա եպս կողոփոնացւոց. բայց քանզի երևի լինել այն՝ որ աշակերտեցաւ պօղոսի, յորժամ էր ժողովրդապետ հրէից 'ի կորնթոս, որ և գան հարաւ 'ի պատճառս պօղոսի, անմարթ է դասել 'ի թիւ եօթանասնից. տես 'ի գործ. ԺԸ. 17. և Ա. կորնթ. Ա. 1. որ 'ի Ի. նոյեմբ. 28. իրաւամբք կոչի աշակերտ պօղոսի:

ԺԷ. Տիւքիկոս. որ յիշի 'ի գործ. Ի. 4. և եփես. Զ. 21. ըստ դորոթէոսի և հիպողիտայ. և Յ. դեկտ. 9. դնի 'ի համար եօթանասնից, և ասի լինել եպս կողոփոնայ զկնի սոսթենեայ. այլ 'ի Ի. ապր. 29. լաւ ևս կոչի աշակերտ պօղոսի:

ԺԸ. Եպափրոդիտոս, որ յիշատակի 'ի փիլիպ. Բ. 25. և Դ. 18. ըստ դորոթ. և հիպող. և Յ. դեկտ. 9. կարծի մի յեօթանասնից,

նից , եպս լեալ ադրիակայ , ք̃ ադրիականն ծովեզերեայց ։ վկյ 'ի Լ ։ մարտ ։ 22 ։ ասի լինել եպս տարրակինայ կարգեալ 'ի նյն պետրոսէ ։ այն է դէուաչինա քաղաք վոլսկաց ը̃ մէջ սահմանաց նէապօլսոյ և հռովմայ ։ իսկ սպանիացիք կամին առնել զնա առաջին եպս տարրակոնն քաղաքի իւրեանց ։

և այլք եպս փիլիպպեցւոց ասեն ։

ԺԹ ։ Կեսար , կամ կայսր , յիշատակեալ 'ի թուղթն առ հռովմայեցիս , վայրապար դնի 'ի կարգս եօթանասնից 'ի դորոթ ։ և 'ի հիպող ։ և 'ի Յ ։ դեկտ ։ 9 ։ կոչեցեալ եպս դիւռակիոյ , որ է տուռացցօ քաղաք ալպանիոյ , կամ քաղաքին կորոնինայ 'ի պեղոպոննիդա ։

Ի ։ Արտեմաս , եպս լիւստրացւոց , և տիւքիկոս երկրորդ եպս քաղկեդոնի , դրին 'ի համար եօթանասնից 'ի դորոթէոսէ , առեալ 'ի բանից պօղոսի առ տիտոս ։ գ̃ ։ 12 ։ * այլ յորժամ առաքեցից առ քեզ զարտեմայ կամ զտիւքիկոս , փութասջի՛ր գալ առ իս 'ի նիկոպօլիս ‖ ։

ԻԱ ։ Կղեմաս կամ կղեմէս , յիշատակեալն 'ի պօղոսէ իբրև գործակից , թէպէտև ը̃ հնրկ աւանդից՝ էր աշակերտ նյն պետրոսի և յաջորդ նր̃ յաթոռն հռովմայ , բայց ոմանք ը̃ դորոթէոսի եդին եպս սարդիկայ կամ սարդինիոյ՝ իբրև 'ի թուոյ հից ։ տե՛ս և 'ի Լ ։ աստ ։
Յ ։ ապր ։ 22 ։ Լ ։ սեպտ 10 ։

ԻԲ ։ Ոնեսիփորոս , որ երևի աշակերտ պօղոսի , կամ այլոց յառաքելոց , աստ դնի 'ի դորոթ" ։

րութ՛՛ · Խբրև եպս կորոնացւոց ։ զորմէ տես 'ի Յ · յուլ · 16 · սեպտ · 7 · և դեկտ · 9 ։ և Լ · սեպտ · 6 ։

ԻԳ · Արտեմաս , նոյնպէս լինել եպս բերիոյ կմ բերիւտայ Թրակացւոց · զոր Ե դորոթ՛՛ 'ի կարգ Հից դնէ Յ · 'ի մայիսի · 26 · և 'ի Լ · հոկտ · 13 · կոչէ աշակերտ պօղոսի ։

ԻԴ · Արիստարքոս , եպս ապամիոյ՝ մի 'ի Հից դրէ 'ի դորոթ · և 'ի հիպող · ոպ և 'ի Յ · ժամագր · սեպտ · 27 · և ապր · 27 ։

ԻԵ · Օնեսս կմ զենաս , որ և զենոն օրինականն դպիր կոչեցեալ , և համարեալ եպս դիոսպօլսացւոց · 'ի նոյն կարգ դասի 'ի դորոթ · և 'ի Յ · ժմ · 'ի նոյն տեղիս ։

ԻԶ · Փիլիմոն · առ որ զԹուղթն առաքեալ գրեաց , որ և եպս գազայ եղև , ասէ դորոթ ։

ԻԷ · Արիստարքոս , և Պուդէս , և Տրոփիմոս · սք երեքեան յետ հալածանան առաքելոցն չարչարակցեալք , և կատարեալք 'ի հռովմ ընդ պօղոսի՝ առ 'ի ներոնէ Թգրէ գլխատեցան , Ե դորոթ · և հիպող · և Յ · ապր · 15 ։ տես և 'ի Լ · օգ · 4 · մայ · 19 · և դեկտ · 29 ։ Իսկ Լ · յիշէ աստ միայն ըզբուդէս ։

ԻԸ · Յասոն , և Սոսիպատրոս · Ե դորոթ , 'ի կարգէ Հից · այլ Ե Լ · աշակերտք պօղոսի դրին 'ի մայիսի · 14 ։ տես և Յ · ապր · 27 · և նոյեմբ · 10 ։ և Լ · յունիս · 25 · և յուլ · 12 ։

ԻԹ · Արիստաբուղոս , որ և զնմէ յիշատակէ ( պօղոս ) առ հռովմայեցիսն , որ բրիտանաց-
ւոյն

ւոցն եղև եպս , ասէ գորոԹ · իսկ Տ · 'ի Թե-
սաղոնիկէ կատարեցաւ՝ ասէ · տես և Յ ·
մարտ · 16 · և Լ · մարտի · 15 · զորմէ բա-
զում են բանք առ քննիչս ։

Է · Սարկեսոս , 'ի նոյն Թղթոյ առեՆ , եպս
աԹենացւոց կոչի 'ի գորոԹ · և Տ · ասէ ,
'ի դաղմատիա կատարեցաւ ։ տես և Լ ·
հոկտ · 31 ։

Լա · Տերովդիոն կմ իւրոդէոս , 'ի նոյն Թղ-
Թոյ , ուր առաքեալն կոչէ զնա ազգական
իւր , եպս պատարայ ասի լեալ ըստ գորոԹ ·
և Յ · մարտ · 28 · կմ եպս տարսոնի ըստ հի-
պող ։ տես և Լ · ապր · 8 ։

Լբ · Սոսիփաս կմ ռուփոս , 'ի նոյն Թղթոյ ,
եպս Թեբացւոց ըստ գորոԹ · և Յ · ժմ · ապր ·
8 · յիշի և 'ի Լ · նոյեմբ · 21 ։

Լգ · Սոսինկրիտոս · անդ · եպս հիւրկանաց-
ւոց կամ վրկանաց ըստ գորոԹ · յիշի և 'ի Յ ·
ժմ · և Լ · ապր · 8 ։

Լդ · Փղեգոն · անդ · եպս մարԹոնացւոց
կմ մարաԹոնայ ( յաքայիա ) ըստ գորոԹ · և
հիպող · տես և Յ · ժմ · յնվ · 4 · և ապր · 8 ·
ոպ և Լ · ապր · 8 ։

Լե · Երմիս կմ հերմէս · անդ · եպս դաղմա-
տացւոց ըստ գորոԹ · և Յ · ժմ · յնվ · 4 · և
ապր · 8 · ոպ և ոմանք 'ի լատ" · ապր · 8 ։

Լզ · Երմաս կմ երմէս · անդ · եպս փիլիպու-
պօլսոյ ըստ գորոԹ · և Յ · նոյեմբ · 4 · և ևս
Յ · ժմ · մարտ · 8 · տես և Լ · մայ · 9 ։ Յիշէ
սաս և Տ · այսպ ։ * Երմէս հովիւն , և պատ-
,, րովքաս յիշատակեՆքն 'ի պօղոսէ առ հռով-
,, մայե-

,, մայեցիսն ‖ ։ Յայս հայի ասացեալն 'ի հե-
րոնիմոսէ 'ի գիրսն յաղագս եկեղեցական
մատենագրաց ․ * Երմաս՝ զոր առաքեալն
,, պօղոս յիշատակէ 'ի գրելն առ հռովմայե-
,, ցիս , ասի լինել հեղինակ գրոցն՝ որ կոչի
,, հովիւ ․ և յեկեղեցիս ինչ յունաց նաև հան-
,, դիսապէս կարդացեալ լինի ․ արդարև գիրք
,, օգտաշահ ․ յորմէ և վկայութիւնս 'ի մէջ առ-
,, նուն յոլովք 'ի հին մատենագրաց ․ այլ առ
,, լատինս անծանօթ գոգցես ‖ ։ ( Երմէօն
Թարգմանի շահ , կմ̃ գիւտ մեծ ) ։

ԼԷ ․ Պինոս՝ յաջորդ պետրոսի յաթոռն հռովմայ , յայս կարգ հից դնի ը̃ դորոթ ․ և Ն ․ աստ ․ և Յ ․ նոյ ․ 4 ․ տես և 'ի Լ ․ սեպտ ․ 23 ։

ԼԸ ․ Փիղողոգէոս , յիշատակեալ 'ի նոյն թուղթ հռ ․ եպ̃ս սինոպայ ասի կարգեալ յանդրէէ առաքելոյ , ըստ դորոթ ․ և Յ ․ նոյ ․ 4 ։

ԼԹ ․ Ողիւմպաս ․ անդ ․ ը̃ դորոթ , գլխատեալ ը̃ պետրոսի 'ի հռոմ ։

Խ ․ Նռոդիոն կմ̃ րոդիոս ․ անդ ․ ը̃ դորոթ ․ գլխատեալ ը̃ ողիւմպայ 'ի հռովմ ․ զնոյն երկրորդէ և Յ ․ նոյ ․ 10 ։ Իսկ Ն ․ ունի աստ այսպէս ․ * Փիլոգիոս և Ներիաս և ուլումպաս ․ ս̃ք փոխանորդք դեմասի և հերմոգինեայ , աղեքսանդրի և նիկողայոսի ‖ ․ ոմ̃ք մատաթիա 'ի տեղի յուդայի ։

ԽԱ ․ Տերտիոս ․ որ էր նոտար ն̃ըն պօղոսի ․ զսա ևս իշխէ դորոթէոս դնել 'ի կարգ հից , կոչելով եպ̃ս իկոնիոյ ․ ոմ̃ք և Ն ․ նոյ ․ 10 ։

խԸ. Երաստոս շահապ քաղաքին Կորնթաց-
ւոց. զոր գործելոս կոչէ տնօրէն յե̃մ եկե-
ղեցւոյն, և եպս պանեադայ. նոյնպ̃ գրի և
'ի Յ. նոյ. 10. իսկ 'ի Լ. յուլ. 26. ասի եպս
փիլիպուպօլսոյ 'ի մակեդոնիա ։

խԹ. Կոճարտոս, եպս բիւրիտոնի եղեալ ը̃
գործ. և Յ. նոյ. 10. յիշի և 'ի Լ. նոյ. 3 ։

Ծ. Կոդրատոս. զսա՝ զոր Ճ. աստ. թուէ
Ը եօթանասնից այսպս, * Կոդրատոս վկայ-
,, ութբ̃ կատարեցաւ 'ի տրայիանոսէ ||, ոչ
յիշէ գործելոս. բայց 'ի Յ. սեպտ. 21.
գրի այսպէս. * Կոդրատոս ճծայինն վկայ
,, որ. և առաքել՛ քնի... եպս քաղաքին մագ-
,, նեսիայ ||. ուր և դնի վրիպակաւ առ դեկո-
սիւ լինել, որ է ճմկ միւս կոդրատոսի վկայի ։
Այլ զառաջնոյն գրէ և Լ. 'ի 26 մայիսի.
այսպ̃. * Յաթէնս կատարումն երանելւոյն
,, կուադրատոսի առաքելոցն աշակերտի. որ
,, 'ի հալածանս ադրիանոսի զեկեղեցին յահ
,, մեծ ըմբռնել՝ հաւատով և ուշիմութ̃ իւ-
,, րով 'ի մի վայր հաւաքեաց. և մատոյց նմին
,, ( կայսեր ) գիրս 'ի ջատագովութ̃ի քրիս-
,, տոնէական կրօնի՝ օգտակար յոյժ և առա-
,, քելական վրդպութ̃ե արժանաւոր ||: Եւ-
սեբիոս 'ի պատմ. եկեղ. գ. 37. ասէ. * Յայն-
,, ցանէ իսկ՝ որ առաքինացանն յաւուրս նց,
,, էին կոդրատոս համդերձ դստերովքն փի-
,, լիպպոսի. զի զնոցանէ ասի՝ թէ ունէին նշ̃
,, շնորհս մարգարէութ̃ե. և այլք բազումք
,, էին՝ որ երևելիքն էին յաւուրսն յայնոսիկ,
,, որ ունէին զաստիճան զառաջին կարգին՝

„ որ յառաքելոց անտի ||. և 'ի վե̃ր բերէ, թէ
որպէս առաքելաբար շրջէին 'ի քարոզութի̃ւ
աւետարանին նշանօք հանդերձ ։ Եւ դրծ̃լ
'ի ե̃. ասէ. * Իսկ տրայիանոս իբրև կալաւ
„ զթգ̃րութիւն զքսան ամ' պակաս վեց ամ-
„ սով, եղիոս ադրիանոս կալաւ զկնի նր̃. նմ̃
„ գրեաց կոդրատոս խօսս նամակի վս̃ հաւա-
„ տոց մերոց... և նոյն ինքն ցուցանէ վս̃
„ հին ժամանակաց իւրոց այսու բանիւք' 'ի
„ պատմելն իւրում այսպէս. Եթէ գործք
„ փրկչին մերոյ հանապազօր հաստատուն
„ կային. զի ողջ ևս էին այնոքիկ' որ բժշկե-
„ ցանն և յարուցին. զի ոչ միայն մինչդեռ
„ յե̃րի էր փրկիչն մեր, այլև յետ փոխելոյ
„ նր̃ յե̃չ աստի' կենդանի էին ժամանակս
„ բազումս, այսպէս' զի և 'ի մեր ժամանակս
„ կացին մնացին ոմանք 'ի նցէ ||. ուստի յայտ
է թէ կոդրատոս էր աշակերտ առաքելոց,
այլ ո́չ 'ի թուո́յ եօթանասնից. և ինքն եպ̃ս
աթենացւոց. որպէս գրէ նա ինքն եւսեբի
'ի դլ. 23. և ասէ, թէ * 'ի ձեռն փութոյ
„ պնդութե̃ նր̃ եկին ժողովեցան ցրուեալքն,
„ և արծարծեցան հաւատք նց̃ ||։

Այժմ մեք ունիս իմաստասիրել, թէ ո̃պ առ-
դորոթէոսի, նոյնպէս և 'ի զանազան յայս-
մաւուրս դտեղ̃ անուանք եօթանասնից' բա-
զում մասամբ են անստոյգ. այս ինչ է ստոյգ'
թէ կային և բազում աշակերտք առաքելոց
և աշակերտաց նց̃, զորս այլևայլ մատենա-
գիրք վերածին 'ի թիւ́ եօթանասնից. յորոց
և մեք զոմանս ունիմք երկրորդել 'ի կարգի

սբ̃ց

տրց յիշատակելեաց ։ Եւ այս չէ ինչ, եթէ
անգիտացուք զստոյգ անուանս միոյ միոյ
յեօթանասնից ․ շատ է զի անուանք նոցա
գրեալ են յերկինս՝ ըստ վկայելոյ տն, որ գրեաց
զնս ․ միայն թէ մեք ծանիցուք զյարգ երա-
նելեացն՝ որք եղեն մեր նախածնողք և լու-
սաւորիչք առաքելական քարոզութբ, ոչինչ
ընդհատ յերկոտասան առաքելոց ․ վսյ և իրա-
ւամբք զոյժ ընդ նմ ներբողէ և զսոսա հոգե-
կիր հռետորն մեր սբն գրիգոր նարեկացի ․
յորմէ առցուք զայս հատուած ծաղկաքաղ
՚ի կնիք բանիս ։

* Քանզի զայսքանեաց բազմագումար դա-
սուց ընտրելոց ո՞ր բան զօրեսցէ ՚ի նիւթ ներ-
բողենի ։ Ո՞ զի յամենասբն գրութե աւե-
տարանական պատմաբանութեն, մինչ զինի
մաքրակենցաղ և տիրաքարոզ ձգհորդութեն՝
առ առաքօղն ձեպեալ հասին, և յանդիման
տն պատկերին զուարթ բերկրանօք զզօրու-
թի անուան կոչողին ինքեանց պատմէին,
զմերժումն ախտից, և զհալածումն այսոց,
յայնժամ աւետարանեաց նց մեծագոյն յու-
սոյ տեսութի ․ խնդացէք ասէ ընդ գրելոյ ան-
ուան ձերոյ յերկինս ։ Ո՛վ փափագելոյ մե-
ծի և աներկեան երանութեանն ․ քանզի որ
գրեաց զնս՝ ած, նոյն և վկայեաց ։ Ա․ յու-
պարգևօք անուանակոչեալ ժառանգք և որ-
դիք տրբ արքայութեն ով ածազգեացք ․ տմ
գոյիւ կատարեալք ․ իսկապէս շնորհիւ պա-
տարագեալք ․ ապէնիազ պարգևօք լցեալք
․․․․ Ոչ առաքեալք միայն, այլև նահա-

տակք․ ոչ խոստովանօղք միայն, այլև մարտիրոսք․․․ ցանկալիք և երևելիք, գովելիք և պատուելիք, խնկելիք և պսակելիք․․․․ Ո՞ք մեր նախնիք, ո՞ք մեր ծնօղք ը̄ աւազանին․ ո՞ք դաստիարակք մերս իմաստից․ ո՞ք վէպք աշակերտելոյս․․․ 'Ի ձեռն սոցա ընդունակ և հաճոյական մաղթանաց հայցման աղօթից ընկալցուք և մեք մասն փրկութե 'ի բարերար գթութեց խնամոցն նոյ․․․ որում փառք յա̄մի․․․ յաւիտեանս յաւիտենից, ամէն ‖։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Համագումար տօնախմբութիւն եօթանասուն և երկուց միանգամայն՝ չիք առ լատինս (բաց 'ի մասնաւոր վկայագրաց), ոչ և ոչ 'ի բասիլեան յայսմաւուրս յունաց․ բայց գտանի 'ի ժամագիրս նց 'ի յունվարի․ 4․ և մեծաւ մասամբ 'ի զանազան աւուրս սփռեալ տեսանեմք 'ի յայսմաւուրս յունաց, ոչ և լատինացւոց՝ առաւել ը̄ անուամբ աշակերտաց պօղոսի ։ Յոյնք հասարակօրէն առաքեալս կոչեն զսոսա՝ քան թէ աշակերտս, եթէ 'ի խօսելն զմիոյ միոյ, և եթէ զգնդէ նց․ զի 'ի Յ․ ժմ․ ասի, * յիշատակ և համախմբութին ս̄բ և փառաւոր առաքելոցն եօթանասնից ‖։ Տինա և 'ի տօնացուցս և 'ի ճաշոցս մեր՝ թէպէտև հասարակօրէն գրի տօն հ̄բ աշակերտաց ք̄ի, բայց կան և հին օրինակք՝ որք ունին այսպէս․ * տօն հ̄բ առաքելոց ք̄ի ‖։

(2) Զոր օրինակ հ̄բ թարգմանիչք ս̄բ գրոց յեբրայականէ 'ի հելլենն՝ առասաբար եօթանասուն թարգմանիչք կոչին, և գործ նց՝ թարգմանուն եօթանասնից, նոյնպէս և առ նախնի մատենագիրս և հարս՝ մանաւանդ յունաց, հ̄բ աշակերտքն՝ պարզապէս եօթանասունք կոչին․ յորմէ արդեօք մոլեալ է և 'ի սովորական ընթերցուած մէջն ղուկայ․ Ժ․ 1․ ը̄ յունաց՝ ասորւոց և ղփտոց,

ղփոոց , * յետ այսորիկ եկեղեցւոյ տր և այլ և ս եօթա-
,, նասուն || . ուր ոչ միայն հայք և լատինք , այլև հնա-
գոյն ձեռագիրք յունականք ունին * այլ ևս եօթանա-
,, սուն և երկու || : Գուցէ յետին գրիչք յունաց կար-
ծելով կրկնուն լինել զբառդ երկու , որ փոքր մի զկնի
յիշի՝ * առաքեաց զնո երկուս երկուս || . 'ի բաց բարձեր
են յառաջին հատուածոյ . ապա թէ ոչ՝ դժուարալուր
է ասելն ոմանց 'ի յետնոց , թէ բուն գրուած սբյն ղու-
կասու լոյէ եօթանասուն , և հարք ոմանք յաւանդութե
առեալ՝ եօթանասուն և երկու եդեալ լցեն նաև յա-
ւետարանի . զի առաւել դիւրին է վրիպակաւ թողուլ
գրչաց զբառ ինչ , քան թէ յաւելուած առնել 'ի նբ ա-
ւետարանին :

(3) Բազում ինչ հաւաքեալ էր մեր 'ի պէտս ծանօթու-
թե , և պատմութե միոյ միոյ յանուանց ընծայելոց հբ
աշակերտաց . այլ լաւ համարեցաք սակաւուք շատանալ
յանդայտս , քան բազմաբանել : Միայն յիշեսցուք զոր-
պիսի և է հեղինակութն դորոթէոսի , որ հետևողութբ
հիպողիտոսի միով դարու հնագունի քան զինքն՝ եղև
հիմն և առաջնորդ ամբանից , զոր այլք զկնի նր գրե-
ցին զեօթանասնից . դբ յայսմաւուրքն մեր կիսով չափ 'ի
նմանէ էառ զանուանս նց , և կիսով չափ այլուստ հա-
ւաքեաց . իսկ ժամագիրք յունաց զբովանդակն զօրի-
նակեաց . ոմ և յայսմաւուրք նց ըս մասին սաս և անդ-
զնոյն անուանս ոփռեաց . զնոյն իմա և զայլոց : Արդ-
գրուած դորոթէոսի է այն , որ գտանի 'ի Ճառընտիրն
մեր Զ . զկնի համառօտ պատմութե ժբ առաքելոց 'ի
նմին վսեմականն անուանեալ դորոթէոսէ , այսպիսի
սկզբնաւորութբ ըս հաւաքման հին գրչի :

* Յաղագս հբ աշակերտացն քի . Դորոթէոսի եպսի
,, տիւրոսի՝ հնագոյն առն հոգեզարդի և մարտիրոսի
,, եղելոյ 'ի ժամանակս յուլիանոսի Թզրի : Այս այս
,, յառաջասացեալ բազմահամբաւս՝ համագրութիս եթող
,, հռովմայեցի և հեղենական . վն զի այլոց լեզուաց 'ի
,, սաղապան հանդիպեալ եղև , և բազմաւս 'ի ձեռն բա-
,, րեպաշտութե : Յետ վախճանի դեոկղետիանոսի և լի-
,, կիենի էառ նա զինքեան բնակարանն հովուելով զառ
,, 'ի տիւրոսն հօտ , մինչև ցյուլիանոս բռնաւոր . վասն
,, զի ոչ ինքն երևէր հալածիչ , այլ ծածկաբար 'ի ձեռն
,, իշխանացն սպանանէր զքրիստոնեայսն : Դարձեալ
,, դորոթէոս եհաս յեդեսացւոց քաղաքն . ուր և ըմ-
,, բռնեալ ասի 'ի յուլիանոսի իշխանացն . և բազում

,, տանջանօք կատարեալ մեռաւ Ճ և Է ամաց գոլով ։
,, Այս ծերս մեծ՝ համագրութիւն մեզ եկեղեցականս
,, եթող. որ սակս ՀՌ աշակերտացն փրկչին պատմա-
,, գրեաց, թէ ուր իւրաքանչիւր ոք 'ի մարգարէիցն և
,, յառաքելոցն զկեանս կատարեաց. և նախկի զՀՌ ա-
,, շակերտացն զնն գոլ ասելով, որոց յոլովք եպսունք
,, 'ի զանազան գաւառս եղեն, զորոց ճծայլին առա-
,, քեալն պօղոս յողջոյնս յիշատակէ. քանզի յետ փրկչին
,, մերոյ յարութեան որ 'ի մեռելոց՝ զբոլորեցն նշ զգառ-
,, նալն նշանակէ, և յառաքեալսն լինել. զորոց զանուա-
,, նակոչութիւն աստ ուրեմն նշանակէ, ասելով այս-
,, պէս. Ծ. Յակովբոս եղբայր տն || Լն. մինչև 'ի
Թիւն Հ երորդ. որ է ը նր՝ տրոփիմոս ը պուդէի և
արիստարքոսի ։

Ուր և 'ի վր բերէ վերջաբանութիւն յոյն թարգմանչին այսպէս. * Զայս ահա երիցս երանեալ և ամենափառ-
,, թամն դորոթէոս՝ 'ի հռոմ եղեալ, 'ի ձեռն հռով-
,, մէական գրոց յիշատակարանս եթող. յորոյ և մեր
,, յեղափոխեալ առ 'ի յելլադացւոցն ձայն փոխաթարգ-
,, մանեալ յայտնի բոլորեցն արարաք զեօթանասնիցն ա-
,, շակերտացն զկարգ և զհաւատ. և Ճշմարտութք զայս
,, ընկալեալ. քանզի և առաքեալն գրելով յաղագս ստ-
,, ցա՝ ասէ. որք և յառաջ քան զիս եղեն 'ի քր ||։

Արդ թէպէտև առ յոյնս գտանի ցորդ այս գործ դո-
րոթէոսի, յորմէ և լատին թարգմանութն նր անցեալ 'ի
մատենադարան հարց, բայց թող զտարբերութն ինչ ինչ
ընթերցուածոց, պակասի առ նս յիշատակարանս. նմին
իրի թէպէտև ըուննին քննիչք, թէ կայ երբևէ 'ի հարս
մր դորոթէոս եպս տիւրոսի նահատակեալ առ յուլիա-
նոսիւ (ը Հ. յունիս. 2. և Յ. հոկտ. 9. և Լ. յունիս.
5.), բայց ոչ կամին ընծայել նմա զայս գործ, այլ
յետնոց ումանց, որք կան 'ի յետին դարս նովին ան-
ուամբ. ոմն և ոչ զգործ հիպողիտոսի կամին ընծայել
երևելւոյն հիպողիտոսի սբյ. մինչ զի առհասարակ նո-
ւաճնորդս գործոյս կոչեն սուտ դորոթէոս, և սուտ
հիպողիտոս։ Եր վն. զի անհաւաստի և վրիպականս
բանք տեսանին 'ի գործս անդ։ Բայց յայտ է թէ այդ
պատճառ ոչ սաէ զհեղինակն, այլ միայն պակասաւոր
ցուցանէ. և զինչ այսի. միթէ չկան պատմական պա-
կասութիւնք 'ի բանս այլոց ևս հարց երևելեաց. ուր
թողից զայն, զի ինչ ինչ՝ որ յոմանց իբրև սխալ դատի,
յայլոց իբրև ստոյգ ընկալեալ է. զր բելարմինոս ոչ

հա-

հաւանի ընդ դնել դորոթէոսի զյակոբ արդարն 'ի կարգ եօթանասնից, զի ինքն կամի դնել 'ի կարգ երկոտասանից. և սակայն այլք միաբանին ընդ մեզ և ընդ դորոթէոսի, թէ մի էր նա յեօթանասնից ։ Ծաղրական է և պատճառն այն, զոր բերեն ոմանք՝ թէ յետնոյ ուրումն հռոմի անուն իցէ դորոթէոս, որոյ գրեալ իցէ և զպատրիարգաց կոստանդնուպօլսոյ՝ իջուցանելով զգաւազան եպսութե տեղւոյն յանդրէէ առաքելոյ և յեւստաքեոսէ աշակերտէ նր, կամելով իմն ասեն՝ ցուցանել զնոր հռոմ հաւասար հնոյն անընդհատ յաջորդութբ իջել յառաքելոց ։ Ծաղրական ասեմ. նախ՝ զի և սբն նիկեփորոս պատրիարգ յունաց զնոյն առնէ. բայց ոչ մեղադրեն նմա նոյն քննիչք. և երկրդ՝ զի թէ ունէին զյիշատակարան մեր 'ի ձեռին, տեսանէին զդորոթէոս հեղինակ բանից հետևօղ հռովմայեցւոց՝ իբրև 'ի նոցանէ ընկալեալ զայս աւանդ, և աւանդեալ յունաց. ապա ասելի է, թէ ոչ դորոթէոս է սուտ, այլ ինչ ինչ 'ի բանից նր ուղղագրելի. ոմ ուղղագրին և մր հեղինակք յիրս իրս, և առաւել նոքին իսկ քննիչք մի ք զմի ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սբյն Փոկասու Հայրապետին, և այլոց համանուն վկայից ։

Զոր օրինակ պատմութի եօթանասուն և երկու աշակերտացն քրի, մանաւանդ թէ և առաքելոց գլխովին՝ արտաքոյ աւանդից սբ գրոց, են մթին և անյայտ, նոյնպէս գտանեմք զպատմութի սբյն փոկասու՝ որ ասի լինել առ առաքելովք և աշակերտօք. զի թէպէտև կայ առանձին վարք նր ընդ ծննդեանն և ընդ սննդեանն, և առան-

ձին վկայաբանութիւն , բայց քանզի ոչ մի փոկաս երևելի , այլ երկու և երեք և աւելի ես հանդիսացեալ են առ վկայագիրս , ոչ դիւրաւ որոշի պատմութիւն միոյն 'ի միւսմէ . ուր կամ ճառընտիրք երևին շփոթել զնոսա ընդ միմեանս , և կամ ընդ վայր զանազանեն յայսմաւուրք : Սորին վասն արժան համարիմ ուրոյն ուրոյն աւանդել՝ որ ինչ բանք իցեն զմիոյ միոյ 'ի սոցա փոկաս անուանելոց , կամ յաղագս մի և նոյն սրբոյ առ զանազանս :

---

## ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

### փոկասու առաջնոյ՝ եպիսկոպոսին սինոպայ պոնտացւոց :

Հ. և Յ. սեպտ. 22 : Լ. յուլ. 14 : Ճառընտ. Ր. Հին. և Ն. 23 : Բոլլանդեանն հաւաքի 'ի Գ. հատ. յուլ. էջ. 629 — 645 :

ՓՈԿԱՍ ԵՐԵՒԵԼԻՆ նշանակեալ 'ի Գրիգորէ ածաբանէ , և աշակերտ անուանեալ քի ( 'ի տաղն առ վիտաղիանոս ) , այն իսկ երևի , զորմէ այսպէս սկսանին ճառել ճառընտիրք մեր : Ընդ ժամանակս բարեկարգութեան յիսներորդի հինգերորդի հաւատոյս հաստատութեան՝ պամփիւլոս

լոս ումն էր պոնտացի բարեգործ և քրիստո-
նեայ ․ և ունէր լծակից առաւել ևս բարե-
գործ մարիամ անուն ․ և էր այրն նաւագործ
և նաւապետ , և հմուտ ծմ՟ նաւարկութե՟ գնա-
ցից ․ և ոչ գոյր նց՟ որդեակ ․ և ուխտիւք և
աղօթիւք խնդրէին 'ի տնէ՟ այ՟ տալ նց՟ զա-
ւակ 'ի սփոփանս իւրեանց կենացն ․ և տուաւ
պտուղ աղօթից նց՟ ․ և յութերորդ աւուրն
տան նմ՟ զքնական կնիքն , և անուանեն զնա
փոկաս ․ և սնուցանէին զնա բազում երկիւ-
ղիւ առաւել քան որ ինչ 'ի տղայութեն յար-
մարի կերակուր և ըմպելի ։

Իսկ իբրև եղեն նր՟ ամք հինգ , ետուն զնա
յուսումն գրոց սրբ՟ց ․ և ուսանէր և իմաստնա-
նայր առաւել քան զհասակակիցսն ․ և 'ի լա-
ւագոյնսն առաջնորդեալ յարդարուիս 'ի շնոր-
հացն հոգւոյն՝ յառաջադէմ լինէր օրըստօրէ
յամ՟ վարս բարեկարգութե ․ և 'ի պահս պըն-
դութե զինքն կրթէր , և 'ի հանապազորդ
աղօթսն արտասուօք 'ի տուէ և 'ի գիշերի ։
Իսկ յորժամ եղև տասն ամաց , խորհէին
ծնօղքն նր՟ , զի զնաւարկութե արուեստն ուս-
ցի ։ Իսկ եղև ձմերել նաւու միոյ աղեքսան-
դրացւոյ 'ի պոնտոս ․ և իբրև եհաս գարուն ,
կամեցան գնալ ․ և ժողովէր բազմութի յոյժ
իբրև հազար և եօթն հարիւր արանց , որք
շուրջ առեալ ըմբռնեցին զնաւն , և կամե-
ցան ընկենուլ 'ի ծովն՝ հրամանաւ նաւապե-
տին , որում անուն էր թէոփն ։

Իսկ անդէն լծարան նաւի խորտակէր ․ և ե-
րիտասարդք երեք ընկրկեալք 'ի բազմութէն
վախ-

վախճանեցան . և սաստիկ խռովութիւն լինէր
ամ՟ մարդկանն . և 'ի նիրհել թէոփիլի 'ի տրտ-
մութենէն՝ ազդ. եղև նմ՟ 'ի տեսլեան խնդրել
զփոկաս զորդին պամփիլեայ և մարիամու ,
զի նա եկեալ փրկեսցէ զձեզ 'ի վտանգիցդ
բանսարկուին : Եւ իբրև ածին զմանուկն ,
ճչեաց դևն և ասէ . փոկաս ծառայ այ՟՝ զի՞
է քեզ գալ և հալածել զիս 'ի նաւէս , որ
հանդերձեալս էի կորուսանել զսոսա . զայս
ասէր և շարժէր զնաւն՝ ոչ թօթափել կա-
մելով 'ի ծով անդր զմարդիկն և որ ինչ 'ի նա-
ւին էր : Իսկ փոկաս աղօթիւք հալածեաց
զդևն , և խրատեաց զամբոխն յերկիւղն այ՟
և 'ի հաւատս և 'ի սէր և 'ի յոյս կենացն յա-
ւիտենից . և յուղարկեաց զնս՟ խաղաղութբ՟՝
ուր երթալոցն էին : Եւ ել հռչակ զնմանէ
ը՟ ամ՟ երկիրն պոնտոսի , և որ ը՟ ծով նաւէ-
ին՝ պատմէին զայս ամ՟ :

Դարձեալ՝ նաւ մի կառուցեալ էր 'ի ծո-
վուն 'ի մէջ վիմաց , և ծփեալ 'ի սաստիկ ա-
լեաց մերձ յամասիա . և տեսեալ քաղաքաց-
ւոց զվտանգ նաւորդացն , զի մերձ էր նաւն
'ի խորտակիլ , ազդ. արարին փոկասու պա-
տանւոյն . և նա մտեալ 'ի կուրն երկու ա-
րամբք՝ փութանակի հասանէր 'ի նաւն . և
աղօթիւք ցածուցանէր զալիսն , և ապրե-
ցուցանէր զվտանգեալսն . բժշկեաց և ըղ-
դիճահար մի՝ որ կայր 'ի նաւին : Եւ մատու-
ցին նմա ոսկի և արծաթ , և նա ոչ առնոյր
յանձն . և իբրև աղաչեցին՝ զի առցէ և տա-
ցէ աղքատաց զհարիւր դահեկան , դարձաւ
'ի

՚ի քաղաքն ամասիա և բաշխեաց զա՟մ կարօտելոց ։ Եւ ո՟պ զանմարմին ՚ի մարմնի վարս ստացեալ՝ բզ՟մ հիւանդաց և այսահարաց եղև բժշկութե՟ առիթ յանուն տ՟ն յ՟ի ք՟ի ։ Նոյնօրինակ ազատեաց զմիւս ևս նաւ՝ որ գայր ՚ի պոնտոս, և ՚ի բազում աւուրս հողմակոծեալ՝ ոչ կարէր ՚ի նաւահանգիստ հասանել ուրեք ․ քանզի յաղաչել նաւորդաց զա՟ծ, և ՚ի բարեխօս ունել զս՟բն ա՟յ զփոկաս՝ հասանէր նա ազդեցութ՟բ տ՟ն ՚ի ծովեզրն ․ և գտեալ նաւակ մի պատրաստական՝ դիմեաց ՚ի ծով անդր մինչև ՚ի տեղի նաւուն ․ և յաղօթս կացեալ ամենեքումբք հանդերձ՝ ապրեցոյց զն՟ա ՚ի նաւահանգիստ ։

Եւ ապա լնոյր քսան ամ երանելւոյն փոկասու, և առաւել յառաջադէմն նկրտէր սրբութ՟բ և նշանագործութ՟բ ․ և նա ոչ հպարտանայր յաղագս այսպիսի շնորհի տուեալոյ նմա ՚ի վերուստ ․ այլ՝ էր խոնարհ սրտիւ և հեզ բարուք, և առ կարօտեալս բարեգործ, ա՟ծասէր և եղբայրասէր ․ անձեհէր ՚ի բարեպաշտութե՟ ջանս, անյագ ցանկութ՟բ յա՟ծային վարս՝ հանապազորդ աղօթիւք և պահօք պնդութե՟ ․ ոչ ՚ի գովութիւն զուարճանայր, այլ ա՟յ զփառսն մատուցանէր մաքուր սրտիւ, մաքուր և ա՟մ զգայարանօք ․ և ոչինչ նուաղէր ՚ի բարի գործոց, այլ օր ը՟ օրէ յաւելուածովքն լինէր ։

Եւ յետ քսան ամի կոչեցաւ ՚ի սարկաւագութի ․ և առաւել ևս յորդորէր ՚ի բարեպաշտութե՟ ջանս ։ Եւ ապա յետ երեսուն ամի

՚ի

'ի քահանայութի. և ևս առաւելոյր և առա-
տանայր 'ի բարեգործութիւնս ամ։ Իսկ յետ
երեսուն և երից ամաց յեպսութի կոչեցաւ.
ոչ բռնազբօսելով եանց ը ամ աստիճանն,
այլ 'ի ոքց բռնադատեալ եղև 'ի կոչումն սար-
կաւագութե և քահանայութե և եպսութե.
և զկրօնաւորութե զվարսն ը ամենայնն խառ-
նեալ արդարև արժանի վերին կոչմանն որ
'ի քն խորհէր. և ըստ ճշմարտութե աւե-
տարանին հովուէր զժողովուրդն տն. ուշ
եդեալ 'ի յառաջադէմն խորհրդով բանիւ
և գործով միշտ լինէր. ոչ յումեքէ 'ի հա-
կառակացն դրդուեալ, այլ հոգւով վայել-
չութբ անսասանելի հանապազ կեայր 'ի պատ-
ուիրանս քնի այ մերոյ. և այնպէս յառաքի-
նութե վարս երևելի և սքանչելագործ էր 'ի
ողջայութե մինչև ցվախճան, և հռչակաւոր
առ ամենեսեան՝ առ հաւատացեալսն և առ
անհաւատսն. և ոչ 'ի կենդանութեն միայն
էր ալեկոծելոց փրկիչ, այլև յետ վախճա-
նին տուեալ նմա պարգևս յայ, զի որք վը-
տանգին 'ի ծովու, և բարեխօսութբ նր կար-
դան առ որ, գտցեն զփրկութի անձանց։
Իսկ թէ զիարդ եղև վախճան ոքյն, ոչ գրէ
'ի կարգի աստ վարուց՝ վկայաբանն ճառըն-
տրաց մերոց. այլ 'ի վր բերի ուրոյն խորա-
գրով վկայաբանութի ինչ ոքյն փոկասու իբրև
գիր շրջաբերական գրեալ յուխտէ իմեքէ
եկեղեցւոյ՝ սկսեալ 'ի պոնտացւոց մինչև 'ի
մեծն հայս. այն է՝ զոր յայսմաւուրք հայոց
և յունաց զայլմէ իմանան փոկայ. որպ ունիմք
ասել

ասել զկնի. իսկ զառաջնոյն փոկասու՝ յետ քաղելոյ զնախագրեալ վարս՝ այսպէս բռ-վանդակեն զկատարումն միաձայնութե ՚ի

սեպտ. 22 ։

Որդ եպս եղեալ սինոդայ ՚ի պոնտոս սբ հայրապետն փոկաս՝ փայլէր բազմապատիկ սքանչելեօք. որովք և զբազումս ՚ի հեթա-նոսաց առ քս դարձուցեալ մկրտեաց ։ Եւ յաւուր միում տեսանէր աղաւնի մի, որ էջ ՚ի բարձանց, և նստաւ ՚ի վերայ գլխոյ նր. և տուեալ զպսակ՝ ասէր. ընկալ փոկաս ըզ-նշանակ վախճանի քո. զբաժակ ոն արբցես, և եղիցիս յաղթօղ զօրական քսի ։ Եւ զկնի սակաւուց ՚ի խաղալ տրայիանոսի կայսեր յարևելս՝ լուեալ վս փոկասու՝ առաքեաց կալաւ զնա իբրև զխափանիչ զոհից կռոցն. և իբրև ածին զնա առաջի թգաւորին՝ հար-ցանէր զհաւատսն և զբախտն ։ Եւ նա խոս-տովանեցաւ զքս ած, և զինքն ծառայ քսի՝ եպս և մշպ քրիստոնէից. և յանդիմանեալ անարգէր զկուռսն և զկռապաշտութի թա-գաւորին ։ Ընդ որ բարկացեալ տրայիանոս՝ չարչարեաց զնա բազմօք. և ապա հրամա-յեաց սպանանել զնա սրով. և արկանել զմարմինն ՚ի հուր. և այնպէս կատարեցաւ

սբ եպսն փովկաս ։

Եւ տուեալ շնորհք անուանն նր և ոսկերացն, զի որք վտանգին յալեկոծութիս ծովու և կո-չեն զնա յօգնութի, առժամայն փրկին ՚ի վտանգէ, և խաղաղութե հասանեն ՚ի նա-ւահանգիստն ։ Այլ չինեալ են յանուն տեղիս եկե-

եկեղեցիս յանուն սրբոյն փոկասու. և յորժամ տեսանեն մարդիկ տեղեացն նաւս յաւելոծութե, բանան զդուռն տաճարին՝ որ յանուն սրբոյն փոկասու, և աղաչեն զա̅ծ բարեխօսութբ նր. որով լինի փրկութի նաւակոծելոց:

Իսկ ըստ այսմ զանազան եկեղեցիս սրբոյն փոկասու յիշատակեն յայլ և այլ տեղիս պատմաբանք յունաց ըստ կոստանդեայ պերփերուժենայ: Իսկ սբ ոսկեբերանն նշանակէ զփոխադրութի նշխարաց նր, յասել անդ՝ ի ճառն. նշ. յաղագս սբ և պատուական Հնայեն փոկասու, թէ առ մեզ եկն ՝ի պոնտոսէ: Ուստի այլ փոկաս երկրորդ յարևմուտս նահատակեալ երևի այն՝ որոյ նշխարք ամփոփեցան ՝ի վեննա գաղղիոյ. զոր արևմտեան մատենագիրք չփոթեն ըն առաջնոյն. վսյ այսպէս գրի ՝ի յայսմաւուրս լատինացւոց. յուլ. 14. * Ի
,, սինոպ պոնտոսի (կատարումն) սրբոյն փո-
,, կասու վկայի՝ նորին քաղաքի եպսի, որ առ
,, տրայիանոս կայսերաւ յաղթական գտեալ
,, բանտից և կապանաց, սրոյ և հրոյ վն քսի,
,, սլացաւ յերկինս. որոյ նշխարք բերեալ ՝ի
,, վեննա գաղղիոյ՝ եդան ՝ի տաճարի սրբոց ա-
,, ռաքելոց|| : Հաւաստի է, թէ ոչ ՝ի հռովմ կային նշխարք սրբոյն փոկասու, նոյնպէս և ՝ի գաղղիա. այլ թէ ո՞ր այն փոկաս իցէ, դըժուարին է սահմանել. մինչև գրել և պետրոսի նատալեան նոր մատենագրի այնպիսի ինչ՝ որով զարևելս և զարևմուտս ՝ի մի զօդել առ ՝ի միացուցանել զայլ և այլ սբս.

* Մար-

* Մարմին նոյն վկային փոկասու ( ասէ՝ ) 'ի գաղղիա քաղաք հայոց ծին բերեալ՝ անդ թաղեցաւ || . որ է չփոթումն անուանց տեղեաց զոյգ ը անուան նոցա . զոր թերևս որոշեսցեն առաջիկայ վարք այլ ևս համանուն վկայից ։

## ՎԱՐՔ ՓՈԿԱՍՈՒ ԵՐԿՐՈՐԴԻ,

( որ ը ճառընտրաց նոյն է ը առաջնոյն ) ։

**Ճ . և Յ . յուլիս . 23 ։ Ճառընտր . և Եուլլանր .**
**որպէս 'ի վեր անդր ։**

Միաբան աւանդեն աստանօր յայսմաւուրք հայոց և յունաց , ոչ և ժամագիրք նց , թէ բաց 'ի նախաճառեալ սրբյն փոկայ եպսին պոնտոսի՝ կայր զայնու ժամանակաւ և այլ ոմն երևելի վկայ փոկաս անուն . զորոյ զքաղաքն և զտեղին լռեն յոյնք , և 'ի մեզ եպս հռովմայ գրի , իմն եպս ոմն արևմտեան . և զկատարումն նր յայս բովանդակեն , թէ զկնի քննութն յատենի ափրիկանոսի եպարքոսի՝ դատեալ եղև և առաջի տրայիանոսի կայսեր , և արկաւ 'ի կիր . և ապա 'ի բաղանիս . ուր աւանդեաց զոգին . և ը մարգարէութն սրբյն յետ աւուրց ինչ մեռաւ և տրայիանոս ։ Իսկ ահա զայս պատմութի ճոխագոյն վկայաբանութը գրեն ճառընտիրք՝ իբրև զառաջնոյն փոկայ , վսեմ ո-

ոճով շրջաբերական նամակի․ որոյ կայ ցարդ եւ՝ նաեւ յունական բնագիրը, սկիզբն առնելով այսպէս։

( [illegible] )։ * Բանզի բազում անգամ՝ ի գալստենէ անտի փրկչին մերոյ քրիստոսի գթասիրի և իմաստնոյ, հզօրի և բժշկի, հովուի և վիճակի, տն և այ, ընդհուշակաւոր և զանձաւ, զոր և զանարատ խորհուրդն ընկալեալ քրիստոնէից, և կնքեալ ՚ի ձեռն բազմաց և մեծամեծ նեղութեց, պաշոց և հալածանաց և փախստեան և համբերութեան, և պատուոյ և անարգութեան, փառաց և անփառութեան, չարչարանաց և փրկութեան, բազում անգամ սրբք և անարատք՝ հաւասարք գոգցես հրեշտակաց առաքելովք, չարչարեալք վն անուանն և փառաւորեալ խորհրդեանն, ետուն մեզ զօրինակ զքնի չարչարանացն, և զիւրեանց անպարսաւ և անխոտորնակ առ նա հաւատոցն, կարեւոր թուեցաւ մեզ՝ ամենեցուն ամ ուրեք զամբիծ և զգեղեցիկ և զփառաւոր կրօնաւորութի քաջութե նահատակութե երանելեաց վկայից՝ յիշատակարան ՚ի ձեռն այսր գրոց նշանակել ձեզ եղբարք, որք բնակեալդ էք ՚ի պոնտոս և ՚ի բիւթանիա և ՚ի պամփղագոնիա և ՚ի միւսիա և ՚ի գաղատիա և ՚ի կապպադովկիա և ՚ի մեծն հայս․ ( այս անուանք պակասին ՚ի յունական օրինակի․ ) զի նմանօղք եղեալք նց նահատակութեանցն և

Ի Գ մեք

մեք նախանձակիցք լիցուք ։ Վասնզի յիշելով զնց՟ չարչարանսն , որ հրով և սրով և խաչիւ՛ և գաղանօք և հեղձամղձուկ լինելով 'ի ջրակոյտս , և քերանօք և պէսպէս տանջանօք և զանազան խոշտանկանօք՝ մեք խրատիմք յառաջադէմսն նկրտել , և մեծամեծ բարեացն բաժանորդս լինել մեզ ակնունիմ 'ի տ՟նէ մերմէ յ՟սէ ք՟սէ ։

Նա յոյժ առաւել յայտնի և յանկաւոր 'ի քաջալաւութե՟ և 'ի համբերութե՟ երանելոյն փոկասու ․ որ ոչ միայն 'ի ձեռն հրոյ և տանջանաց , այլև մինչդեռ էր յ՟ակիր կեանս , գեղեցիկ և անարատ առաքինութե՟ քաղաքավարեցաւ՝ միշտ առաջի աչացն ունելով զփրկիչն ք՟ս ։ Վասնզի մինչդեռ յաստիս մանկութեն էր , ո՛չ պատրեցաւ 'ի ժանտ և յապականիչ օձէն , այլ ոմ՟ ոք և անբիծ աղաւնի տ՟ն 'ի տղայութե՟ լծաբարձ և բարեպաշտ , և առ ամենեսեան երևելի այր՝ որոց 'ի կեանս ծ՟իս ․ զի որք աղքատք էին , ձեռնտու էր և օգնական ․ և մեծատանց խրատիչ և յորդորիչ 'ի գեղեցիկն և յօգտակարսն ․ և միանգամայն ասել՝ բարեպաշտութե՟ է՟ ա՟մի ա՟մ եղև ։ Այլ զհանդէս ձգնութե՟ նր՟ ոչ ոք 'ի մարդկանէ է՟ արժանւոյն պատմել կարասցէ ․ սակայն մեք խուն մի նշանակեսցուք ձերում ա՟ծսիրութե՟դ ։

* 'Ի ժամանակս տրայիանոսի Թգ՟րութե՟ն՝ բազմաց յափշտակեալ 'ի քրիստոնէից երամէն ․ ․ ․ նոյնպէս և մեծաւ խուզիւ՛ զն՟ք հովի՛ն հետազօտէին ․ և ըմբռնեալ զերանե-

լին՝ ամենն յատեանն ։ Ափրիկանոս եպարքոս
ասաց ․ այդ է փոկասն՝ որ ասէ չլինել ածս ․
և ոչ զինքնակալն տրայիանոս համարի ած ․
արդ ասա ինձ , ոչ ապաքէն ամ պտրզմունք ը
ձեռամբ նր ընկրկեցան ․ արդ ով այլ ոք իցէ
ած ․ իսկ փոկաս լուռ կայր ։ Ափրիկանոս
ասաց ․ զի՞նչ ասես առ այդ , չտա՞ս պխնի ․
եթէ ոչ գիտես՝ ուր եկիր ։ Փոկաս ասաց ․
եթէ վն այն խմոյ ասես , եթէ է ած յեր-
կինս , բարիոք է ․ ապա եթէ վն մարդոյ ա-
սես , ամենևին մի ակնունիր յինէն լսել ինչ ։
Ափրիկանոս ասաց ․ իսկ ինքնակալքն չե՞ն
ածք ։ Փոկաս ասաց ․ այդ միայն չէ՞ շատ
տրայիանոսի՝ զի թագաւոր անուանի , այլև
զանզուգական ինքեան անուն դնէ ։ Ափրի-
կանոս ասաց ․ գքև զի՞ գան քրիստոնեայքդ
իբրև զած ։ Փոկաս ասաց ․ քաւ լիցի և ըղ-
մտաւ անգամ ածել զայդ ումեք ․ քզի մար-
դիկք՝ որ յարեան թաթաւեցն և ը մեղս զան-
գեալ և ը մահու դրաւեն , և պարտականք
համարս տալոյ ը կենացս և ը աստի գործոց
և կրօնիցս , և ը դատաստանաւ աներևու-
թին այ վարեալք , զիա՞րդ կարեմք զայնպի-
սի ահաւոր անունն բնաւորապէս կրել ։
Ափրիկանոս ասաց ․ և զիա՞րդ վն քո համ-
բաւ մինչև յինքնակալն եհաս ։ Փոկաս ա-
սաց ․ ոչ իբրև զայ , այլ իբրև զմարդոյ այ ․
բայց ես յոյժ աննման եմ առաքելոցն տն
մերոյ յսի քսի կրօնաւորուեն ։ Ափրիկանոս
ասաց ․ բազում սքողաստիկոսաց պէտք են
վիճել ը քեզ ։ Փոկաս ասաց ․ եթէ զընաւ
իսկ

Իսկ զԾի զսքողաստիկոսս 'ի մի վայր ժողովեա-ցես , ոչ գտցին արժանի պիտնի տալոյ միում ումեք 'ի տն աշակերտաց ։ Ափրիկանոս ա-սաց ․ այնպիսոյ վճարի ո՞ ուշ ունիցի խաչե-ցելոյ ․ ․ ․ ․ ( Եւ յետ բազում պիտանաւորութեց հանգոյն այլոց վկայաբանութեց , իբրև ստի-պեաց զնա եպարքոսն 'ի զոհել կռոց , և նա ոչ եառ յանձն , սպառնայր եպարքոսն տան-ջանօք և հրով վատնել զնա ։ յայնժամ ) Փո-կաս ասաց ․ արդ եթէ հաճոյ է քեզ տանջել զիս վն չզոհելոյ պղծոց , ահաւասիկ կամ , որպէս և պէտք են քեզ՝ տանջեա ։ Ափրի-կանոս ասաց ․ մեք սրբոց և անարատից ածոց զոհեմք ․ իսկ դու պիղծս զնոսա գոլ ասես ։ Փոկաս ասաց ․ ոչ միայն պիղծք , այլև ամ-բարհաւաճք և կախարդք և չնացօղք և տա-ճարակապուտք և դևք անշունչք են , ոչ մի-այն նոքա , այլև որ ասենն այլ ածք , բայց 'ի միոջէն՝ որ 'ի վր ամի է ած ամենակալ ․ որում փառք և պատիւ և զօրութի յաւիտեանս յաւիտենից ։

Եւ բազմութՃե եղբարցն՝ որ անդ կային , ա-սացեալ զամէնն , յանկարծակի հնչիւն եղև իբրև զձայն բռնութե ջուրց բազմաց , և սա-սանութի մեծապէս ․ մինչև յահէ անտի ան-կեալ ափրիկանոսի՝ կիսամահ դնէր 'ի գետ-նի ամուռնչ , և ամ որ շուրջ զնովաւ զօրքն ։ Ընդ տեսաք՝ որոց կամեցաւ տր ցուցանել , քանզի ծագեաց լոյս սաստիկ տասնպատիկ առաւել քան զարեգակն յերկնից ․ և երևե-ցան հրեշտակք երեք 'ի վր հրեղէն երիվա-

րաց . և երկիւղ և դողումն յոյժ զմեօք ան-
կեալ՝ ամենեքեան ՚ի միասին անշշունչ կայ-
աք . և նոքա ողջագուրեալ զերանելին փո-
կաս և խոստացեալ Է նմա՝ անդրէն յերկինս
վերացան ։

Եւ զկնի կէս ժամու եղելոյ ընթացեալ տե-
րենտինա կին ափրիկանոսի հերարձակ՝ հան-
դերձ հինգ որդւովքն և ամ սպասաւորօքն՝
անկանէր առաջի երանելոյն փոկայ , և ժտէր
մեծաւ պաղատանօք , զի շնորհեսցէ նմ զայրն
իւր , յանձին ունելով հաւատալ ամ տամբ
իւրով ։ Յայնժամ կոչեալ երանելւոյն փո-
կայ զաւխտ եկեղեցւոյն՝ աղօթս արար վա
առնն փրկութե . և նա նորահրաշ օրինակաւ
անակնկալ փրծեալ՝ չոքաւ պատմել տրայիա-
նոսի զանհամեմատ զօրութիւն քսի , և զմեծ
յոյսն քրիստոնէից || ։

Յայնժամ կոչեաց տրայիանոս զփոկաս , և
հարցափորձէր զնա բազմօք՝ ոչ յերկար գրի
՚ի վկայաբանութեն , ետ հանել ՚ի կախաղան
և քերել . և յաղօթել սրբյն՝ եկն ձայն յերկ-
նից , որ հրաւիրէր զնա ՚ի դրախտն երկնա-
ւոր , և տրայիանոսի սպառնայր զպատրաս-
տել տանջանս յաւիտենականս ։ Ուստի զա-
հի հարաւ թագաւորն , և ետ տանել զնա ՚ի
բանտ և ընդել ՚ի կոճեղն ։ Եւ զմէջ գիշե-
րաւն կայր յաղօթս երանելին փոկաս ։

* Եւ յասել նր զամէնն՝ բացաւ բանտն , և
բխուրաւոր ջահք լուցան յամրոցին ։ Զայն
տեսեալ զինուորացն ( չորեքեանց՝ որք պա-
հէին յարտաքուստ կողմանէ զբանտն , ) ՚ի
ներքս

ներքս վազեցին . և անկեալ առ ոտս նր՟՝ խնդ-
րէին զլուծացումն ս՟բ աւազանին ։ Իսկ երա-
նելին առեալ զարսն և տարեալ 'ի ծովեզրն
արտաքոյ քաղաքին՝ ետ նց՟ զք՟ական կնիքն .
որոց և տ՟ր զկնիքն երևեցոյց . և արարեալ զօ-
րհնն ա՟մ՝ մտին միւսանգամ 'ի քաղաքն ‖ ։
Եւ ը՟ աւուրն դարձեալ քննեալ զնա յատե-
նի տրայիանոս՝ ետ ընկենուլ 'ի գուբ կրոյ .
ուր կացեալ նր՟ իբրև ժամս երիս՝ ել անտի
անվնաս ։ Ապա եարկ զնա թագաւորն 'ի բա-
ղանիս , կմ՟ յաւազան ջեռուցեալ . և էր այն
իբրև զպղինձ շողացեալ 'ի հրատից . յայն-
ժամ յաղօթս եկաց ս՟րբն փոկաս , և ասէ .
* Գոհանամ զքէն տ՟ր , զի արժանի արարեր
զիս վ՟ս քոյոյ անուանդ կապանաց և բանտից ,
տանջանաց և փորձութեանց բազմաց . և արդ
տ՟ր առաքեա զհրեշտակ քո , և փրկեա զիս
'ի ձեռաց տրայիանոսի . զի մի երբէք ասիցեն
հեթանոսք , թէ ո՟ւր է ա՟ծ նր՟ ։ Եւ կատա-
րեալ նորա զաղօթսն , և առաքեալ զամենն՝
աւանդեաց զոգին 'ի մտանել արեգականն ‖ ։
Եւ յորժամ հանին զմարմին ս՟բյն 'ի բաղա-
նեաց , գտաւ անուշահոտ իբրև զնարդոս և
զիւղ պատուական . և 'ի վաղիւ անդր երևե-
ցաւ ս՟րբն , և ասէ ցթագաւորն . * Բռնաւոր
տրայիանէ, ե՛րթ 'ի պատրաստեալ տեղին քո
յայն անհնարին անդունդսն 'ի հուրն յաւի-
տենական . քանզի ինձ բացաւ դրախտն փափ-
կութե , և քեզ բացաւ վիհ դժոխոց ը՟ կռոցն
քոց . և չի՛ք քեզ ժամանակ ներելոյ՝ բայց
միայն զերիս աւուրս . զի բազում արիւն ար-

դար հեղեր ։ Եւ երթեալ տրայիանոս 'ի պա-
լատն իւր արքունի զարհուրագին , և 'ի մեծ
վտանգի սաստիկ ջերմամբ նեղեալ , և ան-
կեալ յախտի պատգարակս՝ որդնեռաց սա-
տակեցաւ ․ ( զոր արտաքինք 'ի սեղինուս կի-
լիկիոյ , կամ 'ի սելևկիա իսաւրիոյ մեռեալ
ասեն ) ։

Զայսպիսի վարուց ուղղութն և մեծ քաջու-
թե նահատակութն նախ եցոյց երանելին
փոկաս 'ի պոնտոս , որ պատմի մինչև ցայսօր
նաւապետ նաւավարաց , և խօսնակ ամնի ․
որոյ ճշմարիտ պատմութիւն փառաւորեալ
համբաւի 'ի կողմանս հայոց և պոնտացւոց
և պամփիղագոնացւոց , այլ առաքելական
երևեալ 'ի մեզ , և իբրև զմիոյ ուրուք յերա-
մէ սրբցն առեալ զնշան յաղթութե , և զառ-
հաւատչեայ կենաց խոստացելոց 'ի տնէ ․
որում փառք և զօրութի յաւիտեանս յաւի-
տենից , ամէն ‖ ։

Կամ որ նոյն է՝ ըստ յունական ընթերցուա-
ծոյ ․ * Զայսպիսի վարս և զայսպիսի նա-
հատակութի համբերեալ երանելին փոկաս՝
առաջին 'ի պոնտոս՝ ասի մինչև ցայսօր նա-
ւավար նաւորդաց , խոստացեալ յամնի ․ որոյ
փառաւորեալ վկայութի նահատակութեն
խոստացեալ լինի յամ կողմանս հայաստանի ,
այլ առաքելական գոլով առ մեօք՝ 'ի պարս
սրբց փոխեալ , առեալ զբրաբիոն 'ի տնէ մեր-
մէ յսէ քսէ ‖ ․ ԼԱ ։

Որդ՝ մի և նոյն այս վկայաբանութի է , որ
ըստ Ճառընտրաց գրի զսրբյն փոկայ հայրապե-
տէ

տէ պոնտացւոյ 'ի Հայերէն և 'ի յունարէն օրինակս . զոր յայսմաւուրք յունաց և Հայոց ծայրէ 'ի ծայր քաղեն 'ի յուլիսի 23 . բայց ոչ յանուն նորին փոկասու պոնտացւոյ , զորմէ խօսեցան 'ի սեպտեմբերի 22 . այլ՝ յանուն այլոյ , զոր յոյն յայսմաւուրքն պարզապէս կոչէ փոկաս ս̃ք վկայ , և Հայոցն՝ փոկաս ե̃պս 'ի Հռովմ քաղաքի : Եւ զերկոցունց իսկ ուրոյն ուրոյն շարականք և տաղք պանծալիք նուագին 'ի ժամագիրս ն̃ց . զ̃ր զառաջնոյն ասի՝ * քակտիչ ունայնութե̃ կռոցն , առաջնորդ քաՀանայութե̃ , Հայր ս̃ք , կրկնապսակ , լուսատու ա̃մ երկրի Ճառագայթիւք սքանչելեաց . որոց 'ի ծովու Հայր , ամենեցուն օգնական || , ե̃ւ . նոյնպէս և զերկրորդէն , * Հրեշտակ 'ի մարմնի երևեալ , քաՀանայապետ փառաւոր , լուսատու Հաւատացելոց անշէջ Ճառագայթիւք սքանչելեաց , 'ի խորոց ան̃մծութե̃ վերբերող Հօտի իւրոյ , 'ի ծովէ ամբարշտութե̃ 'ի նաւաՀանգիստ Հանօղ եկեղեցւոյ , երագաՀաս խնդրողաց 'ի վիշտս ծովու և նեղութե̃ || . ե̃ւ :

Սրովք բանիւք ոչ այնչափ յերկուս բաժանի ս̃քն փոկաս , որչափ թէ միանայ . և արդարև գիրքն է միաբանել և զկարծեցեալ տարբերութի̃ս պատմութե̃ց . և այնպէս մի և եթ Ճանաչել փոկաս Հայրապետ՝ յերկուս տեղիս տօնեալ 'ի յունաց , և երկրորդեալ 'ի մեր յայսմաւուրս : Մ̀նայ խնդրել , թէ ո՞ իցէ փոկաս պոնտացի պարտիզպանն , զոր իբրև երրորդ փոկաս յիշէ ժամագիրք յունաց :

# ՎԱՐՔ ՓՈԿԱՍԻ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ։

( որ ունի նմանութիւն յոյժ ընդ առաջնոյն )։

Յ. ծամագր. ուղղ. 22։ Կոմբեֆիզ 'ի յաւելուածս մատենադարանին հարց. հատ. Ա. երես. 170։ Բոլլ. որդէս 'ի Հէր անդր։

Մի միայն հեղինակ այս վարուց Ճանաչի այրն երևելի՝ սբն Աստերիոս եպս Ամասիոյ պոնտացւոց, որ էր ասեն յաւուրս յուլիանոսի կայսեր և յաջորդաց նր. զորոյ զբուն բանս 'ի յունականէ թարգմանեալ դնեմք բառ առ բառ, ընդ վերնագրով.

* Ս. Աստերիոսի եպիսկոպոսին Ամասիոյ ներբողեան 'ի սբն 'ի պարտիզպան վկայն Փոկաս։

Գեղեցիկ և օգտակար Ճգնողացն փոյթ՝ որցն յիշատակ. զի ոչ բանիւ միայն դաստիարակէ զտեսողս առաքինութե և բարեպաշտութե, այլև զգործս ուղիղ քաղաքավարելոցն լուսափայլ վէպս կացուցանէ։ Սորին վս և տրն մեր զքաջալերութե հրահանգս տալով՝ ասէ. իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի. և այլուր. լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, ո՛պ զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր՝ որ յերկինս է։ Ոչ զի բանական դաստիարակութի քան զգործնականն ներգործու-

ծու.

ծուլի նուաստագոյն է և տկարագոյն մ̃պ ·
և որչափ քան զլսելութի՝ զտեսութին ստու-
գագոյն ասեմք զոլ, նոյնչափ խոստովանել
է քան զբանն՝ գործն լինել զօրագոյն .....
Այլ ես այսօր 'ի պատուական տաճար երից
երանելւոյն փոկայ հասեալ՝ 'ի տեղւոյն լցել
լինիմ յիշատակաւ միանգամայն ասացելոցն
զնմանէ պատմութեց անի · տեսանեմ զպար-
տիզպանն արուեստիւ, զանխարդախն հոգ-
ւով, զօտարասէրն, զծովեզերին զվայելչու-
Թի, զմիջերկրեին զբարերարն, զքեցն սրբա-
գոյնն, և զփառաւորելոյն քնիւ զփառաւո-
րագոյնն ։ Բանզի որք և ծայրին համօրէն
քաջազգի վկայից դասակարգութի՝ չարչա-
րանօք զ'ի վ̃ր չարչարանաց ընծայեցուցանէ
շնորհ, և արեամբ զ'ի վ̃ր արեան փրկչին
բոլորեցունց զփոխարէնն ընու կատարումն ·
բայց 'ի սոսին յայսոսիկ ոչ մի ամենեցուն
փառք, և ոչ միով չափով զուգահաւասար մե-
ծակին վարձք բոլորից · այլ յառաջնոյն և
յերկրորդէն և ոչ որքն խորշի դասաւորու-
Թի ։ Այլ պատճառ այսմ վարկանիմ զյոյժ
անվրիպութի դատաւորին և զանհակամիտու-
Թի · քանզի անկնարկէ և 'ի տանջանացն մե-
ծութի, և 'ի ժուժկալութէն տևողութի ·
և կշռեալ զձգումն՝ զ̃ը արժանին վարձս
բաշխէ նահատակաց .... Իսկ ընդ այսոսիկ
անցի, զի ցուցից, որպէս այն՝ որ այսօր մեզ
ընծայեաց զհամախմբութես աւուր, քան
զընկերս և զմարտակիցս է երևելագոյն ·
քանզի այլքն՝ ոչ ամենեքին յամենեցունց
Ճա-

ճանաչէին , և ո՛չ քարոզեալ ունէին զքաջալա-
ւութի :

Զփոկաս ոչ ոք է՝ որ անգիտանայ · այլ ո՛չ ճառագայթ արեգական ամ աչաց ըՀարկանի , սոյնպէս և վկայիս այս համբաւն յամենեցուն հնչէ լսելիս · և զի համառօտ ասացից , որք միանգամ զնի՛ր ծանեան 'զՔս , նուքին և զհաւատարիմ ծառայն ծանեան · նա եթէ բարուք թուի , զհասարակաց ներբողենի՛ զանց արարեալ՝ զվսեմական վկայիս անդս ձեզ վկայասիրացդ ճառեցից :

Արդ՝ ընծայեցոյց զայրս նք՝ զմեծ քրիստոնէից զօրավիգն , դրացին սինոպ՝ քաղաք հին և ծանօթ · · · իսկ հրահանգ նմին կենաց՝ դրախտի մշակութի և խնամակալութի · զոր և առաջի ուրեք նորուն իսկ դրան քաղաքին 'ի բերան պարանոցին ստացեալ՝ մշակէր աշխատասիրաբար՝ անձին և կորստելոց սփոփութի կենաց · բանայր և օտարաց առաւել յօժարութե զփոքր և զչքաւոր տունն · և բնակեալ 'ի հրապարակի՝ հասարակաց եկելոցն առաջի դնէր զոր ունէր · և նոր էր ղովտ՝ ո՛չ սոդոմացւոց , այլ՝ սինոպացւոց : Իսկ յանցանել ժամանակի · · · յօտարասիրութե շահէր զկենսատուութ միահու առիթ · իսկ թէ ուստի՛ և զիա՞րդ , լուարո՛ւք :

Այն ինչ բան մերումս բարեպաշտութե աւետարանեալ լինէր , և ածայինն քարոզութ առ ամ լսելիս հասանէր , և ծանուցանէր զՔս և զնորին խորհուրդս , խռովեցան հեթանոսք ըստ սաղմոսողին , և թգրք և իշխանք ժո-

ժողովեցան 'ի միասին , և մոլորութեան ժողովուրդք բարկանային ընդ յոյժ թշուառելն . և խնդրեալ լինէր ամենայն քրիստոնեայ ոչ չարագործ. մերձաւորն պատժեալ լինէր , և հեռաւորն խնդրեալ: Այլ և զփոկաս գլխովին ոչ անյայտացոյց յետնութի մշակին և պարտիզպանութին . այլ և սա իբրև հարազատ առաքելապէս քրիստոսի պաշտօնեայ ազդեցաւ . և ահա եկին առ նա՝ ոյք յաղցաւոր և յանցաւոր կենացս հրաման առեալ էին 'ի բաց տանել զնա առանց դատաստանի և քննատուութե . քանզի և յանցանքն էր այնպիսի , զոր համարձակաձայն խոստովան լինէր առաքինին , և ոչ յումեքէ հարցեալ՝ գործովք ցուցանէր . և 'ի հետազօտել ուրուք՝ զուարթամիտ ձայնէր:

Արդ եկեալ արանցն՝ որ նորուն տանջանացն եղեն սպասաւորք , և մերումս տօնի պատճառք , ագան առ նմա՝ զոր խնդրէինն . զի ոչ ծանեան , և ոչ ծանուցան . այլ 'ի ծածուկ առ ժամն ունէին զեկաւորութեան պատճառ . որպէս զի կանխաւ ուսեալ յեղելոցն արտաքոյ քան զքաղաքն , ո՞ իցէ փոկաս , և ո՞ւր բնակիցէ , յանկարծակի 'ի վերայ հասեալ ըմբռնեսցեն , որպէս երբայեցիք երբեմն 'ի պարտիզին ընդ յուդայի զՏէրն . և էր ծածկեալ 'ի նոցանէ՝ եթէ 'ի մէջ ցանցի զորսն ունէին , շունք զոչխարն , գայլք զգառն , զաղաւնին թռչունք յափշտակօղք և մագլաւորք . և որպէս մարգարէն ասէ եսայի , մակաղէր ընդ ընձուց ուլն , և ընդ գայլոց գառն ձարակէր , և առիւծք ընդ

որ-

որթու կենաց կցորդ լինելին ։ Իսկ յորժամ՝ ոմն օրէն է լինել, սեղանն և ընտանութիւն համարձակել տայր առ միմեանս, հարցանէր 'ի նոցանէ միայն, եթէ ո՞յք իցեն, և ո՞յր վն 'ի քաղաք անդր հասեալ իցեն ։ Իսկ նոցա 'ի զուարթագին ընդունելութէ և 'ի հիւրասի-րութէ առն պատկառեալ, և մի ումեք զա-տացեալն ասել պատուիրեալ, բացին զգաղտ-նիս իւրեանց, և զհայթհայթանացն յայտնի արարին զբան, եթէ զփոկաս կամին ունել 'ի տանջել. նմին իրի աղաչէին և զայս ևս յաւելուլ 'ի հիւրասիրութի անդր՝ աշխա-տակից լինել նմ առ որսալ զխնդրելին ։

Լուաւ ծառայ տն, և անայլայլելի ոգւով զբանն ընկալեալ, ոչ նուաստ ինչ և ցածագգի կրեաց կամ բարբառեցաւ, և ոչ 'ի վտանգէն զանգիտեալ՝ փախչել խորհեցաւ. և այն զի շատ ունէր և անխափան կարողութի խուսա-փելոյ. զի չև իսկ էր յայտնի՝ եթէ նա է, որ 'ի նոցանէն խնդրի. այլ ամի զհակառակն առնէ, հաստատեալ 'ի սրտի՝ արիանալ ա-ռաւել, և ոչ փախչել ։ Ապա յաղաչանս նց զիջանի. և ես ասէ յառաջիկայդ ձեզ ձեռն-տու եղէց. քանզի ճանաչեմ զայրն, և հեշ-տեաւ խնդրեալդ գտանեմ. և ոչ հեռի ժա-մանակաւ այս լինիցի, այլ 'ի վաղիւ անդր ցուցից և ձեզ. միայն դուք յաղքատին այս յարկ ագերուք ։

Օ՜ այսօրինակ հաստատուն նց երաշխաւո-րեալ խոստումն, յերկուս բաժանէ զանձն. ընդունելութի սպասաւորաց անձին իւրոյ, և

'ի

՚ի պատրաստութեն գերեզմանի . և յետ յարդարելոյ զփոսն և զայլ պէտս թաղմանն , մատուցեալ առ նա ՚ի վաղիւ՛ անդր , փութով պնդութե ձեզ ասէ զփոկաս խնդրեցի , և ահա պատրաստական կայ որսն . և եթէ հաճոյ թուի՝ ըմբռնեսցի ։ Ու յասել նոցա խնդալից , և ո՞ւր այրն . ոչ հեռի ուրեք ասէ , այլ՝ ընդ ձեզ . զի ես ինքնին նա եմ առաջի ձեր . արդ յաջողեալ են ձեզ իրքդ . կատարեցէք զընթացս ճանապարհիդ և զաշխատութեդ ։

Ընդարմացան յանձինս արքն , և ՚ի լուր անդր պաղեցան , յաղէ և ՚ի հացէ պատկառեալք , և ՚ի պատուհասէր կոչնոց անտի յաղքատութե անդ ։ Իսկ նա ևս քան զևս աղաչէր համարձակիլ՝ ՚ի բարձումն իւր ( ՚ի կենաց ) , և ոչ առ փոքր մի անգամ երկուանալ պատուիրէր . ասէ . ոչ ձեռինդ ձերոյ է սպանութի , այլ՝ հրամայողացն ձեռնարկութի . սոսաց , հաւանեցոյց , մատեաւ ՚ի կիրս չարչարանաց . և հատմամբ գլխոյն պատարագոյ հաճոյական մատուցաւ ։

Սիւն և հաստատութի տածայնոցն տիեզերական եկեղեցեաց՝ յայնմ ժամանակէ և այսր զսա ունիմք ո՛ արք . և վկայիցն է սա պանծագոյնն՝ ՚ի կարի լաւսն ունելով զառաջնութի . սա ձգեալ բերէ համաժողով զամենեսին յինքեան օթևան , և լի են անցք ճանապարհաց յերեսաց ընթանալեաց յուրաքանչիւր ՏԷ ՚ի տեղին աղօթից ։ Ու է իսկ մեծավայելուչն այն տաճար՝ որում վիճակեցաւ

ցաւ ունել զսրբ մարմին վկային, վշտացելոց դիւր, հիւանդաց բժշկարան, սովելոց սեղան։ Սա զի ես առաւատապէս այժմ դարմանել փոխան վախճանել, քան յեգիպտոս յովսէփ ՚ի նախնումն․ քանզի նա արծաթոյ ըղցորեանն բաշխէր, իսկ սա ձրի շնորհէ կարօտելոց։ Որպէս ընթանան հոյլք աղքատաց և թափառելոց՝ ՚ի սինոպեան պարանոց, ո՛չ ՚ի հասարակաց ամբարանոց․ այլ անդանօր յիրաւի այսպէս․ բայց սակայն եթէ և ուրեք այլուրեք ՚ի ձեռն դոյզն նշխարաց իբրու գաղթական ինչ մայրաքաղաքի կացոյց ինքեան վկայն, աքանչելի և այն տեղի՝ և ամ քրիստոնէից ըղձալի, զոր օրինակ սոյն սա մերս նահանգ՝ իջևան է տօնողաց․ զի պատուական է առաջի տն մահ սրբց իւրոց․ և բազում ուրեք բաժանեալ նշխարքն՝ բոլորածառանգ ամ ուրեք երիցս երանելւոյն պահեն զբարեհամբաւութի։

Որպէս իսկ և ՚ի թագաւորեալ քաղաքի անդ՝ ՚ի գլուխն ասեմ իտալիոյ և ՚ի դշխոյն Տի, է վկային ընծայաբերութի ամենաժողով և պատիւ, և տաճար հոյակապ գեղեցկաշէն։ Նաև ո՛չ պակաս հռովմայեցիք զփոկաս պաշտեն՝ քան զպետրոս և զպօղոս․ վս՝ ո՛չ ուսուցանէ բան, զգլուխն վկային մեծախնամով համդերձեցին, հակառակ պղծոյն հերովդիադայ կալեալք զխորհուրդ․ զի նա արեան ծարաւեալ՝ զարդարոյ խնդրեաց զգլուխ պատուականն ՚ի նախատինս․ իսկ սք ՚ի սակս պատուոյ և անձանց օգտի զվկայականն

կանն արժանապէս զգլուխն յինքեանս ձգե-
ցին ։

Իսկ նաւորդք և նաւազք յամ տեղիս, ո՛չ որ ը̄ եւքսինեանն անցանեն պոնտոս, այլև որք զադրիականն հատանեն, և ընդ եգէականն բերրին, և որ միանգամ յովկիանոս նաւեն արևմտեան, և յարևելեան ծոցս ծովէն, զսովորականն ձայն յորդորական՝ որով զնաւու աշխատութիս սփոփեն, 'ի նոր բարեհամբաւութի փոխարկեն վկայիս, և լեզուք նց բովանդակ 'ի նուագել զփոկաս բերրին ․ քանզի և արագ արագ պարգևէ զօգնականութ զնշանակս ։ Ո՛չ զի բազում անգամ երևեցաւ, է՛ զի գիշերայն 'ի յառնել մրրկաց զարթուցանել զնաւապետն՝ որ խորդայր առ քեղեաւն, և է՛ զի դարձեալ զապաւանդակս ձգել և առագաստիցն հոգ տանել, և յառաջոյ կողմանէ նախադիտել զծանծաղավայրս ։

Ըստի օրէնք եղէն նաւավարաց զփոկաս ունել հացակից ․ այլ քանզի այժմ անմարմնոյն անմարթ՝ սեղանակցութի, ուսարուք՝ թէ որպէս խորհուրդ բարեպաշտասէր իմաստնացաւ յանհնարաւորս ․ քանզի որ ը̄ օրէ զկերակրոյ բաժին ը̄ հաւասարաբաշխութե կերողացն մասնաւորէն վկայիս ․ և զայն բաժին՝ գնոց գնեալ ոմն 'ի սեղանակցաց՝ զարծաթն 'ի միջի դնէ ․ և 'ի վաղիւն անդր այլ ոք, և այլ երբեմն այլ ․ և այս վիճակ գնողութե շուրջ եկեալ զամենեքումբք՝ տայ օր ը̄ օրէ զոմն գնօղ բաժնի ․ և յորժամ նաւա-

ւահանգիստն ընդունելի զնս , և 'ի ցամաք հա-
սանեն , բաշխեն զարծաթն կարօտելոց հա-
ցի . այս բաժին է փոկասու՝ աղքատաց բա-
րերարութի :

Սքանչանան ընդ սա և թագաւորք ընդ քաջա-
փառն և ընդ մծասէրն . և պատուասիրեալ
ընծայիւք շքեղազարդեն զականաւոր աղ-
քատին զտաճարն . գուն գործեն և անա-
ւագք զմեծամեծօք գերազանցել : Եւ ո՞չ են
զարմանք , եթէ հռովմայեցւոց իշխանութե-
անք պաշտօնասէրք՝ իրաւանց և օրինաց սնն-
դակիցք՝ այսպէս պատուասիրեն զծառայն
քի , ուր և 'ի բարբարոսս հասին զարմանքն .
և համօրէն վայրենագոյն սկիւթացիք , որ
յայնկոյս եւքսինեան պոնտոսի բնականան
'ի ցամաքի , մերձաբնակք մէոտեայ լճին և
դանայիս գետոյ , և որ բնակեալ են 'ի վոս-
փորոն , և մինչև 'ի փասիս ձգին գետ , ամե-
նեքին որք ընծայաբեր լինէին պարտիզպանի .
և մ սովորութք և հրահանգօք տարա-
կացք 'ի մէնջ՝ յայս ևեթ միախոհ գտանին ,
զվայրենութի բարուցն 'ի ճշմարտութէ անտի
ընդելացուցեալ :

Մին իսկ յիշխանացն և թագաւոր անդանօր՝
զպսակ գլխոյն 'ի բաց առեալ , որ շրջափայ-
լէր ոսկւով և ծաղկամբք քարանց պատուա-
կանաց , և զզրահն պատերազմական մերկա-
ցեալ զբազմահարուստն ազնիւ սպասուք ,
( քզլի բարձրամիտ և շռայլ է բարբարոսացն
սպառազինութի , ) առաքեաց զերկաքան-
չիւրն յընծայ յիշատակաց , ոյ 'ի ձեռն վկայ-

ԻՆ ին

լին նուիրեալ զնշանակս զօրութեան և փառաց միանգամայն. քանզի յայտ իսկ է, թէ պսակն՝ թագաւորութեան էր շնորհակալիք, և զրահն՝ պատերազմական քաջութեան :

Իսկ զոր միանգամ արտաքոյ այսոցիկ անդադար բարերարութիւս հանդիպեալս 'ի ձեռն անրջական տեսլեանց, և բժշկութե ախտացելոց, զիա՞րդ ոք ձառեսցէ արդեօք, ուր անհնար է ը̅ միոյ միոյ յերախտեացն մերձ դնել զբանն : Որդ մեք յայսմ վայրի դադարեալ՝ փառս փրկչին մատուսցուք, որ ծառայք հաւատարիմք այնչափ արժանացան շնորհաց, մինչև յա̅մ պէտս և 'ի դէպս ըստ տուեալոց նմ̅ պարգևաց բարերարել ծառայակցաց. և զայսոսիկ յետ յաստեացս չուոյ և մեկնելոյ 'ի մարմնոյ. որոց յիշատակն արդեամբք օր ը̅ օրէ ընթանայ ը̅ քաղաքս և ը̅ գիւղս, յա̅մ տեղիս զբարերարն քարոզելով զՔ̅ր. որում վայելէ ա̅մ փառք և իշխանութի և մեծվայելչութի՝ այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ‖ :

Այս պատմութի է պանծալի, զոր քաղեն և ժամագիրք յունաց և այլք 'ի յետնոց՝ ոչ̅ փոխասու որիշ եղելոյ յառաջին և յերկրորդ փոխան. այլ ունիմք ասել, թէ՝ և սա նոյն է ը̅ առաջինսն, ը̅ որում մի ձանաչի Ծաքարող ո̅րն փոխաս սքանչելագործ պոնտացի՝ առասել բարեխօս նաւավարաց. և չփոթութ̅ե առանդից աստերխօս կոչէ զնա պարտիզպան, և փոքր մի այլազգ յարմարէ զօրինակ նահատակութեն, անորոշ թողեալ զժամա-

նակն և զայլ հանգամանս պատմութեն ․ ապա թէ ոչ՝ հարկ լինէր ասել, թէ այնպէս արտափայլեալ իցէ փոկաս պարտիզպանն քան զհայրապետն՝ մինչև 'ի մոռացօնս արկանել զնա ․ զոր չէ՛ մեզ կարծել ․ զի ամենեկեղեցիք զփոկաս հայրապետ միայն գիտեն նշանաւոր և նշանագործ 'ի պոնտոս ։

Նոյնօրինակ ունիմք ասել, թէ գուցէ ոչ է զանազանեալ յերևելւոյն փոկասէ և այն նշանագործ վկայ, զորմէ տեղեկութիւն առեալ արևմտեայց յասորւոց՝ ասորի կիւ անտիոքացի զնա կարծեցին, և ուրոյն նշանակեցին 'ի վկայագիրս իւրեանց, առաջնորդ ունելով զմի միայն ՚ըն գրիգոր տուրոնեցի 'ի վեցերորդ դարու ․ որ 'ի գիրսն յաղագս փառաց վկայից ․ գլ ․ ղը ․ գրէ օրինակ զայս ․

* Փոկաս վկայն, և սա ինքն է նոյն վկայս ( արևելեայս ) շարագուգեալ՝ հանգչի 'ի սիւրիա ( բերեալ 'ի սինոպէ ) ․ որ յետ բազում լլկանաց՝ զոր կրեաց վն անուան փրկչին, որպէս և զիարգ յաղթող գտաւ ընդդէմ հնոյ օձին՝ հուչակի 'ի ժողովուրդս մինչև ցայսօր ․ մինչ զի եթէ զոք 'ի տեղիսդ յայդոսիկ հարկանիցէ օձ, և թափեսցէ 'ի նա ըզթոյն իւր, ընդ մերձենալ օձահարին 'ի դուռն դաւթին՝ ուր վկայն հանգչի, զիջանի այտուցն, և թափի զօրութիւն թունիցն և բժշկի ։ Յորոց ումանք՝ ոչ հանդիսացեալ իսկ է, յետ այտուցեալ դոլոյ յերեսաց հարուածոյ չար գազանին, և զկնի ճարակելոյ թունից ընդ մարմինն ողջոյն, 'ի դուռն մահու հասեալք,

իւ-

իբրև բարձան 'ի ձեռն այլոց և եդան 'ի գաւթին , բժշկեցան ։ Ուստի ոչ երբէք մարթ է թունից սպանանել զոք , եթէ կատարեալ հաւատով դիմեսցէ 'ի սեամս անդր սբ̃յ տաճարին ॥ ։ Որ նշանակի , թէ տաճար և նշխարք սբ̃յն փոկասայ սքանչելագործի կային յայլ և այլ տեղիս . այլ ոչ յուցանի , թէ իցէ այլ ոք փոկաս . թէպէտև բանիւ նորին տուրուհեցւոյ եդեալ կայ ուրոյն 'ի լատին յայսմաւուրս 'ի մարտի 5 . փոկաս այս ոմ̃ զանազանեալ յառաջնոյն ։

Ոչ է մարթ զանազանել և զփոկաս՝ զոր յիշէն յոյնք 'ի ժամագիրս իւրեանց 'ի 2 . օգոստ . ը̃ նաւակատեաց տաճարի սբ̃յն յովհաննու աւետարանչի 'ի կոստանդինուպօլիս . զի անդանօր երևի լինել յիշատակ առաջնոյն փոկասու , զոր ղփտիք 'ի սեպտ . 22 . կոչեն աշակերտ յովհաննու , ը̃ որում էր 'ի ժամանակս առաքելոց և աշակերտաց ։ Այլ է փոկաս ոմ̃ նշանակեալ 'ի ժամագիրս յունաց . դեկտ . 18 . նահատակակից երմողեայ՝ բանիւքս այսոքիւք . * Յիշատակ սբ̃ց վկայ-
,, իցն փոկայ և երմողեայ՝ սրով կատարե-
,, լոցն ։ Ես նախ գլխատեցայց ասէ երմիւ-
,, ղոս . ոչ երմիւղէ՝ ասէ փոկաս , այլ՝ փոկաս ॥ ։

Ոպ̃ և այլ է փոկաս՝ մի յորդւոցն սբ̃ց վկայից տերենտիոսի և նէոնիղայ , ը̃ ժամագր . յն . հոկտ . 28 ։ Այլ ասի լինել փոկաս կամ փոկասոս յիշատակեալ առ վկայագիրս սպանիացւոց 'ի յուլիսի . 14 ։ Արդ եթէ մի իցէ երևելին փոկաս սքանչելագործ , և եթէ

աւելի քան զմի , աներկբայ հաստանէ բարե-
խօսութիւն սբ̄յն՝ որոյ հաւատով կարդան զա-
նուն նորա , 'ի փառս փրկչին՝ որ փառաւորէ
զսբ̄ս իւր , և փառաւորեալ է 'ի նս̄ ։

Եւ ե̄ այսմ առանձին յիշատակ լինի սքան-
չելեաց սբ̄յն փոկասու 'ի բաղնեան յայսմա-
ւուրս յունաց 'ի յուլիսի . 6 . այսպէս ունե-
լով բանին . * Պատմեաց լեոն մականուա-
նեալն պոնտիանոս ( կամ պոնտացի ) , եթէ
սինոպանոսն այն՝ որ կոչի բոգոմվառօս ( ո̄ր թաւ
կի̄ր յաղթանդամ ) , նաւարկեն ե̄ նաւատոր-
միղ արքունի՝ ձերբակալ եղև 'ի սարակինո-
սաց . և կապեն կրկին շղթայիւք՝ փակեցաւ
'ի բանտ ։ Արդ յայսպիսի անձկութեն պա-
րաւանդեալ՝ կարդայր առ ա̄ծ , և առ ս̄բ
վկայն նո̄ր փոկաս , ասելով . ո՛վ ս̄բ և փառա-
ւորեալ փոկաս ողորմեա՛ ինձ , և ազատեա՛
զիս յանձկութե̄ կապանացս պարաւանդելոց
զինև ։ Եւ նիրհեալ՝ տեսանէ զս̄բն կացեալ
'ի վ̄ր նո̄ր 'ի զգեստ երիցու , զի ասէր . արի
և մեկնեա՛ 'ի բաց ։ Եւ զարթուցեալ 'ի քնոյ՝
եգիտ զշղթայսն խորտակեն , և զանձն արձա-
կեն , և զբանտն բացեն . և փախուցեն զերծաւ
մինչև 'ի տուն իւր . և կատարէր միշտ զյիշա-
տակ նո̄ր գոհութ̄ հանդերձ բազմաւ . և փա-
ռաւոր առնէր զա̄ծ՝ զտուօղն զայնպիսի շը-
նորհս ս̄բց իւրոց ‖ ։ (1)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Եթէ ոչ գնէաք ուրոյն ուրոյն զպատմութիւն աւանդեալս 'ի զանազանից սրբոյն փոկայ իբրև զզանազանից, երկարապատում լինէաք 'ի կարգի ծանօթութեանց. բայց որպէս կարծեմ, այժմ չկարօտիմք բազում բանից, ուր ընթերցօղք ինքնին տեսին բանիւք նոցին իսկ մատենագրաց՝ թէ ո՛չ այնչափ փոկաս կայ բազում, որչափ զմիոյ ումեք բազմապատիկ է աւանդութեն: Եւ ահա ընդհակառակն տեսանեմք առ կուսակրաց բոլլանդեան՝ որ 'ի 14. յուլիսի յերկարեալ զծանօթութիւն, որչափ բազումս աշխատասիրէ 'ի քննութեն, նոյնչափ և օտարանալ մեզ թուէր 'ի ստուգութէ. մանաւանդ 'ի դնելն՝ թէ այլ իցէ փոկաս անտիոքացի, այլ փոկաս պոնտացի, այլ փոկաս պարտիզպան, և՛ն, մինչև վեց և եօթն փոկասս առնել. և ապա երկբայիլ և վիճել, արդեօք առ հասարակ զանազանեալ անձի՞նք իցեն ո՞ք, եթէ ոմանք ընդ ոմանս խառնել՞. և երանի՞ թէ որոշէր ինչ 'ի տալ մեզ զլոյս. և սակայն նա առաւել զանազանեալս առդնելով՝ կարծէ զերծանիլ 'ի դժուարութեց. այլ ո՛չ զերծանի. որպէս յայտ է՝ որոց ակնարկեն 'ի բանս նր:

Զատ է մեզ այն, զի և ինքն կուսակր վկայէ՝ թէ բարոնիոս նոյնացոյց զանտիոքացին ընդ պարտիզպանին. որպէս և մեզ երևի նոյն. և թէ տիղեմոնտիոս և այլք միացուցին զպարտիզպանն ընդ եպիսին. որպէս և մեք չկարեմք զանազանել: Եւ կուսակր՝ որ կամի զանազանել, պաշարի յերկուց կողմանց իւրովք բանիւք. զի 'ի միոյ կողմանէ ասիդէ իրաւամբք, թէ յամ եկեղեցիս հանդիսացեալ է սրբն փոկաս եպս սինոպայ. և 'ի միւս կողմանէ հայեցեալ 'ի բանս աստերիոսի՝ որ զպարտիզպանէն խօսի իբրև զմի միայն փոկայ հանդիսացելոյ յամ եկեղեցիս, հարկաւորի ասել՝ թէ բուն հրաշագործն է պարտիզպանն. և սակայն անդրէն զհակառակն վկայէ, թէ բովանդակ ազգ յունաց 'ի սկզբանէ և այսր զփոկաս հայրապետն իմանան անուամբս փոկաս Ἱερομάρτυρος, կամ Ἁγιοϊερομάρτυρος. [illegible], կամ Θαυματουργός:

Այլ ինչ օգուտ կուսակրաց և ձայնակցութեան կոմբեֆի-

զայ որ ՚ի ծանօթութեան պարտիզպանին գրէ այսպէս. * Զբաղումն ՚ի սքանչելեաց աստանօր յաստերիոսէ ընծայելոյ փոկասու պարտիզպանի՝ յոյնք ՚ի գիրս պաշտամանց իւրեանց ընծայեն եպսին, զոր յայն սակս սքանչելագործ կոչեն. և ոչ նոյնպէս զփոկաս պարտիզպանն. մինչ զի ամիճ հարկ է ասել, թէ աստերիոս համանունութե֊ պատրել լիցէ. և այն ինչ հանդիպեալ լիցէ նմա, որ ինչ հանդիպեցաւ գրիգորի (ածաբանի) ՚ի կիպրիանոսն, ՚ի նոյնացուցանել նորա զկիպրիանոս կախարդն և զկիպրիանոս եպսն. . . . Կարէր փոկաս պարտիզպանն այնպէս պայծառանալ ՚ի դարուն աստերիոսի, և ը նմին այնպէս հռչակաւոր յիշատակ ունել ՚ի պոնտոս, մինչև աղօտացուցանել զեպսն փոկաս առաջի բազմաց ասիացւոց, և նորին իսկ աստերիոսի. զոր և յայլս գիտեմք պատահեալ. որպ և ՚ի սբ հայրն մեր գոմինիկոս, և ՚ի համանունն նր գոմինիկոս սիլացի հնագոյն քան զնա՝ ՚ի տեղիս տեղիս սպանիոյ ||: Նովին ոգւով խօսի և կուպեր:

Բայց թող զենթադրութիւն ցուցանելի, անհանգէտ են և օրինակքն, և առաւել մերոց կարծեաց նպաստաւոր. զի ըստ մեզ և կիպրիանոս ոչ է երկու, այլ՝ մի. որպ ցուցաք ՚ի ծանօթութիւս վարուց նր. իսկ գոմինիկոս թէպէտև բազմացեալ լիցէ, բայց յայտ է թէ ՚ի յայտնիլ երկրորդին՝ առաջինն լռեաց. զի երկրորդն այն՝ եղև զօրութե֊ առաջին, մինչ զի ամ որ ճանաչէ զայդ անուն, զսբն գոմինիկոս հիմնադիր քարոզչաց իմանայ. և սակայն ը հակառակն՝ թէև գիտացուք զերկրորդ ոմն փոկաս պարտիզպան, այլ միշտ առաջինն փոկաս՝ որ էր եպս, այնպէս հանդիսացեալ է, զի զնա միայն գիտեն ամ եկեղեցիք մինչև ցայժմ. և սակաւք են՝ որ գիտիցեն թէ կայցէ և այլ ոք փոկաս անուամբ սբ:

Եթէ կամիցին քննիչք դնել և զայլ ոք փոկաս արևմտեան, որոյ նշխարք լեալ իցեն ՚ի հռոմ կամ ՚ի գաղղիա, և չփոխութե֊ անուան համարեալ նոյն ընդ արևելեան սբյ, այդմ ոչ հակառակիմք. այլ ունիմք վկայ և զյայսմաւուրս մեր, որ ասէ զփոկաս ոմն եպս լեալ ՚ի հռոմ քաղաքի. բայց և այդ անստոյգ մեզ թուի: Զարմանամք, զի և զնշխարացն և զտաճարէն հռոմայ յիշատակելոց յաստերիոսէ այսպէս երկուանօք խօսի կոմբեֆիզ. * Զարմանք են (ասէ), զի փոկասու այնչափ

հըռ-

հաւաստաւոր յիշատակն 'ի Հռովմ առ ժամանակօք աս-տերիոսի՝ յետոյ այնպէս աղօտացեալ իցէ, մինչև ե-րևիլ՝ թէ բնաւ իսկ լեալ իցէ ոչ։ Եւ արդարև չէրև երբէք մարթ գտանել զայսր տաճարի զմնացուածս և զանուն 'ի մէջ սրբազան յիշատակարանաց նոր Հռով-մայ՝ որք կան 'ի լոյս ընծայեալ. ոչ և ոչ այն, թէ ո՞ւր պահի սբ գլուխն այն 'ի քաղաքին ||։ Բայց ընդ-հակառակն գրէ կուպեր բոլլանդեան, թէ * Պանկի-րոլոս 'ի ծածկեալ գանձս մեծին Հռովմայ. Էրէ. 367. ասէ, թէ մարմին սրբոյն փոխասու պահի 'ի Հռովմ յե-կեղեցւոջ սրբոյն մարկեղոսի. և թէ՝ զայն անդանօր այց արարեալ եւս կղեմէս Ը. յամի 1594.... Եւ դպր իսկ տակաւին 'ի Հռովմ եկեղեցի սրբոյն փոխասու 'ի ժամանակս գրիգորի Է ||, որ նստաւ յամի. 1073։

Ըստ այսմ ունիմք ասել, թէ նաև նշխարք որ և է սրբոյն փոխասու գտեալք 'ի գաղղիա՝ դուցէ 'ի Հռովմայ բե-րեալ իցեն անդր. ուր և կային 'ի ժԶ դարու. քանզի գրեալ է 'ի կոնդակն իննովկենտիոսի չորրորդի Հռով-մայ Հայրապետի, զոր բերէ և կուպեր, այսպէս. * Ին-նովկենտիոս... աբբայի և միաբանից ուխտին սրբոյն պետրոսի արտաքոյ դրան վիէննայու (գաղղիացւոց)... Արդ որովհետև՝ ոչ փոյթ կալցյք զեկուցանել մեզ. սիրելի որդեակքն մեր՝ հուգոն սրբոյն սաբինայ, և վիլլերմոս տաճարի երկոտասան առաքելոց՝ երիցունք կարդինալք. Ը հարցանելոյ մերոյ յայտ արարին մեզ զմարմին երանելւոյն փոխասու երբեմն վկայի և քա-հանայապետի, որ ամփոփեալն էր 'ի վանս ձեր, ցան-կանալով մեր՝ զի 'ի վանս ձեր լինիցի յաճախութիւն արժանաւոր յարգութե 'ի պատիւ նորին սրբոյ, ամե-նեցուն սոուգապէս զղջացելոց և խոստովանողաց՝ որ միանգամ մեծարանօք այց առնիցեն ձերումդ մենաս-տանի 'ի տարեդարձ աւուր յայտնութե նախաճառեալ սրբոյդ, ապաւինեալք 'ի մարդասիրութե ամենակալին այ, և յիշխանութի երանելի առաքելոցն պետրոսի և պօղոսի, խ աւուրս թողացուցանեմք գթասիրաբար յապաշխարանաց եդելոց 'ի վր նց։ Տուեալ 'ի լուգ-դոն 'ի Ժ կաղանդից ապրիլի 'ի Է ամի քհնյապետութե մերոյ ||. այն է յամի տն. 1250։

Արդ եթէ զպատմացւոյն փոխասէ Հայրապետէ իցեն բանքս, և եթէ զայլմէ անուանակից եպսէ յարևմուտս, 'ի դէպ դան կրկին անուանց փոխաս անուանելոց 'ի Հ. սեպտ. 22. և յուլ. 23. այլ տարժանելի գործ է որո-

չէր, թէ արդեօք մի ո՞մն իցէ սբն փոխաս յիշատակեալ յայն երկուս տեղիս, եթէ երկու. զոր թողումք այլոց իմաստասիրել՝ հայելով 'ի նմանութին և յաննմանութին առաջին և երկրորդ վարուց, զոր եդաք:

Միայն զայս խոստովանիմք և այդ առնեմք բանասիրաց, զի եթէ յատակ տեսանէաք զվկայաբանութին ճառընտրաց յաղագս փոխասու հայրապետին սինոպայ հանդերձ նախընթաց պատմութբ ծննդեան և սնընդեան նր, ոչ ինչ դանդաղէաք վճռել՝ թէ սխալեն Հ. և Յ. 'ի բաժանել զմի փոխաս յերկուս. բայց տեսանեմք, զի խառնակութին բանից ճառընտրաց յայսմ մասին՝ հարկեցուցեալ է զօրինօղս յայսմաւուրաց յերկուս զատանել զփոխաս: Զայս ցաւ մեր անգիտացեալ կուպերայ՝ ցաւի ինքն, թէ * ոչինչ գործս գիտեմք զվկայիս մերոյ ,, յառաջ քան զեպսութին ||. վս զի պակասի յայժմու յունական և 'ի լատին օրինակս առաջին մասն վկայաբանութե ճառընտրաց, ք ծնունդ և սնունդ սբյն. և միայն երկրորդ մասն գտանի՝ որ է նահատակութին. և զայնու միայն յածի քննութին կուպերայ սովորական ստգտանօք վս երկայնաբան ոճոյն և այլ քանի մի թերութեց, մինչև ընդ երկբայականս դրել զպատմութին ողջոյն. և զի՞նչ ունէր առնել, եթէ և զառաջին մասն տեսանէր, որ այնչափ տարբեր գտանի յառաջնոյն, մինչև յայսմաւուրք յունաց և հայոց այլևայլ սբյ են համարեալ վարս զկրկին մասունս մի և նոյն վարուց, քաղելով զերկոսեանն յերկուս զանազան տեղիս:

Խառնակութի ճառընտրաց՝ է առաւել ըստ երկուց գլխոց. Նախ՝ առաջին մասն պատմութե, ք ծնունդ և սնունդ սբյն փոխասու՝ այնպէս մանրամասն և կարգաւորեալ հանդամանօք է յօրինեալ, ոչ թէ յետին դարուց սովորութեց իցէ յանկաւոր, սկսեալ յութօրեայ մկրտութէ մինչև յորոշեալ ամս սարկաւագութե, քահանայութե և եպսութե, առանց նշանակելոյ՝ թէ ո՞ ոք յառաջնոց աւանդեաց զայսոսիկ. և մի թէ գո՞յր ոք այնպէս մանրապատում գրիչ վարուց առ առաքելովք, առ որովք ենթադրի ծնեալ փոխաս, և նահատակեալ: Բայց եդեալ՝ թէ երիցունք եկեղեցւոյն սինոպայ կա՞մ պոնտացւոց, որք ցուցանեն զինքեանս գրիչ յաջորդ վկայաբանութե, իբրև յականատեսից առեալ և գրեալ իցեն նաև զմանկութի նր, ոչ գրեցաւ և մանկութի սբյն պօղիկարպոսի ժամանակակցի նր, տակաւին չերևի այնչափ միաբանիլ երկրորդ մասն ընդ առաջնոյն.

զի

զի երկրորդն սկսանի իբրև նոր թուղթ շրջաբերական ,
և այն այլով ոճով՝ առաւել վսեմագունիւ ։

Երկրորդ՝ զի թէպէտև գրիչն առաջին մասին ոչ ցուցանէ զանձն ճմկանից լինել , այլ գրիչք երկրորդին ա͞մ իրօք հաստատեն 'ի սկզբան , ընթացս և 'ի կատարածի , թէ են ժամանակակից և ականատես , բայց հաւատարմութիւն գրութեան միօրինակ պակաս երևի յառաջնումն և յերկրորդումն ։ Յառաջնումն , զի գրէ՝ թէ ս͞րբն փոկաս յաղօթել անդ վ͞ն ազատութեան նաւուն վտանգելոյ 'ի պոնտոս , բայց յայլոց բանից ասացեալ իցէ և զայս ։ * Որ և 'ի ձեռն ս͞րբյն գրիգորի սքանչելագործի
,, զծովն ցամաքեցուցեր , և արարեր խաղաղութիւն երկուց
,, եղբարց բարբարոսաց , զերկիրն վիճակաւ առեալ՝
,, առաւել քան զառաջինն շահիւք մեծարեալ 'ի փառս
,, և 'ի պատիւ քեզ || ։ Արդ քանզի գրիգոր սքանչելագործ յետոյ էր բազմօք քան զփոկաս ; ապա կ͞մ գրիչն և կ͞մ օրինակագիրն անգէտ հնութեան՝ յարմարեալ է զայս բան եղծիչ պատմութեան և ճմկագրութեան ։

Իսկ յերկրորդումն , զի վկայաբանս կ͞մ օրինակօղ ն͞ր ոչ միայն զանուանս ինչ տանջանաց և զայլ ինչ գործս՝ յայլոց վկայաբանութեանց երևի 'ի փոխ առեալ , այլև որ մեծն է՝ զմեծ մասն ատենախօսութեան օրինակեալ է 'ի վկայաբանութենէ ս͞րբյն եւղամպէոսի ։ մանաւանդ զեղանակ կործանելոյ ն͞ր զկուռս ։ այլ տեսանէ՝ որ բաղդատէ զերկոսեանն ։ որում ոչ են ուշ եդեալ այլք 'ի քննչաց ։ ապա թէ ոչ՝ բաւական էր այս եւեթ եղծանել զվկայաբանութիւն փոկասեան , և չկայր կարօտութիւն այլոց բանից՝ զորս կրկնէ կուպեր այլովքն հանդերձ ։ Իսկ ահա այսպիսի խառնակութիւն գրչաց կ͞մ օրինակագրաց յետս կասեցոյց զմեզ 'ի հետևելոյ ճառընտրաց յայսմ մասին ։ նմին իրի ը͞ յայսմաւուրացն բաժանման՝ որք թերևս 'ի լաւագոյն օրինակէ են առեալ , կրճատելով և կարկատելով բերաք զբանս ճառընտրաց ։ և այնպէս խառն ը͞ ծանօթութեան գրեցաք զվարս ընծայեալս ս͞րբյն փոկասու ։ զի առ այժմ չգտաք զայլ ճանապարհ , և ոչ աւելի ինչ նպաստ ընկալաք յիմաստուն քննողաց ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սբ̃յն Իրանոսի հետեւողի առաքելոցն ։ (1)

Տ. Ճառընտ. Գ. երես. ճխգ = ճխէ ։ Յ. օգոստ. 23 ։ Լ. յունիս. 28 ։ Նաւէր. պատմ. եկեղ. Ե. 4 = 26. Իա ։ Գրէգոր տուրոնէ. պատմ. գաղղ. Ա. 27 ։ Բոլլանդեանն Բաբէպրոք. հատ. Է. յունիսի. էջ. 335 = 349. և յաննինգ. հատ. Ը. յունիսի. ձան. Ա. էջ. 264 = 271 ։

ԱՌԱՔԵԼԱՆՄԱՆ սբ̃ հայրապետն Երանոս, որ և Երենէոս կմ̃ Իրինէոս, փառք և պարծանք արեւելեան և արեւմտեան եկեղեցեաց, էր հայրենեօք 'ի փոքրն Ասիոյ 'ի կողմանց զմիւռնոյ, ծնեալ յամի տն̃ իբր 120. և աշակերտեալ 'ի մանկութենէ առ ոտս սբ̃յն Պօղիկարպոսի զմիւռնոյ հայրապետի՝ աշակերտի սբ̃յն Յովհաննու աւետարանչի ։ Նա զի էր մանուկ մտավարժ և լի ոգւով, շտեմարանէր յաման մտաց և 'ի ծոցս սրտի իւրոյ զոր ինչ լսէր 'ի Պօղիկարպոսէ յաղագս գալստեան փրկչին յս̃ և փրկական տնօրէնութեանց նր̃, և քարոզութե̃ առաքելոց և աշակերտաց. միանգամայն ներհուն գտեալ 'ի գիրս հին և նոր կտակարանաց՝ զան-

գանձարան լինէր ա̃ծային տառից և առա-
քելական աւանդից, և տիրապէս հետեւող
առաքելոց, և հարազատ յաջորդ աշակեր-
տաց նց̃ . մինչ զի և զկնի հարուստ մի ամաց
՚ի վիճել ը̃ հերետիկոսս՝ ՚ի մէջ առնոյր ըզ-
բանս պօղիկարպոսի անմոռաց ամբարեալս
յինքեան . ը̃ որում յառաջ բերաք ՚ի ծանօ-
թութիս վարուց սր̃յն պօղիկարպոսի զբանս
սրբին երանոսի ը̃դէմ մոլորելոյն փլորինո-
սի՝ նոր թարգմանութ̃բ . զոր և արժան է
երկրորդել աստանօր ը̃ հին թարգմանուե̃ ։
* Այս ( ասէ ) ուսմունքս՝ փ՛ղորիանէ, չեն
առողջք, և ոչ են միաբան ը̃ եկեղեցւոյ .
զայս ուսմունքս երիցունք՝ որ եղեն յառաջ
քան զմեզ, որք էին աշակերտք առաքելոցն,
ոչ ետուն քեզ . զի տեսի ես զքեզ յասիա
ներքին, և մինչ տղայ էի առ պօղիկարպոսի
՚ի սրահս փողոցացն՝ և սքանչելապէս գնայ-
իր դու, և զօրանայիր զփորձ տալ և զհան-
դէս ցուցանել առ նա . զի առաւել յիշեմ ես
զայն՝ որ յայնմ ժամանակի էր, քան զայս՝
որ այժմ գործի . զի ուսումն մանկութե̃ ը̃
նմին ը̃ շնչոյն աճէ, և խառնի ը̃ նմա ։ Եւ
վ̃ս այնորիկ կարեմ ասել զտեղին, յորում
նստէր և ուսուցանէր պօղիկարպոս . և յի-
շեմ զելս նր̃ և զմուտս նր̃, և զնմանութի̃
վարուց նր̃, և զուսումն՝ զոր ուսուցանէր ժո-
ղովրդեանն, և զգնացսն՝ որ գնայր նա ընդ
յովհաննու աւետարանչին, և ընդ այլս՝ որ
տեսին զտ̃րն մեր, ո̃պ պատմէր մեզ՝ թէ զի-
արդ յիշէ նա զբանս նոցա . . . և լսէի ես, և

գնէի

դնել զնա 'ի մտի, և հանապազ շնորհօքն այ սիրով յիշեմ զնա. և կարեմ վկայել ես առաջի այ, զի եթէ լսէր ինչ երանելին՝ որ արտաքոյ վրդպութե առաքելոյն էր, խնդրէր զականջս իւր, և ասէր. ո՜վ բարերար ած, որոց ժամանակաց պահեցեր զմեզ, զի համբերից և յայսմ, և լուայց զայսպիսի բանս. և փախչէր 'ի տեղւոջէ անտի՝ յոր կայրն, կմնստէր անդր, յորժամ լսէր զայսպիսի բանս խոտանս ||:

Արդ՝ ոչ 'ի սոյն պօղիկարպոսէ ուսեալ էր երանելին Երանոս զամ ողջամիտ վրդպութի, նոյնպէս և 'ի սոյն պապիայ յերապօլսոյ եպիսկոպոսէն ուսաւ բազում ինչ. վյ նր ևս աշակերտ ասի. մինչ զի և վրիպական կարծիքն պապիայ՝ որ վս հազարամեան թագաւորութե քսի, ածանցեալ գտաւ 'ի գիրս երանոսի. բայց առանց իրիք փաստու, զի չև էր 'ի ժամանակին մանրախուզիւ սահմանել յեկեղեցւոյ հակառակն սխալական այնմ վրդպութե: Հմուտ էր երանոս և արտաքին իմաստից, և անվեհեր յաղթահարէր զհելլենացիս զօրաւոր բանիւ և գրով. քանզի գրեաց և բազում գիրս և թուղթս լի իմաստութբ և առաքելական հոգւով ընդդէմ հեթանոսաց և հերեսիովտաց ժամանակին, կես մի յերիտասարդութե, և կես մի 'ի ծերութե, եթէ 'ի յոյն բարբառ, և եթէ 'ի հռովմայեցի:

Օի մինչդեռ էր նա յերիտասարդական հասակի, ձեռնադրեաց զնա սբն պօղիկարպոս

'ի

'ի սարկաւագութե՟ն և 'ի քահանայութե՟ն ․ և տեսեալ զեռանդն հոգւոյ նր՟ և զաջողակութե՟ յառաքելական պաշտօն՝ առաքեաց զնա յամի տն՟ իբր 157, յարևմուտս յն՟ն գաղղիացւոց՝ լինել օգնական սբյն պոթինոսի կմ՟ փոտինոսի առաջին եպսին լուգդոնայ ․ զի էր նա ծերացեալ յոյժ և կարօտ պաշտօնակցի 'ի հովուել զեկեղեցի իւր 'ի մէջ հալածանաց ։ Եւ անտուստ՝ յամի 178 ․ առաքեցաւ 'ի հռովմ առ ն՟ք հայրապետն եղևթերիոս՝ վ՟ն պիտոյից ինչ եկեղեցւոյ ․ ուր յետ 'ի գլուխ տանելոյ զգործն՝ վիճեցաւ և ը՟ վաղենտիանոսի հերեսիովտապետի , և ը՟ երկու աշակերտաց նր՟ փղորինոսի և բլաստոսի ․ և յամօթ արար զն՟ս բանիւ և գրով ։ Եւ եղև յորժամ դարձաւ 'ի լուգդոն գաղղիացւոց, 'ի նմին իսկ տարւոջ յարեաւ հալածումն մեծ 'ի վ՟ր քրիստոնէից 'ի վերոսէ կայսերէ ․ և նահատակեցան բազումք 'ի գաղղիա ը՟նդ ն՟բյն պոթինոսի , որ անցեալ էր զիննսնամենիւք ։ Որոց զպանծալի վկայութ՟ գրեցին երիցունք եկեղեցւոյն լուգդոնայ և վիեննայու առ արևելեայս 'ի յորդոր քաջալերութե՟ ամ՟ հաւատացելոց ․ իսկ բուն շարագրող նամակին՝ զոր ամբողջ 'ի մէջ բերէ եւսեբիոս , կարծի լինել նա ինքն ն՟ք երեցն երանոս ․ որ և միաձայն հաւանութ՟ բոլորեցուն կալաւ զաթոռ եպսութե՟ լուգդոնացւոց , եղեալ երկրորդ եպս լուգդոնայ զկնի պոթինոսի ․ և ծանուցաւ արդեամբք արժանաւոր գլուխ եկեղեցւոյն գաղղիացւոց ,

ւոց, և հովիւ քաջ բանաւոր հօտի՝ լցեալ բա-
րեպաշտութեամբ և ամենածայրին նախանձու, պատ-
կառելի յաչս ամենեցուն՝ մերձաւորաց և
հեռաւորաց. որ և զբազումս դարձոյց յան-
հաւատից գեղեցիկ քարոզութեամբ բանին Աստուծոյ՝
նշանօք և արուեստիւք հանդերձ. և պա-
հեաց զհաւատացեալս յամենայն փորձանաց չա-
րին:

Եղև և ընդ արդեանց անուան իւրոյ խաղաղ-
արար ՚ի մէջ եկեղեցւոյ՝ ՚ի յոյժ երկպա-
ռակութեան արևմտեայց և ասիացւոց վասն ա-
ւուր տօնի զատկին. զի ընդ գրելոյ Ճառըն-
տրաց մերոց ՚ի բանից եւսեբի, եկեղեցիք
ասիացւոց՝ այս է փոքուն ասիոյ, և այլք բա-
զումք՝ իբրև յառաջին տուչութէ զչորեք-
տասան օր լուսնին պահէին, և առնէին զօր
տօնի փրկութեան զատկին, յորում աւուր և դի-
պէր ՚ի մէջ շաբաթուն. զի զօր չարչարանացն
կատարէին յաւուր՝ յորում զգառնն զենուին
հրէայքն, ընդ նմին և զօր յարութեան՝ ընդ որում
աւուր և դիպէր ՚ի շաբաթուն, և ոչ բերէին
՚ի միաշաբաթն: Եւ այս ոչ եղև հա-
ճոյ այլոց հովուաց, մանաւանդ երանելւոյն
բեկտորի եպիսկոպոսին հռովմայ. որ յոյժ շարժե-
ցաւ և արար ժողով եպիսկոպոսաց. նոյնպէս և ե-
րանոս արար ժողով ՚ի գաղղիա, և այլք յա-
թոռոց տեղեաց տեղեաց. և ամենեքին ՚ի
միօջէ խորհրդոյ ՚ի մի միտս միաբանեցան ընդ
բեկտորի, և գրեցին թուղթս առ ամենայն եկե-
ղեցիս յամ Տս, թէ մի եղիցի պաշտել զխոր-
հուրդ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, բայց յա-
ւուր

ւուր միաշաբաթոջ ։

Ր. ԺԼ. քանզի տակաւին անհաւան լինէին ա-
սիացիք, վյ եպսն հռովմայ բեկտոր՝ զի էր
յաթոռ առաքելոյն, կամեցաւ զամ եկեղե-
ցիսն ասիացւոց հանդերձ ամ եկեղեցակա-
նօքն՝ որ ոչ հաւանէին այսմ կանոնի, հաստա-
նել ընկենուլ զամենեսեան միանգամայն 'ի
հաստատութե հասարակաց եկեղեցեաց. և
քարոզեաց և կապեաց 'ի ձեռն թղթոյ 'ի
միասին զամ եղբարսն ։ Յայնժամ միւսան-
գամ ժողով արարեալ նորին երանոսի 'ի ղուգ-
դոն միաբանութբ ուխտի եկեղեցւոյն իւրոյ՝
գրեաց առ բեկտոր, թէ ո՛չ էր արժան հա-
տանել զամ եկեղեցիս խստութբ, այլ խրա-
տել զնս եղբայրաբար վճռութբ գրոց. զի
և նք ո՛չ յանձանց հնարեցին զայս, այլ զի
այնպէս գտին սովորութի յառաջին հօրհնաց
իւրեանց. ո՛չ և զպահսն՝ որ յառաջ քն զքե
յարութն, ոմանք սակաւ աւուրբք, և ոմանք
բազմօք սովորեցան պահել 'ի ժամանակս
եպսաց եղելոց յառաջ քն զմեզ. և թէպէտև
բաժինք պահոց էին, սակայն միաբանութի
հաւատոյն հաստատուն էր ։

Զայս ամ և առաւել քան զսոյն գրեաց ե-
րանոս, որ կատարեալ միաբանի անուան իւ-
րոյ՝ խաղաղարար գոլ. և զնոյն խաղաղութի
աղաչէր և խնդրէր 'ի բեկտորէ. և նա ան-
սաց նմա սիրով, ո՛չ և այլ աթոռոց միջնորդ
եղելոց խաղաղութե. և ոչ ստիպեաց զասիա-
ցիսն. մինչև յետ ժամանակաց եղև նք միա-
բանիլ ը հասարակաց սովորութե եկեղեց-
ւոյ,

ւոյ, առ որ խնամով յորդորէր զամենեսին և նա ինքն երանելին Երանոս զնմ աւուրս իւր ։ Նոյնպէս հետևեալ քարոզութեան առաքելոցն կարգօք և կրօնիւք, և լուսաւորեն մկրտութեամբ գրով և բանիւք զեկեղեցիս նոյ՝ արժանի եղև ՚ի վախճանի նաև վկայական պսակի յամի տն 202 կամ 203, ըստ այլոց 207 ։ Իսկ զօրինակ վկայաբանութեան նր գտեալ ՚ի բարբառ հռովմայեցւոց ՚ի հին ձառընտիրս եկեղեցւոյն գաղղիացւոց, որում ձայնակցին և սբն Գրիգոր Տուրոնեցի և Ադոն Վիեննացի, թարգմանաբար դիցուք աստանօր, ունելով բանիւն այսպէս ։

՚Ի ժամանակին՝ յորում դժնդակ հրովարտակք Սեւերոսի կայսեր հրատարակէին ընդ ամ տիեզերս՝ բնաջինջ առնել զքրիստոնեայս, մինչև սաստկութեան հալածանաց ըղմծտալուտ կատարած դի սպառնալ, ՚ի յառնել քաղաքական կռուոյ ընդ կմ նր՝ ինքնին Սեւերոս զինեալ անցանէ ՚ի Գաղղիա. և ըմպանեալ առ Լուգդոն քաղաքաւ զԿղոդիոս Ալբինոս՝ որոյ անդանօր անձամբ զանձն կեսար էր կացուցեալ, իբրև լուաւ՝ թէ քաղաքն այն բարեկեցիկ ՚ի ձեռն սբյն Երանոսի զինակաց զտանի իւրոցն պաշտամանց, ընտրեաց ընդ իւրում մոլեգին բարուց արս սրիկայս զազանամիտս. և պատուէր տուեալ նց շուրջ պատել զքաղաքն յամ կողմանց, առէք ասէ զգրունս, պատեցէք զտունս. և որ միանգամ ոչն զոհիցեն դից մերոց, կոտորեցէք անողորմ ՚ի բերան սրոյ ։

Ի.Օ. Բայց

Բայց մարդասիրութիւն քո յայտնեաց սրբոյն
երանոսի զվտանգն առաջիկայ՝ պատգամա-
ւորութ֊ հրեշտակի ․ զի ուր տքնութ֊ զգիշերն
անցուցանէր յաղօթս՝ աղօթակից ունելով
զերանելի երէցն զզաքարիա , զհասարակ գի-
շերաւ յանկարծակի եկն եկաց առնմա հրեշ-
տակ տն , և այսպէս խօսեցաւ առ նր․ քահա-
նայն երանոս ․ Ո՛վ հաւատարիմ զօրական
քո՝ զօրավար նորընտիր զօրու , զքեզ յետ
բազում վաստակոց տրն հանդերձ ժողովր-
դեամբ քով յերկնից արքայութին հրաւիրէ
բռնաբինաւ վկայութե ․ և արդ քաջալերեա
զեղբարս , զի աներկիւղ լիցի հարազատուե
նց ․ զի ահա վս քո՝ զոր կատարեալ հաւա-
տով սիրեն , 'ի վր հասեալ կայ նց մարդա-
խոշոշ բռնաւորն , և սպասեալ մնայ նց պան-
ծալի հանդէս նահատակութե ․ մի երկիցեն
'ի սպառնալեաց հին թշնամւոյն , և ոչ յայն-
մանէ՝ որ զմարմինն սպանանէ , այլ զհոգին
ոչ կարէ սպանանել ։ Եւ զնո միոյ ժամու
չարչարանքն կատարեսցէ ․ իսկ քեզ մնայ եր-
կարատև նահատակութի և պանծագոյն
յաղթանակ ։ Եւ զզաքարիա երէց փութա
խնամով թաքուցանել , զի զկնի ելանելոյ քո
յաստեաց փոխանակեալ զտեղի քո՝ հաստա-
տեսցէ զեղբարս 'ի քս ։

Զայսոսիկ լուեալ սրբյն երանոսի՝ ասէ ․ գո-
հանամ զքէն տր յս քս , լոյս յաւիտենական ,
ծագումն արդարութե , աղբիւր գթութե , զի
այսպէս արժանի համարեցար ուրախ առ-
նել զիս 'ի ձեռն հրեշտակի քո և մխիթարել ․

տո՛ւր ինձ և ժողովրդեան քո այսմ հաստա-
տութեան, զի մի՛ ոք 'ի նոցանէ պակասեսցի 'ի
խոստովանութենէ անուա՛նդ քո. այլ քո յոլովամ-
րացեալ զօրութեամբ՝ արժանի լինիցին ընդունել
զմեր խոստմանց քոց զբարութիւն պանծալի յաղ-
թանակաւ, և մահուա՛մբ զանմահութեան ստա-
նալ զփառս:

Նոյն կատարեն զաղօթսն՝ քաջալերել սկսաւ
զեղբարս 'ի քն: Նոյն էր այնուհետև տեսա-
նել, զի այր իւրաքանչիւր զինչս իւր բաշխէր
կարօտելոց, և բուրէր 'ի նմ ծաղկահոտ ա-
նուշութեան վկայութեան. և զցայգ և զցերեկ
հանապազորդէին յաղօթս և 'ի բանս ած-
այինս, ակնկալեալք ժամուն՝ որ աւետարա-
նեցաւ նց 'ի քնէ: Իսկ անօրէն կայսրն յետ
պաշարելոյ զօրօք զքաղաքն՝ զայս պայման
առաջի առնէր, զի թէ ոք զմի 'ի քրիստոնէից
'ի բաց արձակեսցէ, կմ պաշտպանել խորհես-
ցի, զնմանօրինակ վճիռ մահապարտութեան
յանձին կրեսցէ. ոմն զի համարձակ լիցի մեզ
ասէ 'ի քաղաքի անդ մերում պաշտել և զոհա-
մատուցանել ածոց մերոց, որք ոչ իւ՛իք հաճին
ը խառնուածն պատարագաց մերոց ընդ պա-
տարագս քրիստոնէից:

Սկիզբն եղև այնուհետև կոտորածի ը ամ
վայրս առհասարակ՝ առանց խնայելոյ ա-
րանց կմ կանանց, մեծի կմ փոքու. Նա առա-
ւել ամենեքին նոքա յօժարամիտ և զուա՛ր-
թագին տուեա՛լ զանձինս 'ի վն հաւատոցն ճըշ-
մարտութեան՝ սրախողխող լինէին ը քաղաքն
ամ. մինչև վտակաց պատուա՛կան արեանցն

խա-

խաղաղն ը̅ հրապարակս , և մերձակայ գետոց զգենուլ զգոյն կարմիր 'ի յորդուէն արեան սպանելոյն ։

Իսկ զն̅ըն երանոս հրաման ետ ամպարիշտ կայսրն ածել զաւաչեաւ ։ և այնչափ անագորոյն մոլեգնութ̅ փութեցաւ ը̅դէմ նր̅ , մինչ զի յերկար լինէր մի առ մի ճառել զդժնդակ անցս նր̅ ։ զոր լիով արձանագրեն գիրք վկայութե̅ նր̅ ։ Իսկ իբրև կատարեաց զանպարտելի զհանդէս նահատակութ̅ երանելին , մարմին նր̅ գիշերայն 'ի ձեռն ո̅ք երիցուն զաքարիայ թաղեցաւ 'ի խորագոյն այրի միում ։ յորոյ վր̅ այժմ խորան է կանգնեալ՝ 'ի վկայուհ̅ , եթէ հաճոյական ա̅յ եղև պատարագ ։ այն՝ որ 'ի տեղւոջ պատարագին ք̅ի կանգնեալ՝ կերպարէ զժողով հաւատացելոց խորհրդովք , յանձանձէ պաշտպանութե̅ք , և զօրացուցանէ նշանօք զօրութ̅ց՝ ըստ յաջողելոյ պարգևաց տն̅ և փրկչին մերոյ յս̅ի ք̅ի ը̅ հօր և ը̅ հոգւոյն ս̅բյ ։ ամէն ։

Արդ ը̅ որում քաղի 'ի զանազան յիշատակարանաց եկեղեցւոյն ղուգդոնացւոց , զառաջինն մնաց մարմին ս̅բյն երանոսի թաղեալ յայլի անդ՝ որ կոչիւր այլ ս̅բյն յովհաննու աւետարանչի ։ այն է յարուարձանս ղուգդոն ( կմ̅ լիոն ) քաղաքի 'ի մացառուտ վայրի 'ի մէջ խիտ առ խիտ թփոց , մինչև ցամ̅ տն̅ 480 ։ և յայնժամ ս̅բն պատիէս կմ̅ բայլէնս եպ̅ս ղուգդոնի շինեաց անդ երկու եկեղեցիս ։ յորոց մին էր նոյն իսկ այրն , յորում կային և մարմինք ս̅բց նահատակելոց բազ-

մութք է երանոսի . և միւս ևս ՚ի վր այլին յանուն սբյն յովհաննու , որ յետոյ կոչեցաւ տաճար սբյն երանոսի . զի սոքա հանգուցին զմարմին նր ՚ի խորանի ։

Այլ մօտ յայն տեղի և այլ տաճար յանուն սբյն յուստոսի . ուր էին և այլ բազմութիւնք նշխարաց սցա . է որս համարէին լինել գղերք այնր եկեղեցւոյ և զմարմին սբյն երանոսի . վրյ և յետ դարուց բազմաց անցելոց եղև սաստիկ մաքառումն ՚ի մէջ ժառանգաւորաց երանոսեանց և յուստոսեանց՝ զամս երիս , այս է յամի տն 1410 մինչև ՚ի 1413 . մինչև անդրէն ստուգեցաւ հաւաստի քննութք , թէ մարմին սբյն երանոսի է յեկեղեցւոջ անդ երանոսի , և ոչ յուստոսի ։ Յայնժամ առեալ եդին զնշխարս սբյն երանոսի ՚ի նոր տապանակի , և հանգուցին ՚ի վր խորանի է մէջ երկուց վկայից եպիպոդիոսի և աղեքսանդրոսի . ուստի սահմանեցաւ առ լուգդունացիս առանձինն տօն փոխադրութե նշխարաց նր յապրիլի 5 ։

Իսկ այնչափ աճեաց յարգութի հաւատացելոց առ սբն երանոս , զի ոչ ծականք միայն , այլև քահանայք անգամ չիշխէին մերձենալ ՚ի տես և ՚ի համբոյր նշխարաց սբյն , եթէ ոչ՝ բոկ ոտիւք , և այն հանդերձ նախընթաց խոստովանութք մեղաց իւրեանց ։ Իսկ ըստ յաճախել ջերմեռանդն պաշտաման յաւել և ամ հրաշս ներգործել բազում ՚ի տապանէ սբյն . մինչև ամբողջ մատենիւք պահել լուգդունացւոց զյիշատակ սքանչելեացն եղելոց ,

լոց , ցորչափ ամբողջ պահեալ կային և ոս-
կերք նոցին : Բայց Ը ցրուելոյ նշխարաց նորա
յանհաւատ նորադանդից՝ և մատեանքն այն
ընդ այլ բազում գիրս հուրբ դատեցան .
քանզի յամի Տն 1562 . յապրիլի 29 . կալվի-
նեան աղանդաւորք առեալ զքաղաքն Լուգ-
դունայ՝ աւար հարին ամ մոլեգնութբ . զնոք
մատեանս և զյիշատակարանս և զպատկերս
եկեղեցեաց հրոյ ետուն Ճարակ , զսեղանս
կործանեցին , և զոմանս յեկեղեցեաց հիմ-
նայատակ արարին . և զամ սպասս սրբութե
պղծեցին և եղծին , և զնշխարս նոց ցիր և
ցան արարին :

Ընդ որս և զպատուական մարմինն նըսն երա-
նոյն հանեալ 'ի տեղւոջէն՝ ընկեցին 'ի կէս
Ճանապարհաց . և յետ ցրուելոյ զմասունս
ոսկերացն կէս մի այսր անդր , և կէս մի 'ի
գետն , առեն անօրինաց զգլուխ նըսն՝ ձեռն
'ի ձեռն ձգէին իբրև գնտակ . և ապա առա-
թուր հարեալ ընկեցին 'ի խաղ մի գետոյն :
Զոր դիտեալ զգուշութբ բժիշկ ոմն վիրա-
հատ՝ ուղղափառ և բարեպաշտ , չոգաւ և
եհան լուեալն , և պահեաց 'ի ծածուկ ամ
երկիւղածութբ և պատուով : Մինչև 'ի զօ-
րանալ կարոլոսի իններորդի արքային գաղ-
ղիացւոց , և 'ի վանել զԹշնամիս եկեղեցւոյ,
բերեալ եդաւ պատուական գլուխ նըսն 'ի
տեղի իւր առաջին շքով մեծաւ . և եղև ու-
րախուի մեծ ամ ժողովրդեան 'ի գիւտ ան-
գին գանձուն . որ և կայր մնայր մինչև ցա-
ւուրս մեր :

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Զոր օրինակ 'ի տօնացուցս մեր մեծն երանոս կոչի հէփռօզ առօտէլոց, առ որոշելոյ 'ի միւս երանոսէ եպիսկոպոսէն սիրմիոյ՝ զոր տօնեմք ՟Ը անթիմոսի հայրապետի. սոյնպէս և առ յոյնս ՟Ը բասիլեան յայսմաւուրաց կոչի փիլոփօխոս, ՟Ք յաջորդ կմ հետևորդ առաքելոց. զոր և տօնեն զոյգ ՟Ը միւս երանոսի 'ի 23 օգոստ. հանդերձ համառօտ պատմութբ վարուց նր, որ թերևս առ մոռացումն պակասի 'ի Հ. ուր կայ 'ի Ճ. բանիւ եւսեբիոսի: Այլ գովութբ յիշատակեն զմ հայրք արևելեան և արևմտեան եկեղեցեաց զՍրբն երանոս իբրև առաքելական հայր և վկայ եկեղեցւոյ՝ հզօր բանիւ և գրով. չտա լեցլ աստեն սրբյն եպիփանու զնմանէ 'ի հէրէՅ. ՟ԼԴ. * Երեցն երանոս՝ այր ամի զարդարեալ պար-
„ գևօք սբ հոգւոյն, ողջ քաջ նահատակ ընտրեալ յՏՅ.
„ և երկնային շնորհօք ճշմարիտ հաւատոց և գիտութե
„ օծեալ ||. և թէոդորետոսի 'ի փրամախօս. ՟Ը. * լոյս
„ գաւղիացւոց արևմտեայց ||: Սակայն յիշատակէ զերանոս և բազմ քաղէ զգիրս նր եւսեբիոս կեսարացի: Բազումեն բանք առ բոլլանդեանս և առ այլ քննիչս վս սրբյն երանոսի. ՟Ը վս ստուգութե կմ անստուգութե զանազան վկայաբանութեց նր գտեալ 'ի վաղեմի ճառընտիրս գաղղիացւոց. վս պէսպէս աւանդից վնչխարաց նր. վս գրոց նր՝ թէ յոր լեզու գրեալ իցեն, կմ յումմէ թարգմանեալ. և որ սոցին սակի. զորոց չէր մեզ հարկ խօսել: Միայն զայս յուշ առնեմք, թէ ուր թաբեպրոք բոլլանդեան սրագրիչ այր առաւել ՟Ը վայրաքննութե և համարձակախօսութբ վարեցաւ, յաննինդ բոլլանդեան ոչ հաւանեալ ընթացից նր՝ արար յաւելուած նոր 'ի ցրել զանհիմն պատճառանս նր, և 'ի հաստատել զաւանդս նախնեաց՝ հանդերձ ծանօթութբք քիփլէտայ կամ շիֆլէի մեծանուն մատենագրի. որ ոք կամի, տեսցէ առ նս:

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Թեկղի կամ Թեկղեայ փառաւորեալ կուսի. որ և ասի նախավկայուհի:

Ը. Յ. սեպտ. 24: Լ. սեպտ. 23: Ճառընտ. Ա. նխ̃բ ═ նչ̃ք: Գ. աձճէ ═ աձնէ: Գ. յնէ ═ յհ̃ք: Բասիլէոս սելեւկեայն, և այլ հին հարք: Բարոնեոս յամ 47: Բոլլանդեանք ամեւրենց. 'ի Զ հատ. սեպտ. էջ. 546 ═ 568:

ԹԵԿՂԱ ԱՌԱՔԵԼՈՒհին քր̃ի և աշակերտուհին պօղոսի, որ և Թեկղի կամ Թեկղա կոչի, այնչափ համդիսացեալ է յեկեղեցւոջ 'ի սկզբանէ և այսր, մինչ զի չիք նման նր̃ 'ի մէջ կուսից վկայուհեաց. վ̃յ և ա̃ծաբանն գրիգոր՝ ի̃ առաքեալս և ընդ աշակերտս համադասեալ յառաջ բերէ զնա 'ի ճառն ա̃. ը̃դէմ յուլիանոսի. * Ոչ պատկառեցար (ասէ) 'ի պատարագաց մատուցելոց ի̃ քր̃ի. 'ի յովհաննէ (մկրտչէ), 'ի պետրոսէ, 'ի պօղոսէ, 'ի յակոբայ, 'ի ստեփաննոսէ, 'ի ղուկայ, յանդրէէ, 'ի Թեկղեայ ||: Նոյն խոստովանող պելուսացի (Գիր. ա̃. Թղթ. 87.) անուանէ զԹեկղ * գլուխ կանանց ազգին յաղթութ̃եց և յաղթանակաց,

տամ գովութեան հռչակեալ, և իբրև սիւն ար-
ձանացեալ անմահական պարկեշտութեան ‖:
Նոյնօրինակ խօսին և այլ հարք և վարդապետք
եկեղեցւոյ. որպէս և ոք վկայք և վկայուհիք
սուէպ յիշեն զնա յընթացս մրցանաց իւ-
րեանց: Եւ զի այսպէս մեծ էր անուն նորա,
և մեծամեծ՝ գործք նորա, անդստին ՚ի ժամա-
նակաց նորա գրեցան զնմանէ բազմապատիկ
բանք հաւաստիք և անհաւաստիք, և յամ
դարս յոյզք եղեն խնդրոց վասն ստոյգ և ան-
ստոյգ պատմութեանց նորա. արդ մեզ անկ է զսո-
վորական աւանդս ընդունելիս առ նախնիս
արձանագրել աստանօր, և զանընդունելիս
կամ զերկբայականս նշանակել ուրոյն ՚ի կար-
գի ծանօթութեանց: (1)

Արքունի կոյսս այս Թեկղ էր յիկոնիոն քա-
ղաքէ լիկայոնացւոց, դուստր մեծատուն կը-
նոջ այրւոյ և հեթանոսի՝ կոչեցելոյ Թեկղիա
կամ Թէոկղիա, խօսեցեալ առն միում իշխա-
նի, որում անուն էր Թեմերոս կամ Թամիւ-
րիս: Եւ եղև ոքյն պօղոսի առաքելոյ յետ
բազում հալածանաց գալ միանգամ և միւս-
անգամ յիկոնիոն քաղաք, և իջևանիլ ՚ի
տան ոնեսիփորայ. ուր գային բազմութիւնք
արանց և կանանց ՚ի լսել զբանն Այ: Եւ զի
մերձ էր տունն Թեկղեայ, եկեալ կուսին
նստաւ առ պատուհանի միոջ սենեկի իւրոյ,
և աւանց քաջ տեսանելոյ զպօղոս՝ լսէր ըզ-
բանս նորա, զոր խօսէր վասն սրբութեան և հոգևոր
բարութեանց, այսպէս ասելով.

Լուարուք ինձ՝ որ ժողովեալդ էք նորանոր
լսել

լսել բան յանէ օտարէ. քանզի արդարև ունիմ ասել ձեզ օտարս և նորալուրս, բայց միանգամայն և աստուածայինս և փրկարարս, զոր 'ի նմին իսկ 'ի բանէն այ ուսայ՝ ծնելոյ 'ի մարդկային կերպարանս և 'ի բնութե, և յերկրի երևելոյ. որ զհրեշտակականն մեզ զայս և զերկնային ուսոյց քաղաքավարութի. Երանի ասէ այնոցիկ՝ որ սբ են սրտիւք, զի նք զած տեսցեն. երանի որք պահեն զմարմինս իւրեանց սրբութք, զի նք կոչեսցին տաճար այ. երանի որք ճնշիցեն զանձինս իւրեանց վն այ, զի ընդ նմա խօսեսցի աստուած. երանի որոց արհամարհիցեն զաշխ, զի նք հաճոյ եղիցին այ. երանի որք այնպէս ունիցին կանայս՝ որպ թէ չունիցին, զի նք ժառանգեսցեն զերկիր և զերկինս. երանի որք ունիցին զերկիւղն այ 'ի սիրտս իւրեանց, զի նք հրեշտակք կոչեսցին. երանի որք դողայցեն 'ի բանիցն այ՝ զոր լսեն, զի զնոսա կոչեսցէ աստուած. երանի որք ընկալան զիմաստութի յի քի, զի նք որդիք այ լինիցին. երանի որք պահեն զմաքրութի մկրտութե, զի նք հանգիցեն առ հօր և որդւոյ սիրելւոյ հոգւովն սբվ. երանի որք առնուցուն զօրինակն քսի, զի նք եղիցին 'ի լոյս մեծ. երանի որք վն սիրոյն այ եղանեն 'ի մարտիրոս, զի նք ժառանգեսցեն զկեանսն յաւիտենից, և կացցեն մշտնջենաւոր ընդ աջմէ որդւոյն այ. երանի իցէ հոգւոց և մարմնոց կուսանաց, զի նք հաճոյ լիցին այ, և ոչ կորիցէ վարձք սրբութե նց։

Եւ մինչ պօղոս խօսէր զայս աստմ զմեծամեծս այ,

ա̃յ , կոյսն Թեկղ 'ի բոլոր սրտէ ը̃ունէր զա-
սացեալսն , և 'ի միտ առնոյր զի̃մն անյագ-
փափաքմամբ . և ոչ մեկնէր 'ի պատուհանէ
անտի մինչև ցերիս աւուրս . քանզի ստէպ
քարոզէր առաքեալն որոց գային առ նա՝ զօ-
գուտ ժամն 'ի տուէ և 'ի գիշերի : Իսկ մայրն
Թեկղի քանզի բազում անգամ ջանացաւ քե-
ցել զդուստր իւր 'ի բանից առաքելոյն , և
ոչ կարաց , ետ կոչել զխօսեցեալն նորա , և
ասէ ցնա . ասեմ քեզ Թեմերոս , զի զքաղաքս
իկոնացւոց ապականեաց այրն այն . և բա-
զում կանայք և երիտասարդք աշակերտին
նմա , որոց ուսուցանէ պաշտել զմի ա̃ծ , և
բնակել սրբու̃թ . մինչ Թեկղ ևս պատեցաւ
զնովաւ իբրև ասպն զօստայնիւ , և ըմբռնե-
ցաւ 'ի նմին ցանկութեան . և 'ի չարաչարուկ
գործս ուշ եդեալ՝ ոչ առնու զակն 'ի վեր 'ի
տանէն , ուր նա քարոզէ : Ապա մատեաւ
ինքնին Թեմերոս առ Թեկղ , և խրատէր մեկ-
նիլ 'ի պատուհանէ անտի . դա՛րձ առ իս ասէ ,
և ամաչեա՛ յինէն , զի ինձ խօսեալ է զքեզ .
Իսկ Թեկղ ոչ արար զնա արժանի պխնւոյ .
զի միտք իւր կապեալ էին 'ի բանս ն̃ր առա-
քելոյն :

Յայնժամ Թեմերոս լի եղև ցասմամբ , ըն-
թացաւ 'ի հրապարակն , և հայեցեալ ընդ
մարդիկն՝ որ մտանէին և ելանէին առ պօ-
ղոս , հարցանէր՝ թէ ո՞ իցէ այրն , և զի՞նչ
ուսուցանէ . և ես տաց ձեզ ասէ արծաթ բա-
զում : Իսկ դեմաս և հերմոգինէս պղնձա-
գործք և դարբինք օտարացեալքն 'ի պօղոսէ
և

և թշնամիք ճշմարտութեան, որք կային 'ի փո-
ղոցի անդ, ասեն ցԹեմերոս. այրն այն է մի
'ի գլխաւորաց քրիստոնեայ անուանելոց, և
մեկնէ զերխտասարդս 'ի կուսանաց, և զկոյս
յերխտասարդաց. և ասէ' թէ ոչ կարէք յառ-
նել դուք 'ի մեռելոց, եթէ ոչ պահեսջիք
զանձինս ձեր սրբութեամբ ։ Լուեալ Թեմերոսի
զչարախօսութիւն նոցա, ընկալաւ զնա ուրախու-
թեամբ 'ի տուն իւր, և հանգոյց զայն գիշեր.
և ընդ առաւօտն դիմեաց բազմութեամբ բրաւորաց
և արանց անօրինաց 'ի տունն ոնեսիփորայ,
և ձգեաց զպօղոս յատեան դատաւորին' որ
կոչիւր կեստիղիոս անթիհիւպատոս, եդեն
վկայս սուտս, թէ այրս այս ոչ տայ թոյլ
կուսից' լինել արանց իւրեանց ։

Եւ դատաւորն ասէ ցպօղոս. ասա ինձ այր
դու, զի՞նչ է' զոր ուսուցանես. զի չեն սա-
կաւք' որ չարախօսեն զքէն ։ Պօղոս ետ ա-
ռաքեալն, և ասէ. ես պատմեցից քեզ զոր
ուսուցանեմս. լուր դատաւոր, ուսուցանեմ
զմի ած բարձրեալ և ճշմարիտ. ած' որում
ոչ այլ ինչ է պիտոյ, բայց միայն սրբութիւն և
փրկութիւն որդւոց մարդկան. նա առաքեաց
զիս քարոզել և աւետարանել նմի, զի փրկես-
ցին 'ի կորստենէ և 'ի պղծութենէ և յամ ցան-
կութենց մեղաց և մահու. զի այլ մի ևս մե-
ղիցեն զեղխութեամբ, այլ եղիցի 'ի նմա ահ և
երկիւղ 'ի ձեռն հաւատոցն այ. զի ծանիցեն
զերկիւղ և զսէր ճշմարտութեան, որ ուսուցա-
նէ արանց և կանանց զարժանն իւրաքանչիւր
վիճակի' հանդերձ պարկեշտութեամբ և հնա-

զան

զանդուլթի̃ . արդ՝ եթէ զոր ա̃ծ ուսոյց ինձ,
զայն ուսուցանեմ, զի՞նչ պարտապան եմ
չարախօսաց լինոց : Իբրև լուաւ զայս դատա֊
ւորն, հրաման եհան՝ զի կապանօք երթիցէ 'ի
բանտ . մինչև եղիցի տեղի լսել նմա բարւոք :
Իսկ Թեկղ 'ի նմին 'ի գիշերի ած զապարան֊
ջանս իւր, և տարաւ ետ դռնապանին տան
իւրեանց . և այնպէս բացեալ զդուռն՝ գնաց
առ բանտապետն՝ որ պահէր զպօղոս . ետ
նմա զայլ ևս ոսկի զարդս, զի մտցէ 'ի բանտն .
չոգաւ նստաւ առ ոտսն պօղոսի, և լսէր 'ի
նմանէ զբանս կենաց . և մեծաւ ուրախու֊
թբ̃ համբուրէր զկապանսն և զշղթայս զո֊
տից և զձեռաց առաքելոյն : Իբրև ազդ եղև
ընտանեացն Թեկղի և Թեմերոսի վն̃ բանիս
այսորիկ, գնացեալ պատմեցին դատաւորին .
և հրամանաւ նր̃ ձգեցին անդրէն զպօղոս
յատեան . բայց Թեկղ կայր տակաւին 'ի
տան բանտին, և արտասուօք թանայր զտե֊
ղին՝ ուր նստէրն պօղոս կապեալ :

Հրաման ետ դատաւորն ածել և զԹեկղ յա֊
տեան . և հայեցեալ ը̃ նա՝ ասէ . ը̃էր ոչ
լինիս կին խօսնառն քում ը̃ս օրինաց մերոց .
իսկ Թեկղ իբրև յափշտակեալ 'ի մտաց՝ ան֊
թարթափ հայէր 'ի պօղոս . և բնաւ ամե֊
նևին պ̃նի ինչ ոչ առնէր դատաւորին : Յայն֊
ժամ աղաղակեաց ամբոխն ը̃դդէմ պօղոսի և
Թեկղի, կորուսէք զմոգսդ . և մայրն իսկ
Թեկղի մոլեգնեալ ը̃դդէմ դստերն՝ ձիչ բառ֊
նայր ասելով . կորուսէք զանմիտդ 'ի մէջ
թէատրոնիս . զի ա̃մ կանայք՝ որ ընդ դա
հայես֊

հայեսցին, զահի հարեալ սարսեսցին, և այլ
մի ևս ուսցին զայդ ուսումն չար ։

Իսկ դատաւորն հրաման ետ դան հարկանել զպօղոս, և հանել արտաքս քան զքաղաքն ․ և սկսաւ բազմօք խրատել զԹեկղ, զի 'ի բաց կացցէ 'ի քսէ և 'ի պօղոսէ, և դարձցի առ մայր իւր և առ այր իւր ․ և իբրև ոչ կարաց հաւանեցուցանել զնա ողոքանօք կամ սպառնալեօք զաւուրս քանի մի ․ տայր վճիռ մհ կուսին՝ զի այրեսցի հրով 'ի թէատրոնի, փոխանակ զի ելիք ասէ զայր իւր զգլխաւոր քաղաքին, և յարեցաւ յայր օտար ։ Եկն 'ի տեսարան անդր և դատաւորն ինքնին, և ամ զօրքն ը նմա հանդերձ բազմութը ամբոխին ։

Յայնմ վայրի զոր օրինակ ոչխար մոլորեալ 'ի լերինս՝ խնդրիցէ զհետս հովուի իւրոյ, այնպէս և Թեկղ խնդրէր զպօղոս ․ և հայէր ը մարդիկն՝ տեսանել զնա 'ի մէջ նց ։ Եւ ահա նոյնժամայն ետես զտր յս քս, զի նըստէր դէմ յանդիման նր 'ի նմանութի պօղոսի, այլ լուսափայլ և անճառ փառօք ․ յորմէ լցաւ սիրտ նր ուրախութը, և քաջալերեալ զօրացաւ ․ և մինչդեռ պշուցեալ հայէր, յարեաւ անտի տրն, և ել յերկինս ․ իսկ կոյսն զգեցաւ ոգի զօրութե՝ աներկիւղ մեռանիլ 'ի սէրն քսի ։

Յայնժամ բերին ամ բազմութին յամ կողմանց փայտս, մինչև մանկտին և կանայք կուսանք անգամ, և կուտեցին 'ի Թէատրոնին այրել զԹեկղ ․ ապա բուռն հարկանէին

զնմա-

զնմանէ զինուորքն, զի ելցէ ՚ի վ̄ր դիզելոց փայտից. և նա ինքնին զուարթամիտ յառաջ մատչէր, և անդէն զհուրն լուցանէին. մինչև յարտասուս հարկանիլ դատաւորին, և զարմանալ ըն̄ զօրութիւն՝ որ էր ՚ի Թեկղ:

Արդ յորժամ էր երանելի կոյսն ՚ի մէջ հրոյն բոցբոցելոյ, և տարածեալ զձեռս իւր ՚ի նմանութիւն խաչափայտի՝ կայր յաղօթս, մազ մի ՚ի հերացն ոչ խանձէր. զի գթացաւ հոգին ս̄բ ՚ի վ̄ր նր̄: Եւ ահա ամպ ցօղագին հովանի լինէր ՚ի վ̄ր նր̄, և ձայն դոչման եղանէր յերկնէ և յերկրէ. և կարկուտ և անձրև սաստիկ յերկնէր հեղոյր. մինչ զի ահ և դողումն և սատակումն լինէր յամբոխին. անդ հուրն շիջաւ, և Թեկղ ապրեցաւ. և ՚ի ցրւուելն ամբոխին՝ ելեալ խնդրէր գտանել ըզ-պօղոս:

Իսկ պօղոս ՚ի պահս էր արտաքոյ քաղաքին՝ Թաքուցեալ ըն̄ Ոնեսիփորայ և ընտանեաց նր̄ յայրի միում՝ իբրև յաղքատին տան. և իբրև ոչ գոյր նց̄ ինչ ուտելոյ և ոչ դրամ գնոյ, եհան պօղոս զվերարկուն, և տուեալ ցպատանեակ մի Ոնեսիփորայ՝ առաքեաց գնել հաց և կերակուր, և բերել լուր ինչ վս̄ Թեկղի. և նա ՚ի դառնալ իւրում եգիտ զԹեկղ դրայի իւր, զարմացաւ և ասէ. Թեկղ յո՞ երթաս. և նա ասէ. պօղոսի զհետ երթամ, զի ապրեցայ ՚ի հրոյ անտի: Եւ պատանեակն ասէ ցնա. եկ ես տանիմ առ նա. քանզի այս վեց և եօթն օր է, զի յոգւոց հանէ և լայ, պահէ և խնդրէ յա̄յ վն̄ քո:

Եւ

Եւ 'ի մերձենալ Թեկղի 'ի տեղին՝ լուեաւ զձայն պօղոսի, զի կայր 'ի ծունր և աղաչէր զա՟ծ վ՟ն նորա, ասելով. Հա՛յր մեր՝ որ յերկինսդ ես, խնդրեմ 'ի քէն՝ զի մի մերձեսցի հուրն 'ի Թեկղ. այլ շիջո՛ զնա 'ի նմանէ. զի քո է ։ Եւ Թեկղ 'ի վ՟ր եհաս, և ասէ 'ի ձայն գոհութ՟ե. Հա՛յր մեր՝ որ արարեր զերկինս և զերկիր, դո՛ւ ես հայր որբոց. գոհանամ զքէն վ՟ն ա՟մի՝ զոր արարեր ը՟ իս, և կեցուցեր զիս, զի տեսից զպօղոս ։

Եւ յուրախ լինել յոյժ առաքելոյն ը՟ տեսանել զԹեկղ կենդանի, հանդերձ ամենեքումբք՝ որ ը՟ նմայն էին 'ի Թաքստի, եբեր նչ՟ պատանեակն հինգ նկանակ հաց և խաւարտ և աղ և ջուր. և ճաշակեցին ուրախութ՟բ 'ի ա՟ծ ։ Յետ այսորիկ ասէ Թեկղ ցպօղոս. փոքրեցից զհերս իմ, և եկից զկնի քո՝ ո՛ւր և երթիցես ։ Ասէ պօղոս. պատերազմ սաստիկ է, և դու կին գեղեցիկ. գուցէ այլ պատերազմ եկեսցէ 'ի վ՟ր քո չար ք՟ զառաջինն, և ոչ կարասցես համբերել ։ Թեկղ ասէ. միայն զդրոշմն ք՟ի տո՛ւր ինձ, և փորձութ՟ի առ իս ոչ մերձենայ ։ Եւ առաքեալն ասէ ցնա, երկայնամիտ լեր, և առնուցուս զոր ինչ խնդրես ։

Յայնժամ արձակեաց պօղոս զոնեսիփորոս դառնալ ընտանեօք հանդերձ 'ի տուն իւր. և մեք հեռասցուք ասէ 'ի քաղաքէս. և առեալ ը՟ իւր զԹեկղ՝ գնաց յանտիոք. այն է անտիոք մեծն յասորիս, ուր հաւատացեալքն նախ քրիստոնեայ կոչեցան, ասէ բասիլիոս

սե-

սելեւկիացի. Թէպէտեւ պիսիդացիք ասէ զայն կամին՝ զի իցէ անտիոք պիսիդեայ մօտ 'ի լի-կայոնիա:

Բայց եւ անդ յարեաւ սատան ընդդէմ կուսին. քանզի աղեքսանդրոս ոմն այր երեւելի՝ որ արքայակերպ փառօք ճոխանայր 'ի քաղա-քին, իբրեւ ետես զԹեկղ, սիրեաց զնա. եւ փաղաքշէր պօղոսի իբրեւ հօր կ̅մ ազգակցի՝ տալ ինքեան զկոյսն 'ի կնութի̅. եւ բուռն հարեալ զԹեկղեայ՝ կամէր գիրկս արկանել նմա: Իսկ կոյսն մաքուր մերժեաց զնա. եւ 'ի բռնանալ ն̅ր՝ զօրացեալ կուսին շ̅նր՝ պա-տառեաց զպատմուճան աղեքսանդրի, եւ ըզ-խոյր նորա պսակակերպ հանէր 'ի նմանէ եւ յերկիր ընկենոյր. եւ զնա մերկ կապուտ կո-ղոպուտ Թողոյր, եւ ամօԹալից 'ի մէջ հրա-պարակին:

Յայնժամ զսէրն յատելութի̅ փոխեալ՝ չո-քաւ այրն վաղվաղակի եհան հրաման 'ի դա-տաւորէ 'ի վ̅ր Թեկղի, զի արկցեն գազա-նաց. եւ ինքն աղեքսանդրոս էր՝ որ տայր 'ի տեսիլ քաղաքին զգազանսն. եւ զայն օր ե-դաւ Թեկղ 'ի պահեստի ը̅ս խնդրոյ իւրում իբրեւ յերաշխի առ տիկնոջ միում մեծատան, որում անուն էր տրիփոնա կ̅մ տրիփենա. որ եւ սիրով ընկալաւ զնա 'ի յիշատակ դստեր իւրոյ վախճանելոյ՝ որ կոչիւր փալկոնիա կ̅մ փալկոնիլլա:

'Ի վաղիւ̂ անդր գրեցաւ տախտակ 'ի դատա-ւորէն, եւ ցուցաւ բազմութե̅ ժողովելոց 'ի տեսարան գազանամարտի, Թէ Թեկղ դատի

իբրև սեղանակապուտ դից մ՟ն անարգելոյ զմեծ իշխանին աղեքսանդրոս ։ Եւ իբրև տանէին զԹեկղ, գայր ը՟ն նմ՟ և տրիփոնա, լայր և ասէր ․ զդստրիկն իմ յուղարկեցի 'ի գերեզմանն, և զքեզ Թեկղ յուղարկեմ այժմ տալ գազանաց կերակուր ․ Ած՟ն քո լիցի քեզ օգնական ։ Եւ Թեկղ ասէ արտասուօք առ Ած ․ Տ՟ր իմ և Ած իմ ես դու ․ հաւատամ յոր ապաւինեցայդ, և փրկեցեր զիս 'ի հրոյ անտի ․ տուր հատուցումն բարի տրիփոնեայ տիկնոջ՝ որ արկ զգութ իւր 'ի վ՟ր աղախնոյ քո, և պահեաց զիս սրբութ՟բ ։

Յայնժամ մերկացին զանարատ որոջն ք՟նի, և ածին նմա առիգած կտաւ ․ իսկ Թեկղ դարձեալ գոչեաց առ Ած, և ասէ, հայր Տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի՝ Ած մեր, դու ես Ած օգնական հալածելոց և մերակացու որբոց ․ տես հայեաց յաղախին քո, որ կայ մերկ խայտառակ առաջի այսչափ զօրաց ․ Տ՟ր իմ և Ած յիշեա զաղախին քո 'ի ժամուս յայսմիկ ։ Յայնմ վայրի եղև աղմուկ աղաղակի 'ի բազմութ՟ն ․ կէսք զգազանսն գովէին, և զԹեկղ անարգէին՝ մեհենակապուտ դից կարդալով ․ և կէսք ը՟ն հակառակն ասէին ․ բողոք առ Ած վ՟ն անօրէնութ՟ես՝ որ լինի 'ի քաղաքիս ը՟դէմ անպարտ և անարատ օրիորդիս օտարի ․ անիրաւ է դատաստանդ՝ ոչ դատիք զդա ․ ջնջի քաղաքս յերեսաց չարեացս ․ կորուսանել կամի զամենեսեան դատաւորդ ․ դառն է տեսիլդ՝ զոր տեսանեմք ։

Բայց զօրք դատաւորին բռնացան, և ետուն

արձակել 'ի վ՟ր կուսին մատակ առիւծ մի . որոյ հասեալ առ Թեկղ , և տեսեալ զնա՝ զի անցեալ կայր 'ի միջի բազկատարած յաղօթս , 'ի բաց եթող զգազանութի իւր , և նստեալ առ ոտս ն՟ր՝ սկսաւ լիզուլ : Արձակեցին և արջ մի . այլ 'ի դիմել նորա 'ի վ՟ր Թեկղի , յարեաւ առիւծն իբրև պահապան ն՟ր , և անդէն կալաւ և պատառեաց զարջն . սոյնպէս հերձաւ ը՟ մէջ և ինձն . և առիւծ ը՟ առիւծ ը՟հարան , և Թեկղ անվնաս պահեցաւ տ՟բ յերեսաց գազանաց , և գոհանայր զ՟այ :

Յետ այսորիկ արկաւ կոյսն 'ի մերձակայ գուբ ջրոյ՝ որ էր իբրև լի՟ զեռնոց թունաւորաց . և համարեալ Թեկղի՝ եթէ հասեալ է վախճան իւր , ասէր , ահա այսուհետև ժամանակ է մկրտելոյ . տ՟ր յ՟ ք՟ս ահա այսօր 'ի յետին աւուրս մկրտիմ արեամբ իմով 'ի մէջ ջրոյ : Իսկ իբրև կարծէին ամենեքին , եթէ չիք նմա հնարս ազատութ՟ , տեսին լոյս ահաւոր իբրև փայլակն բորբոքեալ՝ զի սպատեաց զկուսի՟ն . և գազանքն սատակեցան . և եղ Թեկղ արտաքս լուսազգեաց , այնպ՟ս՝ զի և ոչ երևելով երևէր , թէ մերկ իցէ :

Յայնժամ կարծեցեալ կանանց եղելոց 'ի հանդիսին՝ տ՟ծուհի ոմն զնա գոլ , երկեան և փութացան պատուել զնա ազգի ազգի խնկօք անուշիւք . և մատուցին նմ՟ 'ի զգեստ հանդերձս ազնիւս :

Իսկ աղեքսանդրոս առաւել խստասրտեալ՝ ետ կապել զԹեկղ 'ի մէջ երկուց զօ՟րակաց ,

կաց , և մատուցանել շամփուրս հրացեալս 'ի վր̅ ազդերաց նց̅ , զի առ զայրուկսն կորուսցեն զկապեալսն . բայց և այնպէս ողջանդամ այրեցաւ կոյսն . և զի տրիփոնս տիկինն 'ի սեսիլ անողորմ փորձանաց՝ զոր փորձէին 'ի վերայ Թեկղի , Ճչեաց յանկարծակի , և պարտասեալ անկաւ իբրև զմեռեալ առ դուրս Թատրոնին , զաչհի հարաւ աղեքսանդրոս , զի մի՛ չարիք ինչ անցցեն ընդ նա 'ի կայսերէն . զի յազգէ նր̅ էր տրիփոնս . վն̅յ յորդորէր զդատաւորն՝ Թողուլ զԹեկղ յազատութի :

Կոչեաց դատաւորն զկոյսն , և ասէ ցնա . ով ես դու , և զիարդ ոչ մերձեցան 'ի քեզ գազանքն : Ասէ Թեկղ . աղախին եմ քո̅ի ա̅յ կենդանւոյ , յոր եսն յուսացեալ եմ . զի վն̅ նր̅ ոչ մերձեցան յիս գազանքն . զի նա միայն է սահման կենաց և փրկութե̅ , և հաստատութի անմահութե̅ . վտանգելոց ապաւէն , նեղելոց յանձանձիչ , և անյուսից յոյս և հովանի : Եւ արդ ասեմ քեզ դատաւոր , և ա̅մ̅ն՝ որ կան առաջի քո . որ միանգամ հաւատայ յա̅ծ՝ զորոյ տեսիք զմեծամեծս , զոր արար առ աղախինս իւր , կեայ , և ոչ մեռանի ըդմահն յաւիտենից . և որ ոչ հաւատայ 'ի նա , ոչ կեցցէ , այլ մեռցի յաւիտեան : Զայս հատուած բանի երկրորդեալ բասիլիոսի սելեւկիացւոյ՝ ասէ . * լա՛ւ է նովիմբք իսկ վկայուհւոյն վարիլ բանիւք . քանզի ունին իմն մեծավայելչագոյն և ա̅ծաբանագոյն՝ քան զոր ես կանացի գիտութե̅ || :

Յայնժամ դատաւորն եւ քարոզ կարդալ
առաջի ա՟մ ամբոխին, եթէ զԹեկղ ա՟ծ ար-
ձակեաց, և ես ձեզ: Եւ կանայքն՝ որ նստէ-
ին 'ի թէատրոնի անդ, սկսան մեծաւ բար-
բառով ասել. մի է ա՟ծ Թեկղի, որ կեցոյց
զնա, և փրկեաց 'ի միջոյ գազանացն: Յա-
րուցեալ ընթացաւ և տրիփոնա զուարթու-
թ՟բ, և փարեալ զԹեկղիւ ասէր. դուստր
իմ Թեկղ՝ այժմ հաւատամ, թէ կենդանի
է դուստրն իմ. արդ եկ 'ի տուն իմ, և զա՟մ
ինչս իմ քեզ գրեցից: Եւ չոքաւ ը՟ նմ՟ կոյսն,
և կացեալ 'ի տան նր՟ աւուրս ութ՝ ուսոյց
նմա զա՟մ պատուիրանս ա՟յ. և հաւատաց տի-
կինն տրիփոնա յա՟ծ. և բազումք յաղախնայց
նր՟. և եղև ուրախութի՟ մեծ: Ապա ել Թեկղ
առնացի հանդերձիւք 'ի խնդիր վ՟դպին իւ-
րոյ՝ առաքելոյն պօղոսի. և եկեալ եգիտ
զնա 'ի մեռոյք քաղաքի, (որ ը՟ այլոց միւռիս
կ՟մ զմիւռին լիկիացւոց,) զի նստէր և ուսու-
ցանէր զբանն ա՟յ. և պատմեաց նմ՟ զոր ինչ
անցք անցին ը՟ նա. և յայնժամ երևի ընկա-
լեալ զմկրտութի՟, եթէ ցայնվայր չէր մկր-
տեալ, ո՟չ թուի ցուցանել պատմութի՟ն:
Յետ այսորիկ իբրև լուաւ Թեկղ, եթէ մե-
ռաւ խօսնայրն իւր թեմերոս, դարձաւ հրա-
մանաւ պօղոսի 'ի քաղաք իւր յիկոնիոն՝ քա-
րոզել զաւետարանն ա՟յ իբրև առաքելուհի՝
բանիւ և օրինակաւ. և եկեալ զառաջինն
'ի տուն ոնեսիփորայ՝ անկաւ 'ի վ՟ր երեսաց
իւրոց 'ի տեղւոջն, ուր խօսէր պօղոս զբանն
ա՟յ. և ասէ. Ա՟ծ իմ, և ա՟ծ տանս այսմիկ՝

յորում ծագեաց ինձ լոյս յի̄ քի̄ որդւոյն ա̄յ , որ օգնական էր 'ի բանտին և առաջի դատաւորին , և փրկեաց զիս 'ի հրոյ , և 'ի գազանաց չարաց , և ետ ինձ զմկրտութիւն , նոյն տացէ ինձ զարքայութի̄ յաւիտեանս յաւիտենից ։ Եւ ապա եկեալ 'ի տուն իւր՝ եգիտ զմայրն կենդանի , և ասէ ցնա . մայր իմ եթէ կարես հաւատալ , եթէ մի է ա̄ծ բարձրեալ՝ որ յերկինս է , կեցցես . ապա եթէ զոսկի և զարծաթ և զինչս որ մաշին՝ սիրես , ահա տուեալ է քեզ ։ Եւ յետ բազմօք քարոզելոյ մօր իւրում՝ և ընտանեացն՝ իբրև ոչ ետես 'ի նո̄ա զպտուղ բանին ա̄յ , զոր սերմանեաց , եթող զտուն իւր և զքաղաք , և չոգաւ 'ի սելևկիա խաւրացւոց . և անդ բազում մարդիկ լուսաւորեաց բանիւն ա̄յ՝ հանդերձ բազմապատիկ սքանչելեօք մինչև ցօր կատարման իւրոյ լի աւուրբք . և եղև յայնմ հետէ քաղաքն սելևկիացւոց նշանաւոր յոյժ նշխարօք սրբոյ կուսին թեկղի յա̄մ 'ի դարս ։

Իսկ զվախճան սրբուհւոյն այսչափ միայն նշանակեն գիրք վկայութե̄նն , թէ յետ քարոզելոյն 'ի սելևկիա՝ ննջեաց անդ 'ի քուն հանգստեան . զոր և բասիլիոս նշանակէ՝ * ո̄չ բազմաց , և ստուգագոյն՝ բան || . բայց 'ի վե̄ր բերէ իբրև հաստատուն աւանդութի̄ սելևկիացւոց , զոր և ճառընտիրք և յայսմաւուրք յունաց և հայոց յաւելուն գրել ճոխագոյն , թէ յետ լուսաւորելոյ թեկղի ըզբազումս 'ի սելևկիա՝ առանձնացաւ 'ի մօտակայ լերանն միում կամ միւրսինոյ կոչե-

ցել՝ յայրն մուտ՝ ուր կայր և աղբիւր ջրոյ․ և յետ կերակրելոյ ելանէր յայրէն և քաղէր բանջար, և շաբաթն 'ի բուն այնու շատանայր․ և 'ի գալ առ նա ումանց 'ի հեթանոսաց՝ ա՟ծային բանիւ և զօրու՟թ լուսաւորեաց զնոսա։

Եւ յետոյ փոխեցաւ յայնմ լեռնէ, և գնաց 'ի լեառն՝ որ կոչի կաղամիոն յուդիանէ․ և անդ ևս դարձոյց զբազումս յարանց և 'ի կանանց 'ի հաւատս ք՟ի․ և զբազում հիւանդս բժշկէր, և զդևս հալածէր անուամբն ք՟ի։ Եւ 'ի խափանիլ բժշկաց սելևկիոյ 'ի շահուց իւրեանց՝ կոչեցին արս անառակս, և արբեցուցեալ զնոսա՝ հանին 'ի լեառն, և արձակեցին 'ի ճգնարանն թեկղի։ Եւ յաղաչել թեկղի զա՟ծ փրկել զնա 'ի ձեռաց անօրինաց, նոյնժամայն ձայն եղև յերկնից․ թեկղ ճըշմարիտ աղախին իմ մի՛ երկնչիր, զի ես ընդ քեզ եմ․ ահա վէմդ՝ որ առաջի քո, պատառեսցի և առցէ զքեզ 'ի ներքս․ և եղև այնպէս, մինչև իսպառ անյայտանալ սրբուհւոյն․ բայց միայն մասն ինչ 'ի վերարկուէ գլխոյն մնաց ասեն արտաքոյ վիմին․ զոր տեսեալ արանցն՝ զահի հարան․ և եկեալ 'ի քաղաքն՝ պատմեցին զսքանչելիսն, զոր տեսին։

Նոյնպէս ասի լինել ննջումն և կատարումն խոստովանօղ վկային և մեծանուն կուսին թեկղի․ զոր և դնեն վախճանեալ իննսուն ամաց․ ո՟պ թէ ժ՟ը ամաց աշակերտեալ իցէ պօղոսի, և հ՟ը ամ կեցեալ 'ի հալածանս և

'ի

'ի լերինս ։ Արդ թէպէտեւ չէ մարթ ստու-
գութեամբ սահմանել զերրորդ , սակայն այս ինչ
ստոյգ է՝ զի լի աւուրբք կատարեցաւ . վասնորոյ
եւ նախավկայուհին կոչի եւ է ընդ առաջին հան-
դիսից նահատակութեան , եւ ընդ որում հանդի-
սացեալ յամենայն եկեղեցիս . ապա թէ ոչ՝ բազ-
մօք յառաջ եղեւ կատարումն մերոյս սրբոյն
սանդխտոյ կուսի ընդ նորա առաքելոյն Թադէի .
նմին իրի ընդ այլեւայլ տեսութեան նախավկայ-
ուհի կոչին երկոքեանն սքանչելի կուսանք
անարատք եւ ձեռնասուն աշակերտք առա-
քելոց ։

Իսկ 'ի տեղւոջ անդ գերեզմանի սրբուհւոյն
Թեկղի արտաքոյ քաղաքին Սելեւկիացւոց՝ շի-
նեցաւ 'ի վաղ ժամանակաց վկայարան գե-
ղեցիկ , եւ հաստատեցաւ սեղան նորա եւ մեծայ-
ին խորհրդոյ՝ սինապատ եւ արծաթափայլ
շրջանակաւ բոլորեալ յամենայն կողմանց , ասէ
Բասիլիոս ականատես՝ որ եւ էր ժամանա-
կակից ոսկեբերանի եւ մտերիմ սիրելին նորա ։
Նա 'ի վերայ բերէ . * Աստի իբրեւ յականէ
կուսական բարերարութեան իւրոյ առատաձեռն
անդ հոսեցելոյ՝ ընդդէմ ամենեցուն եւ հիւան-
դութեանց բղխէ զբժշկարար աղբիւրս դեղոց,
որոց կարօտին եւ խնդրեն . մինչ զի տեղին
այն եղեւ հանդիսական դեղարան , եւ հասա-
րակաց՝ տիեզերաց քաւարան ։ Այլ զտա-
ճարն նորա , մանաւանդ թէ զքաղաքն , քանզի
էանց զկնի 'ի ձեւ եւ 'ի վայելչութիւն քաղաքի ,
ոչ երբէք գտցես առանց քաղաքացեաց ( Սե-
լեւկիացւոց ) եւ օտարականաց , որք առհա-

սարակ ընթանան անդր յամ կողմանց՝ միայն 'ի պատուէլ զտեղին, և 'ի կատարել զուխտ իւրեանց, և 'ի նուիրել ինչ յընծայ սրբուհոյն փութացեալք, և յընդունել զբժշկութիւն ախտից և ցաւոց, ես և զազատութիւն յայսոց՝ յորոց ոք թերևս հարեալ իցէ .... և առհասարակ զխնդրելին առեալ՝ օրհնութիւն, գոհութիւն և ուրախութիւն դառնան, խոստովան լինելով՝ եթէ առաւել քան զոր համբաւն էր և ակնկալութիւն մեր, տեսաք սքանչելիս և բժշկութիւնս ցաւոց ||:

## Սքանչելիք Թեկղի:

Թողեալ զհին հրաշս, զորս պատմեն Ճառընտիրք առ կենդանութեամբ սրբոյ կուսին Թեկղեայ ի աւանդից խաւարացուց, ծաղկաքաղ առաջի դիցուք՝ զոր միանգամ պատմէ Բասլիոս Սելևկիացի յերկրորդ գիրս յաղագս սքանչելեաց Թեկղի. ուր ասէ 'ի յառաջաբանին. * Փոքր մի աշխատասիրեալ՝ զսփիւռգտեալ նորա սքանչելիս հաւաքեցաք, և 'ի դոյզն շարագիրս եդաք առաջի. ոչ եթէ զամենայն, այլ և ոչ զյոլովագոյն մասն յամենէն, այլ զսակաւագոյնս ամիք, զոր առ մեօք, և զոր փոքր մի յառաջ քան զմեզ հանդիպեցաւ ևեթ. և 'ի սոցունց ասոր դարձեալ զսակաւս, և զոր 'ի Ճշմարտախօս արանց կամ 'ի կանանց ժողովել մարթացաք ||: Ընդքաղուած բանից նր բովանդակի յերեսուն թիւ հրաշիցս:

ա̃ · Յորժ̃ հետէ Թեկղ բնակեաց ՚ի սահմանս Իսաւրիոյ, իսպառ կարկեցաւ դիւական պատգամախօսութի̃ քրմաց տեղւոյն, զոր առնէին յանուն Սարպեդոնի կիլիկեցւոյ՝ առ մեծամեծ չարեացն ՚ի համար չն̃ծոյ գրեցելոյ առ Իսաւրացիս :

բ̃ · Եւս կին հեթանոս անկաւ ՚ի պարսպէ, և խորտակեցան սրունք նր̃, և ոսկերքն փշրեցան · և անյոյս լեալ ՚ի դից իւրոց և ՚ի բժշկաց և ՚ի կախարդաց և ՚ի հրէից՝ յորս դիմեաց, անձաւ ՚ի տաճար ս̃բյն Թեկղի, և արտասուօք աղաչէր զնա զերիս աւուրս · և յաւուրն երրորդի երևեցաւ նմա Թեկղ, և ասէ · քերեա՛ զաղտս մ̃կայարանիս և վանդակացս, և օ՛ծ նովիմբք զցաւագնեալ ոտս քո : Եւ նա արար ը̃ս բանի նր̃ · և առժամայն կանգնեցաւ ՚ի վ̃ր ոտից, և վազվազէր և գնայր մինչև ՚ի տուն իւր · * Եւ այս սքանչելիք մինչև ցայսօր հռչակ հարկանի ՚ի կնոջէ անտի, և յորոց տեսինն զնա զառաջինն գնալ և ընթանալ և ներգործել ոտիւքն : Եւ որ մեծն է, քրիստոնեայ լեալ եղև ՚ի հրաշից աստի · և այն՝ այնպիսի, որպէս լինել արժան էր յայսպիսի փորձոյ || :

գ̃ · Բասիանէ կին ազնուական քրիստոնեայ ՚ի կետրիդաց գաւառէ կայր պատանդ ՚ի Սելևկիա · սա անկեալ յախտս դժնդակս՝ ստէպ կանխէր ՚ի տաճար ս̃բյն Թեկղի, և հայցէր զբժշկութի̃ : ՚Ի միում գիշերի ամարայնոյ նեղեալ յոյժ ՚ի ջերմութե̃՝ թաւալէր ընդ քարայատակ դաւիթ տաճարին · և ոչ գտեալ դիւ-

դիւրութին՝ ընկէց զանձն 'ի ջրհոր , որ կայր անդ մօտ ։ Յայնժամ երևեցաւ նմա Թեկղ , և բուռն հարեալ զհանդերձից նր՝ կորզեաց 'ի դուրս , և յանդիմանեաց զնա ․ ապա ձայնեալ առ աղջիկ մի՝ որ թուէր կալ զկնի նր ոտնաժիշտ , ասէ ․ բե՛ր այսր զայն կուժ ջրոյ ․ յոր մխեալ Թեկղի զձեռն՝ մերձեցոյց 'ի ճակատ կնոջն և 'ի պարանոցն , և եղև աներևոյթ ․ և բասխանէ գտաւ բոլորովին ողջացեալ , և զովացեն իբրև 'ի հովանաւոր վայրս փափկութե ․ և այս եղև յարթնութե , և ոչ 'ի քուն երազոյ ․ * Եւ վկայ այսմ որդի կնոջն այնորիկ մոդեստոս անուն ․ որ ցարդևս կենդանի է , և զսքանչելիս զայս գեղեցիկ քարոզէ ‖ ։

Դ․ Սիտիանոս զօրավար՝ որոյ մեծամեծ քաջութիւս արարեալ էր ընդդէմ պարսից , անառակ էր յոյժ վարուք ․ վնյ և կին նորա գանգատ կալաւ զնմանէ առ Թեկղ 'ի տաճարի նր ․ և նա սքանչելապս դարձոյց զզօրավարն 'ի զգաստութի ․ մինչև զարմանալ ամենեցուն ընդ փոփոխութի նր ։

Ե․ Յաւուր հարսանեաց դստեր պալատի մեծի տիկնոջ ընդ խռիւսերմոսի հռետորի՝ գողն եբարձ 'ի սենեկէ անտի հարսանեաց զոսկի գօտի ականակապ ․ որով անկաւ աղմուկ մեծ 'ի տան , և ամ ուրախութի 'ի սուգ դարձաւ ․ այլ 'ի դիմել բարեպաշտուհւոյն պալատի առ Թեկղ՝ երևեցաւ նմա , և յայտնեաց ըզտեղին՝ ուր պահեալ էր գողոյն զգօտին ։

Զ․ Գողացեալ ուրումն զխաչ մի փառաւոր

'ի

'ի տաճարէ սրբոյն Թեկղի՝ Թաքոյց . և 'ի շփո-
թիլ պաշտօնէից է այն՝ երևեցաւ կոյսն մի-
ում 'ի նոցանէ, և եցոյց զտեղին :

Է . Պաւսիկակոս նաւավար ծանուցեալ յամ
սելևկիացւոց՝ առ խօթութեն իմիք եղև տչա-
ցաւ . և անպիտանացեալ յաչաց՝ չեգիտ ուս-
տեք առողջութի . ապա դիմեալ 'ի տաճար
սրբոյն Թեկղի՝ ստէպ կայր յաղօթս 'ի գաւ-
թին, որ երբեմն բնակարան ասի լինել կու-
սին . և ոչ մեկնեցաւ անտի, մինչև ընկալաւ
զկատարեալ առողջութի աչաց . * Ա կայ սքան-
չելեացս ամ քաղաքն սելևկիացւոց, որ և
հայրենիք նր և քաղաք ‖ :

Ը . Մանուկ ոմն որդի պարդամիոսի յոլքայ
քաղաքէ հուպ 'ի սելևկիա՝ այն ինչ հատու-
ցեալ 'ի ստենէ, առ ստէպ լալոյ կամ յայլ
պատահարաց կորոյս զտեսութի միոյ ականն .
զոր առեալ դայեկին՝ եբեր 'ի տաճար Թեկ-
ղի, և աղաչէր ողորմիլ մանկան տղայոյ : Իւ-
էին յարտաքին գաւթի անդ տաճարին բազ-
մութիւք թռչնոց՝ բերեալք 'ի զանազան տե-
ղեաց 'ի պատիւ կուսին, աղաւնիք, բադք,
կարապք, կռունկք են . և 'ի տալ սպասա-
ւորաց կեր թռչնոց, եկն և միականի տղայն
խաղալ ընդ նո . և մին 'ի կռնկանց եհար կըռ-
ցաւ զցաւագնեալ ակն նորա . Ճչեալ սկսաւ
տղայն, և 'ի մր եհաս դայեակն հանդերձ
բազմութե՝ ցաւագնելով, ոչ թէ չարն չար
ևս եղև . այլ յետ պահու ծորեցաւ հիւթ
ձիսաւակար յաչաց մանկանն, և բացաւ ակն
նր՝ ողջացեալ իբրև զմիւսն . և 'ի միտ առեալ

ա-

ամենեցուն զսքանչելիս Թեկղի՝ գոհանային
զնմ․ յորոց սակի է ցարդ ևս կենդանի, ոչ
միայն մանուկն, այլև հայր նր, և հաւ նո-
րին տր անատոլիոս՝ մի յերիցանց եկեղեցւոյ
սբյն Թեկղի ։

Թ․ * Նու զի զաչս յիշեցաք, բնաւ և ոչ զայ-
,, նու զանց արասցուք, որ ՚ի մօտ ժամանակս
,, եղև, և ամենեքին մեք գիտակ եմք եղե-
,, լոցն, որ և սքանչելեաց և բժշկութե կցորդ
,, եղեաք ‖ ։ ՚Քանզի (ասէ) յամարայնի ան-
ցել տարւոյն բովանդակ քաղաքս սելևկիաց-
ւոց կրեաց զցաւ աչաց․ որում ոչինչ օգնեաց
և ոչ մի դեղ և դարման բժշկաց ։ Ապա ՚ի
դիմել մեր միաբան առ սրբուհին Թեկղ՝ ե-
րևեցաւ նա ՚ի տեսլեան միում ՚ի ցաւագնե-
լոցս, և պատուիրեաց՝ զի ոմ աչացաւ եր-
թիցէ և լուասցէ զաչս ՚ի ջուր աւազանին իւ-
րոյ․ և էր տեսանել զեկեալ բազմութին,
զի զմիմեամբք ելեալ ջանային առաջին լի-
նել յառնուլ զջուր, զի մի ՚ի սպառիլ սա-
կաւ ջրոյն՝ ինքեանք զրկեսցին․ այլ ամենե-
քին՝ որոց եկեալ էր խփեալ և պատատեալ
աչօք, դարձան աչօք բացօք և զուարթութբ ։
Միայն գտան և քանի մի անձինք, որք կամ
չեկին առ Թերեհաւատութե, և կմ ՚ի հան-
դէս արդարութեն ոչ ընկալան զառողջութի․
և այսպիսիքս իսպառ կուրացան․ որով յայտ-
նի եղև, եթէ ոչ ջր ինքեան դիւրաբուժելի
էր ախտն, այլ՝ զօրաւոր բարեխօսութի Թեկ-
ղի փարատեաց զայն ցաւ անփարատելի ։

Ժ․ Օքաղաքն դալիսանդոյ՝ որոյ աւերակք
տե-

տեսանելին յաւուր յայսմիկ, բազում անգամ ազատեաց 'ի պաշարմանէ սրբուհին Թեկղ՝ երևեալ փառօք 'ի վր մօտակայ լերին, և երկնային հրով ահ արկեալ թշնամեաց. քանզի երբեմն բնակեալ աստ և սրբուհին 'ի տեղիսն յայնոսիկ ։ Աւանդութին էր բնակչացն, թէ 'ի տօնի Թեկղի տեսեալ իցէ զնա ոմանց հրեղէն կառօք գնացեալ 'ի սելևկիոյ 'ի քաղաք անդր՝ այց առնել բնակչացն ըստ հաւատոց նց ։

ԺԶ. 'Ի վր սեղինունտ քաղաքի երևելւոյ՝ որ պատեալ է 'ի ծովէ իբրև ժայռ անմերձենալի, հնարեցան թշնամիք յարձակիլ ճարտարութբ. այլ 'ի դիմել բնակչաց առ սրբն Թեկղ՝ երևեալ միում 'ի նոցանէ՝ հրաման ետ շինել տաճար յանուն իւր 'ի բարձրաւանդակին, և ոչ երկնչել ուստեք այնուհետև. և այնմ պահեցաւ քղքն աներկեւան ։

ԺԷ. 'Ի հաստատեալ տաճարին Թեկղի 'ի սելևկիա խաւուրացւոյ բազմութբ սպասուց ոսկւոյ և արծաթոյ՝ եկին երբեմն բազմութիւք հրոսակաց 'ի լեստրիգոնիոյ, որ է յարևմտից սելևկիոյ. և կողոպտեալ զերևելի զարդս՝ տանէին 'ի քաղաքն իւրեանց, որ 'ի վր բարձրաբերձ լերանց. բայց մոլորեալ 'ի ճանապարհէ՝ իջին 'ի դաշտն սելևկիոյ, և մատնեցան 'ի ձեռս զօրաց քաղաքին. և այնպէս կորուսին զկեանս աւարօքն հանդերձ, որք բերէլ եղան անդրէն 'ի տաճար սրբուհւոյն. ուր և արձանագրեցաւ յիշատակ անցիցս ։

ԺԳ. Մարկիանոս ոմն անարժան եպս տար-սոնի մեծի քաղաքին կիլիկեցւոց ոխս կալեալ ընդ դեքսիանոսի եպսին սելևկիոյ. և առ-նալով զայրոյթ սրտին՝ 'ի մերձենալ տօնի սրբոյն Թեկղի, յորում ամ̃ կիլիկեցիք յիսաւրիա ըն-թանային է̃ այլ անթիւ բազմութե 'ի տե-ղեաց տեղեաց, յարուցեալ յեկեղեցւոջ իւ-րում հրապարակաւ արգել, զի մի ոք ամենևին երթիցէ 'ի սելևկիա յուխտ սրբոյն Թեկղի՝ որ 'ի վիճակին դեքսիանոսի. բայց մինչև հասեալ էր տօնի սրբոյն, մեռաւ մարկիանոս յանկար-ծակի. և յայտնի եղև ամ̃ց վրէժխնդրութի առ 'ի սրբոյն. և այսմ վկայ են ամ̃ քաղաքք և գաւառք է̃ մեզ:

ԺԴ. Իսկ որ մեծն է, կաստոր լիկայոնացի բնակեալ 'ի սելևկիա՝ ոստիկան զօրաց և այր առաքինի յոյժ, տեսանէր 'ի հսկման տօնի սրբոյն Թեկղի, զի կոյս մի փառաւոր և ահա-ւոր յածէր է̃ քաղաքն զայրագնեալ դիմօք՝ սպառնացեալ վրէժս խնդրել 'ի մարկիանոսէ վս̃ Թշնամանաց անձին իւրոյ: Իսկ իբրև զարթեաւ 'ի քնոյ, և պատմեաց զոր ետես, էառ զլուր յանկարծամահ լինելոյ մարկիա-նոսի. և 'ի տարածիլ համբաւոյն՝ ահ պա-տեաց զամենեսին, և առաւել քան զառա-ջինն մեծարեալ պատուէին զԹեկղ:

ԺԵ. Յուսեբիոս հռետոր դամասկացի այր երևելի 'ի տուն ատենին սելևկիացւոց խըն-դրեաց 'ի մաքսիմոսէ եպսէ քաղաքին, (որ երբեմն աշակերտակից էր ոսկեբերանի,) զի զքաղաքակից իւր և զմտերիմ բարեկամն իպեր-

իպերքիոս զմախաձանել՝ տացէ թաղել պատ-
ուով 'ի տաճարի նորին թեկղի կմ 'ի գաւթի
նր ։ Այլ 'ի վիջանիլ եպսին վն մեծուն աղա-
չաւորին և մեռելոյն, իբրև եկին բանալ
տեղի գերեզմանի 'ի տաճարի անդ, 'ի վր
եհաս սրբուհին թեկղ, և սաստեաց նոցա ․
և 'ի վերատին ձեռնարկել նց՝ միւսանգամ
յանդիմանեաց և գողացոյց զոսկերս ամե-
նեցուն ․ մինչև ձեռնթափ լինել նց 'ի գոր-
ծոյն ։ Այլ յաւել սրբուհին երևիլ եպսին
մաքսիմոսի 'ի տեսլեան գիշերոյ, և ասել
ցնա ․ * մի այդպէս թշնամանօք բերել 'ի տա-
ճարն, մինչև զբազմութե դիականց և զգե-
րեզմանաց զժահահոտութի 'ի նոյն փոխա-
դրել ․ քանզի և չէք միաբանութի չիրմաց և
տանն աղօթից, եթէ ոչ արդեօք իցէ և մե-
ռեալն ոչ մեռեալ, այլ՝ կենդանի ոյ, և ար-
ժանի բնակակից և յարկակից լինելոյ վը-
կայից ‖ ։

ԺԶ․ Ո՛ յանցանս իմ լինիմ խոստովան ( ասէ
բասիլիոս ) , զի հեղգասիրտ և անփոյթ էի
'ի հետազօտել և 'ի գրել զսքանչելիս որ վը-
կայուհւոյս՝ յուսակտուր 'ի քննելոյ և յըս-
տուգելոյ ․ և մինչ եւս յայսպիսում կայի յու-
լութե, տեսի զվկայուհին մերձ բազմեալ
առ իս , ուր սովորութի էր իմ զբօսանիլ ըն-
դրովք ․ որ և 'ի ձեռս առեալ զթուղթն՝ յո-
րում գրեալ էր իմ ձեռամբ իմով զսքանչե-
լիս նր՝ 'ի հատուկտիր գրչութե այլոց ըօրի-
նակեալ, սկսաւ վերծանել և ժպտիլ ուրա-
խութբ ․ և այնպէս զուարթութբ դիմաց ցու-
ցա-

ցանել զհաճութ՟ի իւր ը՟ գրելն իմ զայսո-
սիկ, և ակնարկել յառաջ տանել զգործն․
վ՟ոյ և յետ տեսլեանս՝ յորմէ անկաւ ահ մեծ
յիմ վ՟ր, խնդամիտ 'ի ձեռն առի զգրիչ,
գլխաւորել զիրսն ը՟ ակնարկութ՟ն ն՟ր ։

ժէ․ Դեքսիանոս ե՟պս՝ որ յառաջ քան զիս
նստաւ յաթոռն սելևկիոյ, մինչդեռ էր փա-
կակալ եկեղեցւոյ ս՟րբյն Թեկղի և վերակա-
կացու սպասուց տաճարին, երկուցեալ յի-
սաւրացւոց՝ որք աւար հարկանէին զքաղաքս
տեղիս, զա՟մ ոսկի և արծաթի անօթս տա-
ճարին փոխադրեաց 'ի քաղաքն․ (զի տա-
ճարն էր արտաքոյ քաղաքին սելևկիոյ․)
բայց Թեկղ երևեալ կուսանաց՝ որ 'ի տա-
ճարի ն՟ր էին, ասէ․ զիա՞րդ վատասիրտ
գտաւ փակակալն, ո՞չ թէ չկարեմ ես ինք-
նին պահել զսպասս տաճարին իմոյ․ զայն
իբրև գիտաց դեքսիանոս, դարձոյց զա՟մ
անդրէն 'ի տաճարն ։

ժը․ 'Ի վերջին աւուր տօնի ս՟րբյն՝ հայհոյեաց
զնա պիղծ բերանով որենտիոս իրենուպօլ-
սեցի․ և առ օրին հարեալ յայտոյն պղծոյ՝
յետ չարաչար լլկանաց եհան զոգի յաւուր
երրորդի ։

ժթ․ Երկու և այլ երիտասարդք ժանտք 'ի
նմին քաղաքէ իրենուպօլսոյ եկեալ էին 'ի
հանդէս տօնի ս՟րբյն, ոչ աղօթից աղագաւ,
այլ 'ի լրումն տռփանաց իւրեանց․ որով և
հափափեցին զաղջիկ մի 'ի բազմութ՟է, այլ
ոչ կարացին բռնաբարել զնա 'ի կամս իւ-
րեանց․ և 'ի մեկնիլն 'ի նմանէ մոլեգին ցաս-

մամբ՝ մին 'ի կամրջաց 'ի վայր անկաւ , և կո-րեաւ 'ի գետն . և միւսն յանկարծամահ սա-տակեցաւ ։

ի . Պապպոս ոմն իշխան վերակացու՝ յետ մե-ռանելոյ պաշտօնակցին իւրոյ Աւլերիոսի՝ ա-նիրաւեցաւ յորդիս նորա . վոյ կշտամբեալ տեսլեամբ 'ի սրբոյն Թեկղեայ՝ ըստ գուշա-կելոյ նր մեռաւ յաւուր ութերորդի ։

իա . 'Ի տապ ամարայնոյ անկաւ տապաւ , այն է ախտ կոտորածի յամ անասունս իսաւ-րիոյ , 'ի ձիս և 'ի ջորիս , յարջառս և յոչխարս . և եղեն աղէտք անհնարին 'ի գիւղս և 'ի քա-ղաքս . զի ոչ գոյր հնարք բժշկութե նոցա ։ Այլ 'ի դիմել հաւատացելոց առ սրբն Թեկղ՝ յանկարծակի բղխեաց նոր աղբիւր յարե-մտից կուսէ տաճարի սրբուհւոյն . յոր բերէին ամենեքեան զախտացեալ անասունս իւրեանց երամակս երամակս . և իսկ և իսկ 'ի մերձե-նալ 'ի ջուր անդր՝ բժշկէին . մինչև իսպառ փարատիլ անտանելի ցաւոյն . ուստի շինե-ցաւ 'ի տեղւոջն մատուռն 'ի պատիւ սքան-չելագործ կուսին Թեկղի ։

իբ . Յայնժամ մարխանոս ոմն այր երևելի 'ի քաղաքիս սելևկիացւոց կամեցաւ փորձել զսրբն Թեկղ , թէ արդեօք զտապահարս ևեթ յանասնոց գիտէ բժշկել , եթէ և զայլ ախ-տացեալս . և զի էր նր երիվար մի խեղացեալ և անպիտանացեալ մերձ 'ի սատակումն , տա-րաւ յաղբիւր անդր և մխեաց յաւազան ջը-րոյն . և ահա նոյնժամայն ողջացաւ գրաստն . և անկաւ ահ մեծ 'ի վր առն ։

իգ . Եւ կիպրացի ոմն պատրիկ կուրացեալ աչօք՝ լուեալ զսքանչելիս աղբերն Թեկղի , եմուտ 'ի նաւ , և եկն 'ի տեղին . և իբրև լուացաւ յաղբիւրն՝ բացան աչք նր . և դարձաւ ուրախութբ 'ի քաղաք իւր :

իդ . Ալիպիոս հայրն ողիմպիոսի գրամատիկոսի , որ ուսուցանէր 'ի սելևկիա զքերականութի , անկաւ 'ի հիւանդութի ծանր . և անյոյս լեալ 'ի բժշկաց՝ դիմեաց առ սբն Թեկղ . և նա երևեցաւ 'ի տեսլեան գիշերոյ , ետ նմա քար մի գեղեցիկ , և ասէ . սովաւ բուժեսցիս . և իբրև զարթեաւ , և ոչինչ գտաւ 'ի ձեռին , համարեցաւ երազ լինել անրջական . իսկ որդին նորա ողիմպիոս գտեալ 'ի վաղիւն անդր 'ի վր ճանապարհի քար պատուական՝ բերեր խնդութբ 'ի տուն . զոր տեսեալ հօր նր հիւանդի՝ ասէ . այս էր պարգևն վկայուհւոյն՝ զոր ետ ինձ . և առեալ 'ի բուռն իւր՝ պինդ պահէր . և առ ժամայն փարատեցաւ ցաւ նր և ողջացաւ :

իե . Իսոկաս ոմն սոփեստէս հեթանոս յեգիա քաղաք կիլիկեցւոց անկեալ 'ի խօթութի ել արտաքոյ քաղաքին , և ադաւ մօտ 'ի վկայարան մի Թեկղի . և խորհէր ընդ միտս , եթէ սքանչելագործ կոյսն այն առնիցէ՞ արդեօք և ինքեան այցելութի : Եւ 'ի քուն մտեալ՝ տեսանէր , զի եկն սբն Թեկղ , և յետ կշտամբելոյ զմոլորութի նր և յորդորելոյ 'ի հաւատս քսի՝ աննախանձ պարգևեաց նմ զառողջութի . և ահա զարթեաւ՝ եգիտ զանձն ողջացեալ . վղյ և քրիստոնեայ եղև : Զայս

պատ-

պատմեաց մեզ եւդոքսիոս տարաժամայի այլ երեւելի և հաւաստարիմ:

ԻԶ. Այր և 'ի սելևկիա իմաստակ ոմն հեթանոս արետարքոս անուն. որ 'ի սաստիկ ցաւ երիկամանց ըմբռնեալ՝ խնդրէր անձին զմահ. իսկ սրբոյն թեկղի եկեալ առ նա 'ի տեսլեան՝ ասէ. առ 'ի ձիթոյ անտի՝ որ վառի 'ի տաճարի իմում, և օծանիջիր նովաւ, և ողջ լիս. և նա ետ բերել առաւօտուն. և ընդ օծանիլն առողջացաւ. բայց ոչ դարձաւ յանհաւատութէ իւրմէ. զի թէպէտև խոստովան լինէր, թէ ձէթն այն թեկղի բժշկեաց զնա, բայց այլում զօրութե ընծայէր զայն, և ոչ քրի:

ԻԷ. 'Ի մերձենալ աւուրց տօնի սրբոյն թեկղի՝ պատրաստեալ էր իմ (ասէ բասիլիոս) ասել ճառ ներբողենի 'ի պատիւ նր. այլ միով աւուրբ յառաջ քան զտօնն անկայ 'ի տկարութի, և ցաւ անհնարին ունէր զունկն իմ՝ ոչ թէ ճարճատիլ յարմատոց, և ուժգին թընդայր գլուխ իմ: Իսկ իմ անյոյս եղեալ ելանել առ վաղիւն 'ի բեմն, վարանէի յանձն իմ խորհրդովամօթ կրելոյ առաջի ժողովրդեան, ոչ թէ պատճառանօք խոյս տուեալ իցէ իմ 'ի քարոզէ անտի: Իսկ 'ի կալ իմում տխուր յոյժ զայն գիշեր, եկն եկաց առ իս սրբ կոյսն թեկղ, և կալեալ զունկն իմ՝ ճմլեաց մեղմով, և փարատեցոյց զցաւն ողջոյն. մինչև համարձակ խօսել ինձ զճառն 'ի ցերեկի, և զարմանալ՝ որոց գիտէին զտկարութի իմ: Նոյնպէս և յայլ նուագս եղեն ասէ առ իս



այցե-

այցելութիւնք 'ի նոյն · զորս մի առ մի ստորա-
գրէ ։

ԻԸ · Կաղլխաթէ բարեպաշտ կին պապխայ առն չարի դեղեալ յանզգամ կնոջէ ումեմնէ՝ կորոյս զտեսիլ դիմացն, և յայլանդակ կերպարանս եղև · այլ 'ի դիմել առ նոյն Թեկղ՝ ընկալաւ զառաջին վայելչութիւն իւր ։

ԻԹ · Բասխանէ ումն կին կորոյս 'ի տաճարի նոյն Թեկղի զոսկի մատանին և զապարանջանս · այլ 'ի կարդալ առ Թեկղ՝ դողն ինքնին դարձոյց 'ի նա զինչս նորա ։

Լ · Բազումք 'ի յայտնի մեղաւորաց յարանց և 'ի կանանց՝ դիմելով 'ի տաճար նոյն Թեկղի, կամ 'ի բարեխօսութիւն նորա, դարձան 'ի չարեաց իւրեանց, և եղեն զարմանալի օրինակ վարուց առաքինութեան · յորոց է զի յականէ ճանաչեմ, և է զի լուեալ է իմ 'ի մերձաւորաց նոցա ։ Ոմն 'ի զգաստացելոց աստի ետ կազմել աւետարան մի ճարտար դրչութբ, և տարեալ 'ի տաճար կուսին՝ մատուցանէր նմա միամիտ հաւատով յընծայ · և վկայուհին ակն յայտնի երևեալ նմա՝ ընդունի զայն սիրով · և ասէ · տար մատո քահանայից տաճարիս, զի նոցա անկ է ընթեռնուլ զայն՝ քան ինձ ։ Յայս վայր ծաղկաքաղ բանից բասիլիոս եպիսկոպոսին սելևկիոյ ։

Յիշեն զայս տաճար Թեկղի իբրև նշանաւոր ուխտատեղի 'ի սելևկիա խաւրացւոց՝ գրիգոր Աստուածաբանն, իսիդորոս պեղուսացի, և այլք · յորոց միջի Թէոդորետոս պատմէ 'ի վարս նոցին մարանայ և կիւրայ, թէ զոր օրինակ

նակ ծոմբերանով գնացին յուխտ սրբոյ գե-
րեզմանի փրկչին յԵրեմ, նոյնպէս և * յոր-
ժամ ( ասէ ) 'ի տաձար անդր յաղթականին
Թեկղեայ՝ որ յիսաւրիա է, յայց ելանել կա-
մեցան, առ վառելոյ ամին զառ ամ սիրոյ
զբոց՝ անձաշակ գնացին և դարձան ||: Գրէ
և եւագրիոս պատմիչ, ( Գիրք · Գ · Գլ · 8 · )
Թէ որպէս զենոն կայսր՝ որ էր իսաւրացի,
առանձին ձիրս ընկալեալ 'ի սքանչելեաց սրբոյն
Թեկղի՝ եւ շինել այլ եկեղեցի 'ի պատիւ
նորա :

Կային յաւուրս կայսերութեան յունաց 'ի կոս-
տանդինուպօլիս երեք և չորք եկեղեցիք յա-
նուն սրբոյն Թեկղի՝ շինեալ 'ի զանազան կայ-
սերաց, 'ի տեղիսն կոչեցեալ կոնտարի, և
դուռն յուլիանոսի, և վլոշերնա, ընդ և 'ի
գալաթա՝ որ յառաջն սիւկա կոչիւր : Թողից
ասել և զայլ վկայարանս և զվանս Թեկղի
յայլևայլ քաղաքս արևելից և արևմտից,
հանդերձ յիշատակօք անպակաս սքանչելեաց
նր : Ժամ է ասել և զնշխարաց նր սակա-
ւուք :

ՍԱՏԱՐՈՒՄՆ ԱՋՈՅ ԿԱՄ ԵՂԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԹԵԿՂԻ ՅՕՂԻՆ ԱՐ-
ՔԱՅԷ ՀԱՅՈՑ ԱՌ ՅԱՆԻՆ ԱՐՔԱՅ ԱՊԱՆԵՑՒՈՑ :

Զանց զայլովք արարեալ՝ որ ինչ բանք են
յաղագս նշխարաց սրբ կուսին և վկայուհւոյն
Թեկղի՝ եղելոց 'ի բոյեմիա, 'ի բոնոնիա, 'ի
մեդիոլան, 'ի հռոմ, 'ի վենետիկ, 'ի գաղ-
ղիա, և յայլ տեղիս, արժան է մեզ յառաջ

բերել զպատմութիւն պատուական աջոյ նր, զոր ազգ. մեր ընծայեաց ազգին սպանիացւոց 'ի ժամանակս Թգրութե կիլիկեցւոց. որ և ցարդ պահի 'ի մայր եկեղեցին տարրակոնայ՝ որ յանուն Թեկղի, 'ի կատաղոնիա սպանիոյ: Արդ ը որում՝ գրեն սպանիական վկայագիրք ը դոմենեկկոսի երևելի մատենագրի՝ 'ի ժը. մայիսի. յակոբ երկրորդ արքայ արագոնայ 'ի սպանիա՝ գրեաց նամակ առ օշին արքայ հայոց, որ ունէր օրինակ զայս.

* Վեհափառ և մեծաշուք պետի, բարեկամի մերումսիրելւոյ Օշնի՝ շնորհօք այ հայաստանեայց արքայի, Յակոբոս նորին շնորհօք արքայ Արագոնայ, զաջող յաջողուածոց անձուն (մաղթէ) հանդերձ ողջունիւ: Մեծութե ձերում 'ի կարգէ նամակիս յայտնի լիցի, զի արդ իսկ եհաս 'ի լսելիս մեր 'ի պատմելոյ արժանահաւատ արանց, թէ մարմին երանելի կուսին Թեկղի, կամ մասն մարմնոյ նր, կայ 'ի սահմանս Թգրութե ձերոյ: Արդ քանզի 'ի քաղաքն տարակոնայ՝ որ ը սահմանօք մերովս Թգրութե, մայր եկեղեցին հիմնեալ է յանուն նորին երանելոյն Թեկղի, որոյ հիմնարկութիւն սկիզբն կալաւ 'ի վաղուց անտի յառաջնոց մերոց, սերտ փոյթ ջերմեռանդութե զմեզ վառէ, զի որովհետև նախասացեալ մայր եկեղեցին՝ որ է մեծապատիւ յոյժ, և 'ի կողմանս յայսոսիկ հնութբ նախապատիւ, մինչ զի 'ի հիմնարկութե նր և այսր աւելի քան զամս հազար

զար և երկերիւր , որք գտանին հին յիշատա-
կարանօք , յինքեան կրէ զանուն կուսին ,
ինչ ինչ 'ի նշխարաց նր լցի մեզ ունել յե-
կեղեցւոջ անդ . որով և մերս և հպատա-
կացս և ամ եկեղեցեաց հաւատացելոց 'ի
կողմանս յայսոսիկ ջերմեռանդութիւն աճես-
ցէ , հաւատքն արծարծեսցի . և նմա պատիւ
և յարգ ջերմագոյնս ընծայեսցի : Իսկ եթէ
այսմ արթուն մտօք փափաքեմք , ջերմե-
ռանդն սրտիւ գործ առնեմք բարեպաշտու-
թե , զնախորդաց մերոց գնալով զհետ շաւ-
ղաց՝ որք բարեպաշտութե և ջերմեռանդու-
թե զմայրաքաղաք եկեղեցին յանուն և 'ի
պատիւ նորին կուսի հիմնեցուցին :

Իսկ արդ՝ զվսեմ բարձրութին ձեր և զսիրուն
բարեկամութիդ 'ի սեռն սրտէ և 'ի ներքին
յօժարութէ , որչափ և սիրով կարող իցեմք՝
աղաչեմք , զի 'ի փառս և 'ի պատիւ ամենա-
կալին այ , և 'ի բարձրութի և 'ի պարծանս
նախամծառեալ երանելոյն թեկղի կուսին ,
միանգամայն՝ զի ոչ միայն առ այսպիսի մա-
սունս , այլև դէպ 'ի կողմանս՝ ուր ամփո-
փեալ հանգչի բովանդակ մարմին նորին կու-
սի , կողմանցս այսոցիկ հաւատացելոց բնակ-
չաց ջերմեռանդութիւն ևս քան զևս աճես-
ցէ , և դարձեալ վն առանձնական շնորհի մե-
րոյ , կամիջիք և հաճեսջիք 'ի նշխարաց ան-
տի երանելի կուսիդ զմեծ ինչ մասն յղել
այսր . որով մարթասցուք ոչ միայն զբուն
մայրաքաղաք եկեղեցին , այլև զայլ ևս ա-
թոռանիստ եկեղեցիս նմին վիճակեալ զար-

դարել և չինել՝ ՚ի պատիւ և ՚ի բարձրութիւն ա̃ծ մերոյ և նորին երջանիկ կուսի, և ՚ի ջերմեռանդութիւն և յարգելուս մեր և ա̃մ հաւատացելոց ։

Ապա եթէ դուցէ արդեօք չկայցեն ՚ի միջակի ձերում մարմինն այն կի̃ մասունք նորին, հաճոյ թուեսցի վսեմութեան ձերում փոյթ տանել ՚ի ձեռս բերել ողջին, զի ըստ նախագրեալ օրինակի առաքեսջիք այսր առ մեզ․ հաւատալով՝ եթէ կամ իցէ, մի այսց բանից՝ զոր ինչ միանգամ բերան ՚ի բերան պատմեսցէ ՚ի մեր կողմանէ սիմոն սաղջէտ, հպատակ մեր հաւատարիմ՝ բերող նամակիս, զոր մինչ առաքեմք առ ներկայութիւն ձեր։ Բայց քանզի այսպիսի սրբութիւնք ոչ այնպէս վայելչական կարգօք մարթին մատակարարիլ ՚ի ձեռն աշխականաց, որք ՚ի ձեռն ժառանգաւորաց, սմին իրի զերկուս ՚ի ժառանգաւորաց զերիցունս՝ զվիճակաւորս նախաձառեալ եկեղեցւոյն տարակոնայ, զորս գովելիս ՚ի համեստ վարս և ՚ի քաղաքավարութե, հոգացաք յղել ՚ի կողմանս ձեր ը̃ յառաջասացել սիմոնի․ որք զայն նշխարս կնքով ձերով ընկալցին ջերմեռանդապէս, և վայելչապէս պահեսցեն, և բերեալ հասուսցեն առ մեզ ը̃ դեսպանիդ մերում։

Ապաքէն սովին այսուիկ և ա̃յ և նմին կուսի պաշտօն ընծայեք հաճոյական, և հաղորդ եւս լինիջիք բարեաց գործոց՝ որ անտի յառաջագայցին․ և մեք ունիցիմք ը̃ այդ հաճոյն մեծ յոյժ, և ձեզ շնորհս կալցուք մեծա

ծածկէս. և 'ի գործս ձեղ հաճոյականս համարեսցուք զանձինս մ՟ո այդր առանձին պարտականս եղեալ։ Տուաւ 'ի բարկինոն. 'ի Դ. սեպտեմբերի. յամի տ՟ն 1319 ||։

Օ այս նամակ արքունի առեալ դեսպանաց՝ մտին 'ի մեծ նաւ գուիլելմոսի կուէնռայ վաճառականի տարակոնացւոյ, և հասին 'ի կելիկիա 'ի տ՟րութն հայոց արքային, որ տ՟րն էր և երկրին խաւրիոյ՝ ուր տապանն էր սբ՟յն թեկղի 'ի սելևկիա. և յանդիման եղեն թագաւորին հանդերձ ազնիւ պատարագօք։ Եւ արքայ օշին բազում մարդասիրութբ՟ ընկալեալ զն՟ս, իբրև 'ի վ՟ր եհաս պատճառաց դեսպանութե՟ն և դիտաւորութե՟ նամակին, խորհուրդ արար ընդ իւրսն. և զայս արար պխնի դեսպանաց սպանիացւոց. տաց ասէ արքային արագոնայց զաջ սբ՟յն թեկղի, բայց ինձ պահելով զբոյթ մատն. և այնպէս արար. ետ արքայ զբազուկ սրբուհւոյն՝ բաց 'ի մատնէ անտի, պատեալ ոսկեթել զարդուք և եդեալ յարծաթի տփի, և այն ամփոփեալ 'ի մէջ այլոյ փայտեայ տապանակի. յաւել օշին արքայ և զվաւերական յիշատակարանս 'ի վկայութի՟ ստոյգ նշխարաց սբ՟յն թեկղի. և գրեալ նամակ առ յակոբ արքայ արագոնայ՝ դարձոյց զդեսպանս նր՟ հանդերձ մեծամեծ պատարագօք։ Եւ մտեալ դեսպանաց 'ի նաւ հանդերձ ուղեկցութբ՟ միոյ յառաքինի երիցանց արքային հայոց՝ յաջող նաւարկութբ՟ հասին 'ի բարկինոն յամի տ՟ն. 1320։

Ըն-

Ընկալեալն յակոբեայ արքայն զն̃ր գանձն անպատմելի ուրախութբ՝ ետ զարդարել և եդ զտապանակն նշխարաց կուսին արծաթի թիթղամբ. և յղեաց զայն ը̃ դեսպանաց 'ի նաւահանգիստն սալաւրի՝ որ և սալօ, և անտի 'ի գոստանտ. մինչև ժամ լիցի տանելոյ հանդիսապէս 'ի տարակոն. ուր եկեալ ինքնին հանդերձ աւագանւոյն, կարգեաց օր մի հանդիսի ն̃ր նշխարացս. ժողովեաց և արքեպիսկոպոսն տարակոնայ ն̃ր էքսիմենոս տեղւոյն զեպ̃սունս վիճակի իւրոյ, զաբբայս և զժողովրդապետս և զերևելիս 'ի ժառանգաւորաց: Նաև էին զարդարեալ ա̃մ տեղիք՝ ը̃ որս ունէր անցանել թափորապէս ն̃ր բազուկն թեկղի:

Այնչափ էր մեծութի թափորին, զի բաց 'ի զանազան եղբայրութեց՝ որք յառաջոյ երթային, և յամբոխէ բազմութե զհետ եկաւորելոյ, չորս հազար անձինք էին՝ որք մոմեղէնս բարձեալ բերէին. իսկ թիւ եկեղեցականաց էր եօթն հազար երեք հարիւր յիսուն և չորս. յետ ն̃ց գայր արքեպ̃սն էքսիմենոս՝ բարձեալ զաջ ս̃բյն թեկղի ը̃ մեծահարուստ հովանեաւ. յաջմէ ն̃ր թևակից էր յակոբ արքայ, և ը̃ ահեկէ ալփոնսոս արքայորդի. զհովանոցն բարձեալ էին ը̃ այլ աւագաց երկու այլ որդիք թագաւորին, պետրոս յաջմէ, և հայիմունդ բերենգարիոս 'ի ձախմէ. թող զբազմութի մեծամեծաց՝ որ գային զկնի ն̃ր նշխարաց. և այնպէս մեծավայելուչ հանդիսիւ և արքայական շքով բերեալ եղև

ն̃ր

ո՛չ այն Թեկղի յաղթական կուսի 'ի քաղաքն տարակօնայ , և եդաւ 'ի մայր եկեղեցին՝ որ յանուն նորին Թեկղի , ամփոփեալ 'ի խորան ս̃բյն փրուկտուոսի . ուր և արքեպ̃ն մատոյց զձայնաւոր պատարագ՝ պաշտօնակցութ̃բ եպիսկոպոսացն կեսարաւգուստացւոց և իլերդացւոց : Եւ այս աւր լինել 'ի մայիսի 18 . կմ̃ 19 . յամի տ̃ն 1323 . և յայնմհետէ հաստատեցաւ կատարել զտօնախմբութի̃ փոխադրութե̃ ս̃բ նշխարացս յեկեղեցին տարակօնայ՝ 'ի հինգերորդ կիրակէի զկնի զատկի կմ̃ պէնտեկոստէի :

Օ այս ա̃մ երկրորդէն և բոլլանդեանք բանին՝ սպանիական յիշատակարանաց . և 'ի մ̃ի բերեն , թէ զփոխադրութիս զայս երևելի հրաշիւք պայծառացեալ գոլ վկայէ դոմենեկկոս , և յետ նր̃ վկայագիրն սպանիացւոց , ունելով բանին այսպէս . * Մ՛է պակասեցին այսպիսի հանդիսի փոխադրութե՝ սքանչելիք . քանզի քահանայ ոմն հռայիմունդ կաստելոն անուն՝ որ 'ի վեշտասան ամաց հետէ կուրացեալ էր աչօք , 'ի կարդալ անդ զանուն ս̃բյն Թեկղի կուսի և վկայի՝ իսկ և իսկ ընկալաւ զտեսութի̃ աչաց . . . Դարձեալ կինն հռայիմունդոսի պալմերայ տէ վալս , որ զամս երկուս վերնոտութ̃բ տագնապէր , իբրև ածաւ յեկեղեցին՝ զի ագանիցի զայն գիշեր առաջի խորանին , ուր եդանն նշխարքն , ուխտեաց մատուցանել ս̃բյն Թեկղի կուսի և վկայի վեց լիտր մոմ . և 'ի տքնելն 'ի նմին գիշերի՝ եգիտ զանձն առողջացեալ , և պատ-

մեաց

մեաց առաջին ժողովրդեանն ||:

Յետ այսորիկ յամի տն 1387 . սրբուհին Թեկղ պաշտպանեայ եկեղեցւոյ իւրում 'ի զինուորական յարձակմանց . և 'ի յանդգնիլ պետրոսի չորրորդի արքային արագոնայ առաքել զօրս և կողոպտել զգանձս տաճարի կուսին 'ի տարակոյս , 'ի գիշերի միում երևեցաւ Թեկղ , և էած ապտակ Թագաւորին , սպառնացեալ նմ զվաղահաս վախճան . այլ մինչև էր նր հանեալ զոգին՝ պատուիրեաց իւրոցն առաջի եպսաց և աւագաց՝ դարձուցանել զնմ սպասս եկեղեցւոյն : Թո՛ղ և զայլ սքանչելիս 'ի յետագայ դարս 'ի զանազան տեղիս . զի յոմ ժմկս և տմ ուրեք փառաւորեալ է անուն Թեկղի կուսի սքանչելագործի՝ 'ի փառս քնի տյ մերոյ :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Օտաջիկայս հին վկայաբանութի, որ և կոչի գիրք Թեկղի, կմ գործք պօղոսի և Թեկղի, որոյ սկիզբն է ը Ճառընտրաց, * Իբրև ելեալ երթայր պօղոս յի-,, կոնիոն քաղաք յետ հալածմանց իւրոց ||, միօրինակ գտանեմք և 'ի յոյն բնագրի, և 'ի հին Թարգմանութիս լատինացւոց և այլոց ազգաց . և զնոյն քաղեն տմ վկայաբանք և յայսմաւուրք . և նոյն այն էր՝ զոր 'ի ձեռին ունէին տմ նախնի հարք, որք ասեն զԹեկղ աշակերտեալ պօղոսի, և զերծեալ 'ի հրոյ և 'ի գազանաց . որ այն իսկ է գոյացուն վկայաբանութես . Թող զբասիլիոս սելևկիացի, որ զնոյն գործ Ճառօրէն երկրորդէ 'ի ներբողեանն Թեկղի : Այլ կարևոր է ընթացունից հարց վկայութս նշանակել աստանօր :

Կիպրիանոս 'ի Ճառն նահատակաց գրէ 'ի ձև աղօթից

'ի

'ի բերանոյ նդ . * Լեր մեզ հովուոր , որպէս պօղոսի 'ի կա_
,, պանս , և թեկղի 'ի հուր || : Եւ յաղօթս կատարման
կուրոյ . * աղաչեմ զեզ 'ի միջոյ յաւիտենից այսորիկ ,
,, որպէս զթեկղ աղաչեցեր 'ի միջոյ ամփիթէատրոնին || :
Գր . ածաբան 'ի յորդոր կուսանաց . * Զես ինչ անտե_
,, ղեակ , եթէ թեկղ 'ի հրոյ և 'ի գազանացն յարձակ_
,, մանէ ապրեցաւ || : Եւ 'ի պատուէրն առ կուսանս
ոտանաւոր բանիւ .

* Ո՞ զթեկղ ապրեցոյց 'ի վտանգէ մահու և բոցոյ .
,, ո՞ զբուռն ձիրանս կալեալ , և զհաստատութիւն գաղա_
,, նաց :
,, Կուսութիւ : Ո՛վ գործ սքանչելի 'ի գարս մեր .
,, կուսութիւն կարօղ եղև զհրադոյն առիւծս թմբեցու_
,, ցանել .
,, և ոչ իշխեցին անմաքուր ժանեօք զառաքինի անդամս
,, կուսին ձմլել , և անօսլուրմ ըմբոշխմամբ գիշատել || :
Գր . նիւսացի . յէրգ էրգ . ճառ ժդ . * Զմուռս այսպիսի
,, կաթեցուցանէր երբեմն պօղոս 'ի բերանոյ իւրմէ
,, խառն ընդ մաքուր շուշանի ամօթխածութեան 'ի սուրբ կու_
,, սին լսելիս , թեկղի ասեմ , որ արուեստ քաջութեամբ կաթե_
,, լով զկաթիլս 'ի շուշանէ՝ զարտաքինն մարդ մահու
,, սպանանէր , զամ խորհուրդ և զցանկութիւն շիջուցա_
,, նելով || :
Եպիփան 'ի հեր . հէ . * Թեկղ հանդիպի սրբոյն պօղոսի ,
,, և 'ի հարսանեաց արձակի , խօսնայր ունելով զայր գե_
,, ղապանծ՝ զկնաւոր քաղաքին , մեծատուն , ազնուա_
,, կան և շքեղ : 'Ի կենցաղումս արհամարհէ զերկրա_
,, ւորս ըղձուհին , զի երկնայնոցն լիցի ժառանգորդ || :
Ոսկեբերան . ճառ ԻԷ . գործ առաք'' . * Լուր մի երանել_
,, ւոյն թեկղի . նա առ 'ի զպօղոս տեսանել՝ զոսկին իւր
,, ետ (բանտապանին) . իսկ դու առ 'ի զքս տեսանել՝
,, և ոչ խերեկչ ստոս || :
Եւ 'ի ճառ ԻԶ . առ անտիոքացիս . * Խնդրեմ զպօղոս հան_
,, դոյն թեկղի . զի լուծիցես՝ զինչ քեզ ասի նովաւ || :
Ամբրոսիոս . յղ . կուսանաց . գիրք . Բ . * Թեկղ ուսուցէ
,, զանձն պատարագել , որոյ փախուցեալ 'ի զուգաւո_
,, րութենէ ամուսնութեան , և զխոստացելոյն արհամարհեալ
,, զցասումն , զբնութիւն գազանաց զկնովին փոխեաց
,, կուսութեան յարգանօք : Քանզի պատրաստեալ առա_
,, ջի գազանաց , այն ինչ 'ի հայեցուածոյ անգամ խոր_
,, շէր արանց , և զիւր կենդանութիւն մատնէր դժնդակ
,, առիւծու , արար՝ զի ողջախոհաբեկչոս ձգեալ էին
,, զաչս .

„ զայս, պարկեշտս ակնարկեցեն : Եւ էր տեսանել
„ զգազանն, զի զոտս լիզէր զնր՝ նստեալ 'ի գետնի․ և
„ անշշունչ հնչմամբ տայր վկայութիւն, թէ ոչ կարէր
„ ապականել զնուիրական մարմին կուսին․ վա՛յ երկիր
„ պագանէր գազանն իւրումն որսոյ․ և զնուրական բը-
„ նութիւն մոռացեալ՝ զընութիւն էր զգեցեալ, զոր մարդ-
„ կան էր կորուսեալ ||: Նոյնպէս խօսի և 'ի Թուղթն
առ Սիմբլիկիանոս, և 'ի Թուղթն առ Եկեղեցին Վեր-
կեղացւոց:

Զենոն եպս Վերոնայու, կա՛ այլ ոք 'ի հին հարց լատի-
նացւոց, 'ի ճառն յաղագս Երկնուղի․ * Ընդդէմ Թեկղի չա-
„ րախօսն դժնեայ զլեզուին սրէ զսուսեր, երբ իրա-
„ ւունք դատաստանաց պաշտօնէին իւրեանց՝ անձանց
„ ծառայեն․ խեթանօք վարի գազանութիւնն 'ի կատա-
„ ղութիւն, և սակայն մարդասիրագոյն գտանի և
„ քան զմարդիկ․ առ չերևելոյ իմիք պակաս յայնմ
„ անողորմ տեսարանի՝ 'ի վերայ արձակին և ծովային
„ գազանք այլանդակք․ 'ի հանդերձիցն առ հասա-
„ րակ մերկի օրիորդն, և զնուրև արկանի զփայլակն
„ հրոյ․ 'ի մէջ այնչափ գործարանաց մահու՝ ուր հան-
„ դիսատեսն զահի հարկանի, նա աներկիւղ առ ոտն
„ կոխէ զա՛մ ազգ երկրի․ ողջանդամ իբրև տիեզերաց
„ նուաճօղ, 'ի վայրէ անտի գազանացն ասպարիզի, ոչ
„ ևս աւաղելի, այլ զարմանալի, օրհասական զգեստու
„ 'ի դուրս ելանէ, յաղթանակ կանգնեալ 'ի վ՛ր Տ՛ի՝
„ որում յաղթեաց, այն՝ զոր այնչափ տանջանօք ամե-
„ նեքին կարծէին կործանել ||:

Հերոնիմոս, կամ հեղինակ Թղթոյն առ Ովկէանոս․
* Թեկղ յետ այնչափ հանդիսի նահատակութե, յան-
„ ախք 'ի պօղոսէ արդէլեալ լինի ընթացակից լինել․
„ ոչ ոք Ի կնոջ գնայ 'ի պատերազմ ||․ և՛ն:

Մաքսիմոս տաւրինեցի 'ի ճառն սրբոյն ագնեսի․
* Զթեկղ 'ի բոցոյ հրոյ զերծեալ գիտես ||: Թո՛ղ զի
'ի վկայաբանութիս կա՛ յաղօթս բազմաց 'ի վկայից առ
առ ա՛ծ․ դու զԴանիէլ 'ի բերանոյ առիւծուց ապրե-
ցուցեր, և զերիս մանկունսն 'ի հնոցէ, և զԹեկղ 'ի
հրոյ և յառիւծուց և 'ի ցլուց․ և՛ն: Արդ յայտ է թէ
այս ա՛մ է ա՛մ իրօք հաստատութի հարազատ վկայաբա-
նութե Թեկղի :

Եւ սակայն կայր երբեմն և վկայաբանութի այլ՝ կամ
խոպառ անհարազատ, և կա՛մ խառն Ի հարազատի․ ուր
Ը վկայեցոյ տերտուղիանոսի․ յղ․ Մկրտ․ գլ․ 17․ գրեալ
էր

էր վն պօղոսի, թէ եւ թեկղի իշխանութիւն ոչ միայն քարոզելոյ, այլեւ մկրտելոյ. որ է օտար յառաքելական օրինաց. զի կանայք ոչ կարեն լինել կարգաւորել պաշտօնեայ մկրտութե՝ բաց 'ի վերջին վտանգէ մահու: Եւ հերոնիմոս ցուցանէ. 'ի գլ. է. յաղագս եկեղեցական մատենագրաց կմ՛ երեւելի արանց, թէ լինքն 'ի պատմութե թեկղի ընթերցեալ իցէ անհեթեթ ինչ * պատմու-
,, թն առիւծու մկրտեցելոյ || . վյ ը անյայտ գրուածս դասեմք զսէ զայն. որպէս խոզ դասեաց եւ գելասիոս հռովմայ հայրապետ:

Յայտնի հայեցեալ՝ սովորաբար ամէն քննիչք, թէ չէք այժմ ուրեք օրինակ այնր անհարազատ պատմութե. վն զի չկան այդ բանք 'ի կարգի հարազատ վկայաբանութե: Այլ յայսր տմի վր ունիմք ասել, թէ կամ ոմանք 'ի խեղաթիւր գրչաց 'ի սկզբանէ անտի մուծեալ իցեն զայնպիսի օտարոտի հանգամանս 'ի բուն պատմութին, որպս երեւի կարծել տերտուղիանոս, որ պատմէ յոհաննոյ աւանդից՝ թէ զայն արարեալ իցէ երէց ոմն ասիացի առ 'ի մեծացուցանել զպօղոս, եւ թէ յանդիմանեալ 'ի յովհաննէ՝ ընկեցեալ իցէ 'ի պատուոյն. եւ կմ թէ դոյզն վրիպակաւ գրչութե՝ մեծամեծ սխալանք 'ի ներքս սպրդեալ իցեն. մինչեւ չփոյթել զմտանելն թեկղի 'ի լիճ, ուր յիշեաց զխորհուրդ մկրտութե՝ յետ զերծանելոյ յառիւծուց, եւ կարծել մկրտութիւն ինն առիւծու. Նոյնպէս եւ զտալն պօղոսի իշխանութիւն թեկղի 'ի քարոզել զաւետարանն քսի, կարծել հանդերձ իշխանութբ մկրտելոյ: Օրինակ այսմ, զի եւ յովհան դամասկացին 'ի հոմաձայն բանից վկայաբանութեն քաղեաց զայն անկարծելի կարծիս՝ թէ փալկոնիլլա դուստր տրիփոնայ ազատեալ իցէ 'ի դժոխոց աղօթիւք թեկղի. ուր վկայաբանն այսչափ միայն գրէ, թէ տրիփոնա պատմեաց թեկղի՝ ոչ թէ տեսեալ իցէ յերազի զմեռեալ դուստր իւր, որ ասէր մօրն ընդունել 'ի տեղի իւր ըզթեկղ. զի աղաչեսցէ նա զած վն ազատութե իւրոյ. եւ թեկղ ըն միամիտ հաւատոց նր արար աղօթս այսպէս.
* Այ՛ որ յերկինս ես, հայր բարձրելոյ, տուր տրիփո-
,, նայ տիկնոջ ըս կամաց իւրոց. զի կեցցէ դուստր նր
,, յաւիտեանս յաւիտենից ||: Որ է անորոշ ասացուած. եւ մարթի ընդ եղեայն մօրք հայիլ եւ առ նոյն ինքն թեկղ, որ եղեւ իբր դուստր տրիփոնայ. այլ թէ ոչ՝ ոչ միայն չգրէ վկայաբանն, թէ եղեւ այցելութիւն դստեր նորա, այլեւ ենթադրէ զնա մնացեալ ըն մեռեալս. զի տրիփո-

նա

նա կամեցաւ պահել առ իւր զԹեկղ, և որդեգրել զնա, և առնել ժառանգ ընչից իւրոց. բայց նա ոչ էառ յանձն :

Յայտնապէս ասէ Ճառընտիրն մեր և զբանն՝ որ վս մկրտելոյ Թեկղի զոք. Ջգլի գրէ զնմանէ, * Եւ նա վճարեց
,, Նոցա (յս խաւարացւոց) և ուսուցեալ զաւետարանն
,, փրկութե՟ն յս հրամանի սբյ առաքելոյն պօղոսի՝ զոր
,, աւանդեաց նմա . . . Եւ գրեալ յանտիոք առ սաւա-
,, քետայն պետրոս. և առաքեալ նր զմի 'ի քահանայիցն՝
,, որ անդ էին . . . Յայնժամ եկեալ քահանայն, և մկր-
,, տեաց զհայր մանկանն (զոր բժշկեաց Թեկղ), և զտմ
,, տուն նորա հաճութե՟ հոգւոյն սբյ. և տուեալ հայր
,, բժշկեալ մանկանն զմասն տանն իւրոյ Թն. և սբն
,, հանդերձ քահանայիւն շինեալ եկեղեցի 'ի քաղաքին.
,, և յայնմ հետէ անուանեցաւ վկայարանն այն սբ եւ-
,, նէ (յս խաղաղութի). և մկրտեցաւ մեծ մասն քաղա-
,, քին || . Ան :

Թո՛ղ զի վկայաբանն մեր և ո՛չ իսկ զմկրտիլն Թեկղի 'ի պօղոսէ յայտնի նշանակէ, Թերևս յայն հայեցեալ՝ զի ասացեալ էր պօղոսի, Թէ տր ո՛չ առաքեաց զիս 'ի մկրտել, այլ յաւետարանել. վսյ և զըղձական մկրտութին Թեկղի 'ի ըՃի նշանակեալ՝ ապա գրէ ասել Թեկղի առ պօղոս. * ընկալայ ես զմկրտութի. զի որ պատուէի-
,, րեացն քեզ քարոզել, նոյն հրամայեաց ինձ մկրտիլ || :
Ուր երկնչիմ, Թէ ոմանք ընԹերցեալ իցեն կմ իմացեալ 'ի յունականն՝ ներգործաբար մկրտել. Թէպէտև ոչ յար-մարի բանին : Այլա 'ի բաց Թօթափեալ զայսպիսի հա-մաձայնուԹիս, կմ զօտարոտի միտս մուծելոյ յօտարաց, տեսանեմք՝ զի ղգոյացուԹի պատմուԹե՟ Թեկղի միաբա-նուԹբ ը մեզ ունին և Թմ հին հարք. մինչ զի և ո՛չ ար-ժան համարիմք վիճել ը նոր քննիչս անհամաձայնս 'ի մէջ իւրեանց. վսյ և կարճեցաք զբազմապատիկ բանս՝ զոր հաւաքեալ էր մեր վասն նոցին իրաց. մանաւանդ չկամեցեալ բազմօք ընհարկանել ը ստիլտինգայ բոլլան-դեան, որոյ բարեկամուԹն պիտոյ է մեզ յս տեղւոյն :

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբուհւոյն Վառվառեայ կուսի . ընդ նմին և Յուլիտայի :

Ն. Յ. Լ. դեկտ. 4: Ճառընտ. Ա. դեկտ = դճ : Յովհան դամասկացի 'ի ներբող Վառվառեայ . հատ . Է . երես . 895 = 910: Մետափր . և Գալեսինիոս առ Սուրիոսի : (1)

ՄԵԾ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ 'ի վկայուհիս՝ մարգագեղ և շուշանափայլ սբ. կոյսն Վառվառէ, ( որ և Վառվա՛ռա ասի ի յունաց , և պա՛ռպառա ի հռովմայեցւոց , ) էր յԾէն արևելից 'ի Հեղիուպօլսոյ , այն է արեգ. քաղաք կմ քաղաք արեգական 'ի պամփղագոնիա՝ մօտ յեւքայիտայ և 'ի գելասայ գիւղ (2), միամօր դուստր մեծի իշխանի՝ դիոսկորոս կոչեցելոյ . որ և էր այր մեծատուն յոյժ և ազնուական , բայց հեթանոս հաւատովք . այլ դուստր նր իմաստուն՝ էր 'ի ծածուկ հաւատացեալ 'ի քս : (3)

'Ի ժամանակին յայնմիկ 'ի Թագաւորել ամպարշտին մաքսիմիանոսի զօրանայր հալածանքն 'ի վր քրիստոնէից , առաքելով դատաւորս և զօրագլուխս ընդ ամ գաւառս տէրու-

թէ իւրոյ՝ չարչարել և բռնադատել զքրիս-տոնեայս 'ի զոհ ա̃ծոյն , ապա թէ ոչ՝ վատ-նել և կորուսանել զնս̃ , և բառնալ 'ի միջոյ զկարգս և զկրօնս նց̃ ։ Այլն և 'ի Հեղիուպօ-լիս Մարկիանոս կամ Մարտիանոս դատաւոր անիծ̃ և վայրենամիտ . և տանջէր զորս գտա-նէր 'ի հաւատացելոց անտի՝ գործակցութե̃ իշխանաց քաղաքին ։

Զեռնատու էր նմ̃ բազմօք և Դիոսկորոս հայրն փառափառեայ՝ մոլեալ յոյժ 'ի դիցն պաշտօն . այլ ոչինչ կարծիս 'ի մտի դնէր զքրիստոնէ-ութե̃ դստերն , զոր պահէր 'ի վերնատան ապարանիցն . քանզի հայեցեալ 'ի գեղեցիկ և 'ի վայելուչ հասակ նր̃ և 'ի պատկեր՝ հրա-մայեալ էր շինել նմա բարձրաբերձ աշտա-րակ , և անդ բնակեցուցանել զնա՝ ոք̃ զի մի տեսցի յումեքէ , մինչև հասցէ 'ի կատա-րեալ չափ հասակի ամուսնանալոյ . քանզի և համբաւ գեղապանծ գեղոյ նորա ելեալ էր ը̃ երկիրն ը̃ այն . և բազումք 'ի մեծա-մեծ իշխանաց խնդրէին զնա 'ի հարսնութի̃ որդւոց իւրեանց ։ Նա ոչ գիտէր , թէ ո՛րպի-սում շնորհաց արժանի եղև դուստրն յա-ռանձնութե̃ անդ ը̃ կարգաւորութե̃ն ա̃յ . զի ունելով զսէրն քս̃ի 'ի սրտի իւրում՝ ցան-կայր սրբութե̃ հարսնանալ քս̃ի . և պարկեշտ վարուք պահէր զանբիծ հաւատս և զկուսա-կան մաքրութի̃ ։

Յաւուր միում եղեալ հօր նր̃ յաշտարակն առ 'ի տեսանել զդուստրն իւր , և ասէ ցնա . որդեակ իմ փառափառէ՝ ահաւասիկ պատրաս-տեալ

տեալ եմ քեզ առագաստ հարսանեաց , տալ
զքեզ 'ի կնութ̃ի միում յորդւոց մեծատանց .
և արդ զի՞նչ խորհիս դու 'ի սրտի քում , ա-
սա ինձ համարձակ ։ Իսկ նր̃ խոժոռեալ ը̃
բանս հօրն՝ խռովեցաւ յոգի իւր . և հայե-
ցեալ յերկինս՝ յոգւոց եհան , և ասէ ցնա .
ո՛վ հայր իմ մի՛ հարկ առներ ինձ թշուառա-
կանիս՝ անձամբ անձին դատ առնել և դա-
հիճ չար լինել , զրկելով զիս 'ի քաղցր և յա-
ռանց զբաղման կենացս ։

Իսկ նր̃ 'ի հիացման եղեալ , և թողե̃լ զնա՝
իջանէ 'ի խոնարհ , ուր շինէին մերձ յաշտա-
րակն բաղանիս . զոր հրամայէր իշխանն ար-
ուեստաւորացն՝ վաղվաղակի փութալ և կա-
տարել զգործ շինուածոյն . վ̃ն զի հանդեր-
ձեալ էր գնալ 'ի Ճանապարհ հեռաւոր . և
զմ̃մ յանձն առնէր գործօնէիցն , և ինքն հե-
ռանայր 'ի տար Ֆ . և անդ առնէր ժամա-
նակս ոչ դուզնաքեայ ։

Յաւուր միում իջեալ վառվառեայ դստեր
նր̃ յաշտարակէն՝ հայեցեալ տեսանէր զշին-
ուածս բաղանեացն . և նկատէր զլուսարանս
պատուհանացն , զի երկուս միայն էին արա-
րեալ 'ի հիւսիսային կողմանէն ( որ յօրինակս
ինչ՝ հարաւային գրի ) . և ասէ ցն̃ն կոյսն .
ո՛վ Ճարտարապետք ո՛չ էք հմուտ գործոյդ ,
վ̃ն զի երկուս պատուհանս միայն էք թողե̃լ ։
Ասեն ցնա արքն . ո՛վ տիկին դու , վ̃ն զի ըզ-
հրաման տ̃ն մերոյ հօրն քո կատարեցաք ։
Ասէ ցն̃ն աղախինն ք̃ի . եղիցի և միւս ևս
այլ պատուհան հրամանաւ իմով . վ̃ն զի ե-

րեք պիտոյ են լուսարանքդ. և փարատեալ ՚ի սրտից նորա զերկիւղ հօրն՝ ետ կատարել զոր ասացն։ Եթող երանելին և ՚ի մարմարիոն աւազանն՝ որ էր ՚ի կողմն արևելից, զնշանակ քրիստոնէութեան, ձեռամբ իւրով նկարագրեալ զնշան տէրունական խաչին։ Ատեալ վառվառեալ և յապարանս հօր իւրոյ՝ եթուք յերեսս կռոց նորա, և ասէ. Նման սոցա եղիցին՝ որք արարին զսոսա, և որք յուսացեալ են ՚ի դոսա։

Յետ աւուրց բազմաց եկն դիոսկորոս հայր նորա. և մտեալ ՚ի լուանալիսն, և ահա տեսանէ երիս լուսարանս ՚ի նմա, և ոչ երկուս՝ որպէս հրամայեալ էր. և ասէ ցարհեստաւորսն. Ընդէ՞ր ստունգանեցիք հրամանաց իմոց, և արարիք զայդ։ Պատասխանի ետուն գործաւորքն, և ասեն. ոչ յանձնահաճութեամբ կամաց արարաք զայդ, այլ ՚ի հրամանէ սիրելի զաւակի քո։ Յայնժամ կոչեցեալ նորա զերանելի կոյսն՝ ասէ ցնա զարմացմամբ. դո՞ւ ետուր հրաման առնել զայդ զերիս պատուհանս։ Եւ նա ասէ. այո՛ ես հրամայեցի. զի երկուսն ոչ ունէր զկատարել առանձնաւորութիւն երրորդութեան. քանզի երրեակ լուսով լուսաւորի ամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ, և միով էութեամբ ժառանգէ զարքայութիւն և զկեանսն յաւիտենից, և վնկ ետու յօրինել զլուսարանսն յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Եւ ասէ հայրն ցնա. ո՛վ որդեակ իմ ցնորեցա՞ր արդեօք. ոչ գիտեմ զի՞նչ խօսիս զառա-

կա-

կաւոր բանսդ ․ ասա՛ յայտնապէս ․ զի իմա-
ցեալ ծանեայց զասացեալսդ 'ի քէն ։ Յայն
ժամ մեկն և համարձակ յայտնեաց կոյսն
զքրիստոնէութի իւր՝ յանձն առեալ վկայել
արեամբ 'ի սէրն քնի ․ եցոյց և զնշան խաչին՝
զոր արարեալ էր նր յաւազանն՝ ոչ ճարտա-
րութբ, այլ զօրութբ տն ․ զի ոչ 'ի վր կա-
կուղնիւթոյ կմ մոմոյ տպաւորեալ էին գիծք
ձեռացն ։

Օ այս իբրև լուաւ դիոսկորոս, բորբոքեալ
'ի չարէն, և լցեալ անհնարին ցասմամբ, ամ-
բարձ զսուսերն իւր՝ նոյնժամայն սպանանել
զնա ։ Իսկ 'ի գոչել կուսին առ տր՝ եղեն ահա-
գին սքանչելիք ․ զի վէմն՝ որ կայր յանդիման
բաղանեացն, պատառեցաւ խորանաձև յեր-
կուս մասունս ․ և ել կոյսն ողջանդամ և ա-
նարատ յայնկոյս 'ի լեռնակողմն ։ Իսկ անօ-
րէն հայր նր չէառ 'ի միտ զզօրութիս տն ․
այլ թերևս սովորական ինչ սասանումն եր-
կրի համարեալ՝ դադարեաց առ վայր մի ․ և
ապա ել 'ի լեառն մօտակայ, և տեսեալ անդ
հովիւս երկուս՝ հարցանէր վն դստերն ․ մին
'ի նոցանէ ուրացաւ, բայց միւսն մատնեաց
զնա նշանացի ակնարկութբ ։

Ապա գտեալ զնա հօրն 'ի խորշս լերինն,
և ապտակեալ զնա սաստիկ և չարաչար հար-
ուածովք՝ բուռն եհար զհերացն նր, և քար-
շեալ մինչև 'ի տուն՝ արգելոյր 'ի նսեմ սե-
նեակ մի իբրև 'ի բանտի անսուաղ՝ կնքեալ
իւրով մատանեաւ ․ և ազդ առնէր դատաւո-
րին մարկիանոսի վն նր ․ և յետ աւուրց ա-

ուեալ ես է ինքեան 'ի դասս զօրագլխացն
ծեր զոմն անօրէն և անմտ, եհան զնոյն 'ի
քանակէն, և բերեալ մատնեաց 'ի ձեռս դա-
տաւորին, երդմնեցուցեալ զնա չարադեւն 'ի
դիս և 'ի բախտ ինքնակալաց. զի դառն և
անողորմ տանջանօք սպանցէ զզաւակ իւր:
Յայնժամ դատաւորն մարկիանոս նստեալ
'ի վր բարձրագոյն բեմի է սովորութեն 'ի
մէջ բազմամբոխ հրապարակին, և հայեցեալ
է նկարագիր պարկեշտ և դեղեցիկ կուսին
վառվառիայ՝ ասէ ցնա. ով ազնուական և
վայելուչդ 'ի կանայս դուստր իմ, գիտեմ
զի ոչ պիտոյանաս դու զանազան հարցմանց.
վն զի իմաստուն երևիս և հեզ և հանդարտ.
և արդ հարցանեմ զքեզ, զի՞նչ կամիս՝ ա-
սա ինձ. առնե՞լ զկամս ինքնակալին, և զո-
հել ածոցն, և հաշտեցուցանել զքեզ է նոս
և վայելել 'ի ցանկալի փառս ծխս, և դուստր
թագաւորաց կոչիլ, եթէ զրկիլ 'ի քաղցր կե-
նացս, և չարաչար տանջանօք իբրև զմահա-
պարտ մեռանիլ, զհետ երթալով կրօնից գա-
լիլեացւոյն, և ած խոստովանելով զայն՝ որ
'ի ձեռաց հրէիցն մեռաւ. զոր և նախատինս
համարիմ իմաստուն և ազնուատոհմ կու-
սիդ, թողուլ զկենդանի ածսն, և զհետ եր-
թալ մեռելոյ ումեմն, և մատնիլ 'ի դառն
տանջանս, որ մաշեն անողորմ զդեղեցկու-
թիւդ քո. և քն այն՝ որ 'ի ձեռաց այլոց չկա-
րաց զանձն փրկել, զիա՞րդ զքեզ ապրեցու-
ցանել կարիցէ:

Պտխնի ետ աղախինն քի, և ասէ ցդատա-
ւորն.

ւորն . ես պատրաստեալ եմ այսուհետեւ
զանձն իմ մատուցանել պատարագ ա՟յ կեն-
դանւոյ, և փրկչին մերոյ յ՟ի ք՟սի, այն՝ որ
արար զերկինս և զերկիր, և որ 'ի նոսա ա-
րարածք իցեն . որ խոնարհեալ գթացաւ յա-
րարածս, և եղև մարդ ճշմարտապէս, և
կամաւ կրեաց զմ՟ահ կիրս առանց մեղաց մին-
չև 'ի մահ խաչի . և տիրաբար խորտակեաց
զզօրութիւնս իշխանին մահու՝ հանդերձ խա-
ւարային դասուք ն՟ր, զորս դուք առ անգի-
տութե՟ յիմարութե՟ ձերոյ ա՟ծս խոստովանիք .
և զայն՝ որ իւրով յարութ՟բ շնորհեաց մեզ
զանսպառ և զանանց բարութիւն և զկեանսն
յաւիտենականն, հայհոյէք : Բարի է և
կեանք Ծ՟իս . քանզի և սա արարած է մեծին
ա՟յ . և ո՛չ եթէ ես մահու ցանկացեալ՝ փախ-
չիմ յարարածոց ն՟ր . բայց չար այնոցիկ է՝
որ զհետ երթան պատրանաց չարին անառակ
ցանկութ՟բք և անա՟ծութ՟բ . և ձ՟ր դիսն զոր
պաշտեն՝ այրելոց են յանշէջ գեհենին : Արդ
ես այնմ կենաց ցանկացեալ սպասեմ, զոր
պատրաստեաց ա՟ծ սիրելեաց իւրոց . որոյ
մ՟րութիւն ոչ անցանէ, և արքայութիւն ոչ փո-
փոխի . և նմա երկրպագանեմ և փառաւո-
րեմ, որ զայն հանդիստ շնորհէ մեզ : Իսկ
կուռք հեթանոսացդ ոսկի և արծաթ՝ գործք
ձեռաց մ՟դկան, կորիցեն 'ի ներքոյ երկնից :
Յայնժամ բարկացեալ դատաւորն՝ հրա-
մայեաց կապել զկոյսն, և չոր արջառաջլօք
յանխնայ հարկանել, և մազեղինաւ շփել
զվէրս ն՟ր . մինչև ա՟մ անդամք մարմնոյն շա-

զախեալ լինէին յարենէն ։ Ապա հրամանս տայր 'ի բանտ տանել զնա, և դելուլ 'ի կոճեղ զոտս նորա ։ Եւ ահա 'ի մէջ գիշերին լոյս ծագէր 'ի բանտին իբրև զճառագայթս արեգական. և երևեալ փրկիչն՝ ասէ. քաջալերեա՛ց և զօրացի՛ր անպարտելի և սիրելի վկայդ իմ վաւվաւրիէ. քանզի վկայութիւն նահատակութեան քո ուրախութիւն բազում է հրեշտակաց և մարդկան. մի՛ երկնչիր և յայսմ հետէ 'ի սպառնալեաց դատաւորիդ. քանզի ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ յամենայն տանջանաց՝ որ գալոց են 'ի վերայ քո ։ Եւ զայս ասացեալ փրկիչն, և կնքեալ զնա՝ վաղվաղակի ողջացոյց զվէրս մարմնոյ կուսին. և ինքն համբերձ հրեշտակօքն վերանայր յերկինս. իսկ սուրբ վկայն Քրիստոսի ուրախացեալ ցնծայր 'ի վերայ քաջալերութեանց խոստմանց փրկչին ։

Որ և կին ոմն ծածկապաշտ և երկիւղած յԱստուծոյ, անուն նորա յուլիա կամ յուլիանէ. որ զհետ շրջէր սրբոյն վաւվաւրեայ, և տեսանէր զհանդէս նահատակութեան նորա. որ և եկեալ 'ի բանտն՝ ետես զնա ողջացեալ 'ի չարաչար հարուածոցն, և փառաւորէր զԱստուած 'ի վերայ անպատում սքանչելեացն. և ցանկայր նահատակակից լինել նմա ։ Այլ 'ի վաղիւն անդր՝ յորժամ հրամայեաց դատաւորն ածել զառաջեաւ զվաւվաւրիա, եկն ընդ նմա և յուլիա ։ (4)

Իսկ դատաւորն իբրև ետես զվէրս վաւվաւեայ ողջացեալ, և զդէմս նորա զուարթ և կայտառ, յիմարեալ մտօք ասէ ցկոյսն. տե-

սեր

սե՞ր արդեօք զխնամս տծոցն 'ի վ՟ր քո , թէ
որպէս փաղփաղակի բժշկեցին զքեզ : Պինի
ետ երանելին եւ ասէ . ով դատաւոր՝ տծքն
քո կուռք են եւ համերք , եւ անմռագոյնք ք՟ք
զքեզ . եւ երբէք ոչ զգան նք զցաւս մարդ-
կան . վ՟ն որոյ ոչ բարի ումեք կարեն առնել
եւ ոչ չար . եւ մեք՝ որ զգայութի ունիմք եւ
ճանաչեմք զա՟ծ , ոչ կարեմք թողուլ զլոյսն ,
եւ ընթանալ առ խաւարն : Իսկ դու եթէ
զհետ գաս ճշմարտութե , եւ ատես եւ հեռա-
նաս 'ի սնոտի խաբէութէդ , ես քեզ ցուցա-
նեմ զողջացուցիչն իմ : Իւ իմ ճշմարիտ բը-
ժիշկ ք՟ս ա՟ծն իմ եւ տ՟ր փրկիչն ն՟ի , զոր դու
ոչ տեսանես . զի խաւարեալ են աչք հոգւոյդ
'ի խարդախութէ դիւաց , եւ 'ի սնոտի անցա-
ւոր փառաց յաւիտենիս այսորիկ :

Յայնժամ սրտմտեալ դատաւորն իբրեւ զա-
ռիւծ , եւ կրճտեալ զատամունս՝ հրամայեաց
կախել զնա եւ քերել զկողս նորա . եւ հրատ
բոցոյ տարածանել 'ի ներքոյ նորա , եւ կա-
պարեայ գնտիւք հարկանել զգլուխ նորա :
Զայս իբրեւ տեսանէր երանելի աղախինն
ք՟սի յուլիա , աղիողորմ արտասուօք լայր
դառնապէս : Իսկ դատաւորն ցզինուորսն .
ով արդեօք է կինդ այդ , որ այնպէս ջերմ
արտասուօք լայ եւ կոծէ զանձն վ՟ն անօրինիդ
փառաւեալ : Պինի ետուն յառաջաւորքն
հանդերձ զինուորօքն եւ ասեն . քրիստոնեայ
է . եւ վ՟ն այնորիկ ցաւակից լինելով դմա ող-
բայ աղէխարշեալ : Իսկ դատաւորն դառնա-
ցեալ հրամայէր նս առաւել սաստկացուցա-
նել

նել զքերանս կուսին , և 'ի ներքոյ որովայ-
նին հուր բորբոքել :

Իսկ վկայուհին յերկինս համբարձեալ զաչս իւր՝ ասէ . դու որ սրտագէտդ ես ա̃ծ յ̃ս ք̃ս՝ անստուեր լոյս, որ լուսաւորեցեր զարարածս քո աննուաղ ճառագայթիւքդ , հայեա́ց 'ի տառապանս աղախնոյ քո , և տես զանձուկ փափագման սրտի իմոյ , և մի́ հեռի առներ զօգնութի̃դ քո յինէն , այլ հաստատեա́ զոտս իմ 'ի վե̃մ վիմին հաստատութե̃ հաւատոյ , և անսասանելի պահեա́ զիս յորոգայթից թշնամւոյն . զի մի́ վ̃ն տկարութե̃ մարմնոյս զարհուրեալ զանգիտեցից 'ի վկայական հանդիսի մրցանացս . այլ զօրացո́ զիս աներկիւղ քարոզել և խոստովանել զա̃ծութի̃դ քո առաջի անա̃ծ հեթանոսաց , և ոչ ամաչել , զ̃ սաղմոսերգոյ ս̃բ մարգարէին՝ թէ խօսէի ըզվկայութիւնս քո առաջի թագաւորաց , և ոչ ամաչէի :

Տեսեալ բռնաւորին՝ եթէ ժուժկալութե̃ համբերէ երանելի կոյսն այնմ և տանջանաց , հրամայեաց սուսերաւ հատանել զղատինս ն̃ր : Իսկ իբրև զայն արարին անողորմ դահիճքն , հայեցեալ վառվառեալ յերկինս՝ ասէր . տ̃ր յ̃ս մի́ դարձուցաներ զերեսս քո յինէն , և զհոգիդ քո ս̃բ մի́ հաներ յաղախնոյ քումմէ . այլ տուր ինձ ցնծութի̃ փրկութե̃ , և հոգւով զօրութե̃ քո հաստատեա́ զիս : Զայս ասացեալ երանելւոյն , և ոժառեալ 'ի հոգւոյն ս̃բյ՝ քաջութե̃ տանէր անբերելի ցաւոցն : Զնոյն տանջանս դառնու-
թե̃

Թէ ընդունեցին և Ը յուլիա չարչարակից վառ-
վառեայ :

Իսկ իբրև ոչինչ կարաց փոխել զմիտս նր ա-
նօրէն դատաւորն, հրամայեաց որոշել զնս
'ի միմեանց. զյուլիա եա արկանել 'ի բանտ.
և զվառվառիա մերկ և խայտառակ ձաղա-
նօք և ձաղկանօք շրջեցուցանել ընդ քաղաքն,
և արտաքոյ քաղաքին. իսկ երանելի վկայն
սկսաւ աղօթել այսպէս ասելով. Ո՛վ ամե-
նակալ հայր տն մերոյ յի քի սիրելի որդւոյ
քո, որ զգեցուցեր զերկինս ամպով, և ըզ-
գեցեր ես զլոյս որպ զօթոց, դու ինքնին լեր
զգեցուցիչ աղախնոյ քո, և ծածկեա զմեր-
կութի անդամոց իմոց. զի վն քո ուրախութ
զնախատինս և զչարչարանս յանձն առի. և
մի առներ ցոյց և նշաւակ ամպարշտացս և
անօրինացս : Յայնժամ երևեցաւ նմա փըր-
կիչն քն իբրև քրովբէական կառօք, և հրա-
մանն եա զօժարթնոց ծածկել զնա լուսեղէն
զգեստուք. և այնպէս համարձակութ շրջէր
երանելին. մինչև ածին զնա 'ի գեօղ ուրեմն,
որ կոչէր գելասիս (կմ գիլսիա կմ գիալաս՝)
որպ երկու մղոնաւ հեռի յեւքայիտայ. (որ
յօրինակս ինչ վրիպակաւ ասկաղոն գրի) :
Ընդ դայր և ինքնին բռնաւորն. և միւսան-
գամ հարցափորձեաւ զկոյսն, և տեսեալ զան-
փոփոխելի միտս նորա՝ վճիռ եա 'ի վն սբյն
սուսերաւ հատանել զգլուխ նր. ընդ նմին օ-
րինակի կորուսանել և զյուլիա :

Յայնժամ լցեալ մոլեգին սրտմտութ դիոս-
կորոս հայրն վառվառեայ, որ եկեալ էր ընդ
դա-

դատաւորին իբրև խորհրդակից, կամեցաւ ինքնին լինել դահիճ դատեր իւրոյ. վոյ ինքնին համեր զնա 'ի լեառն 'ի տեղին կատարման՝ հանդերձ բազմութ[եա]ն զինուորաց և ամբոխին. և բազմայաղթ վկայն երթայր յօժարութ[եամ]բ 'ի մահ. և զայս աղօթէր զճանապարհայն. Նախայաւիտեան տ[է]ր՝ անսկիզբն և անհասանելի լոյս, արարիչ և տ[է]ր բոլորից, և պսակիչ ս[ր]բ[ո]ց քոց, յ[իսու]ս ք[րիստո]ս, պարգևեա աղախնոյ քում կատարել զընթացս նահատակութե՝ որ վ[ասն] սիրոյ քո, և տալ հասանել առ քեզ պարզերես համարձակութ[եամ]բ և անտրտում ուրախութ[եամ]բ: Տուր և շնորհս ոսկերաց իմոց 'ի փառս անուան քո փառաւորելոյ, և 'ի պարծանս և յօգուտ հաւատացելոց քոց. և որք հաւատով կատարիցեն զյիշատակս իմ, կատարեա զհայցուածս սրտից նոցա. և փրկեա յամ[ենայն] նեղութեց, 'ի սովոյ, 'ի սրոյ և 'ի հիւանդութեց, 'ի ծաղկոյ և 'ի տարաժամ մահուանէ. և պարգևեա զթողութի յանցանաց նց. և զհոգի իմ ընկալ խաղաղութ[եամ]բ ը[նդ] յուլիայ նահատակակցին իմոյ:

Եւ 'ի հասանել վարվառեայ 'ի տեղին կատարման, և 'ի վեր առաքել զաչսն, և ահա ձայն եղև յերկնից՝ որ ասէր. եկ ով ճգնազգեացդ և անպարտելի նահատակդ իմ, և հանգիր յայսմ հետէ յշտեմարանս արքայութե իմոյ հանդերձ յուլիայիւ կուսիւդ սիրելի աղախնաւդ իմով. և յաղագս որոյ խնդրեցերդ, տաց եղիցի քեզ: Յայնժամ վայրե ամպարիշտ և անագորոյն հայրն վարվառեայ

եհատ

եհատ սուսերաւ զգլուխ նր, և մի ոմն 'ի զին-ուորաց զգլուխ յուլիայ. և այնպէս կատա-րեցան բարի խոստովանութբ 'ի քս՝ յամսեանն դեկտեմբերի 'ի չորրորդում աւուրն, յամի տն իբր 300. զոր ոմանք դնեն 288. կմ և ս յառաջ ։ (5)

Այս եղև յիջանել ամբոխին 'ի լեռնէն՝ հուր անկաւ յերկնից ահագին փայլատակմբք, և այրեաց զդատաւորն, և զորդեսպանն ըղ-դիոսկորոս. որ և փոշին իսկ անյայտ եղև ։ Իսկ այր ոմն վաղենտինիանոս անուն՝ ածա-պաշտ և երկիւղած 'ի տնէ, յիշատակ նորա օրհնութբ, էառ զնշխարս նցն, և պատտա-ւականաւ պատեաց՝ օծեալ անուշահոտ խըն-կովք, և պատուով թաղեաց զնս 'ի նախա-սացեալ դեօղն դելասիս՝ 'ի տեղին կոչեցեալ նիւսսայ. և մինչև ցայսօր (առէ վկայաբանն) աքանչելիք գործեն նշխարք ոսկերաց նոցա 'ի փառս ամենասբ երրորդութեն հօր և որդ-ւոյ և հոգւոյն սբյ. ամէն ։

## Սքանչելիք սրբուհւոյն Վառվառեայ ։

Ոչ յետ բազում ժամանակաց 'ի կատարմա-նէ անտի մեծի վկայուհւոյն վառվառեայ կուսի, յորժամ ծաղկեցան տիեզերք քրիս-տոնէութբ առ մեծն կոստանդիանոսիւ, եղև նշանաւոր ուխտատեղի հաւատացելոց՝ ոչ միայն տապան սբյ կուսին և տեղի կատար-մանն, այլ և տուն նր հայրենի, ուր երևին փոխադրեալ նշխարք նր. կմ տեղի աշտարա-կին

կին և բաղանեացն, ուր թողեալ էր նր̄ զնըր-
շանակս հաւատոց. մինչև ասել հէին վկայա-
բանի Ճառընտրաց մերոց. * Յայտնի ե-
րևին տիպք ձեռաց նր̄ մինչև ցայսօր ժամա-
նակի՝ 'ի զարմացումն և 'ի զղջումն. նոյնպէս
և հետք գարշապարաց սբ̄յն ևս 'ի վր̄ ջրա-
ժողովքարեղէն աւազանացն նկարեցան. որ
և մերձեցելոցն ապաքինութի̄ շնորհէ ամ̄
ախտից և հիւանդութե̄. ոմ̄ երբեմն պրո-
բատիկէ աւազանն և սելովամ աղբիւրն ||:
Սմին հանգոյն խօսի ե̄ը խմիք և մետափրաս-
տէս :

Բ. Ուլ պանծալի ևս են բանք մեծին յովհան-
նու դամասկացւոյ, որ 'ի վերջաբանութե̄ ներ-
բողենի սբ̄յ կուսին վառվառեալ՝ զայսօրի-
նակ խօսի առ նա. * Ո՜վ և արդարութե̄ն
քեզ կայ մնայ պսակ, զոր արժանապէս հիւ-
սեալ.քեղէն՝ յերկինս անդ պսակեցար. այլ
և ոչ աստանօր եթող զքեզ զքն̄ անօժիտ. զի
կենդանի եմ ես ասէ տր̄, զփառաւորիչս իմ
փառաւորեցից : Ո̄նկ՝ զոր օրինակ խոստա-
ցեալ եղև, 'ի քումդ աւազանի, ուր են և
պատուական քո նշխարք, հաւատացելոցն
մերձեցելոց՝ առաւել քան զաղբերակունս
բղխեն զամենապատիկ ցաւոց զբժշկութիս.
և որոց կեղիւք ժանտիւք, կմ̄ այլով ախտիւ
վարակելոց, և այլ ևս խաղաւարտիւք հա-
չելոց մարմինքն՝ 'ի փրկարար ջուրսդ մեր-
ձեալ, վաղվաղակի 'ի մահառիթն 'ի բաց
որբին ախտաժետութե̄. և է մերձաւորաց և
հեռաւորյնս ուրեք տարաբնակելոց՝ տեղին

նշա

նշանաւոր և հռչակաւոր , և որոց պէտս ու-
նին բժշկութե՝ ուխտիւք փափաքելի : Եւ ո՛չ
յայնմ ևեթ վայրի պարագրի՝ որ քեզն պար-
գևեալ բարեփառութի և շնորհք բժշկարար ,
այլ և որ միանգամ յամ՟ տեղերաց ջերմե-
ռանդն հաւատով մատչին առ քեզ , և զքոյդ
տարևոր կատարեն յիշատակ , 'ի սրածութե
ապաքինին արկածից ( որպ՟ 'ի ժանտախտէ ) •
և ամ՟ հասակի դժնդակ պատահարք և ա-
ղէտք 'ի բաց փարատին • և դիւական ներ-
գործութիք՝ քոյին սաստիւքդ յետս նահան-
ջին • և միանգամայն՝ յամ՟ վտանգաց և 'ի
ձախողութեց ազատին , որ միանգամ զքեզ
կարդան 'ի հեշտալուր օգնականութի ‖ :
Նոյնօրինակ հռչակեալ է սքանչելագոր-
ծութի վալվառեայ կուսին յամ՟ դարս յե-
տինս , առաւելապէս յետ սփռելոյ սբ՟ նշ-
խարաց նր՟ 'ի զանազան տեղիս , և յաճախե-
լոյ շինութե եկեղեցեաց և խորանաց յա-
նուն նր՟ ը՟ ամ՟ աշ՟ : Եւ առանձին բարեխօս
ճանաչի ո՛չ միայն վն՟ ծաղկի և տապասկի •
այլև վն՟ վտանգաց հրկիզութե և կայծա-
կանց և ժանտախտի և յանկարծահաս մահ-
ուան • որպ՟ս և նաւավարք յանուն նր՟ կոչեն
զպահարանն վառօդոյ 'ի նաւի , և պաշտպան
իւրեանց ունին ը՟դէմ ամ՟ արկածից : Արդ
'ի բազմապատիկ հրաշից եղելոց 'ի վերջին
դարս՝ զմի և զերկուս պատմեսցուք աստ բա-
նիւք ականատես և հաւատարիմ վկայից :
Այր ոմն հենրիկոս գոգկ տրայեկտացի՝ եր-
բեմն մատգործ և ապա հողագործ՝ պանդխ-
տա-

տանայր 'ի Գորկոմ քաղաքի հոլլանդացւոց հանդերձ որդւով իւրով անդրէիւ և քանի մի դստերօք․ և էր ինքն երկիւղած յ͞այ , և ունէր սովորութիւն յ͞ամ աւուր առանձին աղօթիւք պատուել զ͞սբ վկայուհին ք͞սի զկոյսն վառվառիա․ ք͞զի լսելով լուեալ էր , թէ որ պատուէ զնա 'ի կեանս իւրում , ոչ մեռանի առանց խոստովանութե͞ և հաղորդութե͞ ։ Եւ եղև 'ի ծերութե͞ իւրում իբր յեօթանասուն ամաց հասակի՝ յամի տ͞ն 1448․ 'ի 27 օգոստոսի , եկեալ յագարակէ 'ի տուն իւր՝ խոնջ և վաստակ 'ի քուն եմուտ․ և ճրագն լուցեալ անկաւ 'ի յարդեայ անկողին , և սկսաւ իսկ և իսկ ճարակիլ հուրն ընդ ա͞մ տունն․ մինչև մազապուր փախչիլ ամենեցուն 'ի տանէն խանձողեալ հանդերձիւք ։

Բայց տեսեալ հենրիկոսի՝ թէ ա͞մ ինչք իւր յաճիւն դառնան , փութացաւ մտանել անդրէն 'ի ճողոպրել գոնեա զպատրաստական դրամս իւր․ այլ մինչչև էր հասեալ 'ի սենեակ դրամոցն , պաշարեցաւ 'ի հրոյն․ և իբրև սկսաւ բոցակիզիլ , մոռացաւ զմարմինն , և հոգայր զհոգին․ զի առանց խորհրդոց եկեղեցւոյ մեռանի․ վ͞սյ յ͞ամ սրտէ կարդայր առ բարեխօսն իւր՝ ասելով․ Ո՛վ սրբուհիդ վառվառէ՝ որ կարօղդ ես յ͞ամի անախտ փեսայիւդ , հա՛ս 'ի թիկունս թշուառականիս , զի մի 'ի մեղս իմ մեռայց․ եղիցի յիս քոյին բարեխօսու͞թ՝ որ ինչ խոստմունք եղեն առ քեզ 'ի ժամ կատարման քո յերկնից․ յուշ լիցի անմահ փեսային քո ք͞սի՝ ա-

րիւն քո վարդաձգոյն և կուսական. յուշ լիցի ողջախոհ և ջերմեռանդն սէր քո, զի մի զուրկ 'ի խոստովանութենէ և անհաղորդ ելցէ հոգիս 'ի մարմնոյս ։

Յայն ինչ բանքն 'ի բերան նորա էին, եկն եկաց առ նմա Ս͞բ կոյսն փառափառիա վայելչագեղ զարդու 'ի կերպարանս պատկերի իւրոյ եղելոյ յեկեղեցւոջ. և վերարկուաւ իւրով 'ի բաց ցրուեալ զբոց հրոյն՝ կորզեաց զհենրիկոս կիսամահ 'ի տեղի անքոյթ. և ասէ ցնա. քանզի ստէպ մեծարէիր զիս հաճոյական պաշտամամբք, և այժմ ես զիս կալար միջնորդ 'ի հայցել 'ի Տ͞նէ զողորմութիւն, ահա տուեալ է քեզ իմովս բարեխօսութե͞բ ժամանակ կենաց մինչև 'ի վաղորդայն ը͞ն արևագալն, զի մարթասցիս ը͞ռնել զխորհուրդս կենաց ը͞ն քումդ փափաքման ։ Զայս ասացեալ՝ եղև կոյսն աներևոյթ ։ Յայնմ վայրի տարածեալ էր ազդումն հրդեհին 'ի ձայն պահապանաց և զանգակաց ը͞ն ա͞մ քաղաքն. և հասեալ բազմութե͞բ՝ փութային շիջուցանել. և շատք ևս այն էին՝ որոց մոռացեալ զհրդեհն, 'ի զնին կային սքանչելի կենդանութեն հենրիկոսի խանձողելոյ յոտից մինչև 'ի գլուխ, և իբրև ածուխ սևացելոյ. և ոչ գոյր 'ի նմա տեղի ողջ, բայց միայն աչքն և լեզուն ։

Եւ որ սքանչելին է, յարուցեալ հենրիկոս նոյնժամայն ընթացաւ գիշերի 'ի տեղի հեռագոյն՝ անցանելով ը͞ն գիւղս երկու, մինչև 'ի տուն դստերն իւրոյ դետուածարդայ, որ այն

ինչ տուեալ էր 'ի կնութիւն նեւստանի որդւոյ
առնոլդոսի . ուր պատմեն ամենեցուն զմար-
դասիրութիւն նորա՝ որ եղև առ նա բարեխօ-
սութեամբ նորին վաղվաղեայ , սկսաւ հայրաբար
խրատել զբազմութիւն ժողովելոցն՝ լինել յամենայնի
երկիւղած յԱստուծոյ , և արհամարհելով զանցա-
ւորս՝ երկնայինն անանց բարեաց լինել ցան-
կացող . և ջերմեռանդն սրտիւ պաշտել ըզ-
տիրամայրն , և առանձին պատուով մեծա-
րել զկոյսն վաղվաղիս . զի ոչ այսօք ձերովք
աչօք տեսանէք , սա պահեաց զշունչ 'ի դիակ-
նացեալ մարմնի իմում առ ի տեսանել յառաջ
քան զմահ զխորհուրդս փրկութեան . և զի ի-
մասջիք , թէ անհնար էր ինձ կեալ առանց
սքանչելեաց և ոչ զմի վայրկեան յետ խան-
ձողելոյս այսպէս ներքոյ և արտաքոյ , շօշա-
փեցէք զամենայն անդամս մարմնոյ իմոյ , և տե-
սէք զի անպիտանացեալ են իսպառ ։ Նոցա
զննեալ , և լցեալ զարմանալեօք՝ կոչեցին ըստ
խնդրոյ նորա վաղվաղակի զքահանայն . որում
խոստովանեցաւ խոստովանութիւն հանրական
զամենայն մեղս իւր 'ի մանկութենէ հետէ , երիցս
և չորիցս ժամ 'ի ժամէ նորոգելով՝ զի մի ինչ
մոռացեալ թողուցու անհոգութեամբ ։ Ապա
ընկալեալ զսուրբ հաղորդութիւն 'ի թոշակ վեր-
ջին և զօծումն հիւանդաց , ամենայն պատրաս-
տութեամբ ուշ ունէր ելանել 'ի կենաց . քանզի
և ասէր իսկ ամենեցուն , թէ ընդ արշալուսոյն
նախ քան զծագել արեգական մերկացի հո-
գիս 'ի խանձողեալ մարմնոյս . որպէս և եղև
իսկ ։ Զի հասեալ 'ի նշանակեալ ժամադրու-

թի

թի ո՛րքն վարուվառեալ, աղօթելով առ ա͞ծ, և կարդալով զանուն ո՛րբ ա͞ծածնի և վաւեռ-ուեալ կուսի՝ աւանդեաց զոգին, և թաղե-ցաւ է երեկս 'ի տաճարին գորկոմեցւոց մօտ յամպիոնն ։

Զայս ա͞մ ճոխագոյն գրէ առ սուրիոսի թէո-դորիկոս քահանայ հայր խոստովանութէ հեն-րիկոսի 'ի ժամ վախճանի նր, կնքելով զբանս իւր այսպէս. * Ես թէոդորիկոս պաւլի 'ի գորկոմոյ, որ առաջիկայ գտայ այսոցիկ, և զնորին հենրիկոսի զխոստովանութիւն չորիցս լուա՛յ և մատակարարեցի նմին զխորհուրդս, և շօշափեցի զվէրս նր և զանդամս, և այլոց ևս ետու շօշափել, և 'ի մէջ բազկաց իւր կալեալ զնա 'ի մեռանիլն, և ո՛չ առ փոքր մի ժամանակ մեկնեցայ 'ի նմանէ՝ աղաչեցեալ և 'ի դստերաց նր և 'ի բարեկամաց, ոչ կա-րեմ չտալ վկայութիւն այսպիսի մեծահրաշ սքանչելեացս, և չանցուցանել զայս ա͞մ 'ի գիր 'ի փառս ա͞յ ||։

Զնոյնս յառաջ բերեալ և հռենալդոսի 'ի շարունակութէ գործոց բարոնիոսի յամի 1448. համար. ծա͞. 'ի վ͞ր ածէ. * Յաւելցուք զմիւս այլ նշանաւոր հրաշս աղօթիւք ո՛րքն վարուվա-ռեալ եղեն, զոր պատմէ յովհաննէս նիդեռ՝ լուեալ 'ի հաւատարիմ առնէ 'ի պարապիլ իւրում ա͞ծաբանական ուսմանց 'ի կողոնիա ։ 'Ի սորին գերմանիա (ասէ) երգկլէնցայ՝ երիտասարդ ոմն գերի անկեալ 'ի պատերազ-մի եղելոյ 'ի մէջ իշխանաց գաւառին, ար-կաւ է այլս 'ի բանտ անսոճաղ. ուր մեռանն

'ի սովէ բազումք յընկերաց նր̃, և ինքն ան-
ցոյց զաւուրս երկոտասան առանց կերակրոյ.
և ապա աղաչեաց բերել առ ինքն քհնայ
զոմն՝ առ ընդունելոյ 'ի նմանէ զխորհուրդս,
եղեալ վկայութի ('ի խոստմանէ որյն վառ-
վառեալ), թէ ոչ մեկնի 'ի կենցաղոյս, մինչ-
չև զօրացեալ իցէ խորհրդովք. և իբրև ընկա-
լաւ զնոսին, առժամայն հանգեաւ բարե-
պաշտութբ̃ ‖ ։

Մեծ է յոյժ և այն, զոր բերէ հռենալդոս
'ի վկայութե̃ լանդինոսի ականատեսի, որ գրէ
այսպէս. * Յամի տն̃ 1486. յորժամ էի 'ի
գրագովիա մայրաքաղաք պողոնիոյ պարա-
պեալ յուսումն գիտութեանց, պետութին
ետ գլխատել 'ի հրապարակի զչորեսին գի-
շերապահս՝ զորս զօրաւորս և նորին քաղա-
քի քաղաքացիս. մն̃ զի զըմբռնեալ գողն՝
կաշառս առեալ՝ թողեալ էին գիշերի 'ի բաց
երթալ. արդ՝ զառաջինն և զերրորդն և զչ-
չորրորդն քաջ կառափնատեաց դահիճն,
բայց երկրորդին 'ի կարգի անդ ոչինչ կարաց
սպանանել, այլ միայն թեթև իմն հարմամբ
հպել մարթացեալ՝ դոյզն ինչ վիրաւորեաց.
մն̃ զի՝ որպս յետոյ պատմեաց այրն, 'ի նմին
իսկ ժամու ուխտիւք չափ յանձն արարեալ
էր զինքն 'ի բարեխօսութի որյն վառվառեալ ։
Նաև այնպէս նորին պաշտպանութբ̃ մարդա-
պուր ձողոպրեցաւ 'ի մահուանէ. և եկաց
է̃ երկայն աւուրս. և այսմ տեսարանի ա-
րեանն ես ինքն հանդիսատես եղէ հետաքր-
քրութբ̃ ‖ ։

Իսկ

Իսկ վասն նշխարաց սրբոյն Վառվառեայ, զոր եւ թերեւս յարեւելից Ալփոնսոս արքայ Արագոնացւոց՝ առ ժամանակօք, գուցէ եւ ձեռնտուութեամբ՝ Լեւոնի Հայոց արքայի որդւոյ Օշնի յամի Տեառն իբր 1328, այսպէս գրէ անդանօր Հռենալդոս 'ի հատորն․ ԺԵ․ թէ * 'ի խնդրել Թագաւորին (Ալփոնսոսի) 'ի Հայրապետէն (Հռոմայ 'ի Յովհաննէ ԻԲ), զի թոյլ տացէ յղել նաւս երկուս 'ի ծովեզերս անհաւատից, և առաւելապէս սուլտանին Բաբելոնի, եթէ 'ի բերել զնշխարս սրբուհւոյն Վառվառեայ, եւ եթէ առ առնել զայլ ինչ ինչ տուրեւառս, ետ պատասխանի Հայրապետն, թէ անդադար բողոք 'ի կողմանց Կիպրոսի եւ Հայոց Ցին տանջէ զլսելիս մեր, թէ վաճառեք բերեալ լինին անհաւատից (յԵւրոպիոյ)․ որովք զօրացեալք՝ եւս քան զեւս անագորոյն եղանին․ բայց 'ի պատճառս նշխարացդ սրբոյ վկայուհւոյն տամք քեզ ասէ հրաման առաքել զմի նաւ, եւ զմիւս այլ||։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Առ Սուրիոսի կրկին օրինակք են վկայաբանութեան սրբոյն Վառվառեայ կուսի՝ ըստ իմաստից քան ըստ բառից նմանաւորք ճառընտրին մերում․ մին՝ նոր, որ է գործ Պետրոսի Գալեսինիոսի՝ առաքելական կոչեցեալ դպրապետի 'ի ԺԶ դարու, որ եւ սա ի քաղեալ 'ի Դամասկացւոյն եւ յԱրսենիոսէ․ եւ միւսն իբրեւ հին յանուն Մետափրաստեսի, որ առաւել միաբանի ընդ մեզ։ Բայց յոր եւ նման ճառընտրի մերում՝ իբրու բնագիր նորուն երեւի հնագոյն օրինակն յունական, զոր տեսեալ է Լեքէն ծա-

նօթարար դամասկացւոյն ՚ի կարի հին մատեանն գոլ-բեան գրատան. ուստի յայտ է ՚ի յառաջաբանէն և ՚ի վերջաբանութենէն, զոր օրինակէ յունարէն. և իրաւամբք հաստատէ, թէ յայնպիսի ընտիր օրինակէ է քաղեալ և սբ յովհան դամասկացի զպատմութիւն սբյ կուսին վառվառեայ ՚ի ներբողեանն նր. որոյ աղացոյց է և այն, զի և բ Ճառընտրիս մերում քաջ միաձայնին ընթացք բանից դամասկացւոյն՝ քան այլոցն:

Զայս եդեալ՝ չկարօտիմք այլոյ քննութեանց ՚ի վաւերականութիւն հին վկայաբանութեանս. և ոչ կարևոր վարկանիմք նշանակել զթեթև տարբերութիւնս օրինակագրաց. յորոց միոյն կամ միւսոյն հետևեալ գտանին և այլ մատենագիրք և յայսմաւուրք. ուստի և մեք առաւել զՃառընտիր մեր քաղեցաք կամ բօրինակեցաք՝ անհարկելով և յայլս: Միայն օտար ինչ կայ ՚ի Ճառընտրի յզ ռամկական աւանդութիւն, (զոր պահէ և Հ.) զի դնի՝ թէ հովիւն որ մատնեաց զՎառվառիա հօր իւրում, * անիծեալ ՚ի սմին՝ նոյն ժամայն արձան աղի մածեալ քարանայր հանդերձ ոչխարօքն իւրև զկինն ղովտայ. և մինչև ցայսօր ժամանակի նովին օրինակաւ կան արձանացեալ ՚ի նմին տեղւոջ ՚ի ցոյց տեսողացն ||: Որոյ ստուգին երևի նախ՝ անտի, զի դամասկացին զամ սքանչելիս՝ որ կան ՚ի Ճառընտրի, անթերի դրէ. այլ զայս ոչ բնաւ: Երկրորդ՝ զի որովհետև յարևելս դուն ուրեք էին և են արձանք կամ վիմափոր նկարք, սովոր են նքա՝ որ միանգամ տեսանեն այնպիսի ինչ, ահ արկանել աղայոց՝ թէ այսպիսիկ երբեմն կենդանի էին, և ած ՚ի պատիժ մեղաց քարացոյց: Երրորդ՝ զի օրինակագիրն մետափրաստեան զայլ պատիժ ՚ի մէջ բերէ. որ է առաւել ծաղրական. * Իբրև անէծ (ասէ) վկայն զոչխարս նր, ոչ ևս միացին ոչխարք, այլ փոխեցան ՚ի բզէզս, որք ՚ի յաւերժական կշտամբանս ապիրատութեան հանապազ թռչին զգերեզմանաւ սրբուհւոյն վառվառեայ ||: Ո՛հ կարի է առասպելս, այլև առասպելեաց առասպել, անհեթեթ գիւտ տղայամիտ գրչաց, և ոչ իմաստուն մատենագրաց. զորոց զանունն այսպիսի կցկցուծով անյարիր կարկատանաց աղօտացուցանեն տխմար իմաստակք:

(2) Քանզի արևելք յունարէն անատօլի ասի, իսկ առ յետինս այս անուն սեպհականեալ իմն է մասին արևելից՝ որ անկանի հանդէպ բիւզանդիոյ, նմին իրի ոմանք ՚ի լատին մատենագրաց համարեցան՝ թէ հայրենիք վառվա-

վառեալ էր Նիկոմիդիա բնութանացուոց : Բայց ո՟չ Ճա-
ռընտիր մեր, նոյնպէս և յունական սկզբնագիրն մեկն
դրեն հեղինակոլէս կա՟մ ինքնակոլէս արեւելից . և Թէպէտ
այսու անուամբ կոչն այլ և այլ քաղաքք 'ի սահմանս Ե-
գիպտոսի և Կիլիկիոյ, յորոց մի է և բիւրիտոն, այն է
պէրիւթ, բայց քանզի վկայաբանն դնէ մօտ 'ի յեւքսայիտ
(որ է 'ի պափլագոնիա), նմին իրի այլ երեւի և 'ի նո-
ցունց : Յոյն բնագիրն ասէ Թ՟Ռ ձայնին, * 'ի տեղին ի-
,, ննոսպօլիս կոչեցեալ . ո՟չ հեռի յեւքսայիտէ տասն եր-
,, կու ասպարիզաւ || . զոր Ճառընտիրն մեր Թարգմանէ
քաան . իսկ լէքէն՝ երկոտասան : Իսկ գիւղն՝ որ երկու
մղոնաւ հեռի յեւքսայիտայ՝ 'ի յունականն կոչի գեղասիս .
'ի Ծ . գիլսիա, զոր և ասկաղոն կոչէ . առ սուրիոսի
գեղասսոս . և՟ն : Իսկ Հ . գրէ դիալասա, Թերեւս փոխ
գրելոյ գիալասա, խառնելով Ը՟Ր հեղինապօլսոյ՝ որ Թարգ-
մանի արեգական քաղաք, այսպէս . * Եւ տարան զն՟ե
,, կոյսն 'ի գեօղ մի, որ կոչիւր դիալասայ . և էր այն
,, տեղին արեւու, այս է արեգդէմ . . . . և այր մի հա-
,, ւատացեալ էառ զմարմին ն՟ե կանանցն, և Թաղեաց 'ի
,, տեղի մի՝ որ կոչի արև || :

(3) Ջեղանակ դարձի վառվառեայ 'ի քրիստոնէութիւն
ոչ բացատրէ վկայաբանն մեր, որպէս և ոչ դամա-
կացին, և ոչ մետափրաստէս . վ՟ն 'ի զուր է՝ զոր ինչ
մակաբերութեամբ հիւսէ Ճոխաբանն գալեսինիոս, 'ի
միոյ առեալ ըստ իմիք 'ի վարուց քրիստինեայ կուսի :
Անյարմար են և այն բացատրութիւնք գալեսինիոսի, ո՟չ
Թէ վառվառիա կանխաւ յայտնեալ իցէ զքրիստոնէութի՟ն
իւր . և վ՟ն այն հեռացեալ իցէ հայր ն՟ր 'ի տանէ առ
ժամանակ մի, զի կարօտով հօր իւրոյ սորջացի վառ-
վառիա . և այլ այսպիսի աւելորդ պատճառք բանից .
ուր Ը՟Ր հկ՟ն վառաւել հրաշալիս 'ի բանից՝ զոր միա-
բան գրեն ամենեքին, ինքն զանց առնէ . մանաւանդ
զահագին պատառու՟մն վիմին՝ Ը՟Ր որ էանց վառվառիա .
զոր յար և նման Ճառընտրի մերում երկրորդեն դա-
մասկացին և մետափրաստէս . որ և յաւելու օրինակ 'ի
մէջ առնուլ զամփոփիլն Թեկղի սքանչելեօք 'ի մէջ վի-
մին պատառելոյ . ունէաք և մեք 'ի մէջ բերել զնոյնպի-
սի հրաշս 'ի կատարման սբ՟յն սանդխտոյ . այլ զայսպի-
սիս ինքնին ընԹերցօղք ունին 'ի միտս բերել :

(4) Հ . ո՟չ և այլք 'ի վկայաբանից՝ յուլիանէ անուա-
նեն զնահատակակիցն վառվառեայ . բայց քանզի Ծ .
անխափ գրէ յուլիա և յուլիանէ, մեք զառաջինն 'ի

կիր արկաք. զի մի՛ շփոթեսցի ընդ այլում յուլիանեայ կուսի՝ զոր առնեմք ՟Է փախլուհեայ:

(5) Խորհրդով եղաք յամի ՟Տն իբր 300. զի վկայագիրք ՟Սմ ասեն նահատակեալ առ Մաքսիմիանոսիւ. որով ան-ուանք եղեն Թագաւորք՝ սկսեալ յամէ ՟Տն 285 մինչև ՚ի 312. վ՟ն յայս միջոց անկանի պատմութիւն: Լադւոկատ նոր հեղինակ չգիտեմ զիարդ դնէ զկատարումն վառ-վառեայ յամի իբր 240. որ է ժամանակ Գորդիանոսի կայսեր. գուցէ համարի լինել առ Մաքսիմինոսիւ յու-լիոսիւ նախորդաւ ն՟ր, որ նստաւ յամի 235. զոր դըժ-ուարին է ստուգել: Նա ևս է գնելն վիգլեգայ ՚ի 288:

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Ս՟րյն Պանտալէոնին կամ Պանտելէիմոնի բժշկին, և Հերմողեայ քահանայի, և որոց ընդ նմա: (1)

Դ. յուլ. 26: Յ. յուլ. 26. և 27: Լ. յուլ. 27, կամ 28: Հասարակ. Ա. Հխտ = ՀծԷ: Բ. ՀԷ = ՀծԲ: Գ. աՂՂ = աձԷ: Բոլլանդեանն պատ-ճէնս. ՚ի Զ հատ. յուլ. էջ. 397 = 429: Մետափր. առ Սուր. ԼԾ: (2)

ՆՇԱՆԱԳՈՐԾ ՎԿԱՅՆ Ք՟ի՝ քաջ և յաղթող երանելին Պանտալէոնին կամ Պանդալէոն (որ է ըստ յն. Բանտալէօն, և լտ. Բանտալէօն. այն ամենաողորմ,) էր ՚ի Նիկոմի-դիայ քաղաքէ՝ միամօր որդի առն սինկղիտի-կո-

կոսի և հեթանոսի, և մօր քրիստոնէի եւբուղեայ, յաւուրս հալածանաց Մաքսիմիանոսի կայսեր (հերակլեայ, կմ՟ գաղերիոսի), մանուկ կայտառ դիմօք և իմաստուն մտօք, համեստ 'ի գնացս և գովելի յամի: Եւ եղև մօր նր՟ բարեպաշտի վախճանիլ, մինչդեռ էր պանտալէոնին տեղեկացեալ ճանապարհին ճշմարտութե՟. զի և ո՛չ հայրն թողացուցանէր նմա անսալ բանից մօրն, այլ տուեալ էր զնա յուսումն դպրութե՟ 'ի դպրոցս հեթանոսաց: Եւ իբրև եգիտ զմանուկն մտավարժ և յառաջադէմ յուսմունս, ետ զնա յուսումն բժշկականին առ ոտս եւփրոսինոսի բժշկապետի, որ էր բժիշկ արքունեաց թագաւորին. և ուր և երթայր նա, էր և պանտալէոն ը՟նդ նմա:

Յաւուր միում տեսեալ զնա թագաւորին՝ եհարց ցվրդպ՟ նր՟. ո՞յր է պատանեակս այս: Պ՟տնի ետ եփրոսինոս, և ասէ. որդի է եւստորգիոսի՝ որ 'ի դասն սինկղիտոսիդ. և ետ զդա յիս ուսուցանել զբժշկութի՟: Յայնժամ ասեն և նախարարքն. արժանի՛ է պատանեակդ թագաւորի: Եւ արքայ ասէ ցվրդպ՟ նր՟. յո՛ւշ լիցի քեզ ա՟մ հոգաբարձութե՟ և փութով մարզել զդա յարուեստիդ. զի պիտոյ է ինձ:

Եւ էր 'ի նիկոմիդիա երէց մի ծերունի և կատարեալ յա՟ծպաշտութե՟՝ երմողայոս կամ երմողէոս անուն, ապրե՟լ 'ի կոտորածէ երկուց բիւրուց, և առանձնացե՟լ թաքստեամբ 'ի խցկան միում հանդերձ երկու ընկերօք. և

և էր համապազ Պանտալէոնի անցանել առ նոքօք յերթևեկել 'ի տուն վրդպին իւրոյ. և զոր ա͞մ տեսանէր զնա երմողայոս՝ պարկեշտ 'ի գնացս, վայելուչ, երկիւղած և բարեսէր. քանզի ոչ ոք հաւանեցոյց զնա յընկերաց իւրոց անամօթել, կամ հայել 'ի կին մարդ, կամ մտանել 'ի թատերս խաղուց, կամ ծիծաղել՝ ըստ սովորութեն է մանկանց. և իմացաւ ծերն հոգւովն 'ով, եթէ անօթ մեծ և պատուական լինելոց է պատանեակն։ Եւ յաւուր միում կոչեաց քահանայն զպատանեակն գաղտ, և ասէ. Եկ այսր ժամ մի։ Եւ իբրև եմուտ, ողջագուրեաց զնա ծերն, և ասէ. ողջ լեր որդեակ լի ա͞մ բարութ͞բ։ Եւ պանտալէոն ասէ ցնա. ողջ ես և դու հայր արժանի ա͞մ պատուոյ։

Եւ կալաւ զձեռանէ նր͞ա երէցն, և նստոյց մօտ առ ինքն, և ասէ. որդեակ ո՞յր ես, և զի՞նչ գործ է քո։ Պանտալէոն ասէ. որդի եմ ես առն միում սինկղիտոսի, զի անուն է նր͞ա եւստորգիոս, և եւբուղայ մօր. և մայրն իմ՝ ժամանակք են, զի վախճանեալ է։ Եւ ծերն ասէ. որո՞ւմ պաշտաման պարապես որդեակ։ Պանտալէոն ասէ. մինչ կենդանի էր մայրն իմ, ընդ նմա էի, որ վարժէր զիս բարի կարգօք, և կամէր ընդ իւր ունել, և հայրն ոչ եթող, այլ 'ի դպրոց յղէր, և խորհէր յարքունիս զինուորել զիս. և ես ըստ մօրն իմում կամէի լինել. այլ 'ի մեռանիլ նորա՝ հայրն իմ ուր կամեցաւ ետ զիս։

Ասէ երէցն. արդ զի՞նչ է՝ զոր ուսանիսդ

առ

առ վարդապետին քում ։ Պանտալէոն ասէ. զասկղեպիոսի, զհիպոկրատեայ և զգաղենոսի ճարտարութիւն պատուիրէր ինձ վարդապետն, և ասէ. Թէ ուսանիս զնոցա խրատն, բժշկես զամենայն հիւանդութիւն յամենայն մարդկանէ ։ Իսկ երէցն ասէ. ոչինչ է ասկղեպիոս, և ոչ հիպոկրատես, և ոչ գաղենոս. և յոչինչ համարեալ են աստուածքն գլխովին՝ զոր պաշտէ մաքսիմիանոս թագաւորն. Եկ որդեակ լուր ինձ, և հաւատա՛ 'ի Քրիստոս, որոյ անուամբն զամենայն հիւանդութիւն բժշկես. քանզի նա զմեռեալս յարոյց, և կուրաց լոյս շնորհեաց, և զամենայն ցաւս փարատեաց. զերկոտասանամեայ բղխումն արեան կնոջն՝ որ 'ի քղանցս հանդերձից նորա մերձեցաւ, ցամաքեցոյց. որ և զջուրն 'ի գինի փոխարկեաց, և զդևս հալածեաց. և բազում սքանչելիս արար՝ որ ոչ գոյ թիւ. և մերձ է նա առ ծառայս իւր, և փրկէ զնոսա յամենայն նեղութեանց նոցա. և որք 'ի նա հաւատային, ևս առաւել քան զայս մեծագոյն շնորհեաց առնել ։

Իսկ պանտալէոն իբրև զերկիր բարի և պարարտ ընկալաւ յինքեան զբանն կենաց 'ի հարիւրապատիկն պտղաբերութիւն 'ի փրկութիւն անձին իւրոյ և բազմաց. և ասէ ցծերն. տէր եթէ հնար է, զայդ՝ զոր ասես դու, յայտնել վարդապետին իմոյ. զի և նա գիտասցէ զոր քարոզեսդ, և օգտեսցի իբրև զիս. քանզի և իմ յառաջագոյն լուեալ էր զայդպիսիս յերանելի մօրէն իմմէ. զի յորժամ յաղօթս կայր, կարդայր զՔրիստոս՝ զոր դուդ աւետարանես ։ Իսկ ծերն ասէ. դու որդեակ մի յայժմուս զվարդապետն

քո

քո հոգասցիս , այլ փութա՛ աշակերտիլ երկ-
նաւոր վարդապետին քրիստոսի . լուա՛ ի նա , և նովաւ
զօրասցիս յամենայնի . քանզի ոչ երբէք հեռանայ
քրիստոս ի ծառայից իւրոց . հաւատա՛ այսուհետև
ի քրիստոս , և առ զմկրտութիւն վերին շնորհացն ։
Եւ յայնմհետէ օր ըստ օրէ երթայր առ ծերն,
և հաստատէր ի հաւատսն . և ոչ երթայր ի
տուն իւր յառաջ՝ ի դառնալն ի տանէ վար-
դապետին , եթէ ոչ նախ զնա տեսանէր . և
այնպէս ընդ շնորհօք տեառն մերոյ յիսուսի քրիստոսի ։

Յաւուր միում հրաժեշտ առեալ էր պան-
տալէոն ի վարդապետէն իւրմէ , զի երթիցէ ի տուն
իւր . և հեռացեալ նա սակաւիկ մի ի ճանա-
պարհէն՝ եգիտ մանուկ մի ի քարբ օձէն
խածեալ և մեռեալ . և օձն մերձ կայր առ
նմա ։ Իբրև ետես զայն պանտալէոն , զար-
հուրեալ յերկիւղէն՝ փոքր մի փախեաւ . ա-
պա եդեալ ի միտս իւր՝ ասէ . այժմ պարտ
է ինձ գիտել , եթէ ճշմարիտ են ասացեալքն
ի ծերոյն Երմողեայ ։ Եւ հայեցեալ յեր-
կինս՝ ասէ . տէր յիսուս քրիստոս՝ եթէ արժանի եմ կոչ-
մանց քում , և կամիս զիս ի ծառայութիւն
քեզ , յանուն քո յարիցէ մանուկս այս ։ Եւ
իբրև նա զայս ասաց , վաղվաղակի յարեաւ
մանուկն , և գազանն հերձաւ ընդ մէջ ։ Եւ
ասէ պանտալէոն . օրհնեցից զքեզ տէր իմ
յիսուս քրիստոս , զի արժանի արարեր զիս ընդ ծառայս
քո ի թիւ անկանիլ ։

Ապա ընթացեալ ի տուն Երմողայոսի՝ ան-
կաւ առ ոտս նորա , և խնդրէր անյապաղ զմկր-
տութիւն . և ծերոյն հարցեալ զպատճառն՝

իբրև

իբրև լուաւ զեղեալսն, գնաց ընդ նմա մինչև
՚ի տեղին. և տեսեալ զանկեալ զազանն՝
փառս ետ այ ։ Յայնժամ դարձան երկո-
քեանն ՚ի խցիկն. և արարեալ ծերոյն զամ
ընդ օրինացն՝ ետ նմա զկնիքն որ մկրտութե,
և եկաց առ նմա աւուրս եօթն ։ Իսկ յաւուրն
ութերորդի գնաց ՚ի տուն իւր. և տեսեալ
զնա հօրն իւրոյ՝ ասէ ցնա. ո՞ւր էիր որդեակ
այսքան աւուրս. զի ես մահուչափ նեղեալ
տառապէի վն քո ։ Իսկ պանտալէոն ասէ ա-
ռակաւ. զայր ոմն բժշկեցաք ՚ի սաստիկ հի-
ւանդութենէ ՚ի դրան արքային. և վն զի սի-
րելի էր այրն արքային, եղէ առ նմա աւուրս
եօթն, մինչև կատարեալ առողջացաւ հի-
ւանդն. որով իմանայր զիւր զհոգևոր առող-
ջութի ՚ի հաւատս. իսկ հայրն համարեցաւ
զայլմէ ասել ընդ մարմնոյ. վնյ և լռեաց ՚ի
հարցանելոյ այլևս ։

Իսկ ՚ի վաղիւն չոգաւ պանտալէոն առ եփրո-
սինոս վրդպն իւր. և նա ևս հարցանէր. ասա
ինձ պանտալէոն՝ ո՞ւր էիր այսքան աւուրս ։
Ասէ և ցնա առակաւ աւետարանին. հայրն
իմ ագարակ գնեաց, և առաքեաց զիս գրա-
ւել զագարակն. և եղէ անդ աւուրս եօթն,
մինչև ստացայ զիշխանութի նր. քանզի և
քան զամ մարգարիտս պատուականագոյն
էր ստացուածն այն. և ոչ իմանայր եփրո-
սինոս՝ եթէ վն մկրտութե իւրոյ ասէ. վնյ
լռեաց և նա ՚ի հարցանելոյ ։

Իսկ պանտալէոն շնորհօք քի լցեալ, և ըղ-
գանձս հաւատոց շահեալ, բազում հոգս ու-
նէր՝

ներ՝ զի զհայրն իւր յաստուածածանօթութիւն ածցէ.
և զամենայն աւուրս խօսէր առ նա առակաւ զզօ-
րութիւն Քրիստոսի և զկռոցն տկարութիւն ։ Ի միում
նուագի ասէ ցնա. Հայր տէր աստուածքն քո՝ որ
յոտն կան, յոտն կան, և ոչ նստին. և որ
նստին, ոչ երբէք յառնեն ։ Եւ հայրն ասէ.
երդուեալ իմ՝ ի փրկութիւն անձին իմոյ, բանդ՝
զոր դու խնդրես, ծանր է. և ես չեմ բաւա-
կան պատմել քեզ ։ Յայնժամ սուրբն պանտա-
լէոն լցեալ ուրախութեամբ՝ ետ փառս Աստուծոյ, զի
միով բանիւ երաց հօրն զդուռն աստուածգիտու-
թեան. մինչ զի յօրէն յայնմանէ յերկուացել
եւստորգիւսի 'ի կռոցն՝ ոչ զոհէր նոցա, ոչ յա-
ռաջն. քանզի ունէր 'ի տան իւրում կուռս ։
Եւ պանտալէոն կամէր փշրել զնոսա. այլ ար-
գելոյր զանձն՝ ասելով. ոչ է բարւոք խռո-
վեցուցանել զհայր իմ. այլ նախ հաւանութեամբ
ածից զնա 'ի հաւատս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։
Եւ մինչդեռ նա զայն խորհէր, ածին 'ի տուն
անդր կոյր մի կալեալ զձեռանէ. և բախեն
զդուրսն՝ հարցանէին, եթէ 'ի ներքս իցէ
բժիշկն պանտալէոն, և աղաչէին՝ զի ելեալ
բժշկեսցէ զկոյրն ։ Եւ լուեալ նորա՝ մեծաւ
փութով ել, առեալ ընդ իւր և զհայրն ։ Իբ-
րև ետես պանտալէոն զկոյրն, ասէ. զի՞նչ
կամիս. և կոյրն ասէ ցնա. աղաչեմ զքեզ,
ողորմեա ինձ խաւարելոյս, զի 'ի քաղցր լու-
սոյ արգելայ. և ամենայն բժիշկք փորձեալ յիս՝
և ոչինչ կարացին օգնել ինձ. այլ զոր և ու-
նէի զստակաւ լուսինկն՝ զայն ևս խափանե-
ցին յինէն. և զամենայն ստացուածս իմ առին.

և

և ես մնացի կոյր և չքաւոր ։ Պանտալէոն ասէ ․ այլոց բժշկաց զստացուածս քո ետուր ․ մեզ զի՞նչ տացես , եթէ ընկալցիս զտեսութի՛ ։ Եւ կոյրն ասէ ․ որ ինչ մնացեալ է յընչից իմոց , զայն քեզ տաց ։ Ասէ ցնա պանտալէոն ․ զպարգևն լուսոյ տայ քեզ ինև քս ․ և դու երթ տո՛ւր զայդ աղքատաց՝ զոր ինչ ինձ խոստացար ։

Իսկ հայրն պանտալէոնի արգելոյր զնա , և ասէր ․ որդեակ տեղի՛ տուր յառնելդ յայդմանէ ․ զի ո՞չ ես դու ճարտար քան զբազում բժիշկս՝ որ ձեռնարկեցին 'ի դա ։ Եւ պանտալէոն ասէ ցհայրն իւր ․ դեղն՝ զոր ես տամ դմա , անգին է ․ և յայլոց բժշկացն ոչ ոք կարէ տալ ․ քանզի վդպն իմ ճարտար է քան զամ բժիշկս ․ և բանիւ լոկով բժշկէ զհաւատացեալսն 'ի նա ․ և հայրն կարծէր՝ եթէ վն եփրոսինոսի ասէ ։ Իսկ պանտալէոնի կալեալ զկոյրն՝ ամնագրեաց զաչս նր , և ասէ ․ յանուն յի քի , որ լուսաւորեաց զառաջին խաւարեալսն , և կանգնեաց զառաջին զնեղեալսն , և ժողովեաց զցրուեալսն , և դարձոյց զմոլորեալսն , կամօք նր տես և դու զլոյս զամ աւուրս կենացքոց ․ և ես լոյս մեծ տեսցես դու , եթէ հաւատասցես 'ի քս ։ Եւ մինչդեռ նա խօսէր զայն , կոյրն բացեալ զաչսն՝ տեսանէր ․ և նոյնժամայն հաւատաց 'ի քս հայրն պանտալէոնի հանդերձ բժշկելովն ։

Յայնժամ երթեալ պանտալէոնի առ սբ երէցն երմողայոս՝ պատմեաց զամ որ ինչ եղևն ․

ղեն . և նր ուրախացեալ յոյժ 'ի տր՝ եկն 'ի տուն նորա տեսանել զկոյրն և զհայր նորա . և եղև անդ աւուրս բազումս . և մկրտեաց զհայր նր և զկոյրն , և լուսաւորեաց զնս 'ի լոյսն երկնաւոր ։ Եւ եմուտ եւստորգիոս 'ի տուն իւր , և ծորտակեաց զկուռսն , և ընկէց զնս 'ի խորխորատ մի . զայն տեսեալ պանտալէոնի՝ ետ փառս այ ։

Եւ յետ անցանելոյ փոքր մի աւուրց՝ մեռաւ հայր նր բարերջանիկ . և պանտալէոն ազատեաց զամ ծառայս իւր՝ տուեալ նոցա ինչս . և զմնացեալ ինչս աղքատաց բաշխեաց . և ինքն առ հիւանդս և կարօտեալս , և որք էին 'ի բանտս և 'ի տանջանս վն անուանն քն , երթայր . և քաջալերէր զնս բանիւք և արդեամբք . և ողջացուցանէր զամենեսին . և գործակից նորա քս էր յամի . և բազումք 'ի բժշկաց նախանձէին ընդ նմա ։

Յաւուր միում 'ի ժողովել ամ բժշկացն 'ի միասին՝ մերձ գտաւ կոյրն , որ 'ի պանտալէոնէ բժշկեցաւն . և տեսեալ զնա՝ սկսան ասել ցմիմեանս . ո՞չ այս այն կոյր է՝ զոր մեք ոչ կարացաք բժշկել . արդ ո՞ իցէ արդեօք՝ որ բժշկեաց զդա ։ Եւ կոչեցեալ զկոյրն հարցանէին . ո՞վ բժշկեաց զքեզ . և նա ասէ . պանտալէոն որդի եւստորգի ։ Յայնժամ այլ բժիշկքն ասեն ցեփրոսինոս . ո՞չ քո աշակերտ է պանտալէոն . արդարև մեծի բժշկապետի արժանաւոր աշակերտ է նա . զայս նք անգիտութբ զասկղեպեայ չայ ասէին . այլ զճշմարիտն վկայէին ակամայ վն քի .

բայց յօրէ յայնմանէ խեռայլին է պանտա-
լէոն, և կամէին պատճառս ինչ գտանել 'ի
նմա ։ Եւ երբև լուան և տեսին, զի մտանէ
'ի բանտս, և դարմանէ զխոստովանօղս,
մատնեցին զնա Թագաւորին, և ասեն. ա-
ւանիկ պանտալէոն շրջի և բժշկէ զանար-
գիչս ածոց մերոց՝ կամելով է նն լինել. արդ
եթէ ոչ արագ կարճես զնա, զբաղումս ար-
գելու 'ի զոհելոյ, և զբժշկութի ասկղեպեայ
'ի քս դարձուցանէ. պատմեցին նմա և զանցս
կուրին, որ խոստովանէր զինքն բժշկեալ ան-
ուամբն քսի 'ի պանտալէոնէ ։

Հրամայեաց Թգրն կոչել զկոյրն բժշկեալ.
եհարց զնա և ասէ. այր դու որպէս բժշկեցար
զքեզ պանտալէոն. և նա ասէ. կարդացեալ
նորա զքս՝ կնքեաց զաչս իմ, և նոյնժամայն
տեսի ։ Ասէ Թագաւորն. դու զի՞ ասես վս
քո. ածոցն զօրութբ բժշկեցար, եթէ քսի
անուամբն ։ Եւ բժշկեալն ասէ ցԹագաւորն.
թո՛ղ վկայեսցեն դոքա ինքեանք բժիշկքդ,
որ շատ մնավաստակք եղեն. զինչս իմ զամ
առին, և ոչինչ կարացին օգնել ինձ. այլև
փոքր մի ձաձանչ լուսոյ կայր, և զայն ևս
արգելին յինէն ։ Ասէ Թգրն. ասա ինձ,
ո՞վ է մեծ. ասկղեպիոս՝ զոր բազումք պաշ-
տեն, եթէ քս՝ զոր պանտալէոն միայն ։ Եւ
նա ասէ. քս՝ զոր պանտալէոն կարդաց, և
լոյս շնորհեաց ինձ. ուր ասկղեպեայ պաշ-
տօնեայք ոչ կարացին զիս բժշկել ։

Բարկացաւ Թգրն, և ասէ ցնա. 'ի բաց լեր
այր դու, և մի՛ փոխելանար՝ անուանելով

զՔս․ Քզի աչքն մեր շնորհեցին քեզ զլոյսդ։ Եւ բժշկեալն ասէ համարձակ․ դու մի՛ փոխելանար․ Քս է՝ որ շնորհեաց ինձ կրկնակի լոյս, բանալով զաչս իմ ՚ի ձեռն ծառային իւրոյ պանտալէոնի, և լուսաւորելով զմիտս իմ նորոգութբ հոգւոյն սբյ․ քանզի աչք քո կոյրք են ո՛վ թգր, և ո՛չ կարեն այլոց լոյս տալ։ Եւ թգրն ասէ․ երդուեալ յածսն, որպ կարծեմ՝ արդա՛ր էին ամբաստանութիք բժշկացն․ և նոյնժամայն հրամայեաց տանել զերանելի կոյրն և գլխատել, ասելով, եթէ կեայ դա, զբազումս օտարացուցանէ յածոցն։ Զայն լուեալ պանտալէոնի՝ գոհացաւ զԱյ․ և առեալ ինչս սպանողացն՝ ետու զմարմին վկային, և թաղեաց առ հօր իւրում։

Յետ այսորիկ հրաման ետ մաքսիմիանոս բերել առ ինքն զպանտալէոն․ և նա յերթալն ասէր զսաղմոսն․ Ած օրհնութե իմոյ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի՝ բերան նենգաւորի բացաւ ՚ի վր իմ․ և եմուտ եկաց առաջի թագաւորին․ այլ աչք նր ամբարձեալ յերկինս։ Ասէ ցնա մաքսիմիանոս․ ասա՛ ինձ պա՛նտալէոն, եթէ ճշմարիտ է՝ զոր լուայ վս քո․ ո՞չ ես պատուէր ետու վժպին քում, զի հոգաբարձութբ ուսուսցէ զքեզ, կամեցեալ ունել առ իս վս վայելչութե անձին քո։ Եւ պանտալէոն ասէ․ արդ զի՞նչ ապաքէն իցէ ա՛րքայ, զոր լուարն վս իմ։ Թագաւորն ասէ․ զոր լուայ զքէն՝ ո՛չ հաւատայի․ զի կարէ համբաւ սուտ լինել․ լուայ զքէն, եթէ

զոր

զորս մեքն տանջեմք և հալածեմք , վն զի
ոչ հաւանին ածոցն զոհել , դու շրջիս բժըշ-
կես զնս , և կերակուր ես տաս նց ․ և պատ-
ուիրես ած անուանել զքս , և զդիս մեր ա-
նարգել ։

Յայնժամ պանտալէոն լցեալ հոգւով սբվ՝
ետ պխնի , և ասէ ․ Թագաւոր՝ գրեալ այս-
պէս է , եթէ ածք՝ որ զերկինս և զերկիր
ոչ արարին , կորիցեն ․ նոյնպէս և չէն ածք՝
որ զմեռեալս ոչ յարուցանեն , և կուրաց լոյս
ոչ շնորհեն , և հիւանդ զոհն ՚ի մահիճս ոչ
բժշկեն ․ և արդ հաւատայցե՞մք արդեօք նց ․
մի խաբիր ով արքայ ։ Եւ թգրն ասէ ցնա ․
իսկ զոր քրիստոնեայքն պաշտեն , զայդ ամ
առնէ՞ ։ Պանտալէոն ասէ ․ և կարէ իսկ քաջ ․
քս զամ ինչ արար և առնէ ․ և եթէ կամիս
զփորձ առնուլ արքայ , հրամայեա բերել
անդամալոյծ մի ՚ի քաղաքէս ․ և զոր կամիս
՚ի պաշտօնէից քոց բեր , զի կարդասցէ ՚ի վր
նր յանուն ածոցդ ձերոց ․ և ես կարդացից
զանուն քսի այ իմոյ ․ և դու տես , թէ յո-
րո՞յ անուն բժշկի լուծեալն ․ և ծանիր թէ
յո՞ պարտ է հաւատալ ։

Հաճոյ թուեցաւ թագաւորին ․ հրաման ետ
և բերին լուծեալ մի ՚ի փողոցէն , և եդին
առաջի դագաղովք ․ կոչեցին և զբազմութի
քրմաց ․ և ասէ թագաւորն ցպանտալէոն ․
ածովքն , զի բարիոք ասացեր ․ եղիցի այդ-
պէս՝ ոպ դու ասացեր ։ Յայնժամ ըն ակնար-
կելոյ արքային քաջալերեցին քուրմքն զմի-
մեանս հանդերձ իմաստասիրօքն ՚ի սնոտի

յոյսն իւրեանց . ոմն 'ի նոցանէն կարդայր զասկղեպիոս , ոմն զարամազդ . ոմն զաստղիկ , և ոմն զհերակղէս . և այլք զայլ ածս : Իսկ պանտալէոն կայր և հայէր 'ի սնափառտութիւնս նց , և ժպտէր զնոքօք և արհամարհէր . զի էին նմ կարդացմունք նց ընդվայր :

Թագաւորն ասէ . արդ արասցէ և պանտալէոն զիւր կարդացումն : Իսկ սրբյն հայեցեալ յերկինս՝ ասէ . տր լուր աղօթից իմոց , և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ . մի դարձուցանէր զերեսս քո յինէն . յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ . և ցոյց չարախորհուրդ մտացն՝ որոց ոչն ճանաչեն զքեզ , եթէ դու ես՝ որ բժշկես զյուսացեալսն 'ի քեզ : Իսկ կալեալ զձեռանէ անդամալուծին՝ յարոյց 'ի վեր , և ասէ . յանուն յի քի եղիջիր առողջ յորէս յայսմանէ : Իսկ վաղվաղակի յարեաւ հիւանդն , և գնաց 'ի տուն իւր ուրախութբ՝ օրհնելով զած քրիստոնէից . և բազումք հաւատացին 'ի տր յաւուր յայնմիկ՝ հեռացեալք 'ի սնոտի պաշտամանց իւրեանց :

Իսկ քուրմքն հանդերձ բժշկօքն կրճտէին զատամունս իւրեանց , և ասէին ցթգրն . եթէ արդարև պանտալէոն ապրի , լուծանէ զզօրութիւն ածոցն . վս զի զամենեսեան հեռացուցանէ յերկրպագութէ նց . արդ մի այսուհետև հաւանիր նմա , քանզի անդամալոյծն զօրութբ ածոցն հաստատեցաւ : Իսկ թգրն 'ի բանս նց եղեալ՝ ասէ ցպանտալէոն .

հա-

հաւանեա՛մ ինձ , և զոհեա՛մ դիցն . ապա թէ ոչ՝ չիցէ՞ք լուեալ , եթէ քանի՜ք մեռան՝ որ ոչն հնազանդեցան ինձ ։ Պանտալէոն ասէ . որք վն քրի մեռան , կեան զյաւիտենականն կեանս ։ Ասէ թգրն . շատ է քեզ Պանտալէոն անուանել ցայս վայր զքոն քո . խնայեա՛ 'ի մանկութի քո , և մատի՛ր զոհեա՛ . քանզի տեսանեմ բազումև մեծամեծ տանջանս քեզ պատրաստեալ , եթէ 'ի դմին անհաւանութե կայցես ։

Պխնի ետ վկայն քի . զչարաչար տանջանսդ՝ որպէս կամիս՝ մատո՛ ինձ . քանզի ես պատրաստ եմ ամի համբերել վն քին իմոյ ։ Մաքսիմիանոս ասէ . գիտացէ՞ր զինչ անցք անցին ը ծերն անթիւմս յու քան զաւուրս զայսոսիկ ։ Պանտալէոն ասէ . և դու գիտացեր՝ թէ որպէս համբերեաց վն այ ծերն այն , և չգայթակղեցաւ 'ի բարեպաշտութե անտի , այլ ամ յօժարութե մատնեաց հատողին զդողդոջուն զմարմինն իւր . եւս առաւել մեք՝ որ 'ի տիս մանկութե եմք , պարտիմք իբրև զօրաւորս հաւատովք յառաջ մատչել . զի արժանի լիցուք նմանոց պսակին ։ Տեսեալ թգրին զանշարժ հաւատսն նր՝ հրամայեաց կապել և բերել զնա , և ջահս լուցանել 'ի ներքոյ կողից նր ։ Իսկ երանելին յերկինս հայեցեալ դիւրաւ համբերէր տանջանացն , և ասէր . տր յս քս որպս 'ի տկար մերձեցիր առ իս , և 'ի տանջանս մօտ լեր առ իս , և տուր ինձ 'ի պատերազմելս կատարեալ զօրութի ։ Յայնժամ երևեալ նմա

քս 'ի նմանութի ծերոյն երմողեայ՝ ասէ ցնա ․ մի՛ զարհուրիր և մի՛ զանգիտեր պատերազմել սիրելի՛ իմ ․ զի ես ը քեզ եմ յամի ։ Եւ անդէն վաղվաղակի քաջալերեցաւ երանելին ․ և կապանքն լուծան , և հուրն շիջաւ ․ և դահիճքն վաստակեցան ։

Իսկ մաքսիմիանոս իբրև ետես զեղեալսն , ասէ ․ զի՞նչպիսի է արուեստ մոգութեդ քո , ասա՛ ինձ ․ զի զջահսն խափանեցեր , և զտանջանս 'ի տկարութի դարձուցեր ։ Սուրբն ասէ ․ իմ զօրութի քս է , որ զղամբարսն շիջոյց , և զքեզ և զարբանեակս քո յամօթ արար ։ Մաքսիմիանոս ասէ ․ մեծամեծ տանջանս ածեմ 'ի վր քո , և ապա 'ի հարկէ զոհես ։ Պանտալէոն ասէ ․ եթէ մեծամեծ չարչարանս ածես 'ի վր իմ , և քս այլ ևս մեծամեծ զօրութի տայ ինձ ։

Եւ զայն լուեալ թգրին՝ հրամայեաց բերել տապակ երկաթի մեծ , և հալեալ կապար՝ արկանել 'ի ներքս զարդարն ։ Եւ յեռալ տապակին իբրև եկին դահիճք մերկացուցանել զնա և արկանել 'ի ներքս , հայեցեալ նր յերկինս՝ ասէ ․ լո՛ւր տր աղօթից իմոց յաղաղակել իմում առ քեզ , յերկնուղէ թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ ․ ծածկեա՛ զիս 'ի ժողովոց չարաց՝ որ գործեն զանօրէնութի ։ Եւ յաղօթել նր զայս՝ երևեցաւ նմ հրեշտակ 'ի դիմաց փրկչին , և կալեալ զձեռանէ նորա՝ եմուտ ը նմա 'ի տապակն ․ և վաղվաղակի հուրն շիջաւ , և տապակն ցրտացաւ ․ և որք վկայն սաղմոսէր ․ ես առ ած աղաղա-

կե-

կեցի , և տր լուա ինձ յերեկոյս , 'ի վաղոր-դայն , 'ի հասարակ աւուր ․ պատմեցի և ա-սացի , և լուիցես ձայնի իմում ։

Իսկ որ մերձն կային , զարմանային ըն տե-սիլն ըն այն ․ և Թգրն ասէր ցմերձաւորսն իւր ․ զի՞նչ արդեօք իցէ այս , զի կախարդն այն զհուրն շիջոյց , և զկապարն ցրտացոյց ․ և արդ որո՞վք տանջանօք յաղթեսցուք նմա ։ Եւ մտերիմքն ասեն ․ 'ի խորս ծովու ընկեա զդա ․ մի թէ կարէ՞ և զծով կախարդել ։ Յայնժամ ըս հրամանի Թգրին առեալ զնա սպասաւորացն՝ արկին 'ի մակոյկն ․ և վէմ մի մեծ կապեցին 'ի պարանոց նր , և տարան 'ի խորս իբրև ասպարէզս երեսուն , և ընկեցին յանդունդս ․ եկեալ էր և ինքնին մաքսիմիա-նոս յեզր ծովուն՝ տեսանել զկատարածն ։ Եւ ահա երևեալ քս 'ի կերպարանս ծերոյն Երմողեայ՝ սաստեաց ծովուն ․ և ծովն յեր-կիւղէն նր սարսեալ՝ բառնայր զսրբն 'ի վր ալեացն , և վէմն ոպ տերև լուղեալ գայր 'ի վր ջրոյն ։ Իսկ սրբն փառաւորէր զած և ա-սէր ․ գոհացայց զքէն տր բոլորով սրտիւ ի-մով , և պատմեցից զամ սքանչելիս քո , և որ զկնի այսորիկ ․ և այնպէս սաղմոսելով եկն ել 'ի ցամաքն առաջնորդութբն քսի ։

Ասէ Թգրն ․ կախարդութի քո և զծովն խա-փանեաց ։ Պանտալէոն ասէ ․ ո՛չ ես , այլ՝ որ ըն իս է տր քս , զոր դու ոչ ես արժանի տե-սանել զնա ։ Յետ այսորիկ հրամայեաց Թա-գաւորն բերել յամ ազգէ գազանաց , զի նոքօք մաշեսցէ զարդարն ․ և ասէ ցնա ․ տե-

սանե՛ս , զի պատրաստեալ են գոքա ծախել զքեզ , եթէ ոչ զոհես ծոցն . և ես ողորմիմ գեղեցիկ հասակերդ քո , զի մի՛ չարաչար մեռանիցիս , ո̃րպ յառաջ քան զքեզ ոմանք յանզգամաց՝ ոչ միայն յարանց , այլև 'ի կանանց : Պխնի ես պանտալեոն . այսու ա̃մբ , ո՛վ մոլորութե̃ լի , որով կամիս ինձ ահ արկանել , հզօրագոյն ևս արարեր զիս . զի թէ և կանայքն զա̃մ մեքենայսն քո լուծին ա̃վ , ո̃րչափ պարտ է ևս առաւել ինձ , զի այնպիսի պսակի արժանի եղէց . և ոչ երկեայց ա̃վ իմով և 'ի գազանաց . զի որ զա̃մ սքանչելիսն արար և յա̃մէ փրկեաց զիս , նոյն և զվայրենի գազանսն զգօնացուսցէ . իսկ դու քոյին մոլորութե̃դ տանջեալ վախճանեսցիս :

Նու եղև ը̃ բանի ո̃րչյն . զի յասպարիզի անդ դարձեալ երևեցաւ նմա քս̃ կերպարանօք երմողէի ծերոյն , և զօրացոյց . և գազանքն՝ որք արձակեցան , շուրջ պատեալ զերանելեաւն՝ մարգասիրագոյն ք̃ զմարդիկ գտանէին . առիւծքն թաթի̃ւն զերեսսն ջնջէին , և ինձքն զոտսն լիզուին . և այլքն մնջելով և մռնչելով զմիմեանս կոտորէին , և 'ի բաց գնային : Յայնժամ ա̃մ ժողովրդն գոչեաց ընդդէմ թագաւորին . մե՛ծ է ա̃ծն քրիստոնէից , արձակեա՛ զարդարդ : Ընդ որ սրտմտեալ և գազանացեալ թ̃գրն՝ սպան յաւուր յայնմիկ 'ի գոչողացն իբրև հազար այր . և եարկ զմարմինս նց̃ գազանաց . այլ ոչ մերձեցան 'ի նս̃ . վ̃ոյ և զգազանսն հրամայէր կոտորել : Իսկ արդարն ասէր . փառք քեզ յս̃ քս̃ ,

քն, մեծ են սքանչելիք քո. զի ոչ միայն ազգ-
մարդկան վն սիրոյդ քո մեռան, այլև գա-
զանք վայրի մատուցան 'ի սպանդ վն քո,
չառեալ յանձն մերձենալ 'ի խոստովանողս
անուանդ քում բարձրելոյ:

Իսկ Թագաւորն ետ արկանել զդիակունս
'ի խորխորատ մի մեծ. և զպանտալէոն բան-
տարգել արարեալ՝ ասէ ցխորհրդակիցսն.
զինչ առնեմք զմանուկս զայս, զի կախար-
դութեամբն իւրով զբզմս օտարացոյց յածոյն.
և իւ շրջեսցուք զմիտս ամբոխին՝ որք պատ-
րեցան 'ի մոլորութէ նր: Ապա ը խորհրդոյ
նց ետ կազմել անիւ մեքենաւոր, յորմէ ան-
հնար էր մարդոյ ապրել. և ասէ. քարոզե-
ցէք 'ի քաղաքիդ, զի ժողովեսցին և տեսցեն
ամենեքին զկորուստ պանտալէոնի. և որք
'ի քն հաւատացին, զղջասցին և դարձցին
յածն մեր: Եւ յաւուր ժամադրութեն հրա-
ման ետ հանել զպանտալէոն 'ի բանտէ, և
ածել յատեան. Իսկ զինուորն քի գայր և
սաղմոսէր. խոնարհեցո տր զունկն քո, և
լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես. պա-
հեա զանձն իմ տր իմ, փրկեա զծառայս
քո ած իմ, որ 'ի քեզ յուսայ. և որ 'ի կար-
գին:

Եւ 'ի կատարել սրբյն զաղօթսն՝ առեալ կա-
պեցին զնա 'ի վր անուոյն, և սկսան հոլո-
վել զնա ը զառ 'ի վայրն. և անդէն վաղվա-
ղակի կապանքն խզեցան, և անիւն լուծաւ.
և պահեցաւ սրբն ամենևին անվնաս՝ օգնա-
կանութբ քի. և անիւն հոլովեալ սպան 'ի
հե-

հեթանոսացն և 'ի սպասաւորաց իբրև հինգ հարիւր այր ։ Իսկ եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենեցուն. և թագաւորն ինքնին իսկ զարհուրեալ՝ կոչեաց զսուրբն և ասէ. մինչև ցե՞րբ առնես զայդ. զոմանս կենդանւոյն յԱստուծոյն հեռացուցեր, և զոմանս մահուամբ սատակեցեր ։ Յայնժամ երանելին յանդիմանեաց զխստասրտութիւն բռնաւորին, և ասէ. ո՛վ լիրբ և անամօթ որդի սատանայի, բարիոք ուրեմն ասաց վասն ձեր մարգարէն, թէ դարձցին ցաւք 'ի գլուխ նոցա, և 'ի վերայ գագաթան նոցա անօրէնութիւնք նոցա իջցեն ։

Մաքսիմիանոս ասաց. ո՞ է՝ որ ուսոյց քեզ զայդ ամենայն ։ Պանտալէոն ասաց. ծնօղն իմ է հոգւոյ՝ տէրն իմ Երմողէոս երէց ։ Ասէ թագաւորն նենգաւ. կարե՞մք մեք տեսանել զնա. զի և ես ուսայց 'ի նմանէ ։ Իսկ Պանտալէոն ոչ ծածկեաց զնա, զի գիտէր զյօժարութիւն նորա 'ի հանդէս վկայութեան. միանգամայն և ակնունէր՝ թէ շահեսցի 'ի նմէ թագաւորն. վասնորոյ ասէ. եթէ հրամայես ինձ, ես երթամ ածեմ զնա առ քեզ. և թագաւորն ասէ. երթ հանդերձ պահապանօք ։ Իսկ երթեալ Պանտալէոն՝ եմուտ 'ի տնիկն, ուր թաքուցեալ էր ծերն. և տեսեալ զնա՝ ասէ. տէր իմ հայր, կոչէ զքեզ թագաւորն. և ծերն ասէ. բարիո՛ք եկիր որդեակ, քանզի յայսմ գիշերի երևեալ ինձ Քրիստոս՝ ասէ. Երմողէ՛ ունիս և դու այժմ պատերազմել, որպէս և ծառայն իմ Պանտալէոն. և յարեաւ գնաց ընդ նմա ուրախութեամբ մեծաւ ։

Իբրև

Իբրև ետես զնա Թագաւորն, ասէ ցնա. զի՞նչ անուն է քո. և ծերն ասէ. ծրունական անուն իմ Քրիստոնեայ է. այլ 'ի ծնողաց իմոց Երմողէոս կոչիմ։ Թագաւորն ասէ. ունի՞ս դու այլ ընկերս Ը քեզ. և ծերն ասէ. են այլ ևս երկու։ Թագաւորն ասէ. զի՞նչ են անուանք նց. ծերն ասէ. Երմիպպոս և Երմոկրատէս քրիստոնեայք իբրև զմեզ։ Թագաւորն ասէ. կոչեսցի՛ն և նք. և իբրև մուծին զնս, ասէ ցնս. դո՞ւք էք՝ որ զպանտալէոն որոշեցիք յածոցն ։ Պնի ետուն նոքա և ասեն. զարժանին իւր կոչէ առ ինքն քս ։ Թագաւորն ասէ. հաւանեցուցէ՛ք զնա այսուհետև զոհել ածոցն, և լինիջիք ինձ սիրելիք և մտակայք անձին իմոյ ։ Նոքա ասեն. մեք աղաչեմք զածն մեր երկնաւոր, զի նմ միայնոյ լիցուք սիրելիք և մերձաւորք ։

Զայս ասացեալ՝ կացին չորեքեանն միաբան յաղօթս առ Տր, և ասէին. Տր ած ցոյց ըզզօրութի ածութեդ քո ժողովելոցս յանուն քո ։ Եւ երևեցաւ նց քս. և անդէն փաղփաղակի շարժեցաւ տեղին, ուր կային յաղօթս ։ Ասէ Թագաւորն. ահա տեսանէ՞ք, զի և զերկիր շարժեն ածքդ իմ։ Պնի ետ նքն պանտալէոն, և ասէ. եթէ զերկիր շարժեն, և ինքեանք ըէ՞ր կործանեցան ։ Զայս բան եկն ոմն 'ի մեհենաց Թագաւորին, գոյժ արկանէր և ասէր. ա՛րքայ ածքն քո անկեալ փշրեցան ։

Զայս լուեալ Թագաւորին՝ խռովեցաւ յոյժ, և ասէ. երդուեալ յարևն իմ, եթէ ոչ ա-

րագ

բաց կորուսանեմ զդոսա, այլ ևս խռովութի մեծ առնեն ինձ. տեսանէ՞ք զմոգսդ, որպէս չորեքեանն միաբանեալ իշխեցին և յածսն ձեռն արկանել ։ Հրաման տայր զպանտալէոն 'ի բանտ արկանել, և զերեսին վկայսն բազում տանջանօք չարչարել և գլխատել ։ Իսկ մինչդեռ յաղօթս կային երանելիքն, բարձին դահիճքն զգլուխս նց, զոր երիցուն երմողեայ ծերունւոյ, և զերկուց եղբարց երմիպպոսի և երմոկրատեայ. զորս բարձեալ քրիստոնէից' թաղեցին ։

Յետ այսորիկ կոչեաց մաքսիմիանոս զպանտալէոն, և ասէ ցնա. մի՛ կարծեր' եթէ փըրկել ոք կարէ զքեզ 'ի ձեռաց իմոց, բայց եթէ զոհեսցես և կեցցես ։ Պանտալէոն ասէ. չէ՛ պիտոյ պնդել քեզ վն բանիդ այդորիկ ։ Ասէ ցնա թգրն. ահա վկայքն քո երմողէոս, և երմոկրատէս և երմիպպոս հաւանեալ ինձ' զոհեցին կռոցն. և են զառաջաւորք յարքունիս ։ Պանտալէոն ասէ. հրամայեա՛ թագաւոր, զի տեսից զնս, և ը՞նս եղէց և ես յաւիտեանս ժամանակաց 'ի նոյն արքունիս ։ Իսկ թագաւորն պատճառս եդեալ ասէր. պէտք ինձ եղեն 'ի քաղաք մի, անդ արձակեցի զնս ։ Պանտալէոն ասէ. բարի՛ք պսացեր ո՛վ անամօթ. կամէիր ստել, և զարդարն ասացեր. քանզի են նք յերկինս 'ի քաղաքին քի և յերկնաւոր արքունիսն ։

Իսկ թագաւորն բարկացեալ 'ի վր սորա, ետ գան հարկանել զնա յոյժ, և տանել գլխատել. և երթայր ոքն սաղմոսելով զուարթու

թութք , բազում անգամ մարտեան ընդ իս
'ի մանկութենէ իմմէ , և ինձ ոչ յաղթեցին .
զթիկունս իմ հարին մեղաւորք , և երկայ-
նեցին զանօրէնութիւն իւրեանց . Տր արդար
խորտակէ զուլն մեղաւորաց ։ Եւ տարեալ
զնա դահճաց արտաքոյ քաղաքի Նիկոմիդա-
ւոց է արեւմուտս կոյս իբրև մղոն մի՝ կապե-
ցին զնա է ծառոյ միոյ թզենւոյ . և մատու-
ցեալ մի ոմն 'ի դահճացն՝ եհար զնա սուսե-
րաւ . և եղև երկաթն իբրև զմոմ կակուղ ,
և ծալեցաւ յետս , և ոչ մերձեցաւ յարդարն ։
Զահի հարան դահճքն , և ասեն . մեծ է
զօրութիւն քրի . և անկեալ յոտս սբյն՝ աղա-
չէին աղօթս առնել վն նց . զի և մեք հաւա-
տասցուք ասեն յածն քո ։
Յայնժամ ամբարձ սբն զաչս իւր յերկինս ,
և ասէ . Տր ած իմ կատարեա զցանկութիս
իմ 'ի տեղւոջս յայսմիկ . և արանցս այսոցիկ
շնորհեա զթողութի մեղաց , և տուր սոցա
մասն յարքայութնէ երկնից . զի 'ի քեզ Տր ա-
պաւինեցան ։ Զայն եղև նմա յերկնից , և
ասէ . պանտալէոն Ճշմարիտ ծառայ իմ , ա-
հա կատարեցաւ ցանկութի քո , և բացան քեզ
դրունք երկնից . արդ ահա այսուհետև մի
կոչեսցի անուն քո պանտալէոն , այլ՝ պան-
տէլէիմոն ( այս է ամենողորմ ) . զի բազմաց
ողորմեցար և ողորմեսցիս դու , և ապաւէն
եղիցիս 'ի նեղութնէ նց . և նշխարք ոսկերաց
քոց բժշկեսցեն զամ ախտաժէտս ։
Զայս լուեալ երանելւոյն՝ կարդաց զարսն ,
և ասաց կատարել զհրամանն արքունի . այլ
նք

նք ոչ կամեցան՝ ձեռն արկանել 'ի նա ։ Ասէ ցնս վկայն քո . եթէ ոչ կատարէք զհրամանս թագաւորին , ոչ ունիք ընդ իս բաժին ։ Եւ նց համբուրեալ զնմ մարմին նր՝ ապա հատին զգլուխ նրն ։ Եւ ահա զոյգ ընդ արեան , կմ փոխանակ արեան՝ կաթն բղխեաց . և տեսաւ մարմին երանելւոյն սպիտակ իբրև զձիւն . և տունկ ձիթենւոյն լցաւ պտղով ։ Եւ տեսեալ բզմութի քաղաքին նիկոմիդեայ զմեծամեծ սքանչելիսն՝ ետուն փառս այ , և բազումք հաւատացին 'ի տր յաւուր յայնմիկ ։ Եւ լուեալ թագաւորին զայս ամ՝ հրամայեաց հատանել զծառն , և այրել զմարմին նրն . բայց զպատուական ոսկերս նորա առին քրիստոնեայք գործակցութբ դահճաց , և ամփոփեցին յանքոյթ վայրի մօտ 'ի տեղի կատարմանն 'ի կալուածս ադամանտիոսի սքողաստիկոսի , ուր և զկաթնախառն արիւն նրն հաւաքեցին ։ Արդ կատարեցաւ նրն պանտալէոն , որ և պանտելէիմոն հրեշտակատիպ երիտասարդն յամի տն իբր 300 , կամ 303 . յամսեանն յուլիսի՝ որ օր քսան և եօթն էր ամսոյն . որ 'ի Ճառընտիրս ինչ գրի նաւասարդի ի , կմ է ։ * Եւ սննդակիցք նրն պանդալէիմոնի լաւրենտիոս և բասոս և պրոմիլինոս զկնի երթային նահատակութե նր յառաջնմէ , մինչև կատարեցաւ նրն ( ասէ յայսմաւուրքն մեր ) . և գրեցին նք զպատմութի նրյ վկային պանդալէիմոնի ստոյգ և հաստատ ։

## Վկայարանք, նշխարք, և սքանչելիք սրբոյն պանտալէոնին:

Թէոդորետոս 'ի ճառն Է. յաղագս վկայից՝ խօսելով, թէ որպէս առ մեծն կոստանդիանոսիւ և զկնի՝ բազումք 'ի մեհենից կռոց սրբեցան 'ի տաճար սրբոց, ասէ առ հեթանոսս. * Տէր Աստուած մեր զմեռեալս իւր փոխանակ դից ձերոց 'ի տաճարս ձգեաց. զդիս ունայնացոյց և չքացոյց, և զսուրբս մեծարեալ մեծացոյց. քանզի փոխանակ պանդիից և դիասից և դիոնիսաց և այլոց տօնից ձերոց՝ կատարին տօնախմբութիւնք պետրոսի և պօղոսի և թովմայի և սարգսի և մարկեղոսի և ղևոնդի և պանտալէիմոնի և անտոնինոսի և մաւրիկիոսի և այլոց վկայից ||: Եւ ընդ այսմ ասեն այլք 'ի մատենագրաց, թէ կոստանդիանոս շինեաց վկայարան ոչ միայն 'ի նիկոմիդիա, այլև 'ի կոստանդինուպօլիս, և 'ի սեբաստիա հայոց, և յանապատին յորդանանու յանուն սրբոյն պանտալէիմոնի: Նոյնպէս և այլ կայսերք, մանաւանդ մեծն յուստինիանոս, և թագուհիք և իշխանք 'ի զանազան դարս նորոգեցին կամ շինեցին այլ և այլ տաճարս յանուն նորին սրբոյ 'ի կոստանդինուպօլիս և արտաքոյ:

Արդ 'ի թագաւորեալ քաղաքի 'ի գլխաւոր տաճարի սրբոյն պանտալէիմոնի պահեալ կայր ԺԲ դարս բազումս շիշ մի կաթնորակ արեամբ,

կամ

կմ կաթնախառն արիւն սրբոյն . * որ և մինչև յայսօր երևի , և պարգևէ մերձեցելոցն հաւատով զբժշկութի‖ , ասէ բասիլեան յայսմաւուրքն յունաց՝ գրեալ հրամանաւ վասլի կայսեր արշակունւոյ 'ի Թ դարու :

Գրէ և միայնակեաց ոմն արևմտեան 'ի կողմնից ագրիպպինայ 'ի վանաց սրբոյն պանտալէոնի 'ի ԺԶ դարու , թէ տակաւին յաւուրս իւր կայր այն շիշ կաթին և արեան 'ի կոստանդինուպօլիս՝ երկգոյնի հիւթով սպիտակ և կարմիր . զոր ամ ըստ ամ հանէին 'ի տօնի սրբոյն 'ի տես ժողովրդեան . և ասիւր՝ թէ երբեմն արիւնն 'ի վեր երևէր , և կաթն 'ի խոնարհ . և երբեմն կաթն 'ի վեր , և արիւնն 'ի վայր : Իսկ 'ի յետագայ դարս յիշին զանազան շիշք արեան սրբոյն պանտալէոնի յարևմուտս , յայտ է թէ 'ի պէսպէս փոքրիկ շիշս բաժանեալ :

Նաև առաւել բազմապատիկ մասունք նշխարաց սրբոյն սփռեցան յարևելից յարևմուտս 'ի զանազան գաւառս և 'ի քաղաքս . զորոց բազումք են բանք առ մատենագիրս . որ է և բազուկ մի սրբոյն 'ի նէապօլիս 'ի վանս սրբոյն գրիգորի հայաստանեայց լուսաւորչի . և այլ երևելի մասն 'ի պորտուգա քաղաք լիւսիտանիոյ՝ յեկեղեցւոջ սրբոյն պետրոսի 'ի փողոցն կոչեցեալ հայոց Ճանապարհ . թող զորս 'ի հռովմ , 'ի կողոնիա , 'ի լուգդոն գաղղիացւոց . Եւն : Որ թողից զայն , զի կան և այլ երկու համանուն սուրբք՝ պանտալէիմոն վկայ վիրգինիացի , և պանտալէոն միայնակեաց . ո-

 րոց

րոց նշխարք մարթին շփոթիլ ընդ պանտալէո-
նի բժշկի ․ զորմէ մեր բանքս են ։

Իսկ յաղագս սքանչելեաց՝ զոր գործեաց Աստուած 'ի ձեռն նորին պանտալէոնի բժշկի, եթէ 'ի ձեռն նշխարաց նորա, և եթէ լոկ կարդալով զանունն, ո՞ր բան բաւական իցէ ասել․ շատ է այն՝ զի արդեամբք հաւատարմացեալ 'ի գործոց, կոչի նորա վկայս առ յոյնս Թաւմատուրգոս և Իամատիկօս․ այսինքն սքանչելագործ և ողջացուցիչ ։ Մի այն քաղեցից զքանի մի հրաշս, զորս ստուգագոյն տեղեկութեամբ պատմէ նախանշանակեալ կողոնիացի միայնակեացն 'ի ժէ դարու ։

Ռոլդոս արքայ ռուսաց, որ տակաւին կենդանի է ասէ 'ի գրել մեր զայսոսիկ, ելեալ երբեմն յորս երէոց, և զատուցեալ առ փոքր մի 'ի ծառայից իւրոց 'ի ներքսակողմն անտառին, պատահեցաւ արջոյ․ որոյ յարձակեալ 'ի վերայ թագաւորին կատաղութեամբ՝ պատառեաց զորովայն նորա, մինչև վայթել զաղիս նորա 'ի դուրս․ լուեալ իւրոցն զձայն գոչման նորա՝ հասին 'ի վերայ, և սպանին զարջն՝ բարձին զթագաւորն իւրեանց կիսամահ, և բերեալ յապարանս՝ եդին 'ի մահիճս իբրև զմեռեալ ։ Իսկ էր մայրն արքայի գիտող կին բարեպաշտ՝ գրեալ քոյր միաբանութեան վանաց նորին պանտալէոնի․ սա յանձն արար զորդին՝ որ չէր ապրանաց, 'ի զօրաւոր բարեխօսութիւն նորին․ առաւել թախանձ արկանելով նմա տալ որդւոյն կեանս, զի մարթասցի կատարել զուխտ իւր յետ մահ․ յորմէ թերևս զուրկ մնայր յետ մա-

հու որդւոյն ։

Եւ եղև 'ի միում գիշերի՝ մինչդեռ անբարբառ և անզգայ անկեալ դնէր առոլգոս արքայ , եկն եկաց առ նմա երիտասարդ մի շնորհալի՝ քաղցր և զուա՛րթ . և ասէ . դիտեա՛ ո՛վ Թագաւոր , զի բժիշկ եմ ես , և անուն իմ պանտալէոն կոչի . և բնակեմ 'ի վանս կողոնիոյ . և այժմ եկի 'ի պէտս բժշկութե՟ քո . արդ յաւուր յայսմիկ հասցէ քեզ առողջութի՟ , և մահ ե՟ ցաւոց 'ի բաց փախիցէ 'ի քէն ։ Յայնժամ զօրացեալ արքայի բոլորովին , և իբրև 'ի քնոյ զարթուցեալ՝ ո՛չ զոք ետես , բայց միայն զտիկին մայր իւր գիտա . և պատմեաց նմա զտեսիլն ։ Իսկ նո՟ր լուեալ զանուն պանտալէոնի բժշկի՝ ասէ խնդալից արտասուօք . պանտալէոնն այն՝ զոր տեսեր որդեակ , ո՟րն իմ և պաշտպան իմ է . նա առողջացոյց զքեզ ։ Եւ որ զարմանալին է , 'ի լուսանալ առաւօտուն եկն ինքնին յարքունիս ո՟ն բժիշկ ծաղկահասակ՝ յար և նման երևեցելոյն 'ի տեսլեան , և դարմանեաց զարքայ . և այնպէս ստացեալ նո՟ր զկատարեալ առողջութի՟՝ յղեաց զմայր իւր յեկեղ՟մ 'ի կատարել զուխտն ։

Դարձեալ՝ կայր առ մեօք տիկին ո՟ն ազնուական և մեծատուն անգղիացի , որ յետ մեռանելոյ առն իւրոյ՝ եղև առն այլում , և այնչափ կողոպտեցաւ 'ի նմանէ , և մնաց Թափուր յա՟մ ընչից , մինչև սկսաւ ձեռագործով ապրիլ . բայց այրն ժանտ խանդացեալ ե՟ աջողաձեռնութի՟ նո՟՝ կտրատեաց դանակաւ

կաւ զմկանունս բազկաց նորա․ որով անպի-
տանացաւ տիկինն 'ի գործ, և ցաւագին էին
կեանք նորա ։ Եւ աՀա երևեցաւ նմա յա-
նուրջս երիտասարդ գեղեցիկ, որ պատմեաց
զանձնէն՝ թէ ես իսկն եմ պանտալէոն բժիշկ,
և շնորՀօքն քնի վկայ նր․ արդ ասէ՝ եթէ
կամ է քեզ գտանել զառողջութիւն քո, ուխտ
մի դիր այ անյեղլի․ և նա ուխտեաց Հրա-
ժարիլ 'ի մսոյ զամ աւուրս․ և առժամայն
զարթեաւ եգիտ զանձն ողջացեալ բոլորո-
վին, և յաջողակ 'ի գործ իբրև զառաջինն ։
Դէպ եղև նմա գնալ երբեմն 'ի տուն ազ-
գականաց իւրոյ․ ուր իբրև առաջի եդաւ
նմա խորտիկ, ոչ կամէր ուտել․ այլ իբրև
ստիպեցին զնա ճաշակել մս սիրոյ իւրեանց,
զիջաւ նց․ և աՀա 'ի յաջորդ գիշերի երևե-
ցաւ նմա նոյն տեսիլ երիտասարդի․ և յան-
դիմանեալ զնա վս անցանելոյ զուխտիւն՝
ասէ․ Հեռի է այսուՀետև 'ի քէն առողջու-
թին․ և այնպէս մնաց 'ի տկարութեն առաջ-
նում․ մինչև 'ի միտ առնուլ տեսողաց և լսո-
ղաց զծանրութին ուխտազանցութե ։

Որ յառաջ քան զաւուրս մեր ( ասէ նոյն
գրիչ ) այր ոմն կաղ յոտից, և լուծեալ յամ
անդամոց․ որ Հազիւ յեցեալ 'ի նեցուկս իւր
փայտեղէնս՝ սողապաճեմ սողէր․ զսա ածին
ազգականք իւր 'ի վանս սրբոյն պանտալէոնի 'ի
կողոնիա, զի թերևս գտցէ զբժշկութի․ և
Հանգուցին զնա եղբարք 'ի սենեկի միում
մօտ յեկեղեցւոյն․ և զարմանային ընդ փոյթ
աղօթից նր և պաՀոց և տքնութեց, որովք

հայցէր օգնութի՟ ՚ի ն՟րյն ջերմեռանդն հա-
ւատով։ Այլ քանզի վաղայարոյց լինէր այրն,
վաղագոյն բանային եղբարքն զդուրս տա-
ճարին, զի ը՟ փափաքանաց իւրոց կանխես-
ցէ յաղօթս։ Այլ եղեւ ՚ի միում յաւուրց գի-
շերախառն եկեալ ն՟ր, եւ գտեալ զդրունս
փակ, տքնէր արտաքոյ յաղօթս. եւ ահա ե-
հաս առնա ն՟րն պանտալէոն վայելուչ եւ փա-
ռացի տեսլեամբ երիտասարդի, եւ կորզեալ
՚ի ձեռաց ն՟ր զնեցուկն՝ յորս սովոր էր յե-
նուլ, ընկէց հեռագոյնս. եւ ինքն եղեւ աներ-
եւոյթ։ Այլ ՚ի գոչել առն մեծաձայն առ ահի,
եւ առ կորստեան պիտոյից, լուան եղբարք,
եւ եկեալ հարցանէին զպատճառն. եւ նա
պատմեաց զանցս իւր՝ զանգատ եդեալ, թէ
կորուսի զնեցուկն։ Իբրեւ սկսան ն՟ք այսր
անդր ընթանալ ՚ի խնդրել զնեցուկս նորա,
սկսաւ եւ այրն ինքնին վազվազել ը՟ ն՟ա. զի
գտաւ բոլորովիմբ ողջացեալ. եւ յայտնի եղեւ
ամենեցուն գեղեցիկ սքանչելիք ն՟րյն. եւ
փառս տային ա՟յ։ Այլ նա ինքն ողջացեալն
՚ի յիշատակ մեծի հրաշիցս՝ յօրինեաց իւրով
ձեռամբ զպատկեր իւր ՚ի մանրիկ քարանց ՚ի
յատակ եկեղեցւոյ ն՟րյն պանտալէոնի ՚ի մէջ
դասուն. եւ զնեցուկս իւր կախեաց առաջի
խորանի ն՟ր. եւ եկաց ՚ի ծառայութի՟ ն՟րյն եւ
եղբարցն ոչ սակաւ ժամանակս՝ փառաւորե-
լով զա՟ծ։

Որպէս պատմեն ասէ բազումք մինչեւ ցայ-
սօր, թ՟գրազն ոք սաքսոնիացի հարեալ յայ-
սոյն պղծոյ՝ ոչ գտանէր ուստեք բժշկութի.

լուեալ

լուեալ մերձաւորաց նորա զսքանչելի անուն սրբոյն Պանտալէոնի 'ի կողոմնիա, ածին զնա հաւատով անդր` կապեալ շղթայիւք 'ի սայլ մի . և եդեալ զնա առաջի սեղանոյն` աղաչեցին զմիաբանս վանացն` բերել և մերձեցուցանել 'ի դիւահարն զնշխարս սրբոյն Պանտալէոնի : Որպէս այն ինչ 'ի վայր առնուին զտապանակ նշխարացն, չհանդուրժեալ դիւին առաջի զօրութեան սրբոյն` ըլկեաց զայրն չարաչար յոյժ, և վերացուցեալ զնա 'ի բեմն սայլին հանդերձ` կործանեաց ընդ աշտիճանսն 'ի վայր, և ել 'ի նմանէ :

Յուսաք ասէ և յեղբօրէ ումեմնէ վանացն` որ կոչիւր Հեղմվարտեսհուսիմ 'ի սահմանս Սաքսոնիոյ, զի վանականք տեղւոյն յառաջ ժամանակաւ ընտանութիւն յոյժ ունելով ընդ միաբանս սրբոյն Պանտալէոնի, 'ի յիշատակ սիրոյ կամեցան և ինքեանք կատարել զտօնախմբութիւն նորին սրբոյ մեծահանդէս նուագերգութեամբք, վերածեալ զպատմութիւն վարուց նորա 'ի ձայն երգոց . և զի մի թուլասցին 'ի սովորութենէ անտի` սահման եդին առնել և ուրախութիւն ինչ 'ի նմին աւուր 'ի սփոփանս դպրաց առաւելագոյն կերակրովք քան զսովորական աւուրց : Յետ ժամանակի ինչ 'ի վերայ անցելոյ նոր առաջնորդ տեղւոյն անփոյթ եղև առնել զայն ուրախութիւն . և եղբարքն համբերեալ զերիս ամս` ապա 'ի չորրորդումն միաբանեցան չկատարել և զտօնն . վասնորոյ 'ի նախատօնակի սկսան ասել զայլ ժամերգութիւն երեկոյեան առանց տօնական կարգի .

և ահա մինչդեռ 'ի դասի կային, եղեն յանկարծակի փայլատակունք և որոտմունք, և շանթահարեալ պատառեցաւ մասն մի խորանին: Եւ 'ի սաստանիլ բոլորեցուն՝ 'ի միտս եկեալ դասապետին՝ փոխեաց զձայնն, և սկսաւ նուագել զնախատօնակ սրբոյն պանտալէոնի, որոյ սկիզբն էր. * Հասեալ կայ ,, հանդէս տօնի երանելոյն պանտալէոնի ||. և իբրև ձայնակից եղեն և այլքն, նոյնժամայն պարզեցան երկինք:

Մեծ ևս է այն, զոր պատմէ ճոխաբար, թէ զինուոր մի յարգենտորատ քաղաքի ( որ և ըսդրասպուրգ յալսացիս ) ջերմեռանդն էր առ սուրբն պանտալէոն՝ առնելով ըստ կարի 'ի պատիւ նորա աղօթս և ողորմութիւնս: Յեղանել սորա երբեմն սակաւ արամբք արտաքոյ քան զքաղաքն՝ պատեցին զնա թշնամիք, և հարեալ սուսերաւ՝ ճեղքեցին շեշտակի ըզգլուխ նորա, և թողին 'ի գետնի որպէս մեռեալ. և մինչդեռ նա յոգիս ապաստան եղեալ՝ անյոյս էր 'ի կենաց մարմնոյ, և միայն զնորա հոգւոյն հոգայր՝ զի անպատրաստ մեռանի, եկն եկաց 'ի վերայ գլխոյ նորա երիտասարդ շքեղ 'ի հանդերձս ոսկեհուռս. և շօշափեալ ձեռամբ զգլուխ նորա՝ դարմանէր, և ասէր. տես զպէտս քո, և առաւել զթոշակ երկայն ճանապարհիդ, զի մի՛ յանպատրաստից յանդիման լինիցիս սաստկապահանջ դատաւորին քում: Ասէ զօրականն. իսկ դու ո՞վ ես. նա ասէ. ես եմ պանտալէոն վկայ քրիստոսի, որ 'ի փոխարէն ծառայութեան քո առ իս՝ եկի այց առնել

քեզ

քեզ 'ի յետին կարիս ։ Մինչ այս մինչ այն՝ տարեալ էր ընկերաց նր՟ գոյժ 'ի քաղաքն · և ահա եկեալ բազմութի՟ հանդերձ քահանայիւք՝ գտին զնա տապաստ անկեալ խոց կարեվէր · և նր՟ խոստովանեցին և հաղորդեցին 'ի տր՟ խորհրդոյն՝ ապա դարձաւ յամբոխն , որ զնովաւ , և ասէ · զի՞ է՝ զի չառնէք արժանի մեծարանս տր՟ն պանտալէոնի , որ կայ յանդիման ձեր ամենեցուն ։ Իսկ յասել նց՟ զարմացմամբ , թէ չի՞ք մեր տեսեալ աստ զոք 'ի տր՟ց , նա առաւել ևս զարմանայր , և ասէր · ո՞չ տեսանէք որպիսի պայծառ երեսօք և սքանչելի զարդուք կայ 'ի սնարից իմոց , և սփոփէ և քաջալերէ զիս · զայս ասացեալ աւանդեաց զոգին ։ Իբրև տարան թաղեցին զնա , զաւուրս երեսուն ստէպ երևէր ծանօթից և բարեկամաց , և աղաչէր աղօթս առնել վս՟ իւր · քանզի ասէ՝ յատենին քս՟ի տր՟ վկայն նր՟ պանտալէոն միջնորդեաց վս՟ իմ , զի ամսօրեայ մի ժամանակ կարողացայց երևիլ կենդանեացդ , և խնդրել 'ի ձէնջ օժանդակութի՟ հոգւոյ իմում · ո՞չ զի քաղցրացի յիս դատաւորն կենդանեաց և մեռելոց , և փոխեացէ 'ի հանգիստ տր՟ց ։ Զայսոսիկ և զայլ բազում սքանչելիս տր՟ն քաղեն յոլովք , զէ՟ որս և բովանդեանք ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Ի նախնեան յայսմաւուրքս յունաց և մետափրաստէս՝ միշտ վարեն զյետին անուանակոչութիւն սբյն յերկնից բանդելէիմոն , որ ամենողորմ․ իսկ ժամագիրք յունաց ընդ այլ վկայագիրս անխտիր վարեն և զառաջին անունն՝ բանդօլէոն , որ ամենառիւծ , կամ ամէն յարենման առիւ_ծու․ որ 'ի մեզ է զի դրի պանդալէոն կամ պանտալէոն, և է զի պանդալէոն կամ պանդալեոն․ ոճ և առ լատինս հասարակօրէն բանդալէոն ։ Թողլից և զտարբերութիւն հնչմանց այլոց անուանց յընթացս պատմութեան․ ուր մեք զամ եդաք ըստ Ճառընտրոց՝ միաձայնելով ընդ յու_նականին ։

(2) Յերից Ճառընտրաց մերոց , Ա․ այսպէս սկսանի զայս վկայաբանութիւն․ * 'Ի Թագաւորել ամպարշտին և անօ_
,, րինին Մաքսիմիանոսի , բազմաց արհամարհեալ զերկ_
,, րաւոր կեանս՝ վն հաւատոցն որ առ ած . . . առին
,, զմարտիրոսական պսակ ||: Իսկ Բ և Գ այսպէս․
* Յամս Թփրութեան Մաքսիմիանոսի ամպարշտի ( և ա_
,, նօրինի ) հրաման ետ և ասէ․ զամ զոր և գտանէք
,, ածապաշտս , ժողովեցէք 'ի քաղաքն Նիկոմիդացւոց ||:
Բայց յընթացս՝ Բ առաւել միաբանի ընդ Ա, քան ընդ Գ․ որ է համառօտեալ քաղուած առաջնոյն , որոց և մեք հետևեցաք ։ Արդ ոճ 'ի մեզ Ա օրինակն է աղբիւր այ_լոց , նոյնպէս Ճանաչին և առ յոյնս և առ լատինս գտեալ հնագոյն օրինակք՝ ըստ նշանակելոյ Բոլլանդեանց , որք սկսանին նոյնօրինակ , * 'Ի Թփրել ամպարշտին և անօ_
,, րինին Մաքսիմիանոսի ||․ զոր վայրապար համարեցաւ լեոն ալլատիոս գոլ օրինակ մետափրաստեան․ ուր յայտ է առ ամ ստուգագէտ քննիչս , թէ ոճ մետափրաստե_անի է տարբեր՝ հռետորական վայելչաբանութեամբ միշտ յօ_րինեալ՝ ոլորկ և Ճարտարաբան․ և ահա այսպիսի է՝ զոր իրաւամբք յանուն նորա բերեն Լիպոմանոս և Սու_րիոս , սկիզբն ունելով այսպէս․ * 'Ի կռապաշտութեան
,, մառախլոյ ստուերամածիլ ընդ ամ տիեզերս ||:
Զայս յայն սակս յիշեցաք , զի թէպէտև յամենայնին մի և նոյն պատմութիւն է ըստ էութեան , այլ մերս օրինակ և ամ որ հանդիպանիցէ ընդ նմա՝ պարզ և անհարթ ոճով,
է

է առաւել հնագոյն և վաւերական քան զմետափրա-
տեսին · զի ոչ բարւոք ասէ աստանօր պոռքիոս բոլ-
լանդեան , * ամիրէ հաւանական է՝ թէ երբեմն ան-
,, հարթն՝ յետոյ ողորկագոյն յօրինեալ իցէ , քան թէ
,, յայսչափ ողորկ ոճոյ յետոյ յայն անհարթ ոճ վեր-
,, ածեալ իցէ || ։

Օրինակ լիցին մետափրասութեան գրութեան այս ձեռք բա-
նից ։ Ընդհանրապէս միշտ 'ի վեր բերէ մետափրաստէս
պատճառս և լուծմունս մթին և հոմաձայն բանից · զի
յառակաբանութիւս սրբոյն առ հայր իւր և առ վէգայն ,
մեկն պարզաբանէ՝ թէ չգոյր ստութիւն ինչ 'ի նմանաբա-
նութիւս անդ ։ Եւ 'ի մասնաւորի՝ զջանս սրբոյն 'ի դար-
ձուցանել զհայր իւր այսպէս բացատրէ · * զծնօղն իւր
,, ըստ մարմնոյ՝ ինքն ըստ հոգւոյ վերածնել նկրտէր ||, և
թէ՝ * պարտիք են յոյժ դժուարահատոյց՝ որդւոյ առ
,, հայր · այնմ՝ յորմէ էառ ձրի զգոլ, պատուասիրա-
,, բար գուն գործել հատուցանել զբարւոք գոլ || ։ Յա-
սել սրբոյն ցհայրն · * զպարգեւն լուսոյ տայ քեզ ինեւ քո ||,
մետափ'' առ յարմարութեան ասէ · * զպարգեւն լուսոյ
,, տայ քեզ ինեւ հայրն լուսոյ || ։ Ով և զգանգատ կու-
րին զբժշկաց՝ թէ զինչս իմ առին , և ինձ ոչ օգտեցին ,
այսպէս յօրինէ · * անձանց օգտեցին , զի զոր ինչս իմ
,, քաղեցին անոտի յուսով լուսոյ · իսկ ինձ և ոչ մի օ-
,, գուտ , այլ վնաս առաւել գործեցին || ։ ուր և լատին
թարգմանն կամեցեալ նոր մետափրաստէս լինել՝ առնէ
պատճառս աւելորդ 'ի խօսել սրբոյն առ թփրն · * զայ-
,, տոնիկ ամ կայսր , և կոյրն իսկ՝ ոչ ասի՝ յայտնի տե-
,, սանէ || ։ Բայց չէ աւելորդ , զի մետափ'' նմանեցու-
ցանէ զայս կոյր ընդ կուրին , զորմէ գրեալ է յաւետա-
րանն յովհաննու ։ Եւ յասել հին վկայաբանին , թէ սուրբն
* եմուտ առաջի թագաւորին , այլ աչք նորա ամբարձեալ
,, յերկինս ||, մետափ'' դրէ · * եկաց առաջի թագա-
,, ւորին · կամ լաւ ևս ասել , ոչ նորա առաջի , այլ՝ անմա-
,, հին և յաւիտենականին · զի առաջի նորա կայր ստու-
,, գապէս , և մտօք քաղաքավարէր || ։ Եւ զհաւատալն
բազմաց 'ի բժշկել անդամալուծին , և զնախանձիլն քր-
մաց և բժշկաց այսպէս ընդլայնէ · * Եւ ոչ 'ի նմա ևեթ
,, զտեղի էառ բժշկութիւն · այլ՝ ուր նա մարմնով , այլք
,, յոլովք հոգւով լուծեալք , և ախտիւք ամբարշտութեան
,, վարակեալք , ընդ տեսանելն զեղեալն՝ յարեան և կանգ-
,, նեցան · և զառաջին մոլորութիւն իւրեանց դատապար-
,, տեալ՝ եկին 'ի պաշտօն ճշմարտին այ ։ իսկ չարար-
,, ուեստ

,, ուղեստ քուրմք և բժիշկք, որք իւրեանց կամաւ ան-
,, բժշկելիք էին, ոչ ետուն տեղի յանձինս իւրեանց լու-
,, սոյն ճշմարտութե || . ևն:

Սովորեմք իմանալ, թէ մետափրաստէս ոչ փոխէ զպատ-մութիւն, այլ զարդարէ և վայելչացուցանէ. բայց մերս փոյթ եղև ՚ի վարս սրբոց ոչ այնչափ ՚ի խնդիր լինել շքեղութե ոճոյ, որչափ հնութե, որ առաւել անապակ ընծայէ զճշմարտութիւն: Զայս փոյթ կամին ունել և բոլլանդեանք, բայց ոչ միշտ պահեն. զոր օրինակ և աստանօր զմետափրաստէս տպեն, իսկ զհին վկայաբանութեն զհատուածս միայն բերեն ՚ի հաստատութե նր. զորոյ զհակառակն պարտ էր առնել:

Իսկ զի՞նչ պարտ է ասել զայլոց ոմանց օտար քննչաց, որք որչափ միաբանութի տեսանեն զհրաշալի պատմութես առ ամ հին և նոր վկայագիրս, չկարեն ժոյժ ունել. վն և զյանդգնութի նց այսպէս ըմբերանէ պոսքինոս բոլլանդեան. *Քաւ լիցի մեզ (ասէ) յարիլ կամ
,, ՚ի տիլլեմոնտ, որ զայս ամ վկայաբանութիս սրբյն պան-
,, տալէոնի նախանշանակեալս՝ ցուրտ բանիւ իշխէ ա-
,, սել անզօրս և ոչ իմիք մտադրութե արժանիս. կամ
,, բայիլլետայ, որ ըստ իւրում սովորութե, այլ ոչ եթէ
,, իմիք հեղինակութբ, մանաւանդ թէ ընդդէմ վաղնջա-
,, կան հեղինակութե, ՚ի բաց ընջեալ զսքանչելիս, այն-
,, չափ ինչ միայն ճշմարտանման ասդնէ, որ և ոչ յետին
,, դասու վկայից հաւասարէ զմեծ վկայ ծանուցեալն
,, յաւէժաբար: Եւ թէ քանի՛ անիրաւ իցէ այդ, յայտ-
,, նի լիցի ՚ի ծանօթութեց մերոց ՚ի վր պատմելոցն ՚ի
,, համարն Ե. և Թ. (ըստ վր բժշկութե օձահարի և կու-
,, րի). զորս իբրև ամենևին օտարս ՚ի ճշմարտանմա-
,, նութէ ՚ի բաց տարագրեաց նոր այրս այս՝ վատանուն
,, և առաջի հռովմայ ||:

Զանց առնէ իմաստունն յայս իւր բայիլլետ զբժշկութի օձահարին, զոր միաբան գրեն ամ վկայաբանք յամ ազգիս. *յայտ է թէ (ասէ պոսքինոս) առն նորոյ ոչ այն-
,, չափ ճշմարտանման թուեցան իրքդ, զոր ամ հին հե-
,, ղինակք՝ որք միանգամայն ՚ի կարճոյ անցին ընդ վկայ-
,, բանութի սրբյն պանտալէոնի, միաբան աւանդեցին
,, յետնոց ||: Որպէս և յաղագս կուրին ասէ պոսքինոս.
* Զայս ևս սքանչելիս բժշկութե կուրին իբր նուազ
,, ճշմարտանման ՚ի բաց թողու բայիլլետ յիւրում հա-
,, ւաքման, ընդ և զայլսն ամ: Այլ զի՞նչ կայցէ աստա-
,, նօր, ասա՛ աղաչեմ, օտար ՚ի կերպարանաց ճշմարտու-
,, թե.

„ թէ ։ Բայց եթէ թերևս ոք յայն աստիճան հասեալ
„ իցէ , մինչ զի որ ինչ միանգամ պատմի եղեալ 'ի վեր
„ քան զկարգ բնութե , իսկ և իսկ դիցէ 'ի մտի՝ թէ
„ այն ինչ ոչ միայն չկարէ լինել ճշմարիտ , այլ և ոչ
„ զնմանութիւն ունել ճշմարտի ․ որ է սկիզբն ամենևին
„ անարժան առն քրիստոնէի ‖ ։ Ո՞չ իրաւամբք կոչէ
զբայիլլէտ և զնմանիս նորա՝ որք զանձինս քրիստոնեայ
խոստովանին հաւատով , Գիրգ և ճօճուն հաւատովք ։

Այլ մեր չե՛ք բան առ այնպիսիս և ը այնպիսիս ։
Բանաւոր առարկութիւնք այն են , յորժամ անհամաձայ-
նութիւնք իցեն առ պատմաբանս ․ այլ սակաւ է տեսա-
նել և զայնպիսիս յայսմ վկայաբանութե ։ Բանաւոր
կարծէ պոռքիոս և զայն կասկած իւր՝ թէ զկարգ դա-
հիճքն յետ կամելոյ հաւատալ 'ի քս՝ յանձն առին հա-
տանել զգլուխ սբյն պանտալէոնի ․ Ո՞չ խիթայ՝ թէ
դուցէ 'ի յետնոց է մուծեալ այդ պարագայ ․ այսմ և
մեք կարեմք զիջանել , բայց ոչ թողուլ տալ անաչառութին ․
նախ՝ զի ոչ ոք ասէ , թէ դահիճքն եղեն 'ի ժամուն կա-
տարեալ քրիստոնեայ ․ այլ թերևս յետոյ ․ մինչև ասել
ոմանց՝ թէ մարտիրոսացեալ իցեն ։ Երկրորդ՝ զի ոչ ան-
ձամբ արարին , այլ 'ի ստիպելոյ սբյն զնա 'ի կատարել
զհրաման թփրին ․ և եթէ յայսմ սխալէր ասիցէ ոք զսբն,
կամէի թէ առօղն լինէր յայն պարագայ , և յայնժամ
զստոյգն դատէր ․ զի ու այդմ ոչ էր կատարելի սբն վկայա-
կան մահուամբ ։ Երրորդ՝ եթէ պարզմտութն այնպիսի եղև
'ի հին վկայաբանն , որ օրինաւոր համարեցաւ և գրեաց
զայնպիսի գլխատումն սբյն , միթէ նորա՛զ պարզամիտք
էին դահիճք՝ որ չկարիցեն գլխատել ․ սապա յայտ է թէ
պարզմտութի հին քրիստոնէից ոչ է կշռելի ը մերոցս
դարուց , յորս չեք հետք միամտութե աղաւնոյ , այլ միայն
կամ խորագիտութե և կմ խորամանկութե օձի ։

Յայտնի ունիս իմաստասիրել՝ թէ գրեալքն 'ի մէնջ
ու ճառընտրայ հաստատեալ են 'ի միաբանութե հին վկայա-
գրաց առհասարակ ․ թող զթեթև տարբերութիւս 'ի պա-
րագայս ինչ , զորս աւելորդ վարկաք յիշել ․ Թէպէտև
աշխատեալ էր մեր զառաջինն մի առ մի հաւաքել և
նշանակել զնոս ։ Այլ և ըարձակ քաղեալ էաք , որչափ
ինչ խօսի պոռքիոս յաղագս վկայարանաց , նշխարաց և
սքանչելեաց սբյն ․ այլ սակաւ ևեթ 'ի բազմաց յառաջ
բերաք ․ զի ոչ տանէր չափ հատորոյս և մեծութի առա-
ջիկայ գործոյս ։

Յոյնք տօնեն և զերանելի կոյրն 'ի ժամագիրս իւրեանց՝

Է սրբոյն պանտալէոնի. ՚ի 27. յուլիսի. իսկ զերմողայոս և զերկու ընկերս նր̃ ՚ի 26. յուլ. ոչ առանձին պատմութք, այլ՝ երկրորդելով զգրեալսն ՚ի վկայաբանութ պանտալէոնի. ապա թէ ոչ՝ օտար է նորահնար պատմութին երմողայոսի դտեալ ՚ի նոր գիրս ինչ լատինս : Լատինք զպանտալէոն տօնէին երբեմն ՚ի 28. յուլ. իսկ այժմ՝ դնեն Է յունաց ՚ի 27. յուլ: Թո՛ղ զհռոմբանոս՝ որ դնէ ՚ի փետր. 28. և այլք յայլ աւուրս՝ թերևս ՚ի յիշատակ փոխադրութ նշխարաց ինչ: իսկ ՚ի Հ. եդեալ է ՚ի յուլ. 26. Է երմողայոսի :

Նշխարք սրբոյն երմողայոսի նշանակին լինել ՚ի զանազան տեղիս. այլ հռչակեալ է քան զամ՝ եկեղեցի սրբոյն սիմէոնի մեծ կոչեցելոյ ՚ի վենետիկ. ուր ասի լինել մարմին սրբոյն երմողեայ մարմարին տապանաւ՝ ող̃ բերեալ ՚ի կոստանդնուպօլսոյ անյիշատակ ժամանակաւ :

ՎԸՐՔ

# ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

## Եւպրաքսեայ ճգնաւոր կուսին, և ծնողաց նորա:

Հ. յուլ. 25. կմ 20: Յ. յուլ. 25: Լ. մարտ. 13: Ճառընտ. Ա. յԴ = յԵԴ: Բոլլանդեանք. 'ի Է հատ. մարտի. էջ. 264 = 274. և 727 = 735: Սուրիոս: Հռոմէական 'ի վարս հարանց. էջ. 351 = 362: Յոհն. դամասկացի. 'ի Գ ճառն. յղ. պատկերաց: [1]

ԲԱՐԵԳՈՐԾՕ՛Ն ԸՍՏ ԱՆու՛ան, և առաւելեալն ի՟ արդեանց՝ աղախինն քսի՟ սբ՟ կոյսն Եւպրաքսիա, որ և Եպրաքսիա կմ՟ եպրակսիա, էր 'ի թագաւորեալ քաղաքէն, որ ի՟ Ճառընտրին ասի լինել Հռովմ, և ի՟ այլոց կոստանդինուպօլիս [2], յամս թագաւորութե՟ մեծին թէոդոսի բարեպաշտի՝ որ տիրէր արևելից և արևմտից, միամօր դուստր արքայազուն և մեծասէր ծնողաց՝ անտիգոնոսի և եւպրաքսեայ: Քանզի անտիգոնոս այս էր ազգական ինքնակալին, և այր երևելի 'ի մէջ դասուց սինկղիտոսաց, իմաստուն և համարեղ խորհրդակից արքային, գիտակ իրաւանց հռովմայեցւոց, և

ճշմա

Ճշմարիտ ածպաշտ . վայ և յամենեցունց սիրեցեալ 'ի մեծամեծաց և 'ի փոքունց . և թագաւորն ինքնին սիրէր զնա առաւել քան զամ պատուաւորս իւր յաղագս իրաւախոհ կամացն և քաջասէր մտացն ։

Այնպէս և կին նր եւպրաքսիա էր 'ի թագաւորական տոհմէ, Ճշմարտասէր և երկիւղած յայ . որ զցայգ և զցերեկ ոչ դադարէր յաղօթից, մեծաւ ցանկութբ և ջերմեռանդն արտասուօք խնդրելով յարարչէն զայցելութի՝ անցանել ընդ կենցաղս անարատապէս, և արժանաւոր լինել երկնից բարութեցն 'ի քն բարեխօսութբ ամ սբց . նմին իրի և անընդհատ պտղաբեր լինէր յեկեղեցիս այ, 'ի պաշտօնէայսն ր և յուխտաւորս . և զբազում տնանկս մեծացուցանէր առատատուր պարգեւօքն և յառաջ ածելովն . և էր առաւել սիրեցեալ 'ի թագաւորէն և 'ի թագուհւոյն ։

Իսկ եղև յետ ծնանելոյ նր զդուստր մի՝ զոր հայր նր անուանեաց յանուն մօրն եւպրաքսիա, ասէ անտիգոնոս ցպարկեշտ ամուսինն իւր . ունկնդիր լեր խմոց բանիցս ով կին դու, որ զանուն քո անուանեցի 'ի վր դստերս քո 'ի յիշումն քո հանապազ, զի անցաւոր է երկրաւորս, և անանց՝ երկնայինքն . Ես անցանէ և վայելչութի սորա, և որ առնէ զկամս տն՝ մնայ յաւիտեան յանանց կեանսն, զոր պատրաստեաց ած սիրելեաց իւրոց . զի առառաւելսն՝ ասէ գիր՝ ութսուն ամ . որ աւելին է քան զայսն՝ ցաւօք և հեծութբ, թէպէտև սակաւուց սակաւ լինի յաւելուած լի-

նի-

նիցի . այսպէս են 'ի վշ̃տի երկրի կեանք . նաև
մանկանց և երիտասարդաց է մահ երագա-
հաս . և զմեզ ոչ հեռի պարտ է կարծել յայն-
պիսի ախտից զանխլաբար , զի ոչ գիտեմք
զօրն և ոչ զժամն . հա՛պա 'ի միտ առցուք՝
թէ զի՞նչ է խաբողական անցաւոր կեանքս
այս :

Ասէ ցնա կինն իւր Եւպրաքսիա . տ̃ր իմ զի՛նչ
պարտ է առնել՝ արասցես 'ի հաճոյսն տ̃յ .
և ես ը̃ քեզ : Ասէ ցնա Անտիգոնոս . շնոր-
հեաց մեզ ա̃ծ դուստր մի . բաւական լիցի
սա մեզ ժառանգորդ և յիշատակ , թէ պա-
հեսցէ զպատուիրանս տ̃ն . և մեք որոշեալք
'ի միմեանց՝ զգաստութբ̃ և արդարութբ̃ և
ա̃ծպաշտութբ̃ կացցուք յն̃ի , 'ի կարօտեալս
զինչս մեր մատակարարելով :

Յայնժամ Եւպրաքսեայ յարուցեալ գոհա-
նայր զտ̃նէ , և ամբառնալով զձեռս իւր յեր-
կինս՝ օրհնէր զա̃ծ , և ասէր ցայր իւր . Օրհ-
նեա՛լ տ̃ր ա̃ծ , որ յայց ել մեզ , և արկ զահ
իւր 'ի սիրտս քո , և ծանոյց քեզ զունայնութ̃ի
կենցաղոյս այս, որ ոչինչ են ա̃մ փառք աշ̃խի.
զի էր այս հոգ 'ի սրտի իմում, և խնդրէի 'ի
տ̃նէ իմմէ՝ զի ծագեսցէ 'ի սիրտս քո . զի 'ի
միտ առցես զարդարութ̃ի ճշմարիտ , և ուղ-
ղեսցես զհանճար ը̃ կամացն ք̃ի . զի ասէ
առաքեալն տ̃ն , որ վարեն զաշ̃խ՝ ոչ թէ չվայ-
ելեսցեն . և որ ունին կանայս՝ ոչ թէ չու-
նիցին . և որ խնդան՝ ոչ թէ ոչ խնդան . զի
անցեալ է վայելչութ̃ի աշ̃խիս այսորիկ . այլ
որ առնէ զկամս տ̃յ , մնայ յաւիտեան : Ո՛ի
զի՞նչ

զի՞նչ շահ է մեզ 'ի բազում ստացուածոց մե-
րոց, 'ի գեօղից և յագարակաց. ո՞չ ապաքէն
ասէ մարգարէն, անզգամք և անմիտք կորի-
ցեն, և թողցեն օտարաց զմեծութի իւրեանց:
Արդ ո̃ր իմ մի՛ լինիք անզգամք և անմիտք,
այլ իմացո՛ւք զի՞նչ են կամք տ̃ն. մի՛ յապա-
ղեսցուք զբարիս գործել, զի մի՛ կորիցուք
զյաւիտենական կորուստն. զի ո՛չ գիտեմք
յորում աւուր կոչիմք 'ի հանդերձեալն 'ի ք̃ս:
Օ այս լուեալ անտիգոնոսի 'ի կնոջէն իւր-
մէ՝ փառաւորեաց զա̃ծ, ունելով զմիտսն 'ի
բարեպաշտութե̃ խորհուրդսն. և բազում
ինչ ետ աղքատաց և յեկեղեցիս ա̃յ և 'ի վա-
նորայսն: Եւ մի ամ ևս կացեալ ը̃ կնոջ իւ-
րում անարատ և մաքուր յամուսնական մեր-
ձաւորութէ, և զա̃մ կարգս բարեձևութե̃
գեղեցկապէս յարդարեալ, և վկայեալ յա-
մենեցունց ո̃գ արդարև ծառայ ա̃յ և ճշմար-
տեալ յա̃մի, փոխի առ այն կեանսն՝ որում
ցանկացաւ, 'ի փառս ամենասուրբ երրորդու-
թեն: Եւ սուգ մեծ լինէր թագաւորին և
թագուհւոյն և ա̃մ քաղաքին:

Իսկ կին նր̃ եւպրաքսիա, որոյ կացեալ էր
ը̃ առն իւրում յառաջագոյն ամս երկուս և
ամիսս երեք, և միւս ևս այլ ամ յորոշմանն
իւրում, առեալ այնուհետև զդուստրն իւր
համանունն՝ եդ առաջի թէոդոսի թագաւո-
րին, և թագուհւոյն՝ (որում անունն էր գաղ-
ղա պլակիդիա) արտասուագոչ բարբառով,
և ասէ. եղիցին խնամքն ձեր 'ի վր̃ սորա,
զհաւատարիմ ծառայն ձեր յիշելով զանտի-

գոնոս . և մի մոռասցի զյիշատակս ձեր որքս այս , որ զրկեցաւ 'ի հօրէն իւրմէ և 'ի խնամոց նոր : Իսկ Թագաւորն և Թագուհին յարտասուս եղեալ՝ մխիթարէին զնա բանիւք բազմօք :

Իսկ յետ սգոյն անցանելոյ՝ խօսի Թագաւորն և Թագուհին ընդ Եւպրաքսեայ՝ տալ զդուստրըն իւր 'ի կնութիւն որդւոյ զօրավարի ումեմն մեծի և խորհրդակցի . և նորա հաւանեալ կամաց նոցա՝ յանձն առնոյր . այլ զի դեռ մանուկ էր դուստրն իբրև ամաց հնգից , մնացուցանէր կատարման ամացն . և առհաւաստչեայ առեալ՝ այնպէս կային մնային երկոքին կողմանքն : (3)

Իսկ յետ խոստմանցս այսոցիկ՝ մին 'ի սինկղիտոսացն խորհեցաւ առնել իւր կին զանտիգոնեայ զկինն զԵւպրաքսիա . և յղեաց առ Թագուհին մտերիմ կանայս , զի տացէ զնա նմա 'ի կնութիւն : Իսկ Թագուհին հաւանեալ կամաց առնն՝ առաքեաց առ Եւպրաքսիա կանայս , զի հաւանեսցի յօրինաւոր ամուսնութիւն սինկղիտիկոսի մեծի : Լուեալ Եւպրաքսեայ զպատգամս Թագուհւոյն՝ խռովեցաւ յոգի իւր , զայրացաւ , և ելաց դառնապէս . և ասէ . զի՞ հրապուրէք զիս բանիւք սնոտեօք , և յուսով երկրաւորացս հանել յանանց կենացն . և այժմ յայսմ մոլորեցայց՝ յետ տալոյ զանձն իմ Քրիստոսի . քաւ լիցի ինձ այդմ հաւանել . և անարգանօք դարձոյց զպատգամս Թագուհւոյն :

Լուաւ և Թագաւորն , և բարկացաւ Թա-

դուհւոյն յաղագս անխրատ խորհրդոյն. զի
գիտակ էր որբասէր բարուց եւպրաքսեայ.
և ասէ. զխորդ այսպէս նանրացար 'ի խոր-
հուրդս անարժանութե. և ոչ յիշեցեր զան-
տրգոնեայ զբարեպաշտութին. և զեւպրաք-
սեայ զհամեստութին, որ 'ի կեանս իւրեանց
ողջախոհ եղեն 'ի սրբութի բարեպաշտութե,
հանդերձ ամ արդարութբ զարդարեալ մն
երկնից արքայութեն. և այլ բանիւք բազմօք
մեղադրէր թագաւորն մն նր. և թագու-
հին զամօթի հարկանէր, և ոչ կարէր տալ
պխնի. և եղև խռովութի մեծ առ թգւորն
և թագուհին մն այսր պատճառի:

Զայն լուեալ եւպրաքսեայ՝ վարանէր 'ի
տարակուսանս, և խորհէր գնալ 'ի քաղա-
քէն. բաշխեաց զինչս իւր կարօտելոց, և
յուխտս արանց և կանանց. և առեալ ըղ-
դուստր իւր զեւպրաքսիա՝ որ էր իբրև եօթ-
նամեայ, գաղտագողի գնաց յեգիպտոս. զի
էին անդ նց գեօղք և ագարակք և ստաց-
ուածք բազում. և պատճառեալ՝ ոչ թէ մն
նոցին իրաց եկեալ իցէ անդր, կոչեաց զգա-
ւառապետս և զհազարապետս, և արար հա-
մարս ստացուածոց իւրոց: Ապա երթայր 'ի
վերին թեբայիդն, և տեսանէր զեկեղեցիս
այ, և զուխտս արանց և կանանց. և պտղա-
բերէր 'ի նա առատապէս:

Էր վանք մի անդէն 'ի քաղաքի միում, յո-
րում կային կուսանք ճրք հարիւր և երե-
սուն (4). զորոց (ասէ մկայաբանն) սքանչե-
լի և զարմանալի առաքինուէս պատմեն մեր-
ձա.

Ձակայքն . զի էին նց հանապազօրդ աղօթքն
'ի տունն և 'ի գիշերի . բայց սակաւ ինչ նիր-
հէին 'ի վր գետնոյ խոտեղինօք կամ մազե-
ղինօք , փրխայ փոքրիկ ընդ անձին ունե-
լով երկայնութին երեք կանգուն , և լայ-
նութին կանգուն մի . միով այծեայ հանդեր-
ձիւ , և դուզնաքեայ վերարկու . և բարձ մի
փոքրիկ առանց պաճուճանաց . և 'ի պահս
պնդութե միշտ . և ճաշակէին միանգամ յա-
ւուրն ը երեկս . այլ 'ի տօնի և 'ի կիւրակէի
և 'ի շաբաթու՝ յերրորդ ժամու , հաց և ոսպն
և բանջար . այլ վս մսոյ և գինւոյ՝ 'ի լսե-
լոյն եւս զարհուրէին . և 'ի մրգոցն եւս ոչ ու-
տէին յայլ աւուրսն , բայց միայն 'ի տօնսն ։
Նաև ոչ առնուլ ինչ յումեքէ նոցա էր կամք ,
այլ՝ իւրեանց ձեռագործովք միշտ կերա-
կրէին , 'ի վաճառականաց ուստեք ծանօթից
զպէտսն վճարելով զհանդերձից և զկերա-
կրոց ։ Նաև ոչ եւս լուանային զանձինս՝ ամօթ-
խածութե զարդարեալք . իսկ յորժամ լսելի
լինէր նց՝ որք 'ի բաղանիսն լուանային , զար-
մանք ունէր զնս և տաղտկային լսել , գործ
անվայել զիրսն վարկանելով ։
Էր 'ի նս նախանձ բարեպաշտութե՝ ոմն քան
զոմն առաւելուլ 'ի պահս և յաղօթս և 'ի
վաստակս ձեռագործութե , 'ի հնազանդու-
թի սպասաւորութե , 'ի խոնարհութի և 'ի սէր
առանց կեղծաւորութե , մերկանալով յամ
իրաց չարաց ։ Նաև յորժամ հիւանդանայր ոք
'ի նոցանէ , ոչ բժշկաց կմ դեղոց կարօտա-
նային , այլ՝ ժուժկալէին կամացն այ , և

օգնականութեամբ միայնոյն քոյի համբերութեամբ քաղ-
մաւ ։ Եւ ոչ որ 'ի նոցանէ արտաքոյ քան ըզ-
դուրս ելանէր, այլ 'ի ներքս 'ի գաւթին վը-
ճարէին զպէտս իւրաքանչիւր ։ Եւ էր մօր
վանացն դռնապան հաւատարիմ կացուցեալ
'ի վերայ . և իւրքն վանաց տիկինն էր ընտրեալ
յամենայն իրս առաքինութեան . որ բազում բժշկու-
թիւք լինէին նոքաւ, և աղօթիւք նորա ուխտին
սրբելոյ յամենայն սատանայական հաղելոց ։

Արդ լուեալ եւպրաքսեայ զհռչակ բարե-
պաշտութեան և առաքինի վարուց նորա՝ ցանկայր
տեսանել զնա . և առեալ ընդ իւր խունկս և
ձէթս կանթեղացն և մոմեղէնս, և ինչս և
այլ իրս 'ի պէտս նորա առատաբերութեամբ՝ հան-
դերձ դստերքն իւրով, զգացուցանէ զիւր
եկաւորութիւն դռնապանին . և ողջոյն տը-
ուեալ խոնարհամագոյն աւագուհւոյն՝ առաջի
առնէր զպատարագսն, և ասէր . աղաչեմ
ընկալարուք զիրսդ վասն իմ, և իմոյ յօժարու-
թեանս, և աղօթս արարէք 'ի վերայ որբոյս այս,
զի կեցցէ արդարութեամբ, և 'ի վերայ հօր սորա՝
զի արժանի լիցի արքայութեան ։

Ասէ թէոդուլի սարկաւագուհին և առաջ-
նորդ վանացն . տիկին եւպրաքսիա՝ ոչինչ
պէտս ունին աղախինայքս այդպիսի իրաց .
զի վասն արհամարհեցին զնոսա և զսորին բա-
րութիւնս, զի երկնայնոցն և անանց բարու-
թեանցն հասցեն 'ի քեզ . այլ զի մի առաւել տըրտ-
մեցուսցուք զքեզ, առցուք զխունկս և զձէթ
և զմոմեղէն յեկեղեցին՝ յիշատակ առն քում
և քեզ և դստեր քում . բայց վասն այլ իրաց մի
բռնա-

բռնադատեր, զի մի՛ զրկեսցես զմեզ 'ի բա-
րեացն քոց . և այսպէս հաւանեցուցանէր
զնա խրատասէր բանիւք 'ի կամս ա̃յ ։ Եւ նա
զարմացեալ էր ը̃ անստացուածութի̃ն նց̃՝ օրհ-
ներ զա̃ծ հանդերձ դստերբն իւրով ։
Եւ յետ ընտանութե̃ն եղելոյ 'ի մէջ նց̃՝ ասէ
վանաց մայրն ցեւպրաքսիա դուստր եւպրաք-
սեայ . սիրե̃ս զքս̃ որդեակ, և զո̃ր ուխտս և
զսպասաւորս, որք զանձինս իւրեանց քոց
նուիրեցին պահել ։ Եւ նա ասէ . այո այն-
պէս համարիմ զքեզ ո̃պ զծնօղ իմ, և զայլսդ
ո̃պ զմայրս և զքորս . և ցանկամ յոյժ ը̃ ձեզ
լինել յօրհնել ը̃նդ ձեզ զքս̃ ։ Ասէ վանաց
մայրն . և զիա՞րդ լինիցի զխօսեալն քեզ այր
անտես առնել ։ Ասէ եւպրաքսիա . զիա՞րդ
փոխանակեմ զքս̃ զերկնաւոր թագաւորն ը̃
երկրաւորիս, որ այսօր է, և վաղիւն կորնչի ։
Ասէ վանաց տիկինն . եթէ այդպէս է, լե̃ր
ը̃ մեզ ։ Եւպրաքսիա ասէ . ստուգութ̃ ասեմ,
եթէ ոչ տրտմեսցի տիկին մայրն իմ, ոչ ևս
այլ մեկնեցայց 'ի տեղւոջէ աստի ։
Եւ մայրն եւպրաքսեայ ունկն դնէր բանիցն
ասացելոց, և արտասուօք և խնդութ̃ գոհա-
նայր զա̃նէ, որ զայսպիսի ա̃ծսիրութե̃ բանս
լուաւ 'ի դստերէն իւրմէ . զի էր յայնժամ
ամաց ութից ։ Յետ այսորիկ ասէ մայրն ցդ-
դուստրն իւր . արի՛ գնասցուք 'ի մեր յարկս ։
Ասէ եւպրաքսիա . տիկին իմ ո՛չ ելից աստի,
մինչև մեռանիցիմ ։ Ասէ վանաց մայրն . արի՛
որդեակ երթ զհետ տիկին մօր քո, և մի՛
տրտմեցուցաներ զդա . ո՛չ կարես աստ լինել,

զի մանուկ ես, և պէտս ունիս խնամածութե՟
և սփոփանաց կենացս։ Եւ ոչ կարացին հա-
ւանեցուցանել զնա հանել 'ի վանացն. Թէ-
պէտև բազում զեկուցին նմա զանտանելի
կարգ ճգնաւորացն և զկրօն ուխտին. բայց
նա յօժարութե՟ ընկալաւ զա՟մ. զի եղև ազ-
դումն շնորհացն քսի 'ի սիրտ նր՟։

Յայնժամ ասէ սարկաւագուհին ցաղջիկն.
ոչ կարէ ոք աստ լինել, եթէ ոչ յարեսցի ը՟
քսի երկնաւոր փեսային։ Ասէ մանուկն.
ո՞ւր է քսն։ Իսկ սարկաւագուհին տարաւ
զնա հանդերձ մարբն յեկեղեցին, և եցոյց
նմա զք՟րունական պատկերն. և մանուկն
երթեալ համբուրէ զպատկերն. և դարձեալ
ասէ ցսարկաւագուհին. ստուգապէս և ես
յարիմ 'ի քս, և ոչ ևս մեկնիմ ատի ը՟ տիկ-
նոջ իմում։ Եւ ասէ վանաց տիկինն ցմայր
նր՟. գիտեա՛ սինկղիտուհի տիկին, զի շնորհք
ա՟յ եղեն 'ի վր՟ սորա. թո՛ղ զդա և տո՛ւր ըն-
ծայ ա՟յ, և փոխարէն առցես դու և հայր
դորա 'ի քսէ. զի արդարագործու՟թ հօր դորա
և բարեպաշտութի քո առթեսցեն դմա ըղ-
կեանան յաւիտենից։ (5)

Յայնժամ եւպրաքսեայ առեալ զդուստրն
իւր զեւպրաքսիա, և զմեծուհի մայր վանացն
և զուխտն, տարածեաց զձեռս իւր առաջի
ա՟յ սեղանոյն քսի և պատկերին, և ասէ ար-
տասուօք. Տ՟ր ա՟ծ քե՛զ ընծայաբեր լինիմ
զծնունդս որովայնի իմոյ. ընկա՛լ զկամաւոր
պատարագս, և լե՛ր որբոյս հայր և վերակա-
ցու, որ կամաւ յանձն էառ զալ զկնի քո, և

առ

առնել զհաճոյսն քո. զօրացո՛ զսա, և ան-
սասանելի՛ պահեա 'ի խարդախութենէ բան-
սարկուին. զի քո է ամենակարող զօրութիւն.
և 'ի քո փառս կատարեսցին ելք սորա Քս
փրկիչ մեր ։ Եւ դարձեալ առ մեծուհի մայր
վանացն և առ ուխտն՝ ասէ. ահա ետու զոր-
դեակս իմ նախ Տն, և ապա ձեզ կամօքն
Այ. լինիցի աղօթք ձեր 'ի վր սորա հանա-
պազորդ, և արժանի լիցի առնուլ զձև ձեր ։
Եւ մեծուհի մայր ուխտին տարածեաց ըզ-
ձեռս իւր 'ի վեր, և ասէ. Թագաւո՛ր Թա-
գաւորաց և Տր Տրանց, արարիչ ամ արարա-
ծոց, ընկա՛լ զպատարագս 'ի հաճոյս քեզ, և
արա՛ զգութ մարդասէր շնորհացդ 'ի վր սո-
րա. զի կացցէ անբիծ և անարատ առաջի քո,
պահել զպատուիրանս քո, և առնուլ զան-
թառամ փառաց պսակն ընդ կուսանսն 'ի
լուսեղէն խորանսն, և ժառանգել զանս-
պառ բարիսն՝ որ պահի յուսացելոցն 'ի Քս ։
Եւ յարտասուս եղեալ ամենեքեան՝ օրհնե-
ցին զմանուկն Եպրաքսիա. և զգեցուցին նմա
պարեգօտս ընդ խորհրդածութե և կրօնից ։
Եւ ասէ մայրն դստեր իւր. Քս պահեսցէ
զքեզ յայդ ձևդ որդեակ, և լիցի քեզ զօրա-
վիգ առ Թշնամին արդարութե. և քև միշտ
փառաւորեսցիս զԱծ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից ։

Եւ զայս ասացեալ և հրաժարեալ 'ի դստե-
րէն իւրմէ և յամենեցունց՝ ել գնաց 'ի
տեղի իւր. բայց սիրտ նր էր ընդ ուխտին՝
յոր եդ զզաւակ իւր. վնյ խորհեցաւ տալ

զամ՟ ինչս իւր 'ի վանորայս և ամ՟ չքաւորաց, և գնացեալ 'ի վանքն, և զնոյն կրօնս յանձն առնուլ, և նովին հանդերձիւ կարգաց յառաջանալ 'ի ք՟ս. և արար այնպէս. ը՟ն որ յոյժ ուրախ եղև և դուստր նորա ամ՟ ուխտիւն:

Լուաւ թագաւորն զայս ամ՟ և թագուհին. և օրհնէին զա՟ծ, եթէ որպէս հաշտեցան առաքինութիւքն եւպրաքսեայ և դստեր նր՟:

Իսկ յետ աւուրց ինչ անցելոց կոչեաց վանաց տիկինն զեւպրաքսիա զմայր կուսին, և ասէ ցնա առանձինն. կամիմ ինչ ասել քեզ սինկղիտուհի, և նա ասէ. ասա մայր իմ հոգևոր:

Եւ ասէ ցնա. մի՛ խռովեսցի սիրտ քո, այլ առաւել ուրախ լիցի ը՟ն լուեալն՝ զոր տ՟ր եցոյց ինձ. զի տեսի զայր քո 'ի մեծ փառս և յերևելիս. և աղաչեաց զտ՟ր յ՟ս ք՟ս, զի բարձցէ զքեզ առ ինքն յաշխ՟է աստի 'ի լուսաւոր կեանսն, որ 'ի ձեռն բարի գործոց ձերոց պատրաստեցաւ ձեզ 'ի հօրէն լուսոյ. արդ զոր ինչ հաճոյն է ա՟յ՝ պատրաստեսցէ. և դու պատրաստեա՛ զանձն քո նմա:

Եւ լուեալ զայս՝ փառաւորեաց զա՟ծ ք՟սասէր տիկինն. քանզի և զայն իսկ խնդրէր յա՟յ 'ի հանապազորդ աղօթսն իւր: Եւ կոչեաց ըզդուստրն իւր, և ասէ ցնա. ո՞չ պատմեցաւ 'ի մեծուհւոյն՝ թէ մերձեալ է վախճան իմ, նոյնպէս կամք ա՟յ կատարեսցին՝ աղաչանօք հօրն քո, զի մի՛ զբաղեցայց յաշխ՟ս: Իսկ նորա յարտասուս եղեալ ասէր. ո՞վ զիս հոգասցէ զորբս 'ի հօրէ և 'ի մօրէ: Եւ ասէ մայրն. որդեակ՝ հայր ունիս զհայրն երկնաւոր, և

մայր

մայր զմեծուհին Թէոդուզիա . և զօրավիգ զքեզ՝ որում ցանկայր : Որդ էր իրաւախոհ որդեակ իմ, և ՛ի միտ առ զվարս առաքինութեան ՛ի գրոց սրբոց և ՛ի հոգևոր մօրէդ և յաղախնացդ Քրիստոսի ՛ի հաւատարիմ քերցդ՝ խոնարհութեան և ամենայն հնազանդութեան աստուծոյ էր : Եւ մի՛ ասեր ՛ի սրտի քում, եթէ ՛ի տոհմէ թագաւորաց եմ, աղախնել պարտին ինձ, և ոչ ես նոցա . որդեակ իմ նուաստացիր աստ, զի մեծացցիս յերկինս . և մի՛ թողուր ՛ի սրտէ քումմէ զկամսն Քրիստոսի զբարին, զհաճոյն և զկատարեալն : Ահա տամ ՛ի ձեռս քո զգիրս ստացուածոց քոց բազմաց, որ մնացեալ է ՛ի հօրէն քումմէ և յինէն, առ ՛ի տալ ուխտից և կարօտելոց . լեր ուղիղ մատակարար խորհրդածութեան մեծուհւոյս, և տուր սոցա զեօղս և ինչս՝ որչափ պիտոյ իցէ . և զայլն բաշխեա՛ ՛ի կարօտեալսն և յուխտաւորսն . և մի՛ թողուցուս քեզ ՛ի բազում ընչիցն . զի մի՛ այնու պիտոյիւք զօգիդ ապականեսցես ՛ի նանիր զբաղմունս : Կացցես ՛ի սէրն Քրիստոսի . և մի՛ իւիք սխալեսցես խորհրդովք կամ բանիւք կամ գործովք յուղիղ ճանապարհացն Աստուծոյ, և զրկեսցիս յանանց մեծութեանցն :

Եւ յանձն արար զնա հոգևոր մօրն և սուրբ ուխտին . և օրհնեաց զամենեսեան ՛ի Քրիստոս . և յետ երից աւուրց վախճանեցաւ երանելի կինն . և թաղեցին զնա ՛ի գերեզմանն սուրբ ուխտին՝ փառաւորելով զԱստուած . և գրովք սրբովք մխիթարեցին զկոյսն Եւպրաքսիա : Եւ նա զպատուիրեալսն ՛ի մօրէն իւրմէ ստուգապէս կա-

տա

տարեաց. և որ ՟Ը օրէ յառաջանայր 'ի Ճգնա-
ւորական վարսն ։

Եւ լուեալ զայս խորհրդակից Թագաւորին , որոյ խօսեալ էր զկոյսն որդւոյ իւրոյ 'ի կնութի , զեկոյց Թագաւորին , թէ մեռաւ կինն անտիգոնեայ 'ի Թեբայիդ , և մնաց անդ կոյսն առանց վերակացուի. և արդ պատուէր տացէ ձեր բարերարութիւդ 'ի ձեռն Թղթոյ , զի դարձցի կոյսն և տացէ զինքն՝ որում խօսեալն էր՝ յօրինաւոր ամուսնութի ։ Եւ Թագաւորն ընկալեալ զաղաչանս խորհրդակցին՝ գրեաց առ կոյսն եպրաքսիա մեծամեծ խոստմունս՝ երևելի առնել զնա 'ի կանայս մեծամեծացն , և հռչակաւոր փառօք 'ի քաղաքին. և՛ս բազում խոստմունք 'ի Թագաւորէն և 'ի Թագուհւոյն գրեցան ։ Եւ եկեալ հասանէր հրովարտակն 'ի ձեռն դռնապանին. և առեալ եպրաքսեայ՝ ընթերցաւ. գրէ պխնի իւր ձեռամբն օրինակ զայս ։

Առ Թագաւորիդ Թէոդոսի բարեպաշտի՝ յեպրաքսեայ աղախնոյ ։ Զառաքեալդ 'ի բարերար Թագաւորէդ զպատուական գիրս ընկալայ՝ ամ բարեօք երկրաւորիս խոստմամբք անարժան աղախնոյս. և զարմացայ՝ որ այդպէս խորհուրդ խորհեցայք , որ ոչ ՟Է ՟այ , և ոչ ըստ ձեր բարերարութեդ արժանի ։ Եւ զիա՞րդ զիս 'ի քնէ յերկնաւոր փեսայէն հանէք և յանանց ուրախութեյն , և երկրաւոր մահկանացուացս խորհիք տալ և անցաւոր կենացս. ո՞չ լուայք՝ եթէ մահկանացու են ազգ մարդկան , և սնոտի՝ անցաւոր մեծութիս ։

թին ։ Եւ արդ ես ոչ խափիմ յայդմանէ Տ՟ր
իմ արքայ ․ ես քոյ ընծայեցայ կամօք մօր
իմոյ , և իմով յօժարութեամբս ․ և սիրոյ նորա
ցանկացեալ սպասեմ , մինչև ելից յաշխ՟էս , և
մտից յերկնաւոր առագաստն ընդ իմաստուն
կուսանացն ․ և վայելեցից զանսպառ բարիսն
ը՟ հօրն իմոյ ա՟ծասիրի և ը՟ մօր իմոյ ճշմար-
տասիրի ։ Արդ մի լիցի ինձ թողուլ զուխտ
ա՟ծեղէն , և դառնալ 'ի վարս աշխ՟իս ։ Աղաչեմ
զքեզ տէր իմ արքայ՝ մի թախանձեր զիս յա-
ղագս այդորիկ ․ այլ յիշեա զԱ՟ծ , և զհայրն
իմ մտերիմ և ազգական քո , և զմայրն իմ
բարեպաշտուհի ․ և աղօթս արարէք վ՟ս ա-
ղախնոյ ձերոյ դու և ք՟սասէր տիկինն իմ թա-
գուհին ։ Եւ զգեօղս մեր և զստացուածս
տացես 'ի վանս արանց և կանանց , և կարօ-
տելոց ․ և զփոխարէնս առցես յանմահ թա-
գաւորէն յերկրի և յերկինս , որ կայ և մնայ ։
Ողջ լեր ա՟մ փառօք և պատուով 'ի ք՟ո յ՟ն ։
Իբրև եկն թղթաբերն առ թագաւորն , ըն-
թերցեալ զթուղթն՝ գոհանայր զԱ՟ծոյ հան-
դերձ թագուհեաւն և պատուաւորօքն իւ-
րովք բարեպաշտ թագաւորն ․ և ասէ ․ ար-
դարև բարի արմատոյն բարի շառաւիղ ըն-
տրեցաւ ս՟ր կոյսն , և զինքն Ք՟սի դաւանեաց ․
և ո՞վ իցէ՝ որ մեկնեսցէ զնա 'ի սիրոյն Ք՟սի ․
քաւ լիցի ինձ այլ ինչ խորհել 'ի վ՟ս այսպի-
սի կամաց ․ ինքն Ք՟ս զնա հաստատուն պա-
հեսցէ ։ Եւ որք լուան՝ փառաւորեցին զԱ՟ծ ,
և օրհնեցին զՔ՟ս անմահ թագաւորն , և ըզ-
կոյսն ս՟ր ։ Իսկ բարեպաշտ թագաւորն գե-
ղեց-

ղեցկապէս յարդարեաց զգեօղն և զստացուածսն՝ բաշխելով յուխտսն և յաղքատսն· զի օրհնութիւն կուսին Եւպրաքսեայ և հօր և մօր նր եղիցի 'ի վր թագաւորութեն նր յերկինս և յերկրի։

Իսկ Եւպրաքսեայ զայս լուեալ՝ օրհնէր զԱծ և զբարեպաշտ թագաւորն· և էր ինքն յայնժամ ամաց իբրև երկոտասանից, և գեղեցիկ յոյժ· այլ անխնայ զանձն իւր 'ի մեծ ճգնութիւն արկանէր յառաքինութե հանդէս· և մրցէր ընդդէմ հակառակամարտ դիւին հոգևոր մրցումն· և միանգամ ճաշակէր յաւուրն՝ կամ յերեկոյն, կմ յերեք ժամուն· և այն՝ հաց և աղ և ջուր· և 'ի տօնս՝ ոսպն և բանջար· և անդադար աղօթէր· և հմուտ էր գրոց 'ի լսել և 'ի կատարել և յընթեռնուլ միշտ· և էր խոնարհ և հեզ· և այնչափ փոյթ 'ի սպասաւորութի, զի և ոչ ումեք թողոյր յարդարել զանկողինս քերցն, այլ իւր պարգևս խնդրէր 'ի մօրէն զայն ծառայութի։

Էր կարգ ուխտին, զի յորժամ փորձութի գայր 'ի սատանայէ յանուրջս կամ 'ի խորհուրդս, խոստովանէին մօր ուխտին· և նա յաւելոյր պահս և աղօթս և այլ ճգնութիւնս 'ի փորձանաւորն՝ որքան արժան էր· և ինքն ևս առաւելոյր օգնական լինել 'ի հանդէս նր ջերմեռանդն արտասուօք, մինչև կարգ փորձութեն վճարէր։ Իսկ Եւպրաքսեայ իմացեալ զայն՝ հոգայր և յաղօթս կայր, զի մի դիպեսցի նմա· եհաս և նմա փորձել 'ի սատանայէ յանուրջս· և տրտմեալ էր և լայր,

և

և ոչ կամէր հաց ուտել, և կամ ջուր ըմպել ։ և ամաչէր խոստովանել ։ Այլ տեսեալ՝ թէ մեծուհին տայր ոմանց կրել քարինս, և դնել 'ի ներքոյ մահճին, և ցանել մոխիր 'ի վ՟ր քրձոյն, յաւել ինքնին առնել զայն 'ի փոր-ձանս իւր ։

Իսկ իմացեալ քերցն զտրտմութի՟ն նո՟ր և զգործս՝ զգացուցին մեծուհւոյն, և նա կոչեաց առ-ինքն վաղվաղակի զեպրաքսիա, և ասէ. ընդէ՞ր տրտմեալ ես և լաս, և ոչ ուտես. թերևս փորձեցար 'ի սատանայէ, և ոչ խոստովանե-ցար, զի ազատեսցիս 'ի սատանայական փոր-ձութեանցն ։ Իսկ նո՟ր անկեալ յոտսն՝ ասէ. տի-կի՟ն իմ մեծուհի թողութի՟ արա ինձ, զի մե-ղայ ա՟յ և քեզ. և ամօթ անկաւ 'ի վ՟ր իմ, և ոչ կարացի խոստովանել զմեղսն իմ ։ Ասէ մե-ծուհին. է ամօթ՝ որ ածէ 'ի փառս, և է ա-մօթ՝ որ ածէ 'ի մեղս. բայց դու ծանի՛ր զնեն-գութի՟ սատանայի, զի որ զփորձութի՟ն ածէ, նոյն և զամօթն. զի մի՛ լիցի խոստովանել և կեալ յետ դարձի 'ի ձեռն հոգևոր կարգաց և աղօթից՝ որ վ՟ն այսորիկ. այլ դու խոստո-վանութ՟բ մարտի՛ր զբարիոք մարտն, և զխոս-տովանութե՟ պսակն առցես 'ի ք՟սէ փրկչէն մերմէ ։

Իսկ աղօթս արարեալ 'ի վ՟ր նո՟ր՝ հաստատեաց զնա ը՟ն արդարութե՟ օրհնացն. և յանձն արար զնա աւագագոյն քեռ ումեմն, որում անուն էր յուզիա. որ յոյժ սիրեաց զեպրաքսիա, և յուշ առնէր նմա զխրատս ոգեշահս, և յոր-դոր լինէր խոստովանել միշտ հոգևոր մօրն զսա-

զսատանայի մարտն. զի աղօթիւք նր՟ յաղ-
թեսցէ սատանայի. զի երևելի հանդէսք են
նր՟ առէ առաջի այ՟. զի կատարեաց նա զօրն
անհանգիստ յաղօթս և 'ի պահս՝ ոչինչ ճա-
շակելով, և ը՟ունակ եղև երկնաւոր վայելուց.
և մն՟ այնորիկ ընտրեցաւ 'ի վերակացութի,
և գիտէ որոշել ը՟ արդարութե օրինաց զնա.
սուց իրս:

Իսկ եպիսկոպոսեալ լուեալ զայն՝ ոչինչ թաքու-
ցանէր 'ի հոգևոր մօրէն. և նա խրատէր զնա
և վարժէր յառաքինութե հանդէսն, և ա-
սէր. քաջալերեա՛ց որդեակ, անսպառ կու-
սութբ՟ նահատակեցի՛ր ը՟դէմ հանապազոր-
դեան թշնամւոյն. և մի՛ երկնչիր 'ի դառա-
ճանութէ նր՟. զի ք՟ս է օգնական քեզ և զօ-
րավիգ, որում ցանկացարն. որով կարող ես
յաղթել ամենահնար չարեաց սատանայի:
Իսկ նա խնդութբ՟ ը՟դունէր զխրատն, և յաւե-
լոյր և մրցէր 'ի բարեպաշտութե ջանն. և
աղաչէր զմեծուհին՝ զի հրամայեսցէ յաւե-
լուլ 'ի պահսն, և յետ երկուց աւուրց կամ
երից ճաշակել կերակուր, մինչդեռ էր նա
ժե, կմ՟ ժէ ամաց: Իսկ սարկաւագուհին կա-
մեցաւ փորձել զնա, և ծանրացոյց 'ի վր՟ նր՟
զգործն. և հրամայեաց կրել քարինս 'ի տե-
ղի ինչ՝ ուր եթէ 'ի պէտս շինուածոյ. և նա
կրէր ուսովք իւրովք մեծամեծ քարինս, զոր
երկու 'ի քերցն ոչ կարէին շարժել. վս՟ զի
նա էր ուժեղ, և կարօտանայր թառամեցու-
ցանել զգեղեցկութի իւր պահօք և աշխա-
տութբ՟:

Իբրև կրեաց ը̃ բաւականին զաւուրս հնգե-
տասան , միանգամայն և 'ի պահօն պնդելով,
դարձեալ տայր հրաման զբարինսն կրել
յայլ տեղիս առ 'ի փորձել զնա . և նա նոյն
յօժարուբ կատարէր զհրամանսն դարձեալ
հնգետասան օր . և յայն աշխատութի ա-
ւուրցն երեսնից ոչ երբէք նուաղեաց 'ի սո-
վորական գործոցն կա՛ 'ի պահոցն . և զարմա-
ցան ամենեքեան , և օրհնէին նովաւ զա̃ծ ,
որ տայ ժուժկալութի սիրողաց իւրոց :
Հրամայեաց նմա մայր ուխտին՝ լինել փռ-
նապան , զի արասցէ հաց , և կերակրեսցէ
զամենեսեան իւրով աշխատութբն . ոմ̃ զի
օրհնեսցի 'ի քերցն . և նա խնդութբ ընկա-
լաւ , և առնէր առանց օգնականի . բայց ե-
թէ 'ի քերցն ողորմելով ոք՝ օգնական լինէր
նր առ 'ի գործոյն փոյթ . զի ինքն բերէր
փայտ , և կոտորէր , և հարկանէր հայս . և
յետ այնորիկ սպասաւորէր քերցն :
Եւ եղև յետ աւուրց ինչ՝ զի էր 'ի քուն , և
տեսանէր յանուրջս , զի կերպարանեալ դե-
ւին 'ի կերպարանս խօսեցելոյն զնա՝ եկեալ
էր հանդերձ բազում ամբոխիւք , որպէս զի
հանցէ զնա 'ի վանացն՝ տանել 'ի թագաւո-
րեալ քաղաքն և առնուլ իւր 'ի կնութի : Եւ
նա մռնչելով հեծէր զարհուրանօք . մինչև
լսելի եղև մօր ուխտին . և հրամանաւ նր
եկին զարթուցանել զնա քորքն . զի էր թրմբ-
րեալ յերևսաց երազոյն . և զարթուցեալ
եպրաքսեայ՝ պատմեաց նց ամօթխածութբ
և արտասուօք զփորձութին : Եւ մեծուհին .
մի

մի՛ երկնչիր որդեակ, զի Քրիստոս ընդ քեզ է 'ի տուէ
և 'ի գիշերի՝ յարթնութեան և 'ի հանգստեան.
և ոչ թողու զքեզ 'ի չարին կամս խորաման-
կութեան կործանիլ ։

Եւ ժողովեալ զամենայն ուխտն 'ի գիշերապաշ-
տօնն, զկնի կանոնաց սաղմոսաց հրամայեաց
Եպրաքսեայ յոտն կալ, և ընթեռնուլ զվարս
սրբոց կուսանացն. որ և լսելի առնէր գեղեց-
կայարմար վերծանութեամբ, և զամենեսեան
շարժէր յարտասուս. և այնպէս հոգևոր փա-
ռաբանութեամբն կատարէին զգիշերային պաշ-
տօնն 'ի փառս ամենասուրբ երրորդութեան ։ Եւ
առաւօտուն յարուցեալ՝ 'ի գործ իւր եր-
թայր. և այնպէս ոչ վեհերէր, և էր փոյթ
'ի գործն և յաղօթսն, զի ոչ զհաւատացեալ
գործն իւր խափանէր առ հարկաւոր պէտսն
սպասաւորութեան ուխտին. և միանգամայն
զժամ աղօթիցն, զգիշերապաշտամանն և
զառաւօտուն և զերեք ժամուն և զվեցժա-
մուն և զինն ժամուն և զհանգստեանն ան-
խափան կատարէր. և 'ի գործն փութացեալ
լինէր հանապազորդ սաղմոսիւք ։ (6)

Եւ ոչ յծական խօսս զինքն տայր կամ ունկն
դնէր անշահ բանից, այլ էր հանապազոր-
դեալ ջերմեռանդն փափաքմամբ հոգևոր շա-
հից 'ի խօսել և 'ի լսել և 'ի յառնել միշտ ։
Եւ ծանուցեալ զշահ խոստովանութեան՝ ոչ
ծածկէր յառաջնորդէն զսատանայական փոր-
ձանսն. և երթալով երթայր և զօրանայր
հոգւով և մարմնով, և ձգնէր յառաքինու-
թիւս ամենայն ։

Յետ այսորիկ աղաչեաց զմայր ուխտին բա-
րեխօսութբ̄ քերցն , մանաւանդ յուլիայի , զի
հրաման տացէ անսուաղ կեալ զշաբաթն ,
( որպ̄ տեսանէր 'ի մեծուհին , ) բայց միայն
'ի շաբաթուն և 'ի կիւրակէին միայն ճաշա-
կել . զի սաստիկ է ասէ մարտն առ մանկու-
թե̄ս ոյժ և 'ի գեղեցկութիս իմ հանապազ :
Իսկ մեծաւ աղաչանօք հաւանեցուցին զվա-
նաց տիկինն՝ առնել զխնդիրն . վ̄յ կոչեաց
զնա , և ասէ . զա̄մ զոր միանգամ գտանիցէ
ձեռն քո , արա որդեա՛կ իմ եպրաքսիա . ա̄ծ՝
որ արարն զքեզ , զօրացուսցէ զքեզ , և տա-
ցէ քեզ յաղթութ̄ի ը̄դէմ թշնամւոյն . միայն
զգուշացի՛ր որդեակ 'ի հպարտութ̄է , զի մի՛
անկցիս յորոգայթ սատանայական վ̄ն առա-
ւել պահոցդ : Իսկ նա խոնարհ սրտի՛ւ և ամ-
բիծ հաւատով զհինգ աւուրսն անսուաղ հա-
նէր 'ի գլուխ զպահսն . և ոչ գործոյն ինչ
խափան լինէր և սահմանեալ աղօթիցն . այլ
քաջապէս արիացեալ խրախուսէր 'ի ք̄ս՝ առ
որ անձկացեալն էր . և զինքն վերջին համա-
րէր քան զամենեսեան 'ի ճգունս . և ամե-
նեքեան սիրէին զնա , և աղօթս առնէին ան-
շարժ մնալ 'ի մրցմանն :

Իսկ էր ոմն 'ի քերցն գերմանի կին գերմանա
անուն , զորմէ ասէին աղախին լեալ , և ա-
կամայ եկեալ 'ի կարգն յաղագս վնասու ինչ .
սա գրգռեալ 'ի դիւէն՝ դարովանս յարուցա-
նէր մախանօք ը̄դէմ եպրաքսեայ , որպ̄ թէ
'ի ցոյց ինչ առնիցէ զպահսն . թո՛ղ զի ա-
սէր՝ եթէ և մեզ հրամայեսցէ տիկինն զնոյն

կարգ, զի՞նչ ունիմք առնել ։ Իբրև լուաւ եպրաքսիա զտրտունջ նորա և զթշնամանս, ոչինչ խռովեցաւ, այլ անկեալ յոտս նր՝ ասէ․ աղաչեմ զքեզ տիկին իմ, թողութի արա ինձ, զի 'ի մեծուհւոյն առի հրաման, և ոչ յանձնէ զայս առնեմ․ զի մեղաւոր եմ, և սաստիկ է պատերազմ ինձ առ դևս․ և զայն ես գիտես, զի մեծ տիկինն մեր ասաց ճգնիլ իւրաքանչիւր ըստ իւրում կարգի, և ո՛չ 'ի հարկէ եդ յիմ վր զայս լուծ ։ Եւ նա ասէ․ ո՛չ այդպէս, այլ զի երևեսցիս մարդկան առաքինի և պահօղ առաւել քան զայլսդ․ զի այսպիսի կերպարանօք յափշտակեսցես զվերակացութի ուխտիս, խաբուհի և խորամանկ կեղծաւոր ։ Իսկ եպրաքսիա աղաչէր զնա և ասէր․ մեղայ յերկինս և առաջի քո, թո՛ղ ինձ․ և նա զհակառակն խօսէր ։

Լուեալ զայս մեծուհւոյն՝ կոչեաց զգերմանի, և ասէ․ աղախի՛ն չար և անընդել բարւոյ, զի՞նչ մեղաւ քեզ եպրաքսիա դուստր մեծաց և տոհմակից թագաւորին, որ կամաւ աղախնէ ստոյգ աղախնոյդ ։ Եւ նա մնաց անպտնի․ և մայր վանացն որոշեաց զնա 'ի հաւասարութե պաշտամանն յեկեղեցւոջ և արտաքոյ և 'ի կերակրոյն զաւուրս երեսուն (կամ եօթանասուն)․ թէպէտև մեծ աղաչանս առնէր եպրաքսիա վն նր առ մեծուհին, այլ նա ոչ թողացոյց զկարգն․ և յետ այնորիկ բարեխօս ունելով զմմ քորսրն՝ հազիւ լուծանէր զկարգն, և դայր 'ի հաշտութի վն յոյժ աղաչանացն եպրաքսեայ ։

Իսկ

Իսկ հակառակասէր դեւն ոչ դադարէր 'ի պատերազմելոյ ը͞ն եւպրաքսեայ . և նա ոչ թողանայր 'ի մարտէն , այլ յաւելոյր 'ի պահսն և յաղօթսն և 'ի գործ խոնարհութեան համբերութեան բազմաւ . և տ͞ր յաւելոյր զշնորհսն իւր 'ի կոյսն ս͞բ ։ Եւ կատարէր ամս քսանևհինգ կամ քսանևեօթն յերկիւղն ա͞յ , 'ի հասանել քառասներորդաց ս͞բ պահոցն՝ եկն անկաւ առաջի մեծուհւոյն՝ բարեխօս ունելով զաւագուհին, զի հրամայեսցէ անսուաղ անցուցանել մինչև 'ի կատարումն պահոցն . զի նախանձէր ասէ զնախանձ հոգևոր մարտին՝ յաղթեցից թշնամւոյն , որ միշտ կռուէր . որ͞պս և դու յաղթեցեր . նաև լուա՛յ 'ի քէն , թէ այս ազգ ո՛չ իւ՛իք ելանէ , եթէ ոչ աղօթիւք և պահօք ։ Եւ վանաց տիկինն հաւանեցաւ ը͞ն աղաչելոյ աւագուհեացն՝ տայր զհրաման . այլ ո͞չ զի 'ի վերուստ յազդմանէն քո լցի հաւանութ͞ին , ասէ . կամք ա͞յ կատարեսցին 'ի վ͞ր քո որդեակ ։

Եւ նա սկիզբն արարեր պահոց և ոտնակացութեան՝ հասանէր շնորհօքն ա͞յ 'ի լրումն քառասնից 'ի բարեբանութ͞ե օրն ( ո͞ր 'ի ծաղկազարդն ) , անվթար կատարելով զպաշտօնն և զգործն . և կամէր հասանել նաև մինչև 'ի յարութ͞ին . վ͞ն աղաչեաց զմեծուհին՝ զի մի լուծցէ զպահսն և յայնմ եօթնեկի . ո͞չ զի և արժանաւորեսցի 'ի հինգշաբաթուն նուիրն պահօք մերձենալ 'ի ս͞բ խորհուրդն ։ Եւ 'ի հաւանիլ մօրն լսել աղաչանաց նորա , հազիւ հասեալ 'ի հինգ շաբաթն մեծ՝ լքաւ

 նուա-

նուաղեցաւ և անկաւ․ և քարշին զնա իբրև զմեռեալ, և ածին յեկեղեցին 'ի կատարել զպաշտօնն և զտ̃րունական խորհուրդն․ և տայ քահանայն զմարմինն և զարիւնն ք̃սի եպրաքսեայ․ և ճաշակեալ զօրանայր, և օրհնէր զա̃ծ ։

Իսկ յետ կատարման աղօթիցն՝ ասէ մեծուհին ցեպրաքսիա․ որդեակ իմ մի լինիր քան զօրէնսն օրինաւորագոյն, և մի ճարտարեր յաւելորդսն․ զի մի լինիցիս 'ի զարմացումն այլոց, և թողացեալ 'ի տ̃նէ՝ ննջեսցես 'ի մահ․ զի մարմնաւոր ես․ այլ կշռեա քեզ զարժանն, և միանգամ յաւուրն ճաշակել կերակուր, զի կատարեսցես զգործն․ և այսպէս ը̃ունելի լիցիս տ̃ոյ՝ զմիջինն գնալով․ մի յաջ խոտորիր և մի յահեակ․ շատ լիցի քեզ մինչև ցարդ, զի ահա զօրութ̃ն ք̃սի կատարեցաւ քառասուն և հինգ օրն․ և ք̃ս հատուսցէ փոխանակ ժուժկալութ̃ն՝ որ վ̃ս իւր կրեցեր․ արդ այսուհետև արի և ճաշակեա ։ Իսկ նա հնազանդեալ, և ընկալեալ զհատն՝ եկեր կերակուր․ և այլ ոչ ևս եկաց զնոյն պահսն, այլ միանգամ ճաշակէր օրըստօրէ, և օրհնէր զա̃ծ ։

Իսկ թշնամին արդարութ̃ ոչ թուլանայր 'ի մարտնչելոյ ը̃ եպրաքսիայ ։ Իսկ եղև 'ի միում աւուր՝ 'ի խոնարհիլ նր̃ հանել ջուր 'ի ջրհորոյն՝ եհար զերանելլին և ընկէց 'ի ջրհորն գլխ 'ի վայր․ և 'ի գոչել նր̃, ք̃ս օգնեա ինձ, ապա եղև այս 'ի վանսն․ և ամենեքին անդ ընթացեալ լալով՝ հանին 'ի ջըրհո

հորոյն , ոչինչ վնասեալ 'ի վէրէն զօրութ՟ն կ՟մ զարհուրեալ . այլ առաւել խրախուսեր յուսոյն ա՟յ յաղթել ամենահնար չար դե֊ւին . և ասէր . կենդանի է ք՟ն իմ , զի ուր մինչև ցայսօր զմի թակոյկ բարձեալ բերէի ջրոյ , այլ յօրէ յայսմանէ և առ յապա երկու թակոյկս բերեմ . և այնպէս առնէր :

Դարձեալ յայլում աւուր 'ի կոտորել նորա զփայտ 'ի պարտիզի՝ շրջապատեալ դև՟ն ու֊նէր զփայտահարն , և թիւրել եհար անդէն զարունս ն՟ր , և ընկեց զնա . և 'ի սաստիկ վի֊րացն անկեալ կայր ո՟պ զմեռեալ : Ոիչ ե֊բարձ յուղին՝ որ առընթեր կայր նորա , և ազդեաց յուխտին զեղեալսն . որք վաղվաղա֊կի անդր հասեալք՝ լային և աշխարէին զե֊րանելին : Յայնժամ մեծուհին ցանեաց ջուր յերեսս նորա . և ա՟նսագրեալ զնա փրկական խաչիւն՝ ասէ . որդեակ իմ արի կաց յանուն ա՟ն . և մխիթարեաց զմեզ 'ի տարաժամ սգոյ՝ զոր ած դև՟ն 'ի վ՟ր մեր : Իսկ նորա զարթու֊ցեալ ո՟չ 'ի քնոյ՝ ասէ . մի լայք 'ի վ՟ր իմ , զի տ՟ր է իմ օգնական , և ես ոչ երկեայց , զի՞նչ արասցէ ինձ չար դև՟ն : Իսկ լուեալ զայս՝ գոհացան զա՟յ և մխիթարեցան ոչ սա֊կաւ . և պատեալ զվէրս նորա՝ առին գնա֊ցին 'ի վանսն . և նա կայր զամարթ և արի 'ի գործ :

Իսկ 'ի միւսում աւուրն գայր ժողովել զկո֊տորեալ փայտն . և ըստանձնեալ ծանրագոյն բեռն , իբրև եհաս 'ի սանդուղսն՝ ելանել 'ի տեղին ուր զփայտն դնէր , եհար զնա դև՟ն ,

և 'ի բարձանց 'ի վայր ընկեց հանդերձ բե-ռամբն . և համարեցան զնա մեռեալ՝ որ առընթեր կային . իսկ նա յարուցեալ վաղվա-ղակի՝ ասէ . մի խռովիր յուզիւ սիրելի իմ և որ ը̅դ քեզ են . զի ոչ վնասեցայ , այլ կեամ զօրութբ̅ տ̅ն մերոյ յ̅ի ք̅ի . և յամօթ եղև չար դևն : Նա առեալ եպրաքսեայ զբեռնն՝ ե-հան 'ի նոյն տեղին . և դարձեալ առնու զըս-պասաւորութիւն իւր աներկիւղ համարձա-կութբ̅ :

Դարձեալ յայլում աւուր ելանէր 'ի բարձր տեղի վանաց ցերրորդ ստիկոնն ( կամ դստի-կոն ) հանդերձ յուղեաւ 'ի պէտս ինչ իրաց . եհար զնա դևն , և 'ի բարձրութենէն 'ի վայր ընկեց (7) . բայց ոչինչ վնասեցաւ . այլ յա-րուցեալ եկն 'ի տեղի իւր : Զարմանք կա-լաւ զամենեսեան . հարցին և ասեն . միթէ վնասեցա՞ր ինչ . և նա ասէ , ոչինչ . զի յայն-ժամ յիշեցի զսաղմոսն՝ որ ասէ . հրեշտակաց իւրոց պատուէրեալ է վ̅ն քո պահել զքեզ յա̅մ ճանապարհս քո , և 'ի չարասէր դիւէն . և լուեալ զայս իմացան , ( զոր նա ը̅դ քօղով ծանոյց , ) եթէ հրեշտակ ա̅յ պահեաց զնա յորոգայթից թշնամւոյն :

Դարձե̅լ յայլում աւուր մինչ էր 'ի սպասու և 'ի սաստիկ հրոյ եռայր ոսպնաթանն 'ի կաթսային և ելանէր , կամեցաւ եպրաքսիա հախուցանել զեռանդն . և ահա յազդմա-նէ դիւէն զիմեաց ոսպնաթանն և հեղաւ 'ի վ̅ր երեսաց նորա և 'ի վ̅ր ա̅մ անձինն . զոր տեսեալ մերձաւորացն՝ զահի հարան : Իսկ

նա

նա ասէ. մի՛ երկնչիք, զի տէր ընդ իս է, և ոչ կարաց վնասել չարն. այլ իբրև զցօղ ան-կաւ զինև, և ոչ զգացի զսաստիկ ջերմութ̃ին. և ամենեքեան 'ի ձեռն նր̃ օրհնէին զա̃ծ, որ այնպէս անվնաս պահեաց յորոգայթից բանսարկուին:

Եւ նա ինքն վանաց տիկինն զարմացեալ 'ի վր̃ այսր ա̃մի անցից անցելոց՝ ասէ ցաւա-գուհին. գիտէ՞ք, զի 'ի վերուստ շնորհք տուեալ յա̃յ որդեկիս մերոյ ընդդէմ կալ հա-կառակասէր դիւին. ո՞րքան փորձեաց զնա, և ա̃մի յաղթօղ գտաւ շնորհօքն ք̃սի: Եւ նք̃ տային վկայութի ասացելոցն, և միաբան փառաւորէին զա̃ծ. և ասէին. արդարև բա-րի արմատոյն բարի շառաւիղ գտաւ եպրաք-սիա:

Լինէին 'ի վանս անդ աղօթիւք նր̃ ուխտին և մեծուհւոյն բժշկութիք ախտաժետաց՝ մանկանց և կանանց, որք հաւատով գային առ նմ̃ յա̃է անտի 'ի համբաւ բարեպաշտութե̃ նդ̃: Այլ անբուժելի թուէր կին մի, զոր ու-նէր այս չար իշխանական՝ չարագոյն քան ըզ-չարսն. զսա ոմանք 'ի մերձաւոր գաւառէն ածին ընկեցին երկաթի կապանօք արտաքոյ ապարանից վանացն, և ինքեանք փախեան. նա գոչէր անհամաձայն բարբառովք և կըր-ճտէր զատամունսն, և զարհուրեցուցանէր զամենեսեան զլսօղսն: Եւ իբրև զգացոյց դռնապանն վանաց տիկնոջն, առեալ նորա զաւագուհին՝ եկն 'ի տեսանել զնա. և ա-ղօթս արարեալ 'ի վր̃ նր̃՝ ոչ կարէին հպել

առ նա , այլ շուրջ եղեալ զնովաւ՝ լային զնա
վն̄ անհնարին վտանգին . ապա բերին հաց ,
և կապեցին 'ի դաւազան , և այնպէս 'ի հե֊
ռուստ տային նմ̄ . և նա ուտէր յանգգայս .
և թէպէտ կայր 'ի կապանս և յերկաթի շղ֊
թայս , բայց բազում անգամ 'ի կերակրին
խլէր զգաւազանն և զսկաւառակն , և զկնի
ցնդէր բերողացն զկերակուրն . և այսպէս
կայր մնայր եղկելի ամենեցուն . և աղօթք
ստէպ լինէին վն̄ նր̄ 'ի ն̄ք եկեղեցիսն :
Յաւուրսն յայնոսիկ գայ կին մի , և ածէ
եօթնամեայ կմ̄ ութամեայ մանուկ մի ան֊
դամալոյծ և խուլ և համր . զգացոյց դռ֊
նապանն վանաց տիկնոջն . և նա ասէ ցեպ֊
րաքսիա . Երթ ա՛ծ զմանուկն այսր , և արաս֊
ցուք աղօթս վն̄ նր̄ . և երթեալ առ զմանուկն
'ի գիրկս իւր , և խանդաղատեցաւ զնովաւ .
ելաց և ասէ . Տր̄՝ որ բժշկեցեր զանդամա֊
լոյծն , բժշկեսցես և զսա . և խ̄նագրեաց ե֊
րիցս անգամ յանուն հօր և որդւոյ և հոգ֊
ւոյն ս̄բյ . և վաղվաղակի բժշկեցաւ մանու֊
կըն . և եպրաքսիա կամէր ծածկել՝ զոր 'ի
ձեռն նր̄ արար ա̄ծ . այլ յայտնի եղև բանն ,
զի վազեաց մանուկն՝ ձայնելով և խնդրելով
զմայր իւր . և ել համբաւս այս ը̄ ա̄մ երկիրն .
և ա̄մ ուխտն արժանի համարէին զեպրաք֊
սիա այնպիսի շնորհաց յաղագս համեստ և
ն̄ք վարուցն . և նա ևս առաւել ամօթխա֊
ծութ̄բ և երկիւղիւ՛ սպասաւորէր քերցն :
Յետ այսորիկ ասէ սարկաւագուհին ցեպ֊
րաքսիա . եթէ ոչ երկնչիս յայսահար կնո֊
ջէն ,

ջէն , սպասաւորեա՛ նմա , և 'ի ձեռն քո կերակրեսցի ։ Եւ նա ասէ . ո՛չ երկնչիմ անուամբն ք̃ի . և սպասաւորէր նմա , և առեալ տանէր զկերակուրն և տայր առանց գաւազանի . և 'ի դնելն առաջի նր̃՝ բուռն հարկանէր այսահարն զհանդերձից կուսին , և մըրմռեալ կրճտէր զատամունսն ։ Իսկ եպրաքսիա կալեալ զձեռանէ նորա՝ ասէ . չա՛ր դև կարկեա՛ , զի մի՛ առից զգաւազան հոգևոր մօրն , և գան հարից զքեզ . և նոյնժամայն լռեաց և հանդարտեաց . և առեալ կերակուր եկեր 'ի ձեռաց նր̃ . և 'ի ժամէն յայնմանէ հանդարտութ̃բ լսէր նմա յա̃մի ։ Եւ յորժամ շարժէր դիւահարն յայսոյն չարէ՝ ոչ մերձ լինելով եպրաքսեայ , ասէին մերձակայքն . գա՛յ ս̃բ կոյսն եպրաքսիա գաւազանաւ տանջել զքեզ . և ը̃ լսելն զայս հանդարտեալ լինէր ։

Զայս տեսեալ գերմանեայ՝ միւսանգամ չարացաւ յազգմանէ չարին ը̃դէմ եպրաքսեայ . ասէր առ քորսն . եթէ չէր եպրաքսիա , միթէ ո՞չ ոք էր՝ որ կերակրէր զնա ։ Եւ յասել նր̃ , թէ նմա տուեալ է շնորհս յա̃յ ը̃ արժանաւորութ̃են իւրոյ , ասէ գերմանի . ես տարեալ կերակրեցից զնա ։ Եւ իբրև մերձ եղև յայսահարն , և ասէ , ա՛ռ կե՛ր զկերակուրդ՝ զոր բերի , յարձակեցաւ նա 'ի վր̃ նր̃ , և բուռն հարեալ զհանդերձիցն պատառեաց , և յաղթահարեալ ընկէց զնա 'ի վայր . և անկեալ 'ի վր̃ նր̃՝ ատամանցն ծակոտէր զմարմին նր̃ . և ոչ այլ ինչ գուշակէր ահաւոր տեսութե̃ն ,

թին , բայց սպանանել զնա ։ Իսկ ձին բար-ձեալ գերմանի՝ ասէ ․ ո՞վ փրկեաց զիս յայ-սոյ չարէ ․ բայց ոչ ոք իշխէր մերձենալ յայ-սահարն , և թափել զնա ։

Ապա եղև եպրաքսեայ , և փութացաւ վաղ-վաղակի 'ի տեղին , և զերծոյց զգերմանի յայսոյն չարէ զխոշտանկեալն մեծ բռնութ̄ և սաստիկ վիրօք խածոտածոց , շաղախեալ արեամբ և պատառեալ հանդերձիւք ․ և ասէ ցայսահարն ․ զի՞ մոլիս ընդդէմնց՝ որք կերա-կրեն զքեզ ․ լռեա՛ 'ի բարկութենէ , և հան-գի՛ր 'ի սրտմտութենէ որ առ քորսդ ․ զի մի՛ գա-ւազանաւ մեծութեան հարցեն զքեզ ․ և նա ողջ կայր՝ զարհուրեալ յերանելւոյն ։ Իսկ եբրև երեկոյ եղև , գնացին յիւրաքանչիւր տեղիս ․ իսկ եպրաքսիա զգիշերն ամ կայր յաղօթս արտասուօք առ նր ած՝ այցելուէ առնել այսահարին ։

Իսկ 'ի ծագել արևուն երթայր եպրաքսիա առ դիւահարն , և տեսանէր զնա՝ զի պա-տառեալ էր զհանդերձս իւր , և ուտէր զան-տեղութիւս իւր մերկ և խայտառակ ․ և բո-կսաւ լալ երանելին դառնապէս ․ մինչև ժո-ղովեցան ամենեքեան , և նք ևս լային ․ և ասէին ․ խնդրեսցուք յայ մն եղկելւոյս այ-սորիկ՝ զի ողորմեսցի սմա ։ Յայնժամ տա-րածեալ եպրաքսեայ զձեռս իւր 'ի վեր՝ ե-կաց յաղօթս և ասէ ․ Տր ած ամենակալ հայեա՛ց յերկնից 'ի սրբուէ քումմէ , և արա՛ ողորմութի ստեղծուածոյս քո , որ չարաչար տանջի յայսոյ չարէ ․ զի քո արարած է , և

քեզ

քեզ լիցի փառաբանիչ և երկրպագող․ և չար դեւն նկուն լիցի՝ որ իշխեալն է ՚ի վերայ սորա․ զի քո է իշխանութ՟ի և զօրութ՟ի և տէրութ՟ի, և քեզ վայելէ փառք և պատիւ և արքայութ՟ի՝ հօր և որդւոյ և հոգւոյդ ս՟րբ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․

ամէն ։

Եւ յասել ն՟մ քերցն զամէնն՝ մերձ եղև եպրաքսիա յայսահարն, և եդ (կ՟մ արար) ՚ի վ՟ր գլխոյ ն՟ր զնշան խաչին ք՟ի, և ասէ․ ե՛լ այս չար յանուն յ՟ի ք՟ի որդւոյն ա՟յ ։ Եւ դեւն հակառակէր չելանել․ և նա ո՛չ տայր թոյլ զօրութ՟ն ք՟ի, այլ հարկանէր երիցս գաւազանաւ մեծուհւոյն, և ասէր, ելցես․ և դեւն ևս քան զևս պնդէր չելանել ։ Եւ նա ասէր․ զի՞նրդ կարասցես ը՟դդիմանալ ք՟ի զօրութ՟ենն, որ ելոյծ զքո զօրութ՟իդ կամաւոր խաչելութ՟ն իւրով ։ Եւ դեւն ասէ․ ո՞ւր ելեալ երթայց ՚ի բնակութ՟էս իմմէ ։ Եւ ասէր երանելի կոյսն․ ՚ի խաւարն արտաքին, յանշէջ հուրն, ՚ի տանջանսն յաւիտենից՝ որ պատրաստեալ է դիւացդ, և որք առնեն զկամս ձեր զազրագործութ՟ք ։ Եւ նոյնժամայն զարկոյց զնա դեւն, և կրճտէր զատամունսն իւր, և ասէր․ վա՜յ ինձ, յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարեալ՝ ելանեմ ՚ի բնակութ՟է և ՚ի դաշնաւորութ՟է իմմէ․ և զայս ասացեալ՝ իբրև զծուխ պակասեալ չքոտեցաւ․ և ահ կալաւ զամենեսեան, և փառաւոր առնէին զա՟ծ ՚ի վ՟ր եղելոցն՝ զոր ա՟ր եցոյց ՚ի ձեռն եպրաքսեայ ։

Եւ

Եւ առեալ երանելւոյն զկինն՝ լուծաց 'ի զա-
զիր աղտեղութենէն , և զգեցոյց նմա պարե-
գօտս . և ասէ . զգո՛յշ կաց աղօթից և պահոց
և ամենայն առաքինութեանց և որք վարուց . զի մի՛
դարձցի չարն 'ի քեզ , և լինիցի վերջինն չար-
քան զառաջինն . և առեալ տարաւ զնա առ-
մեծուհին՝ համեստացեալ և զգաստացեալ :
Յետ այսորիկ ըստ խնդրոյ նորա տարան զնա
միաբան յաղօթանոցն . և աղօթս արարեալ
որհնեցին զնա 'ի կարգս կրօնաւորութեան՝ վաս-
տակել 'ի պահս և յաղօթս հանապազօր : Իսկ
երանելին եպրաքսիա առաւել ևս նուաս-
տացուցանէր զինքն՝ պնդեալ 'ի հնազանդ-
աղօթսն և 'ի պահսն բազում ջգնութեամբ . և
զխոհահարին զբժշկութիւն ոչ իւր անձինն հա-
մարէր , այլ՝ այլոյ , և աղօթից հոգևոր մօրն :
Եւ եղև յաւուր միում տեսանէր մեծուհին
տեսիլ 'ի գիշերի , և խռովեցաւ յոյժ . և
կայր տրտմեալ և տխրեալ , և ոչ ումեք կա-
մէր յայտնել . և կայր յաղօթս անդադար .
և ոչ ցամաքէր արտասուք նորա՝ յորժամ տե-
սանէր զեպրաքսիա . և ոչ ոք իշխէր հարցա-
նել յաղագս տրտմութեան աւուրս ինչ : Ապա
միաբանեալ աւագուհիքն՝ բռնադատեցին
զնա յոյժ , մինչև ամաչէր , և ասէր . լուա-
րուք ինձ , աստուածասէր դստրիկն եպրաքսիա յետ
երից աւուրց ելանէ յաշխարհէս , և երթայ առ այն՝
որում ետ զանձն 'ի ծառայութիւն . և զմեզ թո-
ղու յայնքան բարի օրինակացն՝ զոր յանձին
երևեցոյց մեզ , և 'ի նախանձ յորդորեաց
բարեպաշտ բանիւք իւրովք . արդ որ լսելիք
կա-

կարեն լսել զլուրս զայս , կամ որ տեսանելիք կարասցեն տեսանել զերանելն նր յէջս ։

Զայս լուեալ քերցն ամենեցուն՝ լային դառնապէս զերանելւոյն որոշումն յինքեանց , և այլ ոչ ևս տեսանել զնորն եպրաքսիա ։ Իսկ նա յայնժամ առնէր հաց 'ի փուռնն , և յուղիս օգնէր նմա . ազդ եղև նմա՝ թէ սուգ է մեծուհւոյն և աւագուհեացն . և աղաչեաց զյուղլիա երթալ գիտել զպատճառն . և նր երթեալ թաքուցանէր զանձն ուրեք առ դրանն , ուստի ունկն եդեալ լսէր զաւաղական բանս ժողովելոցն . և զի ասէր մեծուհին . մի ոք ասիցէ եպրաքսեայ՝ մինչև 'ի ժամն . և սկսաւ պատմել զտեսիլն՝ զոր ետես . Երկուք ոմանք ասէ եկին լուսաւորք և վայելուչք , և ասեն . առաքեա զեպրաքսիա , զի խնդրէ թագաւորն անմահ . և դարձեալ այլք եկին , և ասեն . սա զեպրաքսիա և եկ առ ամենեցունց տրն , զի կոչէ զդա . և նոյնժամայն առեալ զդա՝ գնացաք ը նմ . և իբրև հասաք 'ի դուռն ինչ գեղեցկագոյն՝ որ ինքնին բացաւ մեզ , տեսի փառս և պայծառութիս երևելիս՝ զոր ոչ կարեմ պատմել . և 'ի մտանելն մեր 'ի սրբութի սրբութեց՝ զեպրաքսիա առեալ տարան առաջի տն , և երկիրեպագ նմա , և համբուրեաց զանարատ զոտսն տն . և տեսի բիւրս հրեշտակաց և անթիւ բանակս սրբց , որք քաղցրաձայնութբ օրհնէին զած ։ Եւ ահա մայր տն , որ ցուցանէր եպրաքսեայ զվայելչութի անճառելի փառացն այնոցիկ , և զանթառամ փառաց պսակն՝

պատկն՝ որ պատրաստեցաւ նմա. և ասէ. այս է վարձս վաստակոց քոց ճգնութեանցն՝ զոր կրեցեր յերկրի. արդ երթ, և յետ տասն աւուր եկեսցես, և վայելեսցես զանսպառ բարիսն ը̄ ա̄մ սիրելին ա̄յ ։ Եւ զայս տեսանեալ՝ ծածկեցաւ տեսիլն. և այս եօթն օր է տեսլեանս. և այլ ևս երեք աւուրք են, որ թողու զմեզ, և երթայ առ ա̄ծ՝ որ կոչեաց զնա յանանց կեանսն. այլ յա̄մի կամք ա̄յ կատարեսցին ։ (8)

Զայս լուեալ յուղկայ՝ դարձաւ տրտմութ̄ առ Եպրաքսիա. և ոչ կամէր յայտնել նմա զոր լուեալն, այլ պատճառէր այլ ինչ ։ Եւ նա երդմնեցոյց զնա յա̄ծ կենդանի՝ ասել նմա ստուգապէս ։ Եւ նա ասէ. տիկին իմ, մ̄ ք̄ է ստուգն այն մեծ, որ յետ երից աւուրց թողուս զմեզ, և երթաս առ ք̄ս՝ առ որ անձկացեալն ես. ո՞վ ցուցաւ մեծուհւոյն. և փղձկեալ յարտասուացն յուղկա՝ ոչ կարաց ճառել զիրս տեսլեանն ։

Եւ ասէր երանելին Եպրաքսիա. թէ թողու զիս տէր ամի, զի արարից պտուղ արժանի ապաշխարութե̄, կամ է ինձ այս. ապա թէ ոչ՝ զի՞արդ կարացից այսու կենօքս թոյլ և մեղկ խորհրդով արժանի լինել արքայութե̄ն երկնից. աւա՜ղ իմոյ ծուլութեանս՝ որ ոչ յիշէի զելս յաշխէս. կարծէի բազում ամս կեալ. արդ զի՞նչ ունիմ ախնատուութի առաջի ահեղ ատենին քո. որ ոչ ունիմ ը̄ իս բարի գործս, որով համարձակութի առից առ ք̄ս տէրն իմ ։ Եւ արդ խնդրեմ յամենեցունց և

՚ի

՚ի մեծուհւոյն՝ որոց սպասաւորեցի , զի ա-
ղօթս արասցեն ՚ի վ՟ր իմ , զի կեցից ամ մի ,
և ապաշխարեցից . եթէ ոչ , կամք ա՟յ կատա-
րեսցին , և ՚ի ձեռն ամենեցուն աղօթից գը-
տից ողորմութ՟ի յամենեցունց տ՟նէն ՚ի հան-
դերձեալ ց՟ին ։

Որդ զայս ա՟մ զգացուցին վանաց տիկնոջն ,
եթէ լուաւ եպրաքսիա զհամբաւ մահուն
իւրոյ , և տրտմեալ հոգայ ։ Հաւաքեաց մե-
ծուհին , և կոչեաց զեպրաքսիա յաղօթա-
նոյն . և ամենեքեան ընդ նմա . և ասէ . որ-
դեակ իմ զի՞ տրտմեալ ես և տարակուսեալ ։
Եւ նա ասէ . զիա՞րդ ոչ տարակուսիմ , զի
ո՛չ յառաջագոյն ծանուցեր զօր վախճանի
իմոյ՝ որ ցուցաւ քեզ ՚ի տ՟նէ , և առնէի պը-
տուղ ապաշխարութ՟ե . զի ՚ի գերեզմանի ո՞վ
է՝ որ պտղաբեր լինիցի . զի կենդանեաց է
առաւելուլ ՚ի պտղաբերութ՟ի բարեպաշտու-
թ՟ե և բարի գործոց . զի ոչ ոք կարէ բարիս
գործել յետ աստի կենացս վախճանելոյ . և
արդ աղաչեմ զձեզ հայցել ՚ի տ՟նէ , զի տացէ
ինձ ժամանակ ապաշխարութ՟ե ամ մի , որով
ձգնեալ արդարացայց ։

Եւ ասէ մեծուհին . որդեակ իմ , դու երանե-
լի ես ՚ի ձեռն ք՟ասէր ո՟ք և անարատ ձգնա-
ւոր վարուց քոց , որ լքեր թողեր զ՟ծիս մե-
ծութ՟ի , և հասեր անձառ փառացն , ո՟պ և
եցոյց ինձ ք՟ս , որ քեզն է պատրաստեալ ան-
քնին տեղի ուրախութ՟ե ։ Եւ դարձեալ սկսաւ
պատմել զտեսիլն առաջի ամենեցուն , ո՟պ
և յառաջագոյն ասացաւ . և ամենեցուն յար-

տա-

տասուս եղեալ լային. և վ՟ն ահաւոր տես-
լեանն ահի՛ և խնդութ՟ք մատուցին գոհու-
թի և փառս ամենասուրբ երրորդութե՟ն :

Յայնժամ ասէ եպրաքսիա. ով եմես, և զի՞նչ ջան է իմ առաջի ա՟յ. բայց միայն յուսացեալ եմ յա՟ծ փրկիչն իմ և 'ի ն՟ք աղօթս ձեր՝ բարեխօսութ՟ք ն՟ք ա՟ծածնին և ա՟մ ս՟ց, զի արժանի եղիցիմ մասին ժառանգութե՟ ն՟ցն 'ի լոյս. որում վիճակի ն՟ց ցանկացայ, և 'ի ք՟ն ընծայեցայ 'ի ն՟ք կարգս յայս. թէպէտև ծուլութ՟ք վարեցի զկեանս, և ոչ ը՟ս ք՟ն աւետարանին. և արդ ք՟ն կամքն յիս կատարեսցի : Եւ դու մա՛յր իմ հոգևոր և ա՟մ սրբուհիք մի՛ մոռասջիք զիս աղաչեմ 'ի համապազորդ աղօթս ձեր, որով սնուցիք զիս, և ա՟յ ընծայեցիք. զի արժանի եղէց ն՟ցն հանգստեան 'ի հանդերձեալսն՝ յոր երթամ, և այլ ոչ դառնամ առ ձեզ. և քանզի բարեմտութ՟ք ընկալայք զիս, օրհնութի ա՟ն ա՟յ եղիցի 'ի վ՟ր ձեր յայսմ հետէ և յաւիտեանս յաւիտենից :

Եւ բազում այլ ևս խօսեցաւ ը՟ն խորհրդածութե՟ն բանս հրաժարման. և զի երեկոյ էր, մօտանէր 'ի ժամ գիշերապաշտամանն. և հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն ա՟յ՝ մինչև յերրորդ ժամ աւուրն : Եւ յայնժամ մատուցաւ պատարագ. և ճաշակեաց զմարմին և զարիւնն ք՟ի 'ի քահանայէն, և ասէ. սա՛ եղիցի ինձ 'ի քաւութի մեղաց, և 'ի կենդանութի յաւիտենական կենացն, 'ի փառս ամենասուրբ երրորդութե՟ն : Ապա եկն 'ի տեղի

իւր , և յուղիս ՟ը՟ նմա . և խօթացաւ երա-
նելին . և դարձեալ ժողովեցան առ նա ամե-
նեքեան հանդերձ մարբն՝ հրաժարել 'ի ն՟ը
աղախնոյն ք՟ի :

Եւ ասեն ամենեքեան ցեպրաքսիա . յիշեա՛
զմեզ սրբուհի տիկին մեր առաջի ք՟ի , որ
առեր համարձակութի բարեխօսութե յա-
ղագս առաքինասէր և ն՟ը վարուց քոց . զի և
մեք հաճոյ գտցուք կամացն ա՟յ բարեսիրաց ,
և մի՛ զրկեսցուք 'ի քոց բարեացն՝ որ քեզն է
պատրաստեալ : Եւ բժշկեալն 'ի ձեռն նորա
համբուրէր զձեռս ն՟ր , և ասէր . ն՟ը ձեռքս
այս կերակրեաց զիս զանարժանս , և 'ի ձեռն
սորա աղօթից հալածեցաւ յինէն այսն չար .
ո՛վ երանելի կոյս յիշեա՛ զիս զազատեալս 'ի
դիւէն զաղախին քո առ ք՟ս , զի մի՛ այլ չար
դիպեսցի ինձ յետ քո զկեանս լուծանելոյ :
Եւ նա ասէ . երթ քո՛յր խաղաղու՟թ , և մի՛
թողուր զերկիւղն ա՟յ , և պահեսցէ զքեզ 'ի
չարէն :

Եւ ասէ երանելին ցմայր ուխտին . աղօ՛թս
արա ամենեքումբք հանդերձ 'ի վ՟ր իմ , զի
վտանգ է ինձ ելանել հոգւոյս իմոյ . զի թէ-
պէտև հոգիս յօժար է , այլ մարմինս տկար .
ո՟ղ ասաց ք՟ն : Եւ սկսան 'ի պաշտօնն ՟ը խոր-
հրդածութե վախճանին . և իբրև ասացին
զամէնն , հանգեաւ երանելին 'ի փառս և 'ի
գովութի ամենասու՟ր երրորդութե՟ն , կացեալ
ն՟ըյ կուսին 'ի կարգին ամս ՟է , ( կ՟մ ՟ը այլ օ-
րինակի՝ ի՟ը , 'ի հասակի ՟է ամաց ) ա՟մ առա-
քինու՟ե զարդարե՟է , հաճոյ ա՟յ և մարդկան

եղեալ. և թաղեցին զնա 'ի գերեզմանի մօրն իւրոյ. և կատարեցին 'ի վ՟ր ն՟ր զգե-րեզմանի կարգն. և գոհանալով փառաւո-րեցին զա՟ծ, որ այնպիսի ն՟ր անձինն արժա-նաւորք եղեն կենաց կցորդութ՟ե, և յուղարկ-մանն առ ք՟ս։

Իսկ յուղիա՝ որ էր ն՟ր ուսուցիչ հրամանաւ վանաց տիկնոջն, և խանդաղակաթ էր 'ի սէր ն՟ր, ոչ կարէր մեկնիլ 'ի գերեզմանէ ն՟ր զե-րիս աւուրս. և ահա տեսիլ ցուցաւ նմա եր-թալ զհետ ն՟ր 'ի հանդերձեալ կեանսն. և եկեալ առ մայր ուխտին՝ պատմեաց նմ՟ ըզ-տեսիլն. և հրաժարէր յամենեցունց՝ յանձն արար աղօթից. և խօթացեալ յետ երկուց աւուրց փոխեցաւ առ ք՟ս երանելին յուղիա, այն է հինգօրեայ յետ մահու երանելոյն ե-պրաքսեայ. և թաղեցին զնա առ գերեզմա-նին եպրաքսեայ փառաւորապէս։

Եւ յետ անցանելոյ աւուրց երեսնից կոչեաց մեծուհին զաւագունհիսն, և ասէ. ընտրեցէք մի ոք 'ի ձէնջ յառաջնորդուհի այլոց. զի ո՞չ կամք ա՟յ եղեն բարեխօսութ՟ե որդեկին մերոյ եպրաքսեայ, կոչեաց զիս ք՟ս առ ինքն, ո՞չ զյուղիա նորին բարեխօսութ՟բ. զի արժանի լիցուք անսպառ բարեացն՝ որ կայ և պահի արժանաւորացն որ 'ի ք՟ս յ՟ս։ Եւ ես զին-թայս իմ կատարեցի, և զկարգ ն՟րց առաջ-նորդացն պահեցի. և գիտէք ամենեքեան, զի ոչ դադարեցի 'ի խրատելոյ զմի մի իւրա-քանչիւր ոք 'ի ձէնջ հանդերձ արտասուօք առ հաճոյսն ա՟յ, լինել ս՟բս և անարատս ա-

ռա-

ռաջի ն՟ր , և հոգևոր սիրով կեալ միա՟լ ձեզ անշարժ՝ առ միաբան կեանս , խոնարհ և հեզ և աշխատասէր , ո՟պ երանելին եպրաքսիա , որ եթող ձեզ օրինակ վարուց . և արդ նախանձաւոր լերուք գործոց բարեացն , զի և ը՟ նմ՟ վայելեսջիք զանսպառ բարիսն յանանց ուրախութեանն . և վ՟ն իմ աղօթս արարէք , զի արժանի եղէց անմահ կենացն ը՟ երանելի որդեկիս մերոյ եպրաքսեայ . և մի՛ սգայք ՚ի վ՟ն իմ , աղաչեմ զձեզ ։ Ընտրեցէք ձեզ վերակացու , զի օրհնեցից զնա յանուն տ՟ն . զի փութացուցանէ հրաման տ՟ն ելանել ինձ ՚ի մարմնոյս , և երթալ առ կոչեցեալսն յառաջագոյն ։

Յու ընտրեցին զԹէոդնիա (կ՟մ զԹէոդոսնիա), որ վկայեցաւն յամենեցունց բարեպաշտօն և երկիւղած յ՟այ՝ իմաստուն մտօք և բանիւք , հաճոյ ա՟յ և մարդկան . և եդեալ ձեռս ՚ի վ՟ր ն՟ր՝ նստուցին յաթոռ մեծուհւոյն . և երկրպագեցին և ողջունեցին , և օրհնեցին յանուն տ՟ն ։ Ասէ մեծուհին . զօրացի՛ր և քա՛ջ լեր . մի՛ և մի՛ իւիք տացես պատճառ անկարգութ՟ե ուխտիս՝ որ քեզ հաւատացաւ յ՟այ . գիտես զկարգս և զկրօնս ուխտիս . մի՛ և մի՛ իւիք սխալեսցես ՚ի սահմանեալ աղօթիցն և ՚ի պահոց և յաշխատասէր գործաւորութ՟է . և մի՛ ստանայցես ստացուածս բազում՝ վանացս , և կ՟մ առանձին ստանալ . և մի՛ ումեք տացես զբաղիլ յայնպիսի իրս՝ որովք ստանայցեն ինչս , և զրկիցեն յերկնային բարութ՟եցն . այլ ՚ի ձեռն աշխատութ՟ե ձեռագործի

ձեր եկեսցէ ձեզ ՝կերակուր և հանդերձ ՚ի տնէ․ զի որ զվայրի խոտն զգեցուցանէ, և տայ անասնոց կերակուր և թռչնոց, և զձեզ կերակրեսցէ զփառաբանիչս անուան իւրոյ ս̃բյ և զգեցուսցէ․ բայց ՚ի սիրոյ ն̃ր մի՛ մեկնիք, այլ հանապա՛զ լերուք ՚ի սէրն ք̃ի։

Յուշ լիցի ձեզ վարքն եպրաքսեայ երանելոյն, որ ՚ի միջի ձերում կատարեաց զա̃մ արդարութ̃ի համբերութ̃բ բազմաւ․ զի ո̃վ ոք զնորայն ճգնող վարսն կարասցէ պատմել․ որ արհամարհեալ էր ՚ի նմանէ երկրաւորաց ցանկութ̃ի երեւելի և աներևոյթ՝ ո̃չ զաղէխնչ անարգագոյն․ որ ա̃մ հեզութ̃բ և խոնարհութ̃բ աղախնայեր աղախնաց և սպասաւորեր սպասաւորաց․ և վերջին քան զամենեսեան և անարգ զանձն երեւեցոյց յա̃ի․ ո̃չ իմի՛ք պանծայր առ անարգս ո̃չ թագաւորազն․ և վ̃ս այնորիկ փառաւորեցաւ ՚ի լոյսն անմատոյց, ո̃չ և ինձ եցոյց ա̃ր ըզփառսն․ նմանօ՛ղք լերուք ն̃ր հանդիսից, զի և ն̃ր փառացն հասջիք ՚ի ք̃ս յ̃ս։

Եւ կատարեալ մեծուհւոյն զխրատական կտակ իւր՝ ասէ առ ամենեսեան․ երթա՛յք ՚ի խաղաղութ̃ի, և ա̃ծ եղիցի ը̃ն ձեզ։ Եւ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ եմուտ յաղօթանոցն, և ասէ․ մի՛ ոք եկեսցէ առ իս մինչև ցառաւօտն․ զի եկաց յաղօթս առ ա̃ծ զգիշերն ա̃մ․ և իբրև եղև առաւօտ, աւանդեաց ըզհոգին ՚ի փառս ա̃յ․ և մտին ՚ի ներքս և գըտին զնա հանգուցեալ՝ զձեռս ՚ի վեր ունելով ՚ի փառաբանութ̃ի ա̃յ։ Եւ կատարեցին

՚ի

՚ի վր՟ նր՟ զխորհրդածութիւն պաշտօնն ը՟ ա-ռաջնորդաց հրաժարելոց ՚ի փառս ա՟յ․ և թաղեցին ՚ի գերեզմանի ս՟բյն եպրաքսեայ ը՟ հրամանի իւրոյ ։ Այսպէս ամբարեցաւ երանելի մայրն թէոդուղիա կմ՟ թէոդուլի ( որ թարգմանի՝ ա՟յ աղախին ), և հանգեաւ ՚ի ք՟ս, և եդաւ ՚ի հանգստեան ս՟բյն եպրաք-սեայ ։

Յետ այսորիկ ոչ ևս զոք հրամայեցաւ ՚ի նոյն գերեզմանս դնել․ և բազում բժշկութիւնք լի-նէին ՚ի նշխարաց ս՟բյն ա՟մ ախտաժետաց․ և լսելի առնէին դևքն, թէ եպրաքսիա հալա-ծեաց զմեզ ՚ի կենդանութե՟ իւրում, և այժմ մահ և ձգնութի՟ ս՟բյն նկուն արար զմեզ և յամօթ ։ Զի ա՟ծ զփառաւորիչս իւր փառա-ւորէ ՚ի յերկրի, և յերկինս անձառ փառօք զարդարէ ՚ի ք՟ս յս՟ ՚ի տ՟ր մեր․ ընդ որում հօր՝ միանգամայն և ս՟բ հոգւոյն վայելէ փառք, իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից․ ամէն ։

Այս է վարք եպրաքսեայ, և հոգևոր մօրն, և պատուական ծնողացն, և յուղիայի ու-սուցչի նր՟, ասէ գրիչ պատմութե՟ս հնագոյն, թերևս և ժամանակակից ։ Եւ արդարև չո-րեքեանն իսկ անուանեալ անձինք սրբասէրք և ա՟ծահաճոյք՝ ոչ որոշին ՚ի նմանութե՟ սրբու-թե՟ եպրաքսեայ կուսին, և ՚ի տօնի նր՟ զօ-րութե՟ յիշատակին և նոքին․ այլ ոչ ոք ՚ի նո-ցանէ եհաս ՚ի չափ փառաւորել՟ կուսին եպ-րաքսեայ․ որոյ ծնունդն եղև յամի տ՟ն իբր 380․ այն է երկրորդ ամ թ՟գրութե՟ մեծին

Թէոդոսի . և փոխումն յերկինս 'ի Հասանկի ԼԸ, կամ Շամաց, առ փոքրն Թէոդոսիւ՝ յամի տն 410, կամ 418 :

Ս՛ նշխարաց ՛որին եպրաքսեայ չե՛ք յայտնի յիշատակութիւն . միայն ասին լինել 'ի քոնոնիա իտալիոյ և 'ի մեղտիս գաղղիոյ և 'ի կողոնիա գերմանիոյ այլևայլ մասունք նշխարաց եփրասիայ կուսի, զոր ոմանք սորա համարին, և այլք այլոց համանուն կուսից, ուր յոլովք յարևմտեայց նաև զեւպրաքսիա՝ եւփրասիա կոչեն :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Որպէս եւփրատ կամ եփրատ է նոյն գետ, նոյնպէս և եւպրաքսիա կամ եպրաքսիա և կամ եպրակսիա է նոյն անուն միև նոյն կուսի, ոպ և մօր նորա . որ ըստ յունաց կոչի Εὐπραξία, և Թարգմանի բարեգործութիւն . բայց առ լատինս գոյզն փոփոխութբ գնի առէպ Εὐφρασία, որ է այլ անուն յունական՝ Թարգմանեալ բարեբանութիւն կամ յստակաբանութիւն . զոր և ոմանք մեծապէս վրիպակաւ շփոթեցին ընդ այլում կուսի աղեքսանդրացւոյ, որ կոչի եփրասիա կամ եփրոսինէ . ըստ յն . Εὐφροσύνη, որ թարգմանի ուրախութիւն . որոյ յիշատակ լինի 'ի յունվարի . 20 :

Արդ՝ վարք նշանաւոր և տօնելի կուսին եպրաքսեայ և ծնողաց նր ընդ մարմնոյ և ընդ հոգւոյ, գտանի 'ի մեծ Ճառընտրի մերում Ա. յար և նման գրելոցս . զորոյ զբուն սկզբնագիր յունական ոչ տեսանեմք այժմ 'ի միջի . բայց կայ նմանութի նր յունարէն՝ առաւել Ճոխագոյն յիրս իրս ոչ կարևորս, և առաւել պակասաւոր 'ի կարևոր բանս ինչ . այլ ընհանրապէս միաձայն 'ի պատմութե ընդ միմեանց, բաղում ուրեք և ընդ բառից . ոպ թէ երկուքեանն 'ի միոյ աղբերէ կամ 'ի միոյ օրինակէ առեալ իցեն : Այսպիսի վարք յունական է, զոր ընթեռնույր

և

և յովհան դամասկացին . որպէս յայտ է 'ի հատուածոց՝ զոր բերէ . և նոյն այն է, զոր գտեալ 'ի վատիկանեան դրատան 'ի մատեանն . 866. տպագրեցին բոլլանդեանք՝ համդերձ լատինական հին թարգմանութե, որ գտանի 'ի զանազան ձեռագիրս . և նոյն է տպագրեալն կանխաւ 'ի հռոսուէտայ 'ի կարգի հարանց վարուց, որպէս և 'ի վերջին տիպ սուրիոսի . ուր յառաջինն էր այլափոխեալ բազմօք ը ոճոյն : Արդ 'ի սոսին առհասարակ անկարկեալ մեր՝ սակաւ բանից և բառից կարօտացաք 'ի պայծառացուցանել զմիտս և զընթերցուած ճառընտրին մերոյ . և բազում մասամբ պահեցաք զշարադրութի նր, որ ը ինքեան էր պարզ համդերձ վայելչութ, և բազմօք ընտիր գտեալ քան զայժմու յունական և լատին օրինակս . որպէս յայտ է որոց բաղդատեն արթնութե և անաչառութե . թող զքաղուած նոյն պատմութե 'ի յայսմաւուրս մեր ազգաց :

(2) Թագաւորեալ կմ Թէքրական քաղաք անխտիր ասի զհնոյն և զնորոյն հռովմայ յետ կոստանդինոսի . վսյ ը ինքեան անորոշ ձնոյ յունական ընթերցուածն . զոր Ճ. յընթացս նշանակէ լինել հռովմ . և սուրիոսեան օրինակն լատին դնէ կոստանդինուպօլիս . այսպէս դնի և 'ի Հ. պարզաբս . և յայն միտս են հասարակօրէն քննիչք ը բոլլանդեանս : Իսկ բառս սինկղիտոս՝ թէպէտև թարգմանի ծերակոյտ, այն է ը լտ. սէնադուս . այլ 'ի Ճ. դնի նաև փինկ բառիս սինկղիտիկոս, այն է սէնադօռ՝ այր 'ի ծերակուտէ . որ և պատուաւոր կոչի 'ի հայումս : Իսկ սինկղիտուհի կմ սինկլիտիկէ է կին առն սինկղիտիկոսի :

(3) Յ. բս. չփոթէ զխօսնայրն եպրաքսեայ ը միւս սինկղիտոսի՝ որ խնդրէր առնուլ զմայր նորա 'ի կին . զնոյն վրիպակ տեսանես և առ ոմանս 'ի յետնոց :

(4) Որպս 'ի Ճ. նոյնպէս և յընտիր օրինակս լատ. դնի թիւ կուսանաց ճլ. այլ 'ի Յ. բս. ճ. և ևթ. որպէս և յայժմու յունարէն վարս՝ զոյգ ը ժամագր. յն . և Հ. գրի ճզ : Այլ զարմանալին այն է, զի բոլլանդեանք (հենսքէնիոս կմ բաբեպրոք, որոց աշխատասիրութի է հատորն մարտի ) ասեն 'ի ծանօթութե . * յունականն
,, է ըճ . 103 . իսկ 'ի ժամագիրս և 'ի յայսմաւուրս յու-
,, նաց՝ էգադօն քէ դէսսարէս , 104 || . և սակայն յայտ է, թէ՝ և ըճ է 104, և ոչ 103 : Եթէ կարէաք, գրողի կմ տպագրողի սխալ առէաք զայսպիսի չփոթութի, բայց տեսանեմք յընթացս սոյն վարուց առէպ երկրորդեալ

զնմանօրինակ յայտնի վրիպակ. զի ուր ասի ՚ի Ծ. և ՚ի յն, թէ երկիցս հնգետասան օր՝ մինչ երեսուն օր կրեաց եպրաքսիա զքարինս տեղւոջն ՚ի տեղի, ասեն բոլլանդեանք. * Յունական սկզբնագիրն ունի λ΄. 20. այլ
,, քանզի այլուր միշտ գրեթէ զմի տասնեակ ՚ի նմ պա-
,, կաս գտանեմք, քան զոր գնեն յոյն և լատին ձեռա-
,, գիրք, չիշխեմք ատտանօր հաւաստ ընծայել նմա ||. փինկ զի ասելին՝ թէ մեք չփոթութք երևակայութեն միով տասնեկաւ տարբեր իմացաք զընթերցուածն ուղիղ. վն զի λ΄. ոչ է 20, այլ 30. զոր խնդրեցինն: Նոյնին պաշարմամբ մնաց գրեն զկնի, թէ ուր վն աւուրց ապաշխարանաց դերմանոյ գնի ՚ի լտ. երեսուն, ընդ գնի ասեն ՚ի յն. λ. 20. և սակայն այն իսկ է 30, և ոչ 20: Նոյնպէս և վն աւուրց պահոց եպրաքսեայ, որ է ըստ Ծ. և լատ. քառասուն, իսկ ՚ի յոյնն է զի գրի λ΄, մն 30. և է զի μ΄, մն 40, ՚ի զուր գրեն նք այսպէս. * ՚Ի
,, յն. գնի λ. 20. և փոքր մի զկնի μ. 30. այլ ժամա-
,, գիրքն յունաց միաձայն ընդ լատին ձեռագրաց, և խ-
,, կութի քառասնեակ թուոյ՝ որ կացուցանէ զամբողջ
,, ընթացս պահոց, յաղթէ այսմ միակ ձեռագրի. թող
,, զի և այլուր միշտ միով տասնեկաւ տարբերի ՚ի չորից
,, լատին ձեռագրաց ||. և սակայն ըստ իրին ոչ տարբերին, այլ են նոյն. Ըստ այսմ և վն ամաց հասակին եպրաքսեայ՝ որ միօրինակ λ΄. 30 գնի ՚ի յն. և ՚ի լտ. ասեն վայրապար. * Ըստ և ՚ի ստորև յունականն է λ΄. 20.
,, այլ մեք չհաւատամք այսմ թուոյ ||: Եւ արդարև և մեք չհաւատամք՝ թէ այսպէս կարելին սխալիլ և արք լեզուագէտք. բայց ասելի է, թէ գոյ քուն և խմաստնոց. ապա թէ ոչ՝ անխմանալի վրիպակ է գրութն կմ կրկին տպագրութե:

Մի միայն յայտնի սխալ թուանշանի կայ ՚ի յն. զի յետ յիշելոյ զեօթնամեայ ( կմ ըստ մեզ զութամեայ ) հասակ եպրաքսեայ կուսի ՚ի մտանելն ՚ի վանս, և զերկոտասանամեայ՝ ՚ի գրելն պինի առ թէոդոս կայսր, ապա ՚ի յիշելն զերևելի գործս ճգնութե նր, ասէ թէ եր յայնժամ ամաց ι΄. որ է 10. բայց յայտ է թէ պարտի լինել կամ ιε΄, մն 15. կմ κ΄. 20. ըստ գնի ՚ի լատինն: Իսկ ՚ի պահելն զքառասնօրդս անսուաղ՝ ուր յն. դնէ լինել ամաց κε΄. 25. Ծառընտիրն մեր ընթերցեալ է κζ΄. 27. զի գրէ քսան և եօթն, եթէ չիցէ ՚ի հին օրինակի իճ, և օրինակօղն վերծանեալ իէ: Նոյնպէս անյայտ մնայ և ամ հասակին եւպրաքսեայ ՚ի ժամ փոխման. զի Ծ.

ասէ.

ասէ․ * Հանգեաւ երանելին․․․ կացեալ ամէյ կուսին 'ի
,, կարգին ամս Ը || ․ յոր յաւելեր Ը և զութամեայ մուտն
'ի կրօն՝ լինի ԼԸ ամաց 'ի մահուէան․ իսկ յն․ և լտ․ ու-
նին այսպէս․ * աւանդեաց զոգին, ամաց Ը լեալ ||․
որով լինին ամք կալոյ 'ի կրօնի ԻԸ․ Թէպէտև ոչ բա-
ցատրեն զայդ։

(5) Զայս հատուէած՝ որ վն պատկերին, Ճառընտիրն
մեր այսչափ միայն նշանակէ, Թէ մայրն եւպրաքսեայ
* եմուտ յեկեղեցին, և տարածեալ զձեռս իւր առա-
,, ջի սէյ սեղանոյն քնի և պատկերին՝ ասէ արտասուօք․
,, Տր ած քեզ ընծայաբեր լինիմ զծնունդս որովայնի
,, իմոյ ||, եՆ․ բայց քանզի Ճոխագոյն բանք են առ 'ի
յունականն, զոր և դամասկացին Ը օրինակէ իբր բառ-
առ բառ Ը մասին, համագոյն նդ երկարեցաք և մեք փոքր
մի։ Ընդ հակառակն՝ զկնի պատմութե մոլից եւպրաք-
սեայ 'ի վանս՝ պահպանի Թուղթ մի 'ի յունական մատե-
նի․ զորոյ զտեղին ընու Ծ․ որպ և լատին Թարգմանու-
Թին Ը ամբողջ օրինակի։

(6) Յայժմուկն․ ոչ տաղմոս յիշէ և ոչ վարք սէց, այլ
անորոշակի ասէ․ * Զկնի կատարման պաշտամանն մինչև
,, յերրորդ ժամ առեալ զմառեանն եպրաքսիա՝ կայր
,, յընԹեռնուլ, նստելով քերցն և լսելով ||։ Որպէս և
փոքր մի զկնի, 'ի Ծ․ պակասի * զինն ժամուն ||․ և 'ի յն․
* զհանգստեանն ||․ ուր լատին օրինակն զերկոսեանն
պահէ, միայն Թէ զհանգստեանն Թարգմանեալ է երե-
կոյեան։ Թող զի 'ի վայր, ուր յիշէ 'ի յն․ ջուր ցանել
յերեսս եպրաքսեայ, յօրինակս ինչ լատ'' Ը սովորութե
արևմտից Թարգմանեալ է, ջուր օրհնեալ։

(7) Ուր դնէ Ծ․ * բարձր տեղի մի ապարանիցն ||․
յունականն է բառս [illegible], որոյ հայցականն լինի
դուխադէղօն․ որ Թարգմանի՝ եռայարկ․ և 'ի գործ․ Ի․
9․ Թարգմանեալ է 'ի մեզ Ը ձայնին՝ երրորդ դստի-
կոն․ բայց խիԹալի է գրելի դոլ, երրորդ ստիկոն։ Եւ
որ գրի զկնի 'ի Ծ․ հափուցանել, 'ի յն'' է․ խալմաէ
դօ՝ զէմա․ Ծ զիջուցանել կմ խափանել զեռանդն․ յար
և նման իմս այնմ, զոր ասէ նարեկ․ կԳ․ * որ իբր
,, զջուր կաԹսայից 'ի հրոյ եռացեալ, ոՊ զմեղաց մըր-
,, րիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խափուցանես ||։

(8) Ուր կրկին և կրկին գրի 'ի Ծ․ Թէ * այս եօԹն օր
,, է տեսլեանս, և այլ ևս երեք աւուրք են, որ Թողու
,, զմեզ և երԹայ (եպրաքսիա) առ ած ||, 'ի յն․ այժ-
մու ընԹեռնումք այսպէս․ * որդ ահա Թ օր այսօր,
,, յոր-

,, յորմէ հետէ զտեսիլն տեսի․ ուստի 'ի վաղեմն վախ-
,, ճանի եւպրաքսիա || · յայտ է թէ՝ զի մին զառաջին
նմանագ պատմելոյ մեծուհւոյն զայսոսիկ նկարագրէ, և
միւսն զվերջինն նմանագ արդեօք՝ աւուրբ յառաջ քան
զվախճանն կուսին: Որպէս և իցէ, առաւել քան զայս
զարմանալի է մեզ այն տարբերութիւն այժմու յունական
ընթերցուածոյ, զի ուրեք ուրեք կարճէ զգլխաւոր
խրատս, և երկայնէ զմանրապատում պարագայս գոր-
ծողութեց ինչ․ ոմ և զհաղորդիլ կուսին յաւագ հինգ-
շաբաթին, և 'ի մերձենալ ժամու վախճանն ոչ յիշէ․
զոր աւանդէ Ճ․ որոշակի: Օտար է և յամ օրինակաց
ասեցն Հ․ վմ եւպրաքսեայ, * ծերացաւ || · զի ը Ճ·
լինի լը ամաց, և ը յն․ Լ․ 'ի վախճանիլն․ որ չէ ծե-
րութիւն, այլ երիտասարդութիւն:

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սրբոյն Կալիստրատոսի, և որոց ընդ նմա Քա-ռասուն և ինն վկայից:

Հ. Յ. սեպտ. 27: Լ. սեպտ. 26: Ճառընտ. Գր. ռճձէ = ռճձջէ. և Ալ. շճ = շը: Մետափր-աս սուրբ: Բոլլանդեանն ատենագրենք. 'ի է հատ. սեպտ. էջ. 190 = 195: (1)

ՔԱՋ ԶՕՐԱԿԱՆՆ ք՟սի ըստ գեղեցիկ անուանն թարգմանութեան սբն Կալիստրա-տոս՝ էր յազատ ազգէ, զինուո-րեալ առ դեկոսիւ կմ առ դիոկղետիանոսիւ 'ի կայսերական գնդին, որ կոչէր քաղկատոն կմ

կմ կաղանդոմն , այն է որ ոմանց դունդ կար-քեդոնի որ կարթագինեայ յափրիկէ , և որ այլոց՝ քաղկեդոնի ՚ի բիւթանիա . զի և ինքն իսկ կալլիստրատոս ՚ի դաւառէ անտի էր (2) ։

Իսկ ՚ի չոգել լեգէոնին զօրաց ակոմբիտաց-ւոց ՚ի հռոմ ( որով ոմանք զնորն հռոմ ըն-տրեն իմանալ զկոստանդինուպօլիս , ) տա-րան անդր ակամայ և զգունդն՝ յորում էր կալլիստրատոս իբր մասն այնր խմբի , որ օրի-նի տիւրոնաց՝ որ դեռակիրթ զինուորաց . և մտին ամենեքին ը վերակացութբ մեծի իշ-խանի զօրաց պրեսենտինոսի կմ պերսենտի-նոսի հռովմայեցւոյ ։

Իսկ ոչ ոք էր յայն դաս զինուորաց քրիստո-նեայ՝ բաց ՚ի կալլիստրատոսէ . զի սա էր զա-ւակ քրիստոնէից՝ սերեալ ՚ի նախնի հաւա-տացելոց անտի , որ ՚ի հեթանոսաց կամ ՚ի հռովմայեցւոց . քանզի նախահաւն նր ոկո-րոս կմ նէոկորոս գտաւ յեմ առ պիղատոսիւ դատաւորաւ . և ետես զՔս փրկիչն մեր ՚ի խա-չին , զմեռանիլն նր և զթաղելն ՚ի գերեզմա-նի , և զյարութիւնն ՚ի մեռելոց . և հաւանեալ ը գալիլեացին՝ հաւատաց և մկրտեցաւ յա-ւուր որյ պենտեկոստէին . և եկեալ ՚ի քա-ղաքն իւր՝ ուսուցանէր զորդիս իւր և զթո-ռունս յուսալ ՚ի տր յս քս ։ Իսկ նք ուսանե-լով ՚ի միմեանց՝ եղեն ուսումնապահք խրա-տու հաւուն իւրեանց՝ մինչև յերանելին կա-լլիստրատոս . որ ՚ի զինուորական կարգի գե-ղեցիկ պահեաց զաստծպաշտութի . քանզի էր բարեբարոյ , առաքինի և լի հոգւով , և հմուտ

հին

Հին և Նոր կտակարանաց , և 'ի մէջ ծնիկ ա-
րանց առաւել բանիբուն և գիտնաւոր , և
զգուշաւոր աւանդապահ վարդապետութեանց՝ զոր
լուեալ էր 'ի նախնեաց իւրոց որպիսի և է
օրինակաւ . և ոչ դադարէր 'ի փառաւորելոյ
զնա և 'ի պաշտելոյ զնա ջերմեռանդն աղօ-
թիւք և պահօք զանխուլ 'ի հեթանոս զին-
ուորակցաց իւրոց ։

Իսկ 'ի միում գիշերի՝ յորժամ յարուցեալ կա-
լիստրատոս աղօթս մատուցանէր այ , ոմանք
'ի զինուորակցաց իւրոց իմացան զայն . և
ապա հասու լեալ ամ ընթացից նր՝ սկսան
անգոսնել զնա իբրև զողայ մտօք վն պաշ-
տելոյ զնազովրացին . և ասեն ցնա . Ոչ է
վայելուչ քեզ միայնոյ մանկաբարոյ լինել 'ի
մէջ մեր ամենեցուն . արդ հաւանեաց և եկ
'ի պատկերն արամազդայ , և առ լիբանոն
( այ կնդրուկ ) և արիւն , և ցայտեա 'ի վր
նր . և լեր ը մեզ սիրելի ածոցն . ապա թէ
ոչ՝ մեզ մեզ մի գներ , զի հարկ է մեզ պատ-
մել զօրավարին մերոյ զայդ ամ ։

Իսկ որն կալիստրատոս ետ պխնի , և ասէ .
եղբարք զի՞ ելից զձեզ սատանայ . ոչ ումեք
'ի ձէնջ վնասեցի , և ոչ նեղեցի զոք 'ի ձէնջ .
'ի պատերազմի ը ձեզ եմ . յանուանագրի
համարուն թերևս նախադոյն կարգեալ եմ
քան զձեզ . 'ի հանդիսի ոչ որոշիմ . 'ի գնդի
համարուն ը ձեզ անցանեմ . իսկ արդ զի՞նչ
ունիք չարախօսել վն իմ , ոչ գիտեմ ։ Բայց
զայս գիտեմ , զի յանձառ մարդասիրութէն
յնի փրկչին իմոյ և յուղղափառ պաշտամանէն
որո-

որոշել զնա ոչ կարէք՝ ոչ միայն դուք , այլ և ոչ բազումք երբեք զձեզ · զայս վկայեսցէ ինձ ք͞ն՝ որ վկայեաց առաջի պոնտացւոյ պիղատոսի , որում ականատես եղել է ոկորոս հաւն իմ ։

Իբրև լուա՛ն զայս , յարուցեալ ը͞ առաւօտն պատմեցին պրեսենտինոսի զօրավարին , եթէ մի ոմն՝ի թուո՛յ զինուո՛րաց ՝ որ են ը͞ իշխանութե͞ քո , ապստամբ է յ͞ծոցն պաշտամանէ , և թագաւոր և ա͞ծ կոչէ զոմն՝ որ անուանեալ կոչի ք͞ս , և խոստովանի զնա խաչելեալ · այլ և աղօթս և պահս զանձամբ առեալ է , և զա͞մ խողենի ուռձիկ և զհաց կարօտելոց բաշխէ · և ինքն միանգամ յաւուր ուտէ՝ աշտուձ հաց՝ի ջուր թանալով · բայց զի մի՛ զբազումս ապստամբեցուսցէ՝ի վառեալ զինուո՛րացս գնդէ , վ͞ն այնորիկ պատմեցաք առաջի քո պայծառ իշխանութե͞դ ։ Իսկ պրեսենտինոս ասէ · ո՞վ է նա , և կամ զի՞նչ անուն նորա · և ն͞ք ասեն՝ի բարբառ հռովմայեցւոց ( քանզի ոչ լսէր զօրավարն յունարէն ) · պո՛նուս մի՛լես , կի՛մ պո՛նա միլիցիա · ո͞ր բարի զինուոր , կ͞մ քաջ զօրականութի͞ · զի այսպէս թարգմանի յունական անուն ն͞ր գալլի՛սդրադոս ։ Եւ հրամայեաց զօրավարն ածել զնա առաջի իւր · և ասէ ցնա հռովմայեցի լեզուաւ · քուի՛տ տի՛գունդ սօչիի դո՛ւի բռօքդէռ դէ · չէլէռիուս տի՛գ · որ թարգմանի · զի՞նչ ասեն ընկերք քո վ͞ն քո · արա՛գ ասա՛ ։ Օ այս հատուած այսպէս պահեալ յոյն վկայագրի՝ի բարբառ լատինական՝

կան՝ վկայէ, թէ ողջոյն իսկ պատմութիւն նախնոյն լեզուաւ գրեցաւ, և անտի յեղաւ ’ի յոյն, և սփռեցաւ յայլ եկեղեցիս ։ (3)

Արդ առ այս ետ պխնի կալլիստրատոս ( որ անխտիր խօսէր լատիներէն և յունարէն ), և ասէ . զինչ և ունիցին վ̅ իմ ասել ո՛ տ̅ր իմ, ասասցեն . քանզի ես ոչինչ գիտեմ զանձին խիղճ ։ Պրեսենտինոս ասէ ցչարախօսսն . զի՞նչ գիտէք վ̅ պօ՛նի միլի՛դիս , կամ պօ՛նէ միլի՛ցիէ , տ̅ր կալլիստրատոսի ։ Եւ նք̅ ասեն . հրամայեսցէ քո առաւել պայծառ իշխանութիդ դմա , զի զոհեսցէ մեծ ա̅յն արամազդայ , և գտցես զչարաթիւր կամս դորա ։ Յայնժամ ասէ զօրավարն . զոհեա՛ կալլիստրատէ ա̅յն արամազդայ ։ Կալլիստրատոս ասէ . ես պատարագ օրհնութե մատուցանեմ մեծին ա̅յ , որ արար զերկինս և զերկիր և զա̅մ ինչ իմաստութբ̅ իւրով . որ ստեղծ զմարդն ’ի հողոյ , և ետ զյաւիտենական և զանանց սահմանն . զի ոչ գիտեմ զձեռագործ ա̅ծս , այլ՝ զնամ ո՛ա̅ ուսայ . քանզի գրեալ է , ա̅մ կուռք հեթանոսաց դևք են . այլ տ̅ր զերկինս արար . և՝ կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են , ձեռագործք են որդւոց մարդկան . արդ՝ ես , ո՛ տ̅ր կոմս , գործոց ձեռաց մարդկան երկիր ոչ պագանեմ ։ Բայց եթէ զինուորեալ եմ քեզ , և ընդ ձեռամբ քո եմ ’ի պատերազմի և ’ի գումարտակի , և յա̅մ սպասաւորութեն հնազանդեալ եմ քեզ , միթէ և ոգւոյս իմոյ սպասաւորութե իշխանութի ունիս . քաւ լիցի ։

Պրե-

Պրեսենտինոս ասէ ․ ասա ո՛վ կալլիստրատէ ձարտարասանութեան ոչինչ են պէտք , այլ մ՟ն հաւանութեան մեզ է բան ․ վ՟ոյ հաւանեալ զոհեա՛ , զի մի՛ չարաչար կորուսանել զքեզ հարկաւորեսցես զիս ․ բայց կարծեմ եթէ գիտես իսկ դու , զի յորժամ ըմբռնեմ զոք 'ի մարդկանէ , յառաջագոյն քան զտանջանս մռնչելով իմով հալեմ զնա ։ Կալլիստրատոս ասէ ․ քո մռնչելդ և սպառնալդ ժամանակեայ է ․ իսկ լալումն և կրձումն ատամանց՝ յաւիտենական ․ զի եթէ ես ուրացայց զ՟տրն իմ յ՟ս ք՟ս առաջի մարդկան , փակեսցէ զիս արտաքոյ տանուտէրն ․ և անդ եղիցի լալումն աչաց և կրձումն ատամանց ։

Յայնժամ հրամայեաց զօրավարն պրկել ըզնա , և հարկանել բրօք , մինչև փոխեցան վեց կամ ութ այր ։ Եւ մինչդեռ հարկանէին , ասէ ս՟րբն կալլիստրատոս ․ երդուեայ և հաստատեցի պահել զդատաստանս արդարութե՟ քո տ՟ր ․ նուաղեցայք յոյժ , այլ կեցո՛ զիս ՟տ բանի քում ․ և մի՛ տացես կորուսչին և բազմագլուխ գազանին խնդալ 'ի վ՟ր իմ ․ այլ զօրացո՛ զիս ք՟ս , և լե՛ր ինձ լեզու՝ առ 'ի պատասխանել ինձ , և բժիշկ առ 'ի յողջացուցանել զվէրս իմ ․ զի բազում տանջանք ունին զմարմինս իմ յերեսաց չարչարանացս ։ Իսկ յորժամ ետես զօրավարն զարիւն ն՟ր , զի առուացեալ խաղայր 'ի վ՟ր երկրի , հրամայեաց դադարել 'ի հարկանելոյ զնա ․ և ասէ ցնա ․ զոհեա՛ կա՛լլիստրատէ դ՟ծոցն , զի ապրեսցիս յառաջիկայ տանջանացն ․ քանզի

երդ-

երդնում 'ի ձառագայթաբերն արտեւմս և յա՟մ ա՟ծոցն ժողովս , եթէ ոչ հաւանեսցիս ինձ՝ մսակոտոր արարից զքեզ , և զմարմինդ քո շունք կերիցեն , և առիւծք լիզեսցեն զարիւն քո ։ Կալլիստրատոս ասէ . յուսամ 'ի Թագաւորն երկնից ա՟ծ , զի հանցէ զիս 'ի բերանոյ առիւծուց , և 'ի ձեռաց շանց զմիամօրութ՟ իմ . զի մի ես միայն օրհնեցից զնա յայսմ գնդի քո . զի ակնունիմ յառաջադէմ լինելով բազմութ՟ ընկերաց երթալ առ նա , և յաղթութ՟ նշանակ ունելով 'ի վ՟ր բանսարկուին՝ որ յարուցանէ զքեզ 'ի վ՟ր իմ ։

Յայնժամ հրամայեաց զօրավարն խեցի ծեծել և արկանել 'ի ներքոյ նորա . զի քանցեացեն զուսս ն՟ր և զմէջս խեցեաւն ։ Եւ դարձեալ հրամայեաց պրկել զն՟րն յորսայս , և ձագար դնել 'ի բերան նորա , և ջուր սափորով արկանել ընդ բերանն . մինչև ուռնուլ ո՟վ զտիկ ։ Իսկ քաջ նահատակն ք՟սի արիապէս ընկալեալ զտանջանսն . և յարուցեալ ասէ . ա՟ծ աբրահամու , սահակայ և յակոբայ՝ զօրացո՛ զիս առ 'ի հնարագիտութ՟ն բանսարկուին , և փրկեա՛ զիս 'ի նմանէ . զի մի՛ կորուսցէ զիս , և մի՛ գտցէ տեղի 'ի վ՟ր իմ . այլ ինձ լինիցի քև շահել զբազումս ։

Զօրավարն ասէ . զոհեա՛ կալլիստրատէ ա՟ծոցն . ապա թէ ոչ՝ բառնամ զքեզ 'ի կենացս . զի մի՛ կորիցեն ոմանք 'ի գնդէս յայսմանէ վ՟ն քո ։ Կալլիստրատոս ասէ . անարժա՛ն և անամօթ՝ փութա՛ մարտնչել վ՟ն հօտին սատանայի հօր քո , չգիտելով եթէ այս

հօտ ք՟ղին իմոյ է . բայց յուսամ 'ի Թագա-ւորն երկնից 'ի տ՟րն իմ յ՟ս ք՟ս , զի Թէպէտե-ւ կարի յոյժ մրցիս ը՟դ բանսարկուին , սակայն ես գերեցից զնա եւ յափշտակեցից 'ի Թուոյ զօրաց քոց , եւ լուսաւորեցից զնո՟ , եւ հաստա-տեցից զեկեղեցի ք՟ի 'ի մէջ քաղաքիս այ-սորիկ : Իսկ զօրավարն ասէ . ո՛վ անմ՟ր եւ ե-րկցս Թշուառական՝ ո՞չ գիտես , զի հրամանս իմ սաստիկ է առաջի աչաց քոց . եւ ահաւա-սիկ նոյնժամայն հրամայէ իշխանուԹիս իմ գնել զքեզ 'ի քուրձ , եւ կնքել զբերան նո՟ , եւ տանել ընկենուլ զքեզ 'ի մէջ ծովուն . գու զիա՞րդ կարես այնուհետեւ հաստատել զեկեղեցի ք՟ի , եւ կ՟մ ե՞րբ որսասցիս զոք 'ի գնդէ զօրականացս իմոց :

Իսկ անդէն հրամայեաց բերել քուրձ կտա-ւի , եւ արկանել զնա 'ի ներքս . եւ կնքեալ կապարով զբերան քրձին՝ ետ 'ի ձեռս նաւա-վարաց . ( զի մերձ 'ի ծովափն էր յայնժամ բանակն 'ի սահմանս հռովմայ եւ կ՟մ բիւզան-դիոյ . ) եւ տարեալ զնա նաւավարացն 'ի մէջ ծովուն իբրեւ ասպարիզօք քառասուն , ընկե-ցին 'ի ծովն . եւ զօրավարն կայր յեզր ծովուն մինչեւ 'ի գալ նաւավարացն այսրէն (4) : Իսկ քուրձն՝ զոր ընկեցին 'ի ծով անդր , իջեալ կուռէր 'ի փապարս վիմաց . եւ մինչդեռ 'ի ներքս կայր կալլիստրատոս ( ըստ օրինակին յովնանու 'ի փոր կիտին ) , աղօԹս մատու-ցանէր ասելով . Տ՟ր աներեւոյԹ եւ անքննին , անհաս եւ անպատում , որոյ աԹոռ փառաց անմերձենալի է . յորմէ դողայ եւ սարսէ ա՟մ

ինչ. որոյ սպառնալիքդ հալեն զլերինս. որոյ անուշանակոչութիւդ պատառէ զանդունդըս. յորմէ դողայ ծով հանդերձ գետովք և կիտոսովք. որ քննեցեր զսիրտն յովնանու, և ընկալար զաղօթս նորա, յորժամ էջ յերկիր՝ որոյ փականք իւր էին լերև աղխք յաւիտենից. և հաներ զկեանս նորա յապականութէ: Եւ զիմ զմեղաւորի և զտառապելոյ ընկալ զաղաչանս, և եկեսցեն աղօթք իմ 'ի տաճար սբ փառացդ. և փրկեա զիս 'ի նեղութէ յայսմանէ. զի ծանեար 'ի մանկութէ զգործս իմ: Դու գիտես Տր, զի ցանկացայ հաստատել զեկեղեցի քո 'ի մէջ քաղաքիս այսորիկ. գործակից լեր ինձ 'ի բարի. զի սբ է անուն քո յաւիտեանս:

Եւ յետ մատուցանելոյ նորա զաղօթս՝ դիպեղ քուրձն 'ի կիրճս վիմաց՝ պատառեցաւ. և ընկալաւ զնա ձուկն մի դլքին 'ի վր ուսոց իւրոց, և եբեր զնա 'ի խորոց յափն ծովուն. և եդեալ զնա 'ի վր աւազոյն՝ փախստեայ անդրէն դարձաւ 'ի ծովն (5): Իբրև տեսին զնա զօրականքն և զօրավարն, զարհուրեցան յոյժ. բայց կալխտրատոս սաղմոսէր և ասէր. եկի ես 'ի խորս ծովու, և սահանք ընկղմեցին զիս. այլ ոչ աշխատեցայ աղաղակելով. քանզի լուար ձայնի աղօթից իմոց. պատառեցեր զքուրձ իմ, և ագնդեցեր զիս ուրախութբ:

Յայնժամ անկան առաջի երանելոյն կալխտրատեայ քառասունն և ինն զինուորք, և ասեն. աղաչեմք զքեզ ծառայ Այ բարձրե-

ւոյ , փրկեա՛ զմեզ յունայնութ՟է ծխս այսո-
րիկ . զի և մեք քրիստոնեայք եմք . զի ար-
դարև մեծ է ա՟ծն քրիստոնէից , որ եհան
զքեզ յայնպիսի անդնդոց . կարօղ է նա և
'ի պատերազմի օգնել ում և կամի . զի նա
միայն է ա՟ծ ։ Ա՟ն կալիստրատոս ասաց . տ՟րն
իմ յ՟ս ք՟ս ապրեցուսցէ զձեզ , և յայսմ հետէ
տեսջիք զարքայութիւնն երկնից ։ Եւ աղօ-
թեաց վ՟ն ն՟ց այսպէս . տ՟ր որ բնակեալդ ես
յաւիտեան 'ի լոյս անմատոյց , նայեա՛ց 'ի վ՟ր
հօտիս այսորիկ՝ որ հաւատաց 'ի քեզ , և պա-
հեա՛ զսոսա . զի ողորմած ես միշտ և յաւի-
տեանս ։

Իսկ պրեսենտինոս ասէր . երդուեալ յարե-
գակն 'ի լուսափայլ թագաւորն , մեծաւ կա-
խարդութ՟բ լի է սա , զի զծով եհերձ , և
զսոսա պատրեաց ։ Եւ ասէ ցնա . ես զքո
կախարդութի՟դ յանդիմանեցից . մնա՛ ինձ ,
և գիտասցես թէ ո՟վ է պրեսենտինոս , և
ո՟վ է ա՟ծն՝ զոր դուն պաշտես ։ Եւ նստեալ
յատենի՝ հրամայեաց բերել ցուպս . և ետ
կարգաւ հարկանել զքառասունսն արանց ։
Իսկ նոքա ասեն . տ՟ր յ՟ս զայս վ՟ս քո չարչա-
րիմք . օգնեա՛ մեզ ա՟ծ փրկիչ , և տո՛ւր մեզ
համբերութ՟ի . պահեա՛ և զհովիւս մեր կա-
լիստրատոս , զի կատարելա՟պս ուսուսցէ ըզ-
մեզ . զի իբրև զանբան անասունս եմք 'ի գի-
տութ՟է կամաց քոց . հաճեա՛ց ը՟ն փրկութ՟ի
մեր . զի օրհնեալ է անուն քո յաւիտեան ։
Յետ այսորիկ հրամայեաց անարժան զօրա-
վարն դնել զն՟ս 'ի բանտի , զի զմտաւ ինչ

ածցէ վն նց · քանզի յոյժ տրտմեալ էր , զի կորոյս յիսուն այր 'ի Թուոյ զօրականացն ։ Իսկ իբրեւ մտին նք 'ի բանտն , սկսաւ սբն կալիստրատոս աղօթիւք հաստատել զքառասուն եւ ինն ընկերս իւր · որոց անուանք են այսոքիկ · Ակակիոս , աղպիոս , անթիմոս , անիկտոս , արագսէոս · բասիլիսկոս , բեմարքոս , ( կմ բեբրաքմոս ) , բիբիանոս , բիտալիոս · գենադէոս , գերոնտէս , գէորգէոս , գիգանդիոս , գրիգորիոս · դաղմատիոս , դեդալիոս , դոմետիանոս , դոմնասիոս , դոմինոս , դորոթէոս , դուղկիտիոս · եղսիդիոս , եւագր , եւագրիոս , եւարեստոս , եւսեբիոս , եւտողիոս · Թարասիմիդէս , Թերասիոս , Թէոդորոս · լամբիոս , լէմինոս , լէրիկոս , լիւսիմաքոս · կանդիտիանոս , կոստանդինոս · հեղիադէս , հեղիուդորոս , հիւսիքոս · մադրինոս , մարկիանոս , մեմնոս , միլինոս · նիկատիոս , նիկողայոս · ողիպէոս , ողոմբրիոս , ուտրիպէոս · քսանԹէոս ։ (6)

Ապա ամենեքեան անկան առաջի սբյն կալիստրատոսի , եւ խնդրէին զգիտութիւն քնի ։ Իսկ նր տարածեալ զձեռս իւր յերկինս՝ ասէր · տր՝ որ զամ ինչ արարեր , որ ամենիմաստ հզօրդ ես , որ յանթիւ զօրաց հրեշտակաց օրհնիս · տր հարցն մերոց հայեաց 'ի դոյն իսկ 'ի հօտս յայս · եկ եւ հասիր 'ի մէջ մեր , կատարեա՛ տր զանսուտ խոստումն քո , Թէ ուր երկու կմ երեք ժողովեալ են յանուն իմ , անդ եմ ես 'ի մէջ նց ։ Լուր

մեզ

մեզ թագաւոր յաւիտենից, ցրուեա՛ տ՟ր զգ-
բոց բանսարկուին. անցո՛ տ՟ր զհնոց հրոյն՝
առ ՚ի չբարձրանալ քան զքառասուն և զինն
կանգուն (և այրել զոք ՚ի թուոյ նոր հա-
ւատացելոցս). ո՟պ զի տեսցեն ա՟մ հեթա-
նոսք զփառս քո, և փառաւորեսցեն զքեզ
թագաւո՛ր յաւիտենից: Տո՛ւր ինձ տ՟ր իմաս-
տութի՟ և գիտութի՟, ո՟պ զի հաստատեցից
՚ի հաւատս ճշմարտութե՟ զծառայս քո. զի
օրհնեալ է անուն քո յաւիտեանս:

Եւ յասել ամենեցուն միաբան զամէնն, յա-
րուցեալ մի ո՟մն ՚ի նոցանէ՝ որում անուն էր
գաղմատիոս, ասէ ց՟րն. աղաչեմ զքեզ տ՟ր
իմ կալիստրատոս, քրիստոնեացո՛ զմեզ, և
ուսո՛ մեզ զբանն ա՟յ, զի մի՛ երբէք երկմտեա-
ցուք. ցո՛յց մեզ զլոյսն մեր, և զառ յապա
օգնականութի՟ն. պատմեա՛ մեզ զա՟մ իմաս-
տութի՟ն ա՟յ. զի և մեք շնորհօքն ք՟ի փառա-
ւորիչք եղիցուք ը՟ քեզ. քանզի ոչ երբէք
հարքն մեր ուսուցին մեզ զճանապարհս ար-
դարութե՟ն: Եւ նա ասէ ցն՟ս. որդեա՛կք իմ
և եղբա՛րք սիրելիք, որ քաղցեալ և ծարա-
ւիդ էք արդարութե՟, լցուսցէ զձեզ տ՟ր և
արբեցուսցէ ամենաբարի և ամենաբաւական
շնորհօք հոգւոյն ս՟բյ: Բայց սակայն թէպէտ
և ես տրուպ եմ, և տգէտ առ անհաս խո-
րութի՟ խորհրդոցն ա՟յ, այլ իւրաքանչիւր ոք
՚ի ձէնջ՝ զի՛նչ և կամիցիք՝ հարցէք. և ես պատ-
մեցից՝ զոր տայ տ՟ր ինձ խօսել:

Յայնժամ բեմարքոս անկեալ առաջի նորա՝
եհարց և ասէ. աղաչեմ զքեզ տ՟ր, ասա՛ ինձ,

զիա՞րդ է իմանալ զա՟ծ ճշմարիտ, և կա՟ որո՞վ
օրինակաւ ծնաւ ք՟ս, կա՟ վա՟ է՞ր պատճառի.
և ը՟է՞ր խաչեցին զնա հրեայքն և սպանին ։
Եբաց սր՟ն կալիստրատոս զբերան իւր, և
սկսաւ ճոխ բանիւք քարոզել և ուսուցանել
զա՟ծային վ՟դպութի՟ն հին և նոր կտակարա-
նաց՝ յարարչութե՟ ա՟ի մինչև 'ի միւսանգամ
գալուստն ք՟սի. ո՞չ գրեալ կայ յընդարձակ
գործս ն՟ր. և 'ի վ՟ր էած՝ ասելով. Արդ ո՞վ
եղբարք, ողորմելի՛ք էին երբեմն մարդիկ,
զի 'ի մոլորութե՟ էին պատրեա՟լք. բայց այժմ
երանելի՛ք, զի 'ի ձեռն խաչին ք՟սի վերացան
'ի փառս անճառս. միայն թէ կացցեն հնա-
ցեն 'ի հաւատարիմ ծառայութե՟ն ք՟սի. իսկ
որ ուրացցի զնա առաջի մարդկան, մատ-
նեալ լինի 'ի ձեռս դժոխոց ։ Բայց դուք մի՛
կարծէք, եթէ սակաւք են հաւատացեալք
'ի ք՟ս, և բազումք են՝ որ երկիր պագանեն
ձեռագործաց. զի յուսամ 'ի տ՟ր յս՟ ք՟ս, ե-
թէ այնչափ մեծացցի հաւատս մեր, մինչև
առաւելապէս ծաւալեսցի 'ի վ՟ր ա՟մ երկրի ։
Եւ արդ դուք յայս հաւատս հաստատեսջի՛ք
սիրելի՛ք իմ, զոր ուսուցի ձեզ մտերմութե՟
սրտի իբրև հարազատ եղբարց ։

Իսկ իբրև կատարեաց սր՟ն կալիստրատոս
զգլուխ բանիցն, յարուցեալ հեղխուգորս
հարցանէր զնա և ասէր. աղաչեմ զքեզ տ՟ր
իմ կալիստրատէ, յորժամ վախճանեսցի
մարդ, զիա՞րդ լինի հոգի ն՟ր, և ո՞ւր երթայ,
կա՟ զի՞նչ գործէ. կամ ո՞ւր բնակէ, 'ի տան-
ջա՞նս, եթէ 'ի հանգստեան ։ Եւ սկսաւ նա

դար-

դարձեալ մանրապատում բանիւք ճառել զզժուժարին իրացս՝ կէս մի 'ի գրոց, և կէս մի յաւանդութեէ հարց իւրոց՝ է զի ուղիղ և է զի վրիպակ հանգամանօք. զորմէ լիցի բան 'ի կարգի ծանօթութեանց (7). և յայս կնքեաց զբանն. Աւ արդ մեք եղբարք հետևեսցուք առաքինութե, զի փառաւորեսցուք ընդ քնի աստ և 'ի հանդերձելումն ։

Ապա եհարց եւարեստոս վն աւուր վախճանի մարդոյն, եթէ ընդ սահմանեալ օրաթուին լինիցի յայ, եթէ ընդ հանդիպման. Նոյնպէս և լուսիմաքոս հարցանէր վն արարածոյն այ. և սքն կալիստրատոս արար ամի պխնի ըստ պատշաճի. և յընթացս բանիցն յաւել և յորդոր առ ածպաշտունն և առ փոյթ աղօթիցն, որով լինի փրկիլ յամ փորձութէ. բերելով և յանձնէ օրինակ, թէ որպէս 'ի բանակին կմ 'ի չուն պատճառէր չարն՝ եթէ չէ աստ տեղի և ժամ աղօթից. և ես զայն պինդ ունեի ասէ, թէ ոչ միայն որ յեկեղեցիս սաղմոսեն և աղօթեն՝ զայն միայն համարի ած, այլև զքայլ ոտից և զհետս գարշապարաց՝ որք մտանեն ամբողջ հաւատով 'ի տաճար այ, համարի ած. Նոյնպէս և որ ոչ դտանէ զտեղի աղօթից, ուր և կացցէ յաղօթս՝ ընդունի ած, և լսէ հեծութէ սրտին ոչինչ ընդհատ 'ի բարբառոյ. իսկ ուրեմն սիրելիք՝ ոչինչ շահի թշնամին՝ խորհուրդս բազմապիսիս արկանելով ընդ աղօթսն, եթէ սիրտք մեր առ ած իցեն ։ Աւ զայն ևս ոմն ոք ոչ գիտէ 'ի մարդկանէ, եթէ մարդ 'ի մեղս անդանդաղ

է և անաշխատ, և փոյթ 'ի յանցանս. իսկ յաղօթսն թուլացեալ ծուլանայ և լուծանի և ձանձրացեալ նիրհէ. և կարծէ թէ ընութ՟են են կիրք, և ոչ բանսարկուին գիւտք. այլ զայս իմացարուք եղբարք, զի այն ա՟մ չարին են ազդմունք. յորոց պարտ է փախչել, և միադիւր մտերմութ՟բ փառաւորել զա՟ծ ։

Եւ յետ ո՟մի ասէ. Եւ արդ եղբարք մեծ ջան է 'ի վ՟ր երկրիս այսորիկ ապրեցուցանել մարդոյ զանձն իւր. բայց մեք ճգնեսցուք առնուլ զնշան յաղթութ՟ե յառաջիկայ պատերազմիս, ուր է կռիւ բանսարկուին գործակցութ՟բ հեթանոս իշխանի զօրուն. համպա ը՟դ իմասցուք քաջապէս չար մարտընչողին, և յաղթօղ գտցուք անօրէն գռողին. զի նա պարտեսցի 'ի մէնջ անկանգնելի բեկմամբ, և մեք զերծեալք 'ի խաբէութ՟է կենցաղոյս՝ ընկալցուք զանթառամ փառաց պըսակն 'ի տ՟նէ մերմէ և փրկչէն յ՟ե ք՟սե. որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն ։

Եւ իբրև զայս ասաց, լռեաց 'ի խօսելոյ. քանզի երեկոյ իսկ էր. և զգիշերն բովանդակ եկաց յաղօթս մինչև յառաւօտն ։ Ուր ասէ վկայաբանն. * բայց էր ո՟մն ատենական դպիր՝ լինելով մերձ 'ի բանտն, մտադրելով խօսից ս՟բյն կալիստրատոսի, և նշանագրելով 'ի քարտիսի՝ ետ մեզ. և մեք կարգեցաք ճշմարտիւ զպատմութ՟ի խորհրդոյս ։ ‖ Նոյն ատենադպրին երևի մառինոս, որ զկնի հաւատաց 'ի ք՟ս, և նահատակեցաւ զկնի կալիս-

տրա-

տրատոսեանց ։ Բայց և ինքն վկայաբանն էր մի 'ի նոր հաւատացելոց ։

Արդ յետ աւուրց ինչ նստեալ զօրավարն պրեսէնտինոս յաթոռ դատաստանի՝ հրամայեաց հանել զկապեալսն և բերել առաջի իւր ․ և ածին զնա 'ի մեծ հրապարակն՝ յորում կանգնեալ կային բազում պատկերք կռոց ․ անդր ժողովեցան և գլխաւորք զօրուն և ամ թիւ զօրականացն ։ Խօսել սկսաւ զօրավարն և ասէ ․ զիա՞րդ է կա՛լլիստրատէ , խրատեցե՞ր զքեզ և զհրապուրեալսդ 'ի քէն զզօրականս թագաւորին՝ զոհել ածոցն , և հրաժարել 'ի տանջանաց ։ Սրբն կալլիստրատոս ասէ ․ ես վն իմ զայս հաստատեալ ունիմ պնդնի , զի ոչինչ հաւանեցուցէ զիս հեռանալ 'ի քէն յուսոյն իմմէ ․ այլ վն դոցա , ինքեանք իսկ հասակալիցք են , ցդոսա՛ հարց ։ Զօրավարն ասէ ․ դուք զի՞նչ ասէք , որ պատրեալ հաւանեցայք շաղակրատիդ այդմիկ ։ Ամենի ետուն և ասեն ․ եթէ կամեսցիս ունել զմեզ 'ի գնդի համարու , ոչ ընդդիմացուք ․ բայց վն պաշտամանս մերոյ յայտնի լիցի , մեք հաւատամք 'ի թագաւորն երկնի և երկրի յածն ամի , և 'ի ծնունդն նր յս քս , և 'ի սբ հոգին ․ զի նա է ած երեքանձնական , երրորդութիւն և մի ածութիւն , և մի զօրութիւն անարատին այնորիկ և իմաստնոյ , որ էն և է և կայ յաւիտեան ․ ո՞չ ուսոյց մեզ վդպն մեր կալլիստրատոս ։

Իսկ նա հրամայեաց տանջել զնա դալար գաւազանօք ․ և ապա հրաման ետ կապել զոտս

և

և զձեռս նց, և քարշել զամենեսեան 'ի լըճ-
եզրն. և ասէ ցնս. զոհեցէք ածոցն. ապա-
թէ ոչ՝ հեղձնուք 'ի ջուրսդ: Նոքա ասեն.
մեք հաւատամք 'ի ճշմարիտն ած. դու զինչ
կամիս՝ արա: Իսկ իբրև հանդերձեցան ան-
կանել 'ի մեծ լիճն, որոյ անունն էր ովկիա-
նոս (8), սբն կալիստրատոս եկաց յաղօթս՝
ասելով. Տր ծ յաւիտենական՝ որ անհասդ ես
և ամենակալ, որ հաստատեցեր զերկինս
իշխանութ աթոռոյ քո անշարժ յաւիտեանս,
և զերկիր 'ի պատուհանդան ոտից քոց, նայեա՛
'ի հօտս յայս, և լեր ընդ մեզ. և ապրեցո՛ ըզ-
մեզ յապականութէս. և շնորհեա՛ սբ զջուրս
զայս 'ի մկրտութի վերստին ծննդեանն. ար-
ժանի՛ արա լուանալ զլուացուածս յաւիտենա-
կան և նք. 'ի բաց ընկենուլ զհին մարդոյն
զընդունայնութի, և բաժին առնուլ ընդ աշխա-
տելոցն 'ի խաչ քո. պարգևեա՛ մեզ տր հա-
սանել յօթևանս քո 'ի ձեռն լուացմանս այ-
սորիկ՝ գործակցութբ հոգւոյդ քո սբյ. զի
փառաւորեալ է անուն հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սբյ յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Իսկ իբրև ասացին միաբան զամէնն, ընկե-
ցին զնս կապեալս 'ի ջրակայն: Եւ նոյնժա-
մայն լուծան կապանք նցն, և վէմք ծա-
նունք ընկլուզան 'ի խորս. և ինքեանք գնա-
լով 'ի վր ջուրցն՝ ելին 'ի ցամաքն 'ի շնորհաց
հոգւոյն սբյ: Իբրև ելին 'ի ջրոյն, երևէին
պայծառացեալք և լուսազգեստք, և սբն
կալիստրատոս որպս պսակ 'ի գլուխ. և եկն
ձայն յերկնից՝ որ ասէր. քաջալերեցարո՛ւք
սի-

միրեցի՛ք իմ, զի ես ը̅ ձեզ եմ․ ուրախ լե-
րուք, զի ահա պատրաստեցի ձեզ տեղի յար-
քայութե̅ իմում․ ցնծացէ՛ք, զի զանուանս ձեր
գրեցի 'ի գիրս իմում 'ի դպրութե̅ կենաց :
Եւ եղև որոտումն անհնարին, և շարժումն
մեծ․ մինչև անկան պատկերք կռոցն և փըշ-
րեցան : Իսկ իբրև տեսաք (ասէ վկայաբանն)
զլոյսն, որ ծագեաց 'ի վ̅ր̅ նոցին, և լուաք զե-
րանաւէտ ձայնն, և զշարժումն, և զխոր-
տակումն կռոցն, հաւատացաք 'ի զօրակա-
նացն արք հարիւր երեսուն և հինգ : (9)
Յայնժամ երկիւղիւ̂ մեծաւ ըմբռնեալ անօ-
րէնն պրեսենտինոս՝ հրամայեաց տանել
զվկայսն 'ի բանտ․ ուր դարձեալ ուսուցանէր
զն̅ո̅ ս̅ե̅ն կաղխստրատոս, և ասէր․ ո՛րք եղ-
բարք ահաւասիկ կոչեաց զմեզ տ̅ր̅ առ ինքն․
և քանզի ես 'ի մանկութե̅ իմմէ ընկալայ
զմկրտութի̅, և զձեզ այժմ արժանի արար
տ̅ր̅ աւազանի վերստին ծննդեան․ արդ ա-
րի՛ք կացցո՛ւք յաղօթս : Եւ համբարձեալ ըզ-
ձեռս իւր՝ սկսաւ ասել․ տ̅ր̅ տ̅ր̅ որպէս զի
սքանչելի է անուն քո յաւիտեան․ որ յառաջ
քան զա̅մ̅ անսահման բանիւ̂ քո հաստատե-
ցեր զա̅մ̅․ որ անապական և աներևոյթ և
անվթար գանձուց տ̅ր̅դ ես․ պահեա՛ զհօտս
զայս ապրեցուցանելով 'ի բերանոյ առիւ-
ծուն, և հասո՛ զսոսա 'ի յաւիտենական փըր-
կութե̅․ և արժանի՛ արա զմեզ միաբան վախ-
ճանել խոստովանութե̅ քո․ զերծո՛ զմեզ 'ի
մեղսասէր կենցաղոյս անբիծս և անարատս․
մո՛յծ զմեզ ը̅ նեղ դուռն 'ի տաճար թագա-
ւո-

ւորական · զի օրհնեսցուք սրբասաց անհամգիստ ձայնիւք զամենօրհնեալ անունդ Հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Իսկ ամպարիշտ զօրավարն պրեսենտինոս խորհեցաւ ընդ վերոնի փողարի (10) , զի թէ դոքա ապրին՝ մոլորեցուցանեն և զայլ բազմութիւն · առաքեաց 'ի բանտն , և կոտորեաց զնոսա գիշերի չարաչար յօշոտմամբ · որք էին յիսուն թուով քաջ զօրականքն քրիստոսի , սրբքն կաղխատրատոս՝ և քառասուն և ինն ընկերք իւր :

Իսկ կատարեցան սրբքն յամսեանն սեպտեմբերի ( զոր հայերէն հոռի կոչէ թարգմանն ), որ օր քսան և եօթն էր : Իսկ 'ի վերայ բերէ վկայագիրն իբրև ականատես , * Իսկ մեք զինուորքս , որք հաւատացաք 'ի տեսլեան սքանչելեացն , և մկրտեցաք յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , եկաք 'ի գիշերի գաղտ , և բարձաք զնշխարս սրբոցն , և եդաք 'ի վայելուչ տեղւոջ : Սոյ զմեզ արժանի արար տէր հաստատել եկեղեցի 'ի հռովմ յանուն սրբոցն · և շինեցաք անուամբ սրբոյն կաղխատրատոսի քաւարան մեղուցելոց , և ժողովեալ միաբանութեամբ հրեշտակաց և մարդկան , 'ի փառաբանութիւն և յերկրպագութիւն և 'ի գովութիւն ամենասուրբ երրորդութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ‖ : (11)

ԾՌ.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Տեսաք բազում անգամ, զի առ 'ի չգոյէ յունական բնագրի՝ հայերէն թարգմանութեն նը̄ գտեալ 'ի ճառըն-տիրս մեր՝ ունի յաւուր յայսմիկ զտեղի սկզբնագրի. այս-պէս իմն և 'ի վկայաբանութե̄ սր̄յն կալիստրատոսի, զոր եթէ գտանէր ստիլտինգ բոլլանդեան՝ ո̄պ գտանի առ մեզ, բազմօք այլազգ խօսէր քան զոր խօսեցաւն՝ հայելով միայն 'ի մետափրաստեան օրինակն, զորոյ եւեթ գտեալ է զյունական օրինակն. բայց ոչ տպագրէ, այլ միայն ը̄ս նմին ուղղագրէ զլատին ընթերցուածն սուրիո-սեան. և ցուցանէ զանձն անհաւան՝ առաւել վ̄ն այսր պատճառի, զի ասէ. * հեղինակութեն մետափրաստեսի
,, վ̄ն այսչափ վաղեմի իրաց ոչ կարէ լինել մեծ, կամ
,, ստուգել զայն ||: Եւ թէպէտ գիտէ և ինքն, թէ մե-տափրաստէս ոչ է յանձնէ հնարեալ, այլ յառաջնոց ա-ռեալ, տակաւին չկամի այնչափ հաւատս ընծայել նմա. այս է ասելն նր̄ միւսանգամ. * Հեղինակութեն մետա-
,, փրաստեսի ոչ մարթի ծայրագոյն լինել վ̄ն իրաց չոր-
,, րորդ դարու, թէև գուցէ հնագոյն վկայաբանութեց
,, իցէ զհետ երթեալ ||:

Առ ինչ արդեօք. ը̄ս այդմ եթէ և զհնագոյն հեղինակ գտանէր, նմա՛ ևս չհաւատայր արդեօք: Ո՛չ այս են միայն ճշմարտախնդիր առն, այլ կարծէ թէ զհնութեն խանգարեալ իցէ մետափրաստէս. զի նշմարէ 'ի նմա զհռոմեական ոգի 'ի յիշելն զբանս սր̄յն կալիստրատոսի վ̄ն հատուցման. ո̄պ նշմարեալ է և բարոնիոս կանխաւ, և ասացեալ, թէ յայնմ պատմութե̄ * կան ինչ ինչ ուղ-
,, ղագրելի ||: Աստի առիթ առեալ՝ պարզապէս վճռէ ստիլտինգ, թէ կասկածելի է մետափրաստէս յայսպի-սի բանս. * որովհետև է (ասէ) յոյն միջին դարու ||: Զայս ետեալ՝ և զայլ պատմական անցս կամ ը̄ տարա-կուսանօք արկանէ, և կմ̄ ը̄ ուղղագրութե̄ ը̄ս կամի: Բայց թէ տեսեալ էր ստիլտինգայ զհին վկայաբանութի մեր՝ որ է աղբիւր մետափրաստեսի, և բասիլեան յայս-մաւուրաց յունաց և այլ ամ̄ յետին մատենագրաց, յայլ միտս լինէր գլխովին. ք̄զի նախ՝ արդարացուցանէր զմետափրաստէս ամ̄ իրօք, տեսանելով՝ զի նա հաւա-

տար-

տարմութեն քաղէ զպատմութիւն ողջոյն, և ոչ աւելի ինչ խօսի, այլ պակաս՝ քան զոր խօսեցաւ սրբն կաղխատրատոս զհատուցմանէ՝ կէս մի ուղիղ, և կէս մի սխալական: Երկրդ՝ հաստատէր, թէ այդ հռոմական կարծեցեալ ոգի է ապացոյց հնութեան քան նորութեան. զի է հնացեալ և փուտ կարծիք երկրորդ և երրորդ դարու՝ պապիասայ, երանոսի, յուստինոսի ևն. որ հետ զհետէ փարատեցաւ յետնի դարս. և պայծառացաւ ողջամիտ վարդապետութիւն՝ համեմատութ այլևայլ բանից սբ գրոց և սրբց հարց. մինչև որոշեցաւ յեկեղեցւոյ 'ի յետնագոյն դարս. որպէս յայտ է մեզ առն մծաբանի: 'Ի դնել այսր՝ ոչ ինչ մնայ տարակոյս 'ի վր ստուգութե հին վկայաբանութեա, և մեր առարկուած ինքնին լուծանի. զոր լաւ ևս իմասցիս յընթացից ծանօթութեցս:

(2) Որ 'ի Ծ. գրի քղկատոն, և քղկիտոն, առաջինն իբրև անուն գնդի, և երկրդն իբրև անուն հայրենեաց կաղխատրատոսի, առ մետափրաստեսի՝ առաջինն յունարէն գրի քալանտօն, կմ կաղանդից. որպ և 'ի լտ. քալէնտարում. իսկ երկրորդն քալխիտօնիօն, որ քաղկեդոնացւոց. այլ սակայն լատինք ընթերցեալ են քարխիտօնիօն, որ կարքեդոնացւոց. վն և թարգմանեալ՝ կարթագինեցւոց: Արդ որչափ ստոյգ երևի որ ստուգագոյն ընթերցուածոյ, թէ սրբն կաղխատրատոս էր հայրենեօք 'ի քաղկեդոնէ բիւթանացւոց, որպ յանձն առնու և սուրիոսն, նոյնչափ և ստոյգ երևի՝ թէ 'ի հռովմ գնաց որ բանակին հռովմայեցւոց, և 'ի կողմանս հռովմայ նահատակեցաւ. որպ յայտնի գրէ վկայաբան մեր, յորմէ և մետափրաստէս այլովքն հանդերձ. և ոչինչ զօրէ ըդէմ այսմ որ և է պատճառանք սուրիոսի, որ կամի դնել զկատարումն նր 'ի նորն հռովմ 'ի կոստանդինուպօլիս: Թող զի նոր հռովմ անուն՝ որպ և կոստանդինուպօլիս, չգոյր առ դիոկղետիանոսիւ. ուր թողից և զայն՝ զի մեզ հնագոյն ևս երևի կաղխատրատոս, որ առ դեկոսիւ կմ առ նախորդօք նր. և վրիպակաւ թուի մնեալ անուն դիոկղետիանոսի. վն զի ոկոր հաւ կոչեցեալ կաղխատրատոսի՝ տեսողքն տն մերոյ թէպէտև ոչ կարէ լինել անմիջական հայր հօր նր, այլ՝ նախահաւ, որ ոմն 'ի նախնեաց նր, բայց յայտ է 'ի հանգամանաց մեր բանից կաղխատրատոսի՝ թէ ոչ շատ հեռի էր յիւրմէ. կմ որ նոյն է՝ ինքն ոչ էր շատ հեռի յաւուրց հին հարց, առ որովք յուղէին այնպիսի խնդիրք յաղագս հատուցման: Բայց մեզ չէ փոյթ, եթէ լեալ իցէ և առ դիոկ-

ղե.

ղետիանոսին . զի նոյնպէս ձևք բանից կային և 'ի չոր-րորդ և 'ի հինգերորդ դարու : Այլ այժմ զայն կամիմք հաստատել՝ թէ 'ի հռովմ նահատակեալ երեւի . և զի զօ-րավարն նր էր հռովմայեցի և լատիներէն խօսէր ընդ նմա , ասաի առեալ գնէ Հ. թէ սբն կալլիստրատոս էր լատին ազգաւ . որ չէ յայտ . միայն թէ և այլք կասկա-ծին , գուցէ սորա նախահաւ նր էր 'ի դասէ զօրակա-նաց հռովմայեցւոց առ պիղատոսիւ յեէմ :

(3) 'Ի Ծ. հայերէն ստուգաբանութբ՝ որ ածանցեալ 'ի լատինէ 'ի յոյն , և 'ի յունէ 'ի հայ , հանդերձ սխալանօք գրչութե այսպէս գրին լատինական բառք . * բմենուս ,, մլքիայ . . . կիւղիկիանդ սոկնէ : տուլի : տրոփրտէ : ,, կելերի : սոդիկէ . . . բուֆի մելեկի || . և յետ ուղիղ դներոյ զհայերէն թարգմանութե ապաւաղեալ ձայնիցն սաի . * Այս պատմութե 'ի հռովմայեցի լեզուէ գրե-,, ցաւ . և այսպէս ևս խօսեցան՝ որք իմաստութեամբ ,, թարգմանեցին և ետուն ցմեզ . և մեք նոյնպէս առա-,, քեցաք ը̅ ա̅մ տեղիս , որք զք̅ն առաջի աչաց ունին ,, հաւատովք սրբութբ || : Զիմաստ նոյն բանից գտա-նես և առ մետափր . յորմէ անդրէն 'ի լատինն են թարգ-մանեալ . և անոլ եթէ 'ի հայ թարգմանեսցուք , ունի այսպէս . * ով կալլիստրատէ , ուր իցեն արդեօք՝ զոր ,, ինչ ասեն զինուորակիցք քո || : Սոյնպէս և յամ̅ ըն-թացս՝ օրինակն մետափրաստեան է քաղուած ճառընտ-րին մերոյ :

(4) Եդել փակագծիւս լուծանեմք զպատճառանս տեղ-ւոյնդայ , որ ասէ . թէ ծովընկեց լինելն՝ * բիւզանդիոյ ,, յարմարի , որ է ծովեզերեայ կամ առ վոսփորայ . և ,, ոչ այնպէս հռոմայ , յորմէ յոյժ բացագոյն է ծով || : Զի ո՞ ոչ գիտէ , թէ տիբերիս գետն հռովմայ համարի իբր բերան ծովու . և ո՞ ոչ տեսանէ՝ թէ 'ի բանակի եղե-գատաստանս , և ոչ 'ի մէջ քաղաքի . վն չէ հարկ դնել 'ի քաղաքին հռովմայ , այլ 'ի ծովեզերեայ կողմանս հռով-մայ . թող զի և լիճն՝ որ յիշի զկնի , յարմարի հռովմայ , և ոչ բիւզանդիոյ :

(5) Ուր 'ի Ծ. ընթեռնումք ձուկն մի , Հ. և մետափր . գրեն ձկունք երկու , գուցէ ը̅ հնագոյն օրինակի . ոմ̅ և յայլ տեղիս տեսանեմք զընտրութե ընթերցուածոյ քան զընթերցուածոյ :

(6) Մնամք և այլում օրինակի վն̅ տոյգ հնչմանց միոյ միոյ յանուանց սբց . զորս ունիմք միայն 'ի ճառընտրի . թող զերիս և զչորս 'ի նոցանէ , զորս և այլք յիշեն 'ի

խօ-

խօսակցութիւնս ը՟ կալխատրատոսի ։

(7) Աստանօր է տեղի կալխատրատեան վկայութե՟՝ որ յաղագս վիճակի հոգւոյ նախ քան զյարութի՟ մարմնոյ. զոր քաղէ և մետափրաստէս, և 'ի նմանէ սուրիոս դոյզն փոփոխութ՟բ, և յայսմաւուրք յունաց և հայոց. այլ ճոխագոյն գտանես 'ի Ճառընտրի մերում Գ. 'ի կարգի վկայաբանութես, և ուրոյն ևս գրեալ 'ի Ճառընտիրն Ժ. երկաթագիր. վկայութի խմ՜ հին և հնոտի. հին՝ ըստ որում փոխմանն երկրորդեն ոչ սակաւք 'ի հնագոյն վկայից արևելից և արևմտից. և հնոտի՝ ե՟ որում խափանեալ իբրև ճիւղ հազարամեայց մոլորութե՟. զորմէ չէ տեղւոյս յերկարել զբանս. եթէ ե՟ ժամանակին 'ի լոյս ելանիցէ դասաւական ածաբանութիւն՝ յոր աշխատասիրեալ է մեր ամ՛, անդանօր ամ՛ ինչ ե՟ կարգի ծանիցի. ապա թէ ոչ՝ չէ անկ ընթացից վկայագրութես զննել զայնպիսի խնդիր ածաբանական ։ Մինչ 'ի կարճոյ յուշ լիցի յայսմ վայրի բանն մեծին հերոնիմոսի երևելւոյն 'ի սբ վկայս՝ հնութբ և հեղինակութբ. զի սա 'ի յիշելն 'Ի ձէկն. Էրէմ. Գւ. ծԲ. զխաղալական կարծիս հազարամեայց և կայանադրաց՝ մատամբ գոգցես ցուցանէ զնմանիս սբյն կալխատրատոսի, յասելն. * բա-
,, զումք յեկեղեցական արանց և մարտիրոսք զնոյն ա-
,, սացին ||։ Յորմէ ունիս իմանալ, թէ 'ի միոյ կողմանէ այսպիսի վրիպակք անդստին 'ի հին դարս էին ծանուցեալ և ուղղագրեալ 'ի հզօր վկայից եկեղեցւոյ ։ Եւ 'ի միւս կողմանէ՝ եթէ նորին կալխատրատոսի լիցեն ամ՛ բանք գրեալք 'ի վարս նր, և եթէ 'ի վկայաբանէն յարմարեալք ե՟ իմիք, են հին ասացուածք հին դարուց, ոչ ամենեցուն ընդունելիք և 'ի նոյն դարս ։

Ապացոյց լիցի այսմ և վկայութի սբյն յուստինոսի փիլիսոփայի և վկայի, որ 'ի պխնին առ տրիփոն անաչառ վկայէ՝ թէ թէպէտև ինքն էր ե՟ իմիք յայն կարծիս հազարամեայց, այլ չէին հաւան ը՟ այն բազումք յուղղափառաց. քանզի գրէ այսպէս. * Խոստովան եղէ քեզ
,, և յառաջագոյն, թէ թէպէտև ես և այլք յոլովք
,, ձայնակիցք ը՟ իս՝ զայդ այդպէս համարին... բայց
,, շատ ևս այնք են, որք ողջամիտ և բարեպաշտ քրիս-
,, տոնեայք են, և զայդ ոչ ճանաչեն, ո՟ և նշանակե-
,, ցի քեզ ||։ Զայս եդեալ՝ չէ արժան աշխատ լինել 'ի մեղադրել կամ յարդարացուցանել զբն կալխատրատոս կամ զվկայաբան նր (որ ականատես վկայ ճանաչի) վասն այնպիսի բանի, որ չև էր յայն դարս սահմանեալ յե-

կեղեցւոյ. և ոչինչ են զարմանք՝ եթէ և ոմք մարդկօրէն գայթակղութ՟ք յիրս իւրս գթեցին. զի ոչ էին հրեշտակք, այլ մարդիկ. և ոչ ուրուք առանձին, և ոչ ոմանց ոմանց կարծիք մարթին լինել մեզ կանոն հաւատոյ. այլ պարտ է հայել 'ի միաբան վկայութիւն հարց և ժողովոց և վճռոց կաթողիկէ եկեղեցւոյն մոյ : Այսքան առ այս :

(8) Սոյնպէս և մետափր. առ սուրխոսի. * հրամայէ ձաղ-
,, կել զնն զօրավարն, և ապա կապել ոտիւք և ձեռօք
,, ընկենուլ 'ի մերձակայ աւազանն, որ կոչիւր ովկիանոս || :
'ի բառն ովկիանոս գրէ հեղինակ ոմն լատին մեծ բառարանի, թէ նշանակէ երբեմն և զմասն ինչ ծովու. դարձեալ ասէ՝ * է և ովկիանոս տաշտ (կմ աւազան) ընդարձակ 'ի
,, բաղանիս, և ամ լիճ, և խաղ մեծ, յընդարձակութէ
,, առեալ զանուն . . . զի թէ որչափ էր մեծութիւն բա-
,, ղանեաց 'ի հռովմ, ամմիանոս վկայէ 'ի գիրսն ժզ. յա-
,, ռել. Լուացարանք 'ի քաղաքին ըստ օրինակի գաւա-
,, ռաց շինեալք || . և ահա յայնպիսի մեծատարած ջրըկայս հայի բան վկայաբանիս. որ անկ է կողմանց հռովմայ, և ոչ բիւզանդիոյ :

(9) 'ի ԾԳ. գրեալ էր հարիւր և հինգ. բայց ուղղագրելի համարեցաք ըստ միաբան ընթերցուածոյ մետափր. և Յ. և Հ. հարիւր երեսուն և հինգ : Ընդ հակառակն վրիպակաւ որդեօք եդեալ է 'ի Յ. բս. և ժամագր. թէ նաև սոքա նահատակեցան, վսն զի ամ զընկերս կալխստրատոսի կոչէն հարիւր ութսուն և չորս. զի 135. և 49, առնէ 184 : Բայց չունիմք յիշատակ զկատարմանէ այլոց բաց 'ի խմ վկայից :

(10) Թարգմանիչն մեր ընթերցեալ է 'ի յոյնն լատինական ձայնիւ, վէռօ դիպիչինարիօ ('ի տրական հոլովն), վսյ և եդեալ՝ վերոնի փողարի. իսկ 'ի յն. մետափր. այժմ գրի՝ վէռօ տուքինարիօ, և 'ի լտ. առ սուր. վէռօտուչէնարիօ. զորոյ զստոյգ միտս ոչ որոշեն և քննիչք :

(11) Նովին իմաստիւք գրէ և մետափր. * իսկ զինուորքն
, Խ և ԼԵ, որք հաւատացին, մատուցեալ բարձին ըզ-
, մարմինս սբց, և թաղեցին պատուով. և յետոյ տա-
, ճար շինեցին նոցա, որում գեղեցկութբ սակաւք են
, նման. որ կայ 'ի մէջ հռովմայ գերարքայականի քան
, զամ քաղաքս : Ապա և թուղթ ևս գտին 'ի բանտի,
, յորում էր վկայութիւն ինչ և հանդէս փառաւոր և
, մեծայաղթ վկային կալխստրատոսի : Իսկ զկնի կա-
, տարման նց ընկալաւ զմարտիրոսութիւն և մառինոս՝

« այր փառաւոր և գիտնաւոր յոյժ. որ մինչև ՚ի վախ-
« ճան ցուցանէ զարութն քաջութեն և զհաստատութն
« անդրդուելութեն ||: Իսկ թէ սախլտինգ չիցէ գտեալ ՚ի յե-
տին ժամանակս զնշանակ եկեղեցւոյ սբյն կալլիստրա-
տոսի ՚ի Հռոմ, չէ ինչ. զի և ոչ ՚ի բիւզանդիա գտա-
նէր առ հնութեն: Վն անուանս մառինոս չէք յիշատակ
՚ի Ճ. բայց եթէ համարեսցուք նոյն լինել Է. առեն-
դարի յիշելոյ յընթացս, որ յետոյ հաւատաց ՚ի քս: Հ.
համաձայն մետափր" կարգէ զկնի կալլիստրատոսեանց և
զյիշատակ սբյն մառինոսի. և վն սբյն կալլիստրատոսի
ասէ, թէ * նոր հաւատացեալքն և զնա թաղեցին. և
« եդին Ը. նմա և զկտակ վկայութեան նր ՚ի վկայութն
« իմաստութեն իւրոյ ||: Որով ցուցանէ՝ թէ յետոյ ՚ի
գտանել զնշխարս նր՝ գտին և զկտակ նր. այլ զայժմա-
նէ չունիմք այլուստ տեղեկութն:

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Սբյն Ղուկիանոսի քահանայի՛ն ։ (1)

Տ. Յ. հոկտ. 15 ։ Լ. յունվար. 7 ։ Ճառընտ. Ռ. ՇՁԵ = ՇԿԴ ։ Բոլլանդ յովհաննէս. 'ի ա. հատ. յունվ. էջ. 357 = 364 ։ Մետափր. առ սուր ։ Եւսեբ. պատմ. եկեղ. Ը. 25. եւ Թ. 5 ։ Ա. Բո- նոս. պրամ. Գ. յղ. երրորդ. եւ 'ի Քրոնիկոն. սԷ- գրոց ։ Սոզեբ. հատ. Է. երես. 524 = 529 ։ Յե- րոն. յղ. եկեղ. մատեն. գլ. ՀԷ. եւ Թղթ. ձէ ։ Ռուֆինոս. պատմ. եկեղ. Թ. 6 ։ Սոզոմենոս ։ Թէոդորետոս. եւ այլք ։ (2)

ՄԵԾԱՆՈՒՆ ԵՒ ԱՐ-դիւնական սբ քահանայն այ Ղուկիանոս ( որ գրի 'ի մեզ նաեւ Ղունկիանոս , եւ առ այլս Լուգիանոս կմ Լուչիանոս ) էր 'ի ժամանակս Դիոկղետիանոսի կայսեր՝ յանտիոք քաղաքէ ասորւոց , զաւակ քրիստոնէից 'ի պատուական տոհմէ , սնեալ 'ի մանկութենէ 'ի բարի վարս , եւ վարժեալ ամ արտաքին գիտութե փիլիսոփայից . որ եւ զկնի աշակերտեցաւ քսասէր արանց Ճգնաւորաց , առաւելապէս Մակարիոսի ումեմն բնակելոյ յեդեսիա , եւ 'ի նոցանէ խելամուտ եղեւ հին եւ նոր կտա-

## Սչայաբանութիւն ուԷջն կարանաց ։ (3)

Սոյ և ՚ի վախճանիլ ծնողացն զաւետարանական խրատուց բուռն հարեալ՝ հրաժարեցաւ յամ կենցաղական զբաղմանց, և զամ ինչս իւր բաշխեալ աղքատաց՝ ետ զանձն ՚ի ծառայութի եկեղեցւոյ. և յանձին կալեալ զվարս ճգնութե յՅի ը օրինակի միայնակեցաց անապատի՝ պահօք և աղօթիւք և գետնատարած անկողնօք. և զարգացաւ խոնարհութբ, հեզութբ, երկայնմտութբ, եղբայրսիրութբ, և ամ առաքինասէր հանդէսիւք. մինչև արժանի եղև սարկաւագութե ՚ի կոչմանէ հոգւոյն, և յետ այնորիկ օծման և շնորհի քահանայութե, կարգեալ ը երիցունս աթոռանիստ եկեղեցւոյն անտիոքացւոց, երևելի և պատուական յաչս ամենեցուն, և հռչակաւոր յիմաստութե և ՚ի բարեպաշտութե ։

Եւ եղև զօրաւոր քարոզ բանին այ. զի ըստ տուեալ նմա շնորհի ամպատում վդպութե ըմբերանէր զհերձս և զհեթանոսս. և աշակերտեալ զբազումս՝ ուսուցանէր նոցա զկատարեալ զհաւատս ածպաշտութե ։ Եբաց և դպրոց երևելի անդէն ՚ի մեծն անտիոք, և հրահանգէր զբազումս յածային և յարտաքին գիտութիւս. և զի էր ինքն ճարտար գրիչ, ոչ միայն զիւր պէտս լնոյր յիւրմէ ձեռագործէ յարուեստէ գրչութե, այլև աղքատաց և կարօտելոց ոչ սակաւ սատար լինէր ։ Փոյթ մեծ կալեալ Ղուկիանոս և վս ՚ի լոյս ընծայելոյ զմաքուր օրինակ ածաշունչ գրոց յու-

յունարէն ․ քանզի տեսեալ՝ եթէ ուրեք ու-
րեք յանգրագիտաց և կիմ յանհաւատարիմ
գրչաց ինչ ինչ այլայլութիք սպրդէն երևէին ,
'ի խնդիր եղև հնագոյն և անվրէպ օրինա-
կաց ․ միանգամայն և բաղդատեալ գյունա-
կան ընթերցուածն ը եբրայական սկզբնա-
գրի՝ 'ի լոյս եհան զնոր օրինակ իւրով գրչու-
թբ և ուղղագրութբ ․ որ և ծաւալեցաւ յե-
կեղեցի անտիոքացւոց, յետոյ և բիւզանդաց-
ւոց՝ ղուկիանեան կոչմամբ ։

'Ի հնչել համբաւոյ իմաստութե ղուկիանո-
սի պատուական երիցու՝ բազումք գային ա-
շակերտիլ նմա ․ և ոչ սակաւք յաշակերտաց
նր ընտրելոց ելին 'ի պատիւ քահանայութե
և եպսութե ․ և ոմն գուշակեաց նց երանե-
լին ղուկիանոս , մարտիրոսական պսակաց
եղեն արժանի ։ Եղեն և ոմանք յանարժան
աշակերտելոց՝ որք յարեցան յետոյ 'ի մոլո-
րութի արիոսի ․ թող զի և ինքն իսկ ժանտն
արիոս , և գլխաւորն 'ի համախոհս նր եւսե-
բիոս նիկոմիդացի մտադիւր ձայնէին զան-
ձինս աշակերտ ղուկիանոսի , և զձայնակիցս
իւրեանց ղուկիանոսակիցս կարդային ․ զի
խարխուլ աղանդոյ իւրեանց նեցուկ ունիցին
զանուն առն այ ։ Եւ առիթ այսպիսի յան-
դուգն չարութե իւրեանց առին զայն , զի
երանելին ղուկիանոս եղև անհնարին թշնա-
մի և ջաղխիչ մոլորութե սաբելեանց ․ մինչ
զի 'ի խօսելն ը դէմ նց սաստկապէս՝ թուէր
հակամիտել 'ի ծայրայեղ մոլորութի անդր ,
զոր յարոյց արիոս ․ և իբր այնպիսի բամբա-

սեալ եղև յոմանց , մանաւանդ 'ի բագարատայ ումեմնէ սաբէլեան երիցունէ . մինչև բազմանալ չարախօսաց , և տալ արտաքսել զղուկիանոս յեկեղեցւոյն անտիոքայ . իսկ նորա առանձնացեալ 'ի տեղի ուրեք՝ գրեաց գիրս ուղղափառ հաւատոյ 'ի ջատագովութիւն ողջմտութեան իւրոյ . որպէս և թուղթս քանի մի վասն սոցին իրաց :

Յետ այսորիկ լուեալ երանելւոյն ղուկիանոսի զհրդեհ հալածանաց՝ որ 'ի նիկոմիդիա յերեսաց դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի , վառեցաւ 'ի նախանձ փառացն այ , և զաստուածայինն սպառազինութիւն զգեցեալ՝ եթող իսպառ զհայրենիս իւր , և եկն անդր՝ 'ի թիկունս հասանել հաւատացելոց , ոչինչ երկիւղ 'ի մտի եդեալ յերեսաց բռնաւորաց . զորոց լուեալ իսկ էր՝ եթէ խնդրեն զանձն նորա . վասնզի կարծեն ոմանք՝ եթէ յարքունի հրամանէ ածեալ իցէ 'ի նիկոմիդիա : (4)

Արդ հասեալ նորա անդր կամակարութեամբ , և տեսեալ զբազումս՝ որք յերկիւղէ տանջանացն զոհեալ էին կռոց , 'ի գործ արկանել սկսաւ երանելին զաստուածային վարդապետութիւն . և յանդիմանութեամբ դրոց սրբոց , միանգամայն և աղօթիւք դարձուցանէր զնոսա յառաջին հաւատս . և խրատէր և զօրացուցանէր համբերել չարչարանաց , և քարոզել զՔրիստոս համարձակութեամբ : Նա ինքն ընդ պարապելոյ ժամուն անդ ևս գրէր 'ի տուէ և 'ի գիշերի բզհին և զնոր կտակարանսն ընդ ուղղագրեալ օրինակին իւրոյ , և աւանդէր եկեղեցւոյն

նի.

նիկոմիդացւոց ։ Շրջէր ընդ քաղաքն առաքելաբար, և քարոզէր զերկնից արքայութիւն . և մտեալ 'ի բանտս՝ սպաս տանէր խոստովանողաց, և քաջալերէր զնոսա ։ Եւ ոչ ասի, 'ի շրջիլ իւրում 'ի քաղաքին, զորս կամէր տեսանել՝ տեսանէին և նոքա զնա . և յորս ոչ կամէր հայել, և ոչ նոքա 'ի նա հայէին, և այնպէս անցանէր ընդ մէջ նոցա աներկիւղ ։

Այլ քանզի չէր պարտ ճրագի ծածկիլ ընդ գրուանաւ, ազդ եղև զսրբոյն յականջս թագաւորին մաքսիմիանոսի կամ դիոկղետիանոսի, որ էր յայնժամ 'ի նիկոմիդիա . և առաքեաց զինուորս ձերբակալ առնել զնա, և բերել առաջի իւր ։ Բայց զի լսելով լուեալ էր՝ եթէ 'ի տեսութենէ եւեթ երեսաց սրբոյն բազումք հաւատային 'ի Քրիստոս, երկեաւ դէմ յանդիման հարցանել զնա և խօսել ընդ նմա . վասնորոյ ետ կախել առաջի իւր վարագոյր, զի մի տեսցէ զերեսս նորա, մինչև փորձեսցէ զնա բանիւք ողոքանաց և սպառնալեաց ։

Արդ խօսել սկսաւ բռնաւորն, և ասէ . դու ես ղուկիանոսն՝ զորմէ լուայ, զի ասեն՝ թէ վարդապետ ես աղանդոյն գալիլեացւոց . մինչև զամ կողմանս անտիոքացւոց հեռացուցանել յերկրպագութենէ ղծոցն, և աստ ևս 'ի նոյն բերել յանդգնութիւն . և արդ չիք քեզ հնար ազատութեան, բայց զի 'ի պաշտօն դիցն եկեսցես, և զոհեսցես նոցա ։ Պատասխանի ետ սուրբ քահանայն և ասէ . արդարև զոր լուարն վասն իմ՝ ճշմարիտ է, քանզի քրիստոնեայ եմ . և զոր ուսայ 'ի մանկութենէ՝ ուսուցի . ուրա-

նալ ոչ կարեմ. քանզի զմի ած խոստովանեմ քարոզէի արարիչ ամի. զնոյն և այսօր և մինչև 'ի վախճան ուսուցանեմ. զոր ինչ առնելոց ես՝ արա՛ վաղվաղակի. զի ես քրիստոնեայ եմ, և դի՛ցաց ոչ զոհեմ. այլ անարեան և կենդանի պատարագ մատուցանեմ այ, որ արար զամ:

Ասէ ցնա բռնաւորն. չարագլուխ և անմիտ և անհաւանդ ղուկիանէ, քա՛ջ ծանիր և 'ի միտ առ, թէ վն որո՞յ գործոյ կոչեցար յատեանս: Երանելին ասէ. ես գիտեմ վն որո՛յ եկի. զի ո՛չ եմ չարին խորհրդով պաշարեալ և անկեալ 'ի մտաց իբրև զձեզ. այլ եկի ես՝ զի վկայեցից ճշմարտութե քսի ածութեն, և մեռայց վն անուա՛ն նր սբյ. ո՛ր նա վն մեր մեռաւ կամաւորութբ: Թագաւորն ասէ. հաւանեա՛ց և զոհեա՛. քզի ոչի՛նչ օգնէ քեզ յամառութիւնդ: Ասէ սբն. և վն այնորիկ ինքնակամ յօժարութբ սպառազինեալ եկի 'ի հանդիսարան մարտին, զի անպարտելի վկայ եղէց ճշմարտութե, և իմով համբերութբ յաղթեցից քեզ և հօրն քում սատանայի:

Ասէ թագաւորն. երդուեալ յածսն ամ, եթէ ոչ անկեալ երկրպագանիցես դիցն անմահից և ոչ զոհեսցես, ունիս ճանաչել՝ թէ ո՛վ ես դու, և կմ ո՛վ են ինքնակալքն՝ որ զածսն մեծարեն և պատուե՛ն: Ղուկիանոս ասէ. ես յուսացեալ եմ յաւիտենական կենացն ժառանգորդ լինել՝ պաշտելով զած ճշմարիտ, որ արար զամ. իսկ ածք՝ որ զերկինս և զերկիր

ոչ

ոչ արարին, կորիցեն ։ Թագաւորն ասէ. եթէ ոչ հաւանիս օղոքական բանիցս, 'ի ձեռն զանազան տանջանաց հաւանեցուցանել ունիս զքեզ, և բարեպաշտիլ առ ա՟ծսն ։ Ղուկիանոս ասէ ժպտելով և հեգնելով. և զի՞ ա՟ծք քո բազում են ով թագաւոր, որո՞ց և կամ քանեա՞ց հրամայես զոհել ։ Թ՟գրն ասէ. նախ ապողոնի, և ապա հերակլեայ, և դիոնիսի, և մեծին արտեմեայ ։ Վկայն ասէ. ծանի՛ր ով թագաւոր՝ զոր ասեմս քեզ, և հաւատա՛, թէ զա՟ծսն քո ես ոչ պաշտեմ, և պատկերի ոսկւոյ երկիր ոչ պագանեմ. զի զոր կոչես դու ապողոն, կորուստ և ապականութի՟ւն է. և արտեմիս մայր կորստեան. և միանգամայն չորեքեան՝ հնարք խաբէութեան մարդկան, հեռացուցիչք յա՟յ կենդանւոյ ։

Յայնժամ սրտմտեալ թագաւորն իբրև զարեանարբու գազան լի ցասմամբ՝ հրամայեաց դահճաց 'ի չորից կողմանց քառակուսի պրկել զս՟բն, և արջառաջլօք տանջել զնա ։ Իսկ երանելին ասէր 'ի տանջանսն առ ա՟ծ. հա՛յր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, յոյս քրիստոնէից և ապաւէն իմ, յիշեա՛ զիս՝ զի վ՟ն քո համբերեմ. ընկա՛լ վաղվաղակի զհոգի իմ, և հանգո՛ որպէս հաճոյ է քեզ ։ Եւ զայս ասացեալ լռեաց. քանզի 'ի բազում հարուածոցն լուծեալ էին յօդք անդամոցն ։

Թագաւորն ասէ. հաւանեա՛ ղո՛ւկիանէ, և զոհեա՛ ա՟ծոցն ։ Ս՟բն ասէ. բազում անգամ ասացի, և այժմ ասեմ. ոչ զոհեմ դիւաց պղծոց ։ Թագաւորն ասէ. 'ի բաց թողեալ

զյա-

զյամառութիւնդ, թէպէտև ոչ զոհես այլոց ա̅ծոցն, գոնեա մատի՛ր և երկի՛ր պագ և զո-հեա՛ անկղեպեայ, զի բժշկեսցէ զհարուածս վիրաց քոց․ ապա թէ ոչ՝ զհոգիդ անջատեմ 'ի մարմնոյդ։ Ղուկիանոս ասէ․ մարմնոյս ու-նիս իշխանութի̅․ ահա զոր ինչ կամիս առնել՝ արա․ իսկ հոգւոյս իմոյ ոչ ոք ունի իշխանութի̅, բայց միայն ա̅ծ՝ որ միաւորեաց զհոգի և ըզ-մարմին․ և ոչ ոք կարէ մեկնել զիս 'ի սիրոյ նր․ ո՛չ նեղութի̅, ո՛չ անձկութի̅, ո՛չ սով, ո՛չ մերկութի̅, ո՛չ հալածանք և կմ երկիւղ տան-ջանաց, և կմ այլ ինչ արարած։

Բարկացեալ թագաւորն՝ այնուհետև կրկին ևս հրամայեաց տարածել զնա 'ի վ̅ր գետ-նոյ, և դալար ջալոտիւք ձաղկել՝ փոխանակ անարգելոյ զաստծսն։ Եւ յետ բազում հար-ուածոցն ասէ ցդահիճսն․ մատուցէ՛ք զդա 'ի փայտն, և կապեցէ՛ք զոտս և զձեռս դորա 'ի վերայ փայտին, և քերեցէ՛ք զկողս դորա․ և աղ և բորակ և բարկ քացախ արկէ՛ք 'ի վ̅ր, զի մորմոքեսցին վէրքն․ և լապտերս ջահից լուցեալ՝ մատուցէ՛ք 'ի կողս դորա․ մինչև զղջասցի, և հնազանդեալ զոհեսցէ ա̅ծոցն․ և զինուորքն վաղվաղակի կատարե-ցին զհրամանսն։ Իսկ ս̅ր. վկայն աղօթէր այսպէս ասելով․ ք̅ս փրկիչ փրկեա՛ զիս 'ի ձեռաց անօրինացս և ամպարշտացս՝ որք յա-րուցեալ են 'ի վ̅ր իմ, և խնդրեն զանձն իմ կորուսանել․ և կակղացո՛ զտանջանս չարչա-րանաց՝ զոր ածեն 'ի վ̅ր իմ։ Զայս ասէր, և քաջալերեալ 'ի տ̅ր՝ յոչինչ դրէր զտանջանսն։

Ընդ

Ընդ որ առաւել ևս բորբոքեալ բռնաւորին չարութբ՝ հրամայեաց դահճացն կապար հալել. և մինչդեռ 'ի յեռանդման հրոյն կայր, եա արկանել 'ի վր մարմնոյ սբյն: Իսկ նա յանբերելի ցաւս տանջանացն համբերութբ գոհանայր զԱյ, և ասէր. Տր Այ իմ յս քս, որ 'ի բազում վշտաց և 'ի նեղութեց փրկեցեր զարդարսն և զսիրելիսն քո, շիջո՛ զցասումն ամպարշտաց՝ նեղչաց մերոց, և բարձրացո՛ զեղջիւր եկեղեցւոյ քում սբյ. և բա՛րձ յերկրէ զզոհս պղծութե. և ողորմեա՛ այնոցիկ՝ որք երկիրպագանեն քեզ հոգւով և ճշմարտութբ:

Իսկ անօրէն թագաւորն հիացեալ կայր 'ի վր համբերութե վկային քոյ, և ասէր. ո՛վ երիցս թշուառական և եղկելիդ Ղուկիանէ վս որոյ յուսոյ այդպէս յամառեալ պնդեցար, և յօժարեալ ես մեռանել. մինթէ վս սպանելոյն 'ի հրէից և խաչելոյն 'ի պիղատոսէ. զորմէ ասէք դուք՝ թէ կենդանի է. արդ անսա՛ ինձ յայսմհետէ՝ զգաստացեալ 'ի ձեռն տանջանացդ. և ե՛կ ը մեզ 'ի տաճար ածոցն, և անդ զարժանաւոր զոհս մատուսցես նցա. և արարից զքեզ քհնյապետ բարձրագունից:

Պատասխանի ետ սբն, և ասէ ցթագաւորն. յաղագս անածութեդ՝ որ 'ի քեզ է, չառնուս 'ի միտ ո՛վ թագաւոր. թէ շնորհք են ինձ չարչարանքս՝ զոր ածես 'ի վր իմ. զի զոր բազում աղօթիւք խնդրէի յԱյ, և կարօտ էի այսմ բարութե, այսօր ընկալայ տանջանօքս՝ որ

'ի

'ի քէն․ քանզի աղջամղջին մէգ խաւարին
'ի մարմնոյս թանձրութենէ ծածկեալ էր զաչս
հոգւոյ իմոյ, և այսու չարչարանօքս 'ի բաց
փարատեցաւ․ զխչխանական միտս իմ՝ որ 'ի
վաղուց հետէ կայր պաշարեալ փորձութ̃բ,
յաղթական յայսմհետէ պատրաստեցեր․
և փախստական արարեր՝ զորս 'ի վ̃ր իմ յառ-
նէին չարիք մեղաց․ և անպարտելի ամրա-
ցուցեր զպարիսպ իմ․ զօրէնս մարմնոյ՝ որք
անմահութ̃բ յիս քաղաքավարէին, խափա-
նեցեր, և զհոգիս բարուոք քաղաքավարեցեր,
յորում զանձ անմահութ̃ե ծածկեալ է․ և
ցուցեր ինձ ճանապարհ համառօտ և անաշ-
խատ․ քանզի գիտեմ, եթէ տաճար ա̃յ եմ,
և հոգի նորա բնակեալ է յիս ։ Այսպիսի
ինչ բազում խօսեցաւ երանելին խորիմաստ
վ̃դպութ̃բ, յայտ արարեալ զհոգևորական
չահս չարչարանաց մարմնոյ ։
Յայնժամ ասէ Թագաւորն․ ա՛յ չարագլուխ
այր և օտարացեալ 'ի բարերարութ̃է ա̃ծոցն,
և ո՛չ տանջանքդ խրատեցին զքեզ՝ զօգուտն
քո իմանալ, և զերծանիլ յառաջակայ մ̃նա-
ցեալ տանջանացն՝ որովք հանդերձեալ եմ
չարչարել զքեզ ։ Սր̃ն ասէ․ իմ ք̃ոն լոյս է,
և ա̃ծքն քո խաւար․ և 'ի լուսոյն աւետարա-
նին՝ այնուհետև խաւար փախչի ։ Թ̃գրն
ասէ․ կարծեմ 'ի մահ եդիր զանձն քո՝ զայդ
այդ̃պ բարբառելով․ արդ զոր ինչ խնդրեսդ՝
արարից քեզ վաղվաղակի, և սաստիկ տան-
ջանօք յուղարկեցից զքեզ 'ի մահ ։ Պու-
կիանոս ասէ․ ո՛չ 'ի տանջանաց քոց երկնչիմ,

և ոչ զա՟ծսն քո ճանաչեմ . զմինն միայն գի-
տեմ զյ՟ս ք՟ս : Թագաւորն ասէ . երդուեալ
յա՟ծսն , ոչ դադարեցից 'ի տանջելոյ զքեզ,
մինչև զոհեսցես նո՟ց . և դարձեալ հրամայեաց
քերել զմ՟րմն :

Ասէ երանելին . բազում ա՟ծս կամիս ան-
ուանել , զոր ես ոչ կամիմ լսել . իսկ ես մի
ա՟ծ պաշտեմ զյ՟ս ք՟ս , զոր դու ոչ կամիս ընդու-
նել . և ոչ զօրէ յաղթել բռնութ՟ի , ուր թա-
գաւորէ ճշմարտութ՟ի . զի մի է՝ որ 'ի վերայ
ամենեցուն ա՟ծ յ՟ս ք՟ս : Թագաւորն ասէ .
դարձեալ ասեմ քեզ ղուկիանէ , լուր ինձ և
կատարեա զհաճոյս ա՟ծոց մերոց , և հնազան-
դեա թագաւորական հրամանաց մերոց . և արձա-
կեցից զքեզ 'ի հայրենիսն քո 'ի մեծն ան-
տիոք մեծաւ պատուով . և որպէս խոստացայ
յառաջագոյն , լիցիս քահանայապետ մեծաց
ա՟ծոցն , և թագաւորեսցես ընդ մեզ : Պ՟խնի ետ
ս՟րբն և ասէ . քրիստոնէից հայրենիքն չիք յեր-
կրի . վ՟ն զի չեմք ցանկացեալ երկրաւոր կե-
նացս , այլ յերկինս է քաղաք բնակութե մե-
րոյ : (5)

Յայնժամ հրամայեաց թագաւորն խլուցա-
նել զնահատակն 'ի փայտէն , և բերել սա-
կառօք տատասկ երկաթի՝ ցանել 'ի գետնի ,
և շրջ շրջել զնա 'ի վ՟ր տատասկացն . մինչև
քանցեալ մերկացան ա՟մ ոսկերքն մարմնոյ
նահատակին : Իսկ ս՟րբն աղօթէր այսպէս .
տ՟ր ա՟ծ պահեա զհօտ քո անարատ , և ամե-
նեցուն առաջնորդեա 'ի գիտութ՟ի ճշմար-
տութե ա՟ծութեդ քո . և թող սոցա , զի ոչ
գի-

գիտեն՝ զի՛նչ գործեն. և զհոգիս իմ ընկալ խաղաղութբ̃ ը̃ սր̃ս քո. զի դու ես փրկիչ, և քեզ վայելէ փառք՝ իշխանութի̃ և պատիւ̃ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից

ամէն:

Յետ այսորիկ հրաման ետ Թագաւորն արկանել անուր երկաթի 'ի պարանոց նր̃, և տանել 'ի բանտ 'ի խաւարչտին տեղւոջ, և դնել զոտս նորա 'ի կոճղս: Եւ ընդ առաւօտն հրամայեաց ածել զնա առաջի իւր. իսկ դահճացն երթեալ 'ի բանտն՝ իբրև մօտ եղեն 'ի դուրս բանտին, տեսին երիտասարդս 'ի հանդերձս լուսափայլս, որք ձայնակից լեալ սր̃յն՝ սաղմոսէին. և յետոյ ողջագուրեալ զս̃րբն՝ վերացան յերկինս: Ընդ այս զահի հարան զինուորքն. և պատուով հանեալ զերանելին 'ի բանտէն՝ տարան յատեան արքային. և շշնջելով հասուցին յունկն նորա

զսքանչելիսն՝ զոր տեսին:

Եւ զազանացեալ Թգ̃րն ասէ ցնա. ո՛վ չարագլուխ այր և անամօթ և մոլորեցուցիչ բազմաց, աւադիկ եկեալ հասեալ է քեզ այժմ օր կորստեան և մահու, և դրձ̃լ օր կենաց՝ եթէ կամիս. արդ ընտրեա՛ զկեանս, և մի՛ զմահ չարագործաց. հաւանեա՛ և զոհեա՛ ա̃ծոցն: Ասէ սր̃ն. բազում անգամ ասացի, և այժմ ասեմ. քրիստոնեայ եմ, և դիւաց ոչ զոհեմ. և յայսմ խոստովանութէ̃ բնաւին փոխել զիս ոչ կարես. զի ո՛չ հուր և ո՛չ սուր և ո՛չ տանջանք ազգի ազգի կարող են մեկնել

զիս 'ի սիրոյն քս̃ի:

Յայն-

Յայնժամ տեսեալ թագաւորին զանպարտելի հաւատս վկային Քրիստոսի՝ այնուհետեւ գրեր 'ի նամակի վճիռ մահու օրինակ զայս . Ղուկիանոս՝ վարդապետ եւ գլխաւոր աղանդոյն գալիլեացւոց , որ ասաց զինքն քրիստոնեայ գոլ , զանարգիչ անմահ դիցն մերոց , եւ զարհամարհօղ ինքնակալաց թագաւորաց , հաճոյ թուեցաւ մեզ ամենեցուն արտասահմանել 'ի քաղաքն արեգ (6) . զի անդ բանտարգել լինիցի զամենայն ժամս կենաց իւրոց՝ առանց մարմնական դարմանի եւ հարկաւոր պիտոյից մարմնոյ , մինչեւ վախճանեսցի 'ի կենաց :

Արդ յափշտակեալ այնուհետեւ երանելին յանձն դահճաց , եւ յուղի անկեալ երթայր բազում վշտօք . զի 'ի ճանապարհին յոյժ նեղէին զծերն չար զինուորքն զանազան նեղութեամբք . եւ հասեալ 'ի սահմանեալ քաղաքն՝ աւանդեցին դատաւորի տեղւոյն հանդերձ արքունի նամակաւ : Իսկ դատաւորն հայեցեալ ընդ պատկառելի դէմս ծերոյն , եւ լուեալ զամենայն անցս նորա , խօսել սկսաւ ընդ նմա յատենի . եւ ասէ . զի՞արդ դու այր բանիբուն եւ մտացի զհետ գնաս աղանդոյն , զորոյ չես բաւական տալ զպատճառն . ապա եթէ կայցէ ինչ փաստ իրաւացի , եւ մեք լուիցուք . խօսեաց համարձակ :

Յայնժամ ընդ գրելոյ հռուփինոսի՝ զայսօրինակ ատենախօս եղեւ ասէն ծերն Ղուկիանոս . Ոչ ինչ թաքուն , թէ զո՞ պաշտեմք քրիստոնեայքս . այն է մի Աստուած՝ Քրիստոսի մեզ պատմեալ , եւ հոգւովն սրբով հեղեալ 'ի սիրտս մեր :

մեր ։ Ո՛չ ո՟պ դուքդ կարծէք , եթէ մոլորութ՟ք մարդկեղէն կարծեաց պարանիմք , և ո՛չ հայրենաւանդ սովորութ՟ք պատրիմք ո՟պ զայլսն ․ ուսուցիչ մեր է ա՟ծ յ՟յ ․ քանզի և անմարթ իսկ էր մեծվայելչուե՟ բարձրելոյն 'ի զգայութ՟ի գալ մարդկային մտաց , թէ չէր զօրութ՟ք հոգւոյն իւրոյ ազդեալ , կամ թարգմանութ՟ք բանին իւրոյ և իմաստուե՟ նշանակեալ ։ Խոստովան լինիմ , զի և մեք առ հարցք մերովք մոլորեցաք երբեմն , և զգործս ձեռաց մերոց յա՟ծս համարեցաք ․ ուր ոչ գոյր 'ի նո՟ առաւելուե՟ այլ քան զչափ ճարտարութե՟ առնելեացն զկուռս ։ Այլ ամենակալն ա՟ծ , որ ոչն է ձեռագործ մարդոյ , այլ ձեռակերտող , գթացեալ 'ի վ՟ր մոլորութե՟ մարդկան՝ առաքեաց յե՟ս զիմաստութ՟ի իւր մարմնացեցին տնօրէնութ՟ք, ուսուցանել մեզ՝ զի խնդրեսցուք զա՟ծ արարիչ երկնի և երկրի ո՛չ 'ի ձեռագործս , այլ 'ի յաւիտենականս և յաներևոյթս ․ որ և սահմանս և օրէնս կենաց մեզ աւանդեաց՝ լինել ժուժկալ , աղքատ , հեզ , համբերող , խաղաղասէր և սրբասէր ։ Այլ և զա՟մն՝ զոր միանգամ այժմ ը՟ մեզ անցուցանէք , մեզ նախապատմեաց , եթէ տանիցին զձեզ առաջի թ՟գրաց և դատաւորաց , և ո՟պ սպանող սպանցեն ։

Նա վ՟ճկ որ էրն ինքն անմահ ո՟պ բան և իմաստութ՟ի ա՟յ , մարմնով 'ի մահ մատնեաց զանձն իւր՝ յօրինակ մեզ համբերութե՟ ․ բայց քանզի չէր հնար ըմբռնել նմա 'ի մահուանէ ,

յարեաւ յաւուր երրորդի ։ Եւ ոչ եթէ մահապարտ ոք էր, որպէս ստուգութիւն գրեալ կայ արդ առ ձեզ իբրեւ 'ի պատմութեանց պիղատոսի, այլ՝ անմեղ, անարատ եւ ս՟բ ․ ոչ յայլ պէտս յանձն առեալ զմահ, բայց զի մահու յաղթեսցէ յարութ՟բ իւրով ։ Եւ զոր ասեմս, ոչ եթէ 'ի ծածուկ ինչ խաւարի գործեցան, եւ ոչ վկայից կարօտանան ․ մեծագոյն գոգցես աշ՟ի մասն ձայնակից է ճշմարտութեան, եւ քաղաքք ողջոյն ․ վկայ եւ տեղին՝ համօրէն ե՟մ քաղաքաւ, եւ վէմք լերինն գողգոթայ պատառեալք ը՟ ծանրութ՟բ խաչի ․ եւ այրն գերեզմանի, ուստի յարեաւ՝ որ թաղեցաւն, յետ խորտակելոյ զդրունս դժոխոց, եւ ապա յերկինս վերացաւ փառօք ։

Եւ եթէ չեն բաւական 'ի յերկրէ վկայութիւնք, առէք վկայ հաւատարիմ յերկնից ․ զարեգակն ասեմ, որ ոչն հանդուրժեալ ը՟ գործն ամպարշտութ՟ե երկրի՝ զլոյս իւր քօղարկեաց 'ի միջօրէի ․ խնդի՛ր արարէք 'ի տարեգիրս ձեր, եւ գտանիցէք առ պիղատոսիւ 'ի ժամ չարչարանաց ք՟սի, զի փախստեամբ արեգական ընդհատեցաւ տիւն խաւարաւ ։ Արդ եթէ երկրի եւ երկնի, եւ արեան նոցա՝ յորոց տանջանօք հարցափորձէք զճշմարտութիւն, ոչ հաւատայք, զիա՞րդ իմոցս բանից եւ յիշատակութեանցս հաւատայցէք ։

Զայս ա՟մ լուեալ դատաւորին՝ զարմացաւ եւ զահի հարաւ, զի մի՛ ոք 'ի լսողաց 'ի բանս նորա լինիցի ․ վ՟յ իսկ եւ իսկ մատնէ զնա 'ի ձեռս բանտապանաց ը՟ հրամանի թագաւորին ։

րին ։ Իսկ նը. վկայն արգելեալ ՚ի բանտին՝ ուրախութբ և գոհանալով զայ համբերէր ամ անցից անցելոց ։ Եւ արարեալ յարգելանի անդ ամս հինգ՝ ՚ի բազում վշտացն անկանէր յախտ հիւանդութե ․ և ՚ի վր ամ ցաւոց և չարչարանաց և նեղութեց բանտի սովալլուկ տանջեալ լինէր բազմօրեայ քաղցիւ ․ և յայնպիսի անսուաղուե բերէին առ նա անօրէնք ըստ հրամանի իշխանին՝ մանաւանդ թէ ըստ թելադրութե բանսարկուին զկերակուր զոհեալ ․ զի առ յետին սովոյն ստիպեսցի ճաշակել անտի ․ իսկ երանելին բաց ՚ի բաց հրաժարէր , գարշէր ՚ի զոհից անտի և ՚ի բաց մերժէր , լաւ համարեն մեռանիլ ՚ի սովէ՝ քան հաղորդ լինել պաշտաման հեթանոսաց ․ մինչև ՚ի նմին կատարեցաւ հաստատուն խոստովանութե ։

Քանզի ըստ պատմելոյ ոսկեբերանին՝ որ Ճոխագոյն նկարագրէ զկնի այլ ամ փորձանաց հանդիսից զյետին աղէտս սովոյն , և զժուժկալելն ՚ի զոհեալ կերակրոց , տեսեալ անօրէն իշխանին՝ եթէ ոչինչ օգտի , միւսանգամ յատեան տայ բերել զնա , և տանջանօք հարցփորձ առնէ ․ բայց նա այնուհետև ոչինչ տայր պխնի առ ամ հարցուածս , բայց միայն զՔրիստոնեայ եմն երկրորդէր ։ Իշխանն ասէ ․ ուստի՞ ես դու ․ վկայն ասէ ․ Քրիստոնեայ եմ ․ նա ասէ ․ զի՞նչ է արհեստ քո ․ և սա ․ Քրիստոնեայ եմ ։ Եւ ո՞յք ծնօղք քո ․ Քրիստոնեայ եմ ։ Ոմի ևեթ զայս բան բաւական համարեր ՚ի խորտակել զգլուխ չարին ,

և

և տալ նմ վէրս անդուլութ ։ Զի թէպէտ և արտաքին ուսմանց էր քաջ ներհուն , բայց քաջ ևս գիտէր՝ զի յայնպիսի մրցմունս չեն պէտք պերճախօսութն , այլ հաւատոց և հոգւոյ վառելոյ սիրովն այ ։ Զայս օրինակ վախճանեցաւ ը. բարբառոյ ձայնի և ըզկեանս , և գնաց առ անձկալին իւր քս ։ (7) Արդ ըստ ոմանց 'ի վերջնում նուագի ասի զաւուրս չորեքտասան իսպառ անսուաղ մնացեալ 'ի բանտի , և սովամահ վախճանեալ ։ և ըստ այլոց՝ մինչդեռ յոգնիս ապաստան կայր՝ գլխատեալ 'ի բանտի անդ ։ մանաւանդ թէ 'ի չորս մասունս կտրատեալ , և այնպէս 'ի ծով արկեալ ։ Իսկ յետ աւուրց եօթանց կմ չորեքտասանից գտաւ մարմին սբյն 'ի ծովափն բիւթանիոյ՝ բերեալ 'ի վր ուսոց դըլֆին ձկան ։ զոր և յայտնեաց սբն 'ի տեսլեան միում յաշակերտաց իւրոց , որում անուն էր գղերիկոս կմ գղիկերիոս ։ և նր առեալ ընդ իւր զայլս 'ի քրիստոնէից՝ եկն 'ի նշանակեալ տեղին ։ ուստի բարձեալ զայն պատուով՝ բերին և ամփոփեցին 'ի դրեպանա քաղաքի

բիւթանացւոց ։

Յետ քանի մի ամաց անցելոյ մծասէր դըշխոյն հեղինէ 'ի դառնալ իւրում յեմէ՝ անցեալ ընդ դրեպանա , որ ասի լինել քաղաք ծննդեան նորա և կոստանդիանոսի , պատուեաց զտապան սբյն ղուկիանոսի , յորմէ լինէին բազում բժշկութիք ։ և բարեպաշտ կայսրն կոստանդիանոս ետ շինել մեծավայելուչ եկեղեցի 'ի վր տապանի նր ։ և զքաղաքն մե-

ծացուցեալ՝ և ամրացուցեալ պարսպօք՝ կո-
չեաց յանուն մօր իւրոյ Հեղինուպօլիս , և
գրեաց ընդ ազատ քաղաքս . (զոր ոմանք երևին
նոյնացուցանել ընդ Հեղինուպօլսոյ , այսինքն արեգ-
քաղաքի , ուր եղև կատարումն նորին ) . և
անդ կատարիւր տօն նորին 'ի Հոկտեմբերի
15 . ըստ որոյ դնեն և Ճառընտիրք և յայսմա-
ւուրք Հայոց և յունաց . իսկ անտիոքացիք
քաղաքակիցք նորա տօնէին զնա 'ի յունուարի 7 .
որպէս երևի 'ի բանից ոսկեբերանին , որ զներ-
բողեան Ղուկիանոսի սկսանի այսպէս . * Երէկ
տէրն մեր ջրով մկրտեցաւ , իսկ այսօր ծա-
ռայն արեամբ մկրտի . յերեկեան աւուր դը-
րունք երկնից բացան , յայսմ աւուր դրունք
դժոխոց եղեն կոխան || . և ըստ այսմ Հռովմա-
յեցիք տօնեն զնա 'ի յունուարի . 7 : Ոսկեբե-
րան խօսեցաւ զՃառ իւր 'ի քահանայութեան
իւրում յամի տեառն իբր 387 . իսկ կատարումն
անյայտ վկային նորին Ղուկիանոսի քահա-
նայի կարծի լինել յամի տեառն իբր 305 . զոր
այլք դնեն յամի 312 . յորում ետես կոստան-
դիանոս զխաչն լուսափայլ յօդս :

Ըստ աւանդելոյ գաղղիական վկայաբանու-
թեանց , զկնի դարուց բազմաց մեծն կարոլոս
կայսր ետ բերել զմարմին նորին Ղուկիանոսի
յարևելից յարևմուտս 'ի քաղաքն արելատայ
գաղղիացւոց . և շինեալ եկեղեցի 'ի պատիւ
նորին՝ անդ հանգոյց զնա փառօք մեծաւ 'ի
ձեռն տուրպինոսի արքեպիսկոպոսին հռեմայ . և
ապա եղև սովորութիւն հանդիսաւոր տօնախըմ-
բել յարելատ զյիշատակ նորին Ղուկիանոսի :

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Ուղիղ գրի յընտիր օրինակս տօնացուցից և Ճաշո֊
ցաց Ղուկիանոս քահանայ, որ 'ի բազում այլ օրինակս
շփոթելով ը մերձաւոր անուան ղունգիանոսի հարիւ֊
րապետի՝ ղունկիանոս քահանայ է գրեալ, որպ և 'ի Ճա֊
ռընտրի ղունգիանոս. իսկ 'ի Հ. յետևառաջութբ տա֊
ռից՝ ուղկիանոս։ Յոյնք կոչեն լուգիանոս, և լատինք
լուչիանոս կամ լուսիանուս. որ ոմ 'ի մեզ՝ նոյնպէս և
առ նմ լուսաւոր թարգմանի. և ըստ այսմ ոմն 'ի լատին
մատենագրաց 'ի յաւելուածս մեկն. յոբ. յորդորինեայ՝
ասէ. * Այսպէս կատարեցաւ երանելին և փառաւորն
• լուսիանոս, լուսաւոր վարուք, լուսաւոր և հաւա֊
• տով, լուսաւոր և համբերութեն լոմամբ. զի վնկ իսկ
• լուսիանոս ձայնեցաւ՝ իբրև լուսաւոր, եթէ սեպ֊
• հական լուսով անձամբ յանձին փայլեալ, և եթէ այ֊
• լոց լուսածագեալ ||։ Որոյ և քանի մի տանջանք ու֊
նին զնմանութե ինչ ը չարչարանաց սբ լուսաւորչին։
(2) Արդ որչափ հանդիսացեալ է առ ամենեսին անուն
և գործ լուսաւոր վկային ղուկիանոսի, նոյնչափ և հա֊
րևանցի նշանակեալ յիւրաքանչիւր մատենագրաց վարք
և վկայաբանութի նր. զի ոմն զայս, և ոմն զայն գործ
նր յիշատակէ, և ոչ ոք զամն 'ի մի հաւաքեաց արդեօք
նախ ք զմեզ։ Զոր օրինակ նախայիշատակեն անանուն
հեղինակն լատին յետ հաշակելոյ զլուսաւորութի վարուց
և հաւատոց և հանդիսի նահատակութե սբյն՝ զայս ևեթ
զմի բան յիշէ. * քանզի երանելիս այս (ասէ) զաւուրս
,, երկոտասան 'ի վր բևեռական խեցեաց (ըստ յետ տա֊
,, տասկաց) յաւուրն երեքտասաներորդի կատարեցաւ ||.
զոր իրաւամբք անիմանալի կոչէ բոլլանդ։ Հռուփինոս
զմի ևեթ երևելի հատուած ատենախօսութե սբյն առա֊
ջի դատաւորի յառաջ բերեալ՝ 'ի վր բերէ զգլխատումն
զանխուլ 'ի բանտի։ Լատին վկայագիրք յաւելուն և զըն֊
կեցիկ լինելն 'ի ծով՝ յետ կտրատելոյ 'ի չորս մասունս.
և զգիւտ նշխարաց 'ի դրեպանա, որ և հեղինուպօլիս։
Հերոնիմոս ևս վկայէ, թէ չարչարեալ 'ի նիկոմիդիա՝
թաղեցաւ 'ի հեղինուպօլիս բիւթանիոյ. յիշէ և զնախ֊
ընթաց աշխատութի նր յածաշունչ գիրս. որպ և այլ յե֊

յեկեղեցական մատենագրաց ։

Ոսկեբերան այսպէս համառօտէ զհանդէս տանջանաց սբյն ․ * Այլ յառաջ քան զզէնումն (ասէ) հարկ է ա-
" սել զբանսարկուին խորամանկութիւն ․ քանզի տեսեալ
" նր, եթէ զնմ պատժոց և զտանջանաց տեսակօք ծե-
" ծաղեցաւ, և զի ոչ զհնոցն լուցանելով, ոչ զխորխո-
" րատն փորելով, ոչ զանիւն կազմելով․ ոչ 'ի փայտն
" հանելով․ ոչ ը զսա 'ի վայր ձգելով, և ոչ 'ի ժանիս
" գազանաց արկանելով՝ կարող եղև յաղթել իմաստա-
" սիրութե սբյն, զայլ ինն հնարեցաւ դժնդակագոյն
" յեղանակ ||․ և սկսանի ճոխ ստորագրել զտանջանս
սովալլուկ լինելոյ․ տես 'ի (7)։ Յայս հայեցեալ արդեօք և Յ․ բս․ միայն զսովամահն լինել գրէ ։ Իսկ մետափրաստէս պատմէ և զպնդիլն ոտից 'ի կոճեղս․ և յաւելու՝ թէ տարածեցին զբազմութիւն սուր խեցեաց 'ի վր թիկանց նր․ և զձեռս նր կապեցին ը փայտի եղելոյ 'ի վր գլխոյ նր․ ել․ յիշէ և զմեռանիլն 'ի բանտի, և զգիւտ նշխարացն ըստ գրելոցս ։

Զայս նմ 'ի մէջ բերեալ և բոլլանդայ առանց ը բանս ինչ ածելոյ՝ ոչինչ ընդդիմութիւն նշմարէ 'ի գրել ոմանց զայս ինչ և ոմանց զայն ինչ, այլ միաբան ենթադրէ զնմն, կմ դիւրաւ միաբանելի․ և սակայն անաչառ խօսելով՝ ոչ ամբողջ պատմութիւն ելանէ 'ի հատուկտոր բանից անտի, և ոչ յարմարի բան ը բանի, եթէ ոչ վերածելով զնմն 'ի հինական վկայաբանութիւն մեր ըստ ճառընտրին․ զոր եթէ ոք ընծայեր բոլլանդայ, պարգև մեծ լինէր․ վս չնորհ յոյժ ունիմք մերումս թարգմանչի՝ որ զայս պարգև ետ մեզ ը այլ բազմապատիկ վկայաբանութեանս գտեալս առ մեզ, և ոչ առ այլս․ որով և յաջողեցաւ մեզ՝ թէպէտև բազում աշխատութբ համդերձ, 'ի վր նոյն հիման շինել և զհատուածս բանից այլոց․ որովք լրանայ և պակասութի ճառընտրին, որ հարևանցի գրէ զնախընթաց վարս սբյն, և միայն ըզվկայաբանութիւն ճոխագոյն առաջի դնէ ։

(3) Մետափրաստէս կմ հեղինակն սուրիոսի դնէ զսբն զլուկիանոս քահանայ լինել ընիկ ծննդեամբ 'ի սամոսատայ կմ 'ի սամոսատիս քաղաքէ․ և սակայն՝ ուր այլք առհասարակ անտիոքացի ասեն, երևի թէ չփոթեալ է նա ը Ող վկայիս զհամանունն նր զղուկիանոս փիլիսոփայ սամոսատացի․ որ էր յառաջին դարու և հեթանոս, յոմանց վրիպակաւ քրիստոնեայ կարծեցեալ ։

(4) Դարձեալ՝ շփոթութի է առ մետափրաստեսի վասն

եղա-

եղանակի գալստեան սրբոյն Ղուկիանոսի յանտիոքայ 'ի Նիկոմիդիա. ո՞չ թէ մատնութեամբ սաբելեանն բագարատայ կալեալ իցեն զնա զօրականք մաքսիմիանոսի, և ածեալ նախ 'ի կապադովկիա. ուր դարձուցեալ իցէ սրբոյն զզօրականս իբր քառասուն յուրացութենէ յառաջին հաւատոյ. և ապա եկեալ 'ի Նիկոմիդիա. զի յընթացս բանից դրչին խառնեալ են միջանկեալ պատմութիւնք այլոց վկայից :

(5) Թէպէտև ոսկեբերան 'ի վերջին նուագ բանտարկութեան սրբոյն ընդարձակէ զներբողեան իւր, և սակայն տեսանեմք յայտնապէս՝ զի յընթացից ասոր վկայաբանութեան մերոյ առնու զայն ձև բանից. * Զի որ ասէն՝
,, թէ քրիստոնեայ եմ, միանգամայն զհայրենիս և զազգ
,, և զհրահանգ և զամ ինչ յայտնի կացոյց : Եւ թէ որ-
,, պէս, ես ասացից : Քրիստոնեայն ոչ ունի քաղաք
,, յերկրի, այլ զվերինն Երուսաղէմ. զի վերին Երուսաղէմ ասէ ազատ
,, է, որ է մայր մեր : Քրիստոնեայն ոչ ունի զերկրա-
,, ւոր հրահանգ, այլ 'ի վերինն բերի քաղաքավարութն.
,, զի մեր ասէ քաղաքավարութիւն յերկինս է : Քրիստո-
,, նեայն ազգակիցս ունի զսուրբս ամ, և քաղաքակիցս. զի
,, քաղաքակիցք եմք սրբոց ասէ, և ընտանիք աստուծոյ ||:

(6) Արեգ. քաղաք յիշեալ 'ի Ծ. է թարգմանութիւն անուանս Հելիուպօլիս. որով անուամբ անուանի էր 'ի հնումն քաղաք քրմացն եգիպտացւոց ընդ մէջ արաբիոյ և նեղոս գետոյ՝ շինեալ հրամանաւ փարաւոնի յորդւոցն իսրայէլի. բայց կային և այլ համանուն քաղաքք յայլ տեղիս. յորոց մին ասի լինել 'ի սահմանս բիւթանիոյ. մինչ զի մարթ է կասկածիլ՝ թէ դոյզն տարբերութեամբ տառից կոչեցեալ իցէ յետոյ հեղինուպօլիս, որ և երբեմն դրեպանա ասացեալ. ուր եղաւ տապան սրբոյն Ղուկիանոսի. որ 'ի Հ = Ց ուղիղ գրի եղջուպօլիս. և 'ի Հ. վրիպակաւ եկղէուպօլիս, կամ եկեղուպօլիս, փոխանակ գրելոյ հեղինուպօլիս : Պատճառ կասկածելոյ մերոյ է այն, զի ոմանք յիշեն զհեղինուպօլիս զտեղի թաղման սրբոյն, ոչ յիշեն զտեղի աքսորանացն զհելիուպօլիս կամ զարեգքաղաք. որով կամ նոյնացուցանեն զերկոսեան, և կամ թէ մերձ համարին արդեօք միմեանց զերկոսեանն. զի 'ի միջէն արկեալ մարմին սրբոյն 'ի ծով՝ 'ի միւսն եկեալ իցէ 'ի ձեռն դլփին ձկան. զոր թէպէտև բազումք գրեն, այլ լռութիւն է 'ի մերս Ծ. ուր չգիտեմ զիարդ կրկնութիւն ( թերևս յաւելմամբ 'ի յետնոց ՟Բ ոճոյ ոսկեբերանի ) բովանդակի նախագրեալ հանդէս չարչարանաց

սրբյն, այսպիսի վերջաբանութք. * Եւ ՚ի բանտին տա_
,, րեալ ամ չարչարանաց և նեղութեց, (յաւել, զկնի)
,, բանտից և կապանաց, սրոյ և հրոյ, տանջանաց և
,, գերանաց, աղի և քացախի, որով զքանցումն և զվէրս
,, մարմնոյն մարմնքեցուցանէին, քարշելոյ և դժնդակ
,, տատասկացն, տանջանաց, սովոյ, և սրդելանաց ան_
,, լուսից, և այլ բազում տանջանաց, զոր կրեաց սբն
,, վն անուանն քնի, գոհութք և օրհնութք զինէ հան_
,, գեաւ ՚ի փառս նյ. զօր յիշատակի նր տանելով յամ_
,, սեանն հոկտեմբերի ժէ. բազում բժշկութիւք լինէին
,, նովաւ, զոր կատարէր ած ՚ի ձեռն սբյ վկային և
,, անյաղթ մարտիրոսին ||:

Իսկ զտարբերութն վկայաբանից վասն մահուան սբյն՝ այսպս միաբանէ բոլանդ. * Սովամահ լեալ ասաց մե_
,, տափրաստէս, կմ յոգիս ապաստան՝ ՚ի ծով արկեալ.
,, նոտկերոս և այլք, թէ ՚ի մասունս մասունս (կմ ՚ի չորս
,, մասունս) իցէ յօշեալ: Թերևս մինչդեռ կիսամեռ
,, էր, սրախողխող արարին անօրէնք ||. և արդարև բանք ամ վկայագրաց յայն յանգին, թէ ՚ի բանտի կատարեցաւ սովաւ և սրով: ՚Ի վախճանի ծանիր, զի ոս ինքն սբն Ղուկիանոս քահանայ և վկայ անտիոքացի է այն, որ յաքսորանս քաղաքակցին և ներբողաբանին իւրոյ ոսկեբերանի՝ ՚ի կոկիսոն հայոց, երևեցաւ ը բասիլիսկոսի վկայի ամասիացւոյ, և ազդեաց լուսարարին՝ պատրաստել տեղի հանգստեան ոսկեբերանի ՚ի վախճանիլ նր ՚ի կոկիսոն. ուստի երևի՝ թէ ոչ բասիլիսկոս վկայն էր սահմանակից և ծանօթ բնակչացն կոկիսոնի, սոյնպէս և սբն ղուկիանոս ոչ միայն ոսկեբերանի էր քաղաքակից, այլև ծանօթ գաւառականաց կոկիսոնի, եթէ երբեմն քարոզելով նց, և եթէ մօտ ու նն կրելով զաքսորանս կմ ըունելով զկատարումն. զի ոչ ասացաք՝ արեգ քաղաք կատարման սբյն ՚ի զանազան կողմանս ակնարկէ:

(7) Շատանալն սբյն ՚ի վերջին նուագս լոկով այս բանիւ. քրիստոնեայ եմ, ը պատմելոյ ոսկեբերանին, ոչ հակառակի նախընթաց ատենախօսութեց նր. ուր և ինքն ոսկեբերանն ասէ միւսանգամ ըհանրապէս. * ա_
,, ռաջի իշխանաց և թգրաց համարձակ խօսեցաւ ||:

Այլ ժամ է ՚ի լրումն ամի՝ քաղել և զբանս ոսկեբերանի վասն մեծութե սովալլուկ տանջանաց սբյն ղուկիանոսի:

* Այլ դու (ասէ) սովլլեալ՝ մի անցանիցես սպր_
,, զա_

,, զմբռար է սատանայեալն . վն զի քան զմն մահուանս սա
,, է դժնդակագոյն . վկայ քեզ՝ որ զփորձն առին . մի-
,, այն թէ մեզ մի՛ լիցի է փորձն անցանել . քանզի բա-
,, րեաց ուսաք աղօթել՝ չմտանել 'ի փորձութիւն . վն զի
,, զհրօրինակ դահիճ ոք , յաղխ անդ 'ի ներքս բաղմել՝
,, զմն անդամս քանցէ , և քան զմն հուր և զգաղան
,, անողորմ ծարակելով յամ կողմանց զմարմինն , զան-
,, դուլ խիս և զանասելի ընձեռէ զերկուանս ցաւոց : Եւ
,, զի ուսցիս , քանիօն է սոսկ , բաղում այն է՝ զի և
,, զծնունդս ծախեցին մարք՝ զայսր չարի զբռնութիւն
,, ոչ կարացեալք տանել : Եւ զայս աղէտս ողբերգա-
,, կելով ասէր մարգարէն , ձեռք կանանց ողորմածաց
,, եփեցին զմանկունս իւրեանց . զորս ծնեալ էր մարց՝
,, կերան , և ծնելոց ողայոց ծնիցն արգանդ եղև գե-
,, րեզման . և 'ի վր բնութե զօրացաւ սով , մանաւանդ
,, թէ ոչ բնութե միայն , այլև ընտրութե կամաց . այլ
,, ոչ յաղթեաց առաքինի քաջութե սբյս : Արդ ո՞ ոչ
,, ապշեսցի՝ զայսոսիկ լսելով . և այն զի՝ զի՞նչ քան ըղ-
,, բնութիւն հզօրագոյն , և զի՞նչ քան զյօժարութիւն կա-
,, մաց դիւրաշրջիկ : Այլ զի ուսցիս , եթէ չէր ինչ
,, զօրագոյն քան զերկիւղն այ , ընտրութիւն քան զբնու-
,, թիւն վերագոյն երևեցաւ . զի թէպէտև զմարս ընկ-
,, ճեաց , և ետ նց մտանաչ զերկուանս , այլ զսբս զայս
,, ոչ կարաց տապաստ արկանել . ո՛չ տանջանքն յաղթա-
,, հարեցին զիմաստասիրութի , և ո՛չ պատուհասն յաղ-
,, թեաց արութեանն . այլ կայր մնայր պնդագոյն քան
,, զամ անդամանդ , յուսով բարութե բուծեալ . և առ-
,, թիւք մրցանաց խնդամտեալ՝ բաւական առնոյր սփո-
,, փանս 'ի նահատակութե հանդիսից ...

,, Այն ինչ տեսանէր զնա պինդ դեռ ոչինչ նկուն եղեալ
,, յայսպիսեաց կարեաց , դժուարին ևս առնէ զչարչա-
,, րանսն . քանզի և զգոհեալս 'ի մէջ առեալ , և զսե-
,, ղանն սովիմբք լցեալ , առաջի աչաց նր դնել պատ-
,, րաստեաց . զի խիստն լինել ուտել՝ բեկանիցէ զյօ-
,, ժարութի ուղղոյն . զի ո՛չ այնպէս հրապուրիմք յիրաց
,, անտեսից , որպ յերևելոց առաջի յանդիման աչաց . որպ
,, և զցանկութի կնոջ հեշտեաւ ոք արդեօք սանձահա-
,, րեցէ՝ յոյժ հայիլ է կին գեղեցիկ , քան եթէ առէպ
,, ակնարկելով 'ի նա : Այլ սակայն և այսց հնարից
,, վերագոյն հանդիսացաւ արդարն . և որով կարծէր
,, բանսարկուն լուծանել զարութի նր , նոյն այդ ա-
,, ռաւել վառեաց զնա 'ի մրցմունս . զի ոչ միայն ինչ

,, ոչ

,, ոչ ճաշակեաց 'ի զոհելոց անտի, այլ և ևս քան զևս
,, բացադարձեալ ատեայր զնոսա . . . և ուր սրբ̃
,, մեծաձայն գոչէր 'ի ներքուստ, և հրաման տայր ճա-
,, շակել յառաջեդելոցն, երկիւղն այ̃ զձեռսն յետս նա-
,, հանջէր, և զբնութիւն գլխովին 'ի մոռացօնս դարձու-
,, ցանէր. և զսեղանն տեսանելով զպիղծ և զնողկալի,
,, սեղան յիշէր այլ ահագին և հոգւով լի. և այնպէս
,, հրաժարէր, մինչև յանձն առնուլ զամ̃ կիրս կրել, քան
,, 'ի պիղծ կերակրոյ անտի ճաշակել: Յիշէր և զսեղանն
,, զայն զերից մանկանց (որք ոչ կամեցան ուտել 'ի սե-
,, ղանոյ թգ̃րին) . . . եթէ գերիք և ծառայք և մանկա-
,, հասակք՝ նախ քան զշնորհս՝ զայնպիսի ցուցին իմաս-
,, տասիրութիւն, ասէ, որո՞մ ներելոյ մեք արժանի գտա-
,, նիցիմք, ոչ բաւեալք և առաքինութե̃ նոցա հասա-
,, նել . . .

,, Արդ՝ երբև ետես պիղծն այն, եթէ ոչինչ աւելի շա-
,, հեցաւ, միւսանգամ ածէ զնա յատեան, և տանջելով
,, անդադար՝ 'ի վերայ բերէր հարցուածս. իսկ նա առ-
,, եւրաքանչիւր հարցումն՝ զայս եւեթ առնէր պինի,
,, թէ քրիստոնեայ եմ: Եւ յասել դահճին, յորմէ՞ աշ-
,, խարհէ ես. քրիստոնեայ եմ ասէ: Զի՞նչ ունիս ու-
,, սումն (կամ արհեստ): Քրիստոնեայ եմ: Ո՞յք քո
,, նախնիք. իսկ նա առ ամն̃ ասէր, քրիստոնեայ եմ:
,, Միով այսուիկ և փոքր բանիւ զբանսարկուին ջա-
,, խեալ զգլուխ, և անդուլ և ան̃դհատ վէրս հարուա-
,, ծոց նմին 'ի վր̃ ածեալ. զի թէպէտև արտաքին ևս
,, կրթանօք էր մարզեալ, այլ 'ի վր̃ հասեալ էր իմաս-
,, տութե̃, թէ յայսպիսի մրցանս ո՛չ հռետորութե̃ պէտք
,, են, այլ՝ հաւատոց, ո՛չ զօրութե̃ բանի, այլ՝ ածա-
,, սէր ոգւոյ. շա՛տ է ասէ՝ մի բան զհամօրէն բանսար-
,, կուին 'ի փախուստ դարձուցանել զփաղանգ . . .
,, Մինչ զի միով բանիւ, և ո՛ լիցէ, և ուստի՛, և յո-
,, րո՛ց, և զի՛նչ գործել բնաւորէ՛, ստուգութ̃ ուսոյց.
,, և սովին բարբառով զկեանս վախճանեաց, և գնաց,
,, ուր քի̃ զաւանդն պահեալ, և յետնոցս՝ որովք կրւ-
,, եացն՝ յորդոր ընծայեցոյց պինդ կալ, և ոչ ուսանել
,, զարհուրիլ, բայց միայն 'ի մեղաց և յուրացութենէ:
,, Արդ՝ զայսոսիկ և մեր գիտելով, 'ի ժամանակի խա-
,, ղաղութե̃ զպատերազմականն հոգասցուք. որպ̃ զի 'ի
,, հասանել պատերազմի՝ զպայծառն և մեք կանգնես-
,, ցուք զյաղթանակ: Արհամարհեաց նա զսով, արհա-
,, մարհեսցուք և մեք զփափկութիւն, և զորովայնի զբօ-
,, սա-

,, նաւորութն քանկեսցուք . զի թէ ժմկ 'ի վր եկեսցէ'
,, զայնպիսի առ 'ի մէնջ արութն պահանջօղ, նախամար_
,, ժեալք 'ի փոքունս յայսոսիկ' պայծառք երեւեսցուք
,, յասպարիզի . առաջի իշխանաց և թգրաց համարձա_
,, կեցաւ նա, զայդ և մեք արասցուք այժմ. թէպէտև
,, 'ի ժողովս հելլենացւոց ( կմ հեթանոսաց ) փարթա_
,, մաց և երևելեաց բարձակից գտանիցիմք, համարձա_
,, կութբ զհաւատս խոստովան լիցուք, և ծաղրեսցուք
,, զնոցին մոլորութբ . և եթէ ձեռներէց լիցին զկե_
,, րեանցն մեծացուցանել, և զմերս իբ վայր հարկանել,
,, մի լռեսցուք, և մի հեզութբ տարցուք . այլ հոլանել
,, զնոցուն անամօթութն զամ ինչ զքրիստոնէից իմաս_
,, տութբ բազմաւ և համարձակութբ գովաբանեսցուք . և
,, զորօրինակ թագաւոր զթագն 'ի գլուխ, սոյնպէս և
,, մեք զխոստովանութին ամ ուրեք զհաւատոյ բարձեալ
,, բերիցեմք . զի ոչ այնչափ զնա պսակն, որպէս զմեզ
,, հաւատքն և խոստովանութն նր գեղազարդել բնաւորե_
,, ցաւ : Եւ ոչ բանիւք միայն, այլև արգեամբք զայն
,, արասցուք . և վարս արժանի խոստովանութե յամի
,, ցուցցուք . զի մի յամօթ արասցուք զվճպութիս գոր_
,, ծոցն վատթարութբք . այլ յամի զորն մեր փառաւոր
,, առնելով' արժանի լիցուք աստանօր և անդանօր պատ_
,, ուոյն . որում լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք
,, և մարդասիրութբ տն մերոյ յսի քսի . որով և ընդ
,, որում հօր փառք, զօրութն և պատիւ հանդերձ սբ
,, և կենդանարար հոգւով, այժմ և միշտ, և յաւիտեանս
,, յաւիտենից . ամէն || :

ՑՐ՛ՆԿ

# ՑԱՆԿ

## ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ

որ 'ի հատորն . Ը :

Երես .

ա . Մամասայ ձգնաւորի . . . . 5
բ . Փիլիկտիմոնի . . . . . . . 25
գ . Սիմէոնի սիւնակեցի . . . . 26
դ . Փեբրոնեայ կուսի . . . . . 71
ե . Մարիանեայ կուսի . . . . . 120
զ . Անթիմոսի եպիսկոպոսին Նիկոմիդեայ . . . . . . . . 137
է . Երանոսի եպսին սիրմիոյ . . 157
ը . Գէորգեայ զօրավարի . . . . 165
թ . Ադոկտոսի . . . . . . . 215
ժ . Ռամանոսի երգեցողի . . . . 222
ժա . Գաւլթի դոմնեցւոյ . . . . 224
ժբ . Գամպէոսի և ղամպէուհեայ . 229
ժգ . Եւստաքէոսի , և ընտանեաց նորա . . . . . . . . . . 251
ժդ . Երմինեայ կուսի . . . . . . 286
ժե . Եքտառինեայ կուսի, որ և կատարինէ աղեքսանդրացի . . 306
ժզ . Սահակայ և համազասպայ . 330
ժէ . Եօթանասուն և երկու աշակեր-

կերտացքն . . . . . . . . 346
ժը. Փոկասու հայրապետին . . . 375
ժթ. Երանոսի հետեւողի առաքե-
լոցն . . . . . . . . . . 410
ի. Թեկղի կուսին . . . . . . 423
իա. Մաւվառեայ կուսին . . . 465
իբ. Պանտալէոնի, և Երմողեայ . 488
իգ. Եւպրաքսեայ կուսին. . . . 525
իդ. Կալիստրատոսի, և խմբ վը-
կայից . . . . . . . . 570
իե. Լուկիանոսի քահանային . . 595

ՎԱԽՃԱ՛Ն

Հատորին

БИБЛИОТЕКА
Истории и

[illegible] ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
[illegible]
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ



ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ





ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.